# Երեխաների խումբ 2

Ընտրիր ճիշտը Ա
4–7 տարեկաններին համար

# Երեխաների խումբ 2

## Ընտրիր ճիշտը Ա

Զորսից յոթ տարեկան երեխաներին
սովորեցնելու համար

Տպագրված է
Հիսուս Քրիստոսի
Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կողմից
Սոլթ Լեյք Սիթի, Յուտա

© 2005 by Intellectual Reserve, Inc.
Բոլոր իրավունքները վերապահված են
Printed in the United States of America

English approval: 12/93
Translation approval: 12/93
Translation of *Primary 2: Choose the Right A*
Armenian



# Բովանդակություն


| Դասի համարը և վերնագիրը | | էջ |
|---|---|---|
| Օգնություն ուսուցչին | | vii |
| 1 | Երջանկությունը գալիս է ճիշտն ընտրելու արդյունքում | 1 |
| 2 | Ես կարող եմ ընտրել ճիշտը | 6 |
| 3 | Ես Աստծո զավակն եմ | 12 |
| 4 | Ես ընտրել եմ հետևել Հիսուս Քրիստոսին | 18 |
| 5 | Ես կարող եմ ճիշտ ընտրություններ կատարել | 23 |
| 6 | Մենք ունենք հատուկ ընտանիքներ | 28 |
| 7 | Հիսուս Քրիստոսի ծնունդը ուրախություն բերեց երկիր | 34 |
| 8 | Երկնային Հայրը հետևում է ինձ | 39 |
| 9 | Հիսուսն ինձ նման մանուկ է եղել | 43 |
| 10 | Ես կարող եմ խոսել Երկնային Հոր հետ աղոթքով | 49 |
| 11 | Ես կարող եմ ուրիշներին պատմել Հիսուս Քրիստոսի մասին | 56 |
| 12 | Ես կարող եմ պատրաստվել մկրտությանը | 61 |
| 13 | Սուրբ Հոգու պարգևը կարող է օգնել ինձ | 67 |
| 14 | Ճիշտն ընտրելու համարձակություն | 74 |
| 15 | Եկ, հետևիր ինձ | 82 |
| 16 | Հիսուս Քրիստոսը բժշկելու զորություն ունի | 88 |
| 17 | Քահանայությունը օգնում է ինձ | 94 |
| 18 | Աղոթքները միշտ պատասխանվում են լավագույն ձևով | 100 |
| 19 | Հիսուս Քրիստոսը սիրում է ինձ | 105 |
| 20 | Հիսուս Քրիստոսի ուսմունքները մեծ գանձ են | 111 |
| 21 | Ես կարող եմ ակնածալից լինել | 118 |
| 22 | Օրհնված են խաղաղարարները | 125 |
| 23 | Հիսուս Քրիստոսը լավ հովիվ է | 129 |
| 24 | Ես կարող եմ ցույց տալ իմ երախտագիտությունը | 134 |
| 25 | Հիշեք ասել «Շնորհակալություն» | 140 |
| 26 | Ճիշտն ընտրելը ինձ հաճելի զգացում է պարգևում | 145 |
| 27 | Կիսվելով ուրիշների հետ, ես կարող եմ նրանց օգնել երջանիկ լինել | 150 |
| 28 | Ես կարող եմ բարի լինել | 154 |
| 29 | Ես կարող եմ լավ օրինակ լինել | 160 |
| 30 | Ես կարող եմ հնազանդ լինել | 166 |

| | | |
|---|---|---|
| 31 | Ես կինազանդվեմ օրենքին | 173 |
| 32 | Սիրել միմյանց | 179 |
| 33 | Ես կարող եմ տասանորդ վճարել | 186 |
| 34 | Միշտ ճիշտն ասեք | 192 |
| 35 | Ես տաղանդներ ունեմ | 198 |
| 36 | Ես իմաստուն եմ, երբ ճիշտն եմ ընտրում | 205 |
| 37 | Ես կարող եմ Կիրակին սուրբ պահել | 211 |
| 38 | Ես կհիշեմ Հիսուս Քրիստոսին հաղորդության ժամանակ | 219 |
| 39 | Ես կարող եմ հետևել Հիսուս Քրիստոսին, ծառայելով ուրիշներին | 225 |
| 40 | Ես կարող եմ ներել ուրիշներին | 230 |
| 41 | Հիսուս Քրիստոսը մեր Փրկիչն է | 236 |
| 42 | Հիսուս Քրիստոսի Եկեղեցին երկրի վրա | 242 |
| 43 | Հիսուս Քրիստոսը նորից կգա | 248 |
| 44 | Ես կարող եմ սեր ցույց տալ կենդանիների հանդեպ | 253 |
| 45 | Մենք տոնում ենք Հիսուս Քրիստոսի Հարությունը (Զատիկ) | 261 |
| 46 | Հիսուս Քրիստոսը մեծագույն պարգևն է (Սուրբ Ծնունդ) | 267 |
| Words to the Songs | | 273 |

# Օգնություն ուսուցչին

**Նպատակ**

Այս ձեռնարկը նախատեսված է օգնելու ուսուցչին երեխաներին սովորեցնել, որ հետևելով Հիսուս Քրիստոսի օրինակին նրանք կարող են ընտրել ճիշտը, մկրտվել և դառնալ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամը:

**Ուղերձ Երեխաների խմբի ուսուցիչներին**

Մեր Երկնային Հայրը ձեզ սրբազան կոչում է տվել՝ ուսուցանել երեխաներին Հիսուս Քրիստոսի ավետարանը և օգնել նրանց սվորել ապրել ըստ դրա: Ծառայելով երեխաներին և նրանց հրավիրելով «գալ դեպի Քրիստոսը», դուք կօրհնեք նրանց կյանքը: Դուք նրանց կարող եք օգնել սկսել հասկանալ Երկնային Հոր օրհնությունները և ստանալ նրա ավետարանի մասին վկայություններ: Դուք նույնպես կաճեք և կսովորեք երեխաներից: Երեխաների խմբում ձեր ծառայությունը մեծ ուրախություն կարող է ձեզ պարգևել: Ծառայելով Երեխաների խմբի անդամներին դուք կծառայեք Երկնային Հորը ևս (տե՛ս Մոսիա 2.17):

Ապրելով ավետարանի սկզբունքներով, ուսումնասիրելով սուրբ գրությունները, հետևելով քահանայության ղեկավարների խորհուրդներին և աղոթքի միջոցով Երկնային Հորն էլ ավելի մոտենալով դուք Սուրբ Հոգուց ոգեշնչում կստանաք այն երեխաների վերաբերյալ, որոնց ուսուցանում եք: Երեխաներին հաճախ բերեք ձեր վկայությունը և թույլ տվեք որ այդ կարևոր կոչման մեջ Սուրբ Հոգին աշխատի ձեր միջոցով: Եթե այդպես անեք, Հոգին կառաջնորդի ձեզ և այն ամենն, ինչ դուք անում եք Երեխաների խմբում, ընդունելի կլինի մեր Երկնային Հոր համար:

**Տեղեկություն դասընթացի մասին**

ԸՃ նշանակում է *Ընտրիր Ճիշտը*: Այս ձեռնարկի սկզբում գտնվող ԸՃ վահանակը և ԸՃ մատանին (31362) օգտագործվում են մի քանի դասերի ընթացքում: Ի լրումն, դաս 1 պարունակում է ԸՃ սխեմա պատրաստելու հրահանգներ, որը նույնպես օգտագործվում է մի քանի դասերում: ԸՃ մատանին կրողի համար ծառայում է որպես ճիշտն ընտրելու անձնական հիշեցում: Եթե ԸՃ մատանի կարելի է ձեռք բերել ձեր տարաքում, ապա եպիսկոպոսի կամ ճյուղի նախագահի հետ խորհրդակցեք, թե ինչպես կարելի է օգտվել ծխի կամ ճյուղի ֆոնդերից յուրաքանչյուր երեխայի համար մեկական մատանի ձեռք բերելու համար:

**Դասաժամ**

Աղոթք

Յուրաքանչյուր դաս սկսեք և ավարտեք աղոթքով: Յուրաքանչյուր երեխայի հնարավորություն տվեք ժամանակ առ ժամանակ աղոթելու: Աղոթքը դարձրեք դասի իմաստալից մասը, տալով աղոթքների վերաբերյալ հրահանգներ և առաջարկություններ և երեխաներին խնդրելով տրամադրել մտքեր աղոթքների մեջ ընդգրկելու համար: Ձեր առաջարկությունները կենտրոնացրեք դասարանի կարիքների և դասի ուղերձի շուրջ:

**Դասերի ուսուցանումը**

Յուրաքանչյուր դասի համար պատրաստվեք ուշադրությամբ և աղոթքով, որպեսզի երեխաները հասկանան և դասը հաճելի լինի նրանց, և որպեսզի դուք առաջնորդվեք Հոգով:

Դասերը ուսուցանեք հերթականությամբ, բացի 45 և 46 (Զատիկ և Սուրբ Ծնունդ) դասերից: Եթե տարվա ընթացքում կան մկրտվող երեխաներ, ապա առաջին երեխայի մկրտությունից առաջ կարող եք ուսուցանել 12 և 13 դասերը, որոնք մկրտության և հաստատման մասին են:

Ընտրեք դասի այն նյութերը, որոնք առավել համապատասխան են ձեր դասարանի համար: Յուրաքանչյուր դասի վերջում տրված լրացուցիչ վարժությունները նախատեսված են ձեր հայեցողությամբ դասի ժամանակ օգտագործելու համար: Դասի ոչ բոլոր նյութերը կամ լրացուցիչ վարժությունները համապատասխան կլինեն ձեր դասարանի կամ տարածքի երեխաների համար:Որոշ վարժություններ չափից դուրս դժվար կարող են լինել չորս տարեկանների համար, մյուսները կարող են շատ պարզ ու ձանձրալի լինել յոթ տարեկանների համար:

Ընտրեք այնպիսի վարժություններ, որոնք դուր կգան ձեր դասարանին: Եթե դասարանում ունեք տարիքով փոքր երեխաներ, ապա դասի ժամանակ հաճախ կարող եք օգտագործել երգեր և մատնախաղ նրանց ուշադրությունը գրավելու համար: Եթե երգը կամ մատնախաղը դուր է գալիս երեխաներին, ապա դրանք կարող եք կրկնել մի քանի անգամ: Փոքրերի համար բառաշերտերի փոխարեն կարող եք օգտագործել ձեր նկարած կամ ամսագրերից կտրատած նկարներ ուսուցանվող գաղափարը ներկայացնելու համար:

Դասը մի կարդացեք երեխաների համար: Նրանց համար ավելի հետաքրքիր կլինի, եթե դուք պատմեք ձեր խոսքերով: Հաճախ բերեք կարճ անձնական վկայություն, որպեսզի դասարանի անդամները կարողանան լսել և արձագանքել ավետարանի ուղերձին Հոգու օգնությամբ:

**Երաժշտությունը դասարանում**

Երաժշտությունը կարող է դասարան բերել Տիրոջ Հոգին: Ամբողջ դասարանով երգելը ձեր դասերը ավելի հետաքրքիր կդարձնի և կարող է երեխաներին օգնել ավելի լավ հիշել դասի գաղափարները:

Այն երգերի բառերը, որոնք ձեռնարկում օգտագործվում են միայն մեկ անգամ, ընդգրկված են դասի մեջ:

Պարտադիր չէ լինել մասնագիտացված երաժիշտ դասարանում երգեցողությունը հաճելի փորձառություն դարձնելու համար: Երեխաները չեն իմանա, լավ եք դուք երգում, թե՝ ոչ, նրանք միայն կիմանան, որ դուք հաճույքով եք երգում: Դասին նախապատրաստվելիս տանը սովորեք և պարապեք երգերը: Եթե հատուկ օգնության կարիք ունեք, խնդրեք Երեխաների խմբի երաժշտության ղեկավարին կամ դաշնակահարին ձեզ օգնել:

Երգերի հետ կարող եք համապատասխան գործողություններ կատարել, հատկապես եթե դասարանում փոքր երեխաներ ունեք: Կարող եք նաև խոսքերը երգելու փոխարեն արտասանել:

**Հավատո հանգանակներ**

Հավատո հանգանակները Երեխաների խմբի ծրագրի կարևոր մասն են կազմում: Երբ դասում օգտագործվում է Հավատո հանգանակը, երեխաներին խրախուսեք անգիր սովորել հանգանակի այնքան մասը, որքանը որ կկարողանան հիշել:

**Սուրբ գրություններ**

Ձեր սուրբ գրությունները ամեն շաբաթ ձեզ հետ դասարան բերեք, որպեսզի երեխաները տեսնեն, որ դուք կարդում եք դրանք և սովորեցնում դրանցից: Եթե երեխաներն ունեն իրենց սուրբ գրությունները, նրանց խրախուսեք դրանք ամեն

շաբաթ դասարան բերել: Տարիքով ավելի մեծ երեխաներին օգնեք գտնել և կարդալ հատվածները, որոնք օգտագործվում են դասի մեջ: Ժամանակ առ ժամանակ բերեք ձեր վկայությունը սուրբ գրությունների արժեքի վերաբերյալ:

Ուսուցման նյութեր

Նկարներ: Դասերում օգտագործվող նկարների մեծ մասը համարակալված է և ընդգրկված է ձեռնարկին կից փաթեթում: Այս նկարները պետք է միշտ ձեռնարկի հետ լինեն: Յուրաքանչյուր դասի համար պահանջվող նկարները նշված են դասի «Նախապատրաստություն» բաժնում: «Նախապատրաստություն» բաժնում ներառված են նաև ժողովատան գրադարանի այն նկարների համարները, որոնց ավելի մեծ օրինակները կարող են լինել ձեր ժողովատան գրադարանում (գրադարանում նույն թեմային վերաբերվող որոշ նկարներ կարող են տարբեր լինել) և Ավետարանի Արվեստի նկարների փաթեթի համարները:

Ցուցադրական նյութեր և կտրելու նյութեր: Դասերում օգտագործվող կտրելու նյութերը ձեռնարկի մեջ են և պետք է պահվեն ձեռնարկի հետ: Կտրեք և պատկերները օգտագործեք համապատասխան դասերում: Դուք կարիք կունենաք պատրաստել ուսուցողական պարզ այլ նյութեր, օրինակ՝ բառաշերտեր, քարտեզներ և թերթիկներ: Այդ նյութերը պահեք հետագա դասերի ժամանակ, ինչպես նաև ապագայում օգտագործելու համար:

*Երաժշտություն:* Տե՛ս «Երաժշտությունը դասարանում», էջ viii:

*Սնունդ:* Երբ դասն առաջարկում է սննդի օգտագործում, երեխաների ծնողներից նախօրոք տեղեկացեք, թե արդյոք սնունդը երեխաների մոտ չի առաջացնի ալերգիա կամ սննդի հանդեպ այլ բացասական ռեակցիա: Սնունդ չբերեք ծոմի կիրակի օրը:

---

## Միացյալ ժամի ելույթներ

Երբեմն ձեր դասարանին կհանձնարարվի Երեխաների խմբի միացյալ ժամին ավետարանի թեմայով պարզ ելույթ պատրաստել: Այդ ելույթները պետք է հիմնվեն դասերի վրա: Դասերին նախապատրաստվելիս և դասերն անցկացնելիս փնտրեք միացյալ ժամերի համար հարմար մտքեր: Կարող եք նաև կիսվել երեխաների հաղորդության ժողովի ընթացիկ ելույթի սկզբունքներից մեկով:

Ձեր ղեկավարությամբ երեխաների կողմից ավետարանի որևէ սկզբունք ուսուցանելը արդյունավետ եղանակ է օգնելու նրանց սովորել այդ սկզբունքը և կիսվել դրանով:

Հետևեք, որպեսզի միացյալ ժամի ելույթը լինի պարզ և չպահանջի շատ պարապմունքներ: Կարող եք դասաժամի մի մասը տրամադրել ելույթի նախապատրաստմանը: Հետևյալ առաջարկությունները կարելի է օգտագործել պարզ և արդյունավետ ելույթներ պատրաստելու համար.

1. Երեխաներին օգնեք բեմականացնել դասից որևէ պատմություն կամ իրավիճակ:
2. Երեխաներին խնդրեք դասից որևէ պատմություն պատմել, օգտվելով նկարներից, բառաշերտերից կամ կտրած պատկերներից:
3. Երեխաներին խնդրեք արտահայտել իրենց գալիք մկրտության վերաբերյալ իրենց զգացմունքները: Եթե ութ տարեկանը լրացած և մկրտված երեխաներ կան, խնդրեք նրանց կիսվել մկրտության վերաբերյալ իրենց զգացմունքներով:
4. Երեխաներին օգնեք կրկնել և բացատրել հավատո հանգանակները:

**Միացյալ ժամ երեխաների ընտանիքների հետ**

Երեխաներին խրախուսեք իրենց ընտանիքների հետ կիսվել Երեխաների խմբում իրենց սովորածով: Ժամանակ առ ժամանակ ծնողներին հրավիրեք գալ և մասնակցել ձեր դասին այն ավելի հետաքրքիր դարձնելու համար: Ողջունեք ծնողների մտքերը, որոնք կօգնեն Երեխաների խմբի դասերը ավելի իմաստալից դարձնել:

**Նախապատրաստություն մկրտությանը**

Եթե ձեր դասարանում ունեք յոթ տարեկաններ, ապա նրանցից ոմանք հնարավոր է տարվա ընթացքում մկրտվեն: Որպես Երեխաների խմբի ուսուցիչ դուք կարող եք աջակցել երեխաների ընտանիքներին և օգնել դասարանի անդամներին պատրաստվել մկրտությանը: Հետևյալ առաջարկությունները ձեզ կօգնեն այդ գործը կատարելիս.

1. Հնարավորության դեպքում մինչև ձեր դասարանի առաջին երեխայի մկրտությունը անցկացրեք դասեր մկրտության և հաստատման մասին (դասեր 12 և 13):
2. Յուրաքանչյուր երեխայի մկրտությունից առաջ, կիրակի օրը դասի սկզբում մի քանի րոպե տրամադրեք այդ արարողության կարևորությունը քննարկելու համար:
3. Հնարավորության դեպքում, ներկա եղեք երեխայի մկրտությանը Երեխաների խմբի նախագահության որևէ անդամի և դասարանի այլ անդամների հետ, որոնք կարող են այցելել:
4. Երեխաներին օգնեք միացյալ ժամի համար պատրաստել մկրտության մասին ելույթ:

**Հասկանալ երեխաներին**

Երեխաներին Հիսուս Քրիստոսի ավետարանը սովորեցնելու ձեր կոչումը սուրբ վստահություն է, որ տրվել է ձեզ ձեր եպիսկոպոսության կամ ճյուղի նախագահության միջոցով: Քահանայության այդ ղեկավարները ձեզ կանչել են Երկնային Հոր կողմից ոգեշնչում ստանալուց հետո: Դուք մեծ ազդեցություն կարող եք գործել ձեր դասարանի երեխաների վրա, նրանց սովորեցնելով իրենց կյանքի ընթացքում հետևել Փրկչին:

Դասարանի երեխաների հանդեպ միշտ դրական վերաբերմունք և սեր ցուցաբերեք: Ծանոթացեք բոլոր երեխաների տաղանդների, հետաքրքրությունների և կարողությունների հետ: Կարդալ և գրել պահանջող դասի վարժությունները հարմարեցրեք երեխաների կարողություններին:

Բոլոր երեխաներին օգնեք ինքնագնահատման դրական զգացում ձևավորել, լսելով նրանց և յուրաքանչյուրին որքան հնարավոր է շատ անհատական ուշադրություն տրամադրելով:

Այս դասերը պատրաստվել են չորսից–յոթ նույն տարիքի կամ խառը տարիքի երեխաների համար: Սակայն, դուք կարող եք հարմարեցնել դասերը, հաշվի առնելով ձեր դասարանի տարիքային տարբերությունները: Անկախ նրանից, թե ինչպես է կազմված ձեր դասարանը, տարիքային ընդհանուր հատկությունները հասկանալը կօգնի ձեզ ավելի արդյունավետ ուսուցանել: Դա ձեզ

կօգնի հասկանալ, թե ինչու են երեխաները վարվում այս կամ այն ձևով և ինչ եղանակներով նրանց ուսուցանել, որպեսզի ավելի լավ ըմբռնեն նյութը: Երեխաներին հասկանալը ձեզ կօգնի նաև դասարանում լավ մթնոլորտ պահպանել: Դասերին նախապատրաստվելիս վերանայեք հետևյալ բնորոշ հատկությունները: Հիշեք նաև, որ յուրաքանչյուր երեխա հասունանում է իր ուրույն ժամանակին: Սրանք միայն ընդհանուր ցուցումներ են:

Չորս տարեկաններ

Չորս տարեկանը բացահայտում է աշխարհը: *Ինչու և ինչպես* բառերը չորս տարեկանների կողմից առավել հաճախ օգտագործվող բառերն են: Չորս տարեկանները շատ ակտիվ են: Ստորև տրվում է չորս տարեկանների ընդհանուր բնորոշումը.

1. Նրանք կարող են վազել, ցատկել և բարձրանալ ավելի հեշտությամբ և ավելի մեծ վստահությամբ, քան երեք տարեկանները: Նրանք կարող են նետել գնդակը և հարվածել գնդակին, և աղյուսներից տնակ կառուցել:
2. Նրանք շատ են սիրում ասել. «Ես դա արդեն արել եմ, այժմ ես մի ուրիշ բան կարող եմ անել»:
3. Նրանք սիրում են խաղալ մյուս երեխաների հետ, սակայն պատրաստ չեն մեծ խմբի հետ գործ ունենալու համար:
4. Թեպետ նրանք ցանկանում են խաղալ այլ երեխաների հետ և ունեն դրա կարիքը, նրանք հիմնականում խաղում են առանձին: Նրանք կարող են խաղալ կամ պարել երաժշտության տակ խմբի հետ, սակայն ուշադրություն չեն դարձնում, թե ինչպես են խաղում կամ պարում մյուս երեխաները:
5. Բացի շատ հարցեր տալուց նրանք կարող են զրույց վարել մեկ այլ երեխայի կամ մեծահասակի հետ:
6. Քանի որ իրենց փորձը ձեռք են բերում հիմնականում տանը, նրանք մեծ մասամբ խոսում են տան և ընտանիքի մասին: Այս տարիքի երեխաները սիրում են ուսուցչին պատմել իրենց ընտանիքների մասին: Նրանք հաճախ ավելի մեծ հետաքրքրությամբ պատմում են իրենց պատմությունները, քան լսում են ուրիշ երեխաների պատմությունները: Նրանք սիրում են այն դասերը և վարժությունները, որոնք կենտրոնացած են ընտանիքի շուրջ:
7. Նրանք ամբողջովին ապրում են այստեղ և այսօր: Երեկ և վաղը նրանց հետաքրքիր չէ: Սակայն, նրանք մեծ ոգևորությամբ սպասում են գալիք իրադարձություններին, և քանի որ նրանք դեռ չեն կարողանում ըմբռնել ժամանակի իմաստը, ապագա իրադարձության մասին հաճախ կարող են հարցնել. «Դա վա՞ղն է»:
8. Նրանք սիրում են լսել պատմվածքներ և մանկական բանաստեղծություններ: Նրանք սիրում են կրկին ու կրկին նույնությամբ լսել սիրված պատմվածքները: Պատմվածքը լսելուց հետո նրանք սիրում են կատարել հերոսների դերերը:
9. Մի փոքր օգնությամբ նրանք կարող են սովորել աղոթել:

Հինգ տարեկաններ

Հինգ տարեկանները ավելի ինքնավստահ են և կապված մյուսների հետ: Նրանք սովորաբար գիտեն, թե ինչ է իրենցից ակնկալվում տանը: Նրանք հաջողությամբ խաղում են ուրիշ երեխաների հետ, բայց կարող են նաև իրենք իրենց զբաղեցնել տարբեր եղանակներով, օրինակ ցատկոտելով կամ նկարելով: Ստորև տրվում են հինգ տարեկաններին բնորոշ պահելաձևը.

1. Նրանց մեծ մկանային կոորդինացիան շարունակում է զարգանալ: Այժմ նրանք կարող են ցատկել, գլուխկոնձի տալ և ցատկոտել մեկ ոտքի վրա: Նրանք կարող են առանց դժվարության սահնակ կամ սայլակ քարշ տալ:

2. Նրանց փոքր մկանային կոորդինացիան այժմ թույլ է տալիս սոսնձել, կտրատել նկարներ և գունավորել ուրվագծած նկարներ, թեպետև նրանք գծերից կարող են դուրս գալ: Շատերը կարող են կապել կոշկաքուղերը:

3. Նրանք ավելի վստահելի ու անկախ են, քան չորս տարեկանները: Նրանք հաճախ ցանկանում են օգնել տան գործերով և երջանիկ են, երբ կարողանում են աշխատել ծնողների հետ:

4. Նրանք լրջությամբ հարցնում են.«Ինչի՞ համար է սա» կամ «Ինչպե՞ս է սա աշխատում»: Նրանք ուզում են և պետք է ստանան մտածված և ազնիվ պատասխաններ այնպիսի լեզվով և մանրամասներով, որոնք կարող են հասկանալ:

5. Նրանք սիրում են իրենց ուսուցիչներին և պատիվ են համարում նստել նրանց կողքին: Նրանք ուրախանում են, երբ ուսուցիչները իրենց խնդրում են օգնել դասի ժամանակ պահել նկարը կամ որևէ այլ գործ կատարել:

6. Նրանք սիրում են փոքր խմբակային ծրագրեր և տան ու ընտանիքի թեմայով դերակատարումներ:

7. Նրանք սիրում են լսել ու պատմել պատմվածքներ, կրկին ու կրկին խնդրելով պատմել միևնույն պատմվածքը: Կրկնողությունը սովորելու նրանց հիմնական եղանակն է: Հաճախ թերթելով գրքի էջերը, նրանք կարող են բառ առ բառ կրկնել պատմվածքը:

8. Նրանք սովորաբար ընկերասեր են, զգայուն, բարեհամբյուր և օգնող, սակայն, եթե ինչ որ բան իրենց ուզած ձևով չի լինում, կարող են շատ վրդովվել:

9. Նրանք սիրում են նոր արտոնություններ ստանալ, ցույց տալու համար, որ ավելի մեծ և կարևոր են:

10. Տասից տասներկու րոպե մի բանի վրա ուշադրությունը կենտրոնացնելուց հետո արագորեն կարող են մի զբաղմունքից անցնել մյուսին: Նրանք սկսում են մտածել, որ շատ մեծ են մատնախաղի համար, և ցանկանում են կատարել ավելի մեծ տարիքի երեխաների վարժություններ:

11. Նրանք հաճախ պահանջում են այն, ինչի հետ մեկ ուրիշ երեխա արդեն խաղում է: Սման իրավիճակներն աշխատեք շտկել զգուշությամբ, երեխաներին սովորեցրեք հերթականությամբ խաղալ:

12. Նրանք գերադասում են խաղալ փոքր խմբերով: Նրանք ավելի շուտ կխաղան իրենց լավագույն ընկերոջ հետ, քան խմբով:

13. Նրանք դեռ չեն կարողանում տարբերել իրականությունը պատկերացումից: Այսպիսով, երեխան կարող է ասել, որ ժամացույցը պատրաստված է ոսկուց, որ իր հայրը բոլորի հայրերից ամենամեծն է, կամ, որ իր բռնած ձուկը չափազանց երկար է: Սա երեխայի կյանքի զարգացման նորմալ փուլ է: Ժամանակ է պահանջվում, որպեսզի երեխան սովորի տարբերել, ինչն է իրական, իսկ ինչը՝ ոչ: Երեխայի զարգացման ընթացքում սա անցնում է:

14. Նրանք սովորելու մեծ սիրահարներ են: Քանի որ Երկնային Հայրը նրանց համար շատ իրական է, նրանք շատ են հետաքրքրվում նրանով և բազմաթիվ հարցեր են տալիս: Նրանք հաճույքով աղոթում են և ի վիճակի են աղոթել առանց օգնության:

**Վեց տարեկաններ**

Վեց տարեկանները լավ տիրապետում են իրենց մարմիններին և մեծ էներգիա ունեն նոր հմտություններ ձեռք բերելու և արդեն ունեցած ունակությունները կատարելագործելու համար: Օրինակ, նրանք կարող են սովորել պարանով

ցատկել, գետնին հարվածելով խաղալ գնդակով, սուլել, թռնել միմյանց վրայով և հեծանիվ քշել: Վեց տարեկանները դեռ դժվարություններ ունեն իրենց փոքր մկանային համակարգը օգտագործելիս, սակայն նրանք կարող են սովորել տպատառ գրել տառերը, իրենց անունները և մի քանի այլ բառեր: Ստորև տրվում է վեց տարեկանների ընդհանուր բնորոշումը.

1. Նրանց ուշադրության կենտրանացման ժամանակահատվածը մեծանում է: Թեպետև նրանք կարող են դառնալ շատ անհանգիստ, նրանք կարող են նաև կենտրոնանալ մեկ զբաղմունքի վրա տասնհինգից քսան րոպե, կախված նրանց հետաքրքրության աստիճանից:
2. Նրանք սիրում են շարժվել ամբողջ մարմնով, օրինակ ծառ մագլցել, խաղալ խաղահրապարակում կամ մրցավազքի մասնակցել:
3. Նրանք սիրում են խաղեր և ընկերական մրցումներ:
4. Ուսուցչի կարծիքը շատ կարևոր է նրանց համար: Նրանք սիրում են նստել ուսուցչի կողքին և օգնել դասի անցկացմանը՝ պահելով նկարները կամ նյութերը տանելով գրադարան:
5. Նրանք դեռ սիրում են պատմվածքներ լսել, բեմականացնել և դերակատարել դրանք: Շատերը սիրում են մեծ երեխաների զգեստ կրել:
6. Նրանք շատ բարի են, հասկացող և մերվող, քանի դեռ ամեն ինչ իրենց ուզած ձևով է ընթանում, այլապես նրանք շատ աղմկոտ են դառնում:
7. Նրանք կարող են կատարելագործել ցատկելու, վազվզելու և թռչկոտելու իրենց ունակությունները: Նրանք հաճույքով այդ ունակություններն օգտագործում են խաղերի ժամանակ:
8. Նրանք շատ հետաքրքրված են, թե որն է լավ ու վատ պահվածքը:
9. Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հանդեպ նրանց հավատքն աճում է: Վեց տարեկանների մեծ մասը կարող են առանձին աղոթել, եթե տանը կամ այլ դասարաններում նման փորձ ունեցել են:

**Յոթ տարեկաններ**

Յոթ տարեկանում երեխաները դեռ մոտ են իրենց ծնողների հետ և դեռ գնահատում են նրանց սերը, ուշադրությունը և հոգատարությունը, սակայն նրանք սկսում են ավելի ու ավելի շատ կախված լինել տնից դուրս գտնվող մարդկանցից ու իրավիճակներից: Նրանք անհատական ճաշակ ունեն և ուզում են, որ իրենց թույլ տան որոշումներ կայացնել: Նրանք կենսուրախ են, աշխույժ և հետաքրքրվում են իրենց շուրջը տեղի ունեցող երևույթներով: Նրանք բացահայտում են տարբեր զբաղմունքներ և սիրում են կրկնել այն բաները, որոնք ավելի մեծ հաճույք են պարգևում: Ստորև տրվում է յոթ տարեկանների ընդհանուր բնորոշումը.

1. Նրանց մեծ մկանային համակարգը լավ է կառավարվում և նրանց շարժուձևը դառնում է ավելի նրբագեղ, արագ և աշխույժ:
2. Նրանց փոքր մկանային համակարգը շարունակում է զարգանալ: Նրանք ավելի հեշտությամբ և ավելի ճշգրիտ են գրում տպատառերով:
3. Նրանք սիրում են թավալգլոր խաղեր, կրկին և կրկին նույն խաղերը խաղալով:
4. Նրանք հաճախ անհանգիստ են և շարժուն: Նրանք լի են էներգիայով, սակայն շուտ հոգնում են: Հանգստի պահերը կարևոր են:
5. Նրանք սիրում եմ իրեր հավաքել և խոսել դրանց մասին: Նրանք սիրում են նաև խոսել իրենց ձեռքով կամ խմբով պատրաստած իրերի մասին:

6. Նրանց ուշադրության կենտրոնացման ժամանակահատվածը մեծանում է, այս տարիքի երեխաները կարող են կատարել քսանից քսանհինգ րոպե տևողությամբ ամբողջ ծրագիր, եթե այն իրենց հետաքրքրում է: Նրանք դեռ հաճախ կարիք ունեն դասերի ընթացքում փոխել վարժությունները:
7. Նրանք ավելի քիչ են սկսում շփվել հակառակ սեռի ներկայացուցիչների հետ:
8. Նրանք ավելի քիչ են ձգտում գերիշխել կամ պահանջել իրենցը:
9. Մտածողության մեջ նրանք դառնում են ավելի անկախ ու տրամաբանական:
10. Նրանք ավելի լավատեղյակ են ճիշտ և սխալ որոշումների մասին և շատ քննադատաբար են մոտենում նրանց, ովքեր ըստ իրենց ճիշտ չեն վարվում:
11. Նրանք անհամբերությամբ սպասում են մկրտությանը:
12. Նրանք կարող են առանձին աղոթել և ակնկալում են, որ իրենց աղոթքներն անմիջապես պատասխան կստանան:
13. Նրանք հպարտանում են, որ ծոմի կիրակի օրը կարողանում են առնվազն մեկ ճաշաժամ բաց թողնել և վճարել տասանորդ:

---

**Հատուկ խորհուրդներ հաշմանդամներ ին ներգրավելու համար**

Փրկիչը մեզ համար օրինակ է ծառայել, հաշմանդամների հանդեպ ցավակցություն ու կարեկցանք ցուցաբերելով: Երբ հարությունից հետո նա այցելեց Նեփիյցիներին, ասաց.

«Ունե՞ք ձեր մեջ այնպիսիք, որ հիվանդ են: Բերեք նրանց այստեղ: Ունե՞ք դուք կաղեր, կամ կույրեր, կամ խեղվածներ, կամ հաշմանդամներ, կամ բորոտներ, կամ որ չորացած են, կամ, որ խուլ են, կամ, որ չարչարված են ինչ-որ ձևով: Բերեք նրանց այստեղ, և ես կբժշկեմ նրանց, քանզի ես կարեկցանք ունեմ ձեզ վրա» (3 Նեփի 17.7):

Որպես Երեխաների խմբի ուսուցիչ դուք կարեկցանք ցուցաբերելու հիանալի հնարավորություն ունեք: Թեպետ դուք մասնագիտական օգնություն ցուցաբերելու հատուկ կրթություն չեք ստացել, դուք կարող եք հասկանալ և ուսուցանել հաշմանդամ երեխաներին: Հոգածությունը, հասկացողությունը և դասարանի յուրաքանչյուր անդամին ուսուցման մեջ ներգրավելու ցանկությունը շատ կարևոր են:

Հաշմանդամ երեխաները կարող են Հոգու ազդեցությունն ունենալ, անկախ հասկանալու նրանց ունակությունից: Թեպետ որոշ երեխաներ չեն կարող ներկա լինել ամբողջ դասի ընթացքում, նրանք պետք է հնարավորություն ունենան անգամ կարճ ժամանակով այցելել, որպեսզի զգան Հոգին: Երբեմն նրանք ուղեկցողի կարիք կունենան, որը զգայուն կլինի երեխայի կարիքների նկատմամբ և նրա հետ կլինի ողջ դասի ընթացքում, որպեսզի անհրաժեշտության դեպքում երեխան առանձնանա խմբից:

Դասարանի որոշ անդամներ կարող են ունենալ սովորելու դժվարություններ, մտավոր թերություններ, լեզվային կամ խոսակցական խնդիրներ, տեսողության կամ լսողության կորուստ, պահելաձևի կամ շփվելու խնդիրներ, մտավոր հիվանդություն, շարժողական կամ տեղափոխվելու հետ կապված խնդիրներ,

քրոնիկ առողջական թերություններ: Ոմանց համար դժվար կամ անծանոթ կլինեն լեզուն կամ տեղական շրջապատը: Անկախ անհանատական հանգամանքներից, յուրաքանչյուր երեխա հավասարապես կարիք ունի սիրված և ընդունված լինելու, ավետարանը սովորելու, Սուրբ Հոգին զգալու, հաջողությամբ մասնակցելու և ուրիշներին ծառայելու:

Այս խորհուրդները ձեզ կօգնեն ուսուցանել հաշմանդամ երեխաներին.

- Մի նկատեք թերությունները, այլ աշխատեք ճանաչել երեխային: Եղեք բնական, ընկերասեր և ջերմ:
- Ճանաչեք երեխայի առանձնահատուկ ուժեղ կողմերը և խնդիները:
- Ջանք մի խնայեք դասարանի անդամներին սովորեցնելու և հիշեցնելու դասարանի յուրաքանչյուր անդամին հարգելու իրենց պարտականության մասին: Դասարանի հաշմանդամ անդամին օգնելը կարող է Քրիստոսին նմանվելու փորձառություն լինել ամբողջ դասարանի համար:
- Գտեք երեխային ուսուցանելու լավագույն եղանակը, խորհրդակցելով ծնողների, ընտանքի այլ անդամների, և, հարկ եղած դեպքում, երեխայի հետ:
- Հաշմանդամ երեխաներին կարդալու, աղոթելու կամ այլ մասնակցություն ցուցաբերելու համար կանչելուց առաջ նրանց հարցրեք, թե ինչպես կզգան դասարանում մասնակցելու դեպքում: Խրախուսեք յուրաքանչյուր երեխայի ունակությունները ու տաղանդները, և փնտրեք այնպիսի եղանակներ, որոնց միջոցով յուրաքանչյուր երեխա մասնակցություն ցուցաբերելիս իրեն հանգիստ և հաջողակ կզգա:
- Դասի նյութերը և շրջապատող կահավորանքը հարմարեցրեք հաշմանդամ երեխաների անհատական կարիքներին:

Հաշմանդամ երեխաներին ուսուցանելու լրացուցիչ նյութեր կարելի է ձեռք բերել Եկեղեցու բաշխման կենտրոններից (տե՛ս «Նյութեր հաշմանդամների համար» բաշխման կենտրոնի կատալոգում):

---

**Ինչպես վարվել բռնության խնդիրների դեպքում**

Որպես ուսուցիչ դուք կարող եք իմանալ ձեր դասարանի այն երեխաների մասին, որոնք ենթարկվում են էմոցիոնալ կամ ֆիզիկական բռնության: Եթե ձեզ անհագստացնում է ձեր դասարանի որևէ երեխայի վիճակը, խորհրդակցեք ձեր եպիսկոպոսի հետ: Դասին նախապատրաստվելիս և այն մատուցելիս աղոթեք Տիրոջ առաջնորդությունն ու ուղղությունը ստանալու համար: Ձեր դասարանի յուրաքանչյուր երեխայի օգնեք զգալ, որ նա Երկնային Հոր թանկարժեք զավակն է և որ Երկնային Հայրն ու Հիսուս Քրիստոսը սիրում են մեզանից յուրաքանչյուրին և ցանկանում են, որ մենք լինենք երջանիկ և ապահով:

# Երջանկությունը գալիս է ճիշտն ընտրելու արդյունքում

Դաս
1

**Նպատակ**

Օգնել յուրաքանչյուր երեխային հասկանալ, որ երջանկությունը գալիս է ճիշտն ընտրելու արդյունքում:

**Նախապատրաստություն**

1. Աղոթքով ուսումնասիրեք Մաթևոս Ե.6 և 3 Նեփի 12.6: Տե՛ս նաև Վարդապետություն և Ուխտեր 58.27 և *Ավետարանի Սկզբունքներ* (31110), գլուխ 4:
2. Նկարեք ԸՃ սխեման: Փակցրեք նկար 2-1, Հիսուսը երեխայի հետ, մեծ թղթի կամ գրատախտակի վրա: Տպեք *ԸՃ* տառերը նկարի վերևում, իսկ նկարի տակ գրեք *Ես կընտրեմ ճիշտը* խոսքերը: Այս սխեման պահեք հետագա դասերի ժամանակ օգտագործելու համար:
3. Զրուցեք յուրաքանչյուր երեխայի ծնողների հետ և իմացեք մի քանի մանրամասներ երեխաների մասին, որոնց մասին կարող եք պատմել դասարանին:
5. Պահանջվող նյութեր.
   ա. Աստվածաշունչ կամ Մորմոնի Գիրք:
   բ. Կավիճ, գրատախտակ և ջնջիչ:
   գ. ԸՃ մատանի բոլոր այն երեխաների համար, ովքեր դեռ չունեն դա (տե՛ս «Տեղեկություն դասարանի մասին» «Օգնություն ուսուցչին» բաժնում, է. vii):
   դ. ԸՃ վահանակի մեկական օրինակ յուրաքանչյուր երեխայի համար (տրված է ձեռնարկի սկզբում):
   ե. Մատիտներ և մկրատներ:
   զ. Երկար թել յուրաքանչյուր երեխայի համար:
6. Անհրաժեշտ նախապատրաստություններ կատարեք այն լրացուցիչ վարժությունների համար, որոնք պատրաստվում եք անցկացնել:

**Դասի առաջարկվող ընթացք**

Ասեք բացիչ աղոթքը, արտահայտելով ձեր սերը Երկնային Հոր, Հիսուս Քրիստոսի և դասարանի երեխաների համդեպ:

**Երկնային Հայրն ու Հիսուս Քրիստոսը սիրում են մեզ**

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Երեխաներին մի փոքր պատմեք ձեր մասին, ձեր զգացմունքների և Երեխաների խմբի այս տարվա ձեր ծրագրերի մասին: Յուրաքանչյուր երեխային ներկայացրեք դասարանի մյուս անդամներին, պատմելով ինչ-որ բան նրա մասին:

ԸՃ սխեմա

Ցույց տվեք ձեր պատրաստած ԸՃ սխեման: Երեխաներին ասացեք, որ այս տարի Երեխաների խմբի դասարանում նրանք կսովորեն մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի մասին: Ամենակարևոր բանը, որ նրանք կսովորեն, դա այն է, թե որքան շատ է Հիսուսը սիրում նրանցից յուրաքանչյուրին: Վկայեք, որ Հիսուսը սիրում է ձեր դասարանի բոլոր երեխաներին: Նշեք յուրաքանչյուր երեխային

անվանապես, օրինակ. «Հիսուսը սիրում է Ստեֆանիին»: Երեխաներին ասացեք, որ Երկնային Հայրը նույնպես սիրում է նրանց:

### Երկնային Հայրն ու Հիսուս Քրիստոսը ցանկանում են, որ մենք երջանիկ լինենք

Ուսուցչի ելույթ

Երեխաներին ասացեք, որ քանի որ Հիսուս Քրիստոսն ու Երկնային Հայրը մեզ բոլորիս շատ են սիրում, նրանք ցանկանում են, որ մենք երջանիկ լինենք: Երեխաներին պատմեք այն պահերի մասին, երբ դուք իսկապես երջանիկ եք եղել: (Օրինակ, մկրտությունը, մյուսների հետ կիսվելը, ընկերների հետ զվարճանալը, նպատակի ուղղությամբ աշխատելը, ընտանիքի հետ հաճելի ժամանակ անցկացնելը, Հիսուսի մասին կարդալն ու սովորելը, տաճարում ամուսնանալը կամ միսիայում ծառայելը:)

Երեխայի մասնակցությունը

Երեխաներին թույլ տվեք պատմել այն պահերի մասին, երբ երջանկություն են ապրում: Եթե երեխաներն հուշման կարիք ունեն, տվեք հարցեր, օրինակ.

- Դու երջանի՞կ ես, երբ խաղում ես քո եղբայրների և քույրերի հետ:
- Դու երջանի՞կ ես, երբ օգնում ես քո մայրիկին կամ հայրիկին:
- Դու երջանի՞կ ես, երբ զբաղվում ես քո սիրած գործով:
- Դու երջանի՞կ ես, երբ գալիս ես եկեղեցի:

### Ճիշտն ընտրելը երջանկություն է պարգևում

Պատմվածք և քննարկում

Ձեր խոսքերով պատմեք հետևյալ պատմվածքը.

Ջեյմսը հասել էր այն տարիքին, երբ պետք է դառնար մեր դասարանի անդամը: Մի օր Երեխաների խմբի իր ուսուցչին նա հարցրեց, թե կարող է դասարան բերել իր տնային կենդանին: Նրա ուսուցիչը պատասխանեց. «Ընտրիր ճիշտը, Ջեյմս: Ընտրիր ճիշտը»:

- Ձեր կարծիքով, ի՞նչ ընտրեց Ջեյմսը:

Երբ Երեխաների Խմբի իր ուսուցչին նա հարցրեց, թե կարող է արդյոք եկեղեցի բերել իր ընկերոջը, ուսուցիչն ասաց. «Ընտրիր ճիշտը, Ջեյմս: Միշտ ընտրիր ճիշտը»:

- Ձեր կարծիքով, ի՞նչ ընտրեց Ջեյմսը:

Ջեյմսը լսել էր, թե ինչպես էին այս նույն խոսքերը շատ անգամ արտասանում իր ծնողները. «Ընտրիր ճիշտը, Ջեյմս: Երկնային Հայրն ու Հիսուսը ցանկանում են, որ մենք միշտ ընտրենք ճիշտը»:

- Ի՞նչ է նշանակում ընտրել ճիշտը:

Մի օր Ջեյմսը դպրոցից տուն վերադարձավ և տեսավ, որ մայրը մեկ կտոր խմորեղեն է թողել իր համար և մեկ կտոր էլ՝ եղբոր համար: Ջեյմսը շատ էր սիրում խմորեղեն և արագ կերավ իր բաժինը: Ապա նայեց եղբոր կտորի վրա: Նրա եղբայրը տանը չէր, և ոչ ոք չկար, որ ասեր. «Ընտրիր ճիշտը, Ջեյմս: Միշտ ընտրիր ճիշտը»:

- Ինչպե՞ս կվարվեիք դուք:
- Ի՞նչ կաներ Ջեյմսը, եթե ընտրեր ճիշտը:

Ջեյմսը կերավ եղբոր խմորեղենը: Երբ Ջեյմսի եղբայրը տուն եկավ, տեսավ, որ իր համար խմորեղեն չկա: Նա մտածեց, թե մայրը մոռացել է իր համար խմորեղեն թողնել և շատ տխրեց: Ջեյմսը վատ էր զգում, քանի որ կերել էր եղբոր խմորեղենը:

- Արդյո՞ք Ջեյմսը ճիշտն ընտրեց:
- Արդյո՞ք Ջեյմսը երջանիկ էր իր կատարած որոշման արդյունքում:
- Ինչպե՞ս պետք է Ջեյմսը վարվի այժմ:

Երեխաներին խնդրեք մտածել, թե ինչպես Ջեյմսը կարող է ուղղել իր սխալը: Շեշտեք, որ մենք միշտ պետք է ձգտենք ճիշտ ընտրություններ կատարել, սակայն եթե սխալ ընտրություն ենք կատարում, ապա պետք է աշխատենք ուղղել մեր սխալը: Երբ սխալ ընտրություններ ենք կատարում, դժբախտ ենք մեզ զգում, իսկ երբ ճիշտ ընտրություններ ենք կատարում, երջանիկ ենք լինում:

Սուրբ գրություն

Երեխաներին ասացեք, որ Հիսուսը մեզ ասել է, որ մենք երջանիկ կլինենք, եթե ճիշտն ընտրենք: Բարձրաձայն կարդացեք Մաթևոս Ե.6 կամ 3 Նեփի 12.6 (ներառյալ *արդարության* բառը): Բացատրեք, որ «քաղցած և ծարավ են արդարության» նշանակում է ընտրել ճիշտը: Մենք կօրհնվենք, երբ ճիշտն ընտրենք:

### ԸՃ նշանակում է Ընտրել Ճիշտը

Վարժություն գրատախտակի մոտ

- Ինչպե՞ս կարող է ձեր մայրիկը նշում կատարել ձեզ պատկանող որևէ բանի վրա, առանց գրելու ձեր անունն ամբողջությամբ: (Սա կարող է գրել ձեր անվան սկզբնատառերը:)

Բացատրեք, որ սկզբնատառերը մեր անվան առաջին տառերն են:

Երեխաներին հարցրեք, որն են ձեր անվան սկզբնատառերը: Տպատառ գրեք դրանք գրատախտակին և կրկնեք ձեր անունը, համապատասխան պահին մատնանշելով սկզբնատառը:

- Ո՞րն են ձեր սկզբնատառերը:

Գրատախտակին գրեք երեխաների անունների սկզբնատառերը և բացատրեք, թե ինչպես են դրանք ներկայացնում նրանց անունները: Նախ գրեք սկզբնատառերը, այնուհետև ավելացրեք անվան մնացած տառերը: (Եթե ձեր դասարանը մեծ է, որպես օրինակ օգտագործեք միայն մի քանի երեխաների անուններ:)

Գրատախտակին ուղղահայաց գրեք *ԸՃ,* ինչպես տրված է ստորև: Երեխաներին խնդրեք բարձրացնել ձեռքերը, եթե կարողանում են կարդալ տառերը:

Ը
Ճ

Ամբողջ դասարանի հետ միասին բարձրաձայն կարդացեք սկզբնատառերը: Երեխաներին ասացեք, որ այդ սկզբնատառերը ներկայացնում են երեք կարևոր բառեր: Լրացրեք գրատախտակի բառերը.

Ընտրիր
ճիշտը

Երեխաների հետ միասին կարդացեք բառերը և նրանց խնդրեք կրկնել սկզբնատառերը: Այնուհետև միասին ասացեք, թե ինչ են նշանակում այդ սկզբնատառերը:

Շեշտեք, որ երբ երեխաներն ասում են «ԸՃ», նրանք պետք է մտածեն «ընտրիր ճիշտը»: Նրանց ասացեք, որ այս սկզբնատառերը կօգնեն հիշել հետևել Հիսուս Քրիստոսին և անել այնպիսի բաներ, որոնք նրանց երջանիկ կդարձնեն:

**Մենք կարող ենք հիշել միշտ ճիշտը ընտրել**

ԸՃ սխեմա

Ցույց տվեք ԸՃ սխեմայի վրա Հիսուս Քրիստոսի նկարը: Երեխաներին ասացեք, որ այս տարի Երեխաների խմբում նրանք կսովորեն, թե ինչ է արել Հիսուսը և ինչ էր Նա սովորեցնում, երբ երկրի վրա էր: Բացատրեք, որ Հիսուսը միշտ ճիշտն էր ընտրում, և Նա ցանկանում է, որ մենք նույնպես ճիշտն ընտրենք, որպեսզի երջանիկ լինենք և օգնենք մյուսներին լինել երջանիկ: Երեխաներին խնդրեք կանգնել և միասին արտասանել ԸՃ սխեմայի բառերը. «Ես կընտրեմ ճիշտը»:

ԸՃ մատանի

Բաժանեք ԸՃ մատանին այն երեխաներին, որոնք դեռ չունեն այն (եթե ԸՃ մատանիները մատչելի չեն, անցեք ԸՃ վահանակի վարժությանը և քննարկեք վահանակի վրա գրված տառերը): Երեխաներին խնդրեք նայել իրենց մատանիներին:

- Ի՞նչ են նշանակում այս մատանու վրա գրված սկզբնատառերը: (Ընտրիր ճիշտը:)

Երխաներին ասացեք, որ իրենց ԸՃ մատանիները կարող են օգնել հիշել, որ Հիսուսը ցանկանում է, որ նրանք ճիշտն ընտրեն:

ԸՃ վահանակի վարժություն

Բոլոր երեխաներին տվեք մատիտներ և ԸՃ վահանակի մի օրինակ ներկելու համար: Բոլոր երեխաներին օգնեք կտրել վահանակը և վերևում մի փոքր անցք կտրել թել անցկացնելու համար: Թելը կապեք, որպեսզի երեխան կարողանա վահանակը կախել իր վզից:

**Ամփոփում**

Կրկնություն

- Ի՞նչ է նշանակում *ԸՃ*:
- Ի՞նչ է նշանակում ընտրել ճիշտը:
- Ո՞վ է սիրում մեզանից յուրաքանչյուրին և ցանկանում, որ մենք երջանիկ լինենք: (Երկնային Հայրը, Հիսուս Քրիստոսը:)
- Ի՞նչ են Երկնային Հայրն ու Հիսուս Քրիստոսը ցանկանում, որ մենք անենք, որպեսզի երջանիկ լինենք:

Վկայություն

Բերեք ձեր վկայությունը, որ Երկնային Հայրն ու Հիսուս Քրիստոսը սիրում են մեզ և ցանկանում են, որ մենք երջանիկ լինենք: Երեխաներին ասացեք, որ մենք կարող ենք խաղաղություն և երջանկություն գտնել, եթե հետևենք Երկնային Հորը և Հիսուսին և ընտրենք ճիշտը:

Երեխաներին գովեք ճիշտն ընտրելու, այսինքն Երեխաների խումբ գալու համար և խրախուսեք նրանց հաճախել ամեն շաբաթ:

Երեխաներին խրախուսեք գալիք շաբաթվա ընթացքում անգիր սովորել ԸՃ սխեմայի բառերը («Ես կընտրեմ ճիշտը»):

Երեխաներից մեկին հրավիրեք ասել փակիչ աղոթքը:

---

**Լրացուցիչ վարժություններ**

Հետևյալ վարժություններից ընտրեք նրանք, որոնք լավագույնս կհամապատասխանեն ձեր դասարանի երեխաներին: Դուք կարող եք դրանք օգտագործել դասի ընթացքում կամ որպես դասի վերանայում կամ ամփոփում: Լրացուցիչ ուղղության համար տե՛ս «Դասաժամ» «Օգնություն ուսուցչին» բաժնում:

1. Երեխաներին բացատրեք, որ այս տարի Երեխաների խմբում նրանք շատ բան կսովորեն ճիշտն ընտրելու մասին:

   Ցուցադրեք նկար 2-4, Նախաերկրային կյանքը; նկար 2-24, Ձկնորսներին կանչելը; և նկար 2-39, Մարգարե Ջոզեֆ Սմիթը: Երեխաներին ասացեք, որ նրանք կսովորեն մի քանի կարևոր մարդկանց մասին, որոնք ընտրել են ճիշտը: Տվեք յուրաքանչյուր նկարի համառոտ նկարագիրը:

   - Նկար 2-4: Մենք ընտրել ենք ճիշտը, երբ որոշել ենք գալ երկիր (տե՛ս դաս 4):
   - Նկար 2-24: Հիսուսի Առաքյալները ընտրեցին ճիշտը, երբ թողեցին ձկնորսությունը և հետևեցին նրան (տե՛ս դաս 15):
   - Նկար 2-39: Ջոզեֆ Սմիթը ընտրեց ճիշտը, աղոթելով ճշմարիտ եկեղեցին գտնելու համար (տե՛ս դաս 20):

2. Օգնելու համար երեխաներին միմյանց ավելի լավ ճանաչել, թղթերի վրա գրեք երեխաների անունները և դրեք թղթերը արկղի մեջ: Յուրաքանչյուր երեխա թող արկղից հանի մի անուն և այդ անունը կրող անձի մասին հուշումներ ասի, որպեսզի մնացածը կռահեն, թե ում անունն է գրված: Հուշող արտահայտություններ կարող են լինել «Այս անձը շատ է ժպտում», «Այս անձը կապույտ զգեստ է կրում», կամ «Այս անձը սև մազեր ունի»:

3. Նկարագրեք այն վարժությունները, որ երեխաները կարող են անել: Երեխաներին խնդրեք կանգնել, եթե գործողությունը ճիշտ ընտրություն է, և նստել, եթե գործողությունը սխալ ընտրություն է ներկայացնում: Օգտագործեք հետևյալ կամ ձեր մտածած օրինակները.

   - Արթնացեք վաղ առավոտյան, որպեսզի եկեղեցու համար ժամանակին պատրաստ լինեք:
   - Բարձրաձայն բողոքեք, երբ նախաճաշին չեք ստանում այն, ինչ ցանկանում եք:
   - Օգնեք ձեր փոքր քրոջը գտնել կորած կոշիկը:
   - Երեխաների խմբի նոր անդամին ասացեք «ողջույն»:
   - Երբ մտնում եք ժողովատուն, քայլեք աղմուկով:
   - Հաղորդության ժամանակ մտածեք Հիսուս Քրիստոսի մասին:
   - Երեխաների խմբի ձեր դասի ժամանակ լուռ լսեք:

Դաս
2

# Ես կարող եմ ընտրել ճիշտը

**Նպատակ**

Օգնել յուրաքանչյուր երեխայի հասկանալ, որ նա կարող է ընտրել ճիշտը, հարցնելով. «Ի՞նչ է Հիսուսը ցանկանում, որ ես անեմ»:

**Նախապատրաստություն**

1. Աղոթքով ուսումնասիրեք 2 Նեփի 31.10:
2. Պատրաստեք թռչնի մի բույն, մեջը՝ ձվերով, դասի պատմությունը պատկերավոր դարձնելու համար: Մի զամբյուղ վերցրեք, որի մեջ տեղադրեք ծղոտ, խոտ կամ թել: Երեք լավ եփված ձու դրեք զամբյուղի մեջ: Եթե ձու չկա, թղթից կտրեք երեք ձու և դրեք բույնի մեջ:
3. Թղթի հինգ կտորներ համարակալեք մեկից մինչև հինգը և տեղադրեք փոքր պարկի կամ արկղի մեջ:
4. Պահանջվող նյութեր.
   ա. Մորմոնի Գիրք:
   բ. ԸՃ նկար (տե՛ս դաս 1):
5. Անհրաժեշտ պատրաստություններ կատարեք այն լրացուցիչ վարժությունների համար, որոնք ցանկանում եք անցկացնել:

**Դասի առաջարկվող ընթացք**

Երեխաներից մեկին խնդրեք ասել բացիչ աղոթքը:

Եթե երեխաներին խնդրել եք շաբաթվա ընթացքում ինչ-որ բան կատարել, ստուգեք: Երեխաներին կարող եք հարցնել, արդյոք նրանք կարողացել են անգիր սովորել ԸՃ նկարի բառերը («Ես կընտրեմ ճիշտը»):

**Հիսուս Քրիստոսը ցանկանում է, որ մենք ընտրենք ճիշտը**

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Երեխաներին խնդրեք խաղալ «Հետևիր Ղեկավարին» խաղը: Երեխաները կանգնում են շարքով: Շարքի առաջին երեխան վազում է, ցատկոտում է կամ որևէ այլ ակտիվ շարժումներ է կատարում սենյակի այլ կողմում: Մյուս երեխաները հետևում են նրան, կրկնելով այն, ինչ անում է առաջին երեխան: Այնուհետև առաջին երեխան գնում է շարքի վերջը և երկրորդ երեխան դառնում է ղեկավար: Շարունակեք, մինչև որ բոլոր երեխաները հերթով կատարեն ղեկավարի դերը:

Սուրբ գրության քննարկում

Բարձրաձայն կարդացեք 2 Նեփի 31.10 առաջին մասը, մինչև *հետևիր ինձ:* Բացատրեք, որ Հիսուս Քրիստոսն է ասել այս խոսքերը: Հիսուսը ցանկանում է, որ մենք հետևենք իրեն:

- Ինչպե՞ս մենք կարող ենք հետևել Հիսուսին:

Բարձրաձայն կարդացեք 2 Նեփի 31.10-ի մնացած մասը: Բացատրեք, որ մենք հետևում ենք Հիսուս Քրիստոսին, երբ հնազանդվում ենք պատվիրաններին և անում այն բաները, որոնք կաներ Նա:

ԸՃ նկարը

Ցուցադրեք ԸՃ նկարը: Երեխաներին ասացեք, որ Հիսուսի մասին ավելի շատ սովորելով, նրանք կկարողանան ավելի լավ ընտրություններ կատարել, քանի որ Հիսուսի ուսմունքները մեզ ասում են, թե որն է ճիշտ:

Բացատրեք, որ երբ մենք դժվար ընտրության առաջ ենք կանգնած, ապա ինքներս մեզ կարող ենք հարց տալ, որը կօգնի մեզ իմանալ, թե որն է ճիշտ: Հարցը հետևյալն է. «Ի՞նչ կցանկանար Հիսուսը, որ ես անեի»:

Պատմվածք և քննարկում

Ձեր խոսքերով պատմեք հետևյալ պատմությունը, օգտագործելով ձեր պատրաստած բույնը:

Վորեն անունով մի փոքր տղա ապրում էր թռչյունների արգելանոցի մոտակայքում: Թռչյունների արգելանոցը մի վայր է, որտեղ պաշտպանում են թռչյուններին: Վորենի հայրիկի աշխատանքը կայանում էր նրանում, որ նա օգնում էր պաշտպանել թռչյուններին: Տան մոտ բարձր խոտերի մեջ Վորենը մի բույն էր գտել և շատ էր սիրում նայել ձվերին, երբ մայր թռչյունը չկար: Մի օր, երբ Վորենը նայում էր ձվերին, նա բարձր աղմուկ լսեց: Նայելով վեր նա տեսավ իրենց դպրոցից երկու տղաների, որոնք պարսատիկով խփել էին թռչյունին:

Տղաները տեսան Վորենին և մոտեցան բույնին նայելու: Տղաներից մեկը ուզում էր տրորեր ձվերը: Վորենը տղաներին համոզեց, որ չտրորեն ձվերը, և նա ասաց, որ օրենքով չի թույլատրվում սպանել արգելանոցի թռչյուններին: Տղաները Վորենին ասացին, որ նա ոչ ոքի չասի, որ նրանք սպանել են թռչյունին: Նրանք չէին ուզում պատժվել օրենքը խախտելու համար: Տուն գնալիս, Վորենը շատ դանդաղ էր քայլում, մտածելով այն մասին, թե ինչպես նա պետք է վարվեր: Եթե նա հայրիկին պատմեր տղաների մասին, նրանք կարող էին ծաղրել կամ վիրավորել իրեն:

ԸՃ նկարի վրա ցույց տվեք Հիսուսի նկարը:

- Ի՞նչ հարց պետք է Վորենը տար ինքն իրեն, որպեսզի կարողանար ընտրել ճիշտը: («Ի՞նչ Հիսուսը կցանկանար, որ ես անեի»:)
- Ի՞նչ կանեիք դուք:

Վորենը որոշեց հայրիկին պատմել տղաների մասին: Հայրիկն ասաց, որ կխոսի տղաների և նրանց ծնողների հետ: Երբ Վորենը հայրիկին ասաց, որ վախենում է տղաներին հանդիպել դպրոցում, հայրը նրան առաջարկեց տղաներին իր ընկերները դարձնելու ճանապարհ գտնել:

Վորենը չէր ուզում ընկերանալ տղաների հետ, որոնք կարող են սպանել թռչյուններին և տրորել ձվերը: Նրան դուր չեկավ իր հոր առաջարկությունը: Այդ գիշեր Վորենը մտածում էր այն մասին, ինչ ասաց հայրը: Վորենը պետք է որոշում կայացներ:

- Ի՞նչ որոշում պետք է կայացներ Վորենը:

Կրկին ցույց տվեք Հիսուսի նկարը ԸՃ վահանակի վրա:

- Ի՞նչ հարց պետք է Վորենը տար ինքն իրեն, որպեսզի կարողանար ընտրել ճիշտը: («Ի՞նչ Հիսուսը կցանկանար, որ ես անեի»:)
- Ի՞նչ պետք է աներ Վորենը:

Երբ Վորենը կրկին հանդիպեց տղաներին, նրանք բարկացած էին, որ նա ասել էր հորը իրենց մասին: Տղաները սպառնում էին ծեծել նրան: Վորենը վախենում էր, սակայն նա որոշեց վարվել այնպես, ինչպես կցանկանար Հիսուսը: Նա տղաներին ասաց, որ շաբաթ օրը պատրաստվում են հոր հետ սար բարձրանալ և հարցրեց, արդյոք չէին ցանկանա նրանք գալ իրենց

հետ: Տղաները զարմացան և սկզբում ոչինչ չասացին: Նրանք չէին ակնկալում, որ Վորենը այդքան ընկերական կլիներ իրենց հետ: Ի վերջո նրանք համաձայնվեցին: Տղաներին հրաժեշտ տալով, Վորենը խաղաղ զգացում ուներ: Նա գիտեր, որ տղաների հետ ընկերանալը ճիշտ ընտրություն էր: (Վերցրած է Claudia Remington, “The Nest,” *Friend,* May 1980, pp. 2–5:)

- Ինչո՞ւ Վորենը խաղաղ զգացում ունեցավ:
- Ե՞րբ եք դուք խաղաղ զգացում ապրել ճիշտ ընտրության և Հիսուսին հետևելու արդյունքում:

Երեխաներին հրավիրեք խոսել իրենց այն փորձառությունների մասին, որոնք կապված են ճիշտն ընտրելու հետ:

### Մենք կարող ենք անել այն, ինչ Հիսուսը ցանկանում է, որ մենք անենք

Քննարկում

Երեխաներին խնդրեք կրկնել հարցը. «Ի՞նչ կցանկանար Հիսուսը, որ ես անեի»: Ասացեք, որ նրանք պետք է սովորեն պատասխանել այդ հարցին: Ցույց տվեք համարակալված թղթերով լցված պարկը կամ արկղը: Երեխաներին խնդրեք հերթով հանել թղթերը: Կարդացեք այն դեպքի մասին, որը համապատասխանում է համարին և երեխային խնդրեք պատասխանել հարցերին: (Մեծ դասարանի դեպքում, կարող եք ավելացնել դեպքերի քանակը:)

1. Դուք խորհանարդներից կառույց եք պատրաստում: Ձեր փոքր քույրը քանդում է ձեր կառուցածը:
   - Ի՞նչ հարց դուք պետք է տաք ինքներդ ձեզ:
   - Ի՞նչ կցանկանար Հիսուսը, որ դուք անեիք:
2. Ձեր ընկերն եկել է ձեր տուն խաղալու: Ձեր եղբայրն ուզում է խաղալ ձեր և ձեր ընկերոջ հետ, բայց դուք ուզում եք խաղալ միայն ձեր ընկերոջ հետ:
   - Ի՞նչ հարց դուք պետք է տաք ինքներդ ձեզ:
   - Ի՞նչ կցանկանար Հիսուսը, որ դուք անեիք: (Հեշտեք, որ ձեր եղբորը խաղալու հրավիրելը միակ պատասխանը չէ, երեխաներին օգնեք գտնել այլ լուծումներ նս:)
3. Դուք ուզում եք ձեր հարևան երեխաների հետ գնդակ խաղալ: Նրանք ձեզ ծաղրում են ու ասում գնալ տուն: Դուք նույնպես ուզում եք վիրավորել նրանց:
   - Ի՞նչ հարց դուք պետք է տաք ինքներդ ձեզ:
   - Ի՞նչ կցանկանար Հիսուսը, որ դուք անեիք:
4. Ձեր մայրը խնդրում է, որ խաղալու գալուց առաջ հավաքեք ձեր անկողինը: Ձեր ընկերները սպասում են ձեզ դռան մոտ:
   - Ի՞նչ հարց դուք պետք է տաք ինքներդ ձեզ:
   - Ի՞նչ կցանկանար Հիսուսը, որ դուք անեիք:
5. Ձեր հայրը օգնության կարիք ունի, որպեսզի մաքրի տան բակը: Սակայն դուք ուզում եք գնալ տուն և վերջացնել գիրքը, որը կարդում էիք:
   - Ի՞նչ հարց դուք պետք է տաք ինքներդ ձեզ:
   - Ի՞նչ կցանկանար Հիսուսը, որ դուք անեիք:

Բացատրեք, որ Հիսուսի ուսմունքները մեզ չեն ասում, թե ինչպես վարվել յուրաքանչյուր իրավիճակում: Հիսուսը ցանկանում է, որ մենք սովորենք իմաստուն որոշումներ ընդունել: Սա ցանկանում է, որ մենք սովորենք մտածել և սեր ու բարություն դրսևորել:

**Ամփոփում**

Երգ — Երեխաների հետ միասին արտասանեք «Ես փորձում եմ լինել Հիսուսի պես» երգի բառերը:

Վկայություն — Երեխաներին հիշեցրեք, որ մենք կարող ենք նմանվել Հիսուս Քրիստոսին, եթե ընտրենք ճիշտը: Վկայեք, որ Հիսուսը սիրում է իրենց և ցանկանում է, որ նրանք միշտ ճիշտն ընտրեն երջանիկ և խաղաղ զգացումներ ունենալու համար:

Այս շաբաթվա ընթացքում որոշում ընդունելիս երեխաներին խրախուսեք իրենց հարց տալ «Ի՞նչ կցանկանար Հիսուսը, որ ես անեի»:

Երեխաներից մեկին հրավիրեք փակիչ աղոթքն ասելու: Երեխային խնդրեք աղոթել այն մասին, որ դասարանի անդամները չմոռանան իրենք իրենց հարց տալ, թե ինչ է Հիսուսը ցանկանում, որ նրանք անեն:

---

**Լրացուցիչ վարժություններ**

Հետևյալ վարժություններից ընտրեք նրանք, որոնք լավագույնս կհամապատասխանեն ձեր դասարանի երեխաներին: Դուք կարող եք դրանք օգտագործել դասի ընթացքում կամ որպես դասի վերանայում կամ ամփոփում: Լրացուցիչ ուղղության համար տե՛ս «Դասաժամ» «Օգնություն ուսուցչին» բաժնում:

1. Երեխաներին բաժանեք թուղթ ու մատիտներ և խնդրեք նկարել այն ամենը, ինչ Հիսուսը ցանկանում է, որ իրենք անեն, օրինակ՝ գալ եկեղեցի, օգնել ծնողներին, հանգստացնել միայնակ մնացած երեխային, խաղալ իրենց եղբայրների կամ քույրերի հետ: Յուրաքանչյուր երեխայի թղթի վրա գրեք *Ի՞նչ է Հիսուսը ցանկանում, որ ես անեմ:*

2. Երգեք կամ արտասանեք «Սեփիի քաջությունը» երգը: Երգելուց հետո երեխաներին հիշեցրեք Վորենի մասին պատմությունը: Վորենը դժվար ընտրություններ պետք է կատարեր:

   - Ինչո՞ւ է երբեմն դժվար ընտրել ճիշտը:

   Երեխաներին ասացեք, որ թեպետ երբեմն դժվար է անել դա, բայց եթե մենք միշտ ձգտենք ընտրել ճիշտը, ապա խաղաղ ու երջանիկ զգացումներ կունենանք:

   Սեփիի քաջությունը

   Տերն ասաց, որ թիթեղները Սեփին ձեռք բերի,
   Գնա քաղաք և Լաբանից դրանք նա վերցնի:
   Լամանն ու Լեմուելը երկուսն էլ վախեցան,
   Իսկ Սեփին շատ խիզախ էր, և նա նրանց ասաց.
   «Կգնամ ու կանեմ, ինչ Տերն է պատվիրել:
   Գիտեմ, որ Նա ուղի կտա, եթե հնազանդվեմ»:

   (© 1986 by Wilford N. Hansen Jr. and Lisa Tensmeyer Hansen. Used by permission.)

3. Յուրաքանչյուր երեխայի համար պատրաստեք դասի վերջում տրված թերթիկի մեկական օրինակ: Կտրեք թերթիկի ստորին մասի փոքր բառաշերտերը (բաց թողեք համարները): Յուրաքանչյուր երեխայի տվեք երգի մեկ օրինակ և բառաշերտերի փաթեթը: Կարդացեք թերթիկի վրա տրված երգն ու բառաշերտերը և երեխաներին օգնեք որոշել, թե երգի որ մասերում պետք է տեղադրել բառաշերտերը: Երեխաներին տվեք սոսինձ կամ կպչող ժապավեն և խնդրեք տեղադրել բառաշերտերը երգի իրենց օրինակներում: Գրեք կամ խնդրեք երեխաներին իրենց թերթիկների վրա գրել իրենց անունները:

   Երբ երեխաները տեղադրեն իրենց բառաշերտերը, նրանց օգնեք մեկ կամ երկու անգամ երգել «Ընտրիր ճիշտ ճանապարհը»: Գովեք նրանց լավ աշխատանք կատարելու համար:

# Ընտրիր ճիշտ ուղին

*Կա ուղի* _____(1)_____ *ապրելու և երջանիկ լինելու,*

*Այն է՝* _____(2)_____ *ամեն օր:*

*Ես սովորում եմ ուսմունքները* _____(3)_____ ,

*Որոնք օգնում են ինձ և ցույց տալիս ուղին:*

_____(4)_____ երջանիկ լինելու:

*Ես միշտ պետք է* _____(5)_____ :

---

(1) *ճիշտը*

(2) *ընտրել ճիշտը*

(3) *Հիսուսը*

(4) *Ընտրել ճիշտը*

(5) *ընտրել ճիշտը*

Դաս
3

# Ես Աստծո զավակն եմ

**Նպատակ**

Օգնել երեխաներին հասկանալ, որ Երկնային Հայրը սիրում է մեզանից յուրաքանչյուրին, որովհետև մենք Նրա զավակներն ենք:

**Նախապատրաստություն**

1. Աղոթքով ուսումնասիրեք Սաղմոս ՁԲ.6: Տե՛ս նաև Եբրայեցիս ԺԲ.9, Մովսես 1.39 և *Ավետարանի Սկզբունքներ* (31110), գլուխ 2:

2. Պատրաստեք թղթե տիկնիկների շղթա, ծալելով թուղթը ակորդեոնի պես (տե՛ս ստորև տրված նկարը): Թղթի ծալված մասում նկարեք մարդու պատկերի կեսը: Կտրեք պատկերը, սակայն մի կտրեք ծալված ծայրը, որտեղ մարմինը կամ ձեռքն է: Երբ բացեք շղթան տիկնիկները իրար միացած կլինեն ձեռքերով: Տիկնիկները կարող եք կտրել դասարանում, որպեսզի երեխաները տեսնեն, կամ կարող եք յուրաքանչյուր երեխայի համար պատրաստել թղթե տիկնիկների փոքրիկ շղթա:



3. Պատրաստեք երեք բառաշերտ.

| |
|---|
| Հոգի |

| |
|---|
| Ֆիզիկական մարմին |

| |
|---|
| Ընտանիք |

4. Պահանջվող նյութեր.
   ա. Աստվածաշունչ
   բ. Փոքր հայելի
   գ. Հինգ մատի ձեռնոց (եթե ձեռնոց չկա, կարող եք բերել ձեռնոցի նկար կամ նկարել մի ձեռնոց):
   դ. Նկար 2-2, Ընտանիքը երեխայի հետ (62307), կամ նորածին երեխայի լուսանկար:

5. Անհրաժեշտ պատրաստություններ կատարեք այն լրացուցիչ վարժությունների համար, որոնք ցանկանում եք անցկացնել:

**Դասի առաջարկվող ընթացք**

Երեխաներից մեկին խնդրեք ասել բացիչ աղոթքը:

Եթե երեխաներին խնդրել եք շաբաթվա ընթացքում ինչ-որ բան կատարել, ստուգեք: Երեխաներին կարող եք հարցնել, թե ինչ փորձառություններ են ունեցել, երբ իրենք իրենց հարցրել են. «Ի՞նչ Հիսուսը կցանկանար, որ ես անեի»:

**Ո՞վ եմ ես**

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Հարցրեք.

- Ո՞վ եմ ես:

Երբ երեխաները կպատասխանեն, կրկնեք ձեր լրիվ անունը:

Ցույց տվեք յուրաքանչյուր երեխային և հարցրեք. «Ո՞վ ես դու»: Յուրաքանչյուր երեխայի խնդրեք պատասխանել, ասելով իր լրիվ անունը: Բացատրեք, որ մեզանից յուրաքանչյուրը առանձնահատուկ անձնավորություն է:

Քննարկում

Ցույց տվեք նկար 2-2, Ընտանիքը երեխայի հետ, և երեխաներին խնդրեք ցույց տալ ընտանիքի անդամներին, կամ ցույց տվեք նորածին երեխայի մի նկար:

- Ի՞նչ եք կարծում, քանի տարեկան է այս երեխան:
- Որտե՞ղ էր այս երեխան մինչև ծնվելը:

Բացատրեք, որ այս երկիր գալուց առաջ մենք բոլորս ապրում էինք մեր Երկնային Հոր հետ երկնքում: Մենք Նրա զավակներն ենք: Այդ պատճառով ենք մենք նրան Երկնային Հայր կոչում: Մենք ապրել ենք նաև մեր երկնային մոր հետ և Երկնային Հոր մնացած բոլոր զավակների հետ: Բոլոր նրանք, ովքեր ծնվել են այս երկրի վրա, Երկնային Հոր զավակներն են: Մենք չենք հիշում, թե ինչպես էինք ապրում Երկնային Հոր հետ, սակայն գիտենք, որ մենք նրա զավակներն ենք, որովհետև այդ մասին կարդում ենք սուրբ գրություններում:

Սուրբ գրություն

Բարձրաձայն կարդացեք Սաղմոս ՁԲ.6-ի վերջին մասը, սկսելով *ամենքդ* բառից: Բացատրեք, որ Բարձրելոյ նշանակում է Երկնային Հայր:

Բացատրեք, որ Երկնային Հոր բոլոր հավատարիմ հոգևոր զավակները ցանկանում են գալ երկիր: Նրա հոգևոր զավակներից շատերն արդեն ծնվել են, սակայն շատերը դեռ սպասում են, որպեսզի գան երկիր:

**Մենք ունենք հոգիներ**

Քննարկում

Ցուցադրեք «Հոգի» բառաշերտը:

Երեխաներին բացատրեք, որ երկիր գալուց առաջ երբ մենք ապրում էինք երկնքում, մենք չունեինք ֆիզիկական մարմիններ: Մենք հոգիներ էինք:

- Ի՞նչ է հոգին:

Բացատրեք, որ մեր հոգիները մեր մասն են և նրանց շնորհիվ մենք կենդանի ենք:

- Ի՞նչ եք կարծում, ինչի է նման ձեր հոգին:

Փոխանցեք երեխաներին մի փոքր հայելի և խնդրեք յուրաքանչյուրին նայել հայելու մեջ: Երեխաներին հարցրեք, թե արդյոք հայելին ցույց է տալիս, թե ինչի է նման իրենց հոգին:

Բացատրեք, որ մեր հոգիները նման են մեր ֆիզիկական մարմիններին: Օրինակ, հոգիները ունեն աչքեր, ականջներ, ձեռքեր և ոտքեր:

Առարկայական դաս

Սեղանին դրեք ձեռնոցը: Բացատրեք, որ թեպետ ձեռնոցը նման է ձեռքի, այն չի կարող ձեռքի նման շարժվել, որովհետև կենդանի չէ: Երբ ձեռնոցը հագնում են ձեռքին, ձեռնոցը կարող է շարժվել: Դրեք ձեր ձեռքը ձեռնոցի մեջ և շարժեք ձեր մատները: Բացատրեք, որ ձեռնոցը նման է ֆիզիկական մարմնին, իսկ ձեռքը՝ հոգուն: Մեր մարմինները չեն կարող շարժվել, եթե մեր հոգին մարմնի մեջ չէ: Մեր հոգիները չեն երևում մարմնի ներսում, ինչպես ձեռքը չի երևում ձեռնոցի ներսում: (Տե՛ս Boyd K. Packer, *Teach Ye Diligently* [Salt Lake City: Deseret Book Co., 1975], pp. 231–33.)

### Մենք ունենք ֆիզիկական մարմին

Քննարկում

Ցուցադրեք «Ֆիզիկական մարմին» բառաշերտը:

Բացատրեք, որ երբ մենք եկանք երկիր, մեզանից յուրաքանչյուրը ֆիզիկական մարմին ստացավ: Երեխաներին խնդրեք թվարկել իրենց ֆիզիկական մարմինների մասերը, օրինակ՝ աչքերը, ականջները, ձեռքերը և ոտքերը:

- Ի՞նչ կարող է անել ձեր ֆիզիկական մարմինը:

Վարժություն

Երեխաներին խնդրեք թվարկել, թե ինչ կարող են անել իրենց ֆիզիկական մարմինները, օրինակ՝ ցատկոտել, պտտվել, խոսել, սողալ կամ պարել:

Քննարկում թղթե տիկնիկների շուրջ

Երեխաներին ցուցադրեք թղթե տիկնիկների շղթան:

- Ինչո՞վ ենք մենք նման այդ թղթե տիկնիկներին: (Մենք ևս ունենք ձեռքեր, ոտքեր և գլուխ:)
- Ինչո՞վ ենք մենք նրանցից տարբերվում: (Սրանք պատրաստված են թղթից, մեր մարմինները մսից ու ոսկորից են կազմված: Սրանք կենդանի չեն, մենք կենդանի ենք: Սրանք բոլորը նման են, մենք միմյանցից տարբերվում ենք:)
- Ի՞նչ կլիներ, եթե մենք բոլորս նման լինեինք:

Խաղ

Երեխաներին խնդրեք կանգնել, երբ դուք կասեք իրենց նկարագրող որևէ արտահայտություն: Սրանց խնդրեք նստել, եթե արտահայտությունը նրանց չի նկարագրում: Օգտագործեք այնպիսի արտահայտություններ, որոնք նշում են ձեր դասարանի երեխաների նմանությունները և տարբերությունները, օրինակ՝

- Բոլոր աղջիկները կանգնեն:
- Շականակագույն աչքեր ունեցող բոլոր երեխաները կանգնեն:
- Բոլոր քիթ ունեցողները կանգնեն:
- Կանգնեք, եթե բաց գույնի մազեր ունեք:

Նշեք, որ մենք բոլորս ընդհանուր բաներ ունենք, սակայն գոյություն չունեն երկու բացառապես նման մարդիկ: Բացատրեք, որ Երկնային Հայրը նախատեսել է, որ մեզանից յուրաքանչյուրը ֆիզիկական մարմին ունենա, որը նման է բոլոր մյուս մարմիններին, սակայն որ լիովին նման չլինի որևէ մարմնի: Մեզանից յուրաքանչյուրը տարբերվում է մյուսներից:

### Մենք ունենք ընտանիք, որը սիրում է մեզ

Ուսուցչի ելույթ

Ցույց տվեք «Ընտանիք» բառաշերտը:

Երեխաներին ասացեք, որ Երկնային Հայրն այնքան է մեզ սիրում, որ յուրաքանչյուրիս ուղարկեց երկիր և մարմին տվեց: Սա տվեց մեզ ընտանիք, որը հոգ է տանում մեր համար և սովորեցնում Երկնային Հոր ու Հիսուս Քրիստոսի մասին:

Պատմվածք

Ձեր խոսքերով պատմեք հետևյալ պատմվածքը:

Մի օր վաղ առավոտյան տղան ու նրա հայրը որոշում են արշավ գնալ: Նրանք ցանկանում էին մի ամբողջ օր ձկնորսությամբ զբաղվել, հավաքում են իրենց իրերը և ուղևորվում են դեպի մի փոքրիկ սքանչելի լիճ: Նրանք բավականին երկար ժամանակ քայլում էին, տղան հոգնում է և սկսում է քայլել ավելի ու ավելի դանդաղ:

Երբ լիճը երևում է, հայրը առաջ է շտապում տեսնելու լճի կապույտ ջրերը: Նա մտածում է, որ տղան կհասնի իրեն:

Երբ հայրը հասնում է լճին, հանկարծ հասկանում է, որ տղան չի հասցրել իր ետևից: Նա չի տեսնում իր որդուն: Հայրը վայր է գցում փայտը և ամենուրեք սկսում է փնտրել որդուն: Նա գոչում է ամբողջ իր ուժով, սակայն պատասխան չի ստանում: Հայրը սկսում է սարսափել: Արդյո՞ք իր որդին կորել էր, կամ մի գուցե վնասվել էր:

Հայրը ծնկի է իջնում և աղոթում: Նա Երկնային Հորը խնդրում է օգնել գտնել իր որդուն: Այնուհետև նա վեր է կենում և արահետով քայլում հետ: Շուտով նա գտնում է իր որդուն: Հայրը գրկում է տղային և ասում, թե որքան շատ է սիրում նրան: (Վերցված է Owen C. Bennion, “Turning the Heart of a Father,” *Ensign,* May 1971, pp. 28–30.)

Քննարկում

- Ինչպե՞ս տղան իմացավ, որ հայրը սիրում էր իրեն: (Հայրը նրան իր հետ ձկնորսության տարավ, փնտրեց նրան, երբ կորել էր, աղոթեց նրա համար և ցույց տվեց, թե որքան երջանիկ էր, երբ գտավ նրան:)
- Ինչպե՞ս եք դուք իմանում, որ ձեր ընտանիքը սիրում է ձեզ:

Երբ երեխաները կպատասխանեն, բացատրեք, որ կան շատ եղանակներ, որոնց միջոցով մեր ծնողներն ու ընտանիքները դրսևորում են մեր հանդեպ իրենց սերը:

**Մենք Երկնային Հայր ունենք, որը սիրում է մեզ:**

Քննարկում

- Ինչպե՞ս եք դուք իմանում, որ Երկնային Հայրը սիրում է ձեզ:

Երգ

Երեխաներին ասացեք, որ Երկնային Հայրը սիրում է մեզ և ցանկանում է, որ մենք երջանիկ լինենք: Սա մեզ չքնաղ աշխարհ է տվել ապրելու համար: Արտասանեք «Իմ Երկնային Հայրը սիրում է ինձ», երեխաներին օգնելով կատարել նշված շարժումները:

Երբ ես լսում եմ *(ձեռքերը դրեք ականջներին)* թռչնի երգը *(թևերով թափահարեք)*
Կամ նայում են կապույտ, կապույտ երկնքին *(ձեռքով բարձր կամարաձև շարժում կատարեք),*
Երբ զգում եմ անձրևն իմ երեսին *(շարժեք մատները, ինչպես անձրևի կաթիլները)*
Կամ քամին է անցնում իմ կողքով *(ձեռքերը առաջ ու ետև տարեք),*
Երբ դիպչում եմ թավշյա վարդին *(ձևացրեք, թե զգում եք ծաղկի բուրմունքը)*
Կամ քայլում եմ յասամանի կողքին *(քայլեք տեղում),*
Ուրախ եմ, որ ապրում եմ այս չքնաղ աշխարհում *(բացեք ձեռքերը)*
Որն Երկնային Հայրը ստեղծել է ինձ համար *(գրկեք ինքներդ ձեզ):*

Նա աչքեր է տվել, որ ես տեսնեմ *(դիպչեք աչքերին)*
Թիթեռնիկի թևերի գույներն է տվել *(միացրեք բթամատերը և թափահարեք մատները ինչպես թիթեռնիկի թևերը):*
Ականջներ տվել, որ ես լսեմ *(դիպչեք ականջներին)*
Հրաշալի հնչյուններ է տվել *(ձեռքերը դրեք ականջներին):*
Նա ինձ կյանք, միտք ու սիրտ է տվել *(դիպչեք գլխին, հետո սրտին).*

Շնորհակալ եմ Նրան *(խաչեք ձեռքերը)*
Նրա արարումների համար, որոնց մասն եմ ես *(բացեք ձեռքերը)*:
Այո, գիտեմ, որ Երկնային Հայրը սիրում է ինձ *(ձեռքերը դրեք գլխի վրա)*:

Քննարկում

- Ի՞նչերն են ձեզ հիշեցնում այն մասին, որ Երկնային Հայրը սիրում է ձեզ:
- Ինչպե՞ս եք զգում, իմանալով, որ դուք Երկնային Հոր զավակն եք և որ Նա սիրում է ձեզ:

**Ամփոփում**

Երգ

Երեխաներին խնդրեք երգել «Զավակն եմ Աստծո» երգի առաջին քառատողը: Երեխաներին հիշեցրեք, որ *Աստվածը* Երկնային Հոր անուններից մեկն է:

Շեշտեք, որ երգի բառերը ասում են, որ մեզանից յուրաքանչյուրը Երկնային Հոր սիրված զավակն է և որ Նա ծրագրել է, որ մենք գանք երկիր և ստանանք մեր ֆիզիկական մարմինները: Նա նաև ծրագրել է, որ մենք ընտանիքներ ունենանք, որոնք կսիրեն ու կուսուցանեն մեզ, որպեսզի մենք կարողանանք վերադառնալ ու կրկին ապրել Նրա հետ:

Վկայություն

Վկայեք, որ Երկնային Հայրը սիրում է մեզ, որովհետև մեզ տվել է ֆիզիկական մարմիններ, սքանչելի երկիր ապրելու համար և մեզ սիրող ընտանիքներ:

Երեխաներին խրախուսեք այսօր իրենց աղոթքներում շնորհակալություն հայտնել Երկնային Հորը երկիր գալու հնարավորության համար:

Երեխաներից մեկին հրավիրեք ասել փակիչ աղոթքը:

---

**Լրացուցիչ վարժություններ**

Հետևյալ վարժություններից ընտրեք նրանք, որոնք լավագույնս կհամապատասխանեն ձեր դասարանի երեխաներին: Դուք կարող եք դրանք օգտագործել դասի ընթացքում կամ որպես դասի վերանայում կամ ամփոփում: Լրացուցիչ ուղղության համար տե՛ս «Դասաժամ» «Օգնություն ուսուցչին» բաժնում:

1. Թղթե տիկնիկները միմյանցից առանձնացրեք և յուրաքանչյուր երեխայի տվեք մեկական տիկնիկ: Երեխաներին խնդրեք գունավորել կամ նկարազարդել տիկնիկները: Երբ երեխաները վերջացնեն այդ հանձնարարությունը, նրանց խնդրեք տիկնիկները ցույց տալ դասարանին: Շեշտեք, թե որքան տարբեր ու գեղեցիկ են դարձել բոլոր տիկնիկները: Երեխաներին հիշեցրեք, որ մենք բոլորս նման ենք, սակայն բացարձակ միանման մարդիկ գոյություն չունեն:
2. Երեխաներին խնդրեք նստել շրջանով: Լոբու հատիկներով լցված պարկը կամ որևէ փափուկ առարկա նետեք երեխայի ուղղությամբ, տալով որևէ հարց դասի վերաբերյալ: Երեխային խնդրեք պատասխանել հարցին և պարկը կրկին նետել ձեզ: Կրկնեք, մինչև որ յուրաքանչյուր երեխա կպատասխանի առնվազն մեկ հարցի: Օգտագործեք հետևյալ հարցերը կամ ինքներդ պատրաստեք հարցեր.
   - Որտե՞ղ էինք մենք բոլորս ապրում երկիր գալուց առաջ: (Երկնքում:)
   - Ո՞ւմ հետ էինք մենք ապրում: (Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի և բոլոր մնացած մարդկանց հետ:)
   - Որտե՞ղ ենք մենք ապրում այժմ: (Երկրի վրա:)
   - Ի՞նչ տեսք ունեն մեր հոգիները: (Նման են մեր ֆիզիկական մարմիններին:)

3. Երեխաներին տվեք թուղթ ու մատիտներ և խնդրեք նկարել այնպիսի նկարներ, որոնք իրենց հիշեցնում են, որ Երկնային Հայրը սիրում է իրենց:

4. Երեխաներին խնդրեք կանգնել և խաղալ «Ուսուցիչն ասում է» խաղը: Բացատրեք, որ նրանք պետք է անեն այն, ինչ դուք ասում եք, միայն այն դեպքում, եթե հրահանգ տալուց առաջ դուք ասեք. «Ուսուցիչն ասում է»: Երեխաներին խնդրեք ծալել թևերը, դիպչել ուսերին, պտտվել և կատարել այլ շարժումներ, երբեմն սկզբում ասելով «Ուսուցիչն ասում է», իսկ երբեմն պարզապես կատարել շարժումը: Երբ երեխաները կատարեն շարժումը, եթե դուք չեք ասել «Ուսուցիչն ասում է» բառերը, ապա նրանք պետք է նստեն մինչև խաղի ավարտը: Կրկնեք խաղը ըստ ձեր ցանկության:

   Երեխաներին հիշեցրեք, որ իրենց ֆիզիկական մարմինները թույլ են տալիս կատարել այդ շարժումները:

Դաս
4

# Ես ընտրել եմ հետևել Հիսուս Քրիստոսին

**Նպատակ**

Օգնել երեխաներին հասկանալ, որ նախաերկրային կյանքում մենք ապրում էինք Երկնային Հոր ու Հիսուս Քրիստոսի հետ և ընտրել ենք հետևել նրանց:

**Նախապատրաստություն**

1. Աղոթքով ուսումնասիրեք Հոբ ԼԸ.7, Մովսես 4.1–4, Աբրահամ 3.24–28 և Հավատո Հանգանակներ1.1: Տե՛ս նաև *Ավետարանի Սկզբունքներ* (31110), գլուխ 3:
2. Պատրաստվեք երգել «Զավակն եմ Աստծո» օրհներգի առաջին քառատողը:
3. Պահանջվող նյութեր.
   ա. Աստվածաշունչ և Թանկագին Մարգարիտ:
   բ. ԸՃ նկար (տե՛ս դաս 1):
   դ. Նկար 2-3, Հիսուս Քրիստոսը (Ավետարանի Արվեստի Նկարների Հավաքածո 240; 62572); նկար 2-4, Նախաերկրային Կյանք:
4. Անհրաժեշտ պատրաստություններ կատարեք այն լրացուցիչ վարժությունների համար, որոնք ցանկանում եք անցկացնել:

**Դասի առաջարկվող ընթացք**

Երեխաներից մեկին խնդրեք ասել բացիչ աղոթքը:

Եթե երեխաներին խնդրել եք շաբաթվա ընթացքում ինչ-որ բան կատարել, ստուգեք:

**Մենք Աստծո զավակներն ենք**

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Երեխաներին ասացեք, որ դուք պատրաստվում եք երգել մի երգի մեղեդի: Նրանց խնդրեք ուշադիր լսել և ասել երգի անունը: Երգեք «Զավակն եմ Աստծո» երգի մեղեդին:

- Ո՞ր երգի մեղեդին ես երգեցի:
- Ի՞նչ է երգն ասում այն մասին, թե ով եք դուք:

Երեխաներին խնդրեք երգել երգի առաջին քառատողը:

Կրկնություն

Երեխաներին հիշեցրեք, որ նախորդ դասում դուք խոսել եք այն մասին, թե որտեղ ենք մենք ապրել երկիր գալուց առաջ:

- Որտե՞ղ էինք մենք ապրում երկիր գալուց առաջ:
- Ո՞ւմ հետ էինք մենք ապրում երկնքում:
- Ինչո՞ւ ենք մենք բոլորս եղբայրներ և քույրեր: (Մենք բոլորս Երկնային Հոր զավակներն ենք:)

## Երկնքում մենք կարևոր ընտրություն ենք կատարել

Ուսուցչի ելույթ

Երեխաներին ասացեք, որ նրանք պետք է սովորեն մի շատ հետաքրքիր դեպքի մասին, որը մեզ հետ պատահել է ծնվելուց առաջ, երբ մենք ապրում էինք Երկնային Հոր հետ:

Ցույց տվեք նկար 2-4, Նախաերկրային Կյանք: Բացատրեք, որ սա նկարչի պատկերացումն է երկնքի մասին: Բացատրեք, որ երկնքում մենք բոլորս հոգիներ էինք, որոնք զբոսնում և խոսում էին Երկնային Հոր հետ: Երեխաներին խնդրեք մտածել, թե ինչպիսին կարող էր լինել մեր կյանքը Երկնային Հոր հետ: Օգնեք նրանց հասկանալ, թե որքան սքանչելի էր տեսնել Նրան և լինել Նրա հետ:

Երեխաներին ասացեք, որ երբ մենք երկնքում էինք Երկնային Հայրը մեզ մեծ ժողովի կանչեց: Երկնային Հոր բոլոր զավակները ներկա էին այդ ժողովին: Երկնային Հայրը ցանկանում էր խոսել մեզ հետ:

Բացատրեք, որ Երկնային Հայրը մեզ ասաց, որ մենք պետք է ժամանակավոր հեռանանք իրենից, որպեսզի ֆիզիկական մարմին ստանանք և սովորենք ընտրել ճիշտը: Երկնային Հայրը մեզ ասաց, որ կպատրաստի վայր, որտեղ մենք կարող ենք անել այդ ամենը:

- Ո՞ւր էր Երկնային Հայրը ցանկանում, որ մենք գնայինք: (Երկիր:)

Երկնային Հայրը մեզ ասաց, որ երկիր գալուց հետո մենք չենք հիշի, թե ինչպես էինք ապրում Իր հետ: Նա ասաց նաև, որ պետք է մի մարդ, որը մեզ կօգնի երկրի վրա մեր ժամանակի ավարտից հետո վերադառնալ երկինք նրա հետ կրկին ապրելու համար: Նա խոստացավ ուղարկել մեկին, որը կօգներ մեզ:

Քննարկում

- Ինչպե՞ս եք զգում, իմանալով, որ Երկնային Հայրն այնքան է ձեզ սիրում, որ պատրաստ է ուղարկել որևէ մեկին, որը ձեզ կօգնի վերադառնալ երկինք իր հետ կրկին ապրելու համար:

Բացատրեք, որ երբ Երկնային Հայրը մեզ ասաց, որ պատրաստվում է մեկին ուղարկել մեզ օգնելու համար, մենք բոլորս ուրախ բացականչեցինք (տե՛ս Հոբ ԼԸ.7):

Ցույց տվեք նկար 2-3, Հիսուս Քրիստոսը:

- Ո՞վ է սա:

Բացատրեք, որ Հիսուս Քրիստոսը մեզ հետ միասին ապրում էր երկնքում: Նա մեր Երկնային Հոր առաջնածին հոգևոր զավակն է:

Հավատո հանգանակներ

Երեխաներին բացատրեք, որ մեր եկեղեցին ունի Հավատո Հանգանակներ կոչվող դրույթներ, որոնք արտահայտում են այն, ինչին մենք հավատում ենք: Երեխաներին օգնեք սովորել Հավատո առաջին հանգանակի առաջին մասը. «Մենք հավատում ենք Աստծուն՝ Երկնային Հորը, և Նրա Որդուն՝ Հիսուս Քրիստոսին»:

Երեխաներին ասացեք, որ *Աստված՝ Հավիտենական Հայրը,* Երկնային Հոր անուններից մեկն է:

Պատմվածք սուրբ գրությունից և քննարկում

Երեխաներին ասացեք, որ Երկնային Հայրը հարց է տվել, թե ու՞մ ուղարկի մեզ սովորեցնելու համար: Բացեք Թանկագին Մարգարիտի Աբրահամ 3.27 և բարձրաձայն կարդացեք Հիսուսի պատասխանը. «Ահա ես, ինձ ուղարկիր»: Հիսուսն ասաց, որ կանի այն ամենը, ինչ Երկնային Հայրը ցանկանում է, որ նա անի մեզ օգնելու համար: Բարձրաձայն կարդացեք Մովսես 4.2 վերջին

մասը(*Հորից*): Հիսուսը նաև ասաց, որ ողջ փառքը կտա Երկնային Հորը: Համառոտ բացատրեք, թե ինչ է նշանակում *փառք:*

- Ինչպե՞ս կարող եք իմանալ, որ Հիսուսը սիրում էր Երկնային Հորը: (Նա ցանկացավ անել այն ամենը, ինչ Երկնային Հայրը կասեր:)
- Ո՞ւմ է նաև սիրում Հիսուսը: (Մեզ:)

Շեշտեք Երկնային Հոր և մեր հանդեպ Հիսուսի սերը, կրկնելով այն ամենը, ինչ նա պատրաստ էր անել:

Հիսուս Քրիստոսը պատրաստ էր -

- Գալ երկիր և օգնել մեզ:
- Վկայել Երկնային Հոր մասին:
- Սովորեցնել մեզ ապրելու և երջանիկ լինելու ճիշտ ճանապարհը:
- Ցույց տալ մեզ, թե ինչ պետք է անել Երկնային Հոր հետ կրկին ապրելու համար:
- Տալ իր կյանքը մեզ համար:

Նշեք, որ կար մեկ այլ հոգևոր զավակ, որի անունը Լյուցիֆեր էր, և որը նույնպես ցանկացավ գալ երկիր մեզ օգնելու համար: Նա Երկնային Հորն ասաց, որ կգա երկիր և կստիպի մեզ բոլորիս կատարել ճիշտը: Նա չէր թույլ տա, որ մենք ինքներս ընտրենք: Լյուցիֆերը ցանկացում էր, որ Երկնային Հայրը ողջ պատիվն ու փառքը տար իրեն:

Աբրահամ 3.27–ում բարձրաձայն կարդացեք Երկնային Հոր որոշումը. «Ես կուղարկեմ առաջինին»:

- Ո՞ւմ Երկնային Հայրը ընտրեց, որ օգնի Իրեն:

Բացատրեք, որ Լյուցիֆերը շատ զայրացավ, երբ իրեն չընտրեցին: Նա չընդունեց Երկնային Հոր Ծրագիրը: Փոխարենը, Լյուցիֆերը մեծ պատերազմ սկսեց երկնքում: Դա հրացանների և ռումբերի պատերազմ չէր, այլ մարդկանց խաբելու և իր ետևից տանելու պատերազմ էր: Մեր հոգևոր եղբայրների և քույրերի մի մասին Լյուցիֆերը համոզեց, որ իր չար գաղափարները լավն են, և նրանք որոշեցին Հիսուսի փոխարեն հետևել նրան:

Երեխաներին ասացեք, որ Լյուցիֆերը կոչվում է նաև Սատանա, կամ դև:

Քննարկում

- Ո՞ւմ դուք որոշեցիք հետևել՝ Հիսուսին, թե Սատանային:

Երեխաներին խնդրեք կանգնել, եթե որոշել են հետևել Հիսուսին: Բացատրեք, որ նրանք բոլորը ընտրել են հետևել Հիսուսին, ուրեմն բոլորը պետք է կանգնեն:

Բացատրեք, որ մենք գիտենք, որ հետևել ենք Հիսուսին, որովհետև այստեղ՝ երկրի վրա ենք: Սատանային հետևածՀոգիներին չի թույլատրվում ծնվել երկրի վրա և ստանալ ֆիզիկական մարմիններ:

Երեխաներին ասացեք, թե որքան երջանիկ եք, որ որոշել եք հետևել Հիսուսին: Նրանց ասացեք, որ հպարտ եք, որ նրանք որոշել են հետևել Հիսուսին, ոչ թե Սատանային: Երեխաներին գովեք ճիշտն ընտրելու համար:

**Մենք ցանկանում ենք շարունակել հետևել Հիսուս Քրիստոսին**

Ուսուցչի ելույթ

Շեշտեք երեխաներին, որ նրանց չեն ստիպել հետևել Հիսուսին: Նրանք ընտրության իրավունք են ունեցել: Նրանք կարող էին հետևել Սատանային: Սակայն նրանք ընտրել են ճիշտ ճանապարհը:

Երեխաներին ասացեք, որ նույն ընտրությունը նրանք պետք է կատարեն երկրի վրա `այս կյանքում: Սատանան դեռևս փորձում է համոզել մեզ հետևել իրեն: Երկնային Հայրն ուզում է, որ մենք հետևենք Հիսուսին, որովհետև դա մեզ երջանիկ կդարձնի և հնարավորություն կտա կրկին ապրել Երկնային Հոր և Հիսուսի հետ: Սակայն մեզ չի պարտադրվում հետևել Հիսուսին: Մենք ինքներս կարող ենք ընտրել անել բարի գործեր, որոնք Հիսուսն է ցանկանում, որ մենք անենք, թե անել այն վատ բաները, որոնք ցանկանում է Սատանան:

ԸՃ նկար

Ցույց տվեք ԸՃ նկարը: Երեխաներին հարցրեք, ով է պատկերված նկարի վրա: Մատնանշելով կարդացեք նկարի վրա գրված բառերը: Ապա երեխաներին խնդրեք ձեզ հետ միասին ասել. «Ես կընտրեմ ճիշտը»:

Քննարկում

Երեխաներին խնդրեք պատասխանել Հիսուսին հետևելու վերաբերյալ հետևյալ հարցերին (կամ ձեր կողմից պատրաստած հարցերին).

- Եթե դուք որոշում եք հետևել Հիսուսին, ի՞նչ կարող եք անել, եթե պատահաբար որևէ մեկին վիրավորել եք:
- Եթե դուք որոշում եք հետևել Հիսուսին, ինչպե՞ս կվարվեք այս դասարանում: (Երեխաներին խնդրեք ցույց տալ, թե ինչպես կարող են հանգիստ նստել, ուշադրությամբ լսել, մասնակցել և չխանգարել մյուս երեխաներին:)
- Եթե դուք որոշում եք հետևել Հիսուսին, ինչպե՞ս կվարվեք, եթե որևէ մեկը ձեզ նվեր տա կամ որևէ բան անի ձեզ համար:
- Եթե դուք որոշում եք հետևել Հիսուսին, ինչպե՞ս կվարվեք այն մարդու հետ, որը ձեր հանդեպ բարի չէ:

Կրկին ցուցադրեք ԸՃ նկարը և երեխաներին խնդրեք կրկնել դրա վրայի խոսքերը:

**Ամփոփում**

Վկայություն

Բերեք վկայություն այն մասին, որ երկիր գալուց առաջ մեզանից յուրաքանչյուրը ընտրություն է կատարել: Մենք որոշել ենք հետևել Հիսուս Քրիստոսին և կրկին կապրենք նրա և Երկնային Հոր հետ, եթե անենք այն, ինչ մեզ սովորեցրել է Հիսուսը:

Բացատրեք, որ ամեն շաբաթ Երեխաների խմբում երեխաները կսովորեն այն բաների մասին, ինչ Հիսուսը ցանկանում է, որ մենք անենք:

Երեխաներին խրախուսեք իրենց աղոթքներում շնորհակալություն հայտնել Երկնային Հորը, որ Նա ուղարկել է Հիսուսին երկիր մեր փրկիչը լինելու: Նրանց առաջարկեք խնդրել Երկնային Հորն իրենց օգնել ճիշտ ընտրություններ կատարել, որպեսզի մի օր նորից կարողանան ապրել նրա և Հիսուսի հետ:

Երեխաներից մեկին հրավիրեք ասել փակիչ աղոթքը:

---

**Լրացուցիչ վարժություններ**

Հետևյալ վարժություններից ընտրեք նրանք, որոնք լավագույնս կհամապատասխանեն ձեր դասարանի երեխաներին: Դուք կարող եք դրանք օգտագործել դասի ընթացքում կամ որպես դասի վերանայում կամ ամփոփում: Լրացուցիչ ուղղության համար տե՛ս «Դասաժամ» «Օգնություն ուսուցչին» բաժնում:

1. Երեխաներին խնդրեք նայել իրենց ԸՃ մատանիներին: Եթե երեխաները չեն կրում ԸՃ մատանի, ապա կարող եք նրանց մատին մատանու նման թել փաթաթել: Երեխաներին ասացեք, որ նրանց մատանիները հիշեցնում են, որ նրանք որոշել են հետևել Հիսուսին և պետք է շարունակեն ճիշտ որոշումներ կատարել:

2. Արտասանեք «Ես ապրում էի երկնքում»:

   Շատ վաղուց ես ապրում էի երկնքում, դա այդպես է,
   Ապրում և սիրում էի այնտեղի մարդկանց, և դու նույնպես:
   Հետո Երկնային Հայրը սքանչելի ծրագիր մեզ տվեց,
   Երկրին ու մարդկանց հավերժական փրկություն պարգևեց:

   Արտասանելուց հետո երեխաներին հարցեր տվեք, ինչպես տրվում է ստորև (անհրաժեշտության դեպքում կրկնեք տողերը, որպեսզի երեխաներին օգնեք գտնել պատասխանները).

   - Ի՞նչ է ասում երգն այն մասին, թե որտեղ էիք դուք ապրում: Ե՞րբ էիք դուք ապրում այնտեղ:
   - Ո՞ւմ հետ էիք դուք ապրում այնտեղ:
   - Ի՞նչ արեց Երկնային Հայրը, երբ մենք դեռ երկնքում նրա հետ էինք:
   - Ինչի՞ մասին էր ծրագիրը:

   Արտասանեք երկրորդ քառատողը և նույնատիպ հարցեր տվեք.

   Հայրն ասաց, որ պետք է մեկը, ով շատ հավատք ունի,
   Որ կյանքն իր տա և բոլորին վերև վերադարձնի:
   Բայց կար մեկը, որն ուզում էր Աստծո փառքն իրեն տրվի:
   Հիսուսն ասաց. «Հայր, ինձ ուղարկիր, և փառքը Քոնը կլինի»:

   (© 1987 by Janeen Jacobs Brady. Used by permission.)

3. Երեխաներին խնդրեք նկարել նկարներ, որոնք իրենց կարծիքով պատկերում են երկինքը:

4. Արտասանեք «Ես կհետևեմ Աստծո ծրագրին»:

   Ես կհետևեմ Աստծո ծրագրին

   Իմ կյանքը պարգև է, այն ծրագիր ունի:
   Երկնքում սկսված նպատակ ունի:
   Ընտրել եմ ես գալ այս չքնաղ երկիր
   Եվ Աստծո լույսով քայլել անխտիր:
   Ես կհետևեմ Աստծո ծրագրին,
   Կկառչեմ Նրա սիրուց ու խոսքից:
   Կաշխատեմ և անընդմեջ կաղոթեմ,
   Միշտ նրա ուղով կքայլեմ:
   Այդժամ երկրի վրա երջանիկ կլինեմ
   Եվ երկնային իմ տանն ուրախ ես կապրեմ:

# Ես կարող եմ ճիշտ ընտրություններ կատարել

Դաս
5

**Նպատակ**

Օգնել յուրաքանչյուր երեխայի հասկանալ, որ մենք կարող ենք ընտրել ճիշտը, որովհետև Երկնային Հայրը մեզ ընտրության ազատություն է տվել:

**Նախապատրաստություն**

1. Աղոթքով ուսումնասիրեք Մաթեոս ԻԱ.14–16 և Վարդապետություն ու Ուխտեր 37.4: Տե՛ս նաև *Ավետարանի Սկզբունքներ* (31110), գլուխ 4:
2. Պատրաստվեք երգել կամ արտասանել «Ընտրիր ճիշտ ուղին»:
3. Եթե ցանկանում եք հաջորդ շաբաթ անցկացնել դաս 6-ի առաջին լրացուցիչ վարժությունը (տե՛ս էջ 28), յուրաքանչյուր երեխայի համար նախապատրաստեք մի երկտող, ինչպես տրված է ստորև, որը նա կտանի տուն և կտա ծնողներին.

   > Խնդրում եմ ասեք [երեխայի անունը], թե ինչպես է ընտրվել նրա անունը, որպեսզի մենք կարողանանք խոսել դրա մասին հաջորդ դասին: Շնորհակալություն:

   Եթե ցանկանում եք հաջորդ շաբաթ անցկացնել դաս 6-ի լրացուցիչ վարժություն 2-ը (տե՛ս էջ 28), նախապատրաստեք մի երկտող, որով յուրաքանչյուր երեխայի ծնողներին կխնդրեք հաջորդ դասին երեխայի հետ ուղարկել ընտանեկան լուսանկարը (սա կարող եք ընդգրկել վերը նշված երկտողում, եթե պատրաստվում եք անցկացնել երկու վարժությունները):
4. Պահանջվող նյութեր.
   ա. Աստվածաշունչ և Վարդապետություն ու Ուխտեր:
   բ. ԸՃ վահանակի նկար (տե՛ս դաս 1):
   գ. Տարբեր գույների փոքր առարկաներ, լցված զամբյուղի մեջ, օրինակ գունավոր կոնֆետներ կամ քարեր: Ունեցեք բավական գույներ, որպեսզի յուրաքանչյուր երեխա մի քանի գույն ընտրի:
5. Անհրաժեշտ պատրաստություններ կատարեք այն լրացուցիչ վարժությունների համար, որոնք ցանկանում եք անցկացնել:

**Դասի առաջարկվող ընթացք**

Երեխաներից մեկին խնդրեք ասել բացիչ աղոթքը:

Եթե երեխաներին խնդրել եք շաբաթվա ընթացքում ինչ-որ բան կատարել, ստուգեք:

**Երկնային Հայրն ու Հիսուս Քրիստոսը ցանկանում են, որ մենք ինքներս ընտրություն կատարենք**

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Ցույց տվեք փոքր իրերով լի զամբյուղը և յուրաքանչյուր երեխայի թույլ տվեք ընտրել մեկը: Երեխաներին ասացեք, որ իրենք հենց հիմա ընտրություն կատարեցին: Ամեն օր մենք շատ ընտրություններ ենք կատարում:

- Ի՞նչ ընտրություններ եք կատարել դուք այսօր: (Պատասխանները կարող են ընդգրկել հագուստ կրելը, նախաճաշ ուտելը կամ ազատ ժամանակն անցկացնելը:)

Երեխաներին ասացեք, որ ընտրություններ կատարելը երկրի վրա ապրելու կարևոր մաս է կազմում: Որոշ ընտրություններ հեշտ են, որոշը՝ դժվար: Ընտրելու մեր իրավունքը մեզ տրվել է այն ժամանակ, երբ մենք երկնքում ապրում էինք Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հետ:

Ուսուցչի ելույթ

Երեխաներին հիշեցրեք, որ երկիր մեր գալուց առաջ Երկնային Հայրը մեզ կանչեց ժողովի: Ստուգեք, թե արդյոք երեխաները նախորդ դասից հիշում են, թե ինչ տեղի ունեցավ այդ ժողովին: Եթե չեն հիշում, արագ հիշեցրեք, առաջ բերելով հետևյալ մտքերը.

Այդ ժողովի ժամանակ Երկնային Հայրը ներկայացրեց մի ծրագիր, որը մեզ պետք է օգներ նմանվել Իրեն: Մենք ընտրեցինք հետևել ծրագրին, այդպիսով մենք բոլորս եկանք երկիր և ստացանք ֆիզիկական մարմին: Եթե մենք երկրի վրա ապրելիս ընտրենք հետևել պատվիրաններին, ապա կկարողանանք նորից ապրել Երկնային Հոր հետ: Հիսուս Քրիստոսն առաջարկեց գալ երկիր և ցույց տալ մեզ այն, ինչ մենք պետք է անենք Երկնային Հոր հետ նորից ապրելու համար: Լյուցիֆերը ցանկանում էր գալ երկիր և բոլորին ստիպել պահել պատվիրանները: Նա չէր ուզում մարդկանց ընտրության հնարավորություն տալ: Սակայն Հիսուսը ցանկանում էր հետևել Երկնային Հոր ծրագրին: Նա ցանկանում էր, որ մարդիկ իրենք որոշեն, թե ինչպես են ապրելու:

Բացատրեք, որ Երկնային Հայրը գիտեր, որ մեզ համար լավագույն տարբերակը ինքնուրույն ընտրություն կատարելն է, որպեսզի մենք սովորենք ճիշտ ընտրություններ կատարել: Թող երեխաները մի քանի անգամ արտասանեն *ընտրության ազատություն* արտահայտությունը:

Բացատրեք, որ Լյուցիֆերը (որը կոչվում է նաև Սատանա) և նրա հետևորդները դեռ պայքարում են Երկնային Հոր ծրագրի հետ: Նրանք ցանկանում են, որ մենք օգտագործենք ընտրության մեր ազատությունը իրենց հետևելու համար, և ոչ թե Հիսուսին հետևելու և ճիշտն անելու համար:

ԸՃ նկար

Ցուցադրեք ԸՃ նկարը:

- Ի՞նչ Հիսուսը ցանկացավ անել օգնելու համար մեզ ընտրել ճիշտը: (Սա ցանկացավ գալ երկիր մեզ ճիշտը սովորեցնելու համար, որպեսզի մենք կարողանանք իմաստուն ընտրություններ կատարել:)

Ցույց տվեք ԸՃ-ի վրայի խոսքերը: Ասեք այդ խոսքերը բարձրաձայն և ապա երեխաներին խնդրեք ձեզ հետ միասին կրկնել դրանք:

### Երեխաները կարող են ընտրել անել ճիշտը

Պատմվածք սուրբ գրություններից

Ձեր խոսքերով պատմեք Մաթևոս 21.14–16-ում տրված պատմվածքը: Բացատրեք, որ քահանապետերից ոմանք չհավատացին, որ Հիսուս Քրիստոսը Փրկիչն էր, որին Երկնային Հայրն ուղարկել էր օգնելու նրանց: Նրանք ուշադիր հետևում էին Հիսուսին, փորձելով գտնել որևէ սխալ բան, որ նա կաներ, որպեսզի կարողանային սպանել նրան:

Բացատրեք, որ երբ Հիսուսը տաճարում բուժեց կույր և կաղ մարդկանց, քահանայապետերը զայրացան: Երբ երեխաները սկսեցին գովք տալ Հիսուսին, քահանայապետերն էլ ավելի զայրացան և պատվիրեցին Հիսուսին, որ վերջ տա երեխաների գովասանքին: Սակայն, դրա փոխարեն, նա քահանայապետերին հարցրեց, թե արդյոք չեն կարդացել սուրբ գրություններում, որ երեխաները կփառավորեն իրեն:

Շեշտեք, որ ինչպես այդ պատմության երեխաները, ձեր դասարանի երեխաները կարող են հետևել և փառավորել Հիսուսին:

Սուրբ գրություն

Բացեք Վարդապետություն և Ուխտերը և բարձրաձայն կարդացեք 37.4-ի մի մասը. «Թող ամեն մարդ ընտրի իր համար»: Բացատրեք, որ սուրբ գրության այս հատվածում *ամեն մարդ* նշանակում է բոլոր մարդիկ: Մենք բոլորս կարող ենք ընտրել, թե ինչ անել: Երեխաներին խնդրեք կանգնել և կրկնել արտահայտությունը:

ԸՃ նկար

Մատնանշեք ԸՃ նկարը և երեխաներին խնդրեք նորից կրկնել նկարի վրայի խոսքերը:

## Մենք կարող ենք ընտրել ճիշտը

Պատմվածք

Երեխաներին պատմեք մի երեխայի մասին, որն ընտրում է անել այն, ինչ կցանկանար Հիսուսը: Կարող եք օգտագործել հետևյալ պատմությունը.

Բրիթանին արթնացավ կիրակի առավոտյան իրեն շատ ծանր զգալով: Նա շատ ուշ էր պառկել քնելու և շատ վաղ պետք է արթնանար: Նա պետք է սպասեր, թե երբ կհասներ լոգարանն օգտագործելու իր հերթը: Ապա նա չէր կարողանում գտնել իր կոշիկի զույգը: Ապա նրա ոտքի թաթը մնացել էր աթոռի արանքում: Նրա մեծ եղբայրը բարկացած էր, որովհետև կարծում էր, որ նրա պատճառով ամբողջ ընտանիքը կուշանա:

Երեխաների խմբում Բրիթանին չէր երգում: Նա չէր ժպտում: Նա անգամ չէր լսում: Նա կուզենար չլինել Երեխաների խմբում: Նա նստել էր վերջին շարքում և խաղ էր անում գրպանում եղած իրերով:

- Ինչպիսի՞ ընտրություններ կատարեց Բրիթանին:

Բրիթանիի ուսուցիչը շատ էր պարապել դասը պատրաստելու համար և գիտեր, որ Բրիթանին չէր լսում: Դասից հետո Բրիթանիի ուսուցիչը առանձին խոսեց Բրիթանիի հետ և հարցրեց, թե ինչ էր պատահել: Բրիթանին սկսեց լաց լինել: Նա ուզում էր երջանիկ լինել, և ուզում էր, որ իր ուսուցիչը ևս երջանիկ լիներ:

Բրիթանիի ուսուցչուհին առաջարկեց մի փորձ կատարել: Բրիթանին մտածեց, որ փորձը նման է զվարճանքի: Նրա ուսուցչուհին բացատրեց, որ ճիշտն ընտրելով և անելով այն, ինչ Հիսուսը ցանկանում է, որ անենք, մենք երջանիկ կլինենք: Բրիթանին համաձայնվեց հաջորդ կիրակի Երեխաների խմբի դասին անել այն, ինչ կցանկանար Հիսուսը:

Հաջորդ շաբաթ օրը Բրիթանիի ուսուցչուհին նրան հիշեցրեց փորձի մասին: Բրիթանին ինքն իրեն ասաց. «Վաղը ես պետք է անեմ այն, ինչ ինձանից ակնկալում է Հիսուսը»:

Կիրակի առավոտյան, երբ Բրիթանին արթնացավ, նա ոգևորված էր իր փորձի կապակցությամբ: Նա արագ պատրաստվեց Եկեղեցու համար և օգնեց իր փոքր քրոջը պատրաստվել: Երբ Բրիթանին մտավ Երեխաների խումբ, նա ժպտում էր: Նա երգեց բացիչ երգը և ակնածանքով նստեց բացիչ աղոթքի ընթացքում: Բրիթանիի կողքին նստած տղան անընդհատ շշնջում էր նրա ականջին, և շուտով Բրիթանին նույնպես սկսեց շշնջալ և դադարեց լսել: Երբ եկավ դասարան գնալու ժամանակը, Բրիթանին վեր նայեց և տեսավ պատի վրա կախված Հիսուսի նկարը: Նա հիշեց, որ ցանկանում էր անել այն, ինչ Հիսուսն է ուզում: Բրիթանին լուռ գնաց դասարան և նստեց առաջին շարքում: Նա լսեց դասը և պատասխանեց իր ուսուցչուհու հարցերին: Բրիթանին երջանիկ էր իրեն զգում: Նա ուրախ էր, որ ընտրեց ճիշտը: Նա բացահայտեց, որ ընտրելով ճիշտը և անելով այն, ինչ նրանից ակնկալում էր Հիսուսը, նա իրեն երջանիկ էր զգում:

Քննարկում

- Ինչո՞ւ էր Բրիթանին իրեն երջանիկ զգում:
- Ե՞րբ եք դուք ձեզ երջանիկ զգացել ճիշտն ընտրելու արդյունքում:

**Ամփոփում**

Վարժություն

Երեխաներին խնդրեք բռունցք անել, բութամատը դեպի վեր: Երեխաներին ասացեք, որ դուք կնկարագրեք մի քանի ընտրություն, որոնք նրանք կարող են կատարել: Եթե նկարագրված ընտրությունը այնպիսին է, որը կցանկանար Հիսուսը, ապա բութամատը վեր պահեք: Եթե այն նկարագրում է այնպիսի մի բան, որը կգոհացներ Սատանային, ապա բութամատը պահեք դեպի ներքև: Օգտվեք ստորև տրված օրինակներից կամ ինքներդ մտածեք.

- Դուք որոշում եք գալ Երեխաների Խումբ:
- Երբ Երեխաների Խմբում ղեկավարը բոլորին խնդրում է երգել, դուք որոշում եք երգել:
- Աղոթքի ժամանակ դուք որոշում եք ձեր աչքերը բաց պահել:
- Դուք որոշում եք ձեր ընկերոջը բերել եկեղեցի:
- Հաղորդության ժամանակ դուք որոշում եք շշնջալ ձեր ընկերոջ ականջին:
- Դուք որոշում եք լուռ քայլել ձեր դասարանում:
- Դուք որոշում եք ծիծաղել, երբ մեկ այլ երեխա սայթաքում է և ընկնում:
- Աղմկելով, դուք որոշում եք խանգարել մյուս երեխաներին:
- Դուք որոշում եք վարժության ժամանակ օգնել ուսուցչին:
- Դուք որոշում եք ծաղրել այն երեխային, որը սխալ է պատասխանել հարցին:
- Դուք որոշում եք լուռ լսել, երբ ուսուցիչը պատմություն է պատմում:

Երգ

Ձեր ղեկավարությամբ երեխաները թող երգեն կամ արտասանեն «Ընտրիր ճիշտ ուղին» երգը:

Վկայություն

Ասացեք երեխաներին, թե որքան երախտապարտ եք, որ Երկնային Հայրը մեզ ընտրության հնարավորություն է տվել: Արտահայտեք ձեր վստահությունը այն բանում, որ երեխաները կարող են ճիշտ ընտրություններ կատարել:

Երեխաներին խնդրեք լինել պատրաստ հաջորդ դասին պատմելու համար այն ճիշտ ընրությունների մասին, որոնք կատարել են շաբաթվա ընթացքում:

Աշխատանքային թերթիկ

Եթե երեխաների համար գրառումներ եք պատրաստել հաջորդ շաբաթվա դասի վերաբերյալ, ապա յուրաքանչյուր երեխայի տվեք մեկական թերթիկ: Բացատրեք գրառումները երեխաներին և խնդրեք թերթիկները տալ ծնողներին:

Երեխաներից մեկին հրավիրեք ասել փակիչ աղոթքը:

---

**Լրացուցիչ վարժություններ**

Հետևյալ վարժություններից ընտրեք նրանք, որոնք լավագույնս կհամապատասխանեն ձեր դասարանի երեխաներին: Դուք կարող եք դրանք օգտագործել դասի ընթացքում կամ որպես դասի վերանայում կամ ամփոփում: Լրացուցիչ ուղղության համար տե՛ս «Դասաժամ» «Օգնություն ուսուցչին» բաժնում:

1. Բոլոր երեխաներին խնդրեք կանգնել: Երեխաներից մեկին ընտրեք լինելու ղեկավարը և նրան մի մետաղադրամ կամ կոճակ տվեք: Ղեկավարին խնդրեք կանգնել դասարանի անդամների առջև, ձեռքերից մեկի մեջ պահելով մետաղադրամը կամ կոճակը: Մնացած երեխաներին խնդրեք

կռահել, թե որ ձեռքում է գտնվում մետաղադրամը կամ կոճակը: Երբ բոլորը կհայտնեն իրենց կարծիքը, ղեկավարը պետք է ասի, թե որ ձեռքում է այն: Ճիշտ կռահած երեխաները թող մի քայլ առաջ գան՝ դեպի ղեկավարը: Մյուսները թող մնան իրենց տեղում: Շարունակեք, մինչև որ երեխաներից մեկը հասնի ղեկավարին:

- Ինչո՞ւ դուք բոլորդ ճիշտ չկռահեցիք յուրաքանչյուր անգամ: (Դուք չունեիք ձեզ օգնող որևէ տեղեկություն:)
- Արդյո՞ք կռահելը ընտրություն կատարելու լավ եղանակ է:

Երեխաներին օգնեք հասկանալ, որ մենք չպետք է կռահենք, երբ որոշում ենք կայացնում: Հիսուսը մեզ սովորեցրել է այն, ինչ մենք պետք է անենք: Եթե մենք անենք այն, ինչ մեզանից ակնկալում են Երկնային Հայրն ու Հիսուս Քրիստոսը, ապա մեր ընտրությունները միշտ ճիշտ կլինեն:

2. Երեխաներին թուղթ և մատիտներ տվեք և խնդրեք նկարել նկարներ, որտեղ իրենք անում են այն, ինչ կցանկանար Հիսուս Քրիստոսը, որ նրանք անեին Երեխաների Խմբում: Օրինակ, լուռ նստել, երգել, օգնել ուսուցչին կամ հանգիստ քայլել:

3. Երեխաներին օգնեք արտասանել «Լսիր, լսիր» , կատարելով տրված շարժումները.

   Լսիր այդ փոքր ու մեղմ ձայնին *(ձեռքն ականջին դրեք):*
   Լսիր, լսիր *(մատը շրթունքին դրեք):*
   Երբ ընտրության առաջ եք կանգնում *(բարձրացրեք ձեռքերը, ափերը բացած),*
   Նա միշտ ուղղություն է առաջարկում *(հավաքեք ձեռքերը):*

   Երգը կրկնեք մի քանի անգամ, որպեսզի երեխաները կարողանան սովորել խոսքերը:

Դաս
6

# Մենք ունենք հատուկ ընտանիքներ

**Նպատակ**

Օգնել յուրաքանչյուր երեխայի հասկանալ, որ Երկնային Հայրը ծրագրել է, որ երեխաները մեծանան ընտանիքներում:

**Նախապատրաստություն**

1. Աղոթքով ուսումնասիրեք Ղուկաս Ա.26–38 և Մաթևոս Ա.18–25:
2. Թղթից կտրատեք հետևյալ տառերը: Ամեն տառի բարձրությունը պետք է լինի մոտավորապես ութից տաս սանտիմետր.

3. Պատրաստվեք երգել կամ արտասանել «Երջանիկ Ընտանիք:
4. Պահանջվող նյութեր.
   ա. Ատվածաշունչ
   բ. Ձեր ընտանիքի նկարը (ըստ հայեցողության)
   գ. Թուղթ և մատիտներ
   դ. Նկար 2-5, Ավետում; նկար 2-6, Ծնունդ (Gospel Art Picture Kit 201; 62495):
5. Անհրաժեշտ պատրաստություններ կատարեք լրացուցիչ այն վարժությունների համար, որոնք պատրաստվում եք անցկացնել:

*Հիշեցում.* Հաշվի առեք դասարանի անդամների ընտանիքներում տիրող իրավիճակը: Երեխաներին օգնեք հասկանալ, որ ընտանիքում ամենակարևորը ոչ թե մարդկանց քանակն է, այլ ընտանիքի անդամների սերը և միմյանց հանդեպ հոգատարությունը:

**Դասի առաջարկվող ընթացք**

Երեխաներից մեկին հրավիրեք ասել բացիչ աղոթքը:

Եթե երեխաներին խնդրել եք շաբաթվա ընթացքում ինչ-որ բան կատարել, ստուգեք: Կարող եք երեխաներին խնդրել պատմել այն մասին, թե ինչպես են շաբաթվա ընթացքում ընտրել ճիշտը:

**Ընտանիքները Երկնային Հոր ծրագրի մասն են կազմում**

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

- Որտե՞ղ էիք դուք ապրում երկիր գալուց առաջ:

Երեխաների հետ կրկնեք, որ մենք բոլորս ընտրել ենք հետևել Երկնային Հոր ծրագրին և գալ երկիր: Երեխաներին ասացեք, որ երբ մենք եկանք երկիր, Երկնային Հայրը մեզ օրհնեց այնպիսի մարդկանցով, որոնք օգնում ու սիրում են մեզ:

Երեխաներին ասացեք, որ կհուշեք նրանց, որպեսզի կռահեն, թե ովքեր են այս մարդիկ: Երեխաներին խնդրեք հերթով բարձրացնել ու պահել *ընտանիք* բառի յուրաքանչյուր տառը: Երեխաներին խնդրեք ասել, թե ինչ տառ է իրենց

մոտ: Այնուհետև հուշեք, ասելով մի բառ, որը սկսվում է այդ տառով: Հուշումների օրինակներ տրվում են հաջորդ էջում.

1. **Ը**նկերը դրա մասը չէ:

2. **Ն**երումը դրա մասն է:

3. **Տ**ատիկն ու պապիկը դրա մասն են:

4. **Ա**մուսինը դրա մասն է:

5. **Ն**վիրվածությունը դրա մասն է:

6. **Ի**նձ այնտեղ սիրում են:

7. **Ք**եռին դրա մասն է:

Երբ տաք բոլոր հուշումները, երեխաների հետ միասին կրկնեք *ընտանիք* բառը:

Քննարկում

- Ինչո՞ւ է մեզ հարկավոր ընտանիքը:

Բացատրեք, որ երբ մենք մանուկներ էինք, մենք պետք է ապրեինք այնպիսի մարդկանց հետ, որոնք մեր մասին հոգ կտանեին: Երկնային Հայրը ծրագրել է, որ մեզանից յուրաքանչյուրը պետք է ապրի ընտանիքի հետ, որը կսիրի մեզ և կհոգա մեր մասին: Մեր մեծանալու հետ մեկտեղ մեր ընտանիքները մեզ սովորեցնում են և օգնում են իմաստուն որոշումներ կայացնել:

**Երկնային Հայրը ծրագրել է, որ Հիսուս Քրիստոսը ծնվի ընտանիքում**

Սուրբ գրության պատմվածք և քննարկում

Բացատրեք, որ Երկնային Հայրը ծրագրել է, որ Հիսուս Քրիստոսը ծնվի ընտանիքում: Այն տղամարդն ու կինը, որոնք ընտրվել են երկրի վրա Հիսուսին սիրելու և նրա մասին հոգ տանելու համար, սիրել են Երկնային Հորը և պահել են Նրա պատվիրանները:

Ցույց տվեք նկար 2-5, Ավետում, և պատմեք Գաբրիել հրեշտակի այցը Մարիամին, ինչպես տրված է Ղուկաս Ա. 26–38:

- Ո՞վ է նկարի վրա պատկերված կինը: (Տե՛ս Ղուկաս Ա.27:)
- Ո՞վ է նկարի վրա պատկերված տղամարդը: (Տե՛ս Ղուկաս Ա.26:)

Բացատրեք, որ Մարիամը զարմացած և մի փոքր մտահոգված էր հրեշտակին տեսնելիս, սակայն նա պատրաստ էր անելու այն ամենը, ինչ ցանկանում էր իրենից Երկնային Հայրը (տե՛ս Ղուկաս Ա.29, 38):

- Ի՞նչ ասաց հրեշտակը Մարիամին: (Տե՛ս Ղուկաս Ա.31–32:)
- Ո՞վ պետք է լիներ երեխայի հայրը: (Երկնային Հայրը:)

Ցույց տվեք նկար 2-6, Ծնունդ:

- Ո՞վ է այս նկարի վրա պատկերված տղամարդը:

Երեխաներին ասացեք, որ Հովսեփը արդարակյաց մարդ էր, որը Երկնային Հոր կողմից ընտրվել էր որպես Հիսուսի մոր ամուսին Հիսուսին սիրելու և Նրա մասին հոգալու համար: Բացատրեք, որ Հիսուսի ծնվելուց առաջ հրեշտակն այցելեց Հովսեփին ևս: Համառոտ պատմեք Մաթևոս Ա.18–25-ում տրվող պատմությունը: Բարձրաձայն կարդացեք այն, ինչ հրեշտակն ասաց Հովսեփին Մաթևոս Ա.21-ում:

- Ի՞նչ հրեշտակն ասաց Մարիամին և Հովսեփին, թե ինչպե՞ս անվանեն մանուկին:

Բացատրեք, որ *Հիսուս* անունը նշանակում է փրկիչ: Հիսուս Քրիստոսը պետք է մեզ բոլորիս փրկեր մեր մեղքերից և օգներ վերադառնալ ընդմիշտ ապրելու Երկնային Հոր հետ: Հիսուսի ծնվելուց առաջ երկրի վրա ապրող մարգարեները կանխագուշակել էին, որ Փրկչի անունը պետք է Հիսուս Քրիստոս լիներ: *Քրիստոս* անունը նշանակում է «օծված», ինչը նշանակում է լինել ընտրված Երկնային Հոր կողմից:

- Ինչո՞ւ էր Հիսուսին ընտանիք հարկավոր:

### Մեր ընտանիքները սիրում են մեզ

Ուսուցչի ելույթ

Բացատրեք, որ բոլոր ընտանիքները տարբեր են: Որոշ ընտանիքներում կան երկու ծնողներ, մյուսներում՝ մեկ ծնող: Որոշ ընտանիքներում կան շատ երեխաներ, մյուսներում՝ կան միայն մի քանի կամ մեկ երեխա: Որոշ ընտանիքներում միասին ապրում են երեխաները, ծնողները, տատիկները, պապիկները, հորաքույրները, մորաքույրները, քեռիները, հորեղբայրները: Կան երեխաներ, որոնք ապրում են մեծահասակների հետ, որոնք իրենց բարեկամները չեն, սակայն միևնույն է սիրում են իրենց և հոգ տանում իրենց մասին: Ընտանիքները միասին տարբեր գործեր են անում և տարբեր ձևերով են արտահայտում իրենց սերը: Ընտանիքում կարևորն այն է, որ անդամները սիրում և հոգ են տանում միմյանց մասին: Յուրաքանչյուրը իրեն ընտանիքի մաս զգալու կարիք ունի:

Քննարկում

- Ի՞նչ է ձեր ընտանիքը արել ձեզ համար, երբ դուք փոքր էիք:
- Ի՞նչ է ձեր ընտանիքը անում ձեզ համար այժմ:
- Ի՞նչ եք դուք անում ձեր ընտանիքի մյուս անդամների համար:

Երեխայի մասնակցությունը

Ցույց տվեք ձեր ընտանիքի նկարը, եթե բերել եք այն: Մատնանշեք ձեր ընտանիքի անդամներին և ասացեք, թե ինչու է նրանցից յուրաքանչյուրը կարևոր ձեզ համար: Երեխաներին հնարավորություն տվեք խոսել իրենց ընտանիքների մասին: Երեխաներին հրավիրեք պատմել այն պահերի մասին, երբ իրենց երջանիկ են զգացել, իմանալով որ ընտանիքը սիրում է իրենց:

### Մեր ընտանիքները օգնում են մեզ

Քննարկում

Երեխաներին խնդրեք լսել, մինչև որ դուք կպատմեք մի քանի օրինակներ այն մասին, թե ինչպես են ընտանիքի անդամները օգնում և սիրում միմյանց: Յուրաքանչյուր օրինակի մասին պատմելուց հետո երեխաներին խնդրեք ասել, թե ինչպես այդ մարդիկ միմյանց նկատմամբ սեր ցուցաբերեցին: Օգտվեք հետևյալ օրինակներից կամ ներկայացրեք ձերը.

- Քելի փոքր եղբայր Էրիկը գիշերը վախենում էր, և Քելը նրան սովորեցրեց աղոթել ապահով զգալու համար: Այնուհետև Քելը երգ երգեց, որպեսզի Էրիկը քնի:
- Քեյթլինի մայրիկը գիշերը տանը չէր: Քեյթլինը թղթից մի սիրտ կտրեց և մի երկտող գրեց, ասելով մայրիկին, թե որքան շատ է նրան սիրում: Երկտողը նա թողեց մայրիկի բարձի վրա, որպեսզի տուն վերադառնալուն պես մայրիկը գտնի այն:
- Յանի տատիկը ամեն շաբաթ մի քանի ժամ տրամադրում էր Յանին օգնելու սովորել բառերի ուղղագրությունը դպրոցի համար: Նրա օգնությունն ու գովասանքը Յանին խրախուսեցին սովորել ցանկում եղած բոլոր բառերը:

- Թոնին նպատակ էր դրել մկրտվելուց առաջ կարդալ Մորմոնի Գիրքը: Ամեն երեկո նրա ավագ քույրը նստում էր նրա կողքին և լսում այն, ինչ նա կարդում էր: Սա Թոնիին օգնում էր հասկանալ բարդ բառերը: Քրոջ օգնությամբ, Թոնին կարողացավ հասնել իր նպատակին:
- Հեյդին պատահմամբ լսեց, թե ինչպես էին իր դասընկերները ծաղրում իր փոքր եղբորը: Սա գրեթե լաց էր լինում, և Հեյդին տարավ նրան հեռու և խաղ խաղաց նրա հետ: Ավելի ուշ իր դասընկերներին նա ասաց, որ նրանք չպետք է ծաղրեն մյուս երեխաներին:

Առարկայական դաս

Բարձրացրեք բացված մատներով ձեր ձեռքը: Բացատրեք, որ ընտանիքի անդամները կարող են միասին աշխատել, ինչպես մատները և բութ մատը: Երեխաներին խնդրեք փորձել մի ձեռքով և առանց բութ մատի օգնությամբ բարձրացնել իրենց սուրբ գրությունները կամ որևէ այլ առարկա: Բացատրեք, որ, եթե անգամ նրանք կարողանան բարձրացնել սուրբ գրությունները միայն մատներով, շատ ավելի հեշտ է, երբ նրանք օգտագործում են բութ մատը և մնացած մատները միասին: Երեխաներին հիշեցրեք, որ ընտանիքի բոլոր անդամները կարևոր են: Ընտանիքի անդամները ավելի շատ բանի կհասնեն, եթե բոլորը միասին աշխատեն:

Արվեստի վարժություն

Երեխաներին թուղթ և մատիտներ տվեք և խնդրեք նկարել իրենց ընտանիքները: Յուրաքանչյուր նկարի վրա գրեք *Իմ ընտանիքը սիրում է ինձ:*

**Ամփոփում**

Երգ

Վկայություն

Վկայեք, որ Երկնային Հայրը ցանկանում է, որ մեզանից յուրաքանչյուրը սիրված լինի և յուրաքանչյուրի մասին հոգ տանեն ընտանիքում: Երեխաներին հիշեցրեք, որ բոլոր ընտանիքները տարբեր են և յուրաքանչյուր ընտանիք կարևոր է: Վկայեք, որ նրանք կարող են շատ բան անել, իրենց ընտանիքներին երջանիկ դարձնելու համար:

Երեխաներին խրախուսեք իրենց ընտանիքներին ցույց տալ իրենց նկարած նկարները և պատմել ընտանիքներին, թե որքան շատ են իրենց սիրում:

Երեխաներից մեկին հրավիրեք ասել փակիչ աղոթքը: Նրան խնդրեք շնորհակալություն հայտնել Երկնային Հորը ընտանիքների համար:

---

**Լրացուցիչ վարժություններ**

Հետևյալ վարժություններից ընտրեք նրանք, որոնք լավագույնս կհամապատասխանեն ձեր դասարանի երեխաներին: Դուք կարող եք դրանք օգտագործել դասի ընթացքում, որպես դասի վերանայում կամ ամփոփում: Լրացուցիչ ուղղության համար տե՛ս «Դասաժամ» «Օգնություն ուսուցչին» բաժինները:

1. Եթե ձեր երկրում դա ընդունված է, երեխաներին խնդրեք պատրաստվել պատմելու այն մասին, թե ինչպես են ընտրվել իրենց անունները: Դրա համար 5-րդ դասի ավարտից հետո երեխաների ծնողներին երկտող ուղարկեք, խնդրելով իրենց երեխաներին պատմել, թե ինչպես են ընտրել իրենց անունները (տե՛ս էջ 21): Դասարանում բացատրեք, որ երբ մենք ծնվում ենք, մեր ընտանիքները մեզ համար անուն են որոշում: Յուրաքանչյուր երեխային խնդրեք ասել, թե ինչպես են որոշել նրա անունը: (Հնարավորության դեպքում, կարող եք շաբաթվա ընթացքում զանգահարել երեխայի ծնողներին և նրանց հիշեցնել, որ պատրաստեն իրենց երեխային:)

2. Յուրաքանչյուր երեխայի խնդրեք դասարան բերել իր ընտանիքի նկարներից մեկը (նկարները հավաքեք դասի սկզբում, որպեսզի դրանք չշեղեն երեխաների ուշադրությունը): Երեխաներին խնդրեք հերթով ցույց տալ նկարները և մեկ-երկու խոսքով ասել, թե ինչու են սիրում իրենց ընտանիքները: (Եթե պատրաստվում եք անցկացնել նաև լրացուցիչ վարժություն 1, ապա նկարի համար խնդրանքը կարող եք ավելացնել երեխայի ընտանիքին ուղարկվող երկտողին 5-րդ դասի վերջում:)

3. Երեխաների հետ երգեք կամ արտասանեք «Ահա մենք միասին ենք» երգի բառերը, օգտագործելով իրենց ընտանիքների անդամների անվանումները.

   Ահա մենք միասին ենք, միասին ենք, միասին ենք,
   Ահա մենք միասին ենք ողջ ընտանիքով:
   Հայրիկը, մայրիկը, քույրիկը, եղբայրը,
   Բոլորս միասին ենք այս պայծառ օրով:
   Լրացուցիչ քառատողեր երգեք, օգտագործելով *տատիկ, պապիկ, մորաքույր, քեռի* անվանումները:

   Երեխաներին հիշեցրեք, որ Երկնային Հայրը ծրագրել է, որ նրանք ապրեն ընտանիքներում, որոնք կսիրեն նրանց և կհոգան նրանց համար:

4. Երեխաներին խնդրեք ձեռքը դնելով թղթի վրա ուրվագծել այն: Նրանց խնդրեք մատների վրա դեմքեր նկարել, որոնք կներկայացնեն ընտանիքի անդամներին, կամ մեջտեղում սիրտ նկարել որպես սիրո նշան: Երեխաներին հիշեցրեք, որ ընտանիքի անդամները նման են ձեռքի մատներին, նրանք բոլորը կարևոր են:

5. Երեխաներին խնդրեք դերերով խաղալ այնպիսի իրավիճակներ, որոնցում ընտանիքի անդամներն օգնում են միմյանց: Օգտվեք դասում տրված իրավիճակներից կամ մտածեք ինքներդ:

6. Հետևյալ քառատողերի բառերն արտասանելու ընթացքում երեխաներին օգնեք կատարել գործողությունները.

   Իմ ընտանիքը

   Ինչպես թռչյունները ծառի վրա *(թափահարեք թևերը),*
   Ես ունեմ իմ ընտանիքը *(մատնանշեք ձեզ):*
   Նրանք ինձ սնունդն են տալիս *(ձևացրեք, թե ուտում եք)*
   Եվ սովորեցնում են խաղալ *(թռչկոտեք),*
   Որպեսզի ես ողջ օրը երջանիկ և ապահով լինեմ *(ժպտացեք):*

7. Արտասանեք հետևյալ խոսքերը, մինչ երեխաները կբռնեն ձեռքերը և շրջանով կպպտվեն.

   Քո ընտանիքը քեզ շատ է սիրում,
   Քո ընտանիքը քեզ շատ է սիրում,
   Կեցցե, կեցցե ընտանիքը,
   Քո ընտանիքը քեզ շատ է սիրում:

   Երեխաներից մեկին խնդրեք կանգնել շրջանի ներսում, մինչ դուք երգում եք հաջորդ քառատողը.

   Այդ ընտանիքը հայրիկ ունի,
   Այդ ընտանիքը հայրիկ ունի,
   Կեցցե, կեցցե ընտանիքը,
   Այդ ընտանիքը հայրիկ ունի:

Կրկնեք այս քառատողը, փոխարինելով *հայրիկ* բառը *մայրիկով*, և հրավիրելով մեկ այլ երեխայի միանալ կենտրոնում գտնվող երեխային: Շարունակեք, օգտագործելով ընտանիքի այլ անդամների անունները, մինչև որ բոլոր երեխաները կհայտնվեն կենտրոնում: Մեկ անգամ ևս երգեք առաջին քառատողը, երբ բոլոր երեխաները միասին կլինեն:

Դաս
7

# Հիսուս Քրիստոսի ծնունդը ուրախություն բերեց երկիր

**Նպատակ**

Օգնել յուրաքանչյուր երեխային զգալ, որ Հիսուս Քրիստոսի ծնունդը ուրախություն բերեց երկիր:

**Նախապատրաստություն**

1. Աղոթքով ուսումնասիրեք Ղուկաս Բ.1–20:
2. Բերեք օրացույց կամ ժամանակագիծ ծննդյան միջոցառումների համար: Ժամանակագիծ պատրաստելու համար թղթի երկար կտորը բաժանեք տասներկու հավասար բաժինների և հերթականությամբ գրեք ամիսների անունները:
3. Պարզեք ձեր դասարանի յուրաքանչյուր երեխայի ծննդյան օրը, հարցնելով Երեխաների Խմբի քարտուղարին, ծխի գործավարին կամ երեխաների ծնողներին:
4. Երեխաների Խմբի նախագահի համաձայնությամբ, մի մոր կամ հղի կնոջ հրավիրեք կարճ պատմելու այն մասին, թե ինչպես է նա պատրաստվում երեխայի ծնվելու օրվան: Նրան խնդրեք կիսվել իր ոգևորությամբ:
5. Պատրաստվեք երգել կամ արտասանել «Հեռու, հեռու, դաշտերում Հուդայի» երգի առաջին քառատողը:
6. Պահանջվող նյութեր.
   ա. Աստվածաշունչ:
   բ. Թղթի փոքր կտոր և մատիտ յուրաքանչյուր երեխայի համար:
   գ. Կպչող ժապավեն կամ կպչող որևէ այլ պարագա:
   դ. Նկար 2-6, Ծնունդ (Gospel Art Picture Kit 201; 62495):
7. Անհրաժեշտ նախապատրաստություններ կատարեք լրացուցիչ այն վարժությունների համար, որոնք պատրաստվում եք անցկացնել:

*Հիշեցում.* Երեխաների ծննդյան օրերը քննարկելիս, ուշադիր եղեք ձեր դասարանի որդեգրված կամ վերցված երեխաների զգացմունքների հանդեպ: Օգնեք, որպեսզի նրանք հասկանան, որ իրենց ծնունդը նույնպես ուրախ իրադարձություն է:

**Դասի առաջարկվող ընթացք**

Երեխաներից մեկին խնդրեք ասել բացիչ աղոթքը:

Եթե երեխաներին խնդրել եք շաբաթվա ընթացքում ինչ-որ բան կատարել, ստուգեք:

**Ծննդյան օրերը հատուկ օրեր են**

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Երեխաներին ասացեք, որ դուք մի հատուկ օրվա մասին եք մտածում: Բացատրեք, որ նրանց հուշում կտաք, և խնդրեք լսել այդ հուշումը և բարձրացնել ձեռքը, եթե գիտեն, թե որ օրվա մասին եք դուք մտածում: Երգեք ծննդյան որևէ երգի մեղեդի, օրինակ «Տարեդարձ է այսօր», կամ ակնհայտ որևէ այլ հուշում տվեք:

• Ի՞նչ հատուկ օրվա մասին եմ ես մտածում:

• Ինչո՞ւ եք ձեր ծննդյան օրն այդքան շատ սիրում:

Վարժություն օրացույցով կամ ժամանակագծով

Բաժանեք թուղթ և մատիտներ: Բոլոր երեխաներին խնդրեք թղթի վրա գրել իրենց անունները: (Անհրաժեշտության դեպքում երեխաներին օգնեք:)

Ցուցադրեք օրացույցը կամ ժամանակագիծը: Երեխաներին խնդրեք ձեզ հետ միասին արտասանել ամիսների անունները: Նորից կարդացեք յուրաքանչյուր ամսվա անունը և այն երեխաներին, ովքեր այդ ամսին են ծնվել, խնդրեք կպչող ժապավենով փակցնել իրենց անունը օրացույցի կամ ժամանակագծի վրա:

• Ի՞նչ եք կարծում, ինչպես էր զգում ձեր ընտանիքը, երբ դուք ծնվեցիք:

Հրավիրված հյուրի ելույթ

Ներկայացրեք երեխա ունեցող մորը կամ հղի կնոջը և նրանց խնդրեք նկարագրել իրենց զգացմունքները երեխայի ծննդի հետ կապված:

Քննարկում

Երեխաների հետ միասին խոսեք այն մասին, թե ինչպես են իրենց ընտանիքները պատրաստվել իրենց ծննդյան օրվան, օրինակ՝ աղոթել են նրանց առողջության համար, անուն են ընտրել, մանկական հագուստ և այլ պարագաներ են գնել, պատրաստել են քնելու տեղը: Երեխաներին օգնեք հասկանալ, որ իրենց ծնունդը ուրախալի և հաճելի իրադարձություն է եղել: Եթե դուք ծնող եք, ապա կարող եք պատմել, թե ինչ եք արել և ինչ զգացմունքներ եք ունեցել , երբ երեխա եք ունեցել:

Երեխաներին հիշեցրեք, որ ծնվելն ու ֆիզիկական մարմին ստանալը մեզ համար Երկնային Հոր ծրագրի կարևոր մասն է կազմում:

**Հիսուս Քրիստոսի Ծնունդը հրաշալի օր էր**

Ուսուցչի ելույթ

Երեխաներին ասացեք, որ նրանք պետք է սովորեն մի մանկան ծննդի մասին, որին մարդիկ երկար տարիներ են սպասել: Շատ տարիներ առաջ մարգարեներն ասել են, որ այդ օրը պետք է ծնվի Փրկիչը: Սա մարդկանց հնարավորություն կտա վերադառնալ կրկին ապրելու Երկնային Հոր հետ: Մարդիկ սպասում ու սպասում էին այդ մանկան ծննդին:

• Ո՞վ էր այդ մանուկը: (Հիսուս Քրիստոսը:)

Շեշտեք, որ ոչ ոք ճշգրիտ չգիտեր, թե երբ Հիսուսը պետք է ծնվեր: Որոշ ծնողներ իրենց երեխաներին սովորեցնում էին սպասել այդ մեծ օրվան, քանի որ գիտեին, որ Հիսուսը ցույց կտար ապրելու ճիշտ ճանապարհը և յուրաքանչյուրի համար հնարավորություն կստեղծեր վերադառնալու և ապրելու Երկնային Հոր հետ: Առանց Հիսուսի՝ մեր Փրկչի, ոչ ոք չէր կարողանա կրկին ապրել Երկնային Հոր հետ:

Նախապատրաստություն բեմադրությանը

Երեխաներին խնդրեք պատկերացնել, որ ապրում են հին ժամանակներում՝ Հիսուս Քրիստոսի ծննդից առաջ: Ասացեք, որ իրենք Բեթլեհեմ քաղաքի մոտ ապրող երեխաներ են: Իրենց ծնողները սովորեցրել են սպասել Փրկչի ծննդին: Այս երեկո նրանք դաշտերում օգնում են իրենց հայրերին արածեցնել ոչխարներին:

• Ի՞նչ դուք կվերցնեիք ձեզ հետ, եթե ձեր հայրիկի հետ գնայիք դաշտ ոչխարներին արածացնելու: (Պատասխանները կարող են լինել. տաք հագուստ և ուտելիք:)

Երեխաներին խնդրեք փակել իրենց աչքերը և պատկերացնել հետևյալ տեսարանը.

Երեկոն իջնում է և հովիվները հավաքում են ոչխարներին գոմում, որտեղ նրանք կարող են հանգիստ քնել մինչև առավոտ: Պարզ գիշեր է և սկսում են

երևալ աստղերը: Շուտով երկինքը ծածկվում է պայծառ աստղերով: Ամեն ինչ հանգիստ ու խաղաղ է: (Գիշերվա տպավորություն ստեղծելու համար կարող եք անջատել դասարանի լույսերը:)

Պատմվածք սուրբ գրությունից և բեմադրություն

Պատմեք հովիվների առաջ հրեշտակների հայնվելու պատմությունը, ինչպես տրվում է Ղուկաս Բ.8–18-ում: Պատմությունը պատմելիս բարձրաձայն կարդացեք մի քանի տող Աստվածաշնչից:

Նշեք, որ հովիվները վախեցան, երբ տեսան հրեշտակին, սակայն հրեշտակը նրանց ասաց. «Մի վախենաք, որովհետև ահա մեծ ուրախություն եմ ավետում ձեզ» (Ղուկաս Բ.10):

Երեխաներին խնդրեք մնջախաղով ցույց տալ, որ վախենում են հրեշտակից, ապա արտահայտել երջանկություն, լսելով այն, ինչ ասում է հրեշտակը:

Բացատրեք, որ հրեշտակը հովիվներին հայտնեց Հիսուսի ծննդի մասին (տե՛ս Ղուկաս Բ.11) և ասաց, թե որտեղ կարող են գտնել մանուկ Հիսուսին (տե՛ս Ղուկաս Բ:12): Հանկարծ հովիվները լսում են, ինչպես բազմաթիվ հրեշտակներ «Աստծուն օրհնում էին և ասում. Փառք Աստուծոյ բարձունքումը, և երկրի վերայ՝ խաղաղություն, և մարդկանց մեջ հաճություն» (Ղուկաս Բ.13–14):

Երգ

Երգեք կամ արտասանեք «Հեռու, հեռու, դաշտերում Հուդայի» երգի առաջին քառատողը: Երեխաներին խնդրեք միանալ ձեզ, եթե գիտեն խոսքերը:

Հեռու, հեռու, դաշտերում Հուդայի
Ավետաբեր մի լուր եկավ հովիվներին:
Փառք Քեզ, մեր Տեր, փառք Քեզ, մեր Տեր,
Փառք Քեզ, մեր միակ Բարձրյալ Տեր:
Խաղաղություն աշխարհին,
Բարգավաճում ամենքին:

Պատմվածք սուրբ գրությունից և բեմադրության շարունակություն

Բացատրեք, որ երբ հրեշտակները վերադարձան երկինք, հովիվները որոշեցին գնալ և գտնել մանուկ Հիսուսին (տե՛ս Ղուկաս Բ.15): Երեխաներին խնդրեք պատկերացնել, թե իրենց հայրերի հետ գնում են Բեթլեհեմ մանուկ Հիսուսին տեսնելու (կարող եք տեղափոխվել դասարանի մեկ այլ անկյուն):

Ցույց տվեք նկար 2-6, Ծնունդ:

- Ովքե՞ր են այս նկարի վրա պատկերված մարդիկ:

Բացատրեք, որ հովիվները գտան մանուկին այնտեղ, որտեղ իրենց հրեշտակն ասել էր, թե կգտնեն: Նա բարուրված էր կտորների մեջ և դրված էր մսուրի մեջ (կարող եք բացատրել, որ *բարուրված լինելը* նշանակում է, որ մանուկը կտորներով փաթաթված էր): Հովիվները շնորհակալ էին այն ամենի համար, ինչ տեսան և լսեցին Հիսուսի մասին, և նրանք ասացին ուրիշներին, թե ինչ են տեսել ու լսել (տե՛ս Ղուկաս Բ.17–18):

**Ամփոփում**

Երեխայի մասնակցություն

Յուրաքանչյուր երեխայի հրավիրեք կանգնել և պատմել մի որոշակի դեպքի մասին, որը տեղի ունեցավ այն ժամանակ, երբ հովիվները արածեցնում էին իրենց ոչխարներին: Շեշտեք, որ շատ մարդիկ երջանիկ էին Փրկչի ծննդին այդքան երկար սպասելուց հետո:

Վկայություն

Երեխաներին ասացեք, թե որքան երջանիկ եք, որ Հիսուս Քրիստոսը եկավ երկիր: Բերեք ձեր վկայությունը, որ Հիսուսը աշխարհի փրկիչն է, և երեխաներին ասացեք, որ Հիսուսի ուսմունքներին հետևելը նրանց կօգնի մի օր վերադառնալ և ապրել Երկնային Հոր հետ:

Երեխաներին խրախուսեք տանը իրենց ընտանիքներին պատմել այն ամենը, ինչ սովորեցին Հիսուս Քրիստոսի Ծննդյան մասին:

Երեխաներից մեկին հրավիրեք փակիչ աղոթք ասելու: Առաջարկեք, որ երեխան շնորհակալություն հայտնի Հիսուսի Ծննդյան համար:

---

**Լրացուցիչ վարժություններ**

Հետևյալ վարժություններից ընտրեք նրանք, որոնք լավագույնս կհամապատասխանեն ձեր դասարանի երեխաներին: Դուք կարող եք դրանք օգտագործել դասի ընթացքում, որպես դասի վերանայում կամ ամփոփում: Լրացուցիչ ուղղության համար տե՛ս «Դասաժամ» «Օգնություն ուսուցչին» բաժինները:

1. Երեխաներին օգնեք բեմականացնել այն իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել Փրկչի Ծննդյան ժամանակ: Կարող եք դասարան բերել կտորներ և երեխա տիկնիկ:

2. Երեխաներին օգնեք արտասանել «Երբ ես մանուկ էի» երգի բառերը և կատարել շարժումները (բառերը կարելի է երգել «Կար մի ձնեմարդ» երգի մեղեդու տակ, *Երեխաների Երգարան,* է. 249): Առաջին քառատողի համար կատարեք կծկվելու շարժումներ, իսկ երկրորդ քառատողի համար՝ ձգվող շարժումներ:

   Առաջ ես մանուկ էի, մանուկ էի, մանուկ էի,
   Առաջ ես փոքր, փոքր մանուկ էի:

   Այժմ ես դառնում եմ ավելի մեծ ու ավելի մեծ,
   Այժմ ես դառնում եմ ավելի բարձրահասակ:

3. Յուրաքանչյուր երեխայի համար պատրաստեք կամ պատճենահանեք մանուկ Հիսուսի և մսուրի նկարներ (կարող եք գտնել այս դասի վերջում): Թող երեխաները գունավորեն մսուրը և սոսնձեն ծղոտ, չոր խոտ կամ թել, մանուկի համար փափուկ անկողին պատրաստելու նպատակով: Ապա բոլոր երեխաներին խնդրեք գունավորել մանուկ Հիսուսի նկարը: Երեխաներին օգնեք կտրել իրենց գունավորած Հիսուսի նկարը և սոսնձել այն մսուրի մեջ:





# Երկնային Հայրը հետևում է ինձ

Դաս
8

**Նպատակ**

Ամրացնել յուրաքանչյուր երեխայի հավատքը, որ Երկնային Հայրը կօգնի և կօրհնի մեզ անհրաժեշտ պահին:

**Նախապատրաստություն**

1. Աղոթքով ուսումնասիրեք Մաթևոս Բ.1–15, 19–20:
2. Յուրաքանչյուր երեխայի համար պատրաստեք թղթե շրջանակ, որը բավականին մեծ կլինի նրա դեմքը նկարելու համար: Յուրաքանչյուր շրջանակի վերևի մասում անցք արեք և շրջանակի եզրով գրեք *Երկնային Հայրը հետևում է ինձ:*
3. Պատրաստվեք կիսվել անձնական փորձառությամբ, երբ զգացել եք, որ Երկնային Հայրը հետևում և պաշտպանում է ձեզ, օրինակ, երբ դուք պահպանվել եք վթարի ժամանակ, խնդրի առաջ եք կանգնել կամ մխիթարության կարիք եք ունեցել: Կամ, Երեխաների Խմբի նախագահի համաձայնությամբ ձեր ծխի կամ ճյուղի որևէ անդամի հրավիրեք գալ դասարան և կիսվել նման փորձառությամբ:
4. Պահանջվող նյութեր.
   ա. Աստվածաշունչ:
   բ. Փոքրիկ նվեր յուրաքանչյուր երեխայի համար, օրինակ՝ ծաղիկ, գեղեցիկ քար կամ գնահատանքի երկտող:
   գ. Մատիտներ կամ կավիճներ:
   դ. Թելի երկար կտոր յուրաքանչյուր երեխայի համար:
   ե. Նկար 2-7, Իմաստուն մարդը (Gospel Art Picture Kit 203; 62120); Նկար 2-8, Թռիչք դեպի Եգիպտոս (Gospel Art Picture Kit 204; 62119); Նկար 2-9, Դեյվիդ Օ Մակքեյը տղա հասակում:
6. Անհրաժեշտ նախապատրաստություններ կատարեք լրացուցիչ այն վարժությունների համար, որոնք պատրաստվում եք անցկացնել:

**Դասի առաջարկվող ընթացք**

Երեխաներից մեկին խնդրեք ասել բացիչ աղոթքը:

Եթե երեխաներին խնդրել եք շաբաթվա ընթացքում ինչ-որ բան կատարել, ստուգեք:

**Երկնային Հայրը մեզ համար բազմաթիվ բաներ է անում**

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Երեխաներին խնդրեք փակել աչքերը: Յուրաքանչյուր երեխայի ծնկներին մի փոքրիկ նվեր դրեք և ասեք բացել աչքերը: Թույլ տվեք նրանց մի փոքր խոսել հաճելի անակնկալի մասին:

- Ձեր կարծիքով, ո՞վ դրեց այս նվերը ձեր ծնկներին:
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ ես տվեցի այս նվերը:
- Է՞լ ով է ձեզ համար հաճելի բաներ անում: (Ծնողները, ընտանիքը, ընկերները, Երկնային Հայրը:)

- Ի՞նչ է Երկնային Հայրը արել ձեզ համար: (Պատասխանները կարող են ներառել. Ծրագրել է, որ մենք գանք երկիր, մեզ ընտանիքներ է տվել, Հիսուս Քրիստոսին ուղարկել է երկիր մեր Փրկիչը լինելու համար:)

Երգ

Երեխաների հետ միասին երգեք կամ արտասանեք «Ես շնորհակալ եմ Քեզ, Սիրելի Հայր» երգը:

Բացատրեք, որ մեզ համար Երկնային Հոր կողմից արած բաներից է մեզ պաշտպանելն ու մխիթարելը, երբ մենք խնդիրներ ենք ունենում: Եթե մենք հավատք ունենանք Երկնային Հոր հանդեպ, նա մեզ քաջություն և օգնություն կպարգևի, որպեսզի լավ որոշումներ կատարենք մեր խնդիրները լուծելիս:

## Երկնային Հայրը պաշտպանում էր մանուկ Հիսուսին

Պատմվածք սուրբ գրություններից

Ցույց տվեք նկար 2-7, Իմաստունները: Պատմեք Իմաստունների մասին պատմությունը, որոնք փնտրում էին մանուկ Քրիստոսին, ինչպես գրված է Մաթևոս Բ.1–12-ում:

Բացատրեք, որ Հերովդես թագավորը Իմաստուններին ասաց, որ ուզում է երկրպագել կամ արտահայտել իր սերը մանուկ Քրիստոսին (կարող եք բացատրել, որ *մանուկ Քրիստոսը* փոքրիկ Հիսուսն է): Սակայն Հերովդես թագավորը իրականում ուզում էր վնաս հասցնել Հիսուսին: Բարձրաձայն կարդացեք Մաթևոս Բ.12 և բացատրեք, որ Երկնային Հայրը պահպանեց Հիսուսին, ասելով Իմաստուններին, որ չգնան հետ Հերովդես թագավորի մոտ:

Պատմվածք սուրբ գրություններից

Ցույց տվեք նկար 2-8, Թռիչք դեպի Եգիպտոս: Պատմեք Մաթևոս Բ.13–15-ում տրված պատմվածքը: Բարձրաձայն կարդացեք 13-րդ հատվածը և բացատրեք, որ ոչնչացնելը նշանակում է սպանել:

- Ինչո՞ւ հրեշտակը հայտնվեց Հովսեփին: (Տե՛ս Մաթևոս Բ.13:)
- Ինչո՞ւ հրեշտակը Հովսեփին ասաց գնալ Եգիպտոս: (Որպեսզի Հերովդես թագավորը չկարողանա գտնել Հիսուսին:)
- Ինչո՞ւ էր Հերովդես թագավորը ուզում սպանել մանուկ Հիսուսին: (Նա վախենում էր, որ Հիսուսը կմեծանա և կդառնա թագավոր:)

Բացատրեք, որ Երկնային Հայրը հետևում էր Հիսուսի կյանքին և պաշտպանեց նրան, զգուշացնելով Հովսեփին, որ նա տանի Հիսուսին ու Մարիամին Եգիպտոս: Երկնային Հայրը միշտ հետևում էր Հիսուսին:

Բարձրաձայն կարդացեք Մաթևոս Բ.19–20:

- Ինչո՞ւ հրեշտակը նորից հայտնվեց Հովսեփին: (Տե՛ս Մաթևոս Բ.20:)
- Ինչո՞ւ Հովսեփը, Մարիամը և մանուկ Հիսուսը նորից կարողացան վերադառնալ Իսրայել: (Հերովդես թագավորը մահացավ: Տե՛ս Մաթևոս Բ.19–20:)

## Երկնային Հայրը հետևում է մեր կյանքին

Քննարկում

Երեխաներին հիշեցրեք, որ մեզանից յուրաքանչյուրը Երկնային Հոր զավակն է: Նա հետևում է մեր կյանքին, ինչպես հետևում էր Հիսուսին: Եթե մենք հնազանդվում ենք նրա պատվիրաններին և հայցում նրա օգնությունը, Երկնային Հայրն օգնում է մեզ: (Կարող եք շեշտել, որ Երկնային Հայրը միշտ օգնում է մեզ, սակայն երբեմն նա մեզ չի օգնում այնպես, ինչպես մենք ակնկալում ենք:)

- Ինչպե՞ս կարող եք խնդրել Երկնային Հոր օգնությունը: (Աղոթել:)
- Ինչպե՞ս կարող է Երկնային Հայրն օգնել ձեզ, երբ դուք հիվանդ եք, միայնակ եք, վախեցած եք:

Պատմվածք

Ցույց տվեք նկար 2-9, Դեյվիդ Օ. Մակ-Քեյը տղա հասակում: Ցույց տվեք Դեյվիդ Օ. Մակ-Քեյին (նա նստած է իր հոր գիրկը) և երեխաներին ասացեք, որ տղան, երբ մեծացավ, դարձավ Եկեղեցու ինն երորդ Նախագահը: Պատմեք հետևյալ պատմությունը, որը տեղի է ունեցել, երբ նա դեռ փոքր տղա էր:

«Մի գիշեր, երբ հայրը տանը չէր, Դեյվիդը . . . տան մոտ աղմուկ լսեց և զգաց, որ դրանք գողեր են: Նա գիտեր, որ մայրը կվախենա, եթե լսի աղմուկը, և հույս ուներ, որ մայրը չի լսի: Ամբողջովին արթնանալով . . . նա որոշեց անել այն, ինչ իրեն սովորեցրել էին ծնողները՝ աղոթել: Նա միշտ ասում էր իր աղոթքները մահճակալի կողքին ծնկի գալով: Նա զգաց, որ այժմ նույնպես պետք է դուրս գա անկողնուց, ծնկի իջնի և աղոթի: Անկողնուց դուրս գալը մի ամբողջ փորձություն էր, նա հավաքեց իր բոլոր ուժերը և կամքը, քանի որ շատ վախեցած էր: Սակայն նա կարողացավ դա անել:

Ծնկի իջնելով մահճակալի կողքին նա ոգևորությամբ աղոթեց իրական հավատքով: Այնուհետև, լսեց մի ձայն, որն այնքան պարզ էր, կարծես մի մարդ խոսում էր մեկ ուրիշ մարդու հետ. «Մի վախեցիր: Ոչինչ չի պատահի քեզ հետ»: Դեյվիդը նորից մտավ անկողին և քնեց» (Marie F. Felt, “David: A Boy of Promise,” *Instructor,* Sept. 1969, p. 330):

Պատմվածք

Պատմեք հետևյալ պատմությունը Երեց Հյու Բ. Բրաունի մասին, որը դարձավ Եկեղեցու Առաքյալ.

«Երբ փոքր ժամանակ գիշերը վատ երազ էի տեսնում, արթնանում էի ու կանչում. «Մայրիկ, այդտե՞ղ ես»: Քանի որ մայրիկիս սենյակը իմ սենյակի կողքին էր, նա լսում էր և արագ պատասխանում. «Այո, որդիս, ես այստեղ եմ»:

Տարիներ անց, երբ ես պետք է մեկնեի միսիայի Անգլիա, մայրս հիշեցրեց, որ իմ կողքին չի լինի, երբ կանչեմ իրեն, սակայն մեր Երկնային Հայրը միշտ կողքիս կլինի:

Բազմաթիվ անգամ միսիայի ժամանակ և կյանքի ընթացքում ես կանչել եմ. «Հայր, դու այդտե՞ղ ես» . . . Միշտ ես ստացել եմ պատասխանը» (in Joleen Meredith, “Friend to Friend,” *Friend,* Aug. 1975, p. 7):

Բացատրեք, որ Երկնային Հայրը չի կարող մեզ հետ բարձրաձայն խոսել, սակայն նա միշտ հետևում է մեզ: Երբեմն նա օգնում է մեզ խաղաղության զգացում պարգևելով կամ մտքեր տալով:

Ուսուցչի կամ հյուրի ելույթ

Կիսվեք անձնական փորձառությամբ, երբ զգացել եք, թե ինչպես է Երկնային Հայրը հետևում և պաշտպանում ձեզ, կամ խնդրեք ծխի կամ ճյուղի հրավիրված անդամին կիսվել նման փորձառությամբ:

Արվեստի վարժություն

Յուրաքանչյուր երեխայի տվեք մատիտներ և կլոր կտրված թուղթ: Երեխաներին խնդրեք շրջանակի վրա նկարել իրենց դեմքերը: Շրջանակի վերևի եզրից թել անցկացրեք և կապեք այն, որպեսզի երեխան կարողանա շրջանակը թելով կախել իր վզից: Բարձրաձայն կարդացեք կամ խնդրեք երեխաներին կարդալ իրենց շրջանակների վրա գրված խոսքերը:

**Ամփոփում**

Վկայություն

Բերեք ձեր վկայությունը այն մասին, թե ինչպես է Երկնային Հայրը հետևում մեր կյանքին և պաշտպանում մեզանից յուրաքանչյուրին, ինչպես հետևում ու պաշտպանում էր Հիսուս Քրիստոսին:

Մատնանշեք երեխաներից մեկին և ասացեք. «Երկնային Հայրը միշտ հետևում է (երեխայի անունը) կյանքին»: Նույնը կրկնեք յուրաքանչյուր երեխայի համար:

Երեխաներին խրախուսեք ապավինել Երկնային Հորը և այս երեկո աղոթքներում խնդրել Նրա պաշտպանությունը:

Երեխաներից մեկին խնդրեք ասել փակիչ աղոթքը: Երեխային խնդրեք արտահայտել իր երախտագիտությունը Երկնային Հորը Նրա սիրո և օգնության համար:

---

**Լրացուցիչ վարժություններ**

Հետևյալ վարժություններից ընտրեք նրանք, որոնք լավագույնս կհամապատասխանեն ձեր դասարանի երեխաներին: Դուք կարող եք դրանք օգտագործել դասի ընթացքում, որպես դասի վերանայում կամ ամփոփում: Լրացուցիչ ուղղության համար տե՛ս «Դասաժամ» «Օգնություն ուսուցչին» բաժինները:

1. Պատրաստեք թղթեր, որոնց վրա նկարագրված են այնպիսի իրավիճակներ, որոնց համար երեխաները կարող են խնդրել Երկնային Հոր օգնությունը: Թղթերը դրեք արկղի մեջ և երեխաներին խնդրեք հերթով վերցնել մի թուղթ և ասել, թե ինչ կանեին տվյալ իրավիճակում: Կարող եք օգտագործել հետևյալ իրավիճակները կամ մտածել այլ իրավիճակներ.

   ա. Ձեր ընտանիքը պատրաստվում է ճանապարհորդության գնալ: Ձեր ծնողները մտահոգված են ճանապարհորդության ընթացքում ընտանիքի ապահովության համար:
   բ. Ձեր փոքրիկ քույրը հիվանդ է և գտնվում է հիվանդանոցում: Դուք անհանգիստ եք նրա համար:
   գ. Ընտանիքի հետ սար բարձրանալիս դուք կորել եք:
   դ. Ձեր ոտքը կոտրվել է և դուք այլևս չեք կարող դիմանալ ցավին և անհարմար կաղապարին: Դուք հուսահատած եք:
   ե. Նոր ծխում կամ ճյուղում Երեխաների Խումբ գնալու ձեր առաջին օրն է և դուք վախենում եք:

2. Աթոռները առանց որևէ դասավորվածության տեղադրեք սենյակի տարբեր մասերում և երեխաներին ասացեք, որ աթոռները ներկայացնում են մեր կյանքի խնդիրները: Երեխաներից մեկի աչքերը կապեք և բանավոր ուղղություններ տալով ուղեկցեք սենյակով մեկ: Բացատրեք, որ թեպետ մենք չենք կարողանում տեսնել Երկնային Հորը, Նրա պատվիրաններին հետևելը մեզ կօգնի կյանքի ընթացքում: Եթե երեխան դիպչում է աթոռին, բացատրեք, որ մենք բոլորս բախվում ենք խնդիրների և կարող ենք խնդրել Երկնային Հորը մխիթարել և օգնել մեզ մեր խնդիրները լուծելիս: Յուրաքանչյուր երեխայի թույլ տվեք կապած աչքերով շրջել սենյակով:

3. Արտասանեք «Աստված հետևում է բոլորին» երգի բառերը

   Աստված հետևում է բոլորին

   Աստված բոլոր աստղերը
   Հաշվել է երկնքում,
   Մեծ են աշխարհները,
   Աստված հետևում է բոլորին:

   Նա հիշում է գիշերն ու ցերեկը,
   Երեխաներին բոլոր,
   Նա կասի, թե ինչ անել,
   Աստված հետևում է բոլորին:

   (Original title: “Loving Care.” From *Tuning Up* of THE WORLD OF MUSIC series, © 1936 by Silver Burdett & Ginn. Used by permission.)

# Հիսուսն ինձ նման մանուկ է եղել

Դաս
9

**Նպատակ**

Ամրացնել Հիսուս Քրիստոսին նմանվելու երեխաների ցանկությունը, խորացնելով Հիսուսի մանկության մասին նրանց գիտելիքը:

**Նախապատրաստություն**

1. Աղոթքով ուսումնասիրեք Մաթևոս Բ.19–23 և Ղուկաս Բ.40–52: Տե՛ս նաև *Ավետարանի Սկզբունքները* (31110), գլուխ 11:
2. Օգտագործեք թուղթ և սոսինձ կոն պատրաստելու համար, ինչպես ցույց է տրված նկար 2-12-ում, Բիբլիայի Դպրոց, և նկարագրված է դասի մեջ: Կոնի վրա գրեք Ղուկաս Բ.52-ի խոսքերը:
3. Պատրաստվեք արտասանել «Հիսուսը փոքր երեխա էր»երգի բառերը:
4. Պահանջվող նյութեր.
   ա. Աստվածաշունչ:
   բ. Մանկական պարագաներ, օրինակ՝ շիշ, ծածկոց կամ խաղալիք:
   գ. ԸՃ նկարը (տե՛ս դաս 1):
   դ. Նկար 2-10, Բիբլիական ընտանիքի կյանքը; նկար 2-11, Հիսուս Քրիստոսի մանկությունը (Gospel Art Picture Kit 206; 62124); նկար 2-12, Բիբլիական Դպրոց; նկար 2-13, Տղա Հիսուսը Տաճարում (Gospel Art Picture Kit 205; 62500):
5. Անհրաժեշտ պատրաստություններ կատարեք այն լրացուցիչ վարժությունների համար, որոնք ցանկանում եք անցկացնել:

**Դասի առաջարկվող ընթացք**

Երեխաներից մեկին խնդրեք ասել բացիչ աղոթքը:

Եթե երեխաներին խնդրել եք շաբաթվա ընթացքում ինչ-որ բան կատարել, ստուգեք:

### Հիսուսը մանուկ էր եղել

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Բաժանեք մանկական իրերը և երեխաներին խնդրեք նայել և բռնել դրանք: Բացատրեք, թե ինչի համար են օգտագործվում այդ իրերը: Նշեք, որ Հիսուս Քրիստոսը նույնպես մանուկ է եղել:

- Ի՞նչ եք կարծում, Հիսուսն օգտագործել է նման իրեր:

Նշեք, որ մանուկ հասակում Հիսուսն օգտագործել է այնպիսի իրեր, ինչպիսին սովորաբար օգտագործում են մանուկները: Որոշ իրեր բավականին տարբերվում էին: Բացատրեք, որ այս դասում, երեխաները կսովորեն Հիսուսի կյանքի մասին, երբ նա դեռ մանուկ էր:

### Հիսուսը տուն ուներ

Նկարի քննարկում

Ցուցադրեք նկար 2-10, Բիբլիական ընտանիքի կյանքը: Երեխաներին ասացեք, որ սա նման է այն տներին, որոնց մեջ ապրում էին Նազարեթի ժողովուրդը: Նազարեթն այն քաղաքն է, որտեղ մեծացել է Հիսուսը (տե՛ս Մաթևոս Բ.23),

և Հիսուսը մի գուցե ապրել է նմանատիպ տան մեջ: Երեխաներին թույլ տվեք ուսումնասիրել նկարը, խոսել դրա մասին և հարցեր տալ: Եթե երեխաները հարցեր չունեն, կարող եք տալ ստորև տրված հարցերը.

- Ձեր կարծիքով, որտե՞ղ էր քնում ընտանիքը: (Մատնանշեք այն կարպետը, որ կինը այլ կողմ է դնում, ինչպես նաև նրա հետևում գտնվող պահարանը, որի մեջ են դրված այլ փաթաթած կարպետներ: Բացատրեք, որ տների կտուրները տափակ էին, և տան դրսից դեպի կտուր աստիճան էր տանում: Երեխաները, երևիթե, երբեմն կտուրի վրա էին քնում:)
- Որտե՞ղ էր քնած մանուկն այդ տանը: (Մատնանշեք օրորոցը: Բացատրեք, որ Հովսեփը հյուսն էր և կարող էր այդպիսի օրորոց պատրաստել մանուկ Հիսուսի համար:)
- Ձեր կարծիքով, ի՞նչ նպատակով էին օգտագործվում մեծ կարասները: (Մի քանիսի մեջ ջուր էին լցնում: Ընտանիքն օգտագործում էր գյուղի ջրհորից բերած ջուրը, որովհետև տներում հոսող ջուր չկար: Ջրհորը գետնի մեջ մաքուր ջրով լի խորը փոս է:)
- Ի՞նչ է անում հատակին նստած կինը: (Աղում է ցորենի հատիկները հաց պատրաստելու համար:)
- Քանի որ էլեկտրականություն չկար, ինչպե՞ս էին նրանք լուսավորում իրենց տները: (Նրանք յուղով վառվող լամպեր էին օգտագործում: Մատնանշեք ցորեն աղացող կնոջ հետևում աթոռի վրա դրված լամպը: Մի գուցե որոշ կարասներում լամպերի համար յուղ էր պահվում:)

Նկարի քննարկում

Ցուցադրեք նկար 2-11, Հիսուս Քրիստոսի մանկությունը:

- Ովքե՞ր են այս նկարի վրայի մարդիկ: (Հիսուսն ու Հովսեփը:)
- Ի՞նչ են նրանք անում:

Բացատրեք, որ Հիսուսը, հավանաբար, օգնում էր Հովսեփին իր գործերում, իսկ Հովսեփը Հիսուսին սովորեցնում էր հյուսնի գործը (տե՛ս Մարկոս Զ.3):

- Ի՞նչ էր, բացի այդ, Հիսուսը սովորում իր տանը:

Շեշտեք, որ իր տանը Հիսուսը լսում էր պատմություններ մարգարեների մասին, որոնց մասին մենք կարդում ենք Աստվածաշնչում: Նրան նաև սովորեցնում էին անել ճիշտը, ինչպես մեզ սովորեցնում են մեր ծնողները: Մարիամն ու Հովսեփը հավատում էին Երկնային Հորը, ինչպես մենք ենք հավատում:

### Տղա հասակում Հիսուսը տարբեր գործեր էր անում

Վարժություն

Երեխաներին խնդրեք բարձրացնել իրենց ձեռքերը: Նշեք մի քանի կերակրատեսակ, որ նրանք հավանաբար ճաշակել են: Երեխաներին խնդրեք պահել ձեռքերը ափերով դեպի վերև, եթե կարծում են, թե Հիսուսը նույնպես ուտում էր այդ կերակուրը, և ափերը պահել դեպի ներքև, եթե կարծում են, որ Հիսուսը այդ կերակուրը չէր ուտում: Աշխատեք նշել ցանկացած կերակրատեսակ, որը երեխաները ուտում են և որը հավանաբար ուտում էր Հիսուսը, օրինակ հաց, ձուկ, գառ, մեղր, խաղող, թուզ և կաթ:

Քննարկում

- Ձեր կարծիքով, ինչո՞վ է ձեր մանկությունը տարբերվում Հիսուսի մանկությունից:
- Ձեր կարծիքով, ինչո՞վ է ձեր մանկությունը նման Հիսուսի մանկությանը:

Երեխաներին խնդրեք քննարկել այն բաները, որոնք նրանք անում են, և որոնք տղա հասակում, հավանաբար, անում էր Հիսուս Քրիստոսը: Օրինակ, նրանք կարող էին գնումներ կատարել, օգնել իրենց ծնողներին, գնալ դպրոց, հոգ

տանել փոքր երեխայի համար, երգեր երգել, խաղեր խաղալ, վազքով մրցել կամ ձի նստել: Նշեք, որ Հիսուսը, երևիթե, արել է նման բաներ (օրինակ, Հիսուսը մի գուցե երբեք ձի չի նստել, սակայն ավանակի վրա է նստել):

**Հիսուսն ուսումնասիրում էր սուրբ գրությունները**

Սկարի քննարկում

Ցուցադրեք նկար 2-12, Բիբլիական Դպրոց: Բացատրեք, որ Նազարեթի երիտասարդ տղաները գնում էին սինագոգում կամ եկեղեցում գտնվող դպրոցը: Դպրոցի ուսուցիչը գյուղի սինագոգի ղեկավարն էր: Նրան կոչում էին ռավի:

Երեխաներին խնդրեք միասին արտասանել *ռավի* բառը:

Բացատրեք, որ տանը ուսուցանվելուց բացի, Հիսուսը երևիթե հաճախում էր այդպիսի դպրոց:

- Ինչո՞վ է այդ դպրոցը տարբերվում ձեր դպրոցից:(Հնարավոր պատասխաններ. տղաների հագուստով, նստելու տեղերով և գրասեղաններով:)

Բացատրեք, որ այդ ժամանակ փոքր աղջիկները դպրոց չէին հաճախում: Մայրերը նրանց սովորեցնում էին իրենց տներում:

Թղթագալարի ցուցադրում

Նշեք, որ դպրոցներում գրքեր չկային: Հիսուսի ժամանակ, տղաները սովորում էին կարդալ թղթագալարներ: Երեխաներին խնդրեք կրկնել թղթագալար. բառը:.

Երեխաներին ցուցադրեք ձեր պատրաստած թղթագալարը: Բացատրեք, որ թղթագալարը թղթենման նյութից մի երկար շերտ է, որի երկու ծայրերն ամրացված են փայտիկներին և վրան գրվածքներ կան: Մի ծայրը բացում են, մյուսը փաթաթում, որպեսզի մեկ էջի չափով հատված երևա: Ցուցադրեք դա ձեր պատրաստած թղթագալարի օրինակի վրա: Ապա այն մի կողմ դրեք ավելի ուշ դասի ժամանակ օգտագործելու համար:

Ուսուցչի ելույթ

Բացատրեք, որ այն թղթագալարները, որոնք տղաներն ուսումնասիրում էին դպրոցում պարունակում էին մարգարեների ուսմունքները, որոնք ապրում էին Հիսուս Քրիստոսի ծննդից առաջ: Ցույց տվեք Աստվածաշնչի Հին Կտակարանի մասը: Երեխաներին ասացեք, որ Աստվածաշնչի այս մասը պարունակում է որոշ գրվածքներ և պատմվածքներ, որոնք եղել են որոշ թղթագալարների վրա:

Երեխաներից մեկին խնդրեք ցույց տալ թղթագալարը, որը նկարի վրա պատկերված ռավին պահում է իր ձեռքում, և նրա կողքին արկղի մեջ դրված թղթագալարները: Սա կարելի է համեմատել մեզ հետ, թե ինչպես ենք մենք կարդում Աստվածաշունչ և գրում:

Պատմություն սուրբ գրություններից

Ցուցադրեք նկար 2-13, Տղա Հիսուսը Տաճարում, և պատմեք Ղուկաս Բ.41–50-ի պատմությունը:

Երեխաներին օգնեք հասկանալ, թե որքան անհանգստացած ու վախեցած էին Մարիամն ու Հովսեփը ճանապարհորդության առաջին օրվա վերջում, երբ չէին կարողանում գտնել Հիսուսին: Նրանք շտապ վերադարձան Երուսաղեմ և երեք օր փնտրեցին նրան, մինչև որ գտան:

- Որտե՞ղ Մարիամն ու Հովսեփը գտան Հիսուսին:
- Ի՞նչ էր անում Հիսուսը տաճարում: (Տե՛ս Ղուկաս Բ.46:)

Բացատրեք, որ Հիսուսը խոսում էր տղամարդկանց հետ, որոնք խորապես ուսումնասիրել էին սուրբ գրությունները: Այդ տղամարդիկ զարմացած էին, որ Հիսուսը այդքան շատ գիտեր: Բարձրաձայն կարդացեք Ղուկաս Բ.47:

### Մենք կարող ենք էլ ավելի նմանվել Հիսուս Քրիստոսին

Քննարկում

Բացատրեք, որ Հիսուսը Մարիամի և Հովսեփի հետ վերադարձավ Նազարեթ և այնտեղ մեծացավ: Վերցրեք ձեր պատրաստած թղթագալարը և դրանից կարդացեք Ղուկաս Բ.52: Բացատրեք, որ զարգանալ նշանակում է մեծանալ, աճել:

- Ի՞նչ նկատի ունի այս սուրբ գրությունն, երբ ասում է, որ Հիսուսը զարգանում էր իմաստությունով:

Երեխաներին բացատրեք, որ նրանցից յուրաքանչյուրը նույնպես զարգանում է իմաստությունով, որովհետև սովորում է ընտրել ճիշտը: Մի քանի օրինակներ բերեք, ապացուցելով, որ նրանք այժմ ավելի իմաստուն են, քան մի քանի ամիս առաջ:

- Ի՞նչ է նշանակում հատվածի վերջին մասը, երբ ասում է, որ Հիսուսը զարգանում էր «շնորհքով՝ Աստուծոյ մոտ»: (Երկնային Հայրը գոհ էր, որովհետև Հիսուսը միշտ անում էր այն, ինչ Երկնային Հայրն էր ակնկալում նրանից:)
- Ինչպե՞ս դուք կարող եք մեծանալ շնորհքով՝ Աստուծոյ մոտ:

Բացատրեք, որ Երկնային Հայրը գոհ է, երբ մենք դառնում ենք ավելի նման Հիսուսին: Հիսուսը միշտ ճիշտ ընտրություններ էր կատարում:

- Ձեր կարծիքով, ինչպե՞ս Հիսուսը կվերաբերվեր այն երեխային, ում մյուսները ծաղրում են:

Երեխաներին խնդրեք իրենք իրենց հարց տան. «Ինչպե՞ս ես կվերաբարվեի այն երեխային, ում մյուսները ծաղրում են»:

- Երբ փոքր Հիսուսը խաղ էր անում, և նրա մայրը կամ Հովսեփը խնդրում էին նրան մի գործ անել, ի՞նչ էր, ձեր կարծիքով, նա անում:

Երեխաներին խնդրեք իրենք իրենց հարց տան. «Ի՞նչ ես կանեի, եթե խաղ անելիս, մայրս կամ հայրս ինձ խնդրեին մի գործ անել»:

Բացատրեք, որ Հիսուսը զարգանում էր շնորհքով՝ այլ մարդկանց մոտ ևս (տե՛ս Ղուկաս Բ.52): Նրանց դուր էր գալիս լինել նրա կողքին:

- Դուք կուզենայի՞ք, որ պատանի Հիսուսը ձեր ընկերը լիներ:

ԸՃ նկար

Ցուցադրեք ԸՃ նկարը և երեխաներին խնդրեք կրկնել դրա վրա գրված խոսքերը. «Ես կընտրեմ ճիշտը»: Նրանց հիշեցրեք, որ նրանք ավելի կնմանվեն Հիսուս Քրիստոսին, եթե ընտրեն ճիշտը:

### Ամփոփում

Երգ

Երեխաների հետ միասին արտասանեք «Հիսուսը փոքր երեխա էր» երգի բառերը: Բացատրեք այն խոսքերը, որոնք երեխաներին անծանոթ կարող են լինել: Օրինակ, ընկճվել նշանակում է վատ զգալ, երբ ինչ-որ բան չի ստացվում:

Հիսուսը փոքր երեխա էր,
Ինձ նման փոքր,
Նա մաքուր և հեզ էր,
Ինչպես փոքր երեխան:
Ուրեմն, երեխաներ,
Եկեք բոլորս, ես և դու,
Լինենք Նրա նման,

Միշտ այդպես մնանք:

Նա խաղ էր անում, ինչպես փոքր երեխան,
Զվարթ խաղերը մանկական,
Բայց չէր ընկճվում, երբ չէր ստացվում,
Միշտ ճիշտն էր նա ասում:
Ուրեմն, երեխաներ,
Եկեք բոլորս, ես և դու,
Լինենք Նրա նման,
Միշտ այդպես մնանք:

Վկայություն

Վկայեք, որ ճիշտն ընտրելն ու Հիսուս Քրիստոսին նմանվելը մեզ երջանիկ կդարձնի: Երեխաներին ասացեք, թե որքան երախտապարտ եք, որ ձեր կյանքում ունեք Հիսուսի օրինակը, որը ցույց է տալիս, թե ինչպես մենք պետք է ապրենք:

Երեխաներին ասացեք, որ Հիսուսի մանկությունը, հավանաբար, շատ բաներով էր նման իրենց մանկությանը: Նրանց՝ խրախուսեք միշտ ճիշտն ընտրել, ինչպես անում էր Հիսուսը:

Երեխաներից մեկին հրավիրեք ասել փակիչ աղոթքը:

---

**Լրացուցիչ վարժություններ**

Հետևյալ վարժություններից ընտրեք նրանք, որոնք լավագույնս կհամապատասխանեն ձեր դասարանի երեխաներին: Դուք կարող եք դրանք օգտագործել դասի ընթացքում, որպես դասի վերանայում կամ ամփոփում: Լրացուցիչ ուղղության համար տե՛ս «Դասաժամ» «Օգնություն ուսուցչին» բաժինները:

1. Պարանով կամ թելով չափեք յուրաքանչյուր երեխայի հասակը: Կտրեք և յուրաքանչյուր երեխային տվեք իր հասակին համապատասխան թելի կտորը: Երեխաներին հիշեցրեք, որ, երբ նրանց մարմիններն աճում են, նրանք պետք է նույնպես աճեն շնորհքով՝ Աստծո մոտ: Նրանք դա կարող են անել, եթե Հիսուս Քրիստոսի նման լավ ընտրություններ կատարեն:
2. Երեխաներին օգնեք ձեզ հետ միասին մի քանի անգամ կրկնել Ղուկաս Բ.52: Քննարկեք որոշակի ընտրություններ, որոնք նրանք կարող են կատարել և որոնք կօգնեն նրանց զարգանալ շնորհքով՝ Երկնային Հոր մոտ:
3. Բերեք մի կերակրատեսակ, որը Հիսուս Քրիստոսը, հավանաբար, ճաշակում էր, օրինակ՝ թուզ, խաղող, պանիր, հաց, ընկույզ կամ ձիթապտուղ: Երեխաներին թույլ տվեք համտեսել դրանք: Երեխաների ծնողներից նախօրոք տեղեկացեք, թե արդյոք երեխան ալերգիա չունի այս կամ այն սննդից: (Մի բերեք սնունդ, եթե այս դասը սովորեցնում եք Ծոմապահության կիրակի օրը:)
4. Քննարկեք այն, ինչ անում են մանուկները, և դրանք համեմատեք այն ամենի հետ, ինչ երեխաներն անում են այժմ: Հարցրեք.
   - Կարո՞ղ է մանուկը քայլել: Կարո՞ղ եք դուք քայլել:
   - Կարո՞ղ է մանուկը խոսել: Կարո՞ղ եք դուք խոսել:

   Բացատրեք, որ մեծանալու հետ մեկտեղ մեծանում է նաև Փրկչին նմանվելու երեխաների ունակությունը, եթե նրանք ընտրեն ճիշտը:

5. Երեխաներից յուրաքանչյուրին տվեք աղի խմորի կտոր (տե՛ս ստորև տրված բաղադրատոմսը) և խնդրեք պատրաստել մի փոքր խորը աման, ծաղկաման կամ այլ իր, որը կարող էր օգտագործվել այն ժամանակներում, երբ Հիսուս Քրիստոսը դեռ տղա էր:

   Աղի խմոր

   Պահանջվող նյութեր.

   2 բաժակ ալյուր
   1 բաժակ աղ
   1 թեյի գդալ ձեթ
   ջուր
   սննդային ներկ (ըստ հայեցողության)

   Ցուցումներ. Խառնեք աղն ու ալյուրը: Ավելացրեք ձեթը և այնքան ջուր, մինչև որ խառնուրդը ձեռք բերի կավի խտություն: Աստիճանաբար ավելացրեք ջուրը, մինչև որ խառնուրդով հնարավոր լինի խաղ անել, սակայն այն կպչուն չլինի: Մի փոքր տրորեք: Եթե ցանկանում եք, կարող եք ներկել խմորը, աղին ու ալյուրին ջուր ավելացնելուց առաջ ջրի մեջ լուծելով սննդային ներկ: Խմորը պահեք անօդ արկղի մեջ:

# Ես կարող եմ խոսել Երկնային Հոր հետ աղոթքով

Դաս
10

**Նպատակ**

Օգնել յուրաքանչյուր երեխայի հասկանալ, որ նա կարող է ավելի մոտենալ Երկնային Հորը ակնածալիծ աղոթքի շնորհիվ:

**Նախապատրաստություն**

1. Աղոթքով ուսումնասիրեք Մաթեոս Ջ.9 և 3 Նեփի 18.19–20: Տե՛ս նաև *Ավետարանի Սկզբունքներ* (31110), գլուխ 8:
2. Գրեք ստորև տրված հարցերը թղթերի վրա: Ձեր դասարանի յուրաքանչյուր երեխայի համար առնվազն մեկ հարց ունեցեք (եթե դասարանը փոքր է, կարող եք մեկ երեխայի համար երկու հարց պատրաստել):
   ա. Եթե ձեր ընտանիքում որևէ մեկը պետք է որոշ ժամանակով մեկնի, ի՞նչ դուք կխնդրեք Երկնային Հորից ձեր աղոթքներում:
   բ. Եթե մեր դասը մեզ սովորեցնում է ընտրել ճիշտը, ի՞նչ մենք կարող ենք խնդրել մեր Երկնային Հորից մեր դասարանի աղոթքներում:
   գ. Եթե մեր դասը մեզ սովորեցնում է լինել բարի, ի՞նչ մենք կարող ենք խնդրել մեր Երկնային Հորից մեր դասարանի աղոթքներում:
   դ. Եթե ձեր ընկերը հիվանդ է և չի կարող գալ ձեր հետ խաղալու, ի՞նչ կարող եք դուք խնդրել ձեր աղոթքներում:
   ե. Ի՞նչ կարող եք դուք խնդրել ձեր աղոթքներում ամեն առավոտ ու երեկո:
   զ. Ի՞նչ մենք կարող ենք խնդրել Երեխաների Խմբի անդամների համար, երբ աղոթում ենք:
3. Պատրաստվեք արտասանել «Երգ-աղոթքը»:
4. Պահանջվող նյութեր.
   ա. Աստվածաշունչ և Մորմոնի Գիրք:
   բ. Նկար 2-14, Դասարանի աղոթք (62200); նկար 2-15, Բրիգամ Յանգ; նկար 2-16, Հեբեր Ջ. Գրանտը տղա հասակում:
5. Անհրաժեշտ պատրաստություններ կատարեք այն լրացուցիչ վարժությունների համար, որոնք ցանկանում եք անցկացնել:

**Դասի առաջարկվող ընթացք**

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Երեխաներից մեկին բացիչ աղոթքի հրավիրելուց առաջ, ցուցադրեք նկար 2-14, Դասարանի աղոթք, և ակնածանքով արտասանեք «Երգ-Աղոթքը»:

Մենք աղոթքի մեջ մեր գլուխներն ենք խոնարհում,
Մենք մեր ձեռքերն ենք միասին խաչում,
Ապա աչքերն ենք մեր փակում,
Եվ Երկնային Հոր հետ խոսում:

- Մինչ դասարանում ինչ-որ մեկն աղոթք է ասում, ի՞նչ պետք է անեն մնացածները:

Կրկին արտասանեք «Երգ-աղոթքը»: Երեխաներին խնդրեք պատրաստվել աղոթելուն, անելով այն, ինչ ասվում է երգի մեջ:

Երեխաներից մեկին հրավիրեք ասել բացիչ աղոթքը:

**Աղոթելուց առաջ մենք պատրաստվում ենք**

Քննարկում

- Ի՞նչ է ասում երգն այն մասին, թե ինչպես մենք պետք է պատրաստվենք աղոթքի համար:
- Ինչո՞ւ ենք մենք աղոթելիս խոնարհում գլուխները:

Երեխաներին օգնեք հասկանալ, որ աղոթելիս գլուխները խոնարհելով մենք Երկնային Հորը ցույց ենք տալիս, որ սիրում, հարգում և պատվում ենք Նրան: Երկնային Հայրն ավելի մեծ ու զորեղ է, քան ցանկացած թագավոր, նախագահ կամ երկրի վրա որևէ այլ էակ, և նա շատ բաներ է արել մեզ համար: Մենք պետք է ցույց տանք, որ սիրում ու հարգում ենք Իրեն:

- Ինչո՞ւ ենք մենք աղոթելիս խաչում ձեռքերը:

Երեխաներին օգնեք հասկանալ, որ աղոթքի ժամանակ ձեռքերի շարժումները կարող են խանգարել մարդկանց լսել աղոթքը:

- Ինչո՞ւ ենք մենք աղոթելիս փակում մեր աչքերը:

Երեխաներին կարող եք խնդրել մի պահ փակել իրենց աչքերը, մինչ նրանք մտածում են պատասխանի մասին:

Երեխաներին օգնեք հասկանալ, որ նրանց չի խանգարի այն ամենն, ինչ մեզ շրջապատում է, եթե փակեն աչքերը: Նրանք կարող են մտածել Երկնային Հոր և այն մասին, ինչ ցանկանում են Նրան ասել:

**Աղոթելիս մենք մեզ ավելի մոտ կարող ենք զգալ Երկնային Հորը**

Ուսուցչի ելույթ

Բացատրեք, որ երբ մենք խոնարհում ենք մեր գլուխները, խաչում մեր ձեռքերը և փակում մեր աչքերը, ապա կարողանում ենք կենտրոնանալ մեր աղոթքի վրա և ուշադրություն չդարձնել մեզ շրջապատող այլ բաներին: Մենք կարող ենք խաղաղության զգացում ձեռք բերել և ավելի մոտ զգալ Երկնային Հորը: Մենք պատրաստ ենք խոսել նրա հետ:

Պատմվածք

Ցույց տվեք նկար 2-15, Բրիգամ Յանգ, և 2-16, Հեբեր Ջ. Գրանտը տղա հասակում, և ձեր խոսքերով պատմեք հետևյալ պատմությունն այն մասին, թե ինչպես փոքր տղան աղոթքի ժամանակ զգաց, որ Երկնային Հայրը մոտ է.

Շատ տարիներ առաջ Բրիգամ Յանգն Եկեղեցու Նախագահն ու մարգարեն էր: Հեբեր Ջ. Գրանտ անունով մոտ վեց տարեկան մի տղա խաղ էր անում Նախագահ Յանգի փոքր տղաներից մեկի հետ: Հեբերը հաճախ խաղ էր անում Նախագահ Յանգի տանը, և երբ գալիս էր ընտանեկան աղոթքի ժամը, ընտանիքը հավաքվում էր աղոթքի: Հեբերն ընտանիքի հետ ծնկի էր իջնում, խաչում էր ձեռքերը, խոնարհում իր գլուխը, փակում աչքերը և լսում, թե ինչպես էր աղոթում Նախագահ Յանգը: Նախագահ Յանգն այնպես էր խոսում Երկնային Հոր հետ, որ Հեբերին թվում էր, թե Երկնային Հայրը գտնվում էր սենյակում: Երբեմն, Հեբերն անգամ բացում էր աչքերը, որ տեսներ Երկնային Հորը: Իհարկե, նա տեսնում էր միայն Նախագահ Յանգին ու նրա ընտանիքին: Սակայն նա համոզված էր, որ Երկնային Հայրը Նախագահ Յանգի հետ

էր, լսում էր նրան և տալիս այն օգնությունն ու առաջնորդությունը, որը նա խնդրում էր:

Երբ Հեբերը մեծացավ, նա դարձավ Առաքյալ, իսկ հետագայում Եկեղեցու Նախագահը (տե՛ս Հեբեր Ջ. Գրանտ, *Ավետարանի Սկզբունքներ*, comp. G. Homer Durham [Salt Lake City: Improvement Era, 1941], pp. 223–24:)

Դուք կարող եք կիսվել ձեր անձնական փորձառությամբ այն պահերի մասին, երբ մոտ եք զգացել Երկնային Հորը աղոթքի ժամանակ, ինչպես զգացել էր Հեբեր Ջ. Գրանտը:

Երեխաներին հիշեցրեք, որ Երկնային Հայրը միշտ լսում է մեզ, երբ մենք աղոթում ենք: Աղոթքի ժամանակ խոնարհելով գլուխները, խաչելով ձեռքերը, փակելով աչքերը, մենք կկարողանանք զգալ, որ Երկային Հայրը մոտ է մեզ:

### Աղոթելիս մենք ակնածանքով ենք խոսում

Սուրբ գրության քննարկում

Բացատրեք, որ մենք ցույց ենք տալիս Երկնային Հոր հանդեպ մեր սերն ու հարգանքը, երբ ակնածանքով ենք խոսում նրա հետ մեր աղոթքներում:

- Երբ դուք ցանկանում եք խոսել որևէ մեկի հետ, ո՞րն է առաջին խոսքը, որը պետք է գրավի նրա ուշադրությունը: (Նրա անունը:)
- Երբ դուք ցանկանում եք խոսել Երկնային Հոր հետ, ո՞րն է առաջին խոսքը, որը դուք ասում եք:

Բացատրեք, որ առաջին խոսքը, որը մենք ասում ենք մեր աղոթքում, դա Երկնային Հոր անունն է: Երեխաներին ասացեք, որ Հիսուսը մեզ սովորեցրել է սա, երբ դեռ երկրի վրա էր: Բարձրաձայն կարդացեք Մաթեոս Ջ.9, և բացատրեք, որ մենք սովորաբար կրճատում ենք «Հայր մեր, որ երկնքում ես», ասելով «Մեր Երկնային Հայր» կամ «Երկնային Հայր»:

Երեխաներին ասացեք, որ Հիսուսը նույնպես սովորեցրել է, ինչպես ավարտել մեր աղոթքը: Բարձրաձայն կարդացեք 3 Նեփի 18.19:

- Ինչպե՞ս մենք պետք է ավարտենք մեր աղոթքները ըստ Հիսուսի: (Նրա անունով: Մենք ավարտում ենք աղոթքը հետևյալ բառերով. *Հիսուս Քրիստոսի անունով, ամեն:*)
- Երբ մենք դասարանում կամ ընտանիքում աղոթք ենք ասում, և աղոթողն ասում է «ամեն», ի՞նչ մենք պետք է անենք:

Բացատրեք, որ երբ ընդհանուր աղոթքի վերջում մենք ասում ենք «ամեն», նշանակում է, որ մենք համաձայն ենք աղոթողի հետ: Մենք աղոթում էինք աղոթողի հետ միասին:

### Աղոթելիս մենք շնորհակալություն ենք հայտնում Երկնային Հորը մեր օրհնությունների համար

Խաղ

Երեխաներին ասացեք, որ կա աղոթելու երկու կարևոր նպատակ: Որպեսզի երեխաները կարողանան կռահել առաջին կարևոր նպատակը, բաժանեք նրանց երկու խմբի: Հերթով դիմելով յուրաքանչյուր խմբին, երեխաներին խնդրեք հերթով թվարկել այն, ինչ Երկնային Հայրն արել է իրենց համար: Յուրաքանչյուր անգամ նրանք պետք է թվարկեն այնպիսի մի բան, որը չի նշվել մյուսների կողմից: Եթե թիմն արագ չի կարողանում պատասխանել, ապա պատասխանի հնարավորությունը տրվում է մյուս թիմին:Խաղացեք խաղը մի քանի րոպե, մինչև որ երկու թիմերի պատասխանները սպառվեն:

Եթե երեխաներն իրենց պատասխանների մեջ չեն տվել ստորև նշվածները, ապա նշեք դրանք այժմ.

- Երկնային Հայրը տվել է մեզ կյանք:
- Նա տվել է մեզ ընտանիք:
- Նա տվել է մեզ երկիր մոլորակը:
- Նա երկիր է ուղարկել Հիսուս Քրիստոսին մեզ օգնելու համար:
- Նա խոստացել է լավագույն ճանապարհով պատասխանել մեր աղոթքներին:

Քննարկում

Երեխաների հետ քննարկեք հետևյալ հարցերը.

- Երբ ինչ-որ մեկը ձեզ նվեր է տալիս կամ բարի գործ կատարում ձեզ համար, ի՞նչ եք դուք ասում:
- Ո՞վ է մեզ բոլորից շատ նվերներ տվել: (Երկնային Հայրը:)
- Ո՞րն է աղոթելու առաջին նպատակը: (Շնորհակալություն հայտնել Երկնային Հորը այն բազմաթիվ օրհնությունների համար, որոնք նա տալիս է մեզ:)

Շեշտեք, որ ինչպես մենք շնորհակալություն ենք հայտնում մեր ծնողներին, ընտանիքի անդամներին կամ ընկերներին, այդպես էլ պետք է շնորհակալություն հայտնենք Երկնային Հորը այն ամենի համար, ինչ նա անում է մեզ համար: Երկնային Հայրը երջանիկ է, երբ մենք նրան շնորհակալություն ենք հայտնում:

**Մենք աղոթում ենք Երկնային Հոր օգնության համար**

Պատմվածք

Ձեր խոսքերով պատմեք Ստեֆենի մասին հետևյալ պատմությունը, որն երեխաներին կօգնի գտնել աղոթելու երկրորդ նպատակը.

Ստեֆենը միայն վերջերս իր ծնողների հետ տեղափոխվել էր նոր քաղաք: Դպրոցի առաջին օրը նա դասարանում ոչ ոքի չէր ճանաչում: Ստեֆենը շատ վատ էր իրեն զգում: Նա ուզում էր գնալ տուն: Նա դրեց իր գլուխը սեղանին, քանի որ չէր ուզում, որ որևէ մեկը տեսներ իրեն լաց լինելիս:

Շուտով ուսուցիչը նկատեց, որ Ստեֆենը գլուխը դրել է սեղանին: Նա մտածեց, որ տղան հավանաբար հիվանդ է, և մոտեցավ, որ խոսի նրա հետ: Ստեֆենը անհարմար էր զգում, որ լաց էր լինում դպրոցում, և նա փորձեց դադարել: Սակայն նա այնքան վատ էր իրեն զգում, որ չկարողացավ:

Մեղմորեն, որպեսզի ոչ մեկը չլսի, նա աղոթեց. «Խնդրում եմ, Երկնային Հայր, օգնիր ինձ, որ լաց չլինեմ»:

Շուտով Ստեֆենը կարողացավ դադարել լաց լինելը: Նա ուսուցչին ասաց, որ իրեն արդեն լավ է զգում, և նրա օրը ուրախ անցավ:

Քննարկում

- Ի՞նչը Ստեֆենին օգնեց լավ զգալ:
- Ինչպե՞ս են ձեր աղոթքներն օգնել ձեզ:

Վարժություն

Բացատրեք, որ աղոթելու երկրորդ նպատակը Երկնային Հորից օգնություն խնդրելն է: Երեխաներին օգնելու համար հասկանալ աղոթքում օգնություն խնդրելու որոշակի եղանակներ, հատակին կամ սեղանին զցեք հարցաթերթիկները: Թող յուրաքանչյուր երեխա մի թուղթ ընտրի: Կարդացեք յուրաքանչյուր հարցը և այդ հարցը ընտրած երեխային խնդրեք պատասխանել:

Երեխաներին օգնեք հասկանալ, որ Երկնային Հոր օգնությունը ստանալու համար մենք պետք է ջանանք ընտրել ճիշտը: Այդ դեպքում, եթե աղոթենք օգնության համար և խնդրենք Երկնային Հորը անել այն, ինչ մեզ համար լավագույն ելքը կլինի, ապա նա մեզ կտա այն, ինչ մենք խնդրել ենք իրենից (տե՛ս 3 Նեփի 18.20):

### Ամփոփում

Քննարկում

- Ինչի՞ համար մենք կարող ենք շնորհակալություն հայտնել Երկնային Հորը մեր այսօրվա փակիչ աղոթքում: (Հնարավոր պատասխաններ. Երեխաների խումբ այցելելու և աղոթքի մասին ավելի շատ սովորելու հնարավորության համար:)
- Ի՞նչ մենք կարող ենք խնդրել Երկնային Հորից մեր աղոթքում:

Վկայություն

Բերեք ձեր վկայությունն այն մասին, թե որքան կարևոր է ամեն օր խոսել Երկնային Հոր հետ: Երեխաներին հիշեցրեք, որ մենք պետք է աղոթենք առավոտյան, երեկոյան և այն ժամանակ, երբ օգնության հատուկ կարիք ունենք կամ հատկապես երախտապարտ ենք Երկնային Հորը:

Երեխաներին խրախուսեք շաբաթվա բոլոր օրերին չմոռանալ աղոթել առավոտյան և երեկոյան:

Երեխաներից մեկին հրավիրեք ասել փակիչ աղոթքը: Աղոթքից առաջ երեխաներին պատրաստեք աղոթքի համար, մեղմ երգելով «Աղոթքի Երգը» երգը և անելով այն, ինչ ասվում է երգում: Նրանց հիշեցրեք, որ Երկնային Հայրը լսում է և սենյակում գտնվողները բոլորն աղոթում են, թեպետև աղոթքի խոսքերն ասում է միայն մեկը: Բոլոր երեխաներին հիշեցրեք, որ աղոթքի վերջում ասեն «ամեն»:

### Լրացուցիչ վարժություններ

Հետևյալ վարժություններից ընտրեք նրանք, որոնք լավագույնս կհամապատասխանեն ձեր դասարանի երեխաներին: Դուք կարող եք դրանք օգտագործել դասի ընթացքում, որպես դասի վերանայում կամ ամփոփում: Լրացուցիչ ուղղության համար տե՛ս «Դասաժամ» «Օգնություն ուսուցչին» բաժինները:

1. Յուրաքանչյուր երեխայի տվեք «Ես կաղոթեմ ակնածանքով” աշխատանքային թերթիկի մեկական օրինակ, որը կարելի է գտնել դասի վերջում: Երեխաներին մատիտներ տվեք և խնդրեք գունավորել իրենց նկարները: Երեխաներին խրախուսեք նկարները ցույց տալ ծնողներին և պատմել այն մասին, ինչ այսօր սովորեցին աղոթքի մասին:
2. Երեխաներին օգնեք արտասանել «Մենք խոնարհում ենք մեր գլուխները” երգի առաջին քառյակը, կատարելով նշված շարժումները.

   Մենք գլուխներն են խոնարհում *(խոնարհեք գլուխները)* և մեր աչքերն ենք փակում *(փակեք աչքերը)*
   Եվ փոքրիկ աղոթք ենք ասում *(խաչեք ձեռքերը):*
   Հորը շնորհակալություն ենք հայտնում
   Օրհնությունների համար, որ միասին ենք կիսում *(տարածեք ձեռքերը):*
3. Արտասանեք «Ես աղոթում եմ հավատքով» երգի երկրորդ քառյակը, որպեսզի երեխաները հիշեն, թե աղոթքը ինչպես պետք է ասեն:

Աղոթքս ես սկսում եմ, ասելով «Սիրելի Երկնային Հայր»,
Շնորհակալություն եմ հայտնում նրա ուղարկած օրհնությունների համար,
Ապա խոնարհ խնդրում եմ այն, ինչի կարիքն ունեմ,
Եվ ավարտում եմ Հիսուս Քրիստոսի անունով, Ամեն:

(© 1987 by Janice Kapp Perry. Used by permission.)

4. Երեխաներին տվեք թուղթ ու մատիտներ և խնդրեք պատկերել իրենց աղոթելիս: Նրանք կարող են պատկերել ընտանեկան աղոթքը, առավոտյան կամ երեկոյան անհատական աղոթքները, ճաշի օրհնումը, և այլն:

# Ես կաղոթեմ ակնածանքով

Դաս
11

# Ես կարող եմ ուրիշներին պատմել Հիսուս Քրիստոսի մասին

**Նպատակ**

Ոգեշնչել յուրաքանչյուր երեխայի օգնել ուրիշներին իմանալ Հիսուս Քրիստոսի մասին:

**Նախապատրաստություն**

1. Աղոթքով ուսումնասիրեք Ալմա 17–19, 23:
2. Պատրաստվեք արտասանել «Հուսով եմ, ինձ միսիայի կկանչեն»:
3. Պահանջվող նյութեր.
   ա. Մորմոնի Գիրք
   բ. ԸՃ նկար (տե՛ս դաս 1)
   գ. Նկար 2-17, Մոսիայի չորս որդիները, ծնկի իջած աղոթքի մեջ; նկար 2-18, Ամմոնը սովորեցնում է Լամոնի թագավորին:
4. Անհրաժեշտ պատրաստություններ կատարեք այն լրացուցիչ վարժությունների համար, որոնք պատրաստվում եք անցկացնել:

**Դասի առաջարկվող ընթացք**

Երեխաներից մեկին խնդրեք ասել բացիչ աղոթքը:

Եթե երեխաներին խնդրել եք շաբաթվա ընթացքում ինչ-որ բան կատարել, ստուգեք:

Կրկնողություն

Մեկ-երկու խոսք ասեք երեխաների ակնածանքի և աղթքում օգտագործվող լեզվի մասին: Արագ կրկնեք նախորդ դասը, ընդգծելով աղոթքի կարևորությունը:

**Միսիոներները մարդկանց պատմում են Հիսուս Քրիստոսի մասին**

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Երեխաների հետ միասին արտասանեք «Հուսով եմ, ինձ միսիայի կկանչեն»:

Հուսով եմ, ինձ միսիայի կկանչեն,
Երբ մի քիչ էլ մեծանամ:
Հուսով եմ, պատրաստ կլինեմ,
Որ սովորեցնեմ ու քարոզեմ:

Հուսով եմ, կարող եմ ավետարանով կիսվել,
Նրանց հետ, ով ճշմարտությունն է փնտրում:
Ուզում եմ միսիոներ լինել,
Որ ծառայեմ ու օգնեմ Աստծուն:

- Դուք ճանաչո՞ւմ եք որևէ միսիոների:

Երեխաներին թույլ տվեք խոսել իրենց ծանոթ միսիոներների մասին, օրինակ միսիայում ծառայող իրենց ընտանիքի անդամների կամ ձեր տարածաշրջանի միսիոներների մասին:

- Ի՞նչ են անում միսիոներները:

Բացատրեք, որ այս դասում երեխաները կսովորեն, թե ինչպես դեռ վաղ հասակում կարող են նախապատրաստվել միսիոներ դառնալուն:

Պատմվածք սուրբ գրություններից

Երեխաներին ցույց տվեք Մորմոնի Գիրքը և պատմեք Մոսիայի որդիների պատմությունը, ինչպես տրված է Ալմա 17.6–12-ում: Բացատրեք, որ Մոսիա թագավորի որդիներից ցանկացածը կարող էր լինել հաջորդ թագավորը, սակայն նրանք բոլորն ուզում էին թագավոր լինելու փոխարեն միսիոներ լինել: Նրանք ուզում էին սովորեցնել լամանացիներին, որոնք այդ ժամանակ շատ անարդար էին: Մոսիայի որդիները ցանկանում էին, որպեսզի յուրաքանչյուր անձ հնարավորություն ունենա լսել ավետարանը: Բացատրեք, որ քանի որ լամանացիները շատ անարդար էին, Մոսիայի որդիների համար վտանգավոր էր գնալ և սովորեցնել նրանց:

- Ձեր կարծիքով, ինչպե՞ս Մոսիայի որդիները իրենց պատրաստեցին լամանացիներին սովորեցնելու գնալուց առաջ:

Ցույց տվեք նկար 2-17 , Մոսիայի չորս որդիները ծնկի իջած աղոթքի մեջ:

Բացատրեք, որ Մոսիայի որդիները աղոթեցին ու Երկնային Հորը խնդրեցին օգնել իրենց լավ միսիոներներ լինել: Երկնային Հայրն ասաց, որ կհետևի նրանց և նրանք կկարողանան սովորեցնել շատ մարդկանց (տե՛ս Ալմա 17.10–11): Բարձրաձայն կարդացեք Ալմա 17.12: Շեշտեք, որ աղոթքը Մոսիայի որդիներին քաջություն պարգևեց լամանացիների մոտ գնալու և նրանց սովորեցնելու համար:

Պատմվածք սուրբ գրություններից

Բացատրեք, որ Մոսիայի որդիները գնացին տարբեր տարածքներ ուսուցանելու: Ցուցադրեք նկար 2-18, Ամմոնը սովորեցնում է Լամոնի թագավորին, և պատմեք Ալմա 17.17–25-ի պատմությունը: Բացատրեք, որ Ամմոնը Մոսիայի որդիներից մեկն էր, որը կամավոր դարձավ լամանացիների թագավորի, Լամոնիի, ծառան: Ամմոնին հանձնարարված էր արածեցնել թագավորի ոչխարներին: Ամմոնը Լամոնի թագավորի լավագույն ծառան էր: Ամմոնը այնպիսի լավ օրինակ էր ցույց տալիս, որ Լամոնի թագավորն ու նրա ժողովուրդը ցանկացան իմանալ ավետարանի մասին:

Բացատրեք, որ Ամմոնի ու նրա մյուս եղբայրների աշխատանքի շնորհիվ հազարավոր լամանացիներ միացան Եկեղեցուն (տե՛ս Ալմա 23.5):

Քննարկում

- Ինչո՞ւ Ամմոնն ու նրա եղբայրներն իրենց կյանքը վտանգի էին ենթարկում լամանացիներին ավետարանը սովորեցնելու համար: (Ավետարանը նրանց երջանկություն էր տվել և նրանք ցանկանում էին դրանով կիսվել մյուսների հետ:)
- Ի՞նչ արեց Ամմոնը լամանացիներին ավետարանը սովորեցնելու համար: (Նա աղոթեց օգնության համար, ջանասիրաբար աշխատեց, լավ օրինակ ծառայեց:)

### Մենք կարող ենք միսիոներներ լինել

Բացատրեք, որ միսիոներ լինելու ճանապարհներից մեկը կարող է լինել ուրիշներին Հիսուս Քրիստոսի մասին պատմելը: Կարևոր է, որ բոլորը իմանան Հիսուսի ու նրա եկեղեցու մասին:

Պատմվածք

Պատմեք հետևյալ պատմությունն այն երեխայի մասին, որն ուրիշներին օգնեց իմանալ Հիսուս Քրիստոսի ու նրա եկեղեցու մասին: Կարող եք օգտագործել հետևյալ պատմվածքը.

Թեդը երբեմն դժվարությամբ էր կարողանում լսել ցցի համաժողովները, քանի որ իրեն թվում էր, որ ելույթները միայն մեծերի համար էին: Բայց երբ Թեդը լսեց ցցի նախագահի խոսքերը. «Երեխաներ, դուք նույնպես կարող եք միսիո-

ներներ լինել», սկսեց մտածել, թե ինչպես կարող է միսիոներ լինել և ուրիշներին պատմել Հիսուսի մասին:

Հաջորդ առավոտ նախաճաշի ժամանակ Թեդը խոսեց ծնողների հետ հարևան Տիկին Մըրֆիին հրավիրելու և նրան Եկեղեցու մասին պատմելու համար: Թեդի ծնողներին միտքը դուր եկավ, և Թեդը գնաց Տիկին Մըրֆիի տուն և հարցրեց, թե արդյոք նա չէր ցանկանա իմանալ Հիսուսի ու նրա Եկեղեցու մասին: Տիկին Մըրֆին ասաց, որ կուզենար, և շուտով միսիոներները նրան սովորեցնում էին:

- Ի՞նչ կպատահեր, եթե Թեդը չհարցներ Տիկին Մըրֆիին Հիսուսի ու նրա եկեղեցու մասին սովորելու նրա ցանկության մասին:

Թեդի հայրն ու մայրը սկսեցին հետևել Թեդի օրինակին: Նրանք Եկեղեցու մասին խոսեցին իրենց ընկերների և ծանոթների հետ: Որոշ մարդիկ չէին ցանկանում լսել Եկեղեցու մասին, սակայն ոմանք լսում էին և որոշ մարդիկ մկրտվեցին: Երբ Տիկին Մըրֆին մկրտվեց, նա շնորհակալություն հայտնեց Թեդին Փրկչի մասին ավելի շատ սովորելու համար:

Քննարկում

Թեդի օրինակի վրա նշեք, որ երեխաները նույնպես կարող են միսիոներներ լինել և ուրիշներին պատմել Հիսուս Քրիստոսի և նրա եկեղեցու մասին:

- Ո՞ւմ դուք կարող եք պատմել Հիսուսի մասին:

Երեխաներին օգնեք մտածել, թե ում կարող են պատմել Հիսուսի մասին, օրինակ՝ ընկերներին, հարևաններին և բարեկամներին, որոնք Եկեղեցու անդամներ չեն և չեն հաճախում եկեղեցի:

Բացատրեք, որ մեզանից յուրաքանչյուրը կարող է միսիոներ լինել լավ օրինակ լինելու, ուրիշների հանդեպ բարի ու հոգատար լինելու և ավետարանով ապրելու միջոցով: Երեխաներին հիշեցրեք, որ Ամմոնը լավ միսիոներ էր նաև լավ օրինակ լինելու շնորհիվ:

Պատմվածք

Ձեր բառերով պատմեք հետևյալ պատմությունն այն երեխաների մասին, որոնք միսիոներներ էին.

Մի օր երկու միսիոներ թակեցին տան դուռը: Տիկին Ջեյմս անունով կինը բացեց դուռը: Միսիոներները նրան ասացին, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցուց են: Տիկին Ջեյմսը միսիոներներին տուն հրավիրեց և ասաց, որ կցանկանար ավելին իմանալ Եկեղեցու մասին: Միսիոներները շատ երջանիկ էին:

Տիկին Ջեյմսը միսիոներներին ասաց, որ մի ժամանակ հարևան էր մի ընտանիքի հետ, որը պատկանում էր Եկեղեցուն: Նա ասաց, որ այդ ընտանիքում երեխաները շատ քաղաքավարի ու բարի էին: Նրանք ազնիվ էին ուրիշների հետ խաղալիս և մարդկանց հարգանքով էին վերաբերվում: Տիկին Ջեյմսն ասաց, որ կցանկանար ավելին իմանալ այն եկեղեցու մասին, որը երեխաներին սովորեցնում է այդպիսի լավ հարևաններ լինել:

- Ինչպիսի՞ն էին Տիկին Ջեյմսի հարևանությամբ ապրող երեխաները:
- Ինչպե՞ս դուք կարող եք լավ օրինակ լինել ձեր հարևանների և ընկերների համար:

Բեմականացում

Երեխաներին բացատրեք, որ նրանք պետք է բեմականացնեն մի քանի իրավիճակ, որոնցում նրանք կարող են միսիոներներ լինել, բարի ու հոգատար լինելու շնորհիվ:

Երեխաներին խնդրեք լսել յուրաքանչյուր իրավիճակի մասին, ապա ընտրեք երեխաներ, որոնք դերերով կբեմականացնեն այն, թե ինչպես կվարվեին տվյալ իրավիճակում: Յուրաքանչյուր երեխայի հնարավորություն տվեք մասնակցել առնվազն մեկ իրավիճակում: Օգտագործեք հետևյալ օրինակները, կամ մտածեք ինքներդ.

*Իրավիճակ 1* (պահանջվում են երեք երեխա)

Ձեզանից երկուսը քայլում եք փողոցով: Դուք տեսնում եք, ինչպես մի փոքր երեխա սկսում է մագլցել բարձր ծառը: Դուք գիտեք, որ երեխայի համար դա վտանգավոր է:

- Ինչպե՞ս դուք կվարվեիք:

*Իրավիճակ 2* (պահանջվում են երկու երեխա)

Դուք տեսնում եք ձեր հարևանին ծանրաբեռնված մթերքների պարկերով: Պարկերից մեկը պատռվում է և Նարինջները թափվում են գետնին:

- Ինչպե՞ս դուք կվարվեիք:

*Իրավիճակ 3* (պահանջվում են երեք կամ ավել երեխաներ)

Դուք խաղ եք անում ձեր ընկերների հետ: Մի երեխա, որը նոր է ձեր բակում, ուզում է միանալ ձեզ:

- Ինչպե՞ս դուք կվարվեիք:

*Իրավիճակ 4* (պահանջվում են չորս կամ ավել երեխաներ)

Ձեր բակ տեղափոխվում է մի նոր ընտանիք: Նրանք Եկեղեցու անդամ չեն: Դուք մտածում եք, որ երեխաները կուզենան հաջորդ շաբաթ այցելել Երեխաների խումբ:

- Ինչպե՞ս դուք կվարվեիք:

Բեմականացման վարժություններից հետո երեխաներին շնորհակալություն հայտնեք լավ միսիոներներ լինելու համար:

**Ամփոփում**

ԸՃ նկար

Ցույց տվեք ԸՃ նկարը կամ երեխաներին խնդրեք նայել իրենց ԸՃ մատանիներին: Երեխաներին ասացեք, որ լավ միսիոներներ լինելով նրանք ընտրում են ճիշտը և հետևում են Հիսուս Քրիստոսին: Երեխաներին խնդրեք կրկնել նկարի բառերը (կամ ասեք, ինչ են նշանակում իրենց մատանու սկզբնատառերը):

Վկայություն

Գովեք երեխաներին լավ միսիոներներ լինելու իրենց ցանկության համար: Վկայություն բերեք այն մասին, թե որքան կարևոր է յուրաքանչյուր մարդու սովորեցնել Հիսուս Քրիստոսի ու նրա Եկեղեցու մասին: Հիսուսի ու նրա եկեղեցու մասին սովորելը մեզ երջանիկ է դարձնում:

Յուրաքանչյուր երեխայի խնդրեք մտածել, թե ինչպես նա կարող է հաջորդ շաբաթվա ընթացքում միսիոներ լինել: Այդ մտքերը չպետք է բարդ կամ ծավալուն լինեն: Երեխաներին հիշեցրեք, որ նրանք կարող են միսիոներ լինել, ուրիշներին օգնելով ու նրանց հաղեպ ընկերասեր լինելով, ինչպես նաև մարդկանց հրավիրելով սովորել Եկեղեցու մասին:

Երեխաներին խրախուսեք խոսել իրենց ծնողների հետ միսիոներ լինելու եղանակների մասին:

Երեխաներից մեկին հրավիրեք ասել փակիչ աղոթքը:

**Լրացուցիչ վարժություններ**

Հետևյալ վարժություններից ընտրեք նրանք, որոնք լավագույնս կհամապատասխանեն ձեր դասարանի երեխաներին: Դուք կարող եք դրանք օգտագործել դասի ընթացքում, որպես դասի վերանայում կամ ամփոփում: Լրացուցիչ ուղղության համար տե՛ս «Դասաժամ» «Օգնություն ուսուցչին» բաժինները:

1. Երեխաների խմբի ձեր նախագահի համաձայնությամբ հրավիրեք ձեր տարածաշրջանում ծառայող կամ վերջերս վերադարձած միսիոներներին ներկա լինել ձեր դասի վերջին րոպեներին ու խոսել երեխաների հետ այն եղանակների մասին, որոնցով նրանք կարող են արդեն այսօր միսիոներներ լինել:

2. Երեխաներին պատմեք այն մասին, երբ միսիոներները օգնել են ձեզ կամ դուք եք կարողացել որևէ մեկին օգնել իմանալ Հիսուս Քրիստոսի ու նրա եկեղեցու մասին: Պատմեք, թե ինչ զգացումներ եք ունեցել այդ փորձառության ժամանակ:

3. Երեխաներին խնդրեք նկարներ նկարել, պատկերելով իրենց որպես միսիոներներ: Յուրաքանչյուր նկարի վրա գրեք հետևյալը.

(Երեխայի անունը)
Հիսուս Քրիստոսի
Վերջին Օրերի Սրբերի
Եկեղեցու միսիոներ

4. Արտասանեք «Ուզում եմ այժմ միսիոներ լինել» երգի առաջին քառատողը կամ «Իմ գործերը»:

Ուզում եմ այժմ միսիոներ լինել

Ուզում եմ այժմ միսիոներ լինել,
Մեծանալուն չեմ ուզում սպասել,
Որ դեռ փոքր տարիքում ավետարանով կիսվեմ,
Քանի որ իմ վկայությունը ունեմ:

Իմ գործերը

Ես դեռ փոքր եմ տնից հեռանալու
Աստծո խոսքը այլտեղ քարոզելու
Սակայն իմ գործերով միայն,
Ես ցույց կտամ, որ ճշմարիտ է այն:

# Ես կարող եմ պատրաստվել մկրտությանը

Դաս
12

**Նպատակ**

Մեծացնել յուրաքանչյուր երեխայի մկրտվելու ցանկությունը և օգնել երեխաներին հասկանալ, թե ինչպես կարելի է պատրաստվել մկրտությանը:

**Նախապատրաստություն**

1. Աղոթքով ուսումնասիրեք Մաթևոս Գ.13–17 և Վարդապետություն և Ուխտեր 20.72–74: Տե՛ս նաև Հովհաննես Ա.25–34 և *Ավետարանի Սկզբունքներ* (31110), գլուխ 20:
2. Հնարավորության դեպքում Երեխաների Խմբի երաժշտության ղեկավարին խնդրեք օգնել երեխաներին բացիչ ու փակիչ վարժությունների ժամանակ երգել «Մկրտություն» երգը:
3. Վերցրեք հաստ մեծ թուղթ, որը կծածկի նկար 2-19, Հովհաննես Մկրտիչը մկրտում է Հիսուսին: Թուղթը կտրեք փոքր կտորների ըստ ձեր դասարանի երեխաների քանակի: Կտորները դրեք նկարի վրա, որպեսզի վերջինս լիովին ծածկվի:
4. Պատրաստեք վեց մեծ ոտնահետքեր հաստ թղթից:
5. Յուրաքանչյուր երեխայի համար պատճենահանեք նկարներով էջը, որը տրված է դասի վերջում:
6. Պատրաստվեք պատմել ձեր մկրտության որոշ մանրամասներ, օրինակ, ով է ձեզ մկրտել, որտեղ եք դուք մկրտվել, և համառոտ խոսեք մկրտվելու հետ կապված ձեր զգացմունքների մասին: Եթե դուք մկրտվել եք երեխա հասակում, կարող եք բերել այդ տարիքի ձեր նկարներից:
7. Պահանջվող նյութեր.
   ա. Աստվածաշունչ
   բ. Կպչող ժապավեն
   գ. Նկար 2-19, Հովհաննես Մկրտիչը մկրտում է Հիսուսին (Gospel Art Picture Kit 208; 62133); նկար 2-20, Մկրտվող տղան (62018):
8. Անհրաժեշտ պատրաստություններ կատարեք այն լրացուցիչ վարժությունների համար, որոնք ցանկանում եք անցկացնել:

*Ավագ երեխաների ուսուցիչներին.* 5, 6 և 7-րդ լրացուցիչ վարժությունները նախատեսված են ավագ երեխաների համար, որոնք շուտով մկրտվելու են:

**Դասի առաջարկվող ընթացք**

Երեխաներից մեկին խնդրեք ասել բացիչ աղոթքը:

Եթե երեխաներին խնդրել եք շաբաթվա ընթացքում ինչ-որ բան կատարել, ստուգեք:

## Հիսուս Քրիստոսը մկրտվել է

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Ցուցադրեք Հովհաննես Մկրտիչը մկրտում է Հիսուսին ծածկված նկարը: Երեխաներին ասացեք, որ թղթի տակ երկու կարևոր մարդկանց նկար է: Երեխաներին խնդրեք կռահել, ովքեր են այդ մարդիկ, սակայն ասացեք, որ բարձրաձայն ոչինչ չասեն, մինչև որ նկարն ամբողջությամբ չերևա: Յուրաքանչյուր երեխայի խնդրեք նկարի վրայից հերթով հեռացնել մեկական թղթի կտոր:

Երբ բոլոր թղթերը հեռացված լինեն, հարցրեք.

- Ովքե՞ր են նկարի վրայի մարդիկ:
- Ի՞նչ են նրանք անում:

Պատմվածք սուրբ գրություններից

Պատմեք Մաթևոս Գ.13–17-ում տրված Հիսուս Քրիստոսի մկրտության պատմությունը: Բացատրեք, որ Հովհաննես Մկրտիչը զարմացավ, երբ Հիսուսը նրան խնդրեց իրեն մկրտել: Հովհաննեսը գիտեր, որ Հիսուսը մեղք չէր գործել, և մտածում էր, թե Հիսուսը կարիք չունի մկրտվելու: Սակայն Հիսուսը Հովհաննեսին ասաց, որ մկրտվելը Երկնային Հոր պատվիրանն է, իսկ նա ցանկանում է հնազանդվել Երկնային Հոր պատվիրաններին:

Ցույց տվեք նկարի վրա գետը և բացատրեք, որ Հովհաննեսը Հիսուսին մկրտեց Հորդանան Գետում: Հովհաննեսը Հիսուսին մկրտեց ընկղմամբ: *Ընկղմում* նշանակում է ամբողջովին ծածկվել ջրով:

Բարձրաձայն կարդացեք Մաթևոս Գ.17 և բացատրեք, որ դրանք Երկնային Հոր խոսքերն են: Երեխաներին ասացեք, որ Երկնային Հայրը գոհանում է նույնպես, երբ մենք ենք մկրտվում:

Խաղ

Երեխաների հետ խաղացեք «Վերջին խոսքերը» խաղը: Կարդացեք ստորև տրված նախադասությունները, բաց թողնելով ընդգծված բառերը: Երեխաներից մեկին խնդրեք լրացնել համատասխան բառերը:

Եթե երեխան չի հիշում պատասխանը, անցեք հաջորդ երեխային, մինչև որ որևէ մեկը կտա ճիշտ պատասխանը (մի թույլ տվեք, որպեսզի հարցին չպատասխանող երեխան ամաչի): Շարունակեք, մինչև բոլոր երեխաները ճիշտ կպատասխանեն հարցերին, անհրաժեշտության դեպքում նրանց օգնելով: Եթե անհրաժեշտ է, հարցերը երկու անգամ տվեք:

1. Հիսուս Քրիստոսը մկրտվեց <u>Հովհաննես Մկրտիչի</u> կողմից:
2. Հիսուսը մկրտվեց <u>Հորդանան</u> գետում:
3. Հիսուսը մկրտվեց Երկնային Հոր <u>պատվիրանին (ուսմունքին)</u> հնազանդվելու համար:
4. Երբ Հիսուսը մկրտվեց, նա ամբողջովին ծածկվեց <u>ջրով</u>:
5. Հիսուսի մկրտվելուց հետո նա և Հովհաննեսը լսեցին <u>Երկնային Հոր</u> ձայնը:
6. Երբ մենք դառնում ենք ութ տարեկան, մենք կարող ենք հետևել Հիսուսի օրինակին ու <u>մկրտվել:</u>

## Մկրտվելով մենք կարող ենք հետևել Հիսուս Քրիստոսի օրինակին

Ուսուցչի ելույթ

Երեխաներին ասացեք, որ երբ նրանք դառնում են ութ տարեկան, նրանք կարող են մկրտվել: Իսկ հիմա, նրանք պետք է պատրաստվեն, որպեսզի երբ դառնան ութ տարեկան կարողանան մկրտվել:

Բացատրեք, որ երբ մկրտվում ենք մենք ուխտեր (խոստումներ) ենք կապում Երկնային Հոր հետ: Մենք խոստանում ենք հնազանդվել նրա պատվիրանե-

րին, ներել ուրիշներին և հետևել Հիսուս Քրիստոսին: Իր հերթին, նա ընդունում է մեզ Եկեղեցի և խոստանում է առաջնորդել ու օգնել:

Դասարանին պատմեք ձեր մկրտության մասին: Կարող եք նշել, թե որտեղ եք մկրտվել (ավազանում, թե գետում), ով է մկրտել ձեզ և ով էր ներկա ձեր մկրտությանը: Եթե դուք մկրտվել եք երեխա հասակում, ցույց տվեք ձեր այդ տարիքի նկարը: Նրանց հետ կիսվեք մկրտության վերաբերյալ ձեր ունեցած զգացումներով, օրինակ ոգևորությամբ կամ Եկեղեցու անդամ դառնալու ցանկությամբ:

Երեխաներին ասացեք, որ մի օր Հիսուս Քրիստոսի ու ձեզ նման նրանք ևս կարող են մկրտվել:

Պատմվածք

Պատմեք պատմություն մի երեխայի մասին, որը մկրտվում է: Կարող եք օգտագործել հետևյալ պատմությունը.

Մարկոյի ընտանիքը միացավ Եկեղեցուն, երբ Մարկոն յոթ տարեկան էր: Բոլորը ընտանիքում մկրտված էին, բացի Մարկոյից: Նրա տարիքը դեռ չէր բավարարում: Մարկոն շատ հիասթափված էր, որ չէր կարող մկրտվել իր ընտանիքի հետ, սակայն մայրը նրան ասաց, որ շուտով նա կկարողանա մկրտվել, իսկ մինչ այդ նա պետք է օգատգործի իր ժամանակը նախապատրաստվելու համար:

- Ինչպե՞ս կարող էր Մարկոն պատրաստվել մկրտությանը:

Հաջորդ տարվա ընթացքում Մարկոն աշխատում էր ընտրել ճիշտը և անել այն, ինչ կցանկանար Հիսուսը: Վերջապես Մարկոն դարձավ ութ տարեկան: Նա հագավ ճերմակ հագուստներ և հայրը նրան մկրտեց: Երբ հայրը Մարկոյին հանեց ջրից, Մարկոն շատ ուրախ էր, որ կարողացավ մկրտվել ընկղմամբ, ինչպես Հիսուսը: Նա շատ երջանիկ էր լինելու Հիսուսի եկեղեցու անդամը:

**Մենք կարող ենք այժմ պատրաստվել մեր մկրտությանը**

Վարժություն ոտնահետքերով

Ցուցադրեք նկար 2-20, Մկրտվող տղան, և, հնարավորության դեպքում, նկարը փակցրեք դասարանի դռանը:

- Ինչպե՞ս է այս երեխան հետևում Հիսուսի օրինակին:

Երեխաներին հիշեցրեք, որ արդեն հիմա նրանք կարող են նախապատրաստվել մկրտությանը: Ցուցադրեք թղթե ոտնահետքերը և դասի վերջում տրված վեց նկարներով թերթիկի մեկ օրինակ: Երեխաներին ասացեք, որ նկարները ներկայացնում են քայլերը, որոնք մեզ տանում են դեպի մկրտություն:Քննարկեք պատկերված յուրաքանչյուր քայլը, տալով ստորև նշված հարցերը: Յուրաքանչյուր քայլը քննարկելուց հետո, երեխաներից մեկին խնդրեք ոտնահետքերից մեկը տեղադրել հատակին, և այդպես շարունակելով, շարել դեպի մկրտության նկարը տանող ուղի:

1. Հավատա Հիսուս Քրիստոսին ու Երկնային Հորը և սովորի նրանց մասին:
   - Ինչո՞ւ մենք պետք է սովորենք Հիսուս Քրիստոսի ու Երկնային Հոր մասին:
   - Որտե՞ղ մենք կարող ենք սովորել նրանց մասին:
2. Աղոթիր Երկնային Հորը:
   - Ինչպե՞ս կարող է աղոթքը մեզ օգնել պատրաստվել մկրտությանը:
3. Եղիր ներող և սիրի մյուսներին:
   - Ի՞նչ է տեղի ունենում, երբ մենք ներում ենք:
   - Ինչպե՞ս մենք կարող ենք ցույց տալ ուրիշներին մեր սերը:

4. Ընտրիր ճիշտ ուղին ամեն օր:
   - Ի՞նչ եղանակներ կան, որոնցով մենք կարող ենք ընտրել ճիշտը:
5. Կարդա կամ լսի սուրբ գրությունների պատմությունները:
   - Ինչպե՞ս է սուրբ գրությունների ուսումնասիրությունն օգնել ձեզ:
6. Եղիր ութ տարեկան:
   - Ի՞նչ դուք կարող եք անել մինչ ութ տարեկան դառնալը մկրտությանը պատրաստվելու համար:

Նրանից հետո, երբ բոլոր ոտնահետքերը կտեղադրեք հատակին, երեխաներին թույլ տվեք հերթով հատել սենյակը և քայլելով ոտնահետքերով հասնել մկրտության նկարին: Յուրաքանչյուր ոտնահետքին կանգնելիս երեխաներին օգնեք բացատրել, ինչպես իրենք կարող են պատրաստվել մկրտությանը:

**Ամփոփում**

Աշխատանքային թերթիկ

Երեխաներից յուրաքանչյուրին տվեք վեց նկարների փաթեթը տուն տանելու համար: Տպատառով գրեք կամ երեխաներին խնդրեք թղթերի վրա գրել իրենց անունները:

Վկայություն

Երեխաներին բերեք մկրտության կարևորության մասին ձեր վկայությունը: Երեխաներին հիշեցրեք, որ Երկնային Հայրը գոհ է, երբ մենք մկրտվում ենք:

Երեխաներին առաջարկեք նկարների էջը օգտագործել իրենց ընտանիքներին սովորեցնելու այն, ինչ սովորեցին մկրտության մասին: Յուրաքանչյուր երեխայի խրախուսեք պատրաստվել մկրտությանը հետևելով նկարների վրա պատկերված վեց քայլերին:

Երեխաներից մեկին հրավիրեք ասել փակիչ աղոթքը:

Երբ երեխաները պատրաստ կլինեն դուրս գալ սենյակից, նրանց խնդրեք դուրս գալ ոտնահետքերով:

---

**Լրացուցիչ վարժություններ**

Հետևյալ վարժություններից ընտրեք նրանք, որոնք լավագույնս կհամապատասխանեն ձեր դասարանի երեխաներին: Դուք կարող եք դրանք օգտագործել դասի ընթացքում, որպես դասի վերանայում կամ ամփոփում: Լրացուցիչ ուղղության համար տե՛ս «Դասաժամ» «Օգնություն ուսուցչին» բաժինները:

1. Յուրաքանչյուր երեխայի համար թղթի վրա ոտնահետք նկարեք: Բոլոր ոտնահետքերի վրա գրեք *Ես կհետևեմ Հիսուս Քրիստոսին:* Թող երեխաները գունավորեն կամ գունազարդեն ոտնահետքերը:
2. Եթե ձեր հավաքատանը մկրտության ավազան կա, երեխաներին տարեք այն տեսնելու:
3. Արտասանեք «Երբ Հիսուս Քրիստոսը մկրտվեց» երգի բառերը:

   Երբ Հիսուս Քրիստոսը մկրտվեց

   Երբ Հիսուս Քրիստոսը մկրտվեց,
   Հորդանանի ջրերում,
   Աստվածության երեք անդամ,
   Սիրով ներկա եղան:
   Երկնքից Հայրը խոսեց,
   Երբ Հիսուս Քրիստոսը մկրտվեց:
   Սուրբ Հոգին ներքև իջավ,
   Մեղմ ու փափուկ, աղավնու նման:

Իսկ այժմ, երբ ես մկրտվում եմ
Նրա օրինակին կհետևեմ,
Որ մկրտվեմ ընկղմամբ,
Սուրբ քահանայության զորությամբ:
Այդժամ անդամ կդառնամ
Երկնային Հոր արքայության
Եվ Սուրբ Հոգին կունենամ
Որ առաջնորդի ինձ ամեն ժամ:

4. Ցուցադրեք նկար 2-20, Մկրտվող տղան, նկար 2-19-ից հետո, Հովհաննես Մկրտիչը մկրտում է Հիսուսին: Երեխաների հետ միասին կրկնեք այն, ինչ նրանք գիտեն մկրտության մասին: Նրանց օգնեք հասկանալ, որ մկրտությունը հատուկ փորձառություն է, որին պետք է սպասել: Դա ամենակարևոր բաներից է, որ նրանք պետք է անեն: Քննարկեք հետևյալ կետերը.

   ա. Երբ մենք մկրտվում ենք, մենք դառնում ենք Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ: (Եթե ավելի փոքր երեխաները մտահոգվում են, թե ինչու Եկեղեցու անդամ չեն, նրանց հավաստիացրեք, որ ութ տարեկանից ցածր երեխաները անդամներ են համարվում: Սակայն, երբ նրանք դառնում են ութ տարեկան, պետք է մկրտվեն Եկեղեցու պաշտոնական անդամը դառնալու համար:)
   բ. Մկրտվելուց մենք պետք է լինենք առնվազն ութ տարեկան:
   գ. Եպիսկոպոսը կամ ճյուղի նախագահը պետք է հանդիպի և զրուցի մեզ հետ մկրտության մասին:
   դ. Մկրտվելուց մենք սպիտակ հագուստ ենք կրում (ցուցադրեք նկար 2-20):
   ե. Մենք մկրտվում ենք ջրի մեջ ընկղմամբ, լիովին մտնելով ջրի մեջ: (Հավաստիացեք, որ երեխաները հասկանում են, որ նրանք ջրի տակ լինելու են միայն մեկ-երկու վայրկյան, որ ջուրը խորը չէ և նրանց մկրտող անձնավորությունը ամուր բռնում է իրենց:)
   զ. Մեզ մկրտող մարդը պետք է լինի քահանա կամ կրի Մելքիսեդեկյան Քահանայություն:
   է. Մենք մկրտվում ենք նույն ձևով, ինչ Հիսուս Քրիստոսը: Սա մեզ օրինակ է ծառայել:

5. Երեխաների խմբի ձեր նախագահի համաձայնությամբ հրավիրեք քահանայության որևէ կրողի, որպեսզի նա երեխաների հետ խոսի այն մասին, ինչ տեղի է ունենում մկրտության ժամանակ: Թող նա բացատրի, թե ինչպես է երեխան և մկրտող անձնավորությունը կանգնում և պահում իրենց ձեռքերը: Նրան խնդրեք բացատրել, որ մկրտությունը կատարող անձնավորությունը զգուշորեն երեխային մտցնում է ջրի մեջ, ապա արագ հանում ջրից: Երեխաներին հիշեցրեք, որ երբ նրանք այսպես մկրտվում են, նրանք մկրտվում են ճիշտ այնպես, ինչպես մկրտվեց Հիսուսը:

   Ձեր եպիսկոպոսի կամ ճյուղի նախագահի համաձայնությամբ քահանայություն կրողը կարող է դասարանում ցուցադրել, թե ինչպես է կատարվում մկրտությունը: (Քահանայություն կրողը ցուցադրման ժամանակ *չպետք է* ասի մկրտության աղոթքը:)

6. Բացատրեք, որ մկրտության աղոթքը այն մի քանի աղոթքներից է, որոնք պետք է ասվեն ճշգրտությամբ և նույնությամբ ամեն անգամ: Հիսուս Քրիստոսը հայտնել է այս աղոթքի բառերը սուրբ գրություններում: Բարձրաձայն կարդացեք աղոթքը Վարդապետություն և Ուխտեր 20.73-ում (սկսած *Լիազորված լինելով*):

ՍՈՒՐԵՆ ԽՈՍՐՈՎԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ

# Սուրբ Հոգու պարգևը կարող է օգնել ինձ

Դաս
13

**Նպատակ**

Օգնել յուրաքանչյուր երեխայի հասկանալ, որ մկրտվելուց հետո նրանք ստանում են Սուրբ Հոգու պարգևը, որն օգնում է իրենց:

**Նախապատրաստություն**

1. Աղոթքով ուսումնասիրեք Վարդապետություն և Ուխտեր 49.13–14, 130.22, և Հավատո Հանգանակներ 1.1, 4: Տե՛ս նաև Մորոնի 10.5; Վարդապետություն և Ուխտեր 9.8–9; 85.6; և *Ավետարանի Սկզբունքները* (31110), գլուխ 21:
2. Հաստ թղթից պատրաստեք հետևյալ «հարց-ծաղիկներ».



Ծաղիկները ամրացրեք փոքրիկ փայտիկներին և դրեք ծաղկամանի մեջ:

3. Պահանջվող նյութեր.
   ա. Վարդապետություն և Ուխտեր:
   բ. Նկար 2-19, Հովհաննես Մկրտիչը մկրտում է Հիսուսին (Ավետարանի Արվեստի Նկարների Հավաքածո 208; 62133):
4. Անհրաժեշտ պատրաստություններ կատարեք այն լրացուցիչ վարժությունների համար, որոնք ցանկանում եք անցկացնել:

**Դասի առաջարկվող ընթացք**

Երեխաներից մեկին խնդրեք ասել բացիչ աղոթքը:

Եթե երեխաներին խնդրել եք շաբաթվա ընթացքում ինչ-որ բան կատարել, ստուգեք:

**Մենք կարող ենք ստանալ Սուրբ Հոգու Պարգևը**

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Ցուցադրեք նկար 2-19, Հովհաննես Մմկրտիչը մկրտում է Հիսուսին: Վերանայեք անցած շաբաթվա դասը, խնդրելով երեխաներին ընտրել հարց-ծաղիկները: Հիսուս Քրիստոսի մկրտության վերաբերյալ մի հարց տվեք, որ սկսվում է ծաղիկի վրա գրված խոսքով: Եթե տվյալ ծաղիկն ընտրած երեխան չի կարողանում պատասխանել հարցին, խնդրեք, որպեսզի դասարանի մյուս անդամները օգնեն (ուշադիր եղեք, որպեսզի հարցին չպատասխանող երեխան իրեն անհարմար չզգա):

Հնարավոր հարցեր.

- *Ո՞վ* մկրտեց Հիսուս Քրիստոսին: (Հովհաննես Մկրտիչը:)
- *Որտե՞ղ* մկրտվեց Հիսուսը: (Հորդանան գետում:)
- *Ի՞նչ է* ընկղմումը: (Լիովին ջրով ծածկվել:)
- *Ինչո՞ւ* Հիսուսը մկրտվեց: (Երկնային Հոր պատվիրանին հնազանդվելու և մեզ համար օրինակ ծառայելու համար:)
- *Ե՞րբ* մենք կարող ենք մկրտվել: (Ութ տարեկան հասակում:)

Ուսուցչի ելույթ

Երեխաներին խնդրեք ասել, թե ովքեր են նկար 2-19-ի վրա պատկերված երկու անձիք:

- Ո՞ւմ ձայնը լսեցին Հիսուս Քրիստոսն ու Հովհաննես Մկրտիչը Հիսուսի մկրտվելուց հետո:

Երեխաներին հիշեցրեք, որ Երկնային Հայրը նայում էր, թե ինչպես էր մկրտվում Հիսուսը և գոհանում էր, որ Հիսուսը մկրտվեց: Երեխաներին ասացեք, որ Հիսուսի մկրտությանը կար մեկ այլ կարևոր անձնավորություն: Այդ անձնավորությունը օգնում է Երկնային Հորն ու Հիսուս Քրիստոսին: Նա կոչվում է Սուրբ Հոգի:

Հավատո հանգանակ

Երեխաներին խնդրեք կանգնել և կրկնել հավատո առաջին հանգանակը:

Սուրբ գրություն

Բացատրեք, որ Սուրբ Հոգին նման է Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին, որովհետև նա սիրում է մեզ և ցանկանում է մեզ օգնել: Սակայն Սուրբ Հոգին չունի մսից ու ոսկորից մարմին, ինչպես Երկնային Հայրն ու Հիսուս Քրիստոսը: Բարձրաձայն կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 130.22, մինչև *Հոգեղեն Անձնավորություն է* բառերը: Բացատրեք, որ մենք չենք կարող տեսնել Սուրբ Հոգուն, սակայն նա մեզ կարող է օգնել անել այն, ինչ ճիշտ է: Նա մեզ պարգևում է ջերմ, երջանիկ զգացում, երբ ընտրում ենք ճիշտը:

Սուրբ գրություն

Երեխաներին ասացեք, որ մկրտվելուց հետո Մելքիսեդեկյան Քահանայություն կրող տղամարդիկ մկրտվողներին երկու տեսակի օրհնություն են տալիս: Բարձրաձայն կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 49.14 և երեխաներին ասացեք, որ այս սուրբ գրությունը մեզ ասում է, թե որն է այդ օրհնություններից մեկը: Բացատրեք, որ *ով որ դա անի* խոսքերը վերաբերվում են նրանց, ովքեր մկրտվում են:

Հավատո հանգանակ

Երեխաներին օգնեք մտապահել հավատո չորրորդ հանգանակի մի մասը. «Մենք հավատում ենք . . . ձեռնադրմամբ Սուրբ Հոգու պարգևին»: Երեխաներին ասացեք, որ Սուրբ Հոգու պարգևը ամենամեծ օրհնություններից է, որ մենք կարող ենք ստանալ մկրտությունից հետո:

Ուսուցչի ելույթ

Բացատրեք, որ երբ մենք ունենք Սուրբ Հոգու պարգևը, Սուրբ Հոգին մեզ կօգնի իմանալ, թե ինչն է ճշմարիտ, ինչը՝ սխալ: Սուրբ Հոգին մեզ կարող է օգնել անգամ մինչև մկրտությունն ու հաստատումը, սակայն պարգևը ստանալուց հետո մենք կարող ենք ունենալ Սուրբ Հոգին որպես մեր մշտական ուղեկիցը: Սա նշանակում է, որ քանի դեռ մենք աշխատում ենք անել ճիշտը, նրա ազդեցությունը միշտ մեզ վրա կլինի:

**Մենք կարող ենք հաստատվել որպես Եկեղեցու անդամ**

Ուսուցչի ելույթ

Բացատրեք, որ մկրտությունից հետո ստացվող այլ օրհնություններից է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ հաստատվելը: Սա կոչվում է հաստատում: Երեխաներին խնդրեք մի քանի անգամ կրկնել *հաստատում* բառը:

Պատմվածք նկարով

Պատմեք «Ռոբերտայի հաստատումը» պատմությունը, որը տրված է այս դասի վերջում: Պատմելիս, երեխաներին խնդրեք հավաքվել ձեր շուրջը, որպեսզի տեսնեն նկարները:

Քննարկում

Պատմվածքը պատմելուց հետո տվեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ տրվեց Ռոբերտային: (Սուրբ Հոգու պարգևը:)
- Ո՞վ ասաց Սուրբ Հոգին պարգևելու աղոթքը: (Նրա հայրը:)
- Ի՞նչ իշխանություն ուներ Ռոբերտայի հայրը: (Մելքիսեդեկյան Քահանայություն:)
- Ձեր կարծիքով, ի՞նչը Ռոբերտային ջերմ զգացում պատճառեց: (Սուրբ Հոգու ազդեցությունը:)

Թող երեխաները նորից պատմեն պատմվածքը: Յուրաքանչյուր նկարը ցուցադրելուց մեկ այլ երեխա հրավիրեք պատմելու:

### Սուրբ Հոգին մեզ կօգնի իմանալ, թե ինչն է ճշմարիտ

Ուսուցչի ելույթ

Բացատրեք, որ Սուրբ Հոգին մեզ կարող է օգնել իմանալ, որ Եկեղեցին ճշմարիտ է: Երբեմն մենք այնքան երջանիկ ու երախտապարտ ենք, որ ուզում ենք մեր զգացմունքների մասին պատմել ուրիշներին: Սա հաճախ տեղի է ունենում, երբ մենք բերում ենք մեր վկայությունը ծոմի ու վկայության ժողովի ժամանակ:

- Դուք երբևէ բերե՞լ եք ձեր վկայությունը ծոմի ու վկայության ժողովի ժամանակ:

Եթե կան երեխաներ, որոնք բերել են իրենց վկայությունը, թույլ տվեք նրանց պատմել, թե ինչպես են իրենց զգացել:

Բացատրեք, որ երբ մարդիկ լցված են Սուրբ Հոգով, նրանք անգամ մի փոքր լաց են լինում: Դրանք տխուր արցունքներ չեն, այլ երջանիկ արցունքներ: Երեխաներին ասացեք, որ երբեմն նրանք կունենան ջերմ, խաղաղ զգացում վկայության ժողովին կամ աղոթելիս, սուրբ գրությունները կարդալիս կամ եկեղեցում լսելիս: Այդ խաղաղ զգացումը Սուրբ Հոգու շշնջոցն է, որը նրանց ասում է, որ այդ բաները ճշմարիտ են:

Երգ

Երեխաների հետ միասին երգեք կամ արտասանեք «Գիտեմ, Հայրս ապրում է» երգը:

Բացատրեք, որ երգում «Հոգին» Սուրբ Հոգին է: Սուրբ Հոգին մեզ օգնում է իմանալ, որ Երկնային Հայրն ապրում է և սիրում է մեզ:

### Սուրբ Հոգին կարող է առաջնորդել և նախազգուշացնել մեզ

Պատմվածք և քննարկում

Ձեր բառերով պատմեք Սարա Ջեյն Ջին Քենոնի մասին պամվածքը: Երեխաներին խնդրեք լսել, թե ինչ է Սուրբ Հոգին շշնջացել նրան:

Սարա Ջեյնը այն սերունդին պատկանող աղջիկներից էր, որ տարիներ առաջ անցան Ամերիկայի անապատով նոր տուն գտնելու համար: Յուտա հասնելուն պես նա սկսեց ապրել իր մորաքրոջ հետ կիսակառույց տանը: Պատերի վրա քաշած էր հաստ կտոր, որը ամրացված էր ամեն անկյունում դրված քարերով և ծառայում էր որպես կտուր:

Մի օր Սարա Ջեյնը տանը կար էր անում, երբ մի ձայն լսեց. «Արագ գնա դուրս»: Ոչ ոք չկար, սակայն Սարան տեղափոխվեց սենյակի մյուս կողմը: Նրա տեղափոխվելուց անմիջապես հետո կտորը պահող քարերից մեկն ընկավ հատակին: Եթե Սարա Ջեյնը չտեղափոխվեր, քարը կհարվածեր իրեն:

(Տե՛ս “Move Away Quickly,” in *Remarkable Stories from the Lives of Latter-day Saint Women,* comp. Leon R. Hartshorn, 2 vols. [Salt Lake City: Deseret Book Co., 1973–75], 2:34:)

- Ո՞վ խոսեց Սարա Ջեյնի հետ:
- Ի՞նչ Սուրբ Հոգին ասաց նրան:
- Ի՞նչ արեց Սարան:
- Ի՞նչ կպատահեր, եթե Սարա Ջեյնը չլսեր:

Երեխաներին հիշեցրեք, որ Սուրբ Հոգին միշտ չի խոսում այնպիսի ձայնով, որը մենք լսում ենք: Շատ դեպքերում նա մեզ զգացնել է տալիս, թե ինչ անել:

**Ամփոփում**

Կրկնություն

Երեխաներին խնդրեք պատմել, ինչ նրանք գիտեն Սուրբ Հոգու մասին: Կարող եք կրկնության համար նորից օգտագործել ծաղիկ-հարցերը: Կարող եք օգտագործել հետևյալ հարցերը.

- *Ի՞նչ* թանկարժեք նվեր եք դուք ստանում մկրտվելուց հետո: (Սուրբ Հոգու պարգևը:)
- *Ո՞վ է* Սուրբ Հոգին: (Մի էակ, որն օգնում է Հիսուսին ու Երկնային Հորը; հոգի; մեկը, որը մխիթարում և օգնում է մեզ:)
- *Ե՞րբ* ենք մենք ստանում Սուրբ Հոգու պարգևը: (Մկրտվելուց հետո, երբ մենք հաստատվում ենք որպես Եկեղեցու անդամ:)
- *Որտե՞ղ* մենք կարող ենք զգալ Սուրբ Հոգու հուշումները: (Մեր սրտում և մտքում: Հնարավոր պատասխաններ. տանը, եկեղեցում, որտեղ որ ճիշտ ենք գործում:)
- *Ինչո՞ւ* Երկնային Հայրը ուղարկեց Սուրբ Հոգին, որ նա լինի մեզ հետ: (Մեզ օգնելու և մխիթարելու, մեզ առաջնորդելու և նախազգուշացնելու, մեզ ճշմարտությունն ասելու, մեզ սիրո ու խաղաղության զգացում պարգևելու համար:)

Վկայություն

Երեխաների հետ կիսվեք Սուրբ Հոգու մասին ձեր զգացմունքներով, ինչպես նաև պատմեք, թե ինչպես է նա օգնում և առաջնորդում մեզ: Կարող եք պատմել ձեր անձնական որևէ փորձառության մասին, երբ Սուրբ Հոգին վկայություն է ձեզ տվել կամ օգնել:

Երեխաներին խրախուսեք ընտրել ճիշտը, որպեսզի միշտ կարողանան Սուրբ Հոգին իրենց հետ ունենալ:

Երեխաներից մեկին հրավիրեք ասել փակիչ աղոթքը:

---

**Լրացուցիչ վարժություններ**

Հետևյալ վարժություններից ընտրեք նրանք, որոնք լավագույնս կհամապատասխանեն ձեր դասարանի երեխաներին: Դուք կարող եք դրանք օգտագործել դասի ընթացքում, որպես դասի վերանայում կամ ամփոփում: Լրացուցիչ ուղղության համար տե՛ս «Դասաժամ» «Օգնություն ուսուցչին» բաժինները:

1. Դասարան բերեք որևէ մի իր, որը ստացել եք որպես նվեր, սակայն այլևս օգտագործվող չէ, որովհետև կոտրված է, մաշված է և այլն, օրինակ կոտրված ափսե, հին հագուստ կամ սննդի դատարկ արկղ:

Երեխաներին ցույց տվեք նվերը, որն այլևս օգտակար չէ: Նրանց պատմեք այդ նվերի հետ կապված հետաքրքիր տեղեկություն, օրինակ, ով է տվել նվերը, երբ և ինչու է այն տրվել ձեզ: Երեխաներին օգնեք հասկանալ, որ թեև մի ժամանակ նվերը կարևոր էր ձեզ համար, այն այլևս օգտակար չէ, որովհետև մաշվել է:

Բացատրեք, որ երբ դուք մկրտվում և հաստատվում եք, դուք ստանում եք մեկ այլ տեսակի նվեր: Սա շատ արժեքավոր նվեր է, որը չի կարող մաշվել: Այդ անգին նվերը էլ ավելի արժեքավոր է դառնում, երբ օգտագործվում է:

- Ո՞րն է այդ նվերը:

Երբ երեխաները կռահեն (կամ դուք նրանց ասեք), որ այդ նվերը Սուրբ Հոգու պարգևն է, ասացեք, որ նրանք շատ նվերներ կստանան իրենց կյանքի ընթացքում, սակայն Սուրբ Հոգու պարգևը ամենաարժեքավոր նվերն է, որ նրանք կստանան երկրի վրա:

2. Արտասանեք «Փոքր մեղմ ձայնը»:

Փոքր մեղմ ձայնով Սուրբ Հոգին խոսում է ինձ հետ
Առաջնորդում, չարից փրկում և տեսնել օգնում է ինձ
Եթե ճիշտը միշտ ընտրեմ, խավարով ես հեշտ կանցնեմ,
Նա ղեկավարում և պաշտպանում է, իմ հոգուն լույս է պարգևում:

Վերջին մասն արտասանելիս կատարեք ստորև տրված շարժումները.

Լսիր, լսիր *(ձեռքը դրեք ականջին):*
Սուրբ Հոգին կշշնջա *(ցուցամատով դիպչեք շրթունքներին):*
Լսիր, լսիր *(ձեռքը դրեք ականջին)*
Փոքր ու մեղմ ձայնին *(ձեռքը անցկացրեք գլխի վրայով):*

3. Երեխաների հետ խաղացեք հետևյալ հանգիստ խաղը, ցույց տալու համար, որ նրանք կարող են առաջնորդվել մեղմ ցածր ձայնով.

Երեխաներին ցույց տվեք մի փոքրիկ իր, որը այս խաղի համար թաքցնելու եք: Երեխաներից մեկին խնդրեք հեռանալ, մինչ դուք կպահեք իրը: Երբ երեխան վերադառնա, բացատրեք, որ նա պետք է ուշադիր լսի, որպեսզի կարողանա գտնել այդ առարկան: Օգտագործեք ցածր աղմուկ, օրինակ թեթևակի խփելով մատիտով, մեղմորեն ծափահարելով կամ մեղեդի երգելով, երեխային ցույց տալով, որ ուղղությամբ գնալ թաքնված առարկան գտնելու համար: Ավելի արագ խփեք (կամ ավելի բարձր երգեք), եթե երեխան մոտենում է այն տեղին, որտեղ թաքնված է իրը, մինչև որ այն գտնվի: Ըստ ցանկության կրկնեք վարժությունը, հնարավորություն տալով մեկ այլ երեխայի գտնել առարկան:

Երեխաներին բացատրեք, որ նրանք կարող են առաջնորդվել իրենց կյանքում, լսելով Սուրբ Հոգու մեղմ ցածր ձայնին: Նրանց հիշեցրեք, որ Սուրբ Հոգին միշտ չէ, որ բարձր է խոսում: Երբեմն նա մեզ մտքեր կամ զգացմունքներ է տալիս, օրինակ ջերմության զգացում, երբ ինչ-որ ճիշտ գործ ենք կատարում, կամ վատ զգացում, երբ ինչ-որ վատ արարք ենք կատարում (կամ պատրաստվում ենք կատարել): Մենք պետք է ուշադիր լինենք իմանալու համար, թե ինչ է մեզ ասում Սուրբ Հոգին:

4. Երեխաներին օգնեք ուրվագծել իրենց ձեռքերը թղթի վրա տարբեր գույների մատիտներով: Ձեռքերը թող իրար վրա լինեն, ներկայացնելով ձեռնադրումը Սուրբ Հոգու պարգևը ստանալու համար: Նկարների վրա գրեք երեխաների անունները:

# Ռոբերտայի հաստատումը



Այսօր Ռոբերտայի համար հատուկ օր է: Սա հենց նոր մկրտվել է: Այժմ նա կհաստատվի որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ և նրան կտրվի Սուրբ Հոգու պարգևը: (Կարող եք բացատրել երեխաներին, որ թեև Ռոբերտան մկրտվել և հաստատվել է իր հոր կողմից, Մելքիսեդեկյան Քահանայության ցանկացած կրող կարող է կատարել այդ արարողությունները:)

Նրանից հետո, երբ Ռոբերտայի հայրը նրան օգնեց դուրս գալ ջրից, մայրը դիմավորեց նրան չոր հագուստը ձեռքին: Շուտով նրա թաց մազերը կոկիկ սանրվեցին և նա երջանիկ ժպտում էր:

Երբ Ռոբերտան պատրաստ էր, նա վերադարձավ իր ընտանիքի ու ընկերների մոտ, որոնք սպասում էին: Հայրիկի հետ միասին նա գնաց դեպի սենյակի դիմացի մասում գտնվող աթոռը:



Եպիսկոպոսը [ճյուղի նախագահը] խնդրեց այն տղամարդկանց, որոնց Ռոբերտան ընտրել է, գալ և կանգնել շրջանի մեջ: Ռոբերտան խնդրել էր իր հորը, պապիկին, քեռուն և տնային ուսուցիչներին: Բոլոր այդ տղամարդիկ Մելքիսեդեկյան Քահանայություն էին կրում:

Ռոբերտան խոնարհեց իր գլուխը և փակեց աչքերը: Տղամարդիկ իրենց ձեռքերը դրեցին նրա գլխին, իսկ հայրը, ասելով նրա անունը, հաստատեց նրան որպես Եկեղեցու անդամ, և տվեց Սուրբ Հոգու պարգևը:



Հաստատումից հետո Ռոբերտան սեղմեց շրջանի տղամարդկանց ձեռքերը և նրանք շնորհավորեցին Ռոբերտային: Ռոբերտան սքանչելի ջերմ զգացում ուներ իր ներսում, և գիտեր, որ ընտրել է ճիշտը:

Դաս
14

# Ճիշտն ընտրելու համարձակություն

**Նպատակ**

Օգնել երեխաներին հասկանալ, որ իրենք կարող են ընտրել ճիշտը, ինչպես անում էր Հիսուս Քրիստոսը, երբ Սատանան փորձում էր գայթակղել նրան:

**Նախապատրաստություն**

1. Աղոթքով ուսումնասիրեք Մաթևոս Դ.1–11:
2. Մի պարզ թագ պատրաստեք թղթից կամ նման որևէ նյութից, ինչպես ցույց է տրված ստորև.



3. Հաստ թղթի կամ ստվարաթղթի վրա կպցրեք կամ արտանկարեք «Ընտրիր Ճիշտը» խաղի տախտակը (ցույց է տրված դասի վերջում):
4. Առանձին թղթերի վրա գրեք խաղի հարցերը (էջեր 71–72) և դրեք դրանք մի փոքր պարկի կամ արկղի մեջ:
5. Ըստ ցանկության. Պատճենահանեք Երեց Փայնեգարի նամակը և դրեք դա ծրարի մեջ:
6. Պահանջվող նյութեր.
   ա. Աստվածաշունչ:
   բ. Մի քանի քար:
   գ. Երկու կոճակ կամ տարբեր ձևի կամ գույնի փոքր այլ առարկաներ, որոնք կարող են օգտագործվել որպես նշաններ «Ընտրիր Ճիշտը» խաղի ժամանակ:
   դ. ԸՃ նկարը (տե՛ս դաս 1):
   ե. Նկար 2-21, Երեց Ռեքս Դ. Փայնեգար, նկար 2-22, Հնում օգտագործվող տաճարը (Ավետարանի Արվեստի Նկարների Հավաքածո 118; 62300):
7. Անհրաժեշտ պատրաստություններ կատարեք այն լրացուցիչ վարժությունների համար, որոնք ցանկանում եք անցկացնել:

**Դասի առաջարկվող ընթացք**

Երեխաներից մեկին խնդրեք ասել բացիչ աղոթքը:

Եթե երեխաներին խնդրել եք շաբաթվա ընթացքում ինչ-որ բան կատարել, ստուգեք:

**Մենք ինքներս կարող ենք ընտրություն կատարել**

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Ցույց տվեք «Ընտրիր Ճիշտը» խաղատախտակը և երեխաներին խնդրեք ուշադիր լսել դասը, որպեսզի կարողանան պատասխանել խաղի հարցերին:

Քննարկում

• Երբևէ՞ որևէ մեկը ձեզ դրդել է անել ինչ-որ բան:

Երեխաներին թույլ տվեք պատմել այն մասին, երբ ինչ-որ մեկը իրենց դրդել է անել ինչ-որ բան:

Նամակ

Երեխաներին ասացեք, որ դուք մի նամակ ունեք իրենց համար Երեց Ռեքս Դ. Փայնեգարից, որը Եկեղեցու Բարձրագույն Իշխանություններից է: Բացատրեք, որ նա պատմում է իր փորձառության մասին, երբ դրդված է եղել անել մի բան յոթ տարեկան հասակում: Ցույց տվեք նկար 2-21, Երեց Ռեքս Դ. Փայնեգար, և կարդացեք կամ պատմեք նամակը: (Եթե պատճենահանել եք նամակը և դրել ծրարի մեջ, ապա կարդացեք դա, ոչ թե գրքից:)

«Իմ սիրելի ընկերներ,

«Չես կարող դա անել»՝ սրանք այն խոսքերն են, որ տղաներն ու աղջիկները հաճախ լսում են իրենց ընկերներից, որոնք ուզում են դրդել նրանց ինչ-որ բան անել, ապացուցելու համար որ քաջ, ուժեղ կամ համարձակ են: Նրանք կարող են ձեզ խնդրել անել այնպիսի բաներ, որոնք ձեր ծնողները կամ ուսուցիչները արգելել են, մի բան, որը դուք գիտեք, որ սխալ է: Ես սովորել եմ, որ երբ մենք անում ենք մի բան, որը մենք գիտեինք, որ սխալ էր, մենք ավելի շուտ ապացուցում ենք, որ թույլ ենք, քան ուժեղ: Մարդը կարող է ապացուցել, որ իսկապես քաջ և ուժեղ է միայն այն ժամանակ, երբ քաջություն ունի անելու ճիշտը:

Մի անգամ, երբ ես մոտ յոթ տարեկան էի, ես ունեի մի ընկեր, որին շատ էի սիրում: Մենք հաճախ դպրոցից միասին տուն էինք վերադառնում: . . . Մենք խոսում էինք քաջ լինելու և տարբեր բաներ կարողանալու մասին:

Երբեմն մենք միմյանց դրդում էինք ցատկել առվակի վրայով կամ ծառ մագլցել ապացուցելու համար, որ մենք քաջ ենք կամ որ կարող ենք անել այն բաները, որ անում են մեծ տղաներն ու աղջիկները:

Մի օր, երբ մենք եկանք մեր տուն, կանգնել էինք ճանապարհին և խոսում էինք այն մասին, թե ով է մեր դպրոցի ամենաարագ վազողը: . . . Երբ ես համառորեն պնդեցի, որ կարող եմ վազել ավելի արագ, քան ընկերս, նա շրջվեց դեպի ինձ և ասաց. «Եթե դու այդքան արագ ես, ապա կարո՞ղ ես վազելով անցնել փողոցը, մինչև մեքենայի գալը»:

Ես նայեցի փողոց և տեսա մեքենան, որն այնքան էլ հեռու չէր: Առանց որևէ ավելորդ խոսքի ես մղվեցի դեպի փողոց ապացուցելու համար, որ քաջ ու արագ եմ: Վայրկյան հետո լսվեց մեքենայի արգելակման ձայնը: Այն դիմացով հարվածեց ինձ և ես անգիտակից ընկա գետնին:

Երբ ես բացեցի աչքերս, ցավող մարմինս, վիրավորված հպարտությունս և մորս մտահոգված դեմքը ինձ հասկացնել տվեցին, որ ես ոչ արագ էի, ոչ էլ քաջ: Ես միայն հիմար էի: Ես տխրություն պատճառեցի ինձ և ուրիշներին: . . .

Դասը, որը ես սովորեցի, . . . արժեքավոր էր իմ ողջ կյանքի ընթացքում: Ես սովորեցի, որ միակ կոչը, որ մարդ պետք է ընդունի, դա «ՀԱՄԱՐՁԱԿՎԻՐ ԱՆԵԼ ՃԻՇՏԸ» կոչն է:

Եթե ձեզ դրդում են անել որևէ բան, որը ճիշտ չէ, մի բան, որ Երկնային Հայրն ու ձեր ծնողները չեին ցանկանա, որ դուք անեիք, դուք կմնաք տխուր և հիասթափության զգացումով: Երբ դուք դրդվում եք անել ճիշտը, դուք ձեր հանդեպ լավ զգացում կունենաք:

Ինչպես ընկերն ընկերոջը, ես ձեզ խրախուսում եմ լինել հնազանդ ձեր ծնողներին և Տիրոջ ուսմունքներին: . . . Դրդվելով անել ճիշտը, դուք կդառնաք Հիսուս Քրիստոսի ընկերը և կունենաք Նրա մեծագույն օրհնությունները:

Թող որ դուք միշտ ԴՐԴՎԵՔ ԱՆԵԼՈՒ ՃԻՇՏԸ:

Սիրով, ձեր ընկեր Ռեքս Դ. Փայնեգար» (“Friend to Friend,” *Friend,* Oct. 1974, pp. 10–11):

Քննարկում

- Ի՞նչ ընտրություն կատարեց երիտասարդ Ռեքս Փայնեգարը: (Սա որոշեց վազել մեքենայի դիմացով:)
- Արդյո՞ք նա ընտրեց ճիշտը:
- Ի՞նչ նա պետք է աներ:
- Ձեր կարծիքով, ի՞նչ նա սովորեց այդ պատահարից:
- Երբ որևէ մեկը ձեզ դրդում է ինչ-որ բան անել, արդյո՞ք դուք պետք է անեք դա:

Երեխաներին հիշեցրեք, որ Երեց Փայնեգարը նրանց ասաց «դրդվել անել ճիշտը»:

- Ի՞նչ է նշանակում դրդվել անել ճիշտը:

Բացատրեք, որ միշտ չէ, որ հեշտ է ընտրել ճիշտը, հատկապես, երբ ինչ-որ մեկը դրդում է ձեզ սխալ արարք կատարել: Մենք բոլորս ուզում ենք, որ մեր ընկերները մտածեն, որ մենք ուժեղ և քաջ ենք, և մենք չենք ուզում, որ նրանք անուններով մեզ կոչեն: Բացատրեք, որ դրդվել ճիշտ անելը նշանակում է անել ճիշտը, անգամ, եթե դա դժվար է:

ԸՃ մատանի

Երեխաներին խնդրեք նայել իրենց ԸՃ մատանիներին, եթե ունեն: Նշեք, որ մատանին նույնպես կարող է օգնել իրենց միշտ հիշել ընտրելու ճիշտը:

Ուսուցչի ելույթ

Երեխաներին ասացեք, որ ուրիշի դրդումով ինչ-որ սխալ բան անելը կոչվում է գայթակղություն: Երեխաներին խնդրեք մի քանի անգամ կրկնել *գայթակղություն* բառը: Բացատրեք, որ Սատանան փորձում է գայթակղել մարդկանց, որպեսզի նրանք սխալ ընտրություններ կատարեն: Երկնային Հայրն ու Հիսուս Քրիստոսը ուզում են, որ բոլորը ճիշտ ընտրություններ կատարեն, որովհետև նրանք գիտեն, որ երջանիկ լինելու միակ ճանապարհը միշտ ճիշտն ընտրելն է: Սատանան չի ուզում, որ մենք երջանիկ լինենք, և նա գիտի, որ սխալ ընտրությունները մեզ դժբախտ կդարձնեն:

**Սատանան ուզում էր, որ Հիսուս Քրիստոսը սխալ ընտրություններ կատարեր**

Պատմվածք սուրբ գրություններից

Պատմեք այն մասին, թե ինչպես էր Հիսուս Քրիստոսը փորձվում անապատում, ինչպես գրված է Մաթեոս Դ.1–11-ում: Բացատրեք, որ մկրտվելուց հետո Հիսուսը ուզում էր մենակ մնալ, որպեսզի ծոմ պահեր և աղոթեր Երկնային Հորն ավելի մոտ զգալու համար: Նա ծոմ պահեց քառասուն օր ու քառասուն գիշեր: Դա նշանակում է, որ ոչինչ չկերավ քառասուն օրերի ընթացքում:

- Ինչպե՞ս եք դուք ձեզ զգում, երբ երկար ժամանակ ոչինչ չեք ուտում:
- Ի՞նչ եք կարծում, ինչպես էր իրեն զգում Հիսուսը քառասուն օր ծոմ պահելուց հետո:

Բացատրեք, որ Սատանան մտածում էր, որ դա լավ ժամանակ է Հիսուսին գայթակղելու համար, քանի որ նա շատ սոված և թույլ էր չուտելու պատճառով: Սատանան փորձեց գայթակղել Հիսուսին սխալ օգտագործելու իր զորությունը:

Ցույց տվեք քարերը, թղթե թագը և նկար 2-22-ը, Հնում օգտագործվող տաճարը: Երեխաներին խնդրեք ուշադիր լսել, որպեսզի կարողանան իմանալ, թե ինչ առնչություն ունեն այդ բաները Հիսուսին Սատանայի կողմից առաջարկված գայթակղությունների հետ:

Ձեռքում պահեք քարերը: Բարձրաձայն կարդացեք Մաթեոս Դ.3: Բացատրեք, որ Սատանան սկզբում փորձեց Փրկչին համոզել քարերը հաց դարձնել: Հիսուսը գիտեր, որ ճիշտ չէ իր զորությունը դրա համար օգտագործել, թեև նա

շատ քաղցած էր: Դրա փոխարեն Նա Սատանային ասաց, որ հացն այդքան էլ կարևոր չէ, այլ կարևոր է ճիշտն ընտրելը (տե՛ս Մաթևոս Դ.4):

Ցույց տվեք նկար 2-22, Հնում օգտագործվող տաճարը: Բացատրեք, որ հետո Սատանան խնդրեց, որ թռնելով տաճարից ներքև, Փրկիչն ապացուցեր, որ Նա Աստծո Որդին էր: Սատանան Հիսուսին ասաց, որ, եթե Նա Իրեն ներքև գցեր և հրեշտակները փրկեին Նրան, ապա Նա կապացուցեր, որ Աստծո Որդին էր (տե՛ս Մաթևոս Դ.6): Հիսուսը հրաժարվեց անել այն, ինչին Սատանան դրդում էր Նրան: Նա գիտեր, որ ճիշտ չէր հիմար բաներ անել և ակնկալել, որ Երկնային Հայրը կպաշտպաներ Իրեն (տե՛ս Մաթևոս Դ.7):

Վերցրեք թագը: Բացատրեք, որ Սատնան մեկ այլ գայթակղություն առաջարկեց : Սատանան ասաց, որ Հիսուսը կարող է ունենալ աշխարհի բոլոր հարստություններն ու հզոր թագավորությունները, եթե պաշտի Սատանային (տե՛ս Մաթևոս Դ.8–9): Հիսուսը գիտեր, որ պետք է պաշտի միայն Երկնային Հորը: Նա Սատանային հրամայեց հեռանալ:

Սուրբ գրություն

Բարձրաձան կարդացեք Մաթևոս Դ.10, որտեղ տրված են Սատանային ուղղված Հիսուսի խոսքերը. «Դէն գնա, սատանա»: Երեխաներին խնդրեք կանգնել և կրկնել այս խոսքերը:

Բացատրեք, որ Հիսուսը միշտ ճիշտն էր ընտրում, որովհետև նա սիրում էր ճիշտը և խոստացել էր հնազանդվել Երկնային Հոր բոլոր պատվիրաններին:

**Մենք կարող ենք ընտրել ճիշտը, ինչպես անում էր Հիսուսը**

ԸՃ նկար

Ցուցադրեք ԸՃ նկարը և երեխաներին խնդրեք կրկնել նկարի վրայի խոսքերը: Բացատրեք, որ մենք նմանվում ենք Հիսուսին, երբ աշխատում ենք միշտ ճիշտ ընտրություններ կատարել: Երկնային Հայրը կօգնի մեզ, եթե մենք աշխատենք ընտրել ճիշտը:

Կրոնության խաղ

Երեխաներին օգնեք խաղալ «Ընտրիր ճիշտը» խաղը: Երեխաներին ասացեք, որ խաղը նրանց կօգնի հիշել, թե ինչպես էր Հիսուս Քրիստոսը միշտ ճիշտն ընտրում և ինչպես նրանք նույնպես կարող են ճիշտն ընտրել:

Դասարանը բաժանեք երկու խմբերի և յուրաքանչյուր խմբի տվեք կոճակ կամ մի փոքր առարկա: Թող խմբերը իրենց կոճակները դնեն խաղի տախտակի «Սկիզբ» վանդակի վրա: Յուրաքանչյուր խմբի երեխաներին խնդրեք հերթով ընտրել ձեր պատարստած թղթերի հարցերը (հարցերը կարող են օգտագործվել մեկ անգամից ավել): Կարդացեք յուրաքանչյուր հարցը և թույլ տվեք խմբի անդամներին միասին պատասխանել հարցին: Եթե նրանք ճիշտ պատասխանեն, նրանց կոճակը տեղափոխեք այնքան վանդակ հեռու, որքան նշված է հարցից հետո: Եթե հարցին պատասխանեն սխալ, ապա պետք է իրենց կոճակը թողնեն նույն տեղում:

Եթե խումբը հասնում է «ԸՃ» վանդակին, ապա բարձրանում է աստիճանով վերևի վանդակը: Եթե ընկնում է «ՍԸ» (սխալ ընտրություն) վանդակի վրա, ապա իջնում է ներքևի վանդակը:

*Հարցեր խաղի համար*

1. Ինչո՞ւ Ռեքս Փայնեգարը վազեց մեքենայի դիմացով: *(Առաջ գնացեք երկու վանդակ:)*
2. Երեց Փայնեգարը ուրա՞խ էր, թե տխուր, որ արեց այն, ինչին իրեն դրդեցին:*(Առաջ գնացեք մեկ վանդակ:)*
3. Քանի՞ օր Հիսուս Քրիստոսը ծոմ պահեց և աղոթեց անապատում: *(Առաջ գնացեք երկու վանդակ:)*

4. Ո՞վ էր փորձում գայթակղել Հիսուսին: *(Առաջ գնացեք երեք վանդակ:)*
5. Ի՞նչ է նշանակում ծոմ պահել: *(Առաջ գնացեք հինգ վանդակ:)*
6. Քանի՞ տարբեր ճանապարհներով Սատանան փորձեց Հիսուսին: *(Առաջ գնացեք երկու վանդակ:)*
7. Ի՞նչ էր Սատանան ուզում, որ Հիսուսն անի քարերի հետ: *(Առաջ գնացեք չորս վանդակ:)*
8. Ի՞նչ էր Սատանան ուզում, որ Հիսուսն անի տաճարի վերևից: *(Առաջ գնացեք երեք վանդակ:)*
9. Ի՞նչ Սատանան խոսք տվեց Հիսուսին, եթե նա ընկներ և երկրպագեր Իրեն: *(Առաջ գնացեք հինգ վանդակ:)*
10. Արդյո՞ք Հիսուսն արեց այն, ինչ Սատանան ուզում էր: *(Առաջ գնացեք երեք վանդակ:)*
11. Ի՞նչ են ուզում, որ մենք անենք Երկնային Հայրն ու Հիսուս Քրիստոսը, երբ ինչ-որ մեկը դրդում է մեզ անել սխալ կամ հիմար բան: *(Առաջ գնացեք հինգ վանդակ:)*
12. Ի՞նչ մենք պետք է անենք, երբ ընտրություն ունենք կատարելու: *(Առաջ գնացեք վեց վանդակ:)*
13. Ի՞նչ է գայթակղությունը: *(Առաջ գնացեք վեց վանդակ:)*
14. Մենք երջանի՞կ, թե դժբախտ կլինենք, եթե սխալ ընտրություններ կատարենք: *(Առաջ գնացեք մեկ վանդակ:)*
15. Երբ ինչ-որ մեկը ձեզ դրդում է մի բան կատարել, արդյո՞ք դուք պետք է անեք դա: *(Առաջ գնացեք մեկ վանդակ:)*

*Հարցերի պատասխանները*

1. Նա համաձայնվեց անել այն, ինչին նրա ընկերը դրդում էր իրեն:
2. Տխուր:
3. Քառասուն:
4. Սատանան:
5. Զուտել և չխմել ոչինչ:
6. Երեք
7. Դարձնել դրանք հաց:
8. Թռնել ապացուցելու համար, որ Նա Երկնային Հոր Որդին էր:
9. Աշխարհի բոլոր թագավորություններն ու զորությունը:
10. Ոչ:
11. Ընտրել ճիշտը:
12. Ընտրել ճիշտը:
13. Դրդել անել որևէ սխալ բան:
14. Դժբախտ:
15. Ոչ:

**Ամփոփում**

Ուսուցչի ելույթ

Բացատրեք, որ թեև Հիսուս Քրիստոսը փորձվում էր, Նա միշտ ճիշտն էր ընտրում: Երեխաներին հիշեցրեք, որ երբ նրանք ընտրություն կատարելու առաջ են կանգնում, ապա կարող են իրենց հարցնել. «Ի՞նչ կցանկանային Երկնային Հայրն ու Հիսուս Քրիստոսը, որ ես անեի»: Նրանք կարող են նաև նայել իրենց ԸՃ մատանիներին: Այս բաները նրանց կհիշեցնեն, որ ճիշտն ընտրեն:

ԸՃ նկար

Երեխաներին խնդրեք նորից արտասանել ԸՃ նկարի խոսքերը:

Վկայություն

Երեխաներին վկայեք, որ ճիշտն ընտրելը իրենց երջանիկ կդարձնի: Կարող եք նրանց պատմել այն ժամանակների մասին, երբ ինչ-որ մեկը ձեզ դրդել է հիմար ընտրություն կատարել: Բացատրեք ձեր կատարած ընտրությունը և այն, թե ինչպես էիք դուք ձեզ զգում դրանից հետո:

Երեխաներին խնդրեք ընտրել ճիշտը, երբ որևէ մեկը իրենց դրդում է ինչ-որ սխալ բան կատարել:

Երեխաներից մեկին հրավիրեք ասել փակիչ աղոթքը:

---

**Լրացուցիչ վարժություններ**

Հետևյալ վարժություններից ընտրեք նրանք, որոնք լավագույնս կհամապատասխանեն ձեր դասարանի երեխաներին: Դուք կարող եք դրանք օգտագործել դասի ընթացքում, որպես դասի վերանայում կամ ամփոփում: Լրացուցիչ ուղղության համար տե՛ս «Դասաժամ» «Օգնություն ուսուցչին» բաժինները:

1. Երեխաներին խնդրեք արտասանել հետևյալ բառերը կամ արտասանեք դրանք նրանց համար, կատարելով ստորև նշված շարժումները.

   Ես ցույց եմ տալիս, որ ճիշտն եմ ընտրում, ասելով ճշմարտությունը *(ծափ տվեք և պտտվեք ձեր շուրջը):*
   Ես ցույց եմ տալիս, որ ճիշտն եմ ընտրում, ասելով ճշմարտությունը *(ծափ տվեք և պտտվեք ձեր շուրջը):*
   Ես գիտեմ Փրկչի ուղին, այն երևում է իմ խոսքերում,
   Ես ցույց եմ տալիս, որ ճիշտն եմ ընտրում, ասելով ճշմարտությունը *(ծափ տվեք և պտտվեք ձեր շուրջը):*

   Կարող եք երգել կամ արտասանել երգը մի քանի անգամ, փոխարինելով «ասելով ճշմարտությունը» որևէ այլ արտահայտությամբ, օրինակ, «բարի լինելով», կամ «աղոթելով»:

2. Երեխաներին օգնեք ցույց տալ, թե ինչպես կարող են դրդվել անել ճիշտը այն իրավիճակներում, երբ ընտրություն ունեն: Օգտվեք ստորև տրված իրավիճակներից կամ մտածեք ինքներդ.

   ա. Ձեր ընկերը ձեզ դրդում է խանութից կոնֆետ գողանալ:

   բ. Ձեր դասարանի մյուս երեխաները ծաղրում են նոր տղային իր հագած զգեստի համար:

   գ. Ձեր փոքրիկ քույրիկը կոտրում է ձեր սիրած խաղալիքը:

   դ. Ձեր մայրը ձեզ խնդրել է մի քանի գործ կատարել իր համար այն ժամանակ, երբ ձեր ընկերը ձեր դռան մոտ է և խնդրում է ձեզ դուրս գալ խաղալու:

   ե. Ձեր ընկերները ձեզ դրդում են վազել մեքենաներով լի փողոցը, բերելու համար գնդակը, որով խաղում են:

   զ. Մի անծանոթ մարդ ձեզ կոնֆետ է հյուրասիրում:

3. Ցույց տվեք նկար 2-38, Առաջին Տեսիլքը, և համառոտ պատմեք Առաջին Տեսիլքի պատմությունը, ինչպես տրվում է Ջոզեֆ Սմիթ – Պատմություն 1.14–20-ում: Բացատրեք, որ երբ Ջոզեֆ Սմիթը մարդկանց ասաց, որ տեսել է Երկնային Հորն ու Հիսուս Քրիստոսին, շատ մարդիկ չհավատացին նրան: Նրանք ծաղրեցին նրան և անուններով կոչեցին: Նրանք ուզում էին, որ նա ասեր, որ տեսիլքը իրական չէր (տե՛ս ՋՍ – Պ 1.21–26): Սակայն Ջոզեֆ Սմիթը ընտրեց ճիշտը, նա արեց այն, ինչ ուզում էին Երկնային Հայրն ու Հիսուս Քրիստոսը:

4. Յուրաքանչյուր երեխայի տվեք ԸՃ վահանակի նկարի մեկական օրինակ (տրված է ձեռնարկի սկզբում) և մատիտներ: Թող երեխաները գունավորեն իրենց վահանակները: Երեխաներին բացատրեք, որ ճիշտն անելը նման է վահանի, որը պաշտպանում է նրանց հիմար որոշումների հետևանքներից: Երեխաներին խնդրեք իրենց վահանները դնել տանը այնպիսի տեղում, որտեղ դրանք կարող են երեխաներին հիշեցնել ճիշտն ընտրելու մասին:

# Ընտրիր ճիշտը



Դաս
15

# Եկ, հետևիր ինձ

**Նպատակ**

Ամրացնել Հիսուս Քրիստոսին հետևելու յուրաքանչյուր երեխայի ցանկությունը:

**Նախապատրաստություն**

1. Աղոթքով ուսումնասիրեք Մաթևոս Դ.18–22, Ղուկաս Ե.1–11 և Հովհաննես ԺԴ.15, ԺԵ.17:
2. Պատրաստեք երեք փաթեթ մեծ թղթե ոտնահետքեր: Դրանց վրա գրեք.
   ա. Եկ/ հետևիր ինձ
   բ. Պահիր/Իմ պատվիրանները
   գ. Սիրեք / Միմյանց




3. Պահանջվող նյութեր.
   ա. Աստվածաշունչ:
   բ. ԸՃ նկար (տե՛ս դաս 1):
   գ. Երկու թուղթ և մատիտ յուրաքանչյուր երեխայի համար:
   դ. Նկար 2-23, Իր հոր ոտնահետքերով հետևող երեխան; նկար 2-24, Կանչ ձկնորսներին (Gospel Art Picture Kit 209; 62496):
4. Անհրաժեշտ պատրաստություններ կատարեք այն լրացուցիչ վարժությունների համար, որոնք ցանկանում եք անցկացնել:

**Դասի առաջարկվող ընթացք**

Երեխաներից մեկին խնդրեք ասել բացիչ աղոթքը:

Եթե երեխաներին խնդրել եք շաբաթվա ընթացքում ինչ-որ բան կատարել, ստուգեք:

**Հիսուս Քրիստոսը ցանկանում է, որպեսզի մենք հետևենք Իրեն**

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Երեխաներին թույլ տվեք խաղալ «Հետևիր ղեկավարին» խաղը: Երեխաներին խնդրեք մի շարքով կանգնել սենյակի մի կողմում: Շարքի առաջին երեխան վազում է, ցատկում է կամ կատարում որևէ այլ գործողություն շարժվելով դեպի սենյակի մյուս կողմը: Մյուս երեխաները հետևում են առաջին երեխային և անում այն, ինչ նա է անում: Ապա առաջին երեխան գնում է շարքի վերջը և երկրորդ երեխան է դառնում ղեկավար: Շարունակեք, մինչև որ բոլոր երեխաները ղեկավար լինեն:

Երեխաներին ասացեք, որ այսօրվա դասում իրենք կսովորեն Հիսուս Քրիստոսին հետևելու մասին:

Պատմվածք

Ցույց տվեք նկար 2-23, Իր հոր ոտնահետքերով հետևող երեխան, և ձեր խոսքերով պատմեք հետևյալ պատմությունը (եթե ձեր դասարանի երեխաները չգիտեն, թե ինչ է ձյունը, կարող եք պատմությունը հարմարեցնել ձեր կլիմայական պայմաններին և միջավայրին).

Սեմը դուրս եկավ օգնելու հորը ցախ հավաքել օջախի համար: Ձմեռ էր և ձյունը շատ խորն էր: Սեմը և նրա հայրը յուրաքանչյուրը վերցրեցին մեկ ձեռք ցախ և գնացին տուն: Սեմի համար շատ դժվար էր քայլել խորը ձյան մեջ այդ ծանր բեռով: Հայրը Սեմին ասաց, որ նա քայլի ձյան վրա թողած իր ոտնահետքերով: Շատ ավելի հեշտ էր Սեմի համար քայլել հոր ոտնահետքերով:

- Ինչո՞ւ Սեմը գնաց հոր ոտնահետքերով:
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ էր Սեմի համար ավելի հեշտ քայլել ձյան մեջ, երբ գնում էր հոր ոտնահետքերով:

Պատմվածք սուրբ գրություններից

Ցույց տվեք նկար 2-24, Կանչ ձկնորսներին: Պատմեք Մաթևոս Դ.18–22-ի և Ղուկաս Ե.1–11-ի պատմությունը: Բացատրեք, որ երբ Հիսուս Քրիստոսը երկրի վրա էր, նա մի քանի մարդկանց կանչեց լինելու Իր աշակերտները, կամ օգնականները:

Պատմելիս, բարձրաձայն կարդացեք Մաթևոս Դ.19, երբ դրա ժամանակը գա: Բացատրեք, որ «Ես ձեզ կդարձնեմ մարդկանց որսորդներ» արտահայտությամբ, Հիսուսը ցանկանում էր ասել, որ այդ մարդիկ կօգնեն Իրեն սովորեցնել մարդկանց:

- Ինչո՞ւ այդ ձկնորսները հետևեցին Հիսուսին:
- Ի՞նչ դուք կանեիք, եթե Հիսուսը ձեզ խնդրեր հետևել իրեն և լինել իր աշակերտը:

Քննարկում

Համեմատեք իր աշակերտներին կանչող Հիսուս Քրիստոսի պատմությունը Սեմի ու նրա հոր պատմության հետ: Ինչպես Սեմի հայրը խնդրեց նրան հետևել իրեն, Հիսուսը խնդրում է մեզ բոլորիս հետևել իրեն: Սեմի հայրը գիտեր, որ Սեմի համար ավելի հեշտ կլիներ քայլել, հետևելով իր ոտնահետքերով: Փրկիչը գիտի, որ մեր կյանքն ավելի հեշտ կլինի և մենք ավելի երջանիկ կլինենք, եթե հետևենք իրեն:

- Ի՞նչ է նշանակում հետևել Հիսուսին:
- Ինչո՞ւ է կյանքը մեզ համար ավելի հեշտ, երբ մենք հետևում ենք Հիսուսին:

Երգ

Արտասանեք «Եկ, հետևիր ինձ» երգի առաջին քառատողը:

«Եկ, հետևիր ինձ», - Փրկիչն ասաց,
Եկեք նրա հետքով ընթանանք,
Քանզի այսպես մենք մեկ կլինենք,
Մեր Աստծո հետ, միածին Որդու:

Բացատրեք, որ մենք կարող ենք հետևել Հիսուսին, ձգտելով նմանվել նրան և պահելով նրա պատվիրանները: Երբ մենք սովորում ենք նրա ուղիները և անում այն, ինչ նա մեզ խնդրում է, որ անենք, ապա մենք հետևում ենք նրա ոտնահետքերով:

Ոտնահետքերով վարժություն

Ցույց տվեք երկու ոտնահետքերը «Եկ» և«Հետևիր ինձ» գրվածքներով: Երեխաների համար կարդացեք այդ բառերը: Երեխաներին խնդրեք մի քանի անգամ կրկնել այդ արտահայտությունը:

Տեղադրեք ԸՃ նկարը սենյակի դիմացի մասում: Երեխաներից մեկին խնդրեք ոտնահետքերը դնել սենյակի մյուս մասում հատակի վրա: (Դասի ընթացքում, երբ բոլոր ոտնահետքերը կլինեն հատակին, դրանք պետք է այնպես դրվեն, որ մի ուղի կազմեն, որով երեխան կարող է գնալ դեպի ԸՃ նկարի վրա պատկերված Փրկչի նկարը:)

## Հիսուսն ուզում է, որ մենք պահենք պատվիրանները

Սուրբ գրության քննարկում

Բացատրեք, որ Հիսուս Քրիստոսին հետևել նշանակում է պատրաստ լինել անել այն, ինչ նա ուզում է, որ անենք: Երեխաներին խնդրեք լսել, մինչ դուք կարդում եք այն բաների մասին, ինչ Հիսուսն ուզում է, որ մենք անենք:

Բարձրաձայն կարդացեք Հովհաննես ԺԴ.15: Բացատրեք, որ սրանք Հիսուսի խոսքերն են: Երեխաներին խնդրեք ձեզ հետ կրկնել սուրբ գրությունը:

- Ի՞նչ ասաց Հիսուսը, մենք պետք է անենք:
- Ի՞նչ է նշանակում պահել Հիսուսի պատվիրանները:

Ոտնահետքերով վարժություն

Ցույց տվեք «Պահիր» և «Իմ պատվիրանները» խոսքերով ոտնահետքերը և երեխաներին խնդրեք կրկնել այդ արտահայտությունը: Երեխաներից մեկին խնդրեք այդ ոտնահետքերը դնել առաջին ոտնահետքերի դիմաց, դրանցից մի փոքր հեռավորության վրա: (Ոտնահետքերը պետք է իրար բավական մոտ լինեն, որպեսզի երեխան կարողանա մեկից անցնի մյուսը:)

Քննարկում

Երեխաներին նկարագրեք մի քանի իրավիճակներ, որոնցում նրանք կարող են հետևել Հիսուսին: Երեխաներին խնդրեք հերթով բացատրել, թե ինչ կանեին յուրաքանչյուր իրավիճակում: Օգտվեք ստորև տրված օրինակներից, կամ մտածեք ձեր դասարանի համար ավելի հարմար իրավիճակների մասին.

1. Դուք խաղ եք անում դպրոցում, և գտնում եք դրամապանակ, որի մեջ փող կա:
   - Ինչպե՞ս դուք կհետևեք Հիսուսին:
2. Դուք պատրաստվում եք գնալ քնելու, բայց այնքան հոգնած եք, որ անմիջապես ուզում եք քնել:
   - Ինչպե՞ս դուք կհետևեք Հիսուսին անկողին մտնելուց առաջ:
3. Ձեր մայրը ձեզ խնդրել է հետևել ձեր փոքրիկ քույրիկին, որ նա չվազի փողոց: Ձեր ընկերները ձեզ կանչում են խաղալու:
   - Ինչպե՞ս դուք կհետևեք Հիսուսին:
4. Ձեր դպրոց մի նոր տղա է եկել, իսկ մի քանի երեխա ծաղրում են նրան:
   - Ինչպե՞ս դուք կհետևեք Հիսուսին:
5. Ձեր ընկերները ձեզ հրավիրել են այցելել իրենց բարեկամներին, սակայն նրանք չեն վերադառնալու այն ժամանակ, երբ դուք պետք է գնաք եկեղեցի:
   - Ինչպե՞ս դուք կհետևեք Հիսուսին:

Երեխաներին խնդրեք նկարագրել այլ իրավիճակներ, որոնցում նրանք կընտրեին հետևել Հիսուսին: Շեշտեք, որ երբ մենք հետևում ենք Հիսուսին, անելով այն, ինչ նա կուզեր, ապա մենք ընտրում ենք ճիշտը:

## Հիսուսն ուզում է, որ մենք սիրենք միմյանց

Սուրբ գրություն

Երեխաներին օգնելու համար գտնել Հիսուսի ոտնահետքերով հետևելու այլ եղանակներ, բարձրաձայն կարդացեք Հովհաննես ԺԵ.17: Բացատրեք, որ սրանք Հիսուսի խոսքերն են: Երեխաներին խնդրեք ձեզ հետ միասին կրկնել այդ սուրբ գրությունը:

- Ո՞ւմ է Հիսուսն ուզում, որ մենք սիրենք:

Ոտնահետքերով վարժություն

Ցույց տվեք «Սիրեք» և «միմյանց» խոսքերով ոտնահետքերը և երեխաներին խնդրեք կրկնել այդ արտահայտությունը: Երեխաներից մեկին խնդրեք այդ ոտնահետքերը դնել ինչպես նախորդ անգամ:

Պատմվածք

Պատմեք կամ կարդացեք հետևյալ պատմությունը այն մասին, թե ինչպես Հեբեր անունով մի երիտասարդ հետևեց Հիսուս Քրիստոսին.

Հեբերը մրսում էր և փաթաթվեց իր բարակ վերարկուի մեջ: Շուտով նրա ծնունդն էր և ամենաշատը նա տաք վերարկու էր ուզում: Բայց նա գիտեր, որ մայրիկը կտխրեր, եթե նա խնդրեր վերարկու, քանի որ մայրիկը չէր կարող գնել այն: Հեբերի հայրը մահացել էր, երբ նա դեռ փոքր երեխա էր, և Հեբերի մայրը շատ էր աշխատում անհրաժեշտ դրամ վաստակելու համար: Նա հաճախ մինչև ուշ գիշեր ուրիշ մարդկանց համար հագուստ էր կարում:

Հեբերի ծննդյան օրը մայրիկը նրան շնորհավորեց և մի սքանչելի վերարկու նվիրեց, որը կարել էր նրա համար: Հեբերը չէր համբերում, որ հագներ այն դրսում և զգար, թե որքան տաք այն կլիներ:

Մի քանի շաբաթ գործի ժամանակ Հեբերը տեսավ մի տղայի, որը միայն վերնազգեստ էր հագել: Հեբերը գիտեր, թե որքան ցուրտ պետք է որ լիներ նրա համար: Գրեթե առանց մտածելու Հեբերը տարավ իր վերարկուն և տվեց տղային:

Երբ Հեբերի մայրը տեսավ, որ նա իր հին վերարկուն է հագնում, նա հարցրեց, թե ինչ է պատահել նոր վերարկուի հետ:

Հեբերը բացատրեց. «Ես տեսա մի տղայի և նա դրա կարիքն ավելի շատ ուներ, քան ես, և ես այն տվեցի նրան»:

Նրա մայրը հարցրեց. «Իսկ չէի՞ր կարող նրան քո հինը տալ»:

Հեբերը նայեց իր մորը, հուսալով, որ նա կհասկանա, և տեսավ արցունքներով լի նրա աչքերը: Նա ամուր գրկեց Հեբերին և ասաց. «Իհարկե, չէիր կարող, Հեբեր»: (See Lucile C. Reading, “The Coat,” *Children’s Friend,* Nov. 1966, p. 5.)

- Ինչպե՞ս Հեբերը հետևեց Հիսուս Քրիստոսին:

Երեխաներին ասացեք, որ այդ պատմության տղան Հեբեր Ջ. Գրանտն էր, որը մեծանալով դարձավ Եկեղեցու յոթերորդ Նախագահը:

Քննարկում

Երեխաներին խնդրեք մտածել, թե ինչ ճանապարհներով կարող են ցույց տալ ուրիշների հանդեպ իրենց սերը: Կարող եք օգտագործել այնպիսի հարցեր, ինչպիսիք տրված են ստորև, նրանց մտքեր տալու համար.

- Երբ դուք տեսնում եք, թե ինչպես է մեկն ընկնում և վնասվում, ինչպե՞ս կարող եք սեր ցույց տալ:
- Երբ դպրոցում ինչ որ մեկը նախաճաշ չունի, ի՞նչ դուք կարող եք անել սեր ցույց տալու համար:

Բացատրեք, որ ուրիշներին սիրելը ավելին է, քան զգացում կամ խոսքեր ունենալը: Մենք ցույց ենք տալիս մեր սերը նրանով, ինչ անում ենք: Երեխաներին հրավիրեք պատմել, թե ինչպես են նրանք ցույց տվել իրենց սերը ուրիշ մարդկանց հանդեպ անցած շաբաթվա ընթացքում:

### Մենք կընտրենք ճիշտը և կհետևենք Հիսուս Քրիստոսին

Ոտնահետքերով վարժություն

Յուրաքանչյուր երեխայի տվեք հնարավորություն մի ոտնահետքից մյուսին անցնելու և ապա կանգնելու ԸՃ նկարի վրա պատկերված Հիսուսի նկարի մոտ: Յուրաքանչյուր երեխայի խնդրեք ասել որևէ բան, որը նա կանի հաջորդ շաբաթվա ընթացքում Հիսուսին հետևելու համար:

Երեխաներին հիշեցրեք, որ մենք հետևում ենք Հիսուս Քրիստոսին, երբ ընտրում ենք ճիշտը: Ցույց տվեք ԸՃ նկարը և երեխաներին խնդրեք կրկնել. «Ես կընտրեմ ճիշտը»:

**Ամփոփում**

Վարժություն

Յուրաքանչյուր երեխայի տվեք երկու հատ թուղթ և մատիտ: Երեխաներին խնդրեք նկարել մի զույգ ոտնահետքեր, ուրվագծելով իրենց կոշիկները: Նրանց թղթերի վերևի մասում գրեք կամ նրանց խնդրեք գրել *Ես կհետևեմ Հիսուս Քրիստոսին:* Թող երեխաները իրենց ոտնահետքերը տանեն տուն, որպեսզի հիշեն Հիսուսին հետևելու իրենց պարտավորվածության մասին:

Վկայություն

Երեխաներին ասացեք, թե ինչպես է Հիսուսին հետևելը ձեզ երջանիկ դարձրել: Վկայեք, որ եթե մենք հետևենք նրան, Հիսուսը մեզ կտանի հետ մեր Երկնային Հոր հետ կրկին ապրելու:

Երեխաներին խրախուսեք միշտ աշխատել հետևել Հիսուսի ոտնահետքերով: Առաջարկեք, որպեսզի նրանք թղթե ոտնահետքերը քննարկեն իրենց ծնողների հետ:

Երեխաներից մեկին հրավիրեք ասել փակիչ աղոթքը: Առաջարկեք, որպեսզի նա խնդրի Երկնային Հորը օգնել երեխաներին հետևել Հիսուս Քրիստոսին և ընտրել ճիշտը:

---

**Լրացուցիչ վարժություններ**

Հետևյալ վարժություններից ընտրեք նրանք, որոնք լավագույնս կհամապատասխանեն ձեր դասարանի երեխաներին: Դուք կարող եք դրանք օգտագործել դասի ընթացքում, որպես դասի վերանայում կամ ամփոփում: Լրացուցիչ ուղղության համար տե՛ս «Դասաժամ» «Օգնություն ուսուցչին» բաժինները:

1. Բացատրեք երեխաներին, որ դուք պատրաստվում եք մի գործողություն կատարել (օրինակ, ծափահարել, հորանջել կամ տեղում քայլել): Նրանց խնդրեք կրկնել ձեր գործողությունը: Արեք դա մեկ անգամ, ապա ավելացրեք մեկ գործողություն և երեխաներին խնդրեք կրկնել երկու գործողությունները: Շարունակեք ավելացնել նոր գործողություններ: Տեսեք, թե որքանը երեխաները կարող են հիշել ճիշտ հերթականությամբ:

   Սա նմանեցրեք Փրկչին հետևելուն: Մենք պետք է աշխատենք հետևել նրա օրինակին ոչ թե միայն մեկ բանում, այլ ամեն ինչում, ինչ մենք անում ենք:

2. Պատրաստեք թղթե տիկնիկներից շղթա դասարանի յուրաքանչյուր անդամի համար: (Ավելի մեծ երեխաները կարող են իրենք պատրաստել իրենց շղթաները:) Թղթի մի կտոր ծալեք ակորդեոնի նման: Ծալված մասերում տիկնիկ նկարեք (տե՛ս ստորև տրված նկարը) և կտրեք տիկնիկը: Շղթա պատրաստեք յուրաքանչյուր երեխայի համար և շղթաների ներքևի մասում գրեք *Սիրեք միմյանց*: Բացատրեք, որ միմյանց սիրելը ամենակարևոր բաներից է, որ Հիսուսը խնդրել է մեզ անել:



3. Արտասանեք «Պահիր պատվիրանները» երգի առաջին քառատողը:

Պահիր պատվիրանները

Պահիր պատվիրանները,
Պահիր պատվիրանները:
Դրանցում է ապահովությունը,
Դրանցում է խաղաղությունը:
Սա կուղարկի օրհնությունները,
Սա կուղարկի օրհնությունները:
Մարգարեի խոսքերը.
Պահիր պատվիրանները,
Դրացնում են ապահովությունն ու խաղաղությունը:

Դաս
16

# Հիսուս Քրիստոսը բժշկելու զորություն ունի

**Նպատակ**

Օգնել յուրաքանչյուր երեխայի հասկանալ, որ Հիսուս Քրիստոսը բժշկելու զորություն ունի և որ քահանայության օրհնությունները կարող են բուժել հիվանդներին:

**Նախապատրաստություն**

1. Աղոթքով ուսումնասիրեք Մաթեոս Թ.18–19, 23–26; Մարկոս Ե.22–24, 35–43; Ղուկաս Ը.41–42, 49–56; Հակոբոս Ե.14–15; և Վարդապետություն և Ուխտեր 42.48:
2. Բազմացրեք դասի վերջում գտնվող նկարը և կտրատեք այն մասերի: Այդ նկարները կօգտագործվեն «Ո՞վ եմ ես» վարժության ժամանակ:
3. Պահանջվող նյութեր.
   ա. Աստվածաշունչ և Վարդապետություն և Ուխտեր:
   բ. Առաջին օգնության պարագաներ, օրինակ, կապոցներ, վիրակապեր, հազի դեղ:
   գ. Սրբագործված յուղի փոքր անոթ:
   դ. Նկար 2-25, Հիսուսը օրհնում է Հայրոսի դստերը (Ավետարանի Արվեստի Նկարների Հավաքածո 215; 62231); նկար 2-26, Հիսուսը բուժում է հիվանդներին; նկար 2-27, Ծառայություն հիվանդներին (62342):
4. Անհրաժեշտ պատրաստություններ կատարեք այն լրացուցիչ վարժությունների համար, որոնք ցանկանում եք անցկացնել:

**Դասի առաջարկվող ընթացք**

Երեխաներից մեկին խնդրեք ասել բացիչ աղոթքը:

Եթե երեխաներին խնդրել եք շաբաթվա ընթացքում ինչ-որ բան կատարել, ստուգեք:

**Մենք երբեմն հիվանդանում ենք**

Ուշադրություն կենտրոնացնող վարժություն

Երեխաներին ցույց տվեք առաջին օգնության պարագաները և բացատրեք, որ դրանք օգնում են մեզ բուժվել, երբ մենք հիվանդ ենք կամ վնասվածք ենք ստացել: Երեխաներին հուշում տվեք յուրաքանչյուր պարագայի վերաբերյալ, ապա խնդրեք կռահել, թե ինչ է այն (օրինակ, «Այն օգնում է ախտահանել վերքերն ու կտրվածքները, ոչնչացնելով մանրեներն ու կեղտը »):

Ամեն անգամ, երբ երեխաները կկռահեն, թե ինչի մասին է խոսքը, ցույց տվեք դա նրանց և համառոտ պատմեք, թե ինչպես է այն օգտագործվում մարդկանց բուժելու համար: Երեխաներին հիշեցրեք, որ առանց ծնողների օգնության դրանք չօգտագործեն:

Ուսուցչի ելույթ

Բացատրեք, որ գրեթե ամեն մեկը հիվանդանում կամ վիրավորվում է: Երբեմն վերքերը կամ հիվանդությունները թույլ են լինում և մեր ծնողները կարողանում են հաղթահարել դրանք, սակայն կան ժամանակներ, որ մեր հիվանդությունները լուրջ են լինում, և ծնողները տանում են մեզ բժշկի:

Բացատրեք, որ կա մեկ այլ ճանապարհ հիվանդության ժամանակ օգնություն ստանալու համար: Երբ Հիսուս Քրիստոսը երկրի վրա էր, նա օրհնեց և բժշկեց շատ մարդկանց: Նրանց բուժելու համար նա օգտագործում էր քահանայության զորությունը:

### Հիսուս Քրիստոսը բուժում էր հիվանդներին

Պատմվածք սուրբ գրություններից

Ցուցադրեք նկար 2-25, Հիսուսը օրհնում է Հայրոսի դստերը, և պատմեք Հայրոսի դստերը վերակենդանացնելու մասին պատմությունը, ինչպես տրված է Ղուկաս Ը.41–42, 49–56-ում (տե՛ս նաև Մաթեոս Թ.18–19, 23–26 և Մարկոս Ե.22–24, 35–43):

Բացատրեք, որ Հայրոսը մեծ հավատք ուներ: Նա հավատում էր, որ, եթե Հիսուսը գա և օրհնի իր հիվանդ աղջկան, աղջիկը կլավանա: Երբ Հիսուսը մոտեցավ Հայրոսի տանը, բազմաթիվ մարդիկ հավաքվել էին նրա շուրջ, խնդրելով, որ օգնի իրենց: Երբ Հիսուսը օգնում էր մի հիվանդ կնոջ, Հայրոսի տնից մի մարդ եկավ, Հայրոսի համար նորություն բերելով:

Բարձրաձայն կարդացեք Ղուկաս Ը.49–50:

- Ի՞նչ ասաց լրաբերը Հայրոսին: (Տե՛ս Ղուկաս Ը.49:)
- Ի՞նչ ասաց Հայրոսին Հիսուսը: (Տե՛ս Ղուկաս Ը.50:)

Բացատրեք, որ երբ Հիսուսը եկավ Հայրոսի տուն, նա մարդկանց ասաց լաց չլինել, քանի որ աղջիկը մահացած չէր: Սակայն մարդիկ ծիծաղեցին Հիսուսի վրա և ծաղրեցին նրան, որովհետև կարծում էին, որ աղջիկը մահացած էր (տե՛ս Ղուկաս Ը.52–53):

Հիսուսն արձակեց բոլոր մարդկանց, բացի իր աշակերտներ Պետրոսից, Հակոբոսից ու Հովհաննեսից, ինչպես նաև Հայրոսից ու նրա կնոջից: Ապա Հիսուսը բռնեց աղջկա ձեռքն ու ասաց, որ վեր կենա: Աղջիկը վեր կացավ անկողնուց, ամբողջովին լավացած:

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ Հիսուսն արձակեց բոլորին, բացի Պետրոսից, Հակոբոսից, Հովհաննեսից և աղջկա ծնողներից: (Հավանաբար որովհետև մյուս մարդիկ ծիծաղում էին նրա վրա և չէին հավատում, որ նա կբուժի աղջկան: Նրանք հավատք չունեին:)
- Ինչո՞ւ Հիսուսը կարողացավ բուժել Հայրոսի դստերը: (Նա ուներ քահանություն; աղջկա ծնողներն ունեին հավատք:)

Ուսուցչի ելույթ

Ցուցադրեք նկար 2-26, Հիսուսը բուժում է հիվանդներին, և երեխաներին խնդրեք պատկերացնել, թե ինչպես իրենց կզգային, եթե Հիսուսը գար իրենց օրհնելու իրենց հիվանդության ժամանակ: Շեշտեք, որ Հիսուսը սիրում է նրանցից յուրաքանչյուրին, ինչպես սիրում էր այն երեխաներին, որոնք ապրում էին երկրի վրա այն ժամանակ, երբ Նա նույնպես երկրի վրա էր: Թեև այսօր նա երկրի վրա չէ, նա արդար մարդկանց տվել է քահանայություն և իր փոխարեն գործելու իշխանություն: Նրանք մեզ կարող են բուժման օրհնություններ տալ, ճիշտ այնպես, ինչպես կտար Հիսուսը, եթե լիներ այստեղ:

### Քահանայություն կրող տղամարդիկ կարող են ծառայել մեզ

Քննարկում

Ցուցադրեք նկար 2-27, Ծառայություն հիվանդներին:

- Ի՞նչ է տեղի ունենում այս նկարի վրա:

Բացատրեք, որ Մելքիսեդեկյան քահանայություն կրող տղամարդիկ օրհնություն են տալիս հիվանդ մարդուն: Սա մենք կոչում ենք ծառայություն հիվանդներին: Երեխաներին խնդրեք մի քանի անգամ կրկնել *ծառայել* բառը:

Երեխաներին ցույց տվեք սրբագործված յուղով անոթը: Բացատրեք, որ այս յուղը հատուկ օրհնվել է քահանայություն կրող մարդկանց կողմից: Երբ որևէ մեկը հիվանդ է և օգնության կարիք ունի, Մելքիսեդեկյան Քահանայություն կրող երկու տղամարդ օգտագործում են յուղը հիվանդ մարդուն օրհնություն տալու համար (տե՛ս Հակոբոս Ե.14–15):

- Ձեզ երբևէ տվե՞լ են նման օրհնություն:

Երեխաներին թույլ տվեք պատմել այն բոլոր քահանայության օրհնությունների մասին, որոնք նրանք ստացել են կամ ներկա են եղել, երբ ընտանիքի անդամներն են ստացել: Երեխաներին կարող եք պատմել, ինչպես են քահանայություն կրողները ծառայել ձեզ կամ ձեր ընտանիքի անդամներից մեկին:

Պատմվածք

Պատմեք մի պատմություն որևէ մեկի մասին, ով քահանայության օրհնության շնորհիվ ապաքինվել է: Առավել տպավորիչ կլինի իրական պատմությունը ձեր կամ որևէ մեկի մասին, որին երեխաները ճանաչում են, օրինակ ծխի կամ ճյուղի անդամներից մեկի մասին: Եթե նման պատմություն չգիտեք, կարող եք օգտագործել ստորև տրված պատմվածքը.

Երբ Ջեսիկան դպրոցից տուն վերադարձավ, հայրը նրան դիմավորեց դռան մոտ և ասաց, որ այդ առավոտ ծնվեց նրա փոքր եղբայրը: Մանուկը ժամանակից շուտ էր ծնվել և շատ փոքրիկ ու թույլ էր: Բժիշկն ասաց, որ մանուկը կարող է ապրել միայն մի քանի ժամ:

Ջեսիկան տեսնում էր, թե որքան մտահոգված էր իր հայրը: Ջեսիկան շատ տխուր էր, որովհետև ուզում էր, որ մանուկն ապրեր:

Ջեսիկայի հայրը զանգահարեց իրենց տնային ուսուցիչներից մեկին, որը կօգներ նրան մանկանը օրհնություն տալ: Երբ տնային ուսուցիչը եկավ, նրանք գնացին ննջասենյակ, որտեղ Ջեսիկայի մայրն ու նորածին եղբայրն էին: Ջեսիկայի հայրն ու տնային ուսուցիչը զգուշորեն դրեցին իրենց ձեռքերը նորածնի փոքրիկ գլխին և Ջեսիկայի հայրը օրհնեց նրան, որ ապրի ու կատարի երկրի վրա իր միսիան: Ջերմ ու խաղաղ զգացում պատեց Ջեսիկային: Նա գիտեր, որ քահանայության զորությամբ իր փոքրիկ եղբայրը կմեծանա և կամրանա: (Վերցված է “Moments to Remember,” *Children’s Friend,* Feb. 1963, p. 41:)

Ուսուցչի ելույթ

Բացատրեք, որ Երկնային Հայրն ու Հիսուսը սիրում են յուրաքանչյուր մարդուն, որ բուժում է խնդրում, սակայն երբեմն մարդիկ չեն բուժվում, անգամ երբ օրհնվում են: Ոմանք չեն ապաքինվում, որովհետև Երկնային Հայրը գիտի, որ նրանք ավելի ամուր կլինեն, եթե սովորեն ապրել իրենց հիվանդությամբ կամ հաշմանդամ լինելով: Մյուսները չեն բուժվում, որովհետև եկել է նրանց ժամանակը մահանալու և վերադառնալու Երկնային Հոր մոտ (տե՛ս ՎԿՈ 42.48): Մենք պետք է հավատանք, որ Երկնային Հայրը գիտի յուրաքանչյուր աղոթքի լավագույն պատասխանը:

Վարժություն

Մի քանի երեխաների խնդրեք առաջ գալ և պահել նկարները «Ո՞վ եմ ես» վարժության համար: Երեխաներին խնդրեք ասել, թե ինչ է պատկերված նկարների վրա:

Բացատրեք, որ դուք կկարդաք հիվանդներին ծառայելու մեջ ընդգրկված իրերի ու մարդկանց որոշակի նկարագիրներ: Թող երեխաներն ասեն, թե որ նկարն է համապատասխանում յուրաքանչյուր նկարագրին:

1. Ինձ օգտագործում են, երբ հիվանդ մարդուն օրհնություն են տալիս: Քահանայություն կրողը իմ մի քանի կաթիլներից կաթեցնում է հիվանդի գլխին: Ի՞նչ եմ ես: (Սրբագործված յուղ:)

2. Ես ցույց տվեցի մարդկանց, ինչպես պետք է ապրել: Ինձ հավատալը մարդկանց օգնում է հաղթահարել հիվանդությունը: Ո՞վ եմ ես: (Հիսուս Քրիստոսը:)

3. Ես հատուկ օրհնության կարիք ունեմ: Ես ջերմություն ունեմ: Ես խնդրեցի իմ հայրիկին օրհնություն տալ ինձ, որ ավելի լավ ինձ զգամ: Ո՞վ եմ ես: (Հիվանդ երեխա:)
4. Ինձ հատուկ զորություն է տրված, որը կոչվում է քահանայություն: Ես կարող եմ օգտագործել այդ զորությունը մարդկանց օրհնություններ տալու համար: Ո՞վ եմ ես: (Մելքիսեդեկյան Քահանայություն կրող մարդ:)
5. Երբ հիվանդը օրհնություն է խնդրում, կանչում են մարդկանց, ովքեր կրում են Մելքիսեդեկյան Քահանայություն: Սովորաբար, մասնակցում են որոշակի թվով մարդիկ: Ես այդ թիվն եմ: Ո՞ր թիվն եմ ես: (Թիվ 2:)
6. Երբ քահանայություն կրող մարդիկ օրհնում են հիվանդին, նրանք ինձ դնում են հիվանդի գլխին: Ի՞նչ եմ ես: (Ձեռքեր:)

**Ամփոփում**

Կրկնություն

Նորից ցույց տվեք առաջին օգնության պարագաները:

- Ինչի՞ համար են օգտագործվում այդ պարագաները:
- Ի՞նչը ևս կարող է մեզ օգնել բուժվել, երբ հիվանդ կամ վիրավոր ենք:

Վկայություն

Բերեք ձեր վկայությունը Հիսուս Քրիստոսի բարիության և բուժելու նրա զորության մասին: Երեխաներին ասացեք, թե որքան շնորհակալ եք, որ Հիսուսը արդար մարդկանց Մելքիսեդեկյան Քահանայություն է տվել, որպեսզի նրանք կարողանան օրհնել մեզ, երբ հիվանդ ենք:

Երեխաներին խնդրեք մտածել այն մասին, թե ինչպես կարող են կիսվել իրենց սովորածով իրենց ընտանիքների հետ: Երեխաներին խրախուսեք իրենց ընտանիքներին պատմել Հայրոսի դստերը Փրկչի կողմից բուժելու պատմությունը:

Երեխաներից մեկին հրավիրեք ասել փակիչ աղոթքը:

---

**Լրացուցիչ վարժություններ**

Հետևյալ վարժություններից ընտրեք նրանք, որոնք լավագույնս կհամապատասխանեն ձեր դասարանի երեխաներին: Դուք կարող եք դրանք օգտագործել դասի ընթացքում, որպես դասի վերանայում կամ ամփոփում: Լրացուցիչ ուղղության համար տե՛ս «Դասաժամ» «Օգնություն ուսուցչին» բաժինները:

1. Գրատախտակին տպատառ գրեք *Մենք հավատում ենք բուժման պարգևին* և բացատրեք, որ Ջոզեֆ Սմիթն այս մեծ ճշմարտությունը մեզ տվել է հավատո յոթերորդ հանգանակում: Երեխաներին խնդրեք կանգնել և կրկնել այդ նախադասությունը: Նրանց օգնեք մտապահել այն, ջնջելով ամեն անգամ մեկ-երկու բառ: Երեխաներին խնդրեք շարունակել կրկնել նախադասությունը, մինչև որ ամբողջովին կսովորեն:
2. Արտասանեք «Հավատք» երգի առաջին քառյակը, կատարելով ստորև նշված շարժումները: Երեխաներին հիշեցրեք, որ հավատքը կարևոր է բուժման համար:

   Հավատքն այն է, երբ գիտես, որ արևը կծագի *(գլխի վերևում ձեռքերով շրջան կազմեք),*
   Ամեն նոր օր կլուսավորի *(ձեռքերը դանդաղ իջեցրեք ուսերի մակարդակին):*
   Հավատքն այն է, երբ գիտես, որ Տերը կլսի *(ձեռքը մոտեցրեք ականջին)*
   Իմ աղոթքները ցանկացած պահի *(ձեռքերը միացրեք, ինչպես աղոթելիս):*

Հավատքը նման է փոքր սերմի *( մի ձեռքով ձևացրեք, թե սերմ եք ցանում մյուս ձեռքի մեջ):*
Եթե ցանվի, ապա կաճի *(աջ ձեռքով ցույց տվեք, թե սերմ է աճում ձախ ձեռքի մեջ):*
Հավատքը ջերմություն է իմ սրտում *(ձեռքերը դրեք գլխի վերևում):*
Որը զգում եմ *(ցուցամատը վեր բարձրացրեք),*
Երբ ճիշտ եմ գործում *(ցուցամատով դիպչեք գլխին):*

3. Պատմեք պատմությունն այն մասին, ինչպես է Հիսուս Քրստոսը բուժում Նեփիացիներին, ինչպես տրված է 3 Նեփի 17.5–9-ում: Հնարավորության դեպքում, օգտագործեք նկար 317 Ավետարանի Արվեստի Նկարների Հավաքածոյից (կամ 62541 հավաքատան գրադարանում): Երեխաներին խնդրեք դիպչել իրենց մարմնի այն մասերին, որոնք Հիսուսը բուժեց, օրինակ աչքերը, ականջները և ոտքերը: Երեխաների հետ խոսեք այն մասին, թե որքան հիանալի պետք է որ զգային իրենց Նեփիացիները, երբ Հիսուսը բուժեց նրանց: Բարձրաձայն կարդացեք հատված 8-ի վերջին մասը (սկսած *քանզի ես տեսնում եմ*) և երեխաներին հիշեցրեք, որ կարևոր է հավատք ունենալ Հիսուս Քրիստոսի հանդեպ:

4. Յուրաքանչյուր երեխայի համար պատրաստեք դասի վերջում տրված նկարների մեկ օրինակ: Երեխաներին մատիտներ բաժանեք և խնդրեք գունավորել նկարները: Նրանց խրախուսեք օգտագործել այդ նկարները իրենց ընտանիքներին պատմելու, թե ինչպես կարող են հիվանդ մարդիկ օրհնվել քահանայության օրհնություններով միջոցով:







Դաս
17

# Քահանայությունը օգնում է ինձ

**Նպատակ**

Օգնել յուրաքանչյուր երեխայի հասկանալ, թե ինչպես կարող է քահանայությունը օգնել մեզ:

**Նախապատրաստություն**

1. Աղոթքով ուսումնասիրեք Մարկոս Դ.35–41: Տե՛ս նաև *Ավետարանի Սկզբունքներ* (31110), գլուխ 13:
2. Պատրաստվեք արտասանել «Վարդապետ, փոթորիկ է»: Պատրաստվեք նաև երեխաներին բացատրել դժվար բառերը:
3. Պահանջվող նյութեր.
   ա. Աստվածաշունչ:
   բ. Լապտեր կամ փոքր լամպ: Եթե հնարավոր չէ, օգտվեք ձեր դասարանի լույսից:
   գ. Նկար 2-20, Մկրտվող տղան (62018); նկար 2-27, Ծառայություն հիվանդին (62342); նկար 2-28, Փոթորկի հանդարտեցում (Ավետարանի Արվեստի Նկարների Հավաքածո 214; 62139); նկար 2-29, Հաղորդության բաժանում (62021); նկար 2-30, Հաստատվող աղջիկը (62020); նկար 2-31, Մանկան օրհնություն; նկար 2-32, Նորապսակները Տաճարի դիմաց; նկար 2-33, Հայրն օրհնում է իր դստերը:
4. Անհրաժեշտ պատրաստություններ կատարեք այն լրացուցիչ վարժությունների համար, որոնք ցանկանում եք անցկացնել:

*Նկատառում.* Ուշադիր եղեք ձեր դասարանի այն երեխաների զգացմունքների հանդեպ, որոնք հայրեր չունեն կամ որոնց հայրերը քահանայություն չեն կրում:

**Դասի առաջարկվող ընթացք**

Երեխաներից մեկին խնդրեք ասել բացիչ աղոթքը:

Եթե երեխաներին խնդրել եք շաբաթվա ընթացքում ինչ-որ բան կատարել, ստուգեք:

**Քահանայությունը մեծագույն զորությունն է**

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Լապտերի կամ փոքր մի լամպի օգնությամբ ցուցադրեք *զորություն* բառի իմաստը: Քննարկումը սկսեք անջատած լամպով: Նշեք, թե թեև բոլոր մասերը կարծես տեղում են, լամպը չի լուսավորում:

- Ի՞նչ պետք է տեղի ունենա, որպեսզի լամպը աշխատի:

Երեխաներից մեկին թույլ տվեք ցույց տալ, թե ինչ է տեղի ունենում, երբ լամպը միացնում են: Բացատրեք, որ լույս տալու համար լամպը պետք է էլեկտրական հոսանք ունենա:

Պատմվածք սուրբ գրություններից

Երեխաներին ասացեք, որ այս դասը զորության մեկ այլ տեսակի մասին է, զորության, որն էլեկտրականությունից ուժեղ է: Երեխաներին հրավիրեք լսել հետևյալ պատմությունը և մտածել, թե ինչ տեսակի զորություն է օգտագործվում: Պատմեք Մարկոս Դ.35–41-ի պատմվածքը:

- Ինչպե՞ս ձեզ կզգայիք, եթե լինեիք նավի վրա այդ վատ փոթորկի ժամանակ:

Բացատրեք, որ աշակերտները արթնացրեցին Հիսուս Քրիստոսին, որովհետև վախեցան փոթորկից: Բարձրաձայն կարդացեք այն մասին, ինչ աշակերտները խնդրեցին Հիսուսին Մարկոս Դ.38–ում (սկսած *Վարդապետ* բառից): Աշակերտները վախեցած էին, որ փոթորիկը կխորտակի իրենց նավը և նրանք բոլորը կզոհվեն:

Ցույց տվեք նկար 2-28, Փոթորկի հանդարտեցում, և բարձրաձայն կարդացեք Մարկոս Դ.39 իմանալու համար, թե ինչ արեց Հիսուսը: Երեխաներին խնդրեք կրկնել Հիսուսի բառերը. «Լռիր, պապանձվիր»:

Բացատրեք, որ աշակերտները զարմացած էին, երբ փոթորիկն այդքան արագ հանդարտվեց: Բարձրաձայն կարդացեք Մարկոս Դ.41, որտեղ նրանք միմյանց հարցնում են. «Սա ո՞վ է արդյոք. որ քամին էլ ծովն էլ հնազանդվում են սորան»:Հիսուսի աշակերտները զարմացել էին, որ նա զորություն ուներ կառավարելու քամիներն ու ալիքները:

Երգ

Արտասանեք «Վարդապետ, փոթորիկ է» երգի առաջին քառյակն ու կրկներգը: Սկսելուց առաջ երեխաներին ասացեք, որ սա այն պատմության մասին է, որը հենց նոր լսեցին: Նրանց խնդրեք ուշադրություն դարձնել կրկներգում Հիսուսի խոսքերին («Լռիր, պապանձվիր»): (Այս երգի բառերը կարող են անհասկանալի լինել տարիքով փոքր երեխաների համար, սակայն Հոգին կօգնի նրանց հասկանալ երգի իմաստը: Առավել դժվար բառերը կարող եք բացատրել երեխաներին:)

Կարող եք երեխաներին օգնել լուռ բեմականացնել տարբեր գործողությունները, մինչ դուք արտասանում եք խոսքերը: Նրանք կարող են հետ ու առաջ շարժվել, կարծես ալիքների վրա նավակի մեջ են, ձեռքերով ալիքների շարժումներ կատարեն, արտահայտեն աշակերտների վախն իրենց դեմքերին, և այլն:

Վարդապետ, փոթորիկ է մոլեգնում:
Ամպերը վար են իջնում,
Երկնքում խավար է տիրում,
Ոչ մի փրկություն չի երևում:
Արդյո՞ք մենք պետք է զոհվենք,
Ինչպե՞ս դու կարող ես քնել,
Երբ ամեն պահ վտանգ է սպառնում
Մահվան խոր անդունդն է երևում:

*Կրկներգ.*
Ալիքն ու քամին պետք է ենթարկվեն քո կամքին.
Լռիր, պապանձվիր, լռիր, պապանձվիր:
Լինի դա փոթորկոտ աղմուկը ծովի,
Թե գոռոցը մարդու կամ զայրացած դևի,
Ջուրը չի կարող կլանել նավը այն,
Որտեղ Տերն է օվկիանոսի, երկնքի ու երկրի:
Դրանք պետք է ենթարկվեն Իր կամքին.
Լռիր, պապանձվիր, լռիր, պապանձվիր:
Դրանք պետք է ենթարկվեն Իր կամքին
Լռիր, պապանձվիր, լռիր, պապանձվիր:

- Ի՞նչ մեծ զորություն ուներ Հիսուս Քրիստոսը, որը նրան թույլ տվեց հանդարտեցնել փոթորիկը: (Քահանայության զորությունը, որը Երկնային Հոր անունով գործելու զորություն է:)

Երեխաներին խնդրեք բարձրաձայն արտասանել *քահանայություն* բառը:

## Քահանայության շնորհիվ մենք կարող ենք օրհնվել

Ուսուցչի ելույթ

Բացատրեք, որ Եկեղեցում շատ մարդիկ ունեն նույն զորությունը: Երկնային Հայրն ու Հիսուս Քրիստոսը քահանայություն են տվել Եկեղեցու արժանի մարդկանց: Երբ այս մարդիկ ղեկավարվում են Երկնային Հոր կողմից, նրանք կարող են օգտագործել քահանայությունը մեզ օգնելու և օրհնելու համար:

- Ո՞ւմ եք դուք ճանաչում, ով քահանայություն է կրում:

Քննարկում նկարի շուրջ

Հերթով ցույց տվեք քահանայության արարողությունները պատկերող նկարները: Երեխաներին թույլ տվեք բռնել կամ մատնանշել նկարները, և օգնեք նրանց ասել, թե ինչ է տեղի ունենում յուրաքանչյուր նկարի վրա: Շեշտեք, որ այդ բոլոր բաներն արվում են քահանայություն կրող մարդկանց կողմից: Երեխաներին թույլ տվեք պատմել իրենց այն փորձառությունների մասին, որոնք ունեցել են այդ արարողությունների ժամանակ:

Ցույց տվեք նկար 2-27, Ծառայություն հիվանդին: Երեխաներին հիշեցրեք այն մասին, ինչ նրանք սովորել են դաս 16-ում հիվանդներին ծառայելու մասին: Երեխաներին հիշեցրեք, որ քահանայություն կրող մարդիկ կարող են օրհնություններ տալ հիվանդ մարդկանց և օգնել նրանց լավանալ:

- Ձեզ երբևէ ծառայե՞լ են, երբ հիվանդ եք եղել:

Ցույց տվեք նկար 2-29, Հաղորդության բաժանումը: Բացատրեք, որ Ահարոնյան Քահանայության քահանաները կամ Մելքիսեդեկյան Քահանայություն կրող մարդիկ օրհնում են հաղորդությունը, իսկ Ահարոնյան Քահանայության սարկավագները բաժանում են հաղորդությունը: Երեխաներին թույլ տվեք պատմել իրենց ընտանիքի մեծահասակների կամ ընկերների մասին, որոնք օգնում են հաղորդության ժամանակ:

Ցույց տվեք նկար 2-20, Մկրտվող տղան: Երեխաներին հիշեցրեք, որ մենք բոլորս մկրտվում ենք այն տղամարդու կողմից, որը քահանայություն է կրում, ինչպես Հիսուս Քրիստոսը: Հովհաննես Մկրտիչը քահանայություն էր կրում, այսպիսով նա կարող էր մկրտել Հիսուսին:

- Ձեզանից որևէ մեկը երբևէ ներկա եղե՞լ է մկրտությանը: (Եթե կան արդեն մկրտված երեխաներ, նրանց կարող եք խնդրել պատմել իրենց մկրտության մասին:)

Ցույց տվեք նկար 2-30, Հաստատվող աղջիկը: Երեխաներին հիշեցրեք, որ մկրտվելուց հետո Մելքիսեդեկյան Քահանայություն կրողները մեզ բոլորիս հաստատում են որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ: Այդ ժամանակ քահանայության զորությամբ մեզ նաև տրվում է Սուրբ Հոգու պարգևը:

Ցույց տվեք նկար 2-31, Մանկան օրհնումը: Երեխաներին ասացեք, որ Եկեղեցու մանուկները կարող են քահանայության օրհնություն ստանալ, երբ անվանակոչվում են: Երեխաներին խնդրեք պատմել այն մանկան մասին, որին իրենք ճանաչում են և որն այդ ձևով վերջերս օրհնություն է ստացել: (Եթե երեխաներից ոմանք մտահոգվեն, որ մանուկ հասակում չեն օրհնվել, նրանց հավաստիացրեք, որ քահանայության օրհնություններ ստանալու շատ այլ հնարավորություններ կունենան:)

Ցույց տվեք նկար 2-32, Նորապսակ զույգը Տաճարի դիմաց: Բացատրեք, որ երբ երեխաները մեծանում են, նրանք կարող են գնալ տաճար ամուսնանալու: Այն մարդիկ, որոնք կրում են քահանայության կնքման զորությունը, տաճարում ամուսնացնում են արդար զույգերին: Տաճարային ամուսնությունը ընտանիքին հնարավորություն է տալիս հավերժ միասին ապրել:

Պատմվածք

Երեխաներին ասացեք, որ նրանք կարող են ստանալ քահանայության օրհնություն, երբ խնդիր են ունենում: Ցույց տվեք նկար 2-33, Հայրը օրհնում է իր դստերը, ապա պատմեք մի պատմություն մի աղջկա մասին, որը օրհնվեց քահանայության կողմից, երբ խնդիր ուներ: Կարող եք օգտագործել հետևյալ պատմությունը.

Սյուզաննան պատրաստվում էր առաջին անգամ դպրոց գնալ: Նա շատ ոգևորված էր դպրոց գնալու առիթով, սակայն երբ առաջին օրը վերջապես եկավ, նա վախեցավ:

Ողջ առավոտ Սյուզաննան լուռ էր: Մայրը նրա սիրած նախաճաշը պատրաստեց, սակայն Սյուզաննան չժպտաց այն տեսնելով: Նա փորձեց ուտել, սակայն չկարողացավ:

Սյուզաննան մայրիկին ասաց, որ վատ է իրեն զգում: Մայրիկը դիպչեց նրա ճակատին, ստուգելու, արդյոք չունի բարձր ջերմություն: Նա նայեց կոկորդը, սակայն այն կարմիր չէր: Սյուզաննայի մայրիկը նրան հարցրեց, թե ինչն է վատ: Սյուզաննան ասաց, որ ներսում տարօրինակ է զգում:

Սյուզաննայի հայրն ասաց, որ նա հավանաբար, ներսում տարօրինակ է զգում, որովհետև առաջին անգամ դպրոց է գնալու: Նա մի փոքր վախենում է, որ ամբողջ օրը տանից հեռու կլինի և չգիտի, թե ինչ կպատահի իր հետ: Սյուզաննայի հայրը բացատրեց, որ նա նույն զգացումն ուներ, երբ սկսում էր նոր աշխատանքը:

Սյուզաննայի հայրն առաջարկեց դպրոց գնալուց առաջ օրհնություն տալ նրան:

Օրհնությունը կօգներ հեռացնել Սյուզաննայի մոտ վախ առաջացնող տարօրինակ զգացումը: Սյուզաննայի հայրը ձեռքերը դրեց նրա գլխին և հատուկ օրհնություն տվեց:

Երբ այդ օրը Սյուզաննան եկավ տուն, նա երջանիկ էր: Մայրիկին նա ասաց, որ սիրեց դպրոցը և որ ուսուցչուհին շատ լավն էր: Սյուզաննան ուրախ էր, որ հայրն իրեն հատուկ օրհնություն տվեց՝ օգնելու ավելի լավ զգալ դպրոցում:

Բացատրեք, որ այս տեսակի օրհնությունը հաճախ կոչվում է հայրական օրհնություն: Եթե մեր հայրերը չեն կարող մեզ օրհնություն տալ, ապա մենք կարող ենք խնդրել Մելքիսեդեկյան Քահանայություն կրող այլ մարդկանց, օրինակ մեր տնային ուսուցիչներին, ընտանիքի այլ անդամներին, եպիսկոպոսին կամ ճյուղի նախագահին, օրհնություն տալ մեզ, երբ մեզ այն անհրաժեշտ է:

**Ամփոփում**

Նկարների կրկնություն

- Ե՞րբ մենք կարող ենք քահանայության օրհնության կարիք ունենալ կամ պարզապես ցանկանալ ստանալ այն:

Երբ երեխաները թվարկում են յուրաքանչյուր արարողությունը, ցուցադրեք համապատասխան նկարը: Երեխաներին խնդրեք միասին բարձրաձայն արտասանել յուրաքանչյուր արարողության կամ օրհնության անվանումը: Նշեք, որ դրանք միայն մի քանիսն են այն ամենից, ինչ քահանայության զորությունը կարող է անել մեզ համար:

Վկայություն

Բերեք ձեր վկայությունը այն մասին, թե որքան երախտապարտ եք, որ մենք մեր կյանքում որպես օգնություն ունենք քահանայություն, այն նույն զորությունը, որն ուներ Հիսուսը:

Երեխաներին քաջալերեք կարիքի դեպքում քահանայության օրհնություն խնդրել իրենց հայրերից (կամ Մելքիսեդեկյան Քահանայության այլ կրողից):

Երեխաներից մեկին խնդրեք ասել փակիչ աղոթքը: Երեխային խնդրեք շնորհակալություն հայտնել քահանայության օրհնությունների համար:

**Լրացուցիչ վարժություններ**

Հետևյալ վարժություններից ընտրեք նրանք, որոնք լավագույնս կհամապատասխանեն ձեր դասարանի երեխաներին: Դուք կարող եք դրանք օգտագործել դասի ընթացքում, որպես դասի վերանայում կամ ամփոփում: Լրացուցիչ ուղղության համար տե՛ս «Դասաժամ» «Օգնություն ուսուցչին» բաժինները:

1. Երեխաների խմբի ձեր նախագահի թույլտվությամբ երեխաներից մեկի ծնողին հրավիրեք դասարան պատմելու համար երեխայի անվանակոչման և օրհնության մասին: Ծնողին խնդրեք պատմել, թե ինչպես են իրենց այդ ժամանակ զգում ծնողները, ինչ գեղեցիկ են հագցնում երեխային, որքան հաճելի է, երբ ներկա են լինում տնային ուսուցիչները, ընտանիքի անդամները և մոտ ընկերները: Ծնողին խնդրեք նաև պատմել, թե ինչպես է իրեն զգում հայրը, կարողանալով օգտագործել քահանայության զորությունը երեխային անուն և օրհնություն տալու համար:
2. Երեխաներին խնդրեք դերերով կատարել Մարկոս Դ.35–41 պատմությունը:
3. Երեխաներին թուղթ ու մատիտներ բաժանեք, և խնդրեք նկարել քահանայության որևէ արարողություն, օրինակ հաղորդության բաժանում: Յուրաքանչյուր երեխայի նկարի վրա գրեք համապատասխան արարողության անվանումը:
4. Արտասանեք քահանայության մասին հետևյալ երգերից մեկը կամ մի քանիսը. «Քահանայությունը վերականգնվեց», «Հաղորդությունն ընդունելուց առաջ» և «Ուզում եմ տեսնել տաճարը»:

Քահանայությունը վերականգնվեց

Քահանայությունը վերականգնվեց,
Ճշմարտությունը մարդուն տրվեց,
Տերը երկրի հետ խոսեց,
Իր զորությունը կրկին պարգևեց:

Հաղորդությունն ընդունելուց առաջ

Հաղորդությունն ընդունելուց առաջ ես լուռ եմ,
Գիտեմ, որ Հիսուսն երկիր եկավ և ինձ համար զոհվեց:

Մտածում եմ այն երեխաների մասին, ում Հիսուսը ճանաչում էր,
Այն օրերին, երբ այս երկրի վրա հին օրերին քայլում էր:

Վերցնում եմ ջուրն ու հացը և աշխատում եմ լինել նման
Երեխաներին, որոնց Հիսուսը սիրում էր Գալիլեայում:

Ուզում եմ տեսնել տաճարը

Ուզում եմ տեսնել տաճարը,
Մի օր այնտեղ կգնամ,
Որ Հոգին Սուրբ զգամ
Լսեմ և աղոթեմ:
Քանզի այն Աստծո տունն է,
Սիրո և հրաշքի վայր:
Փոքրուց պիտ պատրաստվեմ
Սուրբ պարտքն իմ կատարեմ:

Ուզում եմ տեսնել տաճարը,
Մի օր ես ներս կմտնեմ:
Իմ Հոր հետ ուխտ կկապեմ,
Որ միշտ հնազանդվեմ:
Տաճարը վայր է սուրբ
Որտեղ կնքվում ենք միասին
Ընտանիքները հավերժ,
Գիտեմ դա ես, քանզի,
Աստծո զավակն եմ ես:

(© 1980 by Janice Kapp Perry. Used by permission.)

Դաս
18

# Աղոթքները միշտ պատասխանվում են լավագույն ձևով

**Նպատակ**

Օգնել յուրաքանչյուր երեխայի հասկանալ, որ Երկնային Հայրը միշտ լսում է մեր աղոթքները և պատասխանում դրանց լավագույն ձևով:

**Նախապատրաստություն**

1. Աղոթքով ուսումնասիրեք Ղուկաս Ա.5–17: Տե՛ս նաև *Ավետարանի Սկզբունքները* (31110), գլուխ 8:
2. Պատրաստվեք կիսվել ձեր անձնական փորձառություններով այն պահերի մասին, երբ Երկնային Հայրը օգնել է ձեզ ի պատասխան ձեր աղոթքին:
3. Պահանջվող նյութեր.
   ա. Աստվածաշունչ:
   բ. Նկար 2-34, Հովհաննես Մկրտիչի անվանակոչումը:
4. Անհրաժեշտ պատրաստություններ կատարեք այն լրացուցիչ վարժությունների համար, որոնք ցանկանում եք անցկացնել:

**Դասի առաջարկվող ընթացք**

Երեխաներից մեկին խնդրեք ասել բացիչ աղոթքը:

Եթե երեխաներին խնդրել եք շաբաթվա ընթացքում ինչ-որ բան կատարել, ստուգեք:

**Մենք կարող ենք աղոթել օգնության համար**

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

- Ինչո՞ւ մենք պետք է հնազանդվենք մեր ծնողներին և Երկնային Հորը: (Որովհետև նրանք մեզ կարող են օգնել անել այն, ինչ մեզ համար լավագույնն է:)

Պատմվածք

Պատմեք հետևյալ պատմվածքը.

Մերեդիթը գիշերը վատ երազ տեսավ: Երազում նա կորել էր և շատ վախեցած էր: Երբ արթնացավ, նա սկսեց լաց լինել:

- Ի՞նչ դուք կանեիք, եթե լինեիք Մերեդիթը:

Մերեդիթը կանչեց հայրիկին, որն եկավ ու գրկեց նրան: Մերեդիթը իրեն ավելի լավ զգաց և շուտով նորից քնեց:

- Ինչո՞ւ Մերեդիթը կանչեց հայրիկին: (Նա օգնության կարիք ուներ և գիտեր, որ հայրը կօգնի իրեն:)
- Ո՞ւմ եք դուք կանչում, երբ օգնության կարիք եք ունենում: (Հնարավոր պատասխաններ. Երկնային Հայր, ծնողներ, ընտանիքի այլ անդամներ և ընկերներ:)
- Ինչպե՞ս ենք մենք կանչում Երկնային Հորը և օգնություն խնդրում: (Աղոթքով:)

**Պատմվածք**

Երեխաներին պատմեք հետևյալ պատմվածքը Ջոն Ա. Վիդստոուի մասին, որը մեծանալով դարձավ Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ.

Ջոնի հայրը մահացել էր, երբ նա դեռ փոքր էր, և Ջոնի մայրը շատ էր աշխատում իր երեխաներին պահելու համար: Ջոնն ուզում էր աշխատանք գտնել նրան օգնելու համար: Հեշտ չէր այնպիսի աշխատանք գտնել, որը նա կարող էր կատարել դպրոցից հետո, սակայն վերջապես նա գտավ այդպիսի մի աշխատանք: Մի օր այն մարդը, որի համար նա աշխատում էր, ասաց նրան, որ մի քանի շաբաթ նա լավ է աշխատել և տվեց հինգ-դոլարանոց ոսկե դրամ:

Ջոնն ասաց. «Հինգ դոլար: Դա իսկապես գումար էր: Ես երկնքում էի: Ես կեսը կտայի մայրիկին, կգնեի նոր գիրք, իսկ մնացածը կպահեի: Նոր ու փայլուն ոսկին գնաց տաբատիս գրպանը, և ես վազեցի մայրիկիս իմ հաջողության մասին պատմելու:

Տան ճանապարհին ես ձեռքս տարա գրպանս, որպեսզի զգամ . . . փողը: Այն այնտեղ չէր: Ես նորից շոշափեցի ողջ գրպանս: Ոսկե կտորն այնտեղ չէր: Դրա փոխարեն ես գրպանիս մեջ անցք հայտնաբերեցի, որի միջով մետաղադրամը ընկել էր: Դա ահավոր էր: Ես այնքան վշտացած էի, որ նստեցի առվի մոտ ու լաց եղա»:

Ջոնը իր ճանապարհով վերադարձավ հետ, փնտրելով ոսկե դրամը: Մայթը տախտակներից էր հավաքված և նա զննեց բոլոր տախտակների ճեղքերը: Սակայն նա չէր կարողանում գտնել դրամը: Վերջապես նա որոշեց, որ մի գուցե դրամը կորել է բարի նպատակով:

Վարժություն (ըստ ցանկության)

Երեխաներին խնդրեք պատկերացնել, թե իրենք Ջոնի նման փնտրում են կորած մետաղադրամը: Թող նրանք մի քանի վայրկյան դանդաղ շրջեն սենյակով, կարծես փնտրում են այն: Ապա նրանց խնդրեք վերադառնալ իրենց տեղերը:

- Եթե դուք լինեիք Ջոնը, ի՞նչ կանեիք դրանից հետո:

**Պատմվածքի շարունակությունը**

Ջոնն ասաց. «Այդ ժամանակ ես հիշեցի, որ Տերը գիտի, թե որտեղ է ոսկին, և եթե նա ցանկանար ինձ օգներ գտնել այն, ապա շատ երկար չէի փնտրի:

Եվ ես ծնկի իջա մի մեծ ծառի ետևում և Տիրոջը պատմեցի իմ բոլոր մտահոգությունների մասին, խնդրելով, որ օգնի գտնել այն, եթե համարում է, որ դա լավ է ինձ համար: Երբ ես վեր կացա, ինձ շատ ավելի լավ էի զգում: Ես համոզված էի, որ Տերը լսել էր աղոթքս:

Արդեն մթնում էր: Գետնի վրա արդեն հնարավոր չէր հստակ տեսնել որևէ առարկա, հատկապես ոսկու մի փոքր կտոր: Սակայն ես քայլեցի, այս անգամ ոչ այդքան դանդաղ, քանի որ գիտեի, որ Տերն օգնում է ինձ: Երկրորդ փողոցը անցնելուց հետո ճանապարհի կեսին խոտի մեջ ընկած էր իմ հինգ դոլարանոց ոսկին: . . . Ես գրեթե գոչեցի ուրախությունից: Որքան ուրախ կլիներ իմ մայրիկը, և որքան մեծ հաճույք ես կստանայի իմ նոր գրքից: Ես հենվեցի ցանկապատին և ասացի. «Շնորհակալ եմ, Ով Աստված, որ գտար իմ դրամը»:

Այդ ժամանակից ի վեր ես գիտեմ, որ Տերը լսում է աղոթքները: Եվ այդ օրվանից ես շատ ուշադիր էի, որպեսզի գրպաններում անցքեր չունենայի» (from John A. Widtsoe, “The Lost Gold Piece,” *Children’s Friend,* Sept. 1947, p. 369):

**Քննարկում**

- Քանի՞ անգամ Ջոնը աղոթեց իր դրամի համար:
- Ինչի՞ համար Ջոնը աղոթեց առաջին անգամ: (Խնդրելու համար Երկնային Հորը գտնել իր դրամը:)

- Ո՞րն էր Ջոնի աղոթքի պատասխանը:
- Ինչո՞ւ համար Ջոնն աղոթեց երկրորդ անգամ: (Շնորհակալություն հայտնելու համար Երկնային Հորը իրեն օգնելու համար:)
- Ինչպե՞ս է Երկնային Հայրն օգնել ձեզ, երբ դուք աղոթել եք նրան:

Ուսուցչի ելույթ

Շեշտեք երեխաներին. որ ինչպես մեր երկրային ծնողները, Երկնային Հայրը սիրում է և ցանկանում է օգնել մեզ: Երբ մենք խնդրում ենք Նրա օգնությունը, Երկնային Հայրը լսում է մեզ: Երեխաներին պատմեք, թե ինչպես է Երկնային Հայրը օգնել ձեզ, պատասխանելով ձեր աղոթքին:

**Աղոթքները պատասխանվում են տարբեր ճանապարհներով**

Պատմվածք սուրբ գրություններից

Ցույց տվեք Աստվածաշունչը և երեխաներին ասացեք, որ հետևյալ պատմվածքը Աստվածաշնչից է:

Ցույց տվեք նկար 2-34, Հովհաննես Մկրտչի անվանակոչումը, և պատմեք Ղուկաս Ա.5–17-ի պատմությունը:

Բացատրեք, որ Զաքարիան և Եղիսաբեթը արդարակեաց մարդիկ էին, և նրանք տարիներ շարունակ աղոթում էին երեխա ունենալու համար: Այժմ նրանք երկուսն էլ մեծահասակ էին և դեռ երեխա չունեին:

Բացատրեք, որ Զաքարիան զարմացել էր և մի փոքր վախեցել, երբ առաջին անգամ տեսել էր հրեշտակին տաճարում: Բարձրաձայն կարդացեք այն, ինչ հրեշտակն ասաց Զաքարիային Ղուկաս Ա.13–14-ում: Բացատրեք, որ այն, ինչ հրեշտակը խոստացավ, կատարվեց, և Զաքարիան ու Եղիսաբեթը տղա երեխա ունեցան:

Շեշտեք, որ Երկնային Հայրը լսում էր Զաքարիայի և Եղիսաբեթի բոլոր աղոթքները: Սակայն, դեռ ժամանակը չէր եկել, որ նրանք երեխա ունենային: Հրեշտակը Զաքարիային ասաց, որ երեխան, Հովհաննեսը, կմեծանա ու կդառնա մեծ մարգարե՝ Հովհաննես Մկրտիչ անունով: Հովհաննեսը ծնվեց այդ ժամանակ, որպեսզի մարդկանց պատրաստեր հավատալ Հիսուս Քրիստոսին և հետևել Նրան:

Ուսուցչի ելույթ

Բացատրեք, որ երբեմն, Եղիսաբեթի ու Զաքարիայի պես, մենք նույնպես աղոթում ենք մի բանի համար, ինչը ավելի լավ կլինի, որ հետագայում կատարվի, ոչ թե անմիջապես: Երկնային Հայրը լսում է մեր բոլոր աղոթքները և պատասխանում է դրանց այն եղանակով և այն ժամանակ, որը լավագույնն է մեզ համար:

Երեխաներին հիշեցրեք, որ երբ Ջոն Վիդստոուն աղոթեց իր կորցրած ոսկե դրամի համար, նա հիշեց, որ Երկնային Հայրը գիտի, թե որտեղ է դրամը և կօգնի գտնել այն, եթե «նա համարում էր, որ դա լավագույնն է ինձ համար»: Ջոնը գտավ դրամն անմիջապես, որովհետև լավագույնը դա էր նրա համար:

Բացատրեք, որ երբեմն մենք մեր ծնողներից խնդրում ենք այնպիսի բաներ, որոնք լավ չեն մեզ համար, և նրանք ստիպված են մեզ ասել «ոչ»: Նմանապես, մենք կարող ենք Երկնային Հորը աղոթել, խնդրելով այնպիսի մի բան, որը լավ չէ մեզ համար, և նա կասի «ոչ»:

Պատմվածք

Ձեր խոսքերով պատմեք հետևյալ պատմվածքը.

Մայքլը տանն էր մնում, քանի որ վատ հազում էր, երբ եկավ առաջին ձյունը: Մայքլն աղաչում էր, որ մայրն իրեն դուրս թողնի խաղալու, սակայն մայրն ասաց. «ոչ»: Նա վախենում էր, որ նրա հազը կբարդանա:

Մայքլը շատ էր ուզում ձյան հետ խաղալ, և աղոթեց Երկնային Հորը, որ նա ստիպեր մայրիկին փոխել իր որոշումը: Երբ նրա ընկեր Ալեքսը եկավ և հարցրեց, թե կարող է նա խաղալ ճաշից հետո, նա աղոթեց, որ մայրիկը թույլ տա նրան խաղալ ձնով:

Ճաշից հետո Մայքլը կրկին խնդրեց մայրիկին, որ գնա դուրս խաղ անելու: Նա մորն ասաց, որ աղոթել է, որ իրեն թույլ տան դուրս գալու: Մայքլի մայրիկը դժգոհ էր: Նա Մայքլին հացրեց, թե արդյոք Երկնային Հայրը կուզենար, որ նա գնար դուրս խաղալու, երբ դա կվատացներ նրա վիճակը:

- Ի՞նչ եք կարծում, Երկնային Հայրը լսել էր Մայքլի աղոթքը:
- Ինչպե՞ս Երկնային Հայրը կպատասխաներ Մայքլի աղոթքին:

Երբ Ալեքսը վերադարձավ, Մայքլը նրան ասաց, որ չի կարող գնալ դուրս: Ալեքսն ասաց, որ Երկնային Հայրը չի պատասխանել Մայքլի աղոթքին: Մայքլը բացատրեց, որ Երկնային Հայրը պատասխանեց իր աղոթքին, սակայն պատասխանը «ոչ» էր:

**Ամփոփում**

Վկայություն

Երեխաներին բերեք ձեր վկայությունը, որ Երկնային Հայրը գիտի, թե ինչ է լավ մեզ համար, և նա միշտ պատասխանում է մեր աղոթքներին մեզ համար լավագույն եղանակով: Երբեմն նա ասում է«այո», երբեմն «ոչ», և երբեմն նա մեզ խնդրում է մի փոքր սպասել, մինչև որ կստանանք այն, ինչի համար աղոթել ենք:

Կրկնություն

- Ինչպե՞ս Երկնային Հայրը պատասխանեց Ջոն Վիդստոուի աղոթքին:
- Ինչպե՞ս Երկնային Հայրը պատասխանեց Եղիսաբեթի ու Զաքարիայի աղոթքներին:
- Ինչպե՞ս Երկնային Հայրը պատասխանեց Մայքլի աղոթքին:

Երեխաներին խրախուսեք ընդունել Երկնային Հոր կողմից իրենց աղոթքների պատասխանները, անգամ, եթե պատասխանը «ոչ» է, կամ «ոչ այժմ»:

Երեխաներից մեկին հրավիրեք ասել փակիչ աղոթքը:

---

**Լրացուցիչ վարժություններ**

Հետևյալ վարժություններից ընտրեք նրանք, որոնք լավագույնս կհամապատասխանեն ձեր դասարանի երեխաներին: Դուք կարող եք դրանք օգտագործել դասի ընթացքում, որպես դասի վերանայում կամ ամփոփում: Լրացուցիչ ուղղության համար տե՛ս «Դասաժամ» «Օգնություն ուսուցչին» բաժինները:

1. Երեխաներին ասացեք, որ նրանք պետք է պատկերացնեն, թե ծնողներն են և որոշեն, թե ինչն է լավ իրենց երեխաների համար: Նրանց խնդրեք պատասխանել իրենց երեխաների խնդրանքներին «այո», «ոչ» կամ «ոչ այժմ»: Օգտվեք ստորև տրված իրավիճակներից կամ մտածեք ինքներդ: Քննարկեք, թե որ պատասխանն է լավագույնը յուրաքանչյուր իրավիճակում:

   ա. Գրեթե ճաշի ժամն է: Ձեր երեխան քաղցած է և ցանկանում է պաղպաղակ ուտել:

   - Ի՞նչ դուք կասեք:
   - Ինչո՞ւ եք դուք դա ասում:

   բ. Ցուրտ և անձրևոտ օր է: Ձեր երեխան ուզում է լողազգեստ հագնել և գնալ դուրս խաղալու:

- Ի՞նչ դուք կասեք:
- Ինչո՞ւ եք դուք դա ասում:

գ. Ձեր երեխաներն ավարտել են իրենց բոլոր գործերը: Հիմա վաղ կեսօր է: Նրանք հարցնում են, թե արդյոք կարող են գնալ դուրս խաղ անելու:

- Ի՞նչ դուք կասեք:
- Ինչո՞ւ եք դուք դա ասում:

դ. Ձեր երեխան դրամ էր կուտակում խաղալիք գնելու համար և վերջապես նա բավական գումար ունի: Նա ձեզ խնդրում է թույլ տալ անմիջապես գնալ խանութ և գնել խաղալիքը: Դուք (նրա ծնողը) մի քանի րոպեից պատրաստվում էիք գնալ խանութ:

- Ի՞նչ դուք կասեք:
- Ինչո՞ւ եք դուք դա ասում:

ե. Ձեր երեխան շատ է սիրում ձիերին և խնդրում է ձեզ իր համար ձի գնել: Նա միայն հինգ տարեկան է:

- Ի՞նչ դուք կասեք:
- Ինչո՞ւ եք դուք դա ասում:

զ. Ձեր երեխաները խնամքով չեն վերաբերվում իրենց խաղալիքներին ու գրքերին: Իրենց եղած խաղալիքների և գրքերի համար հոգ տանելու փոխարեն նրանք ձեզանից նոր խաղալիքներ ու գրքեր են պահանջում: Խանութում նրանք տեսնում են իրենց սիրած գրքերից մեկը և խնդրում են ձեզ գնել այն:

- Ի՞նչ դուք կասեք:
- Ինչո՞ւ եք դուք դա ասում:

Բացատրեք, որ ծնողները ցանկանում են անել այն, ինչ լավագույնն է իրենց երեխաների համար: Երկնային Հայրը նույնպես ցանկանում է անել այն, ինչ լավագույնն է իր երեխաների համար: Երկնային Հայրը միշտ պատասխանում է մեր աղոթքներին, սակայն պատասխանում է այնպես, ինչպես լավագույնը կլինի մեզ համար: Ինչպես մեր երկրային ծնողներն են մեզ երբեմն ասում «ոչ», երբեմն՝ «այո», իսկ երբեմն՝ «ոչ այժմ», մեր Երկնային Հայրը պատասխանում է մեր աղոթքներին երբեմն «ոչ», երբեմն՝ «այո», իսկ երբեմն՝ «ոչ այժմ»:

2. Երեխաների խմբի ձեր նախագահի թույլտվությամբ մի քանի հյուրեր հրավիրեք, որոնք երեխաների համար կերգեն «Երեխայի աղոթքը» (*Երեխաների Երգարան,* է. 12):

3. Արտասանեք «Եմ իմ Երկնային Հոր կարիքն ունեմ»:

Ես իմ Երկնային Հոր կարիքն ունեմ

Ես իմ Երկնային Հոր կարիքն ունեմ,
Որ միշտ Նա ինձ օգնի:
Ուզում է Նա, որ երջանիկ լինեմ,
Եվ ճիշտ ուղին ընտրեմ:
Ուզում է Նա, որ երջանիկ լինեմ,
Եվ ճիշտ ուղին ընտրեմ:

# Հիսուս Քրիստոսը սիրում է ինձ

Դաս
19

**Նպատակ** Օգնել յուրաքանչյուր երեխայի զգալ, որ Հիսուս Քրիստոսը սիրում և օրհնում է բոլոր երեխաներին:

**Նախապատրաստություն**

1. Աղոթքով ուսումնասիրեք Մաթեոս ԻԵ.34–40, Մարկոս ժ.13–16, և 3 Նեփի 17:
2. Հնարավորության դեպքում պատրաստեք հետևյալ նյութերը կրկնության խաղի համար.
   ա. Կտրեք մի շրջան ճաշի ափսեի չափով հաստ ստվարաթղթից: Շրջանի մեկ երրորդը ներկեք կարմիր գույնով, մեկ-երրորդը՝ դեղին, մեկ-երրորդը՝ կապույտ:



   բ. Պատրաստեք տասներկու գունավոր քարտեր կամ թղթի կտորներ՝ չորսը՝ կարմիր, չորսը՝ դեղին, չորսը՝ կապույտ (եթե դասարանը մեծ է, անհրաժեշտ են ավելի շատ քարտեր):
   գ. Յուրաքանչյուր երեխայի համար յուրաքանչյուր քարտին կրկնության մեկ հարց գրեք, օրինակ.

   Ո՞ւմ է սիրում Հիսուս Քրիստոսը

   Ինչպե՞ս դուք գիտեք, որ Հիսուսը սիրում է ձեզ:

   Ի՞նչ Հիսուսը ի նկատի ուներ, երբ ասում էր. «Թույլ տվեք երեխաներին ինձ մոտ գան»:

   Ի՞նչ փորձեցին անել Հիսուսի աշակերտները (օգնականները), երբ ծնողները երեխաներին բերեցին տեսնելու Հիսուսին:

   Ինչպե՞ս Հիսուսը ցույց տվեց, որ սիրում է Ամերիկայի հիվանդ և վիրավորված մարդկանց:

   Ի՞նչ Հիսուսն արեց Ամերիկայի երեխաներին օրհնելուց հետո:

   Ո՞վ էր կանգնած երեխաների հետ, ում տեսան ծնողները Ամերիկայում, նրանից հետո, երբ Հիսուսը օրհնեց երեխաներին:

   Ինչո՞ւ Հիսուսը օրհնեց երեխաներին:

   Ինչպե՞ս մենք կարող ենք ցույց տալ Հիսուսի հանդեպ մեր սերը:

   դ. Քարտերը տեղադրեք մի փոքր արկղի կամ պարկի մեջ, հարցական նշաններ դնելով յուրաքանչյուր քարտի երևացող կողմի վրա:
   ե. Մի կոճակ կամ մետաղադրամ բերեք, որը կարելի է գցել գունավոր շրջանի վրա:

4. Պահանջվող նյութեր.
   ա. Աստվածաշունչ և Մորմոնի Գիրք:
   բ. Նկար 2-35, Քրիստոսը և երեխաները (Ավետարանի Արվեստի Նկարների Հավաքածո 216; 62467); նկար 2-36, Հիսուսը օրհնում է Նեփիացի երեխաներին:

5. Անհրաժեշտ պատրաստություններ կատարեք այն լրացուցիչ վարժությունների համար, որոնք ցանկանում եք անցկացնել:

---

**Դասի առաջարկվող ընթացք**

Երեխաներից մեկին խնդրեք ասել բացիչ աղոթքը:

Եթե երեխաներին խնդրել եք շաբաթվա ընթացքում ինչ-որ բան կատարել, ստուգեք:

**Հիսուս Քրիստոսը սիրում և օրհնում էր փոքր երեխաներին**

Ցույց տվեք կրկնության խաղի քարտերը պարունակող արկղը կամ պարկը: Երեխաներին ասացեք, որ դասի վերջում նրանք խաղ կխաղան: Նրանք պետք է ուշադրությամբ լսեն դասը, որպեսզի կարողանան իմանալ խաղի հարցերի պատասխանները:

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Երեխաներին խնդրեք պատկերացնել, թե որքան սքանչելի կլիներ, եթե Հիսուս Քրիստոսը գրկեր նրանց կամ իր ձեռքերը դներ նրանց գլխին:

Պատմված սուրբ գրություններից

Ցույց տվեք նկար 2-35, Քրիստոսը և երեխաները, ապա ցույց տվեք Աստվածաշունչը: Բացատրեք, որ այն պատմությունը, որը պատրաստվում եք իրենց պատմել, գտնվում է Աստվածաշնչում: Պատմեք Մարկոս ժ.13–16-ի պատմությունը:

Բացատրեք, որ աշակերտները վախեցան, որ երեխաները կխանգարեն Հիսուսին ուսուցանել: Սակայն Փրկիչը ցանկացավ, որ երեխաները գան իր մոտ: Բարձրաձայն կարդացեք Հիսուսի խոսքերը Մարկոս ժ.14-ում (սկսած *Թույլ տվեք երեխաներին*):

- Ի՞նչ էր անում Հիսուսը, երբ երեխաները մոտեցան նրան:

Բարձրաձայն կարդացեք Մարկոս ժ.16: Օգնելու համար երեխաներին հասկանալ, թե ինչ արեց Հիսուսը, նրանց հիշեցրեք այն, ինչ սովորեցին քահանայության մասին դաս 17-ում: Բացատրեք, որ մեր հայրերի կամ քահանայություն կրողների տված օրհնությունները նման են այն օրհնություններին, որոնք Հիսուսը կտար մեզ:

- Ինչո՞ւ էր Հիսուսը ցանկանում, որպեսզի երեխաները գային իր մոտ: (Որովհետև նա սիրում էր և ցանկանում էր օրհնել նրանց:)

Շեշտեք, որ թեև նա զբաղված էր, մեծերին սովորեցնելով, նա ժամանակ տրամադրեց գրկելու և օրհնելու փոքր երեխաներին, որովհետև շատ էր սիրում նրանց:

Վկայություն

Բերեք ձեր վկայությունն այն մասին, որ Հիսուսը սիրում է երեխաներին:

Պատմված սուրբ գրություններից

Ցուցադրեք նկար 2-36, Հիսուսը օրհնում է Նեփիացի երեխաներին: Երեխաներին հնարավորություն տվեք նայել նկարներին և ձեզ ասել, թե ինչ են տեսնում դրա վրա: Ցույց տվեք Մորմոնի Գիրքը: Բացատրեք, որ Հիսուս Քրիստոսը սովորեցնում էր Ամերիկայի ժողովրդին, ինչպես սովորեցնում էր

Սուրբ Երկրի մարդկանց, և որ Ամերիկա Նրա այցը նկարագրված է Մորմոնի Գրքում: Պատմեք 3 Նեփի 17-ում պարունակվող պատմությունը:

Բացատրեք, որ երբ Հիսուս Քրիստոսը վերջացրեց սովորեցնել Ամերիկայի ժողովրդին, նրանք չէին ուզում, որ Նա հեռանար: Հիսուսը շատ էր սիրում մարդկանց, և նա օրհնեց և բժշկեց բոլորին, ով հիվանդ, վիրավոր կամ հաշմանդամ էր (տե՛ս 3 Նեփի 17.7–10):

Ապա Հիսուսը խնդրեց, որ իր մոտ բերեն բոլոր փոքր երեխաներին: Նա նրանց հավաքեց իր շուրջը և հրաշալի աղոթք ասաց (տե՛ս 3 Նեփի 17.11–15):

Երեխաներին ասացեք, որ Մորմոնի Գիրքն ասում է, որ այդ աղոթքի բառերն այնքան գեղեցիկ ու հրաշալի էին, որ չէին կարող գրվել (տե՛ս 3 Նեփի 17.15):

Բացատրեք, որ Հիսուսը մեկ առ մեկ օրհնեց երեխաներին և նրանց համար աղոթեց Երկնային Հորը: Ծնողները կարող էին տեսնել, թե ինչպես էին հրեշտակները շրջապատել իրենց երեխաներին (տե՛ս 3 Նեփի 17.21–24): Բոլոր ներկա մարդիկ կարող էին զգալ իրենց հանդեպ Հիսուսի մեծ սերը:

Քննարկում

- Ձեր կարծիքով, ինչպե՞ս էին իրենց զգում երեխաները, երբ Հիսուսը օրհնեց իրենց և աղոթեց իրենց համար:
- Ի՞նչ եք զգում, երբ մտածում եք Հիսուսի մասին:

### Հիսուս Քրիստոսը սիրում է մեզ

Քննարկում

Բացատրեք, որ թեև Հիսուս Քրիստոսը այժմ այստեղ չէ, նա սիրում է մեզ այնքան, որքան սիրում էր այն երեխաներին, որոնք ապրում էին երկրի վրա Իր ապրած ժամանակ:

- Ինչպե՞ս մենք գիտենք, որ Հիսուսը սիրում է մեզ: (Հնարավոր պատասխաններ. Նա մեզ համար ստեղծել է երկիրը; Նա մեզ պատվիրաններ է տվել; Նա մեզ համար տվել է Իր կյանքը; Նա ղեկավարում է իր Եկեղեցին և խոսում է մեզ հետ Իր մարգարեների միջոցով; Նա լավ օրինակ է ծառայել մեզ համար:)

Երեխայի մասնակցություն

Երեխաներին հիշեցրեք, որ Երկնային Հոր ղեկավարությամբ Հիսուս Քրիստոսը ստեղծեց երկիրը և դրա վրա բոլոր բույսերն ու կենդանիները:

Յուրաքանչյուր երեխայի խնդրեք ասել իրենց սիրած որևէ բույսի կամ կենդանու անուն: Երեխաներին հիշեցրեք, որ երբ նրանք տեսնում են այն ամենը, ինչ ստեղծել է Հիսուսը, նրանք կարող են հիշել, որ Հիսուսը սիրում է իրենց:

Քննարկում նկարի շուրջ

Կրկին ցուցադրեք նկար 2-35, Քրիստոսը և երեխաները, և նկար 2-36, Հիսուսը օրհնում է Նեփիացի երեխաներին:

- Ի՞նչ եք կարծում, այս երեխաները երջանիկ են, իմանալով, որ Հիսուսը սիրում է իրենց:
- Դուք երջանի՞կ եք, որ Հիսուսը սիրում է ձեզ:

### Մենք կարող ենք Հիսուս Քրիստոսին ցույց տալ, որ սիրում ենք Իրեն

Ուսուցչի ելույթ

Բացատրեք, որ թեև Հիսուս Քրիստոսը երկրի վրա չէ, մենք կարող ենք նրան ցույց տալ, որ շնորհակալ ենք մեր հանդեպ նրա սիրո համար և որ մենք նույնպես սիրում ենք իրեն: Բացատրեք, որ մենք կարող ենք ցույց տալ, որ սիրում ենք Հիսուսին, եթե պահենք նրա պատվիրանները:

Սուրբ գրություն

Բարձրաձայն կարդացեք Մաթեոս ԻԵ.40, որպեսզի երեխաները իմանան, թե ինչ այլ ճանապարհ կա Հիսուսին ցույց տալու, որ մենք սիրում ենք Իրեն:

(Բացատրեք, որ *Թագավորը* Հիսուս Քրիստոսի անուններից մեկն է:) Բացատրեք, որ սուրբ գրության մեջ Փրկիչը մեզ ասում է, որ եթե մենք բարի ենք մյուս մարդկանց նկատմամբ, ապա բարի ենք Իր նկատմամբ: Երբ մենք միմյանց բարությամբ ենք վերաբերվում, մենք ցույց ենք տալիս Հիսուսին, որ սիրում ենք իրեն:

Կրկնության խաղ

Անցկացրեք հետևյալ խաղը, օգնելու երեխաներին հիշել այն, ինչ սովորեցին այսօրվա դասին: (Եթե հնարավոր չէր պատրաստել խաղի բոլոր անհրաժեշտ պարագաները, փոփոխեք խաղը, կամ կարդացեք նախապատրաստության բաժնում տրված հարցերը և երեխաներին խնդրեք հերթով պատասխանել դրանց:)

Արկղից կամ պարկից հանեք քարտերը և դրեք հատակին կամ սեղանին, դասավորելով ըստ գույների, հարցերը դեպի ներքև: Գունավորած շրջանը դրեք քարտերի կողքին:

Երեխաներից մեկին խնդրեք գցել կոճակը կամ մետաղադրամը շրջանի մեջ, և ապա ընտրել մի քարտ, որը համապատասխանում է այն գույնին, որով ներկված է շրջանի այն մասը, ուր ընկել է կոճակը: Բարձրաձայն կարդացեք քարտի վրա գրված հարցը և երեխային թույլ տվեք պատասխանել հարցին: Երեխաներին հերթով այդպես խաղացրեք:

Եթե քարտը վերցրած երեխան չի կարողանում պատասխանել հարցին, դուք կամ դասարանի որևէ այլ անդամ կարող է հուշել: Եթե ժամանակը թույլ է տալիս, նորից խաղացեք խաղը, առանց հուշումների: Գովեք երեխաներին Հիսուսի ու նրա սիրո մասին այդքան շատ իմանալու համար:

Վկայություն

**Ամփոփում**

Երեխաներին ասացեք, որ Հիսուս Քրիստոսը սիրում է նրանցից յուրաքանչյուրին և միշտ կսիրի իրենց: Հիսուսը սիրում է լինել երեխաների հետ և ցանկանում է օգնել և օրհնել նրանց: Բերեք ձեր վկայությունն այն մասին, որ Հիսուսը սիրում և գնահատում է ձեր դասարանի բոլոր երեխաներին:

Երեխաներին խրախուսեք շաբաթվա ընթացքում մտածել այն բոլոր բաների մասին, որ Հիսուսն արել է իրենց համար, քանի որ սիրում է իրենց: Երեխաներին կարող եք խնդրեք մի ցանկ կազմել կամ նկարներ նկարել, պատկերելով այդ բաները, և այդ ցանկը կամ նկարները բերել Երեխաների խումբ հաջորդ շաբաթ:

Երեխաներին հիշեցրեք, որ նրանք կարող են ցույց տալ Հիսուսին, որ սիրում են իրեն, հնազանդվելով Նրա պատվիրաններին և բարի լինելով ուրիշների հանդեպ:

Երեխաներից մեկին հրավիրեք ասել փակիչ աղոթքը: Երեխային խնդրեք շնորհակալություն հայտնել Հիուս Քրիստոսի ու նրա սիրո համար:

Մինչ երեխաները հեռանում են դասարանից, յուրաքանչյուրի ականջին շշնջացեք «Հիսուսը սիրում է քեզ, և ես սիրում եմ քեզ»:

---

**Լրացուցիչ վարժություններ**

Հետևյալ վարժություններից ընտրեք նրանք, որոնք լավագույնս կհամապատասխանեն ձեր դասարանի երեխաներին: Դուք կարող եք դրանք օգտագործել դասի ընթացքում, որպես դասի վերանայում կամ ամփոփում: Լրացուցիչ ուղղության համար տե՛ս «Դասաժամ» «Օգնություն ուսուցչին» բաժինները:

1. Դասարան բերեք ստվարաթղթին ամրացված մի փոքր հայելի: Երեխաներին ցույց մի տվեք հայելին: Պահեք հայելին հակառակ կողմով և դասարանին ասացեք, որ դուք գաղտնի նկար ունեք այն մարդու, որին Հիսուս Քրիստոսը շատ է սիրում: Երեխաներին թույլ տվեք մեկ առ մեկ գալ ձեզ մոտ տեսնելու «նկարը»: Նրանց խնդրեք նկարը գաղտնի պահել, մինչև որ բոլորը կտեսնեն այն: Երեխաներին հիշեցրեք, որ Հիսուսը սիրում է նրանց բոլորին:
2. Արտասանեք «Հիսուսը սիրում է բոլոր երեխաներին»:
3. Երեխաներին օգնեք կատարել հետևյալ շարժումները.

   Հիսուսը սիրում է բոլոր երեխաներին

   Հիսուսը սիրում է բոլոր երեխաներին *(լայն բացեք ձեռքերը),*
   Բոլոր փոքրիկ մանուկներին *(ձեռքով ցույց տվեք մինչև ծունկը),*
   Նրանց, ովքեր դեռ օրորոցի մեջ են *(ձեռքերով օրորելու շարժում կատարեք),*
   Նրանց, ովքեր հասակով արդեն մեծ են *(ձեռքերը բարձրացրեք գլխից վեր):*

   (From *Finger Fun for Little Folk* by Thea Cannon. . 1949 by the Standard Publishing Company, Cincinnati, Ohio. Used by permission.)

   Կրկնեք ըստ ցանկության:
4. Պատճենահանեք Քրիստոսը երեխաների հետ նկարը (տրված է դասի վերջում) յուրաքանչյուր երեխայի համար: Երեխաներին խնդրեք նկարել երեխաների դեմքերը և գունավորել նկարները: Եթե յուրաքանչյուր երեխայի համար չեք կարող մեկ օրինակ պատրաստել, պատրաստեք մեկ օրինակ և ձեր դասարանի յուրաքանչյուր երեխայի թույլ տվեք գունավորել նկարի մեկ երեխա:

   Երեխաներին ասացեք, որ եթե նրանք ապրեին այն ժամանակ, երբ Հիսուսն ապրում էր երկրի վրա, ապա նա կգրկեր իրենց և կօրհներ: Նրանց հիշեցրեք, որ թեև Հիսուսը այժմ երկրի վրա չէ, նա միևնույնն է, սիրում է երկրի բոլոր մարդկանց:

# Հիսուս Քրիստոսի ուսմունքները մեծ գանձ են

Դաս
20

**Նպատակ**

Ամրացնել Հիսուս Քրիստոսի ուսմունքների մասին ավելին սովորելու յուրաքանչյուր երեխայի ցանկությունը:

**Նախապատրաստություն**

1. Աղոթքով ուսումնասիրեք Վարդապետություն և Ուխտեր 19.23–24 և Ջոզեֆ Սմիթ – Պատմություն 1.14–20: Տե՛ս նաև Մաթևոս Գ.13–16; Դ.1–11; Զ.9; Մարկոս Ժ.13–16; 3 Նեփի 18.19; և *Ավետարանի Սկզբունքները* (31110), գլուխ 10:
2. Թղթի վրա գրեք *Հիսուս Քրիստոսի ուսմունքները մեծ գանձ են:* Ծալեք թուղթը և դրեք այն մի փոքր արկղի մեջ: Արկղը պահեք դասարանում այնպես, որպեսզի այն հեշտությամբ չգտնեն: (Եթե ձեր դասարանի երեխաները կարդալ դեռ չգիտեն, թաքցրեք Հիսուսի նկարը կամ Աստվածաշունչը, կամ Մորմոնի Գիրքը:)
3. Պահանջվող նյութեր.
   ա. Սուրբ գրություններ:
   բ. Ձեզ համար մեծ արժեք ունեցող անձնական իր:
   գ. Լոբով պարկ կամ փափուկ առարկա:
   դ. Նկար 2-37, Լեռան Քարոզը (Ավետարանի Արվեստի Նկարների Հավաքածո 212; 62166); նկար 2-38, Առաջին Տեսիլքը (Ավետարանի Արվեստի Նկարների Հավաքածո 403; 62470); նկար 2-39, Մարգարե Ջոզեֆ Սմիթը (Ավետարանի Արվեստի Նկարների Հավաքածո 401; 62002); ապրող մարգարեի նկարը (Եկեղեցու ամսագրերից կամ հավաքատան գրադարանից):
4. Անհրաժեշտ պատրաստություններ կատարեք այն լրացուցիչ վարժությունների համար, որոնք ցանկանում եք անցկացնել:

**Դասի առաջարկվող ընթացք**

Երեխաներից մեկին խնդրեք ասել բացիչ աղոթքը:

Եթե երեխաներին խնդրել եք շաբաթվա ընթացքում ինչ-որ բան կատարել, ստուգեք:

**Մենք շատ գանձեր ունենք**

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Երեխաներին ցույց տվեք արժեք ունեցող անձնական իրը, որը բերել եք ձեզ հետ: Մի քանի մանրամասներ ասեք այդ իրի մասին, օրինակ, ինչպես է այն օգտագործվում, որտեղից եք դա ձեռք բերել կամ որքան ժամանակ է այն ձեզ մոտ: Շեշտեք, թե ինչու է այն կարևոր ձեզ համար և որքան տխուր կլինեիք, եթե այն կորեր, գողացվեր կամ կոտրվեր: Բացատրեք, որ այդ իրը ձեր գանձերից մեկն է:

- Ի՞նչ է գանձը: (Մեծ արժեք ունեցող որևէ բան:)

Պատմվածք

Պատմեք մի պատմվածք երեխայի մասին, որը թանկ իր ուներ: Կարող եք օգտագործել հետևյալ պատմությունը.

Ռութի դասընկերներից մեկը մի զարդ ուներ, որը ամեն օր դպրոց գալուց հագնում էր: Ռութի կարծիքով դա ամենագեղեցիկ զարդն էր, որ նա երբևէ տեսել էր: Նա շատ էր ուզում դրա նման զարդ ունենալ:

Ռութի ծննդյան օրվա առավոտյան մայրը մի նվեր տվեց նրան: Դա փոքր տուփ էր, գեղեցիկ թղթով ու ժապավենով փաթաթված: Դրա մեջ նա գտավ մի սքանչելի ոսկե զարդ: Այն ուներ սրտի տեսք, իսկ կենտրոնում փայլուն վարդագույն քար էր դրված: Ռութը չէր հավատում իր աչքերին:

Քննարկում

- Ի՞նչ եք կարծում, ինչպիսին էին Ռութի զգացմունքները, երբ նա տեսավ զարդը:
- Որո՞նք են ձեր գանձերը: (Կարող եք մի քանի միտք առաջարկել, օրինակ, տան կենդանի, սիրված գիրք կամ խաղալիք, զգեստ:)

### Հիսուս Քրիստոսի խոսքերը մեծ գանձ են

Գանձերի որոնման վարժություն

Բացատրեք, որ մեզանից յուրաքանչյուրը կարող է ունենալ ավելի մեծ գանձ, քան (թվեք այն, ինչ երեխաները նշել են որպես իրենց գանձերը): Այս գանձը շատ ավելի մեծ արժեք ունի, քան որևէ այլ իր, որ մենք կարող ենք ունենալ: Այն չի կարող գնվել փողով, ոչ էլ կոտրվել կամ գողացվել: Այդ գանձն այնքան թանկ է, որ շատ մարդիկ այն ունենալու համար պատրաստ են հրաժարվել այն ամենից, ինչ ունեն: Ոմանք պատրաստ են անգամ տալու իրենց կյանքը դրա համար:

Երեխաներին ասացեք, որ պարզելու համար, թե որն է այդ մեծ գանձը, նրանք պետք է զբաղվեն գանձերի որոնմամբ: Բացատրեք, որ դուք թաքցրել եք գանձը սենյակում: Երեխաներին խնդրեք լուռ փնտրել գանձը:

Երբ երեխաները գտնեն տուփը, նրանցից մեկին խնդրեք բացել այն և բարձրաձայն կարդալ ուղերձը: Այնուհետև երեխաներին խնդրեք ձեզ հետ միասին կրկնել ուղերձի խոսքերը: (Եթե դուք թաքցրել եք Հիսուսի նկարը կամ սուրբ գրություններից որևէ մեկը, բացատրեք, որ այդ առարկան ներկայացնում է Հիսուս Քրիստոսի ուսմունքները: Երեխաներին ասացեք, որ Հիսուս Քրիստոսի ուսմունքները մեզ համար մեծ գանձ են:)

- Ինչո՞ւ են Հիսուս Քրիստոսի ուսմունքները մեծ գանձ մեզ համար:

Շեշտեք, որ Հիսուս Քրիստոսի ուսմունքները մեզ համար գանձ են, որովհետև մեզ ցույց են տալիս, թե ինչպես կարելի է երջանիկ լինել, հետևելով Երկնային Հորն ու Հիսուսին:

Սուրբ գրություն

Բարձրաձայն կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 19.23-ի առաջին մասը (մինչև *խոսքերը*): Բացատրեք, որ Հիսուս Քրիստոսն է ասել դա: Նա ցանկանում է, որ մենք սովորենք նրա ու նրա ուսմունքների մասին:

### Մենք կարող ենք սովորել Հիսուս Քրիստոսի ուսմունքները սուրբ գրություններից

Ուսուցչի ելույթ

Ցույց տվեք նկար 2-37, Լեռան Քարոզը: Երեխաներին թույլ տվեք նկարագրել, թե ինչ է պատկերված նկարի վրա:

Բացատրեք, որ երբ Փրկիչը երկրի վրա էր, նա գնում էր քաղաքից քաղաք, մարդկանց սովորեցնելով, թե ինչպես նրանք պետք է ապրեն, որպեսզի երջանիկ լինեն և մի օր վերադառնան Երկնային Հոր մոտ: Շատ մարդիկ սիրում էին լսել նրա ուսմունքները և հետևում էին նրան, ուր էլ որ նա գնում էր: Երբեմն հազարավոր մարդիկ հավաքվում էին նրա շուրջը լսելու և սովորելու համար:

- Ի՞նչ եք կարծում, ինչ էին զգում մարդիկ, երբ լսում էին Հիսուսին:

Բացատրեք, որ երբեմն Հիսուսի աշակերտները (օգնականները) փորձում էին մարդկանց հետ ուղարկել, որովհետև Հիսուսը հոգնում էր և հանգստանալու կարիք էր զգում: Հիսուսը նրանց միշտ ասում էր, որ թողնեն մարդկանց մնալ լսելու Իր ուսմունքները: Նա ուզում էր, որ բոլոր մարդիկ լսեին և իմանային, որպեսզի ուրախություն և երջանկություն ունենան, որոնք կտևեն հավերժ:

Ցույց տվեք սուրբ գրությունների հավաքածոն: Բացատրեք, որ մենք կարող ենք սովորել Հիսուսի շատ ուսմունքները սուրբ գրություններից: Բացեք Նոր Կտակարանի տիտղոսաթերթը: Բացատրեք, որ երկրի վրա Հիսուսի սովորեցրածից շատ բաներ գրված են Նոր Կտակարանում:

Խաղ

Բացատրեք, որ երբ Հիսուսը երկրի վրա էր, նա շատ բաներ սովորեցրեց իր օրինակով: Նա ուզում է, որպեսզի մենք հետևենք իր օրինակին և անենք այն, ինչ ինքն էր անում: Երեխաների հետ խաղացեք «Ես մտածում եմ . . . » խաղը, օգնելու համար նրանց հիշել այն բաները, որոնք արել և սովորեցրել է Հիսուսը:

Խաղը խաղալու համար կարդացեք Հիսուս Քրիստոսի կյանքի մասին հետևյալ դեպքերի նկարագրությունները և տվեք ուղեկցող հարցերը:Երեխաներին խնդրեք բարձրացնել իրենց ձեռքը և պատասխանել հարցին: Լոբով պարկը կամ որևիցե փափուկ առարկա նետեք այն երեխայի կողմը, ով ձեռք է բարձրացրել և խնդրեք նրան պատասխանել հարցին: Բոլոր երեխաներին հնարավորություն տվեք պատասխանել առնվազն մեկ հարցի:

1. Ես մտածում եմ այն ժամանակի մասին, երբ Հիսուսը կանգնած էր Հորդանան գետի մեջ Հովհաննես Մկրտիչի հետ միասին (տե՛ս Մաթևոս Գ.13–15):
   - Ի՞նչ պատահեց Հիսուսին Հորդանան գետում:
   - Ինչպե՞ս Հիսուսը մկրտվեց: (Ընկղմամբ:)
   - Ինչպե՞ս են մեզ սովորեցրել մկրտվել: (Ընկղմամբ:)
2. Ես մտածում են մեկի մասին, որը շատ հատուկ անձ էր, որը այնտեղ էր, երբ Հովհաննես Մկրտիչը մկրտեց Հիսուսին: Նրան ոչ ոք չէր կարող տեսնել, բայց Հիսուսն ու Հովհաննեսը գիտեին, որ նա ներկա էր (տե՛ս Մաթևոս Գ.16):
   - Ո՞ւմ մասին եմ ես մտածում: (Սուրբ Հոգու մասին:)
   - Ի՞նչ են մեզ սովորեցրել այն մասին, թե ինչպես մենք պետք է ստանանք Սուրբ Հոգու պարգևը: (Մկրտվելով և հաստատվելով:)
3. Ես մտածում եմ այն ժամանակի մասին, երբ Հիսուսը քառասուն օր և քառասուն գիշեր առանց սննդի էր (տե՛ս Մաթևոս Դ.1–11):
   - Ո՞վ էր փորձում գայթակղել Հիսուսին:
   - Ի՞նչ արեց Հիսուսը: (Նա ընտրեց ճիշտը հրամայեց Սատանային հեռանալ:)
   - Ի՞նչ են մեզ սովորեցրել այն մասին, թե ինչ պետք է անենք, երբ փորձվում ենք: (Ընտրել ճիշտը:)
4. Ես մտածում եմ այն ժամանակի մասին, երբ Հիսուսի աշակերտները փորձում էին հետ ուղարկել երեխաներին (տե՛ս Մարկոս Ժ.13–16):
   - Ի՞նչ ասաց Հիսուսը իր աշակերտներին: (Որ նա ցանկանում է, որ երեխաները մնան, որովհետև շատ էր սիրում նրանց:)
   - Ո՞ւմ էր սիրում Հիսուսը: (Մեզ բոլորիս:)
   - Ինչո՞ւ է Հիսուսը սովորեցնում մեզ: (Նա սիրում է մեզ և ցանկանում է, որ մենք երջանիկ լինենք:)

5. Ես մտածում եմ այն ժամանակի մասին, երբ Հիսուսը մարդկանց սովորեցնում էր, ինչպես պետք է աղոթել (տե՛ս Մաթեոս Զ.9 և 3 Նեփի 18.19):

- Ո՞ւմ մենք պետք է աղոթենք, ինչպես սովորեցրել է Հիսուսը:
- Ինչպե՞ս մենք պետք է ավարտենք մեր աղոթքները, ինչպես սովորեցրել է Հիսուսը:
- Ե՞րբ մենք պետք է աղոթենք: (Ընդունեք բոլոր պատասխանները և երեխաներին հիշեցրեք, որ մենք կարող ենք աղոթել, երբ ուզում ենք, որպեսզի մոտ զգանք Երկնային Հորը, շնորհակալություն հայտնենք Նրան և օգնություն խնդրենք:)

**Մենք կարող ենք սովորել Հիսուս Քրիստոսի ուսմունքները Կենդանի Մարգարեից**

Ուսուցչի ելույթ

Բացատրեք, որ մենք կարող ենք սովորել Հիսուս Քրիստոսի ուսմունքներից շատերը կարդալով սուրբ գրությունները, սակայն սուրբ գրությունները չեն պարունակում Հիսուսի բոլոր ուսմունքները: Հիսուսը չդադարեց ուսուցանել, երբ հեռացավ երկրից: Այսօր նա մեզ սովորեցնում է մարգարեների միջոցով: Հիսուսը խոսում է իր մարգարեի հետ և ասում նրան այն, ինչ մենք պետք է իմանանք: Ապա մարգարեն Հիսուսի ուսմունքը տալիս է մեզ:

Պատմվածք սուրբ գրություններից

Ցույց տվեք նկար 2-38, Առաջին Տեսիլքը, և երեխաներին խնդրեք ձեզ օգնել պատմել জոզեֆ Սմիթ – Պատմություն 1.14–20-ում տրված պատմությունը:

Շեշտեք, որ জոզեֆ Սմիթը Երկնային Հոր կողմից պատրաստվել էր լինելու մարգարե և սովորեցնելու ճշմարտությունը: Երկնային Հայրն ու Հիսուսը հայտնվեցին জոզեֆին և նրան ասացին, որ երկրի վրա ոչ մի եկեղեցի այդ ժամանակ ճշմարիտ չէր: Ավելի ուշ, জոզեֆն օգնեց Հիսուսին հետ բերել ճշմարիտ եկեղեցին:

- Ո՞րն է Հիսուս Քրիստոսի ճշմարիտ եկեղեցու անունն այսօր: (Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի:)

Երեխաներին խնդրեք միասին կրկնել անունը:

Քննարկում նկարի շուրջ

Ցույց տվեք նկար 2-39, Մարգարե জոզեֆ Սմիթը: Բացատրեք, որ জոզեֆ Սմիթը դարձավ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու առաջին մարգարեն: Նա Եկեղեցու վաղ անդամներին օգնեց իմանալ այն, ինչ Հիսուսը ցանկանում էր, որ իրենք անեին:

জոզեֆ Սմիթի նկարի կողքին դրեք ապրող մարգարեի նկարը:

- Ո՞վ է սա:

Բացատրեք, որ Հիսուս Քրիստոսը խոսում է ապրող մարգարեի հետ, ինչպես խոսում էր জոզեֆ Սմիթի հետ: Երբ մենք լսում ենք մարգարեի խոսքերը, մենք լսում ենք Հիսուսի ուսմունքները:

Վկայություն

Երեխաներին ասացեք, թե որքան հրաշալի է մարգարե ունենալ: Վկայեք, որ ներկա մարգարեն ճշմարիտ մարգարե է, որը մեզ տալիս է Փրկչի ուսմունքները:

**Հիսուս Քրիստոսի ուսմունքները կարևոր են մեզ համար**

Պատմվածք

Երեխաներին ասացեք, որ երբեմն մենք կարող ենք մոռանալ, թե որքան հրաշալի է լինել Եկեղեցու անդամը և ունենալ Փրկչի ուսմունքները: Մենք պետք է հիշենք, թե ինչ մեծ գանձ են Հիսուսի ուսմունքները:

Պատմեք մի պատմություն ձեզ ծանոթ որևէ մեկի մասին, ով ցույց է տվել Հիսուս Քրիստոսի ուսմունքները սովորելու և նրա եկեղեցու անդամը լինելու կարևորությունը: Եթե նման պատմություն չգիտեք, կարող եք օգտագործել հետևյալ պատմությունը.

Ալեթը խոսել էր միսիոներների հետ և գիտեր, որ նրանք սովորեցնում էին Հիսուս Քրիստոսի ուսմունքները: Նա ուզում էր դառնալ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ, սակայն նրա հայրը չէր ուզում, որ նա մկրտվեր: Նա չէր հասկանում, թե որքան կարևոր էր Ալեթի համար սովորել Հիսուսի ուսմունքները և դառնալ Հիսուսի եկեղեցու անդամը: Հայրը խնդրեց, որ նա սպասի: Ալեթը սպասում էր, սակայն շարունակում էր գնալ եկեղեցի և ամեն օր աղոթել, որպեսզի մի օր նրա հայրը հասկանա, թե ինչ է իր համար նշանակում դառնալ Եկեղեցու անդամ:

Սուրբ Ծննդյան օրերին Ալեթի հայրը հարցրեց, թե ինչ է նա ցանկանում ստանալ Սուրբ Ծննդյանը: Ալեթն ասաց, որ միակ բանը, որ ուզում էր ստանալ, դա նրա մկրտության թույլտվությունն էր: Հայրը որոշեց, որ եթե մկրտությունն այդքան կարևոր էր Ալեթի համար, ապա նա կտա իր թույլտվությունը: Ալեթը մկրտվեց Սուրբ Ծննդյան երեկո: Սա միակ նվերն էր, որը նա ստացավ, սակայն այն մեծ գանձ էր, որը մեծ ուրախություն բերեց իրեն:

- Ի՞նչ նվեր էր ուզում Ալեթը:
- Ինչո՞ւ էր այդ նվերն այդքան կարևոր:

**Ամփոփում**

Քննարկում

Երեխաների հետ միասին քննարկեք, թե որքան շնորհակալ ենք Հիսուս Քրիստոսի ուսմունքների համար: Մենք կարող ենք շնորհակալ լինել, որ

- Կարող ենք մկրտվել, ինչպես մկրտվել էր Փրկիչը:
- Մկրտվելուց հետո կարող ենք ստանալ Սուրբ Հոգու պարգևը:
- Կարող ենք աղոթել, երբ օգնության կարիք ունենք:
- Կարող ենք սովորել, ինչպես ընտրել ճիշտը:
- Գիտենք, որ Երկնային Հայրն ու Հիսուս Քրիստոսը սիրում են մեզ:
- Ունենք սուրբ գրություններ և մարգարեներ, որոնք սովորեցնում են մեզ:

Վկայություն

Բերեք ձեր վկայությունն այն մասին, որ սա Հիսուս Քրիստոսի ճշմարիտ եկեղեցին է, և երեխաներին ասացեք, թե որքան շնորհակալ եք, որ եկեղեցու անդամ եք և կարող եք սովորել Հիսուսի ուսմունքները:

Յուրաքանչյուր երեխային խնդրեք կանգնել և արտահայտել իր շնորհակալությունը Հիսուսի ուսմունքների համար: (Մի պահանջեք երեխաներից, որ անեն դա:) Անհրաժեշտության դեպքում օգնեք երեխաներին:

Շեշտեք, որ Փրկչի ու նրա ուսմունքների համար շնորհակալություն հայտնելը վկայություն բերելու եղանակներից մեկն է: Երեխաներին ասացեք, որ հենց նոր նրանք կիսվեցին իրենց վկայություններով:

Երեխաներին խրախուսեք տանը իրենց վկայություններով կիսվել իրենց ընտանիքների հետ: Ասացեք, որ, երբ Սուրբ Հոգին հուշում է, նրանք նաև կարող են բերել իրենց վկայությունները ծոմի և վկայությունների ժողովի ժամանակ և կիսվել նրանով, ինչ գիտեն Հիսուսի ուսմունքների և Հիսուս Քրիստոսի ճշմարիտ եկեղեցու մասին:

Երեխաներից մեկին հրավիրեք ասել փակիչ աղոթքը:

**Լրացուցիչ վարժություններ**

Հետևյալ վարժություններից ընտրեք նրանք, որոնք լավագույնս կհամապատասխանեն ձեր դասարանի երեխաներին: Դուք կարող եք դրանք օգտագործել դասի ընթացքում, որպես դասի վերանայում կամ ամփոփում: Լրացուցիչ ուղղության համար տե՛ս «Դասաժամ» «Օգնություն ուսուցչին» բաժինները:

1. Յուրաքանչյուր երեխայի համար բազմացրեք դասի վերջում տրված նկարներով էջը: Բացատրեք, որ որոշ մարդիկ իրենց թանկարժեք իրերը պահում են զարդատուփի մեջ, որ նման է այդ էջի կենտրոնում նկարված զարդատուփին:

   • Ի՞նչ դուք կպահեիք զարդատուփի մեջ:

   Երեխաներին հիշեցրեք, որ մեր ամենաթանկարժեք գանձերը, օրինակ Հիսուս Քրիստոսի ուսմունքները, մենք չենք կարող դնել զարդատուփի մեջ: Քննարկեք չորս նկարներով պատկերված Հիսուս Քրիստոսի ուսմունքները (մկրտություն, աղոթք, հաղորդություն, սեր):

   Երեխաներին խնդրեք ուսմունքների նկարներից դեպի գանձատուփը գծեր տանել, ապա նրանց խնդրեք գունավորել նկարները:

2. Երեխաներին խնդրեք հերթով կատարել այն բաները, որոնք Հիսուսը մեզ սովորեցրել է անել: Թող մյուս երեխաները կռահեն, թե ինչ ուսմունքներ են պատկերում երեխաները: Օրինակ, նրանք կարող են պատկերել աղոթելը, ակնածալից լինելը, տասանորդ վճարելը, ծնողներին օգնելը կամ եղբայրների ու քույրերի հանդեպ բարիացկամ լինելը:

# Հիսուս Քրիստոսի ուսմունքները մեծ գանձ են

Դաս
21

# Ես կարող եմ ակնածալից լինել

**Նպատակ**

Խրախուսել յուրաքանչյուր երեխայի ակնածանք ցուցաբերել Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հանդեպ:

**Նախապատրաստություն**

1. Աղոթքով ուսումնասիրեք Ղուկաս Բ.1–16 և 3 Նեփի 17.11–12, 21–24:
2. Դասի վերջում տրված նմուշից պատրաստեք բերանի, աչքերի, ականջների, ձեռքերի և ոտքերի կտրվածքներ: Դրանք դրեք պարկի կամ արկղի մեջ:
3. Պատրաստեք հետևյալ բառաշերտը.

   Ակնածանք

4. Պատրաստվեք երգել կամ արտասանել «Ակնածանքով, հանգիստ» կամ «Ես կաշխատեմ ակնածալից լինել»:
5. Պահանջվող նյութեր.
   ա. Աստվածաշունչ և Մորմոնի Գիրք:
   բ. Նկար 2-36, Հիսուսը օրհնում է Նեփիացի երեխաներին; նկար 2-40, Ակնածալից երեխան; նկար 2-41, Հիսուսի ծնունդը (Gospel Art Picture Kit 200; 62116):
6. Անհրաժեշտ պատրաստություններ կատարեք այն լրացուցիչ վարժությունների համար, որոնք ցանկանում եք անցկացնել:

**Դասի առաջարկվող ընթացք**

Երեխաներից մեկին խնդրեք ասել բացիչ աղոթքը:
Եթե երեխաներին խնդրել եք շաբաթվա ընթացքում ինչ-որ բան կատարել, ստուգեք:

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Բացող աղոթքից առաջ երգեք կամ արտասանեք «Ակնածանքով, հանգիստ» երգը:

Ակնածանքով, հանգիստ, սիրով, մենք քո մասին ենք մտածում,
Ակնածանքով, հանգիստ ու մեղմ, մեղեդին ենք մեր երգում:
Ակնածանքով, հանգիստ, աղոթում ենք մենք խոնարհ,
Որ Սուրբ Հոգին բնակվի մեր սրտում այսօր:

Ցուցադրեք նկար 2-40, Ակնածալից երեխան: Երեխաներին ասացեք, որ նկարի վրա պատկերված երեխան պատրաստվում է աղոթքով խոսել Երկնային Հոր հետ:

- Ինչպե՞ս ենք մենք պատրաստվում աղոթելուն: (Մենք ծալում ենք մեր ձեռքերը, փակում ենք մեր աչքերը և խոնարհում ենք մեր գլուխները:)
- Ինչո՞ւ ենք մենք ծալում մեր ձեռքերը, փակում մեր աչքերը և խոնարհում մեր գլուխները աղոթքին նախապատրաստվելու համար:

Շեշտեք, որ երբ մենք անում ենք այդ ամենը, մեզ համար ավելի հեշտ է դառնում մոտ զգալ Երկնային Հորը, երբ աղոթում ենք: Բացատրեք, որ ինչպես կարևոր է իմանալ, որ մեր երկրային ծնողները լսում են, երբ մենք խոսում ենք նրանց հետ, այդքան էլ կարևոր է զգալ, որ Երկնային Հայրը մոտ է մեզ գտնվում, երբ մենք աղոթում ենք:

Երեխաներից մեկին հրավիրեք ասել բացիչ աղոթքը:

Բացիչ աղոթքից հետո կարճ արտահայտեք ձեր շնորհակալությունը սիրող Երկնային Հոր և աղոթքով Նրա հետ խոսելու արտոնության համար:

### Ակնածանքը սիրո և հարգանքի զգացում է

Քննարկում բառաշերտի օգնությամբ

Ցույց տվեք «Ակնածանք» բառաշերտը և դրեք այն ակնածալից երեխայի նկարի կողքին: Կարդացեք բառաշերտի բառը և երեխաներին խնդրեք կրկնել այն:

- Ի՞նչ է ակնածանքը:

Շեշտեք, որ ակնածանքը ավելին է, քան պարզապես լուռ լինելը: Ակնածանքը Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հանդեպ սիրո և հարգանքի հատուկ զգացում է:

Երեխաներին խնդրեք մտածել այն զգացումների մասին, որ նրանք ունեցել են, երբ ծնողները իրենց օգնել են աղոթել կամ կարդացել են իրենց համար Հիսուսի մասին պատմությունները, կամ երբ նրանք տեսնում են կամ լսում են Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի գեղեցիկ ստեղծագործությունները: Բացատրեք, որ այդ ջերմ, խաղաղ զգացումները ակնածանքի զգացումներ են: Այդ զգացումները մեզ օգնում են իմանալ, որ Երկնային Հոր հոգին մոտ է:

Քննարկում նկարի շուրջ

Ցույց տվեք նկար 2-36, Հիսուսը օրհնում է Նեփիացի երեխաներին: Երեխաներին խնդրեք ձեզ պատմեն այդ նկարի մասին (տե՛ս 3 Նեփի 17.11–12, 21–24):

- Ձեր կարծիքով, ի՞նչ զգացումներ ունեին Նեփիացի երեխաները Հիսուս Քրիստոսի հանդեպ:

Ցույց տվեք նկար 2-41, Հիսուսի ծնունդը, և երեխաներին խնդրեք պատմել Հիսուսի ծննդյան պատմությունը (տե՛ս Ղուկաս Բ.1–16): Նրանց խնդրեք ուշադիր նայել նկարի վրա պատկերված մարդկանց:

- Ձեր կարծիքով, ի՞նչ էին զգում այդ մարդիկ, երբ տեսան մանուկ Հիսուսին:
- Ձեր կարծիքով, ի՞նչ դուք կզգայիք, եթե տեսնեիք մանուկ Հիսուսին:

Բացատրեք, որ երբ մենք սիրով մտածում ենք Երկնային Հոր և Հիսուսի մասին, դա նշանակում է, որ մենք ակնածալից ենք:

### Մենք ցույց ենք տալիս մեր ակնածանքը մեր գործերով

Քննարկում

- Ինչպե՞ս ենք մենք ցույց տալիս ակնածանքի մեր զգացումները (սիրով և հարգանքով) Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հանդեպ:

Բացատրեք, որ կարևոր է միշտ ունենալ ակնածանքի զգացում, անկախ նրանից, թե որտեղ ենք մենք, սակայն հատկապես կարևոր է հիշել ակնածալից լինել եկեղեցում: Ժողովատունը Երկնային Հոր տունն է և երբ մենք ակնածալից ենք Երկնային Հոր տանը, Երկնային Հայրը գիտի, որ մենք սիրում ենք իրեն:

Երգ

Երեխաների հետ միասին երգեք կամ արտասանեք «Ես կաշխատեմ ակնածալից լինել»:

Ես սիրում եմ իմ Երկնային Հորը,
Եվ միշտ կաշխատեմ,
Ակնածալից լինել, երբ նրա տանն եմ,
Այդ ժամանակ նա մոտ կլինի ինձ:

Վարժություն

Ցույց տվեք կտրվածքներով պարկը կամ արկղը: Երեխաներին հերթով խնդրեք մի կտրվածք հանել, ցույց տալ այն մյուս երեխաներին և հարցնել. «Ի՞նչ դուք պետք է անեք ձեր (կտրվածքով) ցույց տալու համար ձեր ակնածանքը Երկնային Հոր տանը»:

Հնարավոր պատասխաններ.

Բերան – Խոսել հանգիստ, ժպտալ, երգեր երգել, աղոթել, փակ պահել, երբ որևէ մեկը խոսում է:
Աչքեր – Նայել ուսուցչին կամ ելույթ ունեցողին, փակել աղոթքի ժամանակ:
Ձեռքեր – Պահել անշարժ, բարձրացնել հարցի դեպքում, ծալել աղոթքի ժամանակ:
Ոտքեր – Քայլել հանգիստ, պահել անշարժ:
Ականջներ – Լսել այն, ինչ ասվում է:

Վարժություն

Երեխաներին օգնեք ասել հետևյալ վարժության խոսքերը և կատարել շարժումները.

Ես միշտ ակնածալից եմ
Իմ գլխից *(ձեռքերը դրեք գլխի վրա)*
Մինչև ոտքերիս ծայրերը *(դիպչեք ոտքերի ծայրերին):*
Երբ ես քայլում եմ *(հանգիստ քայլեք տեղում),*
Ոտքս լուռ եմ դնում:
Երբ ես խոսում եմ,
Բառերը մեղմ եմ ասում *(մատները դրեք շրթունքներին),*
Ոչ թե բարձր և ուժեղ *(գլուխը այս ու այն կողմ շարժեք):*
Երբ ես լսում եմ *(ձեռքը մոտեցրեք ականջին),*
Շրթունքներս չեմ շարժում *(սեղմեք շրթունքները)*
Եվ ձեռքերս ծալում եմ *(ծալեք ձեռքերը),*
Երբ աղոթում եմ,
Գլուխս խոնարհում եմ *(խոնարհեք գլուխը)*
Եվ աչքերս փակում եմ *(փակեք աչքերը):*
Ես միշտ ակնածալից եմ
Իմ գլխից *(ձեռքերը դրեք գլխի վրա)*
Մինչև ոտքերիս ծայրերը *(դիպչեք ոտքերի ծայրերին):*
(Adapted from Diana Eckersell Janson, “I’m Always Reverent,” *Friend,* Sept. 1993, p. 32.)

### Մենք կարող ենք օգնել ուրիշներին ակնածալից լինել

Ուսուցչի ելույթ

Երեխաներին հիշեցրեք, որ նրանց գործողությունները ազդում են իրենց կողքինների վրա: Սա մեկ այլ լավ պատճառ է եկեղեցում ակնածալից լինելու համար:

- Ինչպե՞ս եք ձեզ զգում, երբ Երեխաների Խմբում ձեր կողքին ինչ-որ մեկը աղմկում է:

Շեշտեք, որ եթե մեր կողքին ինչ-որ մեկը աղմկում է, մեզ համար դժվար է լինում մտածել Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի մասին: Սմանապես, երբ մենք աղմկում ենք կամ այլ ոչ ակնածալից բաներ ենք անում, ապա ուրիշների համար դժվար է ակնածալից լինել: Երեխաներին խրախուսեք իրենց պահել այնպես, որպեսզի օգնեն իրենց և ուրիշներին ակնածալից լինել:

Պատմվածք

Պատմեք մի պատմություն երեխայի մասին, որին դուք ճանաչում եք, որը օգնել է իր ընկերոջը ակնածալից լինել, կամ պատմեք հետևյալ պատմությունը.

Փեթին շատ երջանիկ աղջիկ էր: Նա սիրում էր ժպտալ, ծիծաղել և երգել: Սակայն ամենից շատ նա սիրում էր խոսել: Նա միշտ շատ բան ուներ ասելու և կարող էր խոսել ցանկացած մարդու հետ, ով իրեն կլսեր: Փեթիի լավագույն ընկերը Մերի Ջոն էր, որը սիրում էր խոսել այնքան, որքան Փեթին:

Մի կիրակի Փեթին այցելեց Երեխաների Խումբը, ուր Մերի Ջոն էր հաճախում: Բացող վարժությունների ժամանակ Փեթին սկսեց Մերի Ջոյին պատմել իր նոր կոշիկների մասին, սակայն Մերի Ջոն թափահարեց գլուխը և ձեռքով նշան արեց, որ Փեթին լուռ լինի:

Քանի որ ոչ ոք իրեն չէր լսում, Փեթին դադարեց խոսելը և շուտով հետաքրքրությամբ սկսեց լսել ուսուցչին, որը պատմություն էր պատմում: Նա սովորեց Փրկչի մասին և հաճույք ստացավ Երեխաների Խմբում անցկացրած իր ժամանակից:

Երբ աղջիկները դուրս էին գալիս սենյակից, ուսուցիչը նրանց շնորհակալություն հայտնեց դասարանում ակնածալից լինելու համար: Դասից հետո Մերի Ջոն Փեթիին բացատրեց, թե ինչու չէր խոսում դասի ժամանակ: Մերի Ջոն ասաց, որ նա սիրում է Երկնային Հորը և Հիսուսին, և այդ պատճառով միշտ աշխատում է եկեղեցում ակնածալից լինել:

Քննարկում

- Ինչո՞ւ էր Մերի Ջոն ուզում ակնածալից լինել Երեխաների խմբում:
- Ինչպե՞ս Մերի Ջոն Փեթիին օգնեց ակնածալից լինել:
- Ինչպե՞ս կարող եք դուք օգնել ուրիշներին լինել ակնածալից:

**Ամփոփում**

Վկայություն

Երեխաներին վկայեք, որ ակնածալից լինելը նրանց օգնում է ավելի շատ սովորել Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի մասին և զգալ նրանց հանդեպ սերը: Կարող եք կիսվել ձեր անձնական վկայությամբ, երբ հատուկ ակնածալից զգացում եք ունեցել Երկնային Հոր և Հիսուսի հանդեպ:

Երեխաներին թույլ տվեք արտահայտել Երկնային Հոր և Հիսուսի հանդեպ սիրո ու հարգանքի իրենց զգացումները:

Երեխաներին խրախուսեք լինել ակնածալից, երբ գնում են ժողովների կամ Երեխաների Խմբից հետո դուրս են գալիս ժողովատնից:

Երեխաներից մեկին հրավիրեք ասել փակիչ աղոթքը:

---

**Լրացուցիչ վարժություններ**

Հետևյալ վարժություններից ընտրեք նրանք, որոնք լավագույնս կհամապատասխանեն ձեր դասարանի երեխաներին: Դուք կարող եք դրանք օգտագործել դասի ընթացքում, որպես դասի վերանայում կամ ամփոփում: Լրացուցիչ ուղղության համար տե՛ս «Դասաժամ» «Օգնություն ուսուցչին» բաժինները:

1. Երեխաներին օգնեք խաղալ հետևյալ մատնախաղը.

   Լուռ, ինչպես ձյան փաթիլն է իջնում *(Ձեռքերով ձգվեք դեպի վերև, ապա ներքև, շարժելով մատները),*
   Անձայն, ինչպես ծաղիկներն են աճում (բռունցք արեք, ապա դանդաղ բացեք մատները, ինչպես *ծաղկող ծաղիկը),*
   Հանգիստ, ինչպես թիթեռն է թռչում *(բթամատերը միացրեք իրար և շարժեք մատները թևերի նման),*
   Մեղմ, մեղմ իմ կողքով է անցնում:

Այդպես հանգիստ էլ ես կլինեմ *(մի ձեռքը դրեք սրտի վրա),*
Երբ Երեխաների Խումբն այցելեմ *(ձեռքերը միասին ծալեք):*

2. Լոբով մի պարկ կամ որևէ այլ փափուկ առարկա զցեք երեխաներից մեկին և խնդրեք նրան ասել մի եղանակ, որով կարելի է ակնածալից լինել (հնարավոր պատասխաններ. ուղիղ նստել, լսել, մտածել Հիսուսի մասին, բարձրացնել ձեռքը, հանգիստ քայլել, ուրիշների հանդեպ հարգանք ցուցաբերել, և ծալել ձեռքերը): Ապա երեխային խնդրեք այդ առարկան զցել ձեզ: Շարունակեք, մինչև որ բոլոր երեխաներին հերթ կհասնի: Երեխաներին խրախուսեք մտածել ակնածանք ցույց տալու բազմաթիվ եղանակների մասին:

3. Երեխաներին օգնեք դերերով խաղալ մի քանի իրավիճակ, որոնք ակնածանք են սովորեցնում: Օգտագործեք հետևյալ մտքերը կամ ինքներդ մտածեք.

   - Դասի ժամանակ դուք ինչ որ բան եք ուզում ասել ձեր ուսուցչին: Ինչպե՞ս կարող եք դա ակնածանքով անել:
   - Դուք չգիտեք այն երգը, որը դասարանը երգում է: Ի՞նչ կարող եք անել ակնածանք ցուցաբերելու համար:
   - Ձեր փոքր եղբայրը հաղորդության ժողովի ժամանակ խոսում է: Ի՞նչ կարող եք անել օգնելու համար նրան ակնածալից լինել:
   - Դուք մտնում եք սենյակ, երբ մարդիկ աղոթում են: Ինչպե՞ս դուք կարող եք ցույց տալ ձեր ակնածանքը:

4. Երեխաներին օգնեք խաղալ հետևյալ մատնախաղը.

   Ահա եկեղեցին *(մատները, հյուսելով մտցրեք իրար մեջ, փակեք ձեռքերը, թողելով մատները ներսում):*
   Ահա նրա սուր գագաթը *(բարձրացրեք ցուցամատները սուր գագաթը ցույց տալու համար):*
   Բացիր դուռը *(բացեք ձեռքերը, մատները պահելով իրար մեջ հյուսված),*
   Եվ տես բոլոր մարդկանց *(շարժեք մատները):*
   Փակիր դուռը *(կրկին փակեք ձեռքերը, մատները ներսում)*
   Եվ լսիր նրանց աղոթքը:
   Բացիր դուռը *(բացեք ձեռքերը, մատները պահելով իրար մեջ հյուսված),*
   Եվ նրանք բոլորը դուրս կգան *(առանձնացրեք ձեռքերը):*

   Մատնախաղից հետո պատմեք մի երեխայի մասին, որը օգտագործում է մատնախաղը հաղորդության ժողովի ժամանակ: Երբ երեխան նայում է շուրջը և տեսնում, որ բոլորը լուռ նստած են, նա որոշում է մատների մարդկանց նույնպես ակնածալից դարձնել և հանգիստ դնում է նրանց իր ծնկների վրա:

5. Արտասանեք «Ակնածանքը սեր է» կամ «Հայր, ես ակնածալից կլինեմ»:

   Ակնածանքը սեր է
   Ակնածանքը ավելին է, քան միայն լուռ նստելը.
   Դա վերնում Հոր մասին մտածելն է,
   Նրա օրհնությունների մասին մտածելն է:
   Ես ակնածալից եմ, քանզի ակնածանքը սեր է:
   Երբ ես ակնածալից եմ, ցույց եմ տալիս իմ խոսքով ու գործով:
   Հետևելու ուղին պարզ է:
   Երբ ես ակնածալից եմ, գիտեմ իմ սրտում,
   Որ Երկնային Հայրն ու Հիսուսը մոտ են:

   (© 1987 by Maggie Olauson. Used by permission.)

Հայր, ես ակնածալից կլինեմ
Հայր, ես ակնածալից կլինեմ
Եվ քո տանը լուռ կքայլեմ,
Ձեռքերս կծալեմ, գլուխս կխոնարհեմ,
Աչքերս կփակեմ, երբ աղոթքներ ասվեն:
Ականջ կդնեմ իմ լսած խոսքերին,
Քանզի քո տանը ինձ մոտ եմ զգում քեզ:
Թող մտքերս մաքուր լինեն,
Որ ակնածանքով ես խոսեմ:
Հայր, ես ակնածալից կլինեմ
Եվ քո տանը լուռ կքայլեմ:

# Օրինված են խաղաղարարները

Դաս
22

**Նպատակ**

Խրախուսել յուրաքանչյուր երեխայի լինել իր տանը խաղաղարար:

**Նախապատրաստություն**

1. Աղոթքով ուսումնասիրեք Մաթեոս Ե.1–12 (կամ 3 Նեփի 12.1–12) և 7.1–5, 12 (կամ 3 Նեփի 14.1–5, 12):
2. Դասարանի բոլոր երեխաների և ձեր համար հետևյալ նկարի ավելի մեծ օրինակը պատրաստեք (ձերը պահեք 28-րդ դասի ժամանակ օգտագործելու համար):



3. Հնարավորության դեպքում, գտեք մի քանի նկար, որոնց վրա ընտանիքները միասին հաճելի գործ են անում:
4. Դասարանի յուրաքանչյուր երեխայի համար թղթի վերին մասում գրեք *Օրինված են խաղաղարարները:*
5. Պահանջվող նյութեր.
   ա. Աստվածաշունչ և Մորմոնի Գիրք:
   բ. Մատիտներ:
   գ. ԸՃ նկար (տե՛ս դաս 1):
   դ. Նկար 2–37, Լեռան Քարոզը (Gospel Art Picture Kit 212; 62166); նկար 2-42, Ընտանեկան զվարճություն:
6. Անհրաժեշտ պատրաստություններ կատարեք այն լրացուցիչ վարժությունների համար, որոնք ցանկանում եք անցկացնել:

**Դասի առաջարկվող ընթացք**

Երեխաներից մեկին խնդրեք ասել բացիչ աղոթքը:

Եթե երեխաներին խնդրել եք շաբաթվա ընթացքում ինչ-որ բան կատարել, ստուգեք:

**Մեր տներում մենք կարող ենք երջանիկ կամ տխուր զգացումներ ունենալ**

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Յուրաքանչյուր երեխայի տվեք մի թղթե դեմք: Երեխաներին խնդրեք ձեզ հետ միասին երգել կամ արտասանել «ժպիտներ» երգը, ցույց տալով թղթե ուրախ կամ տխուր դեմքը, ինչպես ասվում է երգի մեջ:

Քննարկում

Ցույց տվեք նկար 2-42, Ընտանեկան զվարճություն, կամ ձեր գտած այլ նկարները, որտեղ ընտանիքի անդամները միասին հաճելի գործ են անում: Երեխաներին խնդրեք շրջել իրենց թղթե դեմքերը այն կողմով, որը արտահայտում է ընտանիքի անդամների զգացումները:

• Ձեր կարծիքով, ինչո՞ւ են այս մարդիկ երջանիկ:

Երեխաներին խնդրեք շրջել իրենց թղթե դեմքերը այն կողմով, որը արտահայտում է ընտանիքի անդամների զգացումները, երբ նրանք վիճում կամ կռվում են:

• Ինչո՞ւ է վիճելն ու կռվելն ընտանիքի անդամներին տխուր դարձնում:

Վարժություն

Երեխաներին խնդրեք շրջել իրենց թղթե դեմքերը տխուր կողմով, և թող յուրաքանչյուրը պատմի որևէ բան, որն ընտանիքին տխուր է դարձնում: Ապա երեխաներին խնդրեք շրջել իրենց թղթե դեմքերը ուրախ կողմով, և պատմել, թե ինչն է ընտանիքին երջանիկ դարձնում:

• Ինչպե՞ս է ձեզ դուր գալիս, երբ ընտանիքն երջանիկ է, թե երբ տխուր է:

Հավաքեք դեմքերը, որպեսզի դրանք չշեղեն երեխաներին: Դասի վերջում դրանք վերադարձրեք երեխաներին, որպեսզի իրենց հետ տուն տանեն:

**Հիսուս Քրիստոսը մեզ սովորեցրել է խաղաղարար լինել**

Քննարկում

Ցույց տվեք նկար 2-37, Լեռան Քարոզը, և երեխաներին խնդրեք ասել, թե ինչ գիտեն նկարի մասին: Բացատրեք, որ Հիսուս Քրիստոսը բարձրացավ սարը և մարդկանց շատ կարևոր բաներ սովորեցրեց, ներառյալ մեր ընտանիքները երջանիկ դարձնելու ճանապարհների մասին:

Բաձրաձայն կարդացեք Մաթևոս Ե.9 (կամ 3 Նեփի 12.9): Բացատրեք, որ Հիսուսը մարդանց սովորեցնում էր խաղաղարարներ լինել: Երեխաներին խնդրեք ձեզ հետ միասին կրկնել խաղաղարար բառը:

• Ո՞վ է խաղաղարարը:

Բացատրեք, որ խաղաղարարը այն մարդն է, ով ուրիշներին օգնում է բարկացած լինելու փոխարեն երջանիկ լինել: *Խաղաղությունը* նշանակում է հանգստություն և երջանկություն, այսպիսով խաղաղարարը տունը հանգիստ և երջանիկ վայր է դարձնում:

Բացատրեք, որ Երկնային Հայրն ու Հիսուս Քրիստոսը խաղաղարարներ են, և մեզանից յուրաքանչյուրը նույնպես կարող է խաղաղարար լինել: Հիսուսը մեզ ասել է, թե ինչպես:

Բարձրաձայն կարդացեք Մաթևոս Է.12 (կամ 3 Նեփի 14.12): Երեխաներին օգնեք հասկանալ, որ իրենք պետք է ուրիշներին վերաբերվեն այնպես, ինչպես որ ուզում են, որ իրենց վերաբերվեն: Այդ դեպքում նրանք խաղաղարարներ կլինեն և իրենց տները երջանկության զգացում կբերեն:

Բեմականացման վարժություն

Նկարագրեք մի քանի իրավիճակ և երեխաներին օգնեք մտածել, թե ինչպես կարող են տվյալ իրավիճակում հանդես գալ որպես խաղաղարարներ: Երեխաներին օգնեք մտածել, թե ինչպես կարելի է տվյալ իրավիճակում ներգրավված յուրաքանչյուր մարդուն երջանիկ դարձնել: Օգտագործեք ստորև տրված իրավիճակները կամ մտածեք ինքներդ.

1. Դուք լուռ նայում եք գրքի մեջ, երբ ձեր քույրը գալիս է և խլում է գիրքը ձեր ձեռքից, որովհետև ուզում է կարդալ այն:
   • Ինչպե՞ս դուք կուզենայիք, որ ձեզ վերաբերվեին:
   • Ի՞նչ դուք կասեք կամ կանեք, եթե խաղաղարար եք:
2. Դուք զնում եք խոհանոց ձեր սիրած թխվածքի համար: Ձեր եղբայրը վազում է դեպի թխվածքներով ափսեն և վերցնում է վերջինը ու ուտում այն: Դուք բարկացած եք:

- Ինչպե՞ս դուք կուզենայիք, որ ձեզ վերաբերվեին:
- Ի՞նչ դուք կասեք կամ կանեք, եթե խաղաղարար եք:

3. Դուք և ձեր ընկերը նկարում եք: Նա ձեզ ծաղրում է, որ ծառը կարմիր եք ներկել: Դուք վիրավորված եք և մտածում եք, թե ինչ վիրավորական խոսք ասեք նրան:
   - Ինչպե՞ս դուք կուզենայիք, որ ձեզ վերաբերվեին:
   - Ի՞նչ դուք կասեք կամ կանեք, եթե խաղաղարար եք:

Սուրբ գրություն — Կրկին կարդացեք կամ ձեր խոսքերով պատմեք Մաթևոս է.12 (կամ 3 Նեփի 14.12) դասարանի համար:

ԸՃ նկար — Ցույց տվեք ԸՃ նկարը: Երեխաներին ասացեք, որ երբ նրանք ուրիշներին վերաբերվում են այնպես, ինչպես կուզենային, որ իրենց վերաբերվեին, նրանք հետևում են Հիսուս Քրիստոսին և ընտրում են ճիշտը: Երեխաներին խնդրեք ձեզ հետ միասին կրկնել նկարի խոսքերը:

### Մենք բոլորս կարող ենք խաղաղարարներ լինել

Պատմվածք — Ձեր խոսքերով պատմեք խաղաղարարների մասին հետևյալ պատմվածքը.

Եպիսկոպոսը մի քանի երիտասարդների խնդրեց օգնել իրեն: Մեկ ամսվա ընթացքում նա ուզում էր, որ երիտասարդներն իրենց տներում խաղաղարարներ լինեին, սակայն ոչ ոքի չասեին, թե ինչ էին անում: Նա ասաց, որ նրանք լինեն բարի և հասկացող և լավ օրինակ ծառայեն: Սա նրանց խնդրեց օգնել դադարեցնել վիճաբանությունները և ուղիներ գտնել իրենց ընտանիքի անդամների հանդեպ սեր ցուցաբերել: Երիտասարդները պետք է վերադառնային եպիսկոպոսի մոտ մեկ ամիս անց և պատմեին, թե ինչ տեղի ունեցավ:

Մեկ ամիս անց նրանք կրկին հավաքվեցին և պատմեցին, թե ինչ են արել: Բոլոր երիտասարդներն ասացին, որ իրենց տները ավելի երջանիկ վայր են դարձել խաղաղարար լինելու իրենց ջանքերի շնորհիվ: (Տե՛ս Franklin D. Richards, in Conference Report, Oct. 1974, p. 153; or *Ensign,* Nov. 1974, p. 106:)

Քննարկում
- Ի՞նչ խնդրեց եպիսկոպոսը երիտասարդներին:
- Ի՞նչ պատահեց, երբ նրանք արեցին դա:
- Ինչպե՞ս դուք կարող եք ձեր տանը խաղաղարար լինել:

Արվեստի վարժություն — Յուրաքանչյուր երեխայի մի թուղթ տվեք, որի վրա գրված կլինի *Օրհնված են խաղաղարարները:* Բարձրաձայն կարդացեք թղթի վերևի մասում գրված բառերը և երեխաներին խնդրեք միասին կրկնել դրանք: Երեխաներին մատիտներ տվեք և խնդրեք նկարել երջանիկ պահին իրենց ընտանիքի նկարը:

Երեխաներին խրախուսեք փակցնել իրենց նկարները տանը այնպիսի մի տեղ, որպեսզի դրանց նայելուց հիշեն, որ խաղաղարերներ են:

### Ամփոփում

Երգ — Բաժանեք թղթե դեմքերը և կրկին արտասանեք «ժպիտներ» երգի բառերը: Երեխաներին հիշեցրեք, որ խաղաղար լինելով նրանք կարող են տխուր դեմքերը ուրախ դարձնել:

Վկայություն — Վկայեք, որ Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը ուզում են, որ մենք խաղաղարար լինենք: Երեխաներին հիշեցրեք, որ երբ նրանք փորձում են տանը խաղաղարար լինել. իրենք և իրենց ընտանիքներն ավելի երջանիկ են լինում:

Յուրաքանչյուր երեխայի խրախուսեք աշխատել տանը խաղաղարար լինել հաջորդ շաբաթվա ընթացքում: Երեխաներին խնդրեք պատրաստ լինել պատմել իրենց փորձի մասին հաջորդ շաբաթ:

Երեխաներից մեկին խնդրեք ասել փակիչ աղոթքը: Նրան խնդրեք խնդրել Երկնային Հոր օգնությունը, որպեսզի դասարանի անդամները կարողանան իրենց տներում խաղաղարարներ լինել:

### Լրացուցիչ վարժություններ

Հետևյալ վարժություններից ընտրեք նրանք, որոնք լավագույնս կհամապատասխանեն ձեր դասարանի երեխաներին: Դուք կարող եք դրանք օգտագործել դասի ընթացքում, որպես դասի վերանայում կամ ամփոփում: Լրացուցիչ ուղղության համար տե՛ս «Դասաժամ» «Օգնություն ուսուցչին» բաժինները:

1. Ցույց տվեք նկար 2-3, Հիսուս Քրիստոսը, կամ Հիսուսին պատկերող որևէ այլ նկար: Երեխաներին խնդրեք պատկերացնել, որ Հիսուս Քրիստոսը գալիս է իրենց տուն: Նրանց խնդրեք մտածել, թե որքան ոգևորված իրենց կզգային, եթե Հիսուսը գար նրանց տուն:

   - Ի՞նչ դուք կանեիք պատրաստ լինելու համար:
   - Ինչպե՞ս ձեզ կպահեիք, երբ Հիսուսը գար:

   Երեխաներին խնդրեք ցույց տալ մի քանի բան, որ նրանք կանեին, եթե Հիսուսը այցելեր իրենց: Բացատրեք, որ եթե Հիսուսը լիներ նրանց տանը, ապա նրանք պետք է ջանային խաղաղարար լինել՝ կիսվելով, լինելով բարի միմյանց հանդեպ և չկռվելով: Այդ դեպքում նրանք լավ զգացում կունենային, որը Հիսուսը կբերեր նրանց տուն:

   Երեխաներին ասացեք, որ նրանք կարող են իմանալ, թե ինչպես լինել խաղաղարար, եթե մտածեն, թե ինչպես իրենց պահեն, եթե Հիսուսը այցելի իրենց տունը:

   Երեխաներին հիշեցրեք, որ երբ նրանք խաղաղարար են, նրանք օգնում են իրենց ընտանիքներին երջանիկ լինել:

3. Արտասանեք «Եթե երջանիկ ես», փոխարինելով *ծափ տուր* այն շարժումների հետ, որ երեխաները կառաջարկեն:

   Եթե երջանիկ ես և գիտես դա, ծափ տուր:
   Եթե երջանիկ ես և գիտես դա, ծափ տուր:
   Եթե երջանիկ ես և գիտես դա,
   Ապա քո դեմքը ցույց կտա դա:
   Եթե երջանիկ ես և գիտես դա, ծափ տուր:

4. Երեխաներին ցույց տալու համար, որ իրենք կարող են տիրապետել մյուսների գործողությունների հանդեպ իրենց ռեակցիան, երկու երեխայի կանգնեցրեք դեմքով դեմ դիմաց: Երեխաներից մեկին խնդրեք դեմքի արտահայտությունը չփոխել, իսկ մյուսին խնդրեք առաջինին ստիպել ժպտալ, ծիծաղել, կամ որևէ այլ արտահայտություն ընդունել: Թող բոլոր ցանկացող երեխաները հերթով կատարեն այդ վարժությունը:

   Երեխաներին օգնեք հասկանալ, որ նրանք պետք է աշխատեն տիրապետել իրենց ռեակցիաները, երբ ինչ-որ մեկը փորձում է խախտել տան խաղաղությունը: Օրինակ, երբ եղբայրը կամ քույրը գոռում են նրա վրա, նա նախ պետք է չգոռա նրանց վրա, այլ աշխատելով խաղաղարար լինել, գտնել արձագանքելու ավելի լավ եղանակներ:

# Հիսուս Քրիստոսը լավ հովիվ է

Դաս
23

**Նպատակ**

Օգնել յուրաքանչյուր երեխայի հասկանալ, որ յուրաքանչյուր մարդ կարևոր է Հիսուս Քրիստոսի համար:

**Նախապատրաստություն**

1. Աղոթքով ուսումնասիրեք Ղուկաս ԺԵ.1–7 և Հովհաննես Ժ.1–18:
2. Նկար 2-44-ը, Կորած ոչխարը, սոսնձեք ստվարաթղթի վրա: Ապա կտրատեք այն մասերի, սակայն ոչխարը պահելով մի կտորի վրա: (Այդ կտորները պահեք հետագա դասերում օգտագործելու համար:) Դասից առաջ դասարանում թաքցրեք ոչխարով կտորը, որպեսզի այն հնարավոր չլինի հեշտությամբ գտնել:
3. Օգտվելով դասի վերջում տրված նմուշից, պատճենահանեք գառան նկարը դասարանի յուրաքանչյուր անդամի համար: Գառի վրա գրեք երեխաների անունները:
4. Պահանջվող նյութեր.
   ա. Աստվածաշունչ:
   բ. Նկար 2-43, Հովիվը:
5. Անհրաժեշտ պատրաստություններ կատարեք այն լրացուցիչ վարժությունների համար, որոնք ցանկանում եք անցկացնել:

**Դասի առաջարկվող ընթացք**

Երեխաներից մեկին խնդրեք ասել բացիչ աղոթքը:

Եթե երեխաներին խնդրել եք շաբաթվա ընթացքում ինչ-որ բան կատարել, ստուգեք: Կարող եք երեխաներին խնդրել պատմել տանը խաղաղասեր լինելու իրենց փորձի մասին:

**Հովիվները հոգ են տանում իրենց գառների համար**

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Ցույց տվեք նկար 2-43, Հովիվը:

• Ո՞վ է այս մարդը:

Բացատրեք, որ նկարի վրա պատկերված մարդը հովիվ է, որը նման է այն հովիվներին, որոնք ապրել են, երբ Հիսուս Քրիստոսը երկրի վրա էր:

• Ի՞նչ է նա հագել:

Ցույց տվեք հովվի թիկնոցը: Բացատրեք, որ թիկնոցը պատրաստված է ոչխարի կաշվից կամ բրդից, և հովվին պաշտպանում է անապատի թեժ արևից և ցուրտ գիշերներից: Նրա գլխարկը նույնպես պաշտպանում է արևից: Հովիվը ջրով անոթ է կրում և ձեռնափայտ:

• Ի՞նչ է անում հովիվը:

Բացատրեք, որ հովիվը խնամում է ոչխարներին: Ոչխարները ճանաչում են հովվի ձայնը և գնում են նրա ետևից: Շեշտեք, որ հովիվը չի գնում ոչխարների

ետևից: Նա քայլում է նրանց առջևից և ցույց է տալիս, թե ուր պետք է գնալ: Հովիվը իր ոչխարներին տանում է կանաչ հովիտներ, որտեղ լավ խոտ կա ուտելու: Նա տանում է նրանց նաև դեպի ջուրը: Գիշերը նա նրանց տանում է հետ գոմը, որը ցանկապատված կամ փակ տարածք է և ոչխարներն այնտեղ պաշտպանված են վայրի գազաններից և գողերից: Հովիվը մուտքի մոտ պահակ է կանգնեցնում իր ոչխարներին հսկելու համար: Հովիվը հաշվում է իր ոչխարներին, որպեսզի ոչ մեկը չկորի:

**Յուրաքանչյուր գառը կարևոր է հովվի համար**

Պատմվածք

Բացատրեք, որ բոլոր հովիվները, լինի դա Հիսուսի ժամանակ, թե այսօր, խնամում և պաշտպանում են իրենց ոչխարներին: Ձեր խոսքերով պատմեք հետևյալ պատմությունը.

Քերին և Ջիմին ապրում էին ֆերմայում: Նրանց ընտանիքը ոչխարներ ուներ, և Քերին ու Ջիմին ունեին գառների իրենց փոքր հոտը: Նրանք լավ հոգ էին տանում դրանց համար: Նրանք լավ հովիվներ էին:

Մի գիշեր մեծ փոթորիկ բարձրացավ: Քամին քանդեց ցանկապատը, որի ետևում էին Քերիի ու Ջիմիի գառները: Կայծակը վախեցրեց գառներին և նրանք բոլորը դուրս փախան:

Առավոտյան Քերին ու Ջիմին դուրս եկան խնամելու իրենց գառներին: Սակայն գառները ոչ մի տեղ չէին երևում: Քերին ու Ջիմին մտահոգված էին: Նրանք սկսեցին գնալ թաց հողի վրա թողած գառների հետքերով: Շուտով Քերին ու Ջիմին գտան բոլոր ոչխարներին, բացի մեկից:

- Ձեր կարծիքով. ի՞նչ արեցին Քերին ու Ջիմին:

Քերին ու Ջիմին իրենց գառներին քշեցին հետ, փակի տակ առան և գնացին փնտրելու կորած գառին: Նրանք նկատեցին, որ մի գառի ոտնահետքերն այլ ուղղությամբ են տանում: Նրանք գնացին այդ ոտնահետքերով:

Քերին ու Ջիմին վերջապես գտան գառին: Նրա ոտքը մնացել էր անցքի մեջ, նա հոգնած և թույլ էր: Նրանք խնամքով գառանը տարան տուն և Ջիմին բռնեց նրան, մինչև Քերին մաքրեց ոտքի վերքերը: Քերին ու Ջիմին երջանիկ էին, որ գտան իրենց բոլոր գառներին:

- Ինչո՞ւ Քերին և Ջիմին շարունակեցին փնտրել վերջին գառանը նրանից հետո, երբ գտան մյուսներին:

Գլուխկոտրուկով վարժություն

Ձեր պատրաստած գլուխկոտրուկի կտորները դասավորեք հատակի կամ սեղանի վրա և երեխաներին օգնեք հավաքել այն:

Երբ երեխաները հասկանան, որ մի կտորը պակասում է, շեշտեք, որ պակասող կտորի վրա ոչխար է նկարած:

- Ի՞նչ է անում լավ հովիվը, երբ կորում է ոչխարներից մեկը:

Պատմվածք սուրբ գրություններից

Ցուցադրեք Աստվածաշունչը և երեխաներին ասացեք, որ Հիսուս Քրիստոսը Աստվածաշնչում մեզ ասում է, թե ինչ է անում լավ հովիվը, երբ նրա ոչխարներից մեկը կորում է: Բացատրեք, որ երբ Հիսուսն երկրի վրա էր, նա հաճախ մարդկանց սովորեցնում էր պատմություններով: Նրա պատմություններից մեկը հովվի և կորած ոչխարի մասին էր: Բարձրաձայն կարդացեք Ղուկաս ԺԵ.4:

- Ի՞նչ է ասում Աստվածաշունչն այն մասին, թե ինչ պետք է անի լավ հովիվը:

Բեմականացման վարժություն

Երեխաներին խնդրեք պատկերացնել, թե իրենք հովիվներ են: Նրանց խնդրեք ձևացնել, կարծես թե թիկնոց են հագնում և ձեռնափայտ բռնում, ապա խնդրեք գտնել կորած ոչխարով կտորը: Երբ գլուխկոտրուկի այդ կտորը

գտնվի, գովեք բոլոր հովիվներին և հավաքեք նրանց միասին գլուխկոտրուկը հավաքելու համար:

Երեխաներին հարցրեք, թե ինչպես էին իրենց զգում, երբ գտան կորած կտորը:

Սուրբ գրություն

Պատմեք, թե ինչպես իրեն զգաց առակի հովիվը, երբ գտավ իր ոչխարին, ինչպես ասվում է Ղուկաս ԺԵ.5–6: Համեմատեք երեխաների զգացումները նրա հետ, թե ինչ պետք է անի և զգա լավ հովիվը ըստ Հիսուսի:

**Հիսուս Քրիստոսը լավ հովիվ է և մենք նրա գառներն ենք:**

Սուրբ գրության քննարկում

Բարձրաձայն կարդացեք Հովհաննես ժ.14:

- Ո՞վ է այս հատվածում լավ հովիվը:

Բացատրեք, որ սուրբ գրության խոսքերը Հիսուս Քրիստոսի խոսքերն են: Նա է Բարի Հովիվը:

- Ովքե՞ր են Հիսուսի հոտի ոչխարները: (Բացատրեք, որ *հոտ* նշանակում է ոչխարների խումբ:)

Երեխաներին օգնեք հասկանալ, որ նրանք Հիսուսի հոտի ոչխարներից են: Բացատրեք, որ Փրկիչն Իրեն համեմատում է հովվի հետ, որովհետև սիրում և հոգ է տանում մեզանից յուրաքանչյուրի համար, ինչպես հովիվը իր ոչխարների համար: Նա ուզում է, որ մենք բոլորս ապահով և երջանիկ լինենք: Ինչպես հովիվն է ճանաչում ամեն մի ոչխարին, Հիսուսը ճանաչում է մեզանից յուրաքանչյուրին: Մենք բոլորս կարևոր ենք նրա համար:

Վարժություն

Ցույց տվեք թղթե գառները, որոնց վրա գրված են երեխաների անունները: Բարձր պահեք գառներից մեկը և ասացեք. «(Երեխայի անունը) Հիսուսի հոտի գառներից մեկն է»: Այնուհետև ցույց տվեք գառը, դնելով սեղանի կամ հատակի վրա: Շարունակեք, մինչև բոլորին կնշեք, ներառյալ ձեզ: Երբ կհասնեք այն երեխային, որը ներկա չէ, ասացեք. «(Երեխայի անունը) Հիսուսի հոտի գառներից մեկն է, և Հիսուսը գիտի, որ նա այսօր Երեխաների խմբում չէ: Նա ուզում է, որ իր բոլոր գառներն այստեղ լինեն»:

Այս վարժությունից հետո, հավաքեք բոլոր գառները և երեխաներին խնդրեք միասին հաշվել դրանք: Շեշտեք, որ ահա թե որքան երեխա պետք է լինի դասարանում, կամ քանի գառ պետք է լինի հոտում: Այս թիվը համեմատեք այսօր դասարանում ներկա երեխաների թվի հետ: Երեխաներին ասացեք, որ դուք հուսով եք, որ նրանք բոլորը կգան հաջորդ շաբաթ, եթե հիվանդ չեն կամ քաղաքից դուրս չեն գնալու, որովհետև դուք ուզում եք օգնել, որ նրանց մասին հոգ տանեն, և ուսուցանեք նրանց: Շեշտեք, թե որքան կարևոր է Հիսուսի համար, որ նրա բոլոր գառները Երեխաների խումբ գան:

Առաջարկեք, որ երեխաները հովիվներ լինեն և գտնեն իրենց կորած գառներին, այսինքն, այն երեխաներին, որոնք չեն հաճախում այսօր Երեխաների խումբ, և օգնեն նրանց կրկին գալ Երեխաների խումբ:

**Ամփոփում**

Վկայություն

Վկայություն բերեք այն մասին, որ յուրաքանչյուր երեխա կարևոր է Հիսուս Քրիստոսի համար և որ Հիսուս Քրիստոսը սիրում և հոգ է տանում նրանցից յուրաքանչյուրի համար:

Յուրաքանչյուր երեխայի տվեք իր անունով գառը: Երեխաներին խրախուսեք իրենց գառները տուն տանել և կիսվել հովիվների և Բարի Հովվի մասին իրենց սովորածով ընտանիքի անդամների հետ:

Երեխաներից մեկին հրավիրեք ասել փակիչ աղոթքը:

**Լրացուցիչ վարժություններ**

Հետևյալ վարժություններից ընտրեք նրանք, որոնք լավագույնս կհամապատասխանեն ձեր դասարանի երեխաներին: Դուք կարող եք դրանք օգտագործել դասի ընթացքում, որպես դասի վերանայում կամ ամփոփում: Լրացուցիչ ուղղության համար տե՛ս «Դասաժամ» «Օգնություն ուսուցչին» բաժինները:

1. Երեխաներին խնդրեք մի երկտող գրել կամ նկար նկարել, որը կարելի է տալ այսօր երեխաների խմբում բացակայող երեխաներին: Կարող եք գրել նման մի բան. «Մենք կարոտում էինք քեզ Երեխաների խմբում» կամ «Եկ, միացիր մեզ Երեխաների խմբում»:

2. Երեխաներին թույլ տվեք գունավորել իրենց գառները կամ բամբակի գնդիկներ սոսնձել դրանց վրա, փափուկ դարձնելու համար:

3. Երեխաներին օգնեք արտասանել «Հիսուսը սիրում է բոլոր երեխաներին» հատվածը, կատարելով հետևյալ շարժումները.

   Հիսուսը սիրում է բոլոր երեխաներին *(ձեռքերը լայն բացեք):*
   Փոքրիկ, փոքրիկ բալիկներին *(ձեռքով ցույց տվեք ծնկի հասակի երեխայի):*
   Օրորոցի մանուկներին *(ձեռքերով բարուր պատկերեք):*
   Մեծ և բոյով երեխաներին *(ձեռքը բարձրացրեք գլխից վեր):*

   (From *Finger Fun for Little Folk* by Thea Cannon. © 1949 by the Standard Publishing Company, Cincinnati, Ohio. Used by permission.)

4. Երգեք կամ արտասանեք «Հովվի սրտի համար թանկ» երգի առաջին քառատողը (*Hymns,* no. 221):

   Հովվի սրտի համար թանկ են,
   Իր հոտի ոչխարները,
   Թանկ է նրանց հանդեպ Իր սերը,
   Ավելի թանկ, քան ոսկին ու արծաթը:
   Հովվի սրտի համար թանկ են,
   Բոլոր կորած ոչխարները:
   Գնում է Նա բարձր լեռները,
   Մտնում է Նա խորը ջրերը,
   Նրանք մոլորվել են դաշտերում,
   Մրսած, անօգնական ու քաղցած
   Շտապում է գտնել նրանց
   Բերելով հետ՝ իրենց տուն:





Դաս
24

# Ես կարող եմ ցույց տալ իմ երախտագիտությունը

**Նպատակ**

Խրախուսել յուրաքանչյուր երեխայի արտահայտել Երկնային Հոր հանդեպ իր երախտագիտությունը:

**Նախապատրաստություն**

1. Աղոթքով ուսումնասիրեք Ղուկաս ժէ.11–19 և Ա Թեսաղոնիկեցիս Ե.18:
2. Պատրաստվեք երգել կամ արտասանել «Երեխաներն ողջ աշխարհում» երգը:
3. Պահանջվող նյութեր.
   ա. Աստվածաշունչ:
   բ. Փոքր բաժակ, մեծ գդալ, ջրով անոթ և հարթ ափսե, որի վրա կտեղավորվեն ջրով անոթն ու բաժակը:
   գ. Թուղթ և մատիտներ յուրաքանչյուր երեխայի համար:
   դ. Գրատախտակ, կավիճ և ջնջիչ:
   ե. Նկար 2-45, Տաս բորոտները (Gospel Art Picture Kit 221; 62150):
4. Անհրաժեշտ պատրաստություններ կատարեք այն լրացուցիչ վարժությունների համար, որոնք ցանկանում եք անցկացնել:

**Դասի առաջարկվող ընթացք**

Երեխաներից մեկին խնդրեք ասել բացիչ աղոթքը:

Եթե երեխաներին խնդրել եք շաբաթվա ընթացքում ինչ-որ բան կատարել, ստուգեք:

**Մեզ բազմաթիվ օրհնություններ է տրված**

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Ցուցադրեք դատարկ բաժակը, գդալը և ջրով անոթը: Երեխաներին խնդրեք մտածել այն բազմաթիվ օրհնությունների մասին, որ Երկնային Հայրը տվել է իրենց, և բացատրեք, որ ամեն օրհնությունը նշելիս կարող են մի գդալ ջուր վերցնել ջրով անոթից և լցնել բաժակի մեջ:

Բաժակը և ջուրը դրեք ափսեի վրա, որ կաթիլները ցած չընկնեն, իսկ ափսեն դրեք հարթ մակերևույթի վրա, օրինակ սեղանին կամ հատակին:

Կարող եք օգտագործել հետևյալ հարցերը օգնելու համար երեխաներին մտածել իրենց օրհնությունների մասին.

- Ի՞նչ սքանչելի ստեղծագործություններ է մեզ տվել Երկնային Հայրը:
- Ովքե՞ր են այն հատուկ մարդիկ, որոնցով նա մեզ օրհնել է:
- Ի՞նչ բաներ կարող են անել մեր հիանալի մարմինները:

Երեխաներին խնդրեք հերթով նշել օրհնությունները և գդալով լցնել բաժակը, մինչև այն լցվի և թափվի: Բացատրեք, որ Երկնային Հայրը սիրում է մեզ և շատ օրհնություններ է մեզ տվել: Երբ մենք մտածում ենք այդ օրհնությունների մասին, մենք շնորհակալ ենք և լցված ենք Երկնային Հոր հանդեպ սիրով: Երկնային Հայրը մեզ այնքան օրհնություններ է տվել, որ մեր սերը չափից դուրս է, ինչպես ջուրն է թափվում բաժակից:

## Մենք պետք է երախտագիտություն զգանք և ցույց տանք այն

Պատմվածք և քննարկում

Ձեր խոսքերով պատմեք հետևյալ պատմությունը.

Լաուրայի ծննդյան օրը մոտենում էր և Լաուրայի տատիկը նրան հատուկ նվեր էր ցանկանում տալ: Թեև տատիկի տեսողությունը վատացել էր և ձեռքով կարելը նրա համար դժվար էր դարձել, նա որոշեց Լաուրայի համար մի տիկնիկ կարել: Նա ժամեր անցկացրեց, կարելով երկար մազերով, ասեղնագործած դեմքով և սքանչելի երկար զգեստով մի տիկնիկ: Լաուրայի ծննդյան օրը տատիկը փաթաթեց տիկնիկը և տարավ այն Լաուրային:

Երեխաներին ասացեք, որ դուք կասեք այդ պատմության վերջանալու երկու տարբեր տարբերակ: Նրանց խնդրեք ուշադիր լսել և որոշել, թե որ վերջն է ավելի լավը:

*Վերջ 1*

Լաուրան շատ ուրախ էր իր ծննդյան օրվա առիթով և նվերների համար: Նա արագ բացեց նվերները: Երբ նա հասավ տատիկի նվերին, բացեց տուփը, մի պահ նայեց տիկնիկին, ապա մի կողմ գցեց տիկնիկը և անցավ հաջորդ նվերին:

- Ձեր կարծիքով, տիկնիկը դո՞ւր եկավ Լաուրային:
- Ի՞նչ եք կարծում, ինչպես էր իրեն զգում Լաուրայի տատիկը:

*Վերջ 2*

Լաուրան շատ ուրախ էր իր ծննդյան օրվա առիթով և նվերների համար, և նա զգուշությամբ բացեց ամեն մի նվերը: Երբ նա բացեց տատիկի նվերը, մի ջերմ զգացում պատեց նրան: Նա մեղմությամբ դիպչեց տիկնիկի խնամքով կապված մազերին, ասեղնագործած դեմքին և երկար զգեստին: Ապա նա վազեց տատիկի մոտ և ամուր գրկեց նրան: «Օ, շնորհակալություն, տատիկ», - շշնջաց նա:

- Ձեր կարծիքով, տիկնիկը դո՞ւր եկավ Լաուրային:
- Ի՞նչ եք կարծում, ինչպես էր իրեն զգում Լաուրայի տատիկը:
- Ո՞ր տարբերակի մեջ Լաուրան ցույց տվեց տատիկի հանդեպ իր սերը և գնահատանքը տիկնիկ կարելուն այդքան ժամանակ տրամադրելու համար:

Քննարկում

Գրատախտակին գրեք *երախտագիտություն* բառը և երեխաների հետ միասին արտասանեք այն: Բացատրեք, որ երախտագիտությունը շնորհակալության զգացում է: Երբ մենք շնորհակալ ենք որևէ բանի համար, որը ինչ որ մեկը տվել կամ արել է մեզ համար, մենք պետք է ցույց տանք մեր երախտագիտությունը:

- Ինչպե՞ս Լաուրան ցույց տվեց իր երախտագիտությունը տիկնիկի համար պատմության երկրորդ մասում:

Բացատրեք, որ երբ մենք զգում և արտահայտում են մեր երախտագիտությունը, մենք երջանիկ ենք լինում, ինչպես նաև երջանիկ է լինում այն անձը, որին շնորհակալություն ենք հայտնել: Քննարկեք սիրո և երջանկության այն զգացումները, որոնք ապրեցին Լաուրան ու նրա տատիկը, որովհետև Լաուրան զգաց և արտահայտեց իր երախտագիտությունը:

Պատմվածք սուրբ գրություններից և քննարկում

Ցույց տվեք նկար 2-45, Տաս բորոտները, և պատմեք Ղուկաս ժէ.11–19-ում գրված պատմությունը:

Բացատրեք, որ բորոտությունը մաշկի հիվանդություն է, որը քայքայում է մարմնի մասերը: Մարդիկ վախենում էին բորոտներից, որովհետև կարծում էին, թե կարող են վարակվել բորոտությամբ, այդ պատճառով բորոտները հեռու էին մնում իրենց ընտանիքներից և ընկերներից:

Շեշտեք, որ երբ բորոտները արեցին այն, ինչ Հիսուս Քրիստոսը խնդրել էր, նրանք բուժվեցին: Նրանք կրկին կարող էին ապրել իրենց ընտանիքների և ընկերների հետ:

- Ինչպե՞ս դուք ձեզ կզգայիք, եթե Հիսուս Քրիստոսը ձեզ համար կատարեր այդ մեծ հրաշքը:

Երեխաների համար բարձրաձայն կարդացեք Ղուկաս ժէ.15–17 և խնդրեք նրանց ասել, թե ինչպես բորոտները արտահայտեցին իրենց երախտագիտությունը:

- Քանի՞ բորոտ բուժվեց:

Երեխաներին խնդրեք պարզել տաս մատները:

- Քանի՞ բորոտ վերադարձան Հիսուսին շնորհակալություն հայտնելու:

Երեխաներին խնդրեք իջեցնել ինը մատները: Շեշտեք, որ միայն մեկ տղամարդ տասից ցուցաբերեց իր երախտագիտությունը Հիսուսին այդ մեծ հրաշքի համար:

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ միայն մեկ տղամարդ վերադարձավ շնորհակալություն հայտնելու Հիսուսին:

### Մենք կարող ենք շնորհակալություն հայտնել Երկնային Հորը մեր աղոթքներում

Սուրբ գրությունների քննարկում

Երեխաների համար բարձրաձայն կարդացեք Ա Թեսաղոնիկեցիս Ե.18:

- Ըստ այս սուրբ գրության, ի՞նչ մենք պետք է անենք:

Երեխաներին հիշեցրեք, որ Երկնային Հայրը մեզանից յուրաքանչյուրին շատ օրհնություններ է տվել: Նա երջանիկ է, երբ մենք շնորհակալություն ենք հայտնում մեր օրհնությունների համար:

- Ինչպե՞ս մենք կարող ենք շնորհակալություն հայտնել Երկնային Հորը այն բազմաթիվ օրհնությունների համար, որոնք նա տալիս է մեզ:

Երգ

Երգեք կամ արտասանեք «Երեխաներն ամբողջ աշխարհում» երգը:

Աշխարհում օրվա վերջում Երկնային Հոր զավակները ծնկի են իջնում,
Ամեն մեկը իր ձևով շնորհակալություն է հայտնում,
Աղոթելով իր երկրի լեզվով.
“Gracias.” *(գրասիաս)* “Malo.” *(մալո)* “Wir danken dir.” *(վիր դանքեն դիր)*
Աշխարհով մեկ մեղմ ձայներ են հնչում:
Ոմանք “tak,“ *(թակ)* մյուսներն ”merci,“ *(մերսի)*
“Kansha shimasu,” *(կանշա շիմասու)* ենք մենք ասում:
Մեր Երկնային Հայրը
Ամեն լեզու հասկանում է
Նա նրանց ճանաչում է
Նա սիրում է, սիրում է բոլորին:

Քննարկում

- Ե՞րբ ենք մենք աղոթում:

Քննարկեք, թե ինչ տարբեր ժամանակներ կան, երբ մենք աղոթում ենք, և ինչի համար կարող ենք շնորհակալություն հայտնել Երկնային Հորը յուրաքանչյուր աղոթքի մեջ: Օրինակ, երբ մենք աղոթում ենք ուտելուց առաջ, մենք կարող ենք շնորհակալություն հայտնել Երկնային Հորը մեզ ուտելիք տալու համար: Շեշտեք մեր աղոթքներում Երկնային Հորը շնորհակալություն հայտնելու կարևորության մասին:

## Մենք կարող ենք ցույց տալ մեր երախտագիտությունը մեր գործերի միջոցով

Քննարկում

Բացատրեք, որ մենք մեր երախտագիտությունը կարող ենք նաև ցույց տալ մեր գործերի միջոցով: Երբ մենք հնազանդվում ենք պատվիրաններին և անում այն, ինչ խնդրում է Երկնային Հայրը, մենք ցույց ենք տալիս, որ սիրում ենք Երկնային Հորը և գնահատում ենք այն, ինչ նա տվել է մեզ:

Նկարագրեք մի քանի իրավիճակ, որոնցում անձը կարող է իր գործերով ցույց տալ իր երախտագիտությունը: Երեխաներին խնդրեք ասել, թե ինչպես յուրաքանչյուր անձ կարող է արտահայտել իր երախտագիտությունը, հնազանդվելով Երկնային Հորը: Օգտագործեք հետևյալ իրավիճակները կամ ինքներդ մտածեք.

1. Մերին իր ընտանիքի ամենաավագ երեխան է: Նա երկու փոքր եղբայր և երկու փոքր քույր ունի: Նա շնորհակալ է իր ընտանիքի համար:
   - Ինչպե՞ս Մերին կարող է ցույց տալ Երկնային Հորը, որ շնորհակալ է իր ընտանիքի համար: (Սեր և բարություն ցուցաբերելով ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար:)
2. Ջոնն իր հարևանի համար աշխատանք է կատարում լրացուցիչ դրամ վաստակելու համար: Նա շնորհակալ է, որ Երկնային Հայրն իրեն օգնել է աշխատանք գտնել:
   - Ինչպե՞ս Ջոնը կարող է ցույց տալ իր շնորհակալությունը Երկնային Հորը: (Վճարելով տասանորդը իր վաստակած դրամից:)
3. Քիմը սիրում է ֆուտբոլ խաղալ: Նա շնորհակալ է, որ Երկնային Հայրն իրեն ամուր և առողջ մարմին է տվել:
   - Ի՞նչ կարող է անել Քիմը ցույց տալու Երկնային Հորը իր մարմնի համար իր շնորհակալությունը: (Հնազանդվել Իմաստության Խոսքին, ուտել լավ սնունդ և հոգ տանել մարմնի համար:)
4. Միսիոներները Լիի ընտանիքին ավետարանն էին ուսուցանում, և ընտանիքը մկրտվեց: Լին շատ շնորհակալ է միսիոներների համար:
   - Ի՞նչ կարող է անել Լին Երկնային Հորն իր շնորհակալությունը հայտնելու համար: (Պատրաստվել ծառայել միսիայում, երբ մեծանա:)
5. Աննան անհամբեր սպասում է ամեն Կիրակի օրվան: Նա սիրում է հաճախել Երեխաների Խումբ: Նա շնորհակալ է Եկեղեցու համար:
   - Ի՞նչ կարող է անել Աննան ցույց տալու Երկնային Հորը, թե որքան շնորհակալ է: (Հաճախել իր բոլոր ժողովներին, եկեղեցում ակնածալից լինել:)

## Ամփոփում

Արվեստի վարժություն

Երեխաներին թուղթ և մատիտներ բաժանեք և խնդրեք նկարել այն, ինչի համար իրենք շնորհակալ են: Երեխաներին խնդրեք դասարանի մյուս անդամներին պատմել իրենց նկարների մասին:

Վկայություն

Երեխաներին ասացեք, թե որքան շնորհակալ եք դուք իրենց ուսուցիչը լինելու համար: Բացատրեք, թե ինչպես եք դուք հայտնում Երկնային Հորը ձեր շնորհակալությունը այդ օրհնության համար: Վկայեք, որ Երկնային Հայրը մեզ շատ օրհնություններ է տվել և նա երջանիկ է, երբ մենք երախտապարտ և շնորհակալ ենք նրան մեր օրհնությունների համար:

Երեխաներին խրախուսեք հաջորդ շաբաթվա ընթացքում իրենց աղոթքներում և իրենց գործերով հիշել շնորհակալություն հայտնել Երկնային Հորը իրենց օրհնությունների համար:

Երբ երեխաները պատրաստվում են փակիչ աղոթքին, նրանց հարցրեք, թե ինչի համար կարող են շնորհակալ լինել Երկնային Հորը դասարանի աղոթքում: Երեխաներից մեկին հրավիրեք ասել փակիչ աղոթքը:

---

**Լրացուցիչ վարժություններ**

Հետևյալ վարժություններից ընտրեք նրանք, որոնք լավագույնս կհամապատասխանեն ձեր դասարանի երեխաներին: Դուք կարող եք դրանք օգտագործել դասի ընթացքում, որպես դասի վերանայում կամ ամփոփում: Լրացուցիչ ուղղության համար տե՛ս «Դասաժամ» «Օգնություն ուսուցչին» բաժինները:

1. Երեխաներին խնդրեք ասել, թե որոնք են նրանց սիրելի կենդանիները, բանջարեղենը և մրգերը: Շեշտեք, որ Երկնային Հայրը պլանավորել, իսկ Հիսուս Քրիստոսը ստեղծել է այս բոլոր բաները, որպեսզի մենք վայելենք: Մենք պետք է հիշենք մեր շնորհակալությունը հայտնել այս ամենի համար:

2. Ցույց տվեք կենդանիների նկարներ: Քննարկեք, թե ինչ խնամք են պահանջում կենդանիները, օրինակ ջուր, սնունդ, հարդարում և սեր: Բացատրեք, որ կենդանիների և այլ արարածների համար հոգ տանելը Երկնային Հորը ցույց է տալիս, որ մենք շնորհակալ ենք նրանց համար:

3. Շեշտեք, որ Երկնային Հայրը պլանավորել, իսկ Հիսուս Քրիստոսը ստեղծել է այն ամենը, ինչը մեզ անհրաժեշտ է ապրելու և երջանիկ լինելու համար: Մենք պետք է նրանց ցույց տանք, թե որքան շնորհակալ ենք մեր օրհնությունների համար:

4. Արտասանեք «Շնորհակալություն մեր Հորը», «Ինչպե՞ս փոքր երեխան»), կամ «Շնորհակալ եմ Քեզ, Երկնային Հայր»:

   Երեխաներին ասացեք, որ մենք կարող ենք շնորհակալություն հայտնել Երկնային Հորը երգելու միջոցով: Բացատրեք, որ Երկնային Հորն ուղղված գովքի երգերը նման են աղոթքների (տե՛ս ՎԿՈ 25.12):

   Շնորհակալություն մեր Հորը

   Շնորհակալություն մեր Հորը կհայտնենք
   Այն ամեն բանի համար, որ այսօր ունենք:

   Աչքեր, ականջներ ունենք, ձեռքեր ու ոտքեր,
   Հագուստ հագնելու համար, համեղ մթերքներ:

   Հայրիկ, մայրիկ, եղբայր կամ փոքրիկ քույրիկ,
   Պարգևում է մեզ անգին Հայրը Երկնային:

   Շնորհակալություն մեր Հորը կհայտնենք
   Այն ամեն բանի համար, որ այսօր ունենք:

   Ինչպե՞ս փոքր երեխան

   Ինչպե՞ս փոքր երեխան
   Լինի Հորը շնորհակալ:
   Եթե լինի ազնիվ ու լավ,
   Ամեն ինչում համբերատար:

Սիրի Աստծուն ու գործի
Սրտանց ասել սովորի.
Հայր, շնորհակալ ենք,
Հայր, շնորհակալ ենք,
Հայր Երկնային, շնորհակալ ենք Քեզ:

Դաս
25

# Հիշեք ասել «Շնորհակալություն»

**Նպատակ**

Խրախուսել յուրաքանչյուր երեխայի հիշել շնորհակալություն հայտնել ուրիշներին նրանց սիրո և բարության համար:

**Նախապատրաստություն**

1. Աղոթքով ուսումնասիրեք Ղուկաս ժէ.11–19 և Վարդապետություն և Ուխտեր 78.19:
2. Պատրաստեք շնորհակալական երկտող, ինչպես տրված է.

> Շնորհակալություն: Ես ուրախ եմ,
> որ դուք իմ ուսուցիչն եք:
> Սիրով,
> Ռեբեկա

3. Պահանջվող նյութեր.
   ա. Աստվածաշունչ և Վարդապետություն և Ուխտեր
   բ. Մատիտներ և թղթեր բոլոր երեխաների համար:
   գ. Գրատախտակ, կավիճ, ջնջոց:
   դ. Նկար 2-45, Տաս բորոտները (Gospel Art Picture Kit 221; 62150):
4. Անհրաժեշտ պատրաստություններ կատարեք այն լրացուցիչ վարժությունների համար, որոնք ցանկանում եք անցկացնել:

*Նշում.* Այս դասի ժամանակ հատուկ ջանք գործադրեք հարմար պահին երեխաներին «շնորհակալություն» ասելու համար:

**Դասի առաջարկվող ընթացք**

Երեխաներից մեկին խնդրեք ասել բացիչ աղոթքը:

Եթե երեխաներին խնդրել եք շաբաթվա ընթացքում ինչ-որ բան կատարել, ստուգեք:

**Մենք կարող ենք օգտագործել հատուկ խոսք**

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Երեխաներին ասացեք, որ կա հատուկ խոսք, որով ուզում եք կիսվել իրենց հետ: Այդ հատուկ խոսքը կարող է օգտագործել յուրաքանչյուրը, սակայն դա ոչ այդքան հաճախ է օգտագործվում: Շշնջացեք «շնորհակալություն» երեխաներից մեկին և խնդրեք շշնջալ այն մեկ ուրիշ երեխայի: Շարունակեք, մինչև որ բոլոր երեխաները կլսեն խոսքը: Վերջին երեխային խնդրեք կանգնել և բարձրաձայն ասել խոսքը:

• Ե՞րբ ենք մենք ասում «շնորհակալություն»:

Բացատրեք, որ մենք բոլորս սիրում ենք, երբ ուրիշները լավ բաներ են անում մեզ համար, սակայն երբեմն մենք մոռանում ենք շնորհակալություն հայտնել նրանց:

Պատմվածք սուրբ գրություններից

Ցուցադրեք նկար 2-45, Տաս բորոտները, և երեխաներին խնդրեք ձեզ պատմել այն, ինչ հիշում են նկարի մասին անցած դասից: Երեխաներին խնդրեք բեմականացնել տաս բորոտների պատմվածքը (տե՛ս Ղուկաս ժէ.11–19):

Նկարի վրա ցույց տվեք Քրիստոսին շնորհակալություն հայտնող բորոտին:

• Ինչո՞ւ այդ մարդը վերադարձավ շնորհակալություն հայտնելու Հիսուսին:

• Ի՞նչ արեցին մնացած մարդիկ:

Երեխաներին հիշեցրեք, որ Հիսուս Քրիստոսը բուժեց բոլոր տաս բորոտներին, սակայն միայն մեկը հիշեց շնորհակալություն հայտնել նրան: Հիսուսը պետք է որ երջանիկ լիներ, որ մեկը հիշեց, սակայն տխուր պետք է լիներ, քանի որ մյուսները չհիշեցին:

Քննարկում

• Ինչի՞ համար մենք պետք է շնորհակալություն հայտնենք Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին:

• Է՞լ ում մենք պետք է շնորհակալություն հայտնենք: (Մեր ընտանիքներին, ուսուցիչներին, ընկերներին, ցանկացած մեկին, ով ինչ-որ լավ բան է անում մեզ համար:)

**Մենք կարող ենք շնորհակալություն հայտնել ուրիշներին**

Պատմվածք և քննարկում

Ձեր խոսքերով պատմեք հետևյալ պատմությունը, ուղեկցելով այն գրատախտակի վրա պարզ նկարներով (օրինակ, ձկնորսական փայտ, ձուկ, թխվածք).

Կարլոսը սիրում էր արշավ գնալ և ձկնորսություն անել, և գրեթե ամեն շաբաթ օր ձկնորսություն էր անում մոտակա գետում: Սակայն, երբ հայրը մահացավ, շատ բաներ փոխվեցին նրա համար: Ոչ ոք այլևս չէր տանում նրան ձկնորսության:

Կարլոսն իրեն տխուր և միայնակ էր զգում: Երեխաների Խմբի նրա ուսուցիչը՝ եղբայր Թեյլորը, նկատեց, թե որքան տխուր է նա, և ցանկացավ երջանկացնել նրան: Եղբայր Թեյլորը Կարլոսին ձկնորսության հրավիրեց:

Կարլոսը շատ երջանիկ էր, որ կրկին կարող էր ձկնորսության գնալ: Նա պատրաստ սպասում էր եղբայր Թեյլորին: Կարլոսը և եղբայր Թեյլորը հիանալի օր անցկացրեցին գետի մոտ: Նրանք մի քանի ձուկ որսացին և այդ երեկո Կարլոսի մայրիկի, եղբայրների և քույրերի հետ ճաշին կերան ձկները:

Կարլոսը ցանկանում էր շնորհակալություն հայտնել եղբայր Թեյլորին իրեն ձկնորսության տանելու համար:

• Ի՞նչ կարող էր անել Կարլոսը եղբայր Թեյլորին շնորհակալություն հայտնելու համար:

Երեխաների պատասխաններից հետո, նրանց շնորհակալություն հայտնեք առաջարկությունների համար և պատմեք, թե ինչ որոշեց անել Կարլոսը.

Կարլոսը որոշեց, որ եղբայր Թեյլորին շնորհակալություն հայտնելու համար մի հաճելի բան պետք է անի նրա համար: Կարլոսն իր մայրիկին օգնեց թխվածք պատրաստել և հաջորդ օրը տարավ այն Եղբայր Թեյլորի տուն: Կարլոսը եղբայր Թեյլորին տվեց թխվածքն ու ասաց. «Շնորհակալություն ինձ ձկնորսության տանելու համար»:

• Ձեր կարծիքով, ինչպե՞ս իրեն զգաց եղբայր Թեյլորը, երբ Կարլոսը նրան թխվածք բերեց:

• Ձեր կարծիքով, ինչպե՞ս էր զգում Կարլոսը:

Սուրբ գրություն

Բարձրաձայն կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 78.19: Բացատրեք, որ այս սուրբ գրությունն ասում է, որ եթե մենք շնորհակալ ենք, մենք երջանիկ ենք:

• Ինչպե՞ս եք ձեզ զգում, երբ որևէ մեկին «շնորհակալություն» եք ասում:

• Ինչպե՞ս եք ձեզ զգում, երբ որևէ մեկը ձեզ «շնորհակալություն» է ասում:

Երեխայի մասնակցությունը

Երեխաներին հրավիրեք պատմել այն պահերի մասին, երբ իրենց շնորհակալություն են հայտնել իրենց արածի համար և խնդրեք բացատրել, թե ինչպես են իրենց զգացել: Կարող եք պատմել ձեր սեփական փորձից:

**Մենք կարող ենք «շնորհակալություն» ասել տարբեր եղանակներով**

Պատմվածք

Ձեր բառերով պատմեք հետևյալ պատմությունը.

Քույր Վելսը Երեխաների Խմբի ուսուցիչ էր: Նա հաճույքով էր ուսուցանում և սիրում էր իր դասարանի երեխաներին: Նա աշխատում էր ամեն կիրակի լավ դաս պատրաստել: Նա սիրում էր Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին, և երեխաներին նա տալիս էր իր վկայությունը և պատմում, թե որքան է Հիսուսը սիրում նրանցից յուրաքանչյուրին: Իր դասարանի երեխաներին նա սեր և ուշադրություն էր ցույց տալիս: Նա միշտ հիշում էր նրանց ծննդյան օրերը և հատուկ այլ առիթները:

Մի կիրակի օր եկեղեցուց հետո ինչ-որ մեկը թակեց քույր Վելսի դուռը: Դա Ռեբեկան էր, նրա դասարանի աղջիկներից մեկը: Ռեբեկան քույր Վելսին մի գեղեցիկ վարդագույն ծրար տվեց:

• Կարո՞ղ եք կռահել, ինչ էր ծրարի մեջ:

Քննարկում

Ցույց տվեք ձեր պատրաստած շնորհակալական երկտողը և կարդացեք այն դասարանի համար:

• Ձեր կարծիքով, ինչպե՞ս իրեն զգաց քույր Վելսը, երբ կարդաց այդ երկտողը:

• Ինչպե՞ս Ռեբեկան «շնորհակալություն» ասաց իր ուսուցչուհուն:

• Ի՞նչ եղանակներով մենք կարող ենք արտահայտել մեր շնորհակալությունը:

• Ո՞վ է ձեզ համար լավ գործեր անում:

Վերջին հարցին տրված երեխաների պատասխանները թվեք գրատախտակի վրա: Երբ բոլոր երեխաները կպատասխանեն, ցույց տվեք գրատախտակի ցանկը և երեխաներին հարցրեք, թե ինչի համար կարող են շնորհակալություն հայտնել յուրաքանչյուր անձին: Օրինակ, երեխաներին հարցրեք.

• Ի՞նչի համար կարող եք շնորհակալություն հայտնել եպիսկոպոսության անդամներին:

• Ինչի՞ համար կարող եք շնորհակալություն հայտնել Երեխաների Խմբի երաժշտավարին կամ դաշնակահարին:

Արվեստի վարժություն

Երեխաներին մատիտներ և թուղթ բաժանեք և խնդրեք շնորհակալական երկտողներ պատրաստել: Տպատառ գրեք կամ օգնեք նրանց տպատառ գրել *Շնորհակալություն* բառը իրենց երկտողի վրա, ապա թույլ տվեք մատիտների օգնությամբ զարդարել դրանք:

Բացատրեք, որ այս երկտողը նրանք կարող են տալ նրան, ում ցանկանում են շնորհակալություն հայտնել: Երեխաներին խնդրեք ասել, թե ում են տալու իրենց երկտողը: Երեխաներին հիշեցրեք, որ ուրիշներին շնորհակալություն հայտնելը ոչ միայն երջանկացնում է այդ մարդկանց, այլ նաև մեզ:

**Ամփոփում**

Ուսուցչի ելույթ

Դասի ավարտից առաջ յուրաքանչյուր երեխայի շնորհակալություն հայտնեք որևէ բանի համար, որը նա արել է Երեխաների Խմբի դասի ընթացքում: Եղեք անկեղծ և որոշակի: Դուք երեխային կարող եք շնորհակալություն հայտնել.

- Դասի ժամանակ ակնածանքով նստելու համար:
- Դասը լսելու համար:
- Բացիչ աղոթքն ասելու համար:
- Մյուսների հանդեպ բարի լինելու համար:
- Բացիչ մասի ժամանակ երգելու համար:
- Խոսելուց առաջ ձեռք բարձրացնելու համար:
- Որևէ հարցի պատասխանելու համար:
- Դասի ընթացքում բարձր տրամադրություն ունենալու համար:

Վկայություն

Ձեր շնորհակալությունը հայտնեք ձեր դասարանի յուրաքանչյուր երեխայի համար: Երեխաներին հիշեցրեք, թե որքան կարող է հասարակ «շնորհակալությունը» երջանկացնել որևէ մեկին:

Երեխաներին խրախուսեք շաբաթվա ընթացքում որքան հնարավոր է հաճախ օգտագործել «շնորհակալություն» բառը ընտանիքի և ընկերների համար:

Երեխաներից մեկին հրավիրեք ասել փակիչ աղոթքը:

---

**Լրացուցիչ վարժություններ**

Հետևյալ վարժություններից ընտրեք նրանք, որոնք լավագույնս կհամապատասխանեն ձեր դասարանի երեխաներին: Դուք կարող եք դրանք օգտագործել դասի ընթացքում, որպես դասի վերանայում կամ ամփոփում: Լրացուցիչ ուղղության համար տե՛ս «Դասաժամ» «Օգնություն ուսուցչին» բաժինները:

1. Երեխաներին խնդրեք կանգնել, աթոռներն իրարից հեռացնել, որպեսզի տարածություն մնա աթոռների միջև քայլելու համար:

   Երեխաներին խնդրեք արտասանել «Ես ունեմ երկու ականջ» երգի առաջին քառատողը և կրկներգը, կատարելով ստորև նշված շարժումները.
   Ես երկու ականջ ունեմ ճշմարտությունը լսելու *(մատնանշեք ականջներին),*
   Երկու աչք բարին տեսնելու *(մատնանշեք աչքերին):*
   Երկու ոտք ունեմ ինձ տանելու
   Այնտեղ, որտեղ պետք է գնամ *(քայլեք աթոռի շուրջը):*

   *Կրկներգ.*
   Ես դրանք ճիշտ կօգտագործեմ
   Իմ աշխատանքում և խաղի մեջ *(ձևացրեք, թե գնդակ եք խաղում):*
   Շնորհակալ եմ իմ Երկնային Հորը
   Որ այսպիսին է ինձ արարել *(նստեք, ծալեք ձեռքերը և խոնարհեցրեք գլուխը):*

2. Մի կոճակ կամ օղակ անցկացրեք թելի կամ լարի վրա, որը բավականին երկար կլինի, որպեսզի բոլոր երեխաները կարողանան բռնել: Կապեք թելի կամ լարի ծայրերը միացնելով իրար: Երեխաներին խնդրեք շրջանով նստել հատակին և բռնել ձեռքերը լարի վերևում:Նրանց խնդրեք փոխանցել կոճակը կամ օղակը մեկից մյուսը, մինչև որ դուք կասեք «Կանգ առ»: Այն երեխան, որն այդ պահին բռնել է կոճակը կամ օղակը, պետք է ասի. «Ես

շնորհակալ եմ (անձի անունը) (ինչ-որ բան) համար»: Շարունակեք խաղը, մինչև որ բոլոր երեխաները առնվազն մեկ անգամ պատասխանելու հնարավորություն կունենան:

3. Արտասանեք «Ես շնորհակալ եմ լինելու ես»:

   Գիշերը, երբ մենակ եմ անկողնում
   Փակում եմ աչքերս և տեսնում
   Այն ամենը, ինչի համար շնորհակալ եմ,
   Ինչը Տերը տվել է ինձ:
   Տեսնում եմ ընկերներիս և ուսուցիչներիս,
   Բոլորին, ով սիրում է ինձ:
   Այս բոլոր օրհնությունների համար
   Այնքան շնորհակալ եմ ես միշտ:

4. Երեխաների համար խմոր պատրաստեք, որից նրանք կարող են պատրաստել որևէ բան, ինչի համար շնորհակալ են (խմորի բաղադրատոմսը կարելի է գտնել էջ 48-ի վրա): Նրանց խնդրեք իրենց պատրաստածը տուն տանել և դնել այնտեղ, որտեղ սովորաբար աղոթում են: Այդ դեպքում նրանք կհիշեն, որ շնորհակալություն պետք է հայտնեն Երկնային Հորն իրենց օրհնությունների համար:

5. Պատմեք Հարեդացիների պատմությունը, որոնք նավարկում էին իրենց նավակներով, ինչպես տրված է Եթեր 2.16–18 և 6.4–11-ում: Կարող եք ցուցադրել այդ նավակները, միացնելով իրար երկու գոգավոր ափսե:

   Երեխաներին խնդրեք պատկերացնել, թե Տերը նրանց և նրանց ընտանիքներին պատվիրել է նավակներ կառուցել, ինչպես Հարեդացիները արեցին: Նրանց խնդրեք ձևացնել, թե համարյա թե մեկ տարի այդ փոքրիկ նավակներով օվկիանոսում են գտնվում: Նրանց քշում տանում է օվկիանոսը և երբեմն նրանք ամբողջովին սուզվում են ջրի տակ: Նավակներում կան նաև շատ կենդանիներ:

   - Ի՞նչ եք դուք մտածում նման ճանապարհորսություն կատարելու մասին:

   Բարձրաձայն կարդացեք Եթեր 6.9 և նկատեք, թե ինչ էին մտածում Հարեդացիներն իրենց ճանապարհորդության մասին: Երեխաներին օգնեք հասկանալ, որ թեկուզ երբ մենք դժվար ժամանակներ ենք ապրում, մենք շատ բաներ ունենք, որոնց համար կարող ենք շնորհակալություն հայտնել: Օրինակ, եթե հիվանդ ենք, կարող ենք շնորհակալություն հայտնել այն մարդկանց համար, ովքեր խնամում են մեզ: Եթե մենք միշտ փնտրենք այն, ինչի համար կարող ենք շնորհակալ լինել, ապա շատ օրհնություններ կտեսնենք:

6. Հաջորդ շաբաթվա ընթացքում ձեր դասարանի երեխաներին շնորհակալական երկտողներ ուղարկեք, հայտնելով նրանց, թե որքան եք գնահատում և ուրախ, որ ձեր դասարանում են: Նշեք որևէ որոշակի բան, որը տվյալ երեխան արել է և դրանով օգնել դասարանին:

# Ճիշտն ընտրելը ինձ հաճելի զգացում է պարգևում

Դաս
26

**Նպատակ**

Օգնել յուրաքանչյուր երեխայի հասկանալ, որ ճիշտն ընտրելը մեզ երջանիկ է դարձնում, իսկ սխալը՝ դժբախտ:

**Նախապատրաստություն**

1. Աղոթքով կարդացեք Ղուկաս ԺԵ.11–24:

2. Պահանջվող նյութեր.
   ա. Աստվածաշունչ
   բ. Փոքր քար կամ լոբու հատիկ յուրաքանչյուր երեխայի համար
   գ. Ուրախ/տխուր դեմք դաս 22-ից
   դ. Մատիտ յուրաքանչյուր երեխայի համար
   ե. Թղթից մեծ շրջան յուրաքանչյուր երեխայի համար
   զ. Նկար 2-46, Անառակ Որդին (Gospel Art Picture Kit 220; 62155):

3. Անհրաժեշտ պատրաստություններ կատարեք այն լրացուցիչ վարժությունների համար, որոնք ցանկանում եք անցկացնել:

*Հիշեցում.* Հիշեք, որ ութ տարեկանից ցածր երեխաները դեռ պատասխանատու չեն և կարիք չունեն մեղքից ապաշխարել: Երեխաներին խրախուսեք ընտրել ճիշտը, սակայն մի ստիպեք նրանց մեղավոր զգալ իրենց արածների համար:

**Դասի առաջարկվող ընթացք**

Երեխաներից մեկին խնդրեք ասել բացիչ աղոթքը:

Եթե երեխաներին խնդրել եք շաբաթվա ընթացքում ինչ-որ բան կատարել, ստուգեք:

**Սխալ անելը մեզ անհանգիստ զգացում է տալիս**

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Երեխաներից մեկին խնդրեք հանել կոշիկը և դրա մեջ դնել մի փոքր քար կամ լոբու հատիկ: Երեխային խնդրեք հագնել կոշիկը և մի քանի քայլ կատարել սենյակում: Երեխային խնդրեք մյուսներին ասել, թե ինչ է զգում:

Շեշտեք, որ երբ ինչ որ բան ճիշտ չէ, մենք մեզ անհարմար և դժբախտ ենք զգում, և շատ ենք մտածում սխալի մասին:

Երեխային խնդրեք հանել քարը և նորից քայլել: Երեխային խնդրեք դասարանին ասել, թե որքան լավ է զգում այժմ:

Յուրաքանչյուր երեխայի քար կամ լոբու հատիկ տվեք և ցանկացողներին խնդրեք դնել դրանք կոշիկների մեջ: Նրանց խնդրեք կանգնել և մի քանի քայլ անել, զգալու համար, թե որքան անհարմար է դա: Հավաքեք քարերը կամ լոբիները և երեխաներին խնդրեք նորից կանգնել և տեսնել, թե որքան լավ են զգում, երբ դրանք հանված են:

Քարը կամ լոբու հատիկը համեմատեք սխալ արարքի հետ: Երբ մենք ինչ-որ սխալ բան ենք անում, մենք անհարմար և դժբախտ ենք մեզ զգում: Սակայն, երբ մենք ներողություն ենք խնդրում սխալի համար և աշխատում ենք ուղղել

մեր սխալը, կարծես, հանում ենք կոշիկից քարը կամ լոբու հատիկը և անհարմարության զգացումը լքում է մեզ և մենք կրկին երջանիկ ենք:

Բացատրեք, որ այսօրվա դասը անհանգիստ զգացումները երջանիկ զգացումներով փոխելու մասին է:

**Մենք կարող ենք դժբախտ զգացումները երջանիկ զգացումներով փոխել**

- Ի՞նչ եք դուք զգում, երբ սխալ բան եք անում:

Պատմվածք և քննարկում

Ձեր խոսքերով պատմեք հետևյալ պատմությունը մի աղջկա մասին, որը սխալ բան է արել և դժբախտ է իրեն զգում: Երեխաներին խնդրեք լսել և տեսնել, թե ինչ նա արեց իր դժբախտ զգացումները երջանիկ զգացումներով փոխելու համար:

Անջելայի ընկերուհի Մարիան հիանալի խաղալիք մրգեր և բանջարեղեն ուներ: Անջելան սիրում էր խաղալ դրանցով և շատ էր ուզում, որ դրանք իրենը լինեին: Մի օր, երբ Մարիան չէր նայում, Անջելան փոքրիկ մրքերի և բանջարեղենի մի բուռ դրեց իր գրպանը: Անջելան դրանք տարավ տուն առանց որևէ բան որևէ մեկին ասելու:

- Ձեր կարծիքով, Անջելան ուրախությա՞մբ էր խաղում խաղալիքներով, որոնք տուն էր բերել:

Անջելան չէր կարողանում խաղալ խաղալիքներով բացեբաց, քանի որ չէր ուզում, որ մայրիկն իմանար, որ վերցրել է դրանք: Նա խաղալիքները թաքցրել էր մահճակալի տակ, և ամեն անգամ երբ ուզում էր խաղալ դրանցով, ստիպված էր մտնել մահճակալի տակ: Անջելան ներքուստ իրեն երջանիկ չէր զգում, թեև հիմա ուներ իր ուզած խաղալիքները:

- Ի՞նչ կարող էր անել Անջելան այդ վատ զգացումներից ազատվելու համար:

Գովեք երեխաներին իրենց ճիշտ առաջարկությունների համար և բացատրեք, թե ինչ արեց Անջելան.

Անջելայի մայրիկը նկատեց, որ նա խաղ էր անում մահճակալի տակ, և հարցրեց, թե ինչ է անում: Անջելան մայրիկին ցույց տվեց խաղալիքները և բացատրեց, թե որքան տխուր էր: Անջելայի մայրիկը օգնեց նրան հասկանալ, թե ինչ նա պետք է աներ կրկին երջանիկ զգալու համար: Անջելան խաղալիքները տարավ Մարիային և ներողություն խնդրեց նրանից այն վերցնելու համար: Խաղալիքները վերադարձնելուց հետո Անջելան երջանիկ և հանգստացած էր իրեն զգում: Նա ուրախ էր, որ կարողացավ ուղղել իր սխալը:

- Ի՞նչ սխալ էր կատարել Անջելան:

Քննարկում

Ցուցադրեք ուրախ/տխուր դեմքի նկարները: Սկզբից ցույց տվեք տխուր դեմքը, այնուհետև ուրախ դեմքը:

- Ո՞ր դեմքն է ցույց տալիս, թե ինչպես էր իրեն զգում Անջելան խաղալիքները տուն տանելուց հետո: (Երեխաներից մեկին խնդրեք շրջել նկարը, ցույց տալով տխուր դեմքը:)
- Ի՞նչ արեց Անջելան իր սխալն ուղղելու համար:
- Ո՞ր դեմքն է ցույց տալիս, թե ինչպես էր զգում Անջելան խաղալիքները վերադարձնելուց հետո: (Երեխանրից մեկին խնդրեք շրջել նկարը, ցույց տալով ուրախ դեմքը:)

Երեխաներին ասացեք, որ երբեմն մենք սխալներ ենք գործում: Սխալ անելուց մենք մեզ երջանիկ չենք զգում: Սակայն, երբ մենք ներողություն ենք խնդրում և աշխատում ենք ուղղել մեր սխալ ընտրությունները, մենք մեզ նորից կարող ենք երջանիկ զգալ:

## Հիսուս Քրիստոսը ցանկանում է, որ մենք մեզ երջանիկ զգանք

Ուսուցչի ելույթ

Բացատրեք, որ ներողություն ասելը և մեր սխալ ընտրություններն ուղղելը ապաշխարության առաջին երկու քայլերն են:

Երեխաներին խնդրեք մի քանի անգամ կրկնել *ապաշխարություն* բառը:

Բացատրեք, որ Հիսուս Քրիստոսը ցանկանում է, որ մենք ընտրենք ճիշտը, սակայն նա գիտի, որ մենք երբեմն սխալներ ենք կատարում: Նա մեզ հնարավորություն է տվել ապաշխարել, երբ սխալներ ենք կատարում: Նա խոստացել է, որ եթե մենք ապաշխարենք, ապա մեր սխալները կներվեն և մենք կրկին մեզ երջանիկ կզգանք: Ապաշխարությունը Հիսուսի եկեղեցու անդամը լինելու կարևոր մասն է կազմում:

Երեխաներին հիշեցրեք, որ ինչ-որ սխալ բան կատարելը նման է կոշիկի միջի քարին: Մենք մեզ անհարմար ենք զգում: Ապաշխարությունը նման է քարը կոշիկից հանելուն: Լավ ես զգում, երբ խնդիրը վերանում է:

Պատմվածք սուրբ գրություններից

Ցույց տվեք Աստվածաշունչը և բացատրեք, որ այս սուրբ գրքում Փրկիչը մի պատմություն է պատմում մի որդու մասին, որը սխալ բան էր կատարել, ապա ապաշխարել էր և արել այն, ինչը ճիշտ էր: Երեխաներին խնդրեք լսել, թե ինչ էր արել որդին և ինչպես նրա հայրն օգնեց նրան:

Ձեր խոսքերով պատմեք Ղուկաս ԺԵ.11–24-ի պատմությունը: Համապատասխան պահին ցույց տվեք նկար 2-46-ը, Անառակ Որդին:

Բացատրեք, որ երբեմն այդ պատմությունը կոչվում է «Անառակ Որդին»: Երեխաներին բացատրեք, որ *անառակ* բառը նշանակում է անպիտան: Բացատրեք, որ փոքր տղան ուզեց իր փողերը, քանի որ այլևս չէր ուզում աշխատել: Նա ուզում էր անել, այն ինչ ցանկանում էր: Երբ նա ստացավ իր փողը, վատնեց այն: Նա վատնեց այնպիսի բաների վրա, որոնք լավը չէին:

Բացատրեք, որ երբ որդու փողերը վերջացան, նա հասկացավ, որ հիմար էր եղել և սխալ բաներ էր արել: Նա որոշեց վերադառնալ իր հոր մոտ և ներողություն խնդրել: Նա կարծում էր, որ այնքան վատն էր, որ այլևս չէր կարող իր հոր որդին կոչվել, սակայն նա որոշեց վերադառնալ տուն և խնդրել դառնալ հոր ծառաներից մեկը:

- Ձեր կարծիքով, ինչպե՞ս էր իրեն զգում որդին, երբ հասկացավ, որ սխալներ է կատարել:

Բարձրաձայն կարդացեք Ղուկաս ԺԵ.20–24:

- Ի՞նչ արեց հայրը, երբ որդին տուն վերադարձավ:
- Ձեր կարծիքով, ինչպե՞ս զգաց որդին, երբ հայրը դիմավորեց նրան:

Բացատրեք, որ ինչպես այդ երիտասարդի հայրն ուրախացավ, երբ տղան սխալ անելուց հետո սկսեց ճիշտը գործել, այնպես էլ մեր ծնողները և մեր Երկնային Հայրն են երջանիկ լինում, երբ մենք աշխատում ենք ուղղել մեր սխալ ընտրությունները: Մենք նույնպես երջանիկ ենք լինում, երբ ընտրում ենք անել ճիշտը:

## Մենք կարող ենք երջանիկ զգացմունքներ ունենալ, երբ ուղղում ենք մեր սխալները

Վարժություն

Յուրաքանչյուր երեխայի թղթե շրջանակ տվեք և մեկական մատիտ: Երեխաներին խնդրեք նկարել իրենց համար սեփական ուրախ/տխուր դեմքեր: Ցուցադրեք պատրաստ ուրախ/տխուր դեմք, որպեսզի նրանք կարողանան կրկնօրինակել: Անհրաժեշտության դեպքում, օգնեք նրանց:

Նկարագրեք մի քանի իրավիճակ, երբ ինչ-որ մեկը սխալ ընտրություն է կատարել: Երեխաներին խնդրեք բարձրացնել իրենց թղթե դեմքերը, ցույց տալու համար, թե ինչպես է զգում յուրաքանչյուր անձ սխալ ընտրություն կատարելուց հետո: Ապա հարցրեք, թե ինչպես նա կարող է ուղղել իր սխալը, և երեխաներին խնդրեք օգտագործել իրենց թղթե դեմքերը, ցույց տալով, թե ինչպես կզգա անձը դա անելուց հետո: Օգտագործեք հետևյալ կամ ձեր մտածած օրինակները.

1. Թոմասը դպրոցից տուն վերադառնալիս մագլցեց ցանկապատի վրա և պատռեց իր ամենալավ տաբատները: Նա գիտեր, որ մայրը կբարկանար, քանի որ շատ անգամ էր ասել չբարձրանալ ցանկապատի վրա դպրոցական հագուստով:
   - Ի՞նչ պետք է անի Թոմասը:
2. Քարինի մայրը նրան երկու կոնֆետ էր տվել, մեկն իր, մյուսը քրոջ համար: Քրոջ բացակայությամբ Քարինը կերավ երկու կոնֆետները:
   - Ի՞նչ պետք է անի Քարինը:
3. Բենը գնաց իր ընկերոջ տուն խաղ անելու, սակայն ընկերը տանը չէր: Հեռանալիս Բենը բակում տեսավ ընկերոջ խաղալիքներից մեկը: Բենը խաղալիքը տուն տարավ, որ խաղ անի:
   - Ի՞նչ պետք է անի Բենը:
4. Ռաքելը դպրոցի ճանապարհին դրամապանակ գտավ: Ավելի ուշ, երբ աղջիկներից մեկը հարցրեց, թե տեսել է նա արդյոք դրամապանակը, Ռաքելն ասաց. «Ոչ»:
   - Ի՞նչ պետք է անի Ռաքելը:
5. Ֆիլիպը խաղ էր անում բակում իր եղբոր հետ: Նրա եղբայրն այնպիսի մի բան արեց, որը Ֆիլիպին դուր չեկավ: Ֆիլիպը հարվածեց նրան և եղբայրը լաց եղավ:
   - Ի՞նչ պետք է անի Ֆիլիպը:

Երգ

Երեխաներին խնդրեք բարձրացնել իրենց ուրախ/տխուր դեմքերը և երգել կամ արտասանել «Ժպիտներ» երգը, համապատասխան պահին շրջելով թղթե դեմքը:

**Ամփոփում**

Վկայություն

Երեխաներին վկայեք, որ մենք կարող ենք երջանիկ լինել, երբ ընտրում ենք ճիշտը: Մենք կարող ենք նաև երջանիկ լինել, երբ ուղղում ենք մեր սխալները: Բացատրեք, որ սովորելով ավելի խստորեն հետևել Հիսուս Քրիստոսի ուսմունքներին, մենք ավելի ու ավելի քիչ սխալներ կկատարենք:

Երեխաներին առաջարկեք տուն տանել իրենց թղթե դեմքերը և ընտանիքներին պատմել այն, ինչ սովորել են երջանիկ և տխուր զգացմունքների մասին:

Երեխաներից մեկին հրավիրեք ասել փակիչ աղոթքը: Երեխային հիշեցրեք աղոթքով խնդրել Երկնային Հորը, որպեսզի օգնի երեխաներին հասկանալ և ուղղել սխալ ընտրությունները:

## Լրացուցիչ վարժություններ

Հետևյալ վարժություններից ընտրեք նրանք, որոնք լավագույնս կհամապատասխանեն ձեր դասարանի երեխաներին: Դուք կարող եք դրանք օգտագործել դասի ընթացքում, որպես դասի վերանայում կամ ամփոփում: Լրացուցիչ ուղղության համար տե՛ս «Օգնություն ուսուցչին» նյութի «Դասաժամ» բաժինը:

1. Օգտվելով «Մենք կարող ենք երջանիկ զգացմունքներ ունենալ, երբ ուղղում ենք մեր սխալները» բաժնում նկարագրված իրավիճակներից, երեխաներին օգնեք մտածել, թե ինչպես կարելի է կանխել սխալ ընտրությունները կամ խուսափել դրանցից: Նրանց խնդրեք բեմականացնել իրենց առաջարկները:

2. Արտասանեք «Եթե դու ուրախ ես», օգնելով երեխաներին նոր տողեր և շարժումներ մտածել ուրախ ընտրությունների համար:

   Օրինակ.

   Եթե դու ուրախ ես և գիտես դա, ընկերներիդ օգնիր *(ծափ տվեք):*
   Եթե դու ուրախ ես և գիտես դա, ընկերներիդ օգնիր *(ծափ տվեք):*
   Եթե դու ուրախ ես և գիտես դա, ցույց տուր դա և ճիշտը ընտրիր:
   Եթե դու ուրախ ես և գիտես դա, ընկերներիդ օգնիր *(ծափ տվեք):*

   Այլ տարբերակներ.

   ճիշտը խոսիր *(երկու անգամ դիպչեք բերանին)*
   խաղալիքներով կիսվիր *(նախ մեկ ձեռքը, հետո մյուս ձեռքը առաջ բերեք)*
   աղոթքներդ ասա *(խաչեք ձեռքերը և խոնարհեցրեք գլուխը)*

   Դուք կարող եք ավարտել, արտասանելով վերջին քառատողը, ընդգրկելով ձեր բոլոր մտքերը.

   Եթե դու ուրախ ես և գիտես դա, ընկերներիդ օգնիր *(ծափ տվեք,* ճիշտը խոսիր *(երկու անգամ դիպչեք բերանին),* խաղալիքներով կիսվիր *(նախ մեկ ձեռքը, հետո մյուս ձեռքը առաջ բերեք),* աղոթքներդ ասա *(խաչեք ձեռքերը և խոնարհեցրեք գլուխը):*

3. Երեխաներին խնդրեք նստել շրջան կազմելով: Կրկնողության հարց տվեք և լոբով պարկը կամ որևէ այլ փափուկ իր նետեք այն երեխային, ում ուղղում եք հարցը: Նրանից հետո, երբ երեխան կպատասխանի, նրան խնդրեք պարկը նետել ձեզ: Շարունակեք, մինչև որ յուրաքանչյուր երեխա առնվազն մեկ հարցի կպատասխանի:

   Հնարավոր հարցեր.

   - Ինչպե՞ս եք ձեզ զգում, երբ ձեր կոշիկի մեջ լոբու հատիկ կամ քար է ընկնում:
   - Ինչպե՞ս ենք մենք զգում, երբ սխալ ենք կատարում:
   - Ինչո՞ւ Անջելան հաճույք չստացավ գողացված խաղալիքով խաղալիս:
   - Ի՞նչ արեց Անջելան իր տխուր զգացմունքները փոխելու համար:
   - Ինչպե՞ս ենք մենք զգում, երբ փորձում ենք ուղղել մեր սխալը:

Դաս
27

# Կիսվելով ուրիշների հետ, ես կարող եմ նրանց օգնել երջանիկ լինել

**Նպատակ**

Խրախուսել երեխաներին օգնել ուրիշներին երջանիկ զգալ, կիսվելով նրանց հետ:

**Նախապատրաստություն**

1. Աղոթքով ուսումնասիրեք Մարկոս Զ.30–44 և Հովհաննես Զ.1–13:
2. Մի փոքրիկ հյուրասիրություն պատրաստեք յուրաքանչյուր երեխայի և ձեզ համար: Եթե ծոմի կիրակի է, ապա ընտրեք որևէ իր, ոչ թե սնունդ, և հարմարեցրեք դասը համապատասխան ձևով:
3. Պահանջվող նյութեր.
   ա. Աստվածաշունչ:
   բ. Մի քանի իր, որոնցով կարելի է միասին զբաղվել կամ կիսվել, օրինակ՝ գնդակ, գիրք, նարինջ: Իրերը տեղավորեք թղթից կամ կտորից պարկի մեջ:
   գ. Նկար 2-47, Հինգ հազարին կերակրելը (62143); նկար 2-48, Ցատկապարան (62523); նկար 2-49, Թխվածքաբլիթով կիսվող տղաները; նկար 2-50, Խաղացող երեխաները:
4. Անհրաժեշտ պատրաստություններ կատարեք այն լրացուցիչ վարժությունների համար, որոնք ցանկանում եք անցկացնել:

**Դասի առաջարկվող ընթացք**

Երեխաներից մեկին խնդրեք ասել բացիչ աղոթքը:

Եթե երեխաներին խնդրել եք շաբաթվա ընթացքում ինչ-որ բան կատարել, ստուգեք:

**Մենք կարող ենք կիսվել միմյանց հետ**

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Հերթով ցուցադրեք պարկի առարկաները և քննարկեք դրանք, օգտվելով հետևյալ հարցերից.

- Քանի՞ մարդ կարող է հաճույք ստանալ այս (ասեք առարկայի անունը), եթե միայն ես օգտագործեմ այն:
- Քանի՞ մարդ կարող է հաճույք ստանալ, եթե ես կիսվեմ դրանով:
- Ինչպե՞ս ես կարող եմ կիսվել դրանով:

Քննարկում

Բոլոր առարկաները երեխաների հետ քննարկելուց հետո հարցրեք.

- Ի՞նչ դուք ունեք, որ կարող եք կիսել մեկ ուրիշի հետ: Ինչպե՞ս կարող եք կիսել դա:

Երեխաներին խրախուսեք անվանել որոշակի առարկաներ և ասել, թե ում հետ կարող են դրանցով կիսվել և ինչպես պետք է կիսվեն:

Եթե երեխաները չեն նշում հետևյալը, կարող եք ասել, որ մենք կարող ենք կիսվել նաև մեր ժամանակով, մեր տաղանդներով և ավետարանով:

- Ինչպե՞ս մենք կարող ենք կիսվել մեր ժամանակով:
- Ինչպե՞ս մենք կարող ենք կիսվել մեր տաղանդներով:
- Ինչպե՞ս մենք կարող ենք կիսվել ավետարանով:

### Հիսուս Քրիստոսը մեզ սովորեցրել է կիսվել

Պատմվածք սուրբ գրություններից և քննարկում

Ցույց տվեք Աստվածաշունչը և բացատրեք, որ այն պատմություն է պարունակում մի երիտասարդ տղայի մասին, որն օգնեց Հիսուս Քրիստոսին և շատ ուրիշ մարդկանց, կիսվելով նրանց հետ: Պատմեք Հովհաննես Զ.1–13-ի պատմությունը (տե՛ս նաև Մարկոս Զ.30–44): Համապատասխան պահին ցուցադրեք նկար 2-47-ը, Հինգ հազարին կերակրելը:

- Քանի՞ հատ հաց և ձուկ ուներ տղան: (Տե՛ս Հովհաննես Զ.9:)
- Քանի՞ մարդ, ձեր կարծիքով, կկշտանա հինգ հատ հացով և երկու հատ ձկով:
- Քանի՞ հոգի կերակրեց Հիսուս Քրիստոսը: (Տե՛ս Հովհաննես Զ.10:)

Երեխաներին օգնեք հասկանալ, որ կար մարդկանց մեծ բազմություն: Համեմատեք կերակրված մարդկանց հինգ հազարին մոտ մարդկանց այնպիսի մի խմբի հետ, որն երեխաներին ավելի ծանոթ կլինի (օրինակ, «Հիսուսը կերակրեց այնքան մարդկանց, որքան կան մեր քաղաքում», կամ «Հիսուսը կերակրեց այնքան մարդկանց, որքան տեղավորվում են մեր տեղական մարզադաշտում»):

Բացատրեք, որ տղան կարող էր ինքն ուտել այդ ուտելիքը: Սակայն, նա ցանկանում էր կիսվել և Փրկիչը հրաշք գործեց, օգնելով հազարավոր մարդկանց:

- Ձեր կարծիքով, ինչպե՞ս զգացին մարդիկ, երբ տղան կիսվեց նրանց հետ:
- Ձեր կարծիքով, ինչպե՞ս իրեն զգաց տղան, երբ կիսվեց ուրիշների հետ:

Երեխաներին հիշեցրեք, որ Հիսուս Քրիստոսը մեզ հետ շատ բաներով է կիսվել և ցանկանում է, որ մենք ևս կիսվենք ուրիշների հետ:

### Կիսվելով, մենք կարող ենք երջանկացնել մեզ և ուրիշներին

Քննարկում նկարի շուրջ

Երեխաներին ասացեք, որ ինչպես տղան Հիսուսի ժամանակներում կիսվելու եղանակ գտավ, այնպես էլ մենք կարող ենք շատ եղանակներ գտնել ուրիշների հետ կիսվելու և նրանց երջանկացնելու համար: Հերթով ցուցադրեք միմյանց հետ կիսվող երեխաների նկարները (2-48, 2-49, և 2-50) և յուրաքանչյուր նկարի համար տվեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ են անում այս նկարի վրա պատկերված երեխաները:
- Ինչո՞վ են նրանք կիսվում:
- Ձեր կարծիքով, ինչպե՞ս են նրանք իրենց զգում, երբ կիսվում են: Ինչո՞ւ:

Երեխայի մասնակցություն

Երեխաներին խնդրեք պատմել այն պահերի մասին, երբ կիսվել են ուրիշի հետ և ասել, թե ինչպես են իրենց զգացել:

Շեշտեք, որ երբ մենք կիսվում ենք, ոչ միայն օգնում ենք ուրիշներին երջանիկ լինել, այլ մենք նույնպես երջանիկ ենք մեզ զգում:

Գովեք երեխաներին, եթե նրանք կիսվելու ցանկություն են արտահայտում: Այնուհետև քննարկեք նրանց հետ այն լավ զգացումները, որոնք առաջանում են կիսվելու արդյունքում: Շեշտեք, որ կիսվելը մեզ երջանիկ զգացումներ է պարգևում:

Պատմվածք

Մի պատմություն պատմեք երեխայի մասին, որն երջանիկ էր և երջանկացնում էր ուրիշներին, որովհետև կիսվում էր նրանց հետ: Կարող եք օգտագործել հետևյալ պատմությունը.

Դեյվիդը նոր մատիտներ ուներ և սքանչելի մի նկար էր գունազարդում, երբ մայրը սենյակ բերեց նրա փոքրիկ քույրիկին: Մայրիկը Դեյվիդին խնդրեց Էլիսոնի հետ կիսվել իր մատիտներով և օգնել նրան գունազարդել նկարը: Դեյվիդը չէր ուզում կիսվել: Էլիսոնը լավ չէր գունազարդում, և Դեյվիդը վախենում էր, որ նա կկոտրի իր մատիտներից մեկը: Նա Էլիսոնին մի գույն տվեց, որն այդքան էլ չէր հավանում:

Շուտով Դեյվիդին հարկավոր եղավ այն մատիտը, որը նա տվել էր Էլիսոնին, և նա փորձեց վերցնել դա: Էլիսոնը սկսեց լաց լինել: Դեյվիդը իրեն վատ զգաց, որ ստիպեց իր քրոջը լաց լինել, և հասկացավ, որ նա նույնպես սիրում է ներկել, թեև դա դեռ լավ չէր կարողանում անել: Դեյվիդը նայեց իր մատիտներին և որոշեց, որ դրանք կբավականացնեն նրանց երկուսին: Նա Էլիսոնին թույլ տվեց վերցնել մի գույն, և Էլիսոնն ուրախությամբ սկսեց ներկել իր թղթի վրա: Դեյվիդը նույնպես երջանիկ էր: (Adapted from Marjorie A. Parker, “Inside the Lines,” *Friend,* Feb. 1993, pp. 28–29:)

- Ինչո՞ւ էր Էլիսոնը երջանիկ:
- Ինչո՞ւ էր Դեյվիդը երջանիկ:

**Ամփոփում**

Վարժություն

Ցույց տվեք ձեր բերած հյուրասիրությունը:

- Ինչպե՞ս դուք ձեզ կզգայիք, եթե այս ամենը ես ինձ պահեի:
- Ի՞նչ կցանկանար Հիսուսը, որ ես անեի այս հյուրասիրության հետ:

Հյուրասիրությունը բաժանեք երկու երեխաների միջև և նրանց հարցրեք.

- Ի՞նչ կցանկանար Հիսուսը, որ դուք անեիք ձեր հյուրասիրության հետ:

Այդ երկու երեխաներին խնդրեք իրենց ունեցածով կիսվել դասարանի մյուս անդամների հետ: Դասարանին ասացեք, թե ինչպես եք դուք վերաբերվում կիսվելուն և ինչպես դուք կզգայիք, եթե հյուրասիրությունը միայն ձեզ պահեիք:

Երկու երեխաներին, որոնք կիսվեցին ուրիշների հետ, խնդրեք ասել, թե ինչպես իրենց զգացին, երբ կիսվեցին հյուրասիրությամբ, ապա մնացած երեխաներին խնդրեք ասել, թե ինչպես իրենց զգացին, երբ իրենց հետ կիսվեցին:

Վկայություն

Երեխաներին վկայեք, որ կիսվելը երջանկություն է բերում: Կարող եք պատմել այն պահերի մասին, երբ ուրիշների հետ կիսվելով երջանկություն եք ապրել:

Յուրաքանչյուր երեխայի խրախուսեք այս շաբաթ ինչ-որ մեկի հետ ինչ-որ բանով կիսվել:

Երեխաներից մեկին հրավիրեք ասել փակիչ աղոթքը: Նրան հիշեցրեք խնդրել Երկնային Հորը երեխաներին օգնել ցանկություն ունենալ կիսվել ուրիշների հետ:

**Լրացուցիչ վարժություններ**

Հետևյալ վարժություններից ընտրեք նրանք, որոնք լավագույնս կհամապատասխանեն ձեր դասարանի երեխաներին: Դուք կարող եք դրանք օգտագործել դասի ընթացքում, որպես դասի վերանայում կամ ամփոփում: Լրացուցիչ ուղղության համար տե՛ս «Օգնություն ուսուցչին» նյութի «Դասաժամ» բաժինը:

1. Երեխաներին ասացեք, որ որպես եկեղեցի մենք ունենք հավատո հանգանակ, որն ասում է, որ մենք հավատում ենք գթասիրտ լինելուն: Գթասիրտ լինելը նշանակում է կիսվել ուրիշների հետ և անել այլ բարի գործեր, որոնք սեր են ցուցաբերում նրանց հանդեպ: Երեխաներին օգնեք մտապահել հավատո տասներեքերորդ հանգանակի հետևյալ մասը. «Մենք հավատում ենք .... գթասիրտ լինելուն»:

2. Արտասանեք «Աղոթք» երգի բառերը: Երեխաներին հիշեցրեք, որ Երկնային Հայրը մեզ բազմաթիվ սքանչելի օրհնություններ է տվել և նա երջանիկ է, երբ մենք մեր օրհնություններով կիսվում ենք ուրիշների հետ:

   Երկնային Հայր, այս սքանչելի օրը
   Օգնիր ինձ երջանիկ ու բարի լինել,
   Օգնիր միշտ ազնիվ ու արդար լինել,
   Եվ օրհնություններով ուրիշների հետ կիսվել:

3. Աղի խմոր բերեք երեխաների համար և նրանց օգնեք պատրաստել որևէ բան, որով կարող են կիսվել իրենց ընկերների կամ ընտանիքի անդամների հետ (աղի խմոր պատրաստելու բաղադրատոմսը տրված է էջ 43-ում):

4. Ցույց տվեք մատիտների մի տուփ: Բացատրեք, որ դուք ունեք միայն մեկ տուփ, սակայն կցանկանայիք, որ բոլոր երեխաները նկարներ նկարեին: Տուփը տվեք երեխաներից մեկին:

   - Ի՞նչ կարող է անել (երեխայի անունը) մատիտների հետ, որպեսզի բոլորը կարողանան նկարել:

   Յուրաքանչյուր երեխայի տվեք թուղթ և խնդրեք կիսվել մատիտներով ու նկարել իրենց նկարները՝ ուրիշների հետ ինչ-որ բանով կիսվելիս:

5. Երեխաներին խնդրեք մնջախաղով ձևացնել, թե միսիոներներ են (թակում են դուռը, կարդում են սուրբ գրությունները, ուսուցանում են և կատարում են միսիոներական այլ գործեր):

   - Ի՞նչ են կիսում միսիոներները:
   - Ձեր կարծիքով, ինչպե՞ս են զգում միսիոներները, երբ ուրիշների հետ կիսվում են ավետարանով:

Դաս
28

# Ես կարող եմ բարի լինել

**Նպատակ**

Խրախուսել յուրաքանչյուր երեխայի բարի լինել մյուսների հանդեպ:

**Նախապատրաստություն**

1. Աղոթքով ուսումնասիրեք Ղուկաս ժ.25–37 և Հովհաննես ԺԳ.34–35, 15.12: Տե՛ս նաև Մաթեոս ԻԲ.36–40 և *Ավետարանի Սկզբունքները* (31110), գլուխ 30:
2. Պահանջվող նյութեր.
   ա. Աստվածաշունչ:
   բ. Կտրվածք 2-1, վիրավոր մարդը; կտրվածք 2-2, քահանա; կտրվածք 2-3, Ղևտացին; կտրվածք 2-4, Սամարացին:
3. Անհրաժեշտ պատրաստություններ կատարեք այն լրացուցիչ վարժությունների համար, որոնք ցանկանում եք անցկացնել:

**Դասի առաջարկվող ընթացք**

Երեխաներից մեկին խնդրեք ասել բացիչ աղոթքը:

Եթե երեխաներին խնդրել եք շաբաթվա ընթացքում ինչ-որ բան կատարել, ստուգեք: Կարող եք նրանց խնդրել պատմել այն մասին, թե ինչպես են կիսվել ուրիշների հետ շաբաթվա ընթացքում:

**Հիսուս Քրիստոսը մեզ սովորեցրել է բարի լինել բոլորի հանդեպ**

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Երեխաներին ցույց տվեք Սուրբ Երկրի քարտեզը, որը տրված է դասի վերջում:

- Ի՞նչ է սա: (Քարտեզ:)

Եթե երեխաները ծանոթ չեն քարտեզների հետ, բացատրեք, որ քարտեզը տարածքի նկար է, օրինակ երկրի կամ քաղաքի: Մարդիկ քարտեզներն օգտագործում են, որպեսզի կարողանան մի վայրից մյուսը հասնել: Ցույց տվեք քարտեզների բնորոշ պատկերները, օրինակ երկիրը, ծովը կամ գետերը:

Բացատրեք, որ այս քարտեզը ներկայացնում է Սուրբ Երկիրը, որտեղ Հիսուս Քրիստոսը ապրում էր, երբ երկրի վրա էր:

Մատնանշեք Հրեաստանը: Բացատրեք, որ Սուրբ Երկրի այս մասում ապրող մարդիկ կոչվում էին Հրեաներ:

Մատնանշեք Սամարիան: Բացատրեք, որ Սամարիայում ապրող մարդիկ կոչվում էին Սամարացիներ:

Բացատրեք, որ Հիսուսի ժամանակներում Հրեաներն ու Սամարացիները չէին հասկանում կամ սիրում միմյանց: Հրեաները կարծում էին, որ Սամարացիներից լավն էին: Հրեաները չէին ուտում Սամարացիների տանը կամ Սամարացիների պատրաստած կերակուրը: Հրեաները այնքան չէին սիրում Սամարացիներին, որ երբ պետք է գնային Գալիլեա (ցույց տվեք Գալիլեան), շրջանցում էին Սամարիան, թեև ավելի կարճ էր գնալ Սամարիայի միջով: Ցույց տվեք, թե որքան հեռու է գնալ Գալիլեա Սամարիայի կողքով, քան Սամարիայի միջով:

**Պատմվածք սուրբ գրություններից կտրվածքներով**

Բացատրեք, որ երբ Հիսուս Քրիստոսը երկրի վրա էր, նա հաճախ պատմություններ էր պատմում, որպեսզի օգներ մարդկանց հասկանալ իր ուսմունքները: Նրա պատմած պատմություններից մեկը Սամարացու մասին էր:

Պատմեք Բարի Սամարացու մասին պատմությունը, ինչպես տրված է Ղուկաս Ժ.30–37: Մի քանի երեխայի խնդրեք օգնել ձեզ, պահելով կտրվածքները համապատասխան պահին:

Պատմությունը պատմելիս շեշտեք հետևյալ կետերը.

1. Մի վիրավոր մարդ ճանապարհորդում էր Երուսաղեմից Երիքով (ցույց տվեք քարտեզի վրա այդ երկու քաղաքները):
2. Առաջին մարդը, որն անցավ առանց օգնելու, Հրեա քահանա էր: Քահանաներն աշխատում էին տաճարում և համարվում էին արդար ու սուրբ մարդիկ:
3. Երկրորդ մարդը, որն անցավ առանց օգնելու, Ղևտացի էր: Ղևտացիները նույնպես աշխատում էին տաճարում և կարևոր էին համարվում Հրեական կրոնի մեջ:
4. Երրորդ մարդը Սամարացի էր: Նա կանգ առավ օգնելու վիրավոր մարդուն:

Բացատրեք, որ քանի որ այս Սամարացին այդքան բարի էր, նրան անվանեցին Բարի Սամարացի:

Երեխաներին խնդրեք ձեզ վերադարձնել կտրվածքները:

**Բեմականացման վարժություն**

Մի քանի երեխայի խնդրեք դերերով կատարել Բարի Սամարացու պատմությունը, կամ երեխաներին խնդրեք խաղալ «Հետևիր Ինձ դեպի Երիքով», կատարելով հետևյալը.

Երեխաներից մեկին խնդրեք պառկել հատակին կամ նստել աթոռին, ձևացնելով, թե վիրավոր է: Դուք և մյուս երեխաները ձևացրեք, թե ճանապարհորդում եք Երիքովի ճանապարհով: Երեխաներին խնդրեք հետևել ձեզ և անել այն, ինչ դուք եք անում:

Նախ ձևացրեք, թե դուք ճանապարհով անցնող քահանան եք: Սկսեք քայլել սենյակով: Հանկարծ նկատեք ճանապարհի եզրին պառկած մարդուն: Նա ծանր վիրավորված է:

- Ի՞նչ արեց քահանան:

Անցեք ճանապարհի մյուս կողմը, ցույց տալով, որ դուք չեք օգնելու վիրավոր մարդուն:

Ապա ձևացրեք, թե դուք Ղևտացին եք: Քայլեք սենյակով: Նկատեք ճանապարհի եզրին պառկած մարդուն: Նրա հագուստը գողացել են, իսկ նա ծանր վիրավոր է:

- Ի՞նչ արեց Ղևտացին:

Կանգ առեք և նայեք վիրավոր մարդուն: Ապա շարունակեք ձեր ճանապարհը առանց նրան օգնելու:

Այժմ ձևացրեք, թե դուք Սամարացին եք: Քայլեք սենյակով: Նկատեք մի մարդու, որը ծանր վիրավոր պառկած է ճանապարհի եզրին:

- Ի՞նչ արեց Սամարացին:

Բեմականացրեք Սամարացու բարի գործերը: (Եթե ձեր դասարանը մեծ է, ապա կարող եք երեխաներին հանձնարարել մնջախաղով խաղալ ծառայության տարբեր դրսևորումներ:) Ձևացրեք, թե մաքրում եք մարդու վերքերը,

դնում եք նրան ավանակի վրա, տանում եք հյուրանոց և խոստանում եք տիրոջը վճարել այն բոլոր ծախսերը, որոնց կարիքը վիրավորը կունենա:

Երեխաներին ասացեք, որ այժմ, երբ նրանք հոգ տարան վիրավոր մարդու համար, կարող են վերադառնալ իրենց տեղերը: Նրանք պետք է նստեն և իրենց ձեռքերը դնեն ծնկներին:

Քննարկում

- Ո՞ր մարդն էր բարի:
- Ո՞ր մարդն արեց այն, ինչ Փրկիչը կուզենար, որ նա աներ:

Բացատրեք, որ այս պատմությունը պատմելուց հետո Հիսուսն ասաց, որ մենք պետք է վարվենք այնպես, ինչպես վարվեց Բարի Սամարացին, և բարի լինենք բոլորի նկատմամբ:

### Մենք կարող ենք մյուսների հանդեպ բարի լինել

Բացատրեք, որ բոլորի հանդեպ բարի լինելը միշտ չէ, որ հեշտ է, հատկապես, երբ ինչ-որ մեկը մեզ վիրավորում կամ վատ վերաբերմունք է ցուցաբերում:

Պատմվածք

Ձեր խոսքերով պատմեք հետևյալ պատմությունը մի աղջկա մասին, որը մեծ դաս սովորեց, երբ մեկ ուրիշ երեխա ոչ բարի վերաբերմունք ցուցաբերեց իր հանդեպ: Երեխաներին խնդրեք լսել, թե ինչպես նա լուծեց իր խնդիրը:

Լուիզան և Թոդը ընկերներ էին և հաճույքով միասին խաղ էին անում: Մի օր, սակայն, նրանք վիճեցին: Լուիզան Թոդին վիրավորական խոսք ասեց, իսկ Թոդը հրեց Լուիզային: Երբ Լուիզան վայր ընկավ և լաց եղավ, Թոդը տհաճ դեմք ցույց տվեց:

- Ի՞նչ դուք կանեիք, եթե լինեիք Լուիզան:

Լուիզան գնաց իր հայրիկին գտնելու: Նա գիտեր, որ հայրը կօգնի իրեն: Լուիզան հայրիկին պատմեց, թե ինչպես Թոդը իրեն հրեց և թե որքան կոպիտ էր իր հետ: Նա հայրիկին խնդրեց դուրս գալ և պատժել Թոդին:

Լուիզայի հայրն ասաց, որ Թոդին պատժելը չի օգնի: Նա Լուիզային ասաց դրա փոխարեն գնալ խոհանոց և երկու կտոր հացի վրա ջեմ քսել: Ապա նա խնդրեց, որ մի հացը տանի ու տա Թոդին: Եթե անի դա, ասաց հայրը, ապա թշնամու փոխարեն ընկեր կունենա:

Լուիզան արեց այնպես, ինչպես ասաց հայրը: Երբ նա դուրս եկավ և ջեմով հաց առաջարկեց Թոդին, վերջինս մի պահ նայեց նրան և վերցրեց նվերը: Թոդը և Լուիզան ժպտացին միմյանց և նստեցին վայելելու իրենց ջեմով հացերը: Նրանք կրկին ընկերներ էին: (Adapted from Lucile C. Reading, “A Piece of Bread and Jam,” *Children’s Friend,* Apr. 1967, p. 13:)

Քննարկում

- Ի՞նչ էր Լուիզան ուզում անել նրանից հետո, երբ Թոդը հրեց իրեն:
- Ինչպիսի՞ն է մեր առաջին արձագանքը, երբ որևէ մեկը վատ է մեզ վերաբերվում:
- Ի՞նչ պատահեց, երբ Լուիզան բարի վերաբերվեց Թոդին:
- Ի՞նչ կպատահեր, եթե Լուիզան բարի չգտնվեր Թոդի հանդեպ:

Երեխաներին հիշեցրեք, որ Հիսուսը ցանկանում է, որպեսզի մենք բարի լինենք անգամ նրանց հանդեպ, ովքեր վատ են մեզ վերաբերվում:

Հատված սուրբ գրություններից

Ցույց տվեք Աստվածաշունչը և բարձրաձայն կարդացեք Հովհաննես ԺԵ.12: Բացատրեք, որ դրանք Հիսուս Քրիստոսի խոսքերն են: Նա պատվիրել է, որ մենք սիրենք միմյանց: Երբ մենք բարի ենք միմյանց հանդեպ, մենք ցույց ենք տալիս մեր սերը:

Քննարկում

Նկարագրեք իրավիճակներ, որոնց դեպքում երեխաները կարող են ընտրել լինել բարի, և երեխաներին հարցրեք, թե ինչ կարող են անել յուրաքանչյուր իրավիճակում: Նրանց հիշեցրեք մտածել երգի բառերի մասին, եթե օգնության կարիք ունեն և չգիտեն, թե ինչպես վարվեն: Օգտագործեք հետևյալ իրավիճակները կամ մտածեք ինքներդ.

1. Քայլելով փողոցով դուք տեսնում եք մեկին, որը հեծանվով վթարի է ենթարկվել: Մոտենալով, դուք տեսնում եք, որ դա այն տղան է, որը միշտ ծաղրում էր ձեզ: Նրա տաբատի մի կողմը մնացել է հեծանվի շղթայի մեջ: Նա չի կարող շարժվել առանց օգնության:

   • Ի՞նչ դուք կարող եք անել տղայի հանդեպ բարի լինելու համար:

2. Դուք հատուկ երեկույթ եք պլանավորել հաջորդ շաբաթ ձեր ծննդյան օրվա կապակցությամբ և ցանկանում եք հրավիրել ձեր բոլոր հարևան երեխաներին, բացի մեկից: Նա նոր հարևան է: Նա երբեք չի ժպտում և այնքան էլ հետաքրքիր չէ նրա հետ խաղ անել:

   • Ի՞նչ դուք կարող եք անել այդ աղջկա հանդեպ բարի լինելու համար:

3. Ձեր ընկերների հետ խաղալիս դուք ընկաք: Ձեր ընկերներից մեկը ձեզ անփույթ անվանեց և ծիծաղեց ձեզ վրա: Այժմ ձեր ընկերն է ընկել և լաց է լինում:

   • Ի՞նչ դուք կարող եք անել ձեր ընկերոջ հանդեպ բարի լինելու համար:

4. Ձեր դպրոցի դասարանից մի տղա քայլելու համար փայտեր է օգտագործում: Երբ բոլոր երեխաները դուրս են գալիս խաղալու, նա ետ է մնում, քանի որ դանդաղ է քայլում: Նա հաճախ մենակ նստում և նայում է, թե ինչպես են մյուսները գնդակով խաղում:

   • Ի՞նչ դուք կարող եք անել տղայի հանդեպ բարի լինելու համար:

**Ամփոփում**

Կրկնություն

Երեխաներին խնդրեք կրկնել դասը, պատասխանելով հետևյալ հարցերին.

- Ի՞նչ մենք սովորեցինք այսօրվա դասից:
- Ինչո՞ւ է կարևոր բարի լինել:
- Երբ մենք բարի ենք, ո՞ւմ օրինակին ենք հետևում:

Հատված սուրբ գրություններից

Բարձրաձայն կարդացեք Հովհաննես ԺԳ.34–35: Բացատրեք երեխաներին, որ երբ մենք սիրում ենք ուրիշներին և բարի ենք նրանց հանդեպ, ապա ապացուցում ենք, որ Հիսուս Քրիստոսի աշակերտներն ենք (հետևորդները):

Վկայություն

Երեխաներին վկայեք, որ Հիսուսը ցանկանում է, որ մենք սեր ցուցաբերենք մյուսների նկատմամբ, լինելով բարի: Երեխաներին հիշեցրեք, որ մենք պետք է բարի լինենք բոլորի նկատմամբ, անգամ նրանց, ովքեր միշտ չէ, որ մեր հանդեպ բարի են եղել: Բերեք ձեր վկայությունը բարի լինելով Հիսուսին հետևելու կարևորության մասին:

Երեխաներին խրախուսեք հաջորդ շաբաթվա ընթացքում հատուկ ջանք գործադրել մյուսների հանդեպ բարի լինելու համար: Նրանց հիշեցրեք, որ մտածեն «Հիսուսն ասել է սիրեք բոլորին» երգի բառերի մասին, երբ պետք է հիշեն, թե ինչպես վերաբերվեն որևէ մեկին: Նրանց խնդրեք նկատել, թե ինչ է պատահում, երբ բարի լինելն են ընտրում: Առաջարկեք, որ նրանք պատրաստ լինեն հաջորդ անգամ պատմել իրենց փորձառությունների մասին:

Երեխաներից մեկին հրավիրեք ասել փակիչ աղոթքը:

**Լրացուցիչ վարժություններ**

Հետևյալ վարժություններից ընտրեք նրանք, որոնք լավագույնս կհամապատասխանեն ձեր դասարանի երեխաներին: Դուք կարող եք դրանք օգտագործել դասի ընթացքում, որպես դասի վերանայում կամ ամփոփում: Լրացուցիչ ուղղության համար տե՛ս «Օգնություն ուսուցչին» նյութի «Դասաժամ» բաժինը:

1. Երեխաներին թուղթ և մատիտներ բաժանեք և խնդրեք պատկերել այն ճանապարհները, որոնցով կարող են սեր ցույց տալ ուրիշների հանդեպ, լինելով բարի: Բոլոր երեխաների նկարների վրա գրեք *Ես կարող եմ բարի լինել ուրիշների հանդեպ:*

2. Երեխաներին օգնեք արտասանել «Բարին սկսում է ինձանից» երգի բառերը:

   Ուզում եմ բարի լինել բոլորի հանդեպ
   Քանզի դա է ճիշտ ուղին:
   Եվ ես ասում եմ ինձ «Հիշիր,
   Որ բարին սկսում է ինձանից»:

   Երեխաներին օգնեք մտածել այն մարդկանց մասին, ում հանդեպ կարող են բարի լինել (օրինակ՝ ընտանիքի անդամների, ընկերների կամ դասընկերների), և թե ինչ եղանակներով կարող են ցույց տալ իրենց բարությունն այդ մարդկանց նկատմամբ: Երեխաներին օգնեք հասկանալ նրանց հանդեպ բարի լինելու կարևորությունը, ովքեր բարի չեն մեր հանդեպ կամ տարբերվում են մեզանից:

3. Երեխաների հետ միասին երգեք կամ արտասանեք «Բարության հատուկ պարգևը»:

   Բարությունը հատուկ պարգև է,
   Երջանկություն է այն բերում:
   Երբ ես բարի եմ, զգում եմ,
   Ինչպես սիրտս է երգում:

   Երգի բառերը արտասանելուց հետո մի թել կամ կամ բարակ լար կապեք յուրաքանչյուր երեխայի մատին կամ դաստակին: Երեխաներին բացատրեք, որ այն նրանց կհիշեցնի բարի լինել բոլորի հանդեպ: Նրանց խնդրեք կապած պահել այդ թելը կամ լարը Երեխաների Խմբի դասի մնացած ժամանակի ընթացքում:

# Սուրբ Երկիրը



Դաս
29

# Ես կարող եմ լավ օրինակ լինել

**Նպատակ**

Խրախուսել երեխաներին, որ իրենց լույսով լուսավորեն որպես Հիսուս Քրիստոսի հետևորդներ:

**Նախապատրաստություն**

1. Աղոթքով ուսումնասիրեք Մաթևոս Ե.14–16:
2. Պատճենահանեք և կտրատեք չորս թղթե մոմեր և չորս թղթե զամբյուղներ, օգտվելով դասի վերջում տրված նմուշներից: Թղթե մոմերի վրա գրեք հետևյալ անունները.

   *Սյուզան*

   *Ջոշ*

   *Էրիկ և Փիթեր*

   *?*

   Դասից առաջ ցույց տվեք անուններով երեք մոմերը և փակեք դրանք թղթե զամբյուղներով: Չորրորդ մոմը (“?”) և զամբյուղը պահեք ավելի ուշ օգտագործելու համար:
3. Օգտվեք մոմի նմուշից բոլոր երեխաների համար թղթե մոմ պատրաստելու համար:
4. Պահանջվող նյութեր.
   ա. Աստվածաշունչ
   բ. Մոմ և մոմակալ
   գ. Զամբյուղ կամ արկղ, որն ամբողջովին կծածկի մոմը
   դ. ԸՃ նկար (տե՛ս դաս 1)
   ե. Մատիտներ
5. Անհրաժեշտ պատրաստություններ կատարեք բոլոր այն լրացուցիչ վարժությունների համար, որոնք ցանկանում եք անցկացնել:

*Ուշադրություն.* Մի վառեք մոմը, որն օգտագործում եք դասի ժամանակ: Հավաքատներում մոմ վառելը Եկեղեցու քաղաքականությանը դեմ է:

**Դասի առաջարկվող ընթացք**

Երեխաներից մեկին խնդրեք ասել բացիչ աղոթքը:

Եթե երեխաներին խնդրել եք շաբաթվա ընթացքում ինչ-որ բան կատարել, ստուգեք: Կարող եք նրանց խնդրել կիսվել բարություն ցուցաբերելու իրենց փորձով: Երեխաների հետ խոսելիս շշնջացեք:

**Հիսուս Քրիստոսը սովորեցրել է. «Թող որ ձեր լույսը շողա»:**

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Շարունակեք շշնջալ երեխաներին, հարցնելով նրանց, թե ինչ են արել այս շաբաթ կամ ինչն է իրենց դուր գալիս Երեխաների Խմբում, մինչև որ երեխաներից մեկը սկսի շշնջալով պատասխանել: Մի քանի րոպե անց բացատրեք, որ

դուք շշնջում էիք փորձ կատարելու համար, ցույց տալու համար, որ մարդիկ շատ հաճախ անում են այն, ինչ անում են իրենց շրջապատի այլ մարդիկ: Շեշտեք, որ երեխաները սկսեցին շշնջալ, որովհետև դուք շշնջում էիք իրենց հետ խոսելիս: Նրանք հետևեցին ձեր օրինակին:

Երեխաներին ասացեք, որ ինչպես իրենք հետևեցին ձեր օրինակին, նրանց ընկերները հաճախ հետևում են իրենց օրինակին: Հիսուս Քրիստոսը ուզում է, որ մենք լավ օրինակ լինենք:

- Ի՞նչ է նշանակում լինել լավ օրինակ:

Բացատրեք, որ մեր ընկերները հաճախ անում են այն, ինչ մենք ենք անում: Եթե նրանք տեսնում են, որ մենք անում ենք լավ բաներ և ընտրում ենք ճիշտը, ապա նրանց համար ավելի հեշտ կլինի նույնպես ընտրել ճիշտը:

Հանելուկ

Երեխաներին հրավիրեք լուծել հետևյալ հանելուկը.

Ես հալվող նյութից եմ պատրաստված,
Իմ մեջ թել է անցկացրած:
Գործն է իմ՝ լուսավորել,
Լուցկին կարող է ինձ վառել:
Ո՞վ եմ ես:

Հանելուկի պատասխանը գտնելուց հետո ցույց տվեք ձեր բերած մոմը և քննարկեք, թե ինչի համար են օգտագործվում մոմերը:

Հատված սուրբ գրություններից

Բացատրեք, որ երբ Հիսուս Քրիստոսն ապրում էր երկրի վրա էլեկտրական լուսավորություն չկար: Երբ արևը մայր էր մտնում և մթնում էր, մարդիկ տներում երբեմն մոմեր էին վառում, որպեսզի կարողանային տեսնել:

Երեխաներին ասացեք, որ մի օր Հիսուսն իր աշակերտներին դաս էր սովորեցնում ուրիշների համար լավ օրինակ լինելու մասին (տե՛ս Մաթեոս Ե.14–16): Որպեսզի աշակերտները կարողանային հասկանալ, թե ինչպես իրենց գործերը կարող էին օգնել ուրիշներին, Հիսուսը գործերը համեմատեց մոմի լույսի հետ: Բարձրաձայն կարդացեք այն, ինչ Մաթեոս Ե.15-ում Հիսուսն ասում է իր աշակերտներին:

Առարկայով դաս

Մոմը դրեք զամբյուղի կամ արկղի տակ:

- Ի՞նչ է պատահում, երբ մութ ժամանակ մենք վառում ենք մոմը և ծածկում այն զամբյուղով (արկղով): (Ոչ ոք չի կարող տեսնել լույսը:)

Հեռացրեք զամբյուղը կամ արկղը և մոմը դրեք մոմակալի մեջ:

- Ի՞նչ է պատահում, երբ մութ ժամանակ մենք դնում ենք մոմը մոմակալի մեջ և վառում ենք այն: (Մոմը լուսավորում է սենյակը և բոլորը կարողանում են տեսնել:)

Բացատրեք, որ Հիսուսը ցանկանում էր, որ իր աշակերտները լինեին մոմերի նման և լույս տային ուրիշներին: Եթե աշակերտները հետևեին Հիսուսի ուսմունքներին և լավ օրինակներ լինեին, ապա մյուս մարդիկ կտեսնեին, թե ինչ պետք է անեին:

Քննարկում

Բարձրաձայն կարդացեք Մաթեոս Ե.16-ից այն մասին, ինչ Հիսուսն ասաց իր աշակերտներին: Բացատրեք, որ Հիսուսը ցանկանում է, որ մենք նույնպես հետևենք նրա հրահանգներին:

- Ի՞նչ է նշանակում այս սուրբ գրության հատվածում թույլ տալ, որ ձեր լույսը լուսավորի արտահայտությունը: (Լավ օրինակ լինել:)
- Ի՞նչ է պատահում, երբ մենք լավ օրինակներ ենք լինում մեր ընկերների և մեզ շրջապատող մարդկանց համար:

## Երեխաները կարող են լավ օրինակներ լինել

Երեխաներին ասացեք, որ մենք կարող ենք հետևել Հիսուս Քրիստոսի հրահանգին, որն է՝ թույլ տալ, որ մեր լույսը լուսավորի, լինելով ուրիշների համար լավ օրինակ: Երբ մենք որոշում ենք հետևել Հիսուսին, մյուս մարդիկ, մեզ տեսնելով, սովորում են նրա մասին:

Երեխաներից մեկին խնդրեք բացել մոմը, հեռացնելով այն ծածկող թղթե զամբյուղը: Կարդացեք մոմի վրա գրված անունը կամ անունները: Ապա պատմեք այդ մոմերի հետ կապված պատմությունը: Նույնը կրկնեք մյուս երկու զամբյուղների և մոմերի հետ, պատմելով մյուս երկու պատմությունները:

Պատմություն Սյուզանի մասին

Սյուզանը հրավիրված էր իր ընկերուհի Քերոլինի ծննդյանը: Նա շատ էր ուրախ, որ գնալու էր այդ երեկույթին, և վստահ էր, որ լավ ժամանակ է անցկացնելու: Երբ տուն վերադարձավ, այնուամենայնիվ, նա այդքան էլ ուրախ տեսք չուներ: Սյուզանի մայրիկը նրան հարցրեց, թե ինչպես ընթացավ երեկույթը:

Սյուզանը բացատրեց, որ երեկույթի ժամանակ սառը թեյ մատուցվեց: Քերոլինի մայրիկն ասաց, որ դա նման էր մեծահասակաների երեկույթի:

- Ձեր կարծիքով, ի՞նչ արեց Սյուզանը, երբ իրեն թեյ առաջարկեցին:

Սյուզանը Քերոլինի մայրիկին ասաց, որ չի խմում թեյ և բացատրեց, որ ծնողներն ու Երեխաների Խմբի ուսուցիչներն իրենց սովորեցրել են, որ թեյը լավ չէ իր մարմնի համար:

Սյուզանի մայրիկը հպարտ էր, որ Սյուզանը թեյ չխմեց: Նա բացատրեց, որ Քերոլինը և նրա մայրիկը Եկեղեցու անդամներ չեն և չեն հավատում այն նույն բաներին, ինչի հավատում է Սյուզանի ընտանիքը:

Մի քանի ամիս անց Սյուզանը և նրա մայրիկը նամակ ստացան Քերոլինի մայրիկից: Քերոլինի մայրիկը բացատրում էր, որ երբ Սյուզանը արեց այն, ինչին հավատում էր, Քերոլինի ընտանիքը որոշեց ավելի շատ իմանալ Եկեղեցու մասին: Նրանք ուսուցանվեցին միսիոներների կողմից: Քերոլինի մայրիկն ասաց, որ հույս ունի լավ օրինակ ծառայել մեկ ուրիշի համար, ինչպես Սյուզանը լավ օրինակ եղավ իր համար:

- Ինչպե՞ս լուսավորեց Սյուզանի լույսը:

Պատմություն Ջոշի մասին

Ջոշն ու նրա ընտանիքը նոր տեղ էին տեղափոխվել ապրելու: Ջոշի նոր ընկերը Պաոլո անունով մի տղա էր, որը Եկեղեցու անդամ չէր: Ջոշն ու Պաոլոն երկուսն էլ ֆուտբոլ էին սիրում: Մի օր Պոլոն Ջոշին հրավիրեց հաջորդ կիրակի գնալ ֆուտբոլի խաղի: Ջոշը գիտեր, որ չպետք է կիրակի օրը ֆուտբոլի գնար, սակայն նա մտահոգվում էր, որ եթե չգնա, կվիրավորի Պաոլոյին:

- Ի՞նչ դուք կանեիք, եթե լինեիք Ջոշը:

Ջոշը ֆուտբոլ գնալու փոխարեն որոշեց գնալ եկեղեցի և հրավիրեց իր հետ Պաոլոյին: Պաոլոն համաձայնվեց Ջոշի հետ եկեղեցի գնալ:

- Ինչպե՞ս Ջոշը լավ օրինակ ծառայեց:

Պատմություն Էրիկի և Փիտերի մասին

Մի կին Հոլանդիայում մի օր եկավ հանդիպելու միսիոներներին: Նա քույրերին խնդրեց իրեն աղոթել սովորեցնեն: Կինը բացատրեց, որ իր որդիները՝ Էրիկը և Փիտերը, Երեխաների Խումբ էին հաճախում և շատ էին սիրում այն: Երեխաների Խմբում նրանք սովորել էին աղոթել:

Կինը բացատրեց, որ մի քանի օր առաջ իր փոքրիկ աղջնակը ծանր հիվանդ էր: Նա սենյակից մի քանի րոպեով դուրս էր եկել, իսկ երբ վերադարձավ, տեսավ,

թե ինչպես էին Էրիկն ու Փիտերը ծնկի իջել մանկան մահճակալի մոտ: Փիտերն Երկնային Հորը խնդրում էր օրհնել փոքրիկին և լավացնել նրան: Մայրն ուրախ էր, որ իր որդիները սովորել էին աղոթել Երեխաների Խմբում, և ցանկանում էր, որ միսիոներներն իրեն նույնպես աղոթել սովորեցնեին: Միսիոներները կնոջն աղոթել սովորեցրեցին: Նրանք ուրախ էին, որ Էրիկն ու Փիտերը լավ օրինակ եղան իրենց մայրիկի համար:

- Ինչպե՞ս լուսավորեց Էրիկի և Փիտերի լույսը:

Երեխայի մասնակցություն

Բոլոր պատմությունները պատմելուց հետո ցույց տվեք “?” մոմը, որը ծածկված է զամբյուղով: Բացատրեք, որ մոմի վրա “?” նշանը այն բոլոր երեխաների անուններն է, որոնք լավ օրինակ են ծառայում: Երեխաներին խնդրեք պատմել այն մասին, երբ լավ օրինակ են եղել:

**Մեր լույսը կարող է լուսավորել**

Հատված սուրբ գրություններից

Կրկին բարձրաձայն կարդացեք Մաթեոս Ե.16: Երեխաներին հիշեցրեք, որ Հիսուսը ցանկանում է, որ մեր լույսը լուսավորի: Շեշտեք մեր լույսով լուսավորելու կարևորության մասին լավ օրինակներ ծառայելու միջոցով: Շեշտեք, որ որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներ, մենք պետք է հետևենք Հիսուս Քրիստոսի ուսմունքներին և օգնենք ուրիշներին նույնպես հետևել Հիսուսի ուսմունքներին:

Վարժություն

Երեխաներին ասացեք, որ կնկարագրեք մի քանի իրավիճակ և երկու ընտրության հնարավորություն կտաք նրանց ամեն իրավիճակում: Երեխաներին խնդրեք ուշադիր լսել յուրաքանչյուր ընտրությունը: Եթե ընտրությունը լավն է, ապա երեխաները պետք է իրենց մի մատը վեր բարձրացնեն, ներկայացնելով իրենց մոմը մոմակալի վրա: Եթե ընտրությունը լավը չէ, ապա պետք է մյուս ձեռքով ծածկեն մատը, կարծես թաքցնում են իրենց լույսը: Յուրաքանչյուր իրավիճակից հետո քննարկեք, թե որ ընտրությունն էր ավելի լավը և ինչու է այն հանդիսանում մեր լույսով լուսավորելու օրինակ:

Օգտագործեք հետևյալ իրավիճակները կամ ինքներդ մտածեք.

1. Ողջ առավոտ դուք խաղ էիք անում ձեր հարևան ընկերների հետ և ուրախանում: Ճաշից հետո մի աղջիկ, որը հյուր էր եկել փողոցի այն կողմի տանն ապրող ընտանիքին, դուրս է գալիս և կարծես թե ուզում է խաղալ ձեզ հետ: Ի՞նչ եք դուք անում:

   ա. Քանի որ դուք և ձեր ընկերները չեք ճանաչում աղջկան, իսկ նա չգիտի, թե ինչ եք դուք խաղում, դուք չեք հրավիրում նրան խաղալ ձեզ հետ:
   բ. Դուք ձեր ընկերներին ասում եք. «Եկեք կանչենք նոր աղջկան մեզ հետ խաղալու: Նա կարծես թե խաղալ է ուզում»:

2. Դուք գնդակով խաղում եք ձեր ընկերների հետ: Դուք ուժեղ հարվածում եք գնդակին և դրա հարվածից ձեր հարևանի պատուհանի ապակին ճաքում է: Ի՞նչ եք դուք անում:

   ա. Դուք ձեր հարևանին ասում եք, որ գնդակով խաղում էիք և այնքան ուժեղ հարվածեցիք գնդակին, որ այն կպավ ու ճաք առաջացրեց նրա ապակու վրա: Դուք բացատրում եք, որ ցավում եք և առաջարկում եք վճարել կոտրված ապակու համար:
   բ. Դուք գնում եք և նայում, թե ինչ է պատահել: Քանի որ ապակին այդքան էլ շատ չի վնասվել, դուք ձեր ընկերներին ասում եք, որ ոչ ոք չի նկատի ճաքը: Դուք շարունակում եք խաղալ և աշխատում եք ավելի զգույշ լինել:

3. Դուք դպրոցում դասամիջոցին ճաշի համար հերթ եք կանգնել (կամ սպասում եք, որ գնաք Երեխաների Խմբի դասարան): Հերթի մեջ գտնվող որոշ երեխաներ անհանգիստ են և սկսում են խաղ անել: Ձեր ետևում կանգնած երեխան հրում է ձեզ: Ի՞նչ եք դուք անում:

   ա. Շարունակում եք կանգնել հերթի մեջ առանց հրելու որևէ մեկին:
   բ. Հրում եք նրան, ով հրեց ձեզ:

Երեխաներին հիշեցրեք, թե որքան կարևոր է լավ օրինակ ծառայել, ընտրելով ճիշտը:

**Ամփոփում**

ԸՃ նկար

Ցույց տվեք ԸՃ նկարը և երեխաներին հիշեցրեք, որ մենք կընտրենք ճիշտը, եթե հետևենք Փրկչի ուսմունքներին:

Երեխաներին խրախուսեք լավ օրինակ լինել մյուսների համար, ինչպես եղան Սյուզանը, Ջոշը և Էրիկն ու Փիտերը:

Վարժություն մոմով

Բոլոր երեխաներին մեկական թղթե մոմ տվեք: Գրեք կամ խնդրեք երեխաներին մոմերի վրա գրել իրենց անունները:

Երեխաներին խնդրեք մտածել, թե ինչպես կարող են լավ օրինակ ծառայել տանը, դպրոցում և եկեղեցում:

Յուրաքանչյուր երեխայի խնդրեք մի եղանակ նշել, որով նա կարող է այս շաբաթ լավ օրինակ ծառայել մյուսների համար:

Երեխաներին խնդրեք տուն տանել մոմերը, որոնք կհիշեցնեն, որ իրենց լույսերը պետք է լուսավորեն լավ օրինակներ լինելու միջոցով:

Վկայություն

Երեխաներին վկայեք լավ օրինակ լինելու կարևորության մասին: Կարող եք կիսվել ձեր անձնական փորձով, երբ լավ օրինակ եք եղել, կամ երբ որևէ մեկի օրինակը ձեզ օգնել է սովորել Հիսուս Քրիստոսի մասին:

Երեխաներից մեկին հրավիրեք ասել փակիչ աղոթքը և խնդրել Երկնային Հորը օգնել երեխաներին լավ օրինակներ լինել ուրիշների համար:

Դասարանից դուրս գալու ժամանակ երեխաներին խնդրեք լուռ քայլել, իրենց առաջ պահելով թղթե մոմերը: (Եթե երեխաները պետք է սպասեն դասարանում, մինչև ինչ-որ մեկը գա նրանց ետևից, խնդրեք նրանք ցույց տալ իրենց մոմերը այդ մարդկանց:)

---

**Լրացուցիչ վարժություններ**

Հետևյալ վարժություններից ընտրեք նրանք, որոնք լավագույնս կհամապատասխանեն ձեր դասարանի երեխաներին: Դուք կարող եք դրանք օգտագործել դասի ընթացքում, որպես դասի վերանայում կամ ամփոփում: Լրացուցիչ ուղղության համար տե՛ս «Օգնություն ուսուցչին» նյութի «Դասաժամ» բաժինը:

1. Երեխաներին խնդրեք դերերով կատարել «Մեր լույսը կարող է լուսավորել» բաժնում քննարկված իրավիճակների լավագույն լուծումները: Երեխաները կարող են նաև դերերով խաղալ Սյուզանի, Ջոշի, Էրիկի և Փիտերի պատմությունները:

   Կամ երեխաներին խնդրեք խաղալ «Հետևիր Ղեկավարին», հերթով հնարավորություն տալով յուրաքանչյուր երեխայի ղեկավար լինել:

Հեշտեք, որ այս խաղում բոլորը հետևում են ղեկավարի օրինակին: Երեխաներին հիշեցրեք, որ երբ նրանք ընտրում են ճիշտը, լավ օրինակ են լինում իրենց կողքինների համար:

2. Արտասանեք «Շողա» երգի բառերը:

Փոքր է շատ լույսը այս իմ,
Հավատի ու աղոթքի լույսը անգին:
Բայց շողում է ինչպես Աստծո մեծ արև,
Քանի որ վառվել է այն հենց այնտեղ:

*Կրկներգ.*
Շողա, շողա, շողա մաքուր ու վառ,
Շողա, շողա, նոր օր է պայծառ:

Իմ փոքր լույսը չեմ կարող թաքցնել,
Տերն է ասել, որ այդպես անեմ:
Տրվել է այն, որ բարձր պահեմ,
Որ փայլը նրա բոլորը տեսնեն:

Կրկներգ

3. Յուրաքանչյուր երեխայի կրկնողության հարց տվեք, շշնջալով, ինչպես դուք արեցիք ուշադրությունը կենտրոնացնող վարժության մեջ: Երեխաներին խնդրեք շշնջալով պատասխանել: Գովեք նրանց ուշադիր լսելու և մտածելու համար:



Դաս
30

# Ես կարող եմ հնազանդ լինել

**Նպատակ**

Խրախուսել երեխաներին հետևել Հիսուս Քրիստոսի օրինակին, լինելով հնազանդ:

**Նախապատարաստություն**

1. Աղոթքով ուսումնասիրեք Ելից Ի.12, Մաթևոս ԻՁ.36–46, Հովհաննես Ը.28–29, և Կողոսացիս Գ.20: Տե՛ս նաև Ավետարանի Սկզբունքները (31110), գլուխ 35:
2. Պատրաստեք հետևյալ բառաշերտը.

   Հնազանդ

3. Տպեք *Ես կարող եմ հնազանդվել* թղթի վրա, որը կրծքանշան կլինի յուրաքանչյուր երեխայի զգեստի վրա, կամ թել բերեք, դրանք երեխաների պարանոցից կախելու համար:
4. Պահանջվող նյութեր.
   ա. Աստվածաշունչ
   բ. Նկար 2-51, Սագն իր սագիկներով; նկար 2-52, Հիսուսն աղոթում է Գեթսեմանում (Gospel Art Picture Kit 227; 62175):
5. Անհրաժեշտ պատրաստություններ կատարեք այն լրացուցիչ վարժությունների համար, որոնք ցանկանում եք անցկացնել:

*Ուշադրություն տարիքով մեծ երեխաների ուսուցիչներին.* Կարող եք օգտագործել լրացուցիչ վարժություն 1-ը որպես ուշադրությունը կենտրոնացնող վարժություն:

**Դասի առաջարկվող ընթացք**

Երեխաներից մեկին խնդրեք ասել բացիչ աղոթքը:

Եթե երեխաներին խնդրել եք շաբաթվա ընթացքում ինչ-որ բան կատարել, ստուգեք: Երեխաներին կարող եք խնդրել պատմել այն մասին, թե ինչպես են լավ օրինակներ եղել շաբաթվա ընթացքում:

**Հնազանդությունը երջանկություն է բերում**

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Ցույց տվեք նկար 2-51, Սագն իր սագիկներով: Երեխաներից մեկին խնդրեք պահել նկարը, մինչ դուք պատմում եք Երեց Թեոդոր Մ. Բըրթընի մասին պատմությունը, որը Եկեղեցու Բարձրագույն Իշխանություններից էր.

Երբ Թեոդոր Մ. Բըրթընը հինգ տարեկան էր, նա այցելեց իր տատիկին ֆերմայում: Թեոդորը սիրում էր խաղ անել դրսում՝ ֆերմայում: Այս այցի ժամանակ տատիկը Թեոդորին զգուշացրեց, որ չմոտենա ճտերով հավին, որովհետև հավը կարող է մտածել, թե նա փորձում է վնասել իր ճուտիկներին: Թեոդորը խոստացավ, որ չի մոտենա:

Սակայն, երբ Թեոդորը տեսավ զզզված դեղին ճուտիկներին, նա չէր կարող ձեռք չտալ մեկին: Ճուտիկը փախավ, բայց մայր հավը սլացավ դեպի Թեոդորը և իր կարծր կտուցով կտցահարեց նրա ձեռքը: Լաց լինելով Թեոդորը վազեց տատիկի մոտ:

Թեոդորի տատիկը գրկեց նրան, մինչև որ Թեոդորը դադարեց լաց լինելը, ապա բացատրեց, որ մայր հավը մտածեց, թե Թեոդորը ուզում էր վնաս պատճառել իր ճուտիկներին: Նա փորձում էր պաշտպանել իր ճտերին, կտցահարելով նրան:

Տատիկը նորից Թեոդորին դուրս ուղարկեց, հիշեցնելով, որ հեռու մնա հավից: Նա զգուշացրեց, որ մայր սագից նույնպես հեռու մնա, որովհետև նա նույնպես ճտեր ունի: Մայր սագն ավելի մեծ էր, քան հավը, և կարող էր լրջորեն վնաս պատճառել իր ճտերին ձեռք տվող որևէ մեկին: Թեոդորը խոսք տվեց, որ ձեռք չի տա սագիկներին:

Թեոդորը հեռու մնաց մայր հավից: Սակայն, երբ տեսավ մայր սագին ու նրա սագիկներին, մոտեցավ, որ ավելի լավ տեսներ: Բացելով թևերը և առաջ ձգելով վիզը, մայր սագը բարձր գոռգոռաց նրա վրա: Թեոդորը վախեցավ և վազելով վերադարձավ տուն: (See Theodore M. Burton, “Friend to Friend: Grandmother’s Lesson,” *Friend,* Oct. 1973, pp. 18–19.)

Քննարկում

- Ինչո՞ւ Թեոդորի տատիկն ասաց, որ նա չմոտենա հավին կամ սագին:
- Ինչպե՞ս զգաց Թեոդորը, երբ չհնազանդվեց իր տատիկին:
- Ինչո՞ւ նա այդպես զգաց:
- Ձեր կարծիքով, ի՞նչ սովորեց Թեոդորը այդ փորձից:

Երեխաներին ասացեք, որ Թեոդորի տատիկը նրան ասաց, որ կան մարդիկ, որոնք պաշտպանում են նրան, ինչպես հավը և սագը պաշտպանում էին իրենց ճուտիկներին: Բացատրեք, որ մեր ծնողներն ու ընտանիքները և Երկնային Հայրն ու Հիսուս Քրիստոսը հետևում և պաշտպանում են մեզ: Նրանք մեզ սովորեցնում են, թե ինչ անել, որպեսզի ապահով և երջանիկ լինենք: Կարևոր է, որ մենք սովորենք հնազանդվել նրանց:

Բառաշերտ

Ցույց տվեք «Հնազանդ» բառաշերտը: Երեխաներին խնդրեք մի քանի անգամ ձեզ հետ բարձրաձայն արտասանել այդ բառը: Բացատրեք, որ մենք հնազանդ ենք, երբ անում ենք այն, ինչ Երկնային Հայրը, մեր ծնողները և մեր ղեկավարներն են ուզում, որ մենք անենք:

Արտասանեք *հնազանդվել* բառը և դասարանին խնդրեք կրկնել այն: Բացատրեք, որ հնազանդվել նշանակում է լինել հնազանդ:

**Մենք կարող ենք հնազանդվել Երկնային Հորը, ինչպես Հիսուս Քրիստոսը հնազանդվեց**

Հատված սուրբ գրություններից

Բացատրեք, որ Աստվածաշնչում Հիսուս Քրիստոսը սովորեցնում է, թե որքան կարևոր է հնազանդվել Երկնային Հորը: Բարձրաձայն կարդացեք հետևյալ արտահայտությունները Հովհաննես Ը.28–29-ից. «Իմ անձիցը ոչինչ չեմ անում. այլ ինչպես իմ Հայրը սովորեցրեց ինձ: . . . Որովհետև ես միշտ նորան հաճելի բաներն եմ անում»:

Բացատրեք, որ դրանք Հիսուս Քրիստոսի խոսքերն են, և նշանակում են, որ Հիսուս Քրիստոսը միշտ անում էր այն, ինչ Երկնային Հայրն էր ցանկանում, որ նա աներ: Նա անում էր միայն այն բաները, որոնք, Նա գիտեր, որ կգոհացնեին Երկնային Հորը:

Պատմվածք սուրբ գրություններից

Ցուցադրեք նկար 2-52, Հիսուսն աղոթում էր Գեթսեմանում, և համառոտ պատմեք Մաթևոս ԻՁ.36–39-ում տրվող պատմությունը:

Բարձրաձայն կարդացեք այն, ինչ Հիսուս Քրիստոսն ասաց իր աղոթքում.«Իմ Հայր, եթե կարելի է, թող այս բաժակն ինձանից անցնի» (Մաթևոս ԻՁ.39):

Բացատրեք, որ Հիսուսը չէր ուզում տանջվել ու զոհվել, եթե լիներ մեկ այլ ճանապարհ օգնելու մեզ վերադառնալ Երկնային Հոր մոտ:

Բարձրաձայն կարդացեք այն, ինչ Հիսուսը բացատրում է հետո. «Սակայն ոչ թե ինչպես ես եմ կամենում, այլ ինչպես դու» (Մաթեոս ԻԶ.39): Բացատրեք, որ դա նշանակում է, որ Հիսուսը պատրաստ էր անելու այն, ինչ ցանկանում էր Երկնային Հայրը, թեև դա հեշտ չէր: Բացատրեք, որ մեզանից չի պահանջվի նման դժվար բան անել, ինչպես Հիսուսից պահանջվեց, սակայն մենք պետք է հնազանդվենք Երկնային Հորը այն ամենում, ինչ նա ուզում է, որ մենք անենք:

- Ի՞նչ է մեզ խնդրել անել Երկնային Հայրը: (Պատասխանները կարող են ներառել՝ աղոթել, սիրել միմյանց, մկրտվել և հաստատվել, լինել ազնիվ:)

### Մենք կարող ենք հնազանդվել մեր ծնողներին

Սուրբ գրության քննարկում

Բացատրեք, որ երբ մենք հնազանդվում ենք Երկնային Հորը, մենք հնազանդվում ենք նաև մեր ծնողներին: (Եթե ձեր դասարանում կան երեխաներ, որոնք չեն ապրում իրենց ծնողների հետ, հարմարեցրեք քննարկումն ըստ նրանց կարիքների: Օրինակ, երեխաները պետք է նաև հնազանդվեն իրենց տատիկներին և պապիկներին:) Նշեք, որ Տաս Պատվիրաններից մեկը մեզ ասում է, որ մենք հնազանդվենք մեր ծնողներին: Բարձրաձայն կարդացեք Ելից Ի.12 «Պատվիր քո հորը և քո մորը»: Բացատրեք, որ մեր ծնողներին հնազանդվելը նրանց պատվելու եղանակներից է:

- Ինչո՞ւ մենք պետք է հնազանդվենք մեր ծնողներին:

Բարձրաձայն կարդացեք Կողոսացիս Գ.20 (երեխաներին հիշեցրեք, որ *Տերը* Հիսուս Քրիստոսի անուններից մեկն է): Երեխաներին օգնեք մտապահել հատվածի առաջին մասը. «Որդիք, հնազանդ եղեք ձեր ծնողներին»:

- Ինչպե՞ս եք ձեզ զգում, երբ հնազանդվում եք ձեր ծնողներին:
- Ինչպե՞ս են զգում ձեր ծնողները, երբ դուք հնազանդվում եք նրանց:

Երեխաներին խրախուսեք վճռել այս պահից հնազանդվել Երկնային Հորը և իրենց ծնողներին:

Պատմվածք

Պատմեք մի երեխայի մասին, որը երջանիկ էր, որովհետև հնազանդվեց իր ծնողներին: Կարող եք օգտագործել հետևյալ պատմությունը.

Քեթրինը սիրում էր խաղ անել իր ընկերուհի էյփրիլի տանը: Քեթրինի մայրն ասաց, որ նա կարող է խաղ անել մեկ ժամ: Երբ էյփրիլի մայրն ասաց, որ մեկ ժամն անցել է, Քեթրինի համար դժվար էր հեռանալ: Նա ուզում էր ավարտել խաղը, որը նա և էյփրիլը խաղում էին: Քեթրինը մի պահ մտածեց և որոշեց գնալ տուն, ինչպես իրեն ասել էր մայրիկը: Նա արագ հրաժեշտ տվեց էյփրիլին և վազեց տուն:

Երբ Քեթրինը տուն մտավ, տատիկը նրան սպասում էր: Տատիկը տուն էր շտապում, սակայն ուզում էր, որ Քեթրինը գիշերն իր տանն անցկացներ: Եթե Քեթրինը չգար տուն այն ժամին, որին մայրիկն էր ասել, նա չէր կարողանա իր տատիկի տուն գնալ:

- Ձեր կարծիքով, ինչպե՞ս էր զգում Քեթրինը:

Շեշտեք, որ մենք միշտ չէ, որ հետքրքիր հատուցում ենք ստանում, երբ հնազանդ ենք լինում, սակայն մենք միշտ էլ երջանիկ և հանգիստ զգացում կունենանք: Այս զգացումը գալիս է, երբ իմանում ես, որ ընտրել ես ճիշտը:

## Ամփոփում

Երեխայի մասնակցություն

Երեխաներին հերթով հրավիրեք պատմել այն ժամանակների մասին, երբ հնազանդ են եղել, և ինչպես են իրենց զգացել, կամ ինչպես կարող են հնազանդ լինել ապագայում (օրինակ պահելով Երկնային Հոր պատվիրանները, հարցնելով ծնողների թույլտվությունը խաղալու համար դուրս գնալուց առաջ, օգնելով մաքրել տունը կամ ծնողների առաջին կանչով միանգամից վերադառնալով):

Յուրաքանչյուր երեխայի հերթից հետո տվեք նրան «Ես կարող եմ հնազանդվել» կրծքանշանը: Երեխաներին խրախուսեք իրենց նշանները պահել այնպիսի տեղ, որտեղ կարող են հաճախ տեսնել դրանք և հիշել, որ պետք է հնազանդ լինեն: Առաջարկեք, որ երեխաները բացատրեն նշանները իրենց ծնողներին և կիսվեն նրանց հետ այսօր սովորած դասով:

Վկայություն

Կիսվեք ձեր վկայությամբ այն մասին, թե ինչպես է օրհնել ձեր կյանքում Երկնային Հորը և ծնողներին հնազանդվելը: Կարող եք պատմել այն պահերի մասին, երբ հնազանդությունը երջանկություն է ձեզ պարգևել:

Երեխաներին խրախուսեք հնազանդվել ծնողներին հաջորդ շաբաթվա ընթացքում:

Երեխաներից մեկին հրավիրեք ասել փակիչ աղոթքը:

---

## Լրացուցիչ վարժություններ

Հետևյալ վարժություններից ընտրեք նրանք, որոնք լավագույնս կհամապատասխանեն ձեր դասարանի երեխաներին: Դուք կարող եք դրանք օգտագործել դասի ընթացքում, որպես դասի վերանայում կամ ամփոփում: Լրացուցիչ ուղղության համար տե՛ս «Օգնություն ուսուցչին» նյութի «Դասաժամ» բաժինը:

1. Գրատախտակին մի մեծ շրջան նկարեք՝ մեջը երկու փոքր շրջաններով (տե՛ս նկարը):



Բացատրեք, որ այս վարժության նպատակն է աչքերը կապած X գրել ամենափոքր շրջանի մեջ: Հարցրեք, թե կան արդյոք կամավորներ փորձելու դա: Կապեք կամավորի աչքերը և նրան կավիճ տվեք: Նրան մի քանի անգամ իր շուրջը պտտեք, ապա կանգնեցրեք գրատախտակի դիմաց: Երեխային խնդրեք X գրել գրատախտակին: Ապա խնդրեք մեկ այլ X գրել այն հրահանգները ստանալուց հետո, թե որտեղ այն գրել: Մեկ այլ երեխայի խնդրեք աչքերը կապած երեխային հրահանգներ տալ, օրինակ «ավելի բարձր», «ավելի ցածր», «ձախ», «աջ»:

Նայեք երկու նշումներին և քննարկեք, թե որքան լավ է ստացվել, երբ աչքերը կապած երեխան հնազանդվել է մյուս երեխայի հրահանգներին:

- Ինչո՞ւ (աչքերը կապած երեխայի անունը) ավելի ճիշտ տեղ է գրել *X* , երբ նա հնազանդվել է հրահանգներին:

Բոլոր երեխաներին, ովքեր ցանկանում են փորձել, հնարավորություն տվեք աչքերը կապած վիճակում *X* գրել, մինչ մեկ ուրիշ երեխա հրահանգներ կտա:

Նշեք, որ աչքերը կապած երեխաները ավելի լավ են կարողանում նշում կատարել շրջանի մեջ, երբ հնազանդվում են մեկ ուրիշի հրահանգներին, որն ավելի լավ է տեսնում շրջանները: Բացատրեք, որ երբեմն Երկնային Հայրը և մեր ծնողները մեզանից ավելի լավ են տեսնում մեր կյանքը: Նրանք մեզ օգնող հրահանգներ են տալիս: Երբ մենք հնազանդվում ենք Երկնային Հորը և մեր ծնողներին, մենք երջանիկ ենք լինում:

2. Ձեր խոսքերով պատմեք հետևյալ պատմությունը.

Մթյուն լուցկիներ էր սիրում: Եթե պետք էր մոմեր կամ կրակ վառել, նա միշտ պատրաստ էր օգնել: Երբեմն ծնողները թույլ էին տալիս վառել լուցկին, սակայն միշտ մոտ էին կանգնում հետևելու համար, որ նա զգույշ լինի:

Մի օր, երբ ծնողները սենյակում չէին, Մթյուն սեղանի վրա նկատեց լուցկու տուփ: Նա մտածեց, թե որքան զվարճալի կլինի վառել բոլոր լուցկու հատիկները: Նա վստահ էր, որ զգույշ կլինի:

Ապա Մթյուն մտածեց այն մասին, թե քանի անգամ է մայրը նրան ասել, որ լուցկին խաղալիք չէ և չի կարելի այն առանց թույլտվության օգտագործել: Մթյուն լուռ շրջվեց և գնաց դուրս խաղալու:

Խոսեք երեխաների հետ այն հնարավոր հետևանքների մասին, որոնք ի հայտ կգային, եթե Մթյուն վերցներ լուցկու տուփը: Շեշտեք, որ Մթյույի հնազանդությունը օգուտ բերեց ընտանիքին անգամ այն ժամանակ, երբ ոչ ոք տեղյակ չեղավ:

Կարող եք շարունակել քննարկումը, հարցնելով.

- Ի՞նչ պետք է աներ Մթյուն, եթե նրա ավագ եղբայրը նրան ասեր բերել լուցկին ննջասենյակ, որպեսզի իրենք կարողանային խաղալ դրանով:

Բացատրեք, որ երբ որևէ մեկը մեզ ասում է անել այն, ինչը մենք գիտենք, որ սխալ է, մենք չպետք է հնազանդվենք: Երկնային Հայրը չի ցանկանում, որ մենք հնազանդվենք, երբ մեզ սխալ բան են ասում անել:

3. Պատրաստեք թղթեր պարզ հրահանգներով, ինչպես ստորև տրված հրահանգները.

- Մաքրեք գրատախտակը:
- Սեղմեք դասարանի բոլոր անդամների ձեռքը:
- Արտասանեք «Արա, ինչպես ես եմ անում»:
- Որևէ լավ բան ասեք դասարանի յուրաքանչյուր անդամի մասին:
- Նշեք հինգ բան, որոնց համար շնորհակալ եք:
- Ցույց տվեք որևէ մի բան, որը պատրաստվում եք անել հաջորդ շաբաթ ընտանիքի որևէ անդամի համար:

Թղթերը դրեք տուփի մեջ: Երեխաներին խնդրեք հերթով տուփից թուղթ հանել և հնազանդվել դրանց վրա գրված հրահանգներին:

4. Դասից առաջ թղթե հուշումներ պատրաստեք և թաքցրեք դրանք դասարանում գանձերի որոնման խաղի համար: Յուրաքանչյուր հուշումը երեխաներին պետք է տանի դեպի հաջորդ հուշումը, մինչև որ վերջին հուշումը տանի գանձի մոտ: Կարող եք փոքր հյուրասիրություն կամ նվեր թաքցնել յուրաքանչյուր երեխայի համար, որպես գանձ, որը նրանք կգտնեն որոնման վերջում:

   Երեխաների հետ քննարկեք, թե ինչպես նրանք պետք է հնազանդվեն հուշումի հրահանգներին, գանձը գտնելու համար: Բարձրաձայն կարդացեք առաջին հուշումը գանձերի որոնումը սկսելու համար:

   Գանձերի որոնման ավարտից հետո երեխաներին օգնեք հասկանալ, որ եթե մենք հնազանդվում ենք Երկնային Հորը, նա մեզ տալիս է բոլոր գանձերից ամենամեծը, այն է՝ ապրել իր հետ հավերժ:

5. Կրկնեք Նոյան տապանի պատմությունը Ծննդոց Զ-Ը-ից: Բացատրեք, որ քանի որ Նոյը հնազանդ էր, նա և նրա ընտանիքը փրկվեցին ջրհեղեղից: Երեխաներին խրախուսեք հնազանդվել Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի պատվիրաններին, ինչպես արեց Նոյը:

   Բոլոր երեխաներին դասի վերջում գտնվող թերթիկի մեկական օրինակ տվեք: Թող նրանք գունավորեն տապանի նկարը, ապա նկարեն, թե ինչպես կարող են հնազանդ լինել:

Նոյը հնազանդ էր



Ես կարող եմ
հնազանդ լինել

# Ես կհնազանդվեմ օրենքին

Դաս
31

**Նպատակ** Օգնել յուրաքանչյուր երեխայի հասկանալ երկրի օրենքները հարգելու և դրանց ենթարկվելու կարևորությունը:

**Նախապատրաստություն**

1. Աղոթքով ուսումնասիրեք Մաթևոս ԻԲ.15–22 և Հավատո Հանգանակ 1.12:
2. Յուրաքանչյուր երեխայի համար աղի խմորի մի կտոր պատրաստեք: Աղի խմորի բաղադրատոմսը կարող եք գտնել 48 էջի վրա: (Եթե աղի խմոր հնարավոր չէ պատրաստել, կարող եք երեխաներին մատիտներ ու թուղթ բաժանել:)
3. Թղթի վրա թվեք այն իրավիճակները, որոնք առնչվում են երեխաներին ծանոթ օրենքների և կանոնների հետ: Նկարագրեք առնվազն մեկ իրավիճակ դասարանի յուրաքանչյուր երեխայի համար և համարակալեք իրավիճակները: Օգտվեք ստորև տրված իրավիճակներից կամ ստեղծեք ձեր դասարանի երեխաներին ավելի համապատասխանող իրավիճակներ.
   - Դուք գրեթե ուշանում եք դպրոցից: Եթե անցնեք փողոցը արգելված տեղում անցումն օգտագործելու փոխարեն, ապա ավելի շուտ կհասնեք: Ի՞նչ դուք կանեք օրենքին հնազանդվելու համար:
   - Դուք գնումներ եք կատարում ձեր հայրիկի հետ և կոնֆետ եք ուզում: Հայրիկը ասում է ոչ, սակայն մինչ նա վճարում է մթերքների համար, դուք մտածում եք, որ կարող եք հասցնել կոնֆետը գցել ձեր գրպանը, և ոչ ոք չի նկատի: Ի՞նչ դուք կանեք օրենքին հնազանդվելու համար:
   - Դուք ձեր շանը դուրս եք հանել զբոսնելու: Դուք հասնում եք այգի և ցանկանում եք խաղ անել, սակայն տեսնում եք ցուցանակը «Շների հետ չի թույլատրվում»: Դուք շուրջը ոչ մի մեծահասակ չեք տեսնում և կարող եք շանը կապել ծառին, մինչ կխաղաք: Ի՞նչ դուք կանեք օրենքին հնազանդվելու համար:
   - Դուք անցնում եք փողոցը անկյունում, որտեղ լուսաֆոր է դրված: Մեքենա չի երևում և ոչ ոք չկա: Սակայն ձեր անցնելու լույսը դեռ չի վառվել: Ի՞նչ դուք կանեք օրենքին հնազանդվելու համար:
   - Դուք գրադարանում եք և գտել եք այն գիրքը, որը ցանկանում եք վերցնել, սակայն ձեր գրադարանի քարտը տանն եք մոռացել: Գրադարանավարը ընդունարանի սեղանի մոտ չէ և չի տեսնի, թե ինչպես եք դուք գրքով հեռանում: Ի՞նչ դուք կանեք օրենքին հնազանդվելու համար:
4. Պատրաստեք այնքան փոքր թղթեր, որքան իրավիճակներ ունեք: Համարակալեք թղթերը և գցեք արկղի կամ զամբյուղի մեջ:

5. Յուրաքանչյուր երեխայի համար թղթե կրծքանշան պատարաստեք.

Մենք հավատում ենք օրենքին ենթարկվելուն:

6. Պատրաստեք հետևյալ բառաշերտը.

Մենք հավատում ենք օրենքին ենթարկվելուն:

7. Պահանջվող նյութեր.
   ա. Աստվածաշունչ
   բ. Մետաղադրամ (հնարավորության դեպքում, ազգային դեկավարի նկարով)
   գ. Թել, ասեղ կամ կպչող ժապավեն կրծքանշանները երեխաների հագուստին փակցնելու համար
   դ. Նկար 2-53, Կեսարի բաժինը

8. Անհրաժեշտ պատրաստություններ կատարեք այն լրացուցիչ վարժությունների համար, որոնք ցանկանում եք անցկացնել:

---

**Դասի առաջարկվող ընթացք**

Երեխաներից մեկին խնդրեք ասել բացիչ աղոթքը:

Եթե երեխաներին խնդրել եք շաբաթվա ընթացքում ինչ-որ բան կատարել, ստուգեք:

**Կանոններն ու օրենքները կարող են օգնել մեզ**

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Երեխաներին բաժանեք աղի խմորի կտորները և խնդրեք որևէ ընտանի կենդանի պատրաստել: (Աղի խմորի բացակայության դեպքում երեխաներին մատիտներ ու թուղթ բաժանեք և խնդրեք որևէ ընտանի կենդանի նկարել: Քննարկումը փոփոխեք համապատասխանաբար:)

Բոլոր կենդանիները ցույց տվեք, դնելով սեղանին կամ հատակին: Բացատրեք, որ ֆերմերները լավ պետք է խնամեն իրենց կենդանիներին, տալով նրանց սնունդ, ջուր և պաշտպանություն: Եթե կենդանիները հեռանան, կարող են կորել կամ վնասվել:

- Ի՞նչ մենք կարող ենք անել, որպեսզի թույլ չտանք որ կենդանիները հեռանան: (Ցանկապատ կառուցենք:)

Խմորից երկար պարան պատրաստեք: Ցանկապատի նման դրանով շրջապատեք կենդանիներին: Բացատրեք, որ ցանկապատները ապահով են պահում կենդանիներին: (Կենդանիները թող մնան նույն տեղում դասի ողջ ընթացքում: Դասի վերջում երեխաներին թույլ տվեք իրենց կենդանիներին տուն տանել:)

Բացատրեք, որ մենք նույնպես ունենք բաներ, որոնք մեզ ապահով են պահում: Դրանք կոչվում են օրենքներ և կանոններ: Օրենքներն ու կանոնները նման են ցանկապատներին, քանի որ թույլ չեն տալիս մեզ անել այնպիսի

բաներ, որոնք վտանգավոր են կամ կարող են մեզ կամ ուրիշներին տխրեցնել: Երբ մենք ենթարկվում ենք օրենքներին և կանոններին, ապահով և երջանիկ ենք լինում:

Քննարկում

Ընտրեք ցանկացած երեխայի ծանոթ մի պարզ խաղ: Երեխաներին խնդրեք ձեզ բացատրել խաղի կանոնները և քննարկել, թե ինչ կպատահի, եթե խաղան խաղը առանց կանոններին ենթարկվելու: Երեխաներին օգնեք հասկանալ, որ կանոնները անհրաժեշտ են, որպեսզի խաղերը հաջող և հետքրքիր լինեն:

- Ի՞նչ այլ կանոններ կան բացի խաղի կանոններից:
- Ի՞նչ կանոններ կան ձեր տանը:

Յուրաքանչյուր երեխայի խնդրեք նշել մի կանոն, որին հետևում է նրա ընտանիքը, օրինակ «Խաղալիքները խաղից հետո իրենց տեղերում դնել»: Երբ ամեն երեխա նշում է կանոնը, հարցրեք.

- Ինչպե՞ս է այս կանոնը օգնում ձեզ:

Երբ բոլոր երեխաները կնշեն իրենց ընտանիքի կանոնները, ասացեք, որ տնից բացի մենք կանոններ ունենք այլ վայրերում ևս:

- Ի՞նչ կանոններ կան դպրոցում: Երեխաների Խմբո՞ւմ:
- Ինչպե՞ս են այդ կանոնները օգնում ձեզ:

## Մեր երկիրը մեզ օրենքներ է տալիս

Պատմվածք և քննարկում

Բացատրեք, որ ինչպես մենք ունենք կանոններ տանը, դպրոցում և Երեխաների Խմբում, այդպես էլ կանոններ ունենք մեր քաղաքի և երկրի համար: Այդ կանոնները կոչվում են օրենքներ: Օրենքները մեզ օգնում և պաշտպանում են, ինչպես անում էին տան, դպրոցի և Երեխաների Խմբի կանոնները: Պատմեք պատմություն մի երեխայի մասին, որը սովորեց, թե ինչպես են օրենքները պաշտպանում և օգնում մեզ, երբ մենք ենթարկվում ենք դրանց: Օգտագործեք ստորև տրված պատմությունը կամ մտածեք ինքներդ.

Ջերին երազում էր իր շունն ունենալ, և նա շատ էր ուրախացել, երբ ծննդին մի սքանչելի շնիկ ստացավ: Նա շնիկին Փալ կոչեց: Ջերին և Փալը միասին ուրախ ժամանակ էին անցկացնում:

Ջերիի քաղաքում կար օրենք, որը թույլ չէր տալիս, որ շներին առանց կապի հանեին դուրս, եթե ցանկապատով բակի մեջ չէին: Մի օր Ջերին որոշում է Փալին իր հետ տանել իր ընկերոջ տուն: Նա չէր կարողանում գտնել Փալի կապը և, քանի որ ընկերը միայն մի քանի տուն այն կողմ էր ապրում, որոշեց Փալին տանել առանց կապի:

Երբ նրանք փողոցով քայլում էին, Փալը մի կատու տեսավ փողոցի այն կողմում: Մինչ Ջերին կհասկանար, թե ինչ պատահեց, Փալը վազեց դեպի փողոց և մեքենան հարվածեց նրան:

Արցունքները աչքերին Ջերին վերցրեց շնիկին և տարավ տուն: Ջերիի մայրիկը շնիկին տարավ անասնաբուժի մոտ, որը հոգ տարավ Փալի կոտրված թաթի համար:

Երբ նրանք եկան տուն Ջերիի մայրիկն ասաց, որ Փալը կարող էր սատկել: Ջերին հասկացավ, որ եթե նա ենթարկվեր օրենքին և իր շանը կապի վրա պահեր, Փալը չէր վնասվի: Ջերին հասկացավ, որ օրենքները պաշտպանում են նրան և նրա շնիկին, և որոշեց այլևս չխախտել ոչ մի օրենք:

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ Ջերիի քաղաքում կար շներին կապի վրա պահելու օրենք:

- Ինչպե՞ս կարելի էր կանխել Փալի պատահարը:
- Ինչո՞ւ մենք օրենքներ և կանոններ ունենք, որոնց պետք է հետևենք:

Քննարկում

Բացատրեք, որ օրենքները ստեղծվել են մեզ օգնելու և պաշտպանելու նպատակով: Երեխաներին խնդրեք թվարկել ձեր տարածքի հիմնական օրենքներից մի քանիսը: Քննարկեք յուրաքանչյուր օրենքը և այն, թե ինչու է դա ստեղծվել: Օգնեք երեխաներին տեսնել, թե ինչու է յուրաքանչյուր օրենքն օգտակար:

Կարող եք օգտագործել հետևյալ մտքերը, եթե դրանք կիրառվում են ձեր տարածքում.

*Անվտանգ երթևեկելու կանոններ*

- Կանգնեք բոլոր կանգառի նշանների մոտ: Դրանք օգնում են խուսափել պատահարներից:
- Պահեք նշված արագության սահմանը: Արագության սահմանները տրվում են, որպեսզի մարդիկ կարողանան անվտանգ վարել և արագ կանգնել անհրաժեշտության դեպքում:

*Կենդանիներին վերաբերող կանոնները*

- Ձեր կենդանուն կապի վրա պահեք, երբ բակից դուրս եք հանում: Կապը կարող է պահել ձեր կենդանիներին վնասվելուց (ինչպես Ջերիի շուն Փալը) և պաշտպանել մարդկանց սեփականությունը, որպեսզի այն չվնասվի կենդանիների կողմից:
- Դաժան մի եղեք կենդանիների հանդեպ: Այս օրենքը կենդանիներին պաշտպանում է վնասվածքներից:

*Անձնական սեփականության մասին օրենքներ*

- Մի գողացեք: Եթե մենք վերցնում ենք ուրիշին պատկանող իրեր, ապա բոլորը դժգոհ են մնում:
- Մի աղտոտեք: Եթե ամեն մեկը աղբը թափի ուր պատահի, ապա մեր քաղաքը կլինի տգեղ և կեղտոտ: Մեր ծնողները ստիպված կլինեն վճարել (հարկերի միջոցով), որպեսզի աղբը հեռացվի:

**Հիսուս Քրիստոսը ցանկանում է, որ մենք ենթարկվենք օրենքին**

Քննարկում

- Ի՞նչ են հարկերը:

Բացատրեք, որ հարկերը փող է, որը մենք տալիս ենք մեր պետությանը կամ երկրին, օգնելու համար վճարել այն բաների համար, որոնք օգուտ են բերում բոլորին, օրինակ վճարում ոստիկանների, հրշեջների, ճանապարհների և դպրոցների համար: Համառոտ քննարկեք, թե ինչ կլիներ, եթե մենք չունենայինք այդ բաները: Բացատրեք, որ մենք ունենք հարկերի մասին օրենքներ, որոնք բոլորին օգնում են վճարել այս բաների համար:

Պատմվածք սուրբ գրություններից

Բացատրեք, որ Հիսուս Քրիստոսի ժամանակներում մարդիկ նույնպես հարկերի օրենքներ են ունեցել: Ցույց տվեք նկար 2-53, Կեսարի բաժինը, և պատմեք Մաթեոս ԻԲ.15–22-ում տրված պատմությունը:

Բացատրեք, որ մարդիկ Հիսուսին հարցրեցին, թե պետք է արդյոք տուրք տան իրենց երկրին: Տուրքը նման է հարկին:

Ցույց տվեք ձեր բերած մետաղադրամը: Բացատրեք, որ Հիսուսը խնդրեց, որ մարդիկ իրեն մետաղադրամ ցույց տան: Նա նշեց, որ մետաղադրամի վրա տրված է երկրի ղեկավարի՝ Կեսարի պատկերը: (Եթե ձեր բերած մետա-

ղադրամն իր վրա կրում է որևէ ազգային ղեկավարի պատկերը, շեշտեք դա:) Բարձրաձայն կարդացեք այն, ինչ Հիսուսն ասաց մարդկանց, ինչպես տրվում է Մաթևոս ԻԲ.21-ում (սկսած *Այն ժամանակ ասեց*): Բացատրեք, որ Հիսուսը մարդկանց ասաց, որ նրանք պետք է հնազանդվեն իրենց երկրի օրենքներին և Երկնային Հոր օրենքներին: Հիսուսը մարդկանց սովորեցրեց, որ կարևոր է ենթարկվել իրենց երկրի օրենքներին:

### Մենք հավատում ենք օրենքին հնազանդվելուն

Բառաշերտ

Բարձրաձայն կարդացեք բառաշերտի վրայի նախադասությունը: Բացատրեք, որ դա հավատո տասներկուերորդ հանգանակի մասն է, իսկ Հավատո հանգանակները Եկեղեցու համոզմունքներն են:

Դասարանին խնդրեք մի քանի անգամ միասին կրկնել նախադասությունը:

Խաղ

Իրավիճակների ցանկը և թվերով զամբյուղը դրեք սեղանին կամ հատակին: Դասարանին ասացեք, որ նրանք կարող են խաղալ «Ենթարկվել օրենքին» խաղը: Ապա նստեք և մի քանի վայրկյան սպասեք: Եթե ոչ ոք չի արձագանքում, հարցրեք.

- Ինչո՞ւ ոչ ոք չի խաղում խաղը: (Ոչ ոք չգիտի կանոնները:)

Եթե երեխաները փորձում են ինչ-որ իմաստ գտնել, օրինակ, դասավորելով համարներով թղթերն ըստ հերթականության, ապա գովեք նրանց և հետո հարցրեք.

- Դուք «Ենթարկվել օրենքին» խա՞ղն եք խաղում:
- Ինչո՞ւ ոչ:

Շեշտեք, որ կանոնները ու օրենքները ուղղություն են մեզ տալիս: Բացատրեք խաղի կանոնները.

1. Մի համար ընտրեք զամբյուղից:
2. Ձեր հերթին խաղացեք, թույլ տալով, որ առաջին համարը քաշած երեխան սկսի խաղը:
3. Ձեր հերթի ժամանակ կանգնեք:
4. Ձեր համարը տվեք ուսուցչին, ապա պատասխանեք ուսուցչի հարցին առանց մյուս երեխաների օգնության:
5. Ձեր հերթից առաջ և հետո հանգիստ նստեք ձեր աթոռին:

Խաղ արեք խաղը, թույլ տալով բոլոր երեխաներին ընտրել որևէ համար զամբյուղից:

Յուրաքանչյուր երեխայի համար կարդացեք նրա իրավիճակը, որը համապատասխանում է նրա համարին:

Երբ երեխաները պատասխանեն հարցերին, նրանց բաժանեք կրծքանշանները: Գովեք երեխաներին նրանց լավ մտքերի և պատասխանների համար:

### Ամփոփում

Երեխայի մասնակցություն

Երեխաներին հարցրեք, թե ինչ նրանք կասեն, երբ ընտանիքում հարցնեն կրծքանշանների մասին: Երբ նրանք պատասխանեն, շեշտեք օրենքներին ենթարկվելու կարևորությունը, որպեսզի մենք կարողանանք միասին երջանիկ ապրել:

Վկայություն

Վկայեք, որ օրենքները ստեղծվել են մեր օգտի համար: Կարող եք կիսվել անձնական վկայությամբ, երբ շնորհակալ եք եղել, երբ հնազանդվել եք երկրի օրենքին: Երեխաներին հիշեցրեք, որ պետք է հնազանդվել Երկնային Հոր օրենքներին և իրենց երկրի օրենքներին:

Յուրաքանչյուր երեխայի խրախուսեք ընտրել որևէ օրենք, որին նա այս շաբաթ կարող է հնազանդվել:

Երեխաներից մեկին հրավիրեք ասել փակիչ աղոթքը: Նրան առաջարկեք խնդրել Երկնային Հորը օգնել երեխաներին հիշել և ենթարկվել օրենքներին:

---

**Լրացուցիչ վարժություններ**

Հետևյալ վարժություններից ընտրեք նրանք, որոնք լավագույնս կհամապատասխանեն ձեր դասարանի երեխաներին: Դուք կարող եք դրանք օգտագործել դասի ընթացքում, որպես դասի վերանայում կամ ամփոփում: Լրացուցիչ ուղղության համար տե՛ս «Օգնություն ուսուցչին» նյութի «Դասաժամ» բաժինը:

1. Երեխաներին օգնեք մտապահել հավատո տասներկուերորդ հանգանակը. «Մենք հավատում ենք թագավորներին, նախագահներին, ղեկավարներին և մյուս իշխանություններին հպատակվելուն, օրենքին հնազանդվելուն, այն հարգելուն ու պաշտպանելուն»: Բացատրեք երեխաներին անծանոթ բառերը:

   Տարիքով ավելի փոքր երեխաները կարող են մտապահել իրենց կրծքանշանների վրա գրված հավատո հանգանակի մի մասը միայն. «Մենք հավատում ենք օրենքին հնազանդվելուն»:

2. Երեխաներին խնդրեք մտածել հինգ ընտանեկան կանոնների մասին, որոնք օգնում են ընտանիքի անդամներին ապահով և երջանիկ լինել: Յուրաքանչյուր երեխայի խնդրեք բարձրացնել մի մատը ամեն անգամ, երբ ասվում է որևէ կանոն: Երբ հինգ կանոնները կասվեն և յուրաքանչյուր երեխա կունենա հինգ մատ բարձրացված, յուրաքանչյուր երեխայի ձեռքի ուրվագիծը նկարեք գրատախտակին: Ձեռքերի ուրվագծերի կողքին գրեք երեխաների անունները: Երեխաներին շնորհակալություն հայտնեք իրենց օգնող ձեռքերի համար և խրախուսեք հիշել և պահել իրենց ընտանեկան կանոնները:

3. Երեխաների հետ միասին կատարեք հետևյալ մատերով խաղը.

   Ես կանգ եմ առնում *(բարձրացրեք երկու ձեռքը, ափերը դիմացը, կարծես ինչ-որ բան եք կանգնեցնում),*
   Ես շուրջս եմ նայում *(ձեռքը դրեք աչքերի վերևում, կարծես արևից եք պաշտպանվում),*
   Ես լսում եմ *(ձեռքը դրեք ականջին),*
   Եվ միայն այդ ժամանակ գիտեմ *(մատը հետ ու առաջ արեք)*
   Որ ես *(ցույց տվեք ձեզ)* զգույշ եմ,
   Կարևոր չէ, թե ուր եմ գնում *(տարածեք ձեռքը, ցույց տալով տարածությունը):*
   Ես անցնում եմ միայն անցումով *(ձեռքը առաջ մեկնեք),*
   Ոչ թե փողոցի կեսից *(գլուխը այս ու այնկողմ տարեք),*
   Ես նայում եմ դիմացս *(ձեռքը դրեք աչքերի վերևում, կարծես արևից եք պաշտպանվում),*
   Սկզբից մտածում եմ *(մատը դրեք գլխի կողքին),*
   Հետո միայն ոտքերս եմ օգտագործում *(քայլեք տեղում):*

   Երեխաներին հիշեցրեք երթևեկության կանոններին ենթարկվելու կարևորության մասին:

# Սիրել միմյանց

Դաս
32

**Նպատակ**

Օգնել երեխաներին հասկանալ, որ նրանք կարող են հետևել Հիսուս Քրիստոսի օրինակին և սեր ցուցաբերել օգնելով մարդկանց:

**Նախապատրաստություն**

1. Աղոթքով ուսումնասիրեք Մարկոս Զ.34–44; Ղուկաս ժԷ.11–19; Հովհաննես ժԵ.15, 34–35; և 3 Նեփի 17:
2. Մեծ սիրտ կտրեք թղթից ուշադրության վարժության ժամանակ օգտագործելու համար:
3. Բոլոր երեխաների համար պատրաստեք «Ինչպես սիրում եմ» թերթիկի մեկ օրինակ և սրտի գլուխկոտրուկը, որոնք տրված են դասի վերջում: Հնարավորության դեպքում, պատճենահանեք գլուխկոտրուկները գունավոր թղթի վրա: Տրված գծերով այն կտրատեք մասերի:
4. Պատրաստվեք երգել «Սիրեք բոլորին» և արտասանել «Հիսուսն ասել է սիրեք բոլորին»:
5. Պահանջվող նյութեր.
   ա. Աստվածաշունչ և Մորմոնի Գիրք
   բ. Սոսինձ
   գ. Նկար 2-36, Հիսուսը օրհնում է Նեփիացի երեխաներին; նկար 2-45, Տաս Բորոտները (Gospel Art Picture Kit 221; 62150); նկար 2-47, Կերակրել հինգ հազարին (62143); նկար 2-54, Վերջին Ընթրիքը (Gospel Art Picture Kit 225; 62174):
6. Անհրաժեշտ պատրաստություններ կատարեք այն լրացուցիչ վարժությունների համար, որոնք ցանկանում եք անցկացնել:

**Դասի առաջարկվող ընթացք**

Երեխաներից մեկին խնդրեք ասել բացիչ աղոթքը:

Եթե երեխաներին խնդրել եք շաբաթվա ընթացքում ինչ-որ բան կատարել, ստուգեք:

**Կարևոր է սիրված լինել**

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Երեխաներին ցույց տվեք մեծ թղթե սիրտը:

- Ի՞նչ եք դուք մտածում, երբ տեսնում եք սիրտ: (Սիրո մասին:)
- Ինչպե՞ս կարող եք իմանալ, որ ինչ-որ մեկը սիրում է ձեզ:

Երեխաներին խնդրեք խոսել այն մարդկանց մասին, ովքեր սիրում են իրենց (ընտանիքի անդամները, ընկերները և Երեխաների խմբի ուսուցիչները): Ինչպե՞ս են այդ մարդիկ արտահայտում իրենց սերը:

- Ինչպե՞ս եք դուք զգում, երբ մարդիկ ցույց են տալիս, որ սիրում են ձեզ:

• Ձեր կարծիքով, ինչպե՞ս են իրենց զգում մարդիկ, երբ դուք ցույց եք տալիս նրանց հանդեպ ձեր սերը:

Հեշտեք, որ մենք բոլորս կարիք ունենք իմանալու, որ սիրված ենք:

**Հիսուս Քրիստոսը մեզ սովորեցրել է սիրել միմյանց**

Ուսուցչի ելույթ

Բացատրեք, որ երկրի վրա Հիսուս Քրիստոսի ապրելուց առաջ մարդիկ ապրում էին «աչք աչքի համար» օրենքով: Սա նշանակում էր, որ երբ որևէ մեկը վատ էր ձեզ վերաբերվում, դուք նույնպես կարող էիք նրան վատ վերաբերվել: Բացատրեք, որ երբ Հիսուսն եկավ երկիր, նա մարդկանց սովորեցրեց այլ կերպ ապրել:

Պատմվածք սուրբ գրություններից

Ցույց տվեք նկար 2-54, Վերջին Ընթրիքը: Բացատրեք, որ խաչվելուց առաջ Հիսուսը հանդիպեց իր աշակերտների հետ և նրանք միասին վերջին անգամ ընթրեցին: Այդ ընթրիքը հայտնի դարձավ որպես Վերջին Ընթրիք: Այդ ընթրիքի ժամանակ Փրկիչն իր աշակերտներին ասաց, որ շուտով հեռանալու է նրանցից, և որոշ հրահանգներ նրանց տվեց:

Ցույց տվեք Աստվածաշունչը և բարձրաձայն կարդացեք Հովհաննես ԺԳ.34–35: Բացատրեք, որ դրանք Հիսուսի խոսքերն են: Կրկին կարդացեք հատված 34-ի առաջին մասը (մինչև առաջին *իրար սիրեք*):

• Ո՞րն է պատվիրանը:

Շեշտեք, որ սուրբ գրությունների այս հատվածում Հիսուսը ոչ թե պարզապես առաջարկում է սիրել միմյանց, այլ պատվիրան է տալիս իրար սիրելու: Եթե մենք հետևենք Հիսուսին, մենք կսիրենք մյուսներին:

Արտասանություն

Արտասանեք «Հիսուսն ասել է սիրեք բոլորին», կատարելով տրված շարժումները.

Հիսուսն ասաց սիրեք միմյանց *(բացեք ձեռքերը);*
Մարդկանց բարի վերաբերվեք *(շրջվեք դեպի հարևանը և սեղմեք նրա ձեռքը):*
Երբ սիրտդ սիրով է լցված *(ձեռքը դրեք սրտին),*
Մյուսներն էլ ձեզ կսիրեն *(գրկեք ինքներդ ձեզ):*

**Հիսուս Քրիստոսը ուրիշների հանդեպ սեր էր ցուցաբերում, օգնելով նրանց**

Հատված սուրբ գրություններից

Բարձրաձայն կարդացեք Հովհաննես ԺԳ.15:

• Ի՞նչ է նշանակում օրինակ լինել:

• Ո՞վ է մեզ համար լավ օրինակ հանդիսանում:

Երեխաներին ասացեք, որ Հիսուս Քրիստոսն է ասել այն խոսքերը, որոնք դուք կարդացիք սուրբ գրության այդ հատվածում: Բացատրեք, որ Հիսուսը մեզ օրինակ է ծառայել՝ մարդկանց սիրելով և նրանց համար բարի գործեր կատարելով:

Պատմվածքներ սուրբ գրություններից և քննարկում

Ցույց տվեք նկար 2-45, Տաս Բորոտները: Երեխաներին խնդրեք պատմել նկարի վրա պատկերված պատմությունը (տե՛ս Ղուկաս ԺԷ.11–19):

• Ի՞նչ արեց Հիսուսը տաս բորոտներին օգնելու համար:

• Ինչո՞ւ նա բուժեց նրանց:

Ցույց տվեք նկար 2-47, Կերակրել հինգ հազարին, և երեխաներին խնդրեք պատմել նկարի վրա պատկերված պատմությունը (տե՛ս Մարկոս Զ.34–44): Անհրաժեշտության դեպքում օգնեք նրանց:

• Ի՞նչ արեց Հիսուսը մարդկանց օգնելու համար:

• Ինչո՞ւ նա օգնեց նրանց:

Ցույց տվեք նկար 2-36, Հիսուսն օրհնում է Նեփիացի երեխաներին, և պատմեք 3 Նեփի 17-ի պատմությունը: Բացատրեք, որ Հիսուսը պատրաստ էր հեռանալ Ամերիկայի Նեփիացիներից և վերադառնալ Երկնային Հոր մոտ, սակայն Նեփիացիները չէին ուզում, որ նա գնար (տե՛ս 3 Նեփի 17.4–5): Հիսուսը մի փոքր երկար մնաց և բուժեց բոլոր հիվանդ մարդկանց և օրհնեց բոլոր երեխաներին:

- Ինչո՞ւ Հիսուսը մնաց Նեփիացիների մոտ:
- Ինչո՞ւ Հիսուսը բուժեց հիվանդներին և օրհնեց երեխաներին:

Շեշտեք, որ այդ պատմություններից յուրաքանչյուրի մեջ Հիսուս Քրիստոսը օգնեց մարդկանց, որովհետև նա սիրում էր նրանց: Մենք նույնպես կարող ենք մարդկանց հանդեպ մեր սերը ցույց տալ, օգնելով նրանց:

### Մենք կարող ենք հետևել Հիսուս Քրիստոսի օրինակին, օգնելով ուրիշներին

Հատված սուրբ գրություններից

Կրկին կարդացեք Հովհաննես ԺԳ.35: Բացատրեք, որ երբ մենք մարդկանց հանդեպ սեր ենք ցուցաբերում, նրանք իմանում են, որ մենք հետևում ենք Հիսուս Քրիստոսի օրինակին:

Երգ

Երգեք կամ արտասանեք «Սիրեք միմյանց» երգը:

Պատմվածք

Բացատրեք, որ մենք կարող ենք հետևել Հիսուս Քրիստոսի օրինակին և ցույց տալ մեր սերը, օգնելով ուրիշներին: Պատմեք մի երեխայի մասին, որը բարի գործ կատարեց մեկի համար, նրա հանդեպ իր սերը ցույց տալու համար: Կարող եք օգտագործել հետևյալ պատմությունը.

Թոմասը ծանր հիվանդացել էր և պետք է երկար ժամանակ անկողնու մեջ մնար: Նա զրկված էր բոլոր ուրախ բաներից, որ ինքն ու իր ընկերներն անում էին: Երբ նա հիվանդ էր, նրա ընկերներից ոմանք մեկ-երկու անգամ այցելեցին իրեն: Սակայն նրա ընկեր Խուանը հաճախ էր նրան այցելում: Շատ ժամանակ, երբ մյուս տղաները դրսում խաղ էին անում, Խուանը Թոմասի կողքին էր, և նրանք զրուցում և ծիծաղում էին միասին, ինչից Թոմասն իրեն ավելի լավ էր զգում:

- Ի՞նչ արեց Խուանը ցույց տալու համար, որ սիրում էր Թոմասին:
- Ձեր կարծիքով, ի՞նչ էր զգում Թոմասը Խուանի հանդեպ: Ձեր կարծիքով, ի՞նչ էր Խուանը զգում Թոմասի հանդեպ:

Բացատրեք, որ տարբեր եղանակներով մենք կարող ենք ցույց տալ մեր սերը ուրիշների նկատմամբ, օգնելով նրանց: Մենք կարող ենք լավ գործեր կատարել մեր հարազատների, մեր ընկերների, մեր հարևանների, ծերերի, հիվանդների և մյուս մարդկանց համար, ովքեր մեր օգնության կարիքն ունեն:

Վարժություն

Երեխաներին խնդրեք լսել, մինչ դուք կպատմեք այն իրավիճակի առաջին մասը, որում կարող են իրենք հայտնվել: Նրանց խնդրեք ավարտել յուրաքանչյուր իրավիճակը, ասելով, թե ինչ կարելի է անել սեր ցուցաբերելու համար: Կարող եք երեխաներին խնդրել դերերով խաղալ մեկ կամ մի քանի իրավիճակներ: Օգտագործեք հետևյալ իրավիճակները կամ ինքներդ մտածեք.

1. Դուք և ձեր հայրիկը նստած սպասում եք ավտոբուսի: Դուք տեսնում եք մի ծեր մարդու, որը շտապում է ավտոբուս նստել: Նա փայտով է ման գալիս, սակայն չի կարողանում արագ շարժվել: Ավտոբուսը կանգ է առնում և դռները բացվում են: Բարձրանալով ավտոբուս, դուք մտածում եք, որ նա երևիթե չի հասցնի նստել ավտոբուս:
   - Ի՞նչ դուք կարող եք անել այդ մարդու հանդեպ սեր ցուցաբերելու համար:

2. Կիրակի առավոտյան դուք գնում եք եկեղեցի: Դուք տեսնում եք մի երիտասարդ մայրիկի, որը մի ձեռքով երեխային է գրկել, իսկ մյուսով գրքեր է բռնել:

   - Ի՞նչ դուք կարող եք անել Փրկչի օրինակին հետևելու և այդ կնոջ հանդեպ սեր ցուցաբերելու համար:

3. Երբ դուք դպրոցից տուն եք վերադառնում, ձեր մայրիկը փորձում է կար անել: Ձեր եղբայրը վազվզում և գոռում է, քանի որ ուզում է, որ մայրիկը նրա համար հեքիաթ կարդա:

   - Ի՞նչ դուք կարող եք անել ձեր մայրիկի և փոքր եղբոր հանդեպ սեր ցուցաբերելու համար:

4. Մի կիրակի Երեխաների խմբում դուք հանդիպում եք նոր աղջկա, որն ուրիշ երկրից է եկել: Նա շատ ամաչկոտ է և չի սիրում շատ խոսել: Ավելի ուշ դուք նկատում եք, որ նա կանգնած է հավաքատան դռան մոտ և լալիս է:

   - Ի՞նչ դուք կարող եք անել նոր աղջկա հանդեպ սեր ցուցաբերելու և նրան օգնելու համար:

**Ամփոփում**

Վարժություն գլուխկոտրուկով

Բոլոր երեխաներին տվեք սրտի թերթիկների և սրտի գլուխկոտրուկների կտորների հավաքածոյի մեկական օրինակ: Երեխաներին օգնեք հավաքել գլուխկոտրուկը և սոսնձել հավաքած նկարը սրտով թերթիկի վրա: Երեխաների հետ միասին բարձրաձայն արտասանեք գլուխկոտրուկի և թերթիկի վրա գրված խոսքերը:

Երեխաներին թույլ տվեք թերթիկները տուն տանել: Երեխաներին խրախուսեք իրենց ընտանիքներում պատմել այն մասին, ինչ այսօր սովորեցին ուրիշների հանդեպ սեր ցուցաբերելու վերաբերյալ:

Եթե ժամանակը բավականացնում է, յուրաքանչյուր երեխայի խնդրեք նշել մի անձնավորության, որին նա սիրում է, և ասել, թե ինչպես նա կարող է ցույց տալ այդ անձնավորության հանդեպ իր սերը: Երեխաներին խրախուսեք սեր ցուցաբերել մարդկանց հանդեպ, օգնելով նրանց:

Վկայություն

Վկայեք, որ Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը ուզում են, որ մենք սիրենք միմյանց: Երեխաներին ասացեք, թե ինչպես եք ձեզ զգում, երբ ցույց եք տալիս ձեր սերն ուրիշների նկատմամբ:

Երեխաներից մեկին խնդրեք ասել փակիչ աղոթքը: Առաջարկեք, որպեսզի նա խնդրի Երկնային Հորը օգնել երեխաներին մարդկանց հանդեպ սեր ցուցաբերել, ինչպես անում էր Փրկիչը:

---

**Լրացուցիչ վարժություններ**

Հետևյալ վարժություններից ընտրեք նրանք, որոնք լավագույնս կհամապատասխանեն ձեր դասարանի երեխաներին: Դուք կարող եք դրանք օգտագործել դասի ընթացքում, որպես դասի վերանայում կամ ամփոփում: Լրացուցիչ ուղղության համար տե՛ս «Օգնություն ուսուցչին» նյութի «Դասաժամ» բաժինը:

1. Երեխաներին խնդրեք նամակ գրել ինչ-որ մեկին, ում սիրում են, բացատրելով, թե որքան են մտածում նրա մասին: Տարիքով փոքր երեխաները կարող են նկարել այն մարդկանց նկարները, ում սիրում են: Երեխաներին խրախուսեք կիսվել իրենց նամակներով կամ նկարներով այն մարդկանց հետ, ում դրանք հասցեագրված են:

2. Պատմեք այն մասին, թե ինչպես Ջոն Թեյլորը, որը դարձավ Եկեղեցու երրորդ Նախագահը, ցույց տվեց իր սերը.

   Երբ Ջոն Թեյլորը երիտասարդ տղա էր, նրա ընկերը՝ Ռոբերտ Վեստը, մահացավ լուրջ հիվանդության հետևանքով: Ավելի ուշ տղայի հայրը, Էլի Վեստը, հեռացավ գյուղից և հովիվ դարձավ: Ջոնը գիտեր, որ Էլին երբեմն շատ միայնակ էր իրեն զգում, և նա իր ծնողներին խնդրեց իրեն թույլ տալ այցելել Էլիին: Ծնողները համաձայնվեցին և մթերքով մի զամբյուղ պատրաստեցին, որ Ջոնն իր հետ վերցնի:

   Մի ամբողջ օր էր պահանջվում, որպեսզի Ջոնը ճանապարհորդեր դեպի Էլիի տունը և ետ վերադառնար, այդ պատճառով նա գնաց վաղ առավոտյան: Ճանապարհը հոգնեցնող էր, կային շատ սարեր, որոնք պետք էր անցնել: Մի անգամ, հանգստանալիս, Ջոնը քիչ էր մնում ուտեր զամբյուղի ուտելիքը: Փոխարենը նա վեր կացավ և մնացած ճանապարհն անցավ որքան հնարավոր է արագ:

   Էլին չափազանց ուրախ էր Ջոնին տեսնել: Նրանք միասին կերան ուտելիքը և խոսեցին հին ժամանակների մասին: (Տե՛ս Deta Petersen Neeley and Nathan Glen Neeley, *A Child's Story of the Prophet John Taylor* [Salt Lake City: Deseret News Press, 1960], pp. 12–18.)

   - Ի՞նչ արեց Ջոն Թեյլորը իր ընկերոջ հոր հանդեպ սեր ցուցաբերելու համար:
   - Ձեր կարծիքով, ինչպե՞ս իրեն զգաց Էլի Վեստը Ջոն Թեյլորի վերաբերմունքից:
   - Ձեր կարծիքով, ինչպե՞ս իրեն զգաց Ջոն Թեյլորը:

   Երեխաներին հիշեցրեք, որ երբ մենք սեր ենք ցուցաբերում ուրիշների հանդեպ, մարդիկ, որոնց մենք օգնում ենք, երջանիկ են լինում, ինչպես և մենք:

3. Երեխաներին օգնեք արտասանել ստորև տրված քառատողը և կատարել նշված շարժումները.

   Հիսուսը սիրում է բոլոր երեխաներին
   Հիսուսը սիրում է բոլոր երեխաներին *(լայն բացեք ձեռքերը),*
   Բոլոր փոքրիկ մանուկներին *(ձեռքով ցույց տվեք մինչև ծունկը),*
   Նրանց, ովքեր դեռ օրորոցի մեջ են *(ձեռքերով օրորելու շարժում կատարեք),*
   Նրանց, ովքեր հասակով արդեն մեծ են *(ձեռքերը բարձրացրեք գլխից վեր):*

   (From *Finger Fun for Little Folk* by Thea Cannon. © 1949 by the Standard Publishing Company, Cincinnati, Ohio. Used by permission.)

   Կրկնեք այնքան, որքան որ երեխաները ցանկանան:

4. Երկու երեխայի խնդրեք կանգնել դասարանի առջև: Դասարանի հետ քննարկեք այն բազմաթիվ ճանապարհները, որոնցով այդ երեխաները նման են, օրինակ ունեն երկու աչք և երկու ականջ, սիրում են զբաղվել միանման գործերով, կամ որ Եկեղեցու անդամներ են: Ապա քննարկեք այն բազմաթիվ ճանապարհները, որոնցով նրանք տարբերվում են միմյանցից, օրինակ, որ մազերի գույնը տարբեր են, ունեն տարբեր հետաքրքրություններ կամ տարբեր մեծության ընտանիքներ: Շեշտեք, որ չկան լիովին նման երկու մարդ: Մենք բոլորս ինչ-որ բաներով տարբերվում ենք միմյանցից:

   Բացատրեք, որ երբեմն մարդիկ այնքան տարբեր են, որ մենք չգիտենք, թե ինչպես վերաբերվենք նրանց: Նրանք կարող են խոսել այլ լեզվով, լինեն հաշմանդամ, կամ որևէ այլ ձևով մեզանից տարբերվեն: Բացատրեք, որ Հիսուս Քրիստոսը սիրում է բոլորին և ցանկանում է, որ մենք նույնպես սիրենք բոլորին: Մենք պետք է սիրենք և օգնենք նրանց, ովքեր մեզանից տարբեր են թվում, ինչպես նաև նրանց, ովքեր նման են մեզ:



# Ինչպես ես ձեզ սիրեցի

Սիրեք միմյանց

Օգտագործեք այս գլուխկոտրուկը ավելի փոքր երեխաների համար:

:Մոյրոպ վնգրոովզնգ զգր վլգիո
իսձվմոտ Ձիսմտսիովսե ոմ ձգզմսեոտեՕ

Ցրմրյովր ձգնվՕ

Դաս
33

# Ես կարող եմ տասանորդ վճարել

**Նպատակ**

Օգնել երեխաներին հասկանալ, որ երբ մենք տասանորդ ենք վճարում, մեր սերն ենք ցուցաբերում Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հանդեպ:

**Նախապատրաստություն**

1. Աղոթքով ուսումնասիրեք Մարկոս ԺԲ.41–44: Տե՛ս նաև *Ավետարանի Սկզբունքները* (31110), գլուխ 32:

2. Երկու ցուցանակ պատրաստեք ծալված թղթերից, ինչպես տրված է ստորև.




3. Դրամարկղ պատրաստեք Մարկի մասին պատմության համար: Կարող եք օգտագործել ցանկացած փոքր տուփ, որը բաժանված է երկու մասերի: Տե՛ս ստորև տրված հրահանգները անհրաժեշտության դեպքում բաժանիչ պատրաստելու համար:

   Ստվարաթղթից մի շերտ կտրեք տուփի բարձրությամբ, սակայն երեք սանտիմետր ավելի լայն: Յուրաքանչյուր կողմում նշեք մեկուկես սանտիմետր և ծալեք այդ եզրերը: Այդ եզրերին սոսինձ քսեք և տեղադրեք շերտը տուփի մեջ երկու բաժին ունենալու համար, մեկը մյուսից մեծ:

   Տուփի դիմացի մասում փոքր բաժնի վրա գրեք «Տասանորդ», իսկ մեծ բաժնի վրա «Ծախսել կամ խնայել»:



4. Դարչնագույն թղթից երկու շրջան կտրեք փոքր մետաղադրամի չափսով, որոնք կոչվում են լուսա, ինչպես նկարված է.



5. Ձեռք բերեք Տասանորդի և Այլ Նվիրատվությունների թերթիկ և ծրար յուրաքանչյուր երեխայի համար:
6. Պատրաստվեք արտասանել «Ես ուզում եմ Տիրոջը տալ իմ տասանորդը»:
7. Պահանջվող նյութեր.
   ա. Աստվածաշունչ
   բ. Տաս մետաղադրամ (կամ թղթադրամ) նույն արժողության
   գ. Նկար 2-55, Այրի կնոջ լումաները.
8. Անհրաժեշտ պատրաստություններ կատարեք այն լրացուցիչ վարժությունների համար, որոնք ցանկանում եք անցկացնել:

---

**Դասի առաջարկվող ընթացք**

Երեխաներից մեկին խնդրեք ասել բացիչ աղոթքը:

Եթե երեխաներին խնդրել եք շաբաթվա ընթացքում ինչ-որ բան կատարել, ստուգեք:

**Տասանորդը մեր վաստակածի մեկ տասերորդն է**

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Տաս մետաղադրամ պահեք ձեր ձեռքում և ցույց տվեք երեխաներին:

- Ի՞նչ դուք կանեիք այդ մետաղադրամների հետ, եթե ինքներդ աշխատեիք դրանք:

Թույլ տվեք, որ յուրաքանչյուր երեխա պատասխանի և դրական նկատառումներ կատարեք բոլորի պատասխանների վերաբերյալ: Չկա ճիշտ կամ սխալ պատասխան: Երբ բոլորը կպատասխանեն, շարունակեք քննարկումը:

Եթե որևէ երեխա նշում է տասանորդ վճարելը, ասացեք, որ մեկը նշեց շատ կարևոր մի բան, որը մենք պետք է անենք մեր վաստակած դրամի հետ: Եթե ոչ ոք չի նշում տասանորդ վճարելու մասին, երեխաներին ասացեք, որ ուզում եք օգնել նրանց սովորել մի շատ կարևոր բան, որը պետք է անել, երբ դրամ ես վաստակում:

Բացատրեք, որ Երկնային Հայրը մեզ պատվիրել է վճարել մեր վաստակած դրամի տասանորդը: Երբ մենք տասանորդ ենք վճարում, մեր վաստակած դրամի մի մասը տալիս ենք Եկեղեցուն, օգնելով վճարել այն բաների համար, որոնք մարդկանց օգնում են սովորել Երկնային Հոր, Հիսուսի և ավետարանի մասին, ինչպես օրինակ տաճարները, եկեղեցու շենքերը դասագրքերը և այլ նյութեր:

Վարժություն

Երեխաներին խնդրեք ձեզ հետ միասին հաշվել տաս մետաղադրամները, դնելով դրանք մի շարքով սեղանին կամ հատակին: «Տասանորդ» ցուցանակը դրեք սեղանին կամ հատակին: Կարդացեք կամ խնդրեք երեխաներին կարդալ ցուցանակի վրա գրված բառը: Երեխաներին ասացեք, որ մեր վաստակած գումարի մեկ տասերորդը մեր վճարվող տասանորդն է: Սեղանի կամ հատակի վրա դրված տասից մեկ մետաղադրամը կլինի մեկ տասերորդը: Երեխաներից մեկին խնդրեք մի մետաղադրամը դնել տասանորդի ցուցանակի դիմաց:

«Ծախսել կամ խնայել» ցուցանակը դրեք «Տասանորդ» ցուցանակի կողքին: Կարդացեք կամ խնդրեք երեխաներին, որ կարդան ցուցանակի բառերը:

- Եթե սա լիներ ձեր աշխատած դրամը, որքան մետաղադրամ դուք կծախսեիք կամ կխնայեիք տասանորդը վճարելուց հետո:

Երեխաներից մեկին խնդրեք ինը մետաղադրամը հերթով և դասարանի հետ միասին հաշվելով, դնել «Ծախսել կամ խնայել» ցուցանակի դիմաց:

Ցույց տվեք «Ծախսել կամ խնայել» ցուցանակի դիմաց դրված մետաղադրամերը և բացատրեք, որ տասանորդը շատ փոքր բաժին է այն գումարից, որը մենք աշխատում ենք:

Բացատրեք, որ մենք պետք է տասանորդ վճարենք մեր ողջ վաստակածից: Կարող եք տարբեր մետաղադրամներ կամ թղթադրամներ օգտագործել, որպեսզի երեխաներն ավելի լավ հասկանան վաստակած գումարի մեկ-տասերորդ մասը վճարելու գաղափարը:

**Մենք ընտրում ենք ճիշտը, երբ տասանորդ ենք վճարում**

Պատմվածք

Ինը մետաղադրամ գցեք դրամարկղի «Ծախսել կամ խնայել» բաժինը և ձեր խոսքերով պատմեք Մարկի և տասանորդ վճարելու նրա ընտրության մասին պատմությունը:

Վերջերս, երբ Մարկը խանութում էր, նա տեսավ մի խաղալիք, որը ցանկանում էր գնել: Մարկը իր մայրիկի մոտ էր աշխատում և դրամ էր խնայում խաղալիքը գնելու համար: Նա վաստակեց ինը մետաղադրամ: Միայն մեկն էր պակասում խաղալիքը գնելու համար: Մայրիկն ասել էր, որ կվճարի, եթե նա կատարի աշխատանքը:

Շաբաթ վաղ առավոտյան Մարկը վեր կացավ և նախաճաշեց, ապա կատարեց մայրիկի հանձնարարությունը: Երբ ավարտեց, մայրիկն ասաց, որ շատ գոհ էր նրա կատարած աշխատանքից: Նա Մարկին փայլուն նոր մետաղադրամ տվեց: Մարկը ուրախ էր, քանի որ այժմ բավական դրամ ուներ խաղալիքը գնելու համար:

Մարկը վազեց իր դրամարկղի մոտ և մետաղադրամը գցեց դրա մեջ: (Մեկ այլ մետաղադրամ գցեք տուփի «Ծախսել կամ խնայել» բաժինը:) Ապա նա մայրիկի հետ գնաց խանութ:

Երբ նրանք եկան խանութ, Մարկը գտավ խաղալիքը: Նա ուրախ էր, որ այն դեռ չէր վաճառվել: Նա ուշադիր նայեց դրա վրա: Նա անհամբեր սպասում էր, թե երբ պետք է վերջապես խաղա դրանով:

Երբ Մարկը գնաց վճարելու խաղալիքի համար, վաճառողը ժպտաց և ասաց, որ այն արժե տաս մետաղադրամ: Մարկը բացեց տուփը և սկսեց հաշվել իր դրամը: (Բացեք փականը և հաշվեք «Ծախսել կամ խնայել» բաժնի մետաղադրամները:) Երբ նա հասավ տասերորդին, հիշեց, որ տաս մետաղադրամերից մեկը պետք է տասանորդ լինի:

Մարկը չգիտեր, թե ինչ աներ: Նա շատ էր ցանկանում ունենալ այդ խաղալիքը: Նա կարող էր գնել այն, սակայն միայն այն դեպքում, եթե վաճառողին տար իր տասանորդի գումարը: Մարկը նայեց վաճառողին, ապա խաղալիքին, հետո տասանորդի մետաղադրամին:

- Ի՞նչ դուք կանեիք, եթե Մարկը լինեիք:

Մարկը տասանորդի մետաղադրամը գցեց տուփի տասանորդի բաժինը: (Մի մետաղադրամ գցեք տուփի «Տասանորդ» կոչվող մասը:) Նա ինը մետաղադրամը գցեց կրկին «Ծախսել կամ խնայել» մասը և գնաց խաղալիքն իր տեղը դնելու:

Մարկի մայրիկը ոչինչ չասաց, այլ գրկեց և ուժեղ սեղմեց Մարկին: Մարկը գիտեր, որ ճիշտ էր արել:

Հաջորդ օրը եկեղեցում Մարկը իր տասանորդի ծրարը տվեց եպիսկոպոսին: Եպիսկոպոսը սեղմեց Մարկի ձեռքն և ասաց, որ Երկնային Հայրն երջանիկ է, որ նա վճարել է իր տասանորդը: Մարկը նույնպես երջանիկ էր: Նա գիտեր, որ ճիշտ ընտրություն էր կատարել: (Adapted from Marshall T. Burton, "The Little Red Car," *Instructor,* Apr. 1966, pp. 158–59.)

Քննարկում

- Ի՞նչ ընտրություն պետք է կատարեր Մարկը:
- Ինչո՞ւ էր դա դժվար ընտրություն նրա համար:
- Ինչպե՞ս իրեն զգաց Մարկը իր ընտրությունից հետո:
- Է՞լ ով է երջանիկ Մարկի կատարած ընտրության համար:

**Տասանորդ վճարելը ցույց է տալիս մեր սերը Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հանդեպ**

Քննարկում

Բացատրեք, որ երբ մենք տասանորդ ենք վճարում, մեր սերն ենք ցույց տալիս Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հանդեպ:

- Ի՞նչ օրհնություններ են ձեզ տվել Երկնային Հայրն ու Հիսուս Քրիստոսը:

Նշեք, որ տաս մետաղադրամից մեկը, շատ չէ Երկնային Հորը և Հիսուսին շնորհակալություն հայտնելու այն բազմաթիվ օրհնությունների համար, որոնք նրանք տվել են մեզ:

Պատմվածք սուրբ գրություններից

Երեխաներին ցույց տվեք դարչնագույն թղթե շրջանները, շեշտելով, թե որքան փոքր են դրանք: Բացատրեք, որ դրանք նույն չափսի են, ինչպես լումա կոչվող մետաղադրամները, որոնք օգտագործվում էին, երբ Հիսուս Քրիստոսը երկրի վրա էր: Լումաները մեծ արժեք չունեին:

Ցույց տվեք նկար 2-55, Այրի կնոջ լումաները, և բացատրեք, որ թեև լումաները փոքր էին և մեծ արժեք չունեին, կինը դրանով ցույց տվեք իր սերը Երկնային Հոր հանդեպ: Պատմեք Մարկոս ԺԲ.41–44-ում տրված պատմությունը:

Բացատրեք, որ Հիսուս Քրիստոսի ժամանակ, տասանորդն ու նվիրատվությունները հավաքվում էին տաճարում դրված մեծ անոթների մեջ, որոնք վերին մասում անցք ունեին: (Ցույց տվեք նկարի վրա պատկերված անոթը:) Մի օր Հիսուսը նայում էր, թե ինչպես էին մարդիկ գալիս և իրենց դրամը գցում այդ անոթի մեջ: Երբ Հիսուսը տեսավ, ինչպես այրի կինը իր դրամը գցեց, նա կանչեց իր աշակերտներին: Աշակերտներին նա ասաց, որ այրի կինն այդ մեծ գործը կատարեց, որովհետև շատ էր սիրում Երկնային Հորը, թեև շատ դրամ չուներ:

Ուսուցչի ելույթ

Բարձրաձայն կարդացեք Մարկոս ԺԲ.43-ում այն, ինչ Հիսուսն ասաց իր աշակերտներին: Բացատրեք, որ այրի կինը փոքր քանակ տվեց հարուստների վճարածի հետ համեմատած, սակայն Հիսուսը գիտեր, որ տվեց այն, ինչ ուներ, որովհետև սիրում էր Երկնային Հորը: Մենք նույնպես կարող ենք ցույց տալ Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հանդեպ մեր սերը, վճարելով մեր տասանորդը, նույնիսկ եթե դա միայն փոքր գումար լինի:

Երեխաներին հիշեցրեք, ինչպես Մարկը ցույց տվեց իր սերն Երկնային Հոր և Հիսուսի նկատմամբ, վճարելով տասանորդը խաղալիքը գնելու փոխարեն: Մարկի համար դժվար էր, սակայն նա երջանիկ էր իրեն զգում, երբ ճիշտ ընտրություն կատարեց:

Արտասանություն

Երեխաներին օգնեք արտասանել «Ես ուզում եմ Տիրոջը տալ իմ տասանորդը»: Մի քանի անգամ կրկնեք, որպեսզի երեխաները սովորեն խոսքերը:

Ես ուզում եմ Տիրոջը տալ իմ տասանորդը
Ամեն անգամ, երբ աշխատում եմ:
Այդժամ հիշում եմ բոլոր պարգևները,
Որ նա տալիս է ինձ և քեզ:

Նա մեզ կյանք և չքնաղ աշխարհ է տալիս:
Թեև իմ տասանորդը փոքր է թվում,
Այն իմ հավատքն է ցույց տալիս,
Նրա հանդեպ՝ ամեն բանի Աստծո:

Երեխաներին հիշեցրեք, որ երբ մենք վճարում ենք մեր տասանորդը, մենք ցույց ենք տալիս, թե որքան շատ ենք սիրում Երկնային Հորն ու Հիսուս Քրիստոսին:

**Ինչպես ենք մենք տասանորդ վճարում**

Վարժություն

Երեխաներին հիշեցրեք, որ երբ Հիսուսը երկրի վրա էր, մարդիկ իրենց տասանորդը և այլ դրամական նվիրատվությունները գցում էին տաճարում դրված անոթների մեջ: Բացատրեք, որ այսօր մենք վճարում ենք մեր տասանորդը եպիսկոպոսին (կամ ճյուղի նախագահին) կամ նրա խորհրդականներից մեկին:

Յուրաքանչյուր երեխայի տվեք Տասանորդի և Այլ Նվիրատվությունների մեկական թերթիկ: Բացատրեք, որ մենք այդ ձևն ու ծրարը օգտագործում ենք, երբ տասանորդ ենք վճարում: Երեխաներին ցույց տվեք, ինչպես լրացնել այդ ձևը: Եթե երեխաներին հետաքրքրում է, համառոտ բացատրեք, թե ինչպես են լրացվում մնացած տողերը: Բացատրեք, որ մենք լրացված ձևը և գումարը դնում ենք ծրարի մեջ և այն տալիս ենք եպիսկոպոսին (կամ ճյուղի նախագահին) կամ նրանց խորհրդականներից մեկին:

**Ամփոփում**

Կրկնություն

Նորից ցույց տվեք տաս մետաղադրամները.

- Եթե դուք աշխատեիք այս տաս մետաղադրամները. որքա՞ն տասանորդ դուք կդնեիք ծրարի մեջ:

Երեխաներից մեկին խնդրեք վերցնել ճիշտ քանակը և թերթիկի հետ միասին դնել ծրարի մեջ:

- Ի՞նչ ենք մենք անում տասանորդի ծրարի հետ:

Վկայություն

Բերեք ձեր վկայությունն այն մասին, թե ինչպես ենք մենք ցույց տալիս մեր սերը Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հանդեպ, երբ տասանորդ ենք վճարում:

Երեխաներին խրախուսեք վճարել տասանորդ այն գումարից, որն իրենք վաստակում են, անկախ նրանից, թե որքան փոքր է այն:

Երեխաներից մեկին հրավիրեք ասել փակիչ աղոթքը:

---

**Լրացուցիչ վարժություններ**

Հետևյալ վարժություններից ընտրեք նրանք, որոնք լավագույնս կհամապատասխանեն ձեր դասարանի երեխաներին: Դուք կարող եք դրանք օգտագործել դասի ընթացքում, որպես դասի վերանայում կամ ամփոփում: Լրացուցիչ ուղղության համար տե՛ս «Օգնություն ուսուցչին» նյութի «Դասաժամ» բաժինը:

1. Երեխաների հետ միասին քննարկեք, թե ինչի համար են օգտագործվում տասանորդի գումարները, օրինակ տաճարների և հավաքատների կառուցման, միսիոներական աշխատանքի կատարման և դասագրքերի հրատարակման: Քննարկեք, թե ինչով է այս ամենն օգտակար մեզ և ուրիշներին:

   Երեխաներին թուղթ և մատիտներ տվեք և խնդրեք նկարել քննարկված բաներից որևէ մեկը:

2. Արտասանեք «Ես ուրախ եմ տասանորդ վճարել»:

   Իմ Երկնային Հայրը ինձ տալիս է բոլոր լավ և գեղեցիկ բաները,
   Պայծառ արևը, թափվող անձրևը, երգող թռչյունի բարևը:

   Ես ուրախ եմ վճարել այդ ամենի մեկ տասերորդը,
   Դա այնքան քիչ է, երբ հաշվում եմ Աստծուց իմ ստացածը:

   Խոսեք այն մասին, թե ինչու է կարևոր ճիշտ մոտեցում ունենալ տասանորդի օրենքին հնազանդվելիս, ինչպես և Երկնային Հոր տված բոլոր պատվիրանները պահելիս:

3. Յուրաքանչյուր երեխայի թույլ տվեք տասանորդի համար զարդանախշել մի արկղ, անոթ, տուփ, կամ ծրար: Դրանք ինքներդ բերեք դասարան կամ այս դասից առաջ շաբաթվա ընթացքում զանգահարեք երեխաներին և խնդրեք նրանց բերել իրենց հետ որևէ անոթ:

Դաս
34

# Միշտ ճիշտն ասեք

**Նպատակ**

Մեծացնել ճիշտն ասելու երեխաների ցանկությունը, անգամ, եթե դա հեշտ չէ:

**Նախապատրաստություն**

1. Աղոթքով ուսումնասիրեք Մարկոս ԺԴ.53–65 և Հավատո Հանգանակ 1.13: Տե՛ս նաև *Ավետարանի Սկզբունքները* (31110), գլուխ 31:
2. Պատրաստվեք արտասանել «Ցույց տալու համար, որ ես ճիշտն եմ ընտրում»:
3. Պահանջվող նյութեր.
   ա. Աստվածաշունչ
   բ. Շիշ, որը երեխաները կարող են պտտել (ըմպելիքի որևէ պլաստիկ շիշ)
   գ. ԸՃ նկար (տե՛ս դաս 1)
   դ. Նկար 2-56, Հիսուսի դատը
4. Անհրաժեշտ պատրաստություններ կատարեք այն լրացուցիչ վարժությունների համար, որոնք ցանկանում եք անցկացնել:

**Դասի առաջարկվող ընթացք**

Երեխաներից մեկին խնդրեք ասել բացիչ աղոթքը:

Եթե երեխաներին խնդրել եք շաբաթվա ընթացքում ինչ-որ բան կատարել, ստուգեք:

**Մենք կարող ենք ասել ճշմարտությունը**

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Ձեր խոսքերով պատմեք հետևյալ պատմությունը.

Մի օր Էն-Մարին իր պապիկի հետ գնաց ձկնորսության: Էն-Մարին լավ ժամանակ անցկացրեց և հատկապես ուրախացավ, երբ ձուկ որսաց:

Երբ Էն-Մարին տուն վերադարձավ, նա գնաց տեսնելու իր ընկերոջը՝ Դենիին: Դենին նրան ներս հրավիրեց և տարավ խոհանոց, որտեղ ցույց տվեց իր բռնած ձուկը: Դենիի ձուկը Էն-Մարիի բռնած ձկից մեծ էր:

Էն-Մարին երջանիկ էր Դենիի համար, սակայն իրեն հիասթափված էր զգում: Դենիի ձկան հետ համեմատած նրա ձուկը շատ փոքր էր: Նա չէր ուզում, որ Դենին իմանար, թե որքան վատ է նա իրեն զգում, և Դենիին ասաց, որ գնացել էր իր պապիկի հետ ձկնորսության և այնքան մեծ ձուկ էր բռնել, որ պապիկի հետ միասին նրանք ցանց օգտագործեցին, որպեսզի ձկանը ափ հանեին: Էն-Մարին Դենիին ասաց, որ իր բռնած ձուկը շատ ավելի մեծ էր:

Քննարկում

- Ի՞նչ սխալ բան արեց Էն-Մարին:
- Ի՞նչ պետք է Էն-Մարին աներ:
- Ի՞նչ է նշանակում ճիշտն ասել:

Բացատրեք, որ ճիշտ խոսելը նշանակում է ազնիվ լինել: Երբ մենք ասում ենք ճիշտը, ապա ասում ենք այն բաների մասին, որոնք իրականում կատարվել են:

• Ինչո՞ւ է կարևոր ճիշտ խոսելը:

Երեխաներին կարող եք խնդրել պատմել այն ժամանակների մասին, երբ իրենք ճիշտն են ասել:

Հավատո Հանգանակ

Երեխաներին հիշեցրեք, որ Հավատո Հանգանակները այն համոզմունքներն են, որոնց հավատում են Եկեղեցու անդամները: Երեխաներին ասացեք, որ տասներեքերոդ հավատո հանգանակը մասամբ ասում է. «Մենք հավատում ենք ազնիվ [և] արդար լինելուն»: Նրանց խնդրեք մի քանի անգամ կրկնել այդ արտահայտությունը:

**Հիսուս Քրիստոսը ճիշտն էր ասում**

Պատմվածք սուրբ գրություններից

Ցույց տվեք նկար 2-56, Հիսուսի դատը: Նկարը թող մնա դասի ողջ ընթացքում: Երեխաներին ասացեք, որ Հիսուս Քրիստոսը միշտ ճիշտն էր ասում, և պատմեք Մարկոս ԺԴ.53–65-ի պատմությունը:

Բացատրեք, որ զինվորները Հիսուսին տարան Հրեա քահանայապետի տուն, որտեղ Հրեաների ղեկավարները նրան շատ հարցեր տվեցին: Բարձրաձայն կարդացեք Մարկոս ԺԴ. 61-ից նրան տրված հարցերից մեկը. «Դու՞ ես Քրիստոսը»:

Բացատրեք, որ Հիսուսը գիտեր, որ եթե նա ասեր, որ Քրիստոսն էր, Երկնային Հոր հատուկ որդին, ղեկավարները չէին արձակի իրեն: Բարձրաձայն կարդացեք Մարկոս ԺԴ.62-ում այն, ինչ Հիսուսն ասեց ի պատասխան քահանայապետի հարցին. «Հիսուսն էլ պատասխանեց, Ես եմ»: Շեշտեք, որ Հիսուսը միշտ ճիշտն էր ասում, անգամ եթե իր կյանքը վտանգի տակ էր:

Բացատրեք, որ Հիսուսը ցանկանում է, որ մենք միշտ ճիշտն ասենք, անգամ եթե դա դժվար է:

ԸՃ նկար

Մատնանշեք ԸՃ նկարը և երեխաներին խնդրեք կրկնել դրա վրա գրված խոսքերը: Ապա երեխաներին խնդրեք ձեր ետևից կրկնել. «Ես կհետևեմ Հիսուս Քրիստոսին և կասեմ ճիշտը»:

Արտասանություն

Երեխաներին օգնեք արտասանել «Ցույց տալով, որ ճիշտն եմ ընտրում»:

Ցույց տալով, որ ճիշտն եմ ընտրում, ես ճիշտն եմ ասում:
Ցույց տալով, որ ճիշտն եմ ընտրում, ես ճիշտն եմ ասում:
Ես գիտեմ, թե որ ուղին է Փրկիչն ընտրում,
Եվ այդ ցույց եմ տալիս, երբ ճիշտն եմ ասում:
Ցույց տալով, որ ճիշտն եմ ընտրում, ես ճիշտն եմ ասում:
Այդ խոսքերը մի քանի անգամ կրկնեք, օգնելու համար երեխաներին սովորել դրանք:

**Մենք կարող ենք ասել ճշմարտությունը, անգամ եթե դա հեշտ չէ**

Քննարկում

Շեշտեք, որ միշտ հեշտ չէ ճիշտն ասել: Երբեմն ավելի հեշտ է ասել այն, ինչը ճիշտ չէ, կամ ընդհանրապես ոչինչ չասել:

• Ինչո՞ւ է երբեմն դժվար ճիշտն ասել: (Հնարավոր պատասխաններ. Որովհետև մենք չենք ուզում բարկացնել ինչ-որ մեկին կամ որովհետև մեզ կպատժեն:)

Պատմվածք

Պատմեք մի երեխայի մասին, որը չասեց ճիշտը և շատ վատ զգաց այդ պատճառով: Կարող եք օգտագործել հետևյալ պատմությունը.

Ջոանը պատահմամբ կոտրեց իր մայրիկի մկրատը: Նա թաքցրեց այն պահարանի մեջ, որպեսզի մայրիկը չիմանա, թե ով է կոտրել դա: Ջոանի մայրիկը

փնտրում էր մկրատը և հարցրեց, թե արդյոք որևէ մեկը չի տեսել այն: Ջոանը մայրիկին ասաց, որ չի տեսել մկրատը:

Այդպես ասելուց հետո Ջոանն իրեն վատ էր զգում: Նա գիտեր, որ սխալ էր մկրատով խաղալը, իսկ այժմ նա երկրորդ սխալը կատարեց, երբ սուտ խոսեց: Ջոանը վատ էր իրեն զգում:

Երբ Ջոանն եկավ ընտանեկան աղոթքի, նա արագ փակեց աչքերը: Նա չէր ուզում նայել մայրիկին: Երբ հայրիկն ասում էր աղոթքը, Ջոանը լսեց այս խոսքերը. «Մեզ քաջություն տուր անելու այն, ինչը ճիշտ է, որպեսզի մենք մտքի հանգստություն ունենանք և հավերժ ուրախություն»: Ջոանը գիտեր, որ կրկին երջանիկ լիենելու համար նա պետք է մայրիկին ասեր մկրատի մասին ճշմարտությունը:

Ջոանը ջարդված մկրատը բերեց ու տվեց մայրիկին և ասաց ճշմարտությունը: Նա զղջում էր, որ կոտրել էր մկրատը և սուտ էր խոսել, և ուզում էր անել այն, ինչը ճիշտ էր: (Adapted from Margery Cannon, “A Miss and a Mistake,” *Children’s Friend,* Mar. 1962, p. 14.)

Քննարկում

- Ասա՞ց Ջոանը ճշմարտությունը, երբ մայրիկն առաջին անգամ հարցրեց մկրատի մասին:
- Ինչպե՞ս էր իրեն զգում Ջոանը, երբ չասաց ճշմարտությունը:
- Ձեր կարծիքով, ինչպե՞ս էր իրեն զգում Ջոանը, երբ նա ասաց ճշմարտությունը մայրիկին:
- Արդյո՞ք հեշտ էր Ջոանի համար ասել ճշմարտությունը:

Բացատրեք, որ թեև Ջոանի համար դժվար էր ասել ճշմարտությունը, քանի որ նա վախենում էր, որ կպատժվի մկրատը կոտրելու համար, նա ավելի երջանիկ էր իրեն զգում, երբ ասաց ճշմարտությունը:

Խաղ

Երեխաների հետ խաղացեք «Ասա ճիշտը» խաղը: Երեխաներին խնդրեք շրջանով նստել և հատակին՝ շրջանի մեջ, դնել շիշը: Բացատրեք, որ դուք պտտելու եք շիշը և այն երեխան, որին շիշը ցույց կտա, կպատասխանի ճշմարտությունն ասելու հետ կապված հարցին: Պատասխանելուց հետո այդ երեխան կպտտի շիշը, հաջորդին ընտրելու համար: (Եթե շիշը ցույց է տալիս այն երեխային, որն արդեն պատասխանել է, նրան խնդրեք նորից պտտել:)

Խաղի համար օգտագործեք հետևյալ իրավիճակները և հարցերը, կամ մտածեք այնպիսի իրավիճակներ, որոնք ավելի համապատասխան կլինեն ձեր դասարանի երեխաների համար (եթե ձեր դասարանը մեծ է, կարող եք ավելի շատ իրավիճակներ ավելացնել).

1. Դուք խաղ եք անում տանը և հանկարծակի կոտրում եք լուսամփոփը:
   - Ի՞նչ դուք պետք է անեք:
2. Ձեր հայրը ձեզ խնդրում է արագ գնալ խանութ ինչ-որ բան գնելու: Նա ձեզ խնդրում է կանգ չառնել և չխաղալ ճանապարհին: Երբ անցնում եք հարևանի տան մոտով, նա ձեզ մի քանի նամակ է տալիս և խնդրում փոստարկղը գցել: Խանութից տուն վերադառնալիս դուք կանգնում եք տեսնելու ձեր ընկերոջ նոր հեծանիվը: Հանկարծ հիշում եք, որ հայրը ձեզ սպասում է, և շտապում եք տուն: Հայրը բարկացած է և դուք ուզում եք նրան ասել, որ ուշացել եք, որովհետև հարևանի նամակներն էիք ուղարկում:
   - Ի՞նչ դուք պետք է ասեք:

3. Սեղանի վրա դուք թխվածքաբլիթներով ափսե եք տեսնում: Դրանք այնքան լավ տեսք ունեն, որ դուք վերցնում եք մեկը ձեզ համար և մյուսը ձեր փոքր եղբոր համար: Երբ մայրիկը գալիս է, որ թխվածքաբլիթները իր ընկերուհու տուն տանի, տեսնում է, որ ձեր եղբայրն ուտում է մեկը և սկսում է բարկանալ նրա վրա:

   • Ի՞նչ դուք պետք է անեք:

4. Դուք ձեր փոքր քույրիկից վերցնում եք նրա խաղալիքը, իսկ նա սկսում է լաց լինել: Երբ լսում եք, որ տատիկը գալիս է, արագ խաղալիքը հետ եք տալիս նրան, սակայն ձեր քույրիկը դեռ շարունակում է լաց լինել: Տատիկը ձեզ հարցնում է, թե ինչու է ձեր քույրիկը լաց լինում:

   • Ի՞նչ դուք պետք է ասեք:

5. Դուք և ձեր ընկերները հարևանի տան դիմաց գնդակով խաղ եք անում: Դուք հարվածում եք գնդակին և այն, դիպչելով ձեր հարևանի դռան դիմաց դրված ծաղկամանին, կոտրում է այն:

   • Ի՞նչ դուք պետք է անեք:

**Ամփոփում**

Վկայություն

Բերեք ձեր վկայությունը ազնիվ լինելու կարևորության մասին, անգամ, եթե դա դժվար է: Երեխաներին հիշեցրեք, որ Հիսուս Քրիստոսը միշտ ճիշտն էր ասում և նա ցանկանում է, որ մենք միշտ ճիշտն ասենք: Դուք կարող եք պատմել այն ժամանակի մասին, երբ ուրախ եք եղել, որ ճշմարտությունն եք ասել, թեև դա դժվար է եղել ձեզ համար:

Երեխաներին հիշեցրեք, որ նրանք միշտ պետք է աշխատեն ընտրել ճիշտը: Երբ նրանք ճիշտն են ասում, նրանք ճիշտ ընտրություն են կատարում:

Երեխաներին խրախուսեք իրենց ընտանիքներին պատմել այն մասին, ինչ այսօր սովորեցին Երեխաների խմբում:

Երեխաներից մեկին խնդրեք ասել փակիչ աղոթքը: Նրան առաջարկեք, որ խնդրի Երկնային Հորը օգնել դասարանի անդամներին ճիշտն ասել, անգամ երբ դա հեշտ չէ:

---

**Լրացուցիչ վարժություններ**

Հետևյալ վարժություններից ընտրեք նրանք, որոնք լավագույնս կհամապատասխանեն ձեր դասարանի երեխաներին: Դուք կարող եք դրանք օգտագործել դասի ընթացքում, որպես դասի վերանայում կամ ամփոփում: Լրացուցիչ ուղղության համար տե՛ս «Օգնություն ուսուցչին» նյութի «Դասաժամ» բաժինը:

1. Արտասանեք «Ես հավատում եմ ազնիվ լինելուն»:

   Ես հավատում եմ ազնիվ լինելուն

   Ես հավատում եմ ազնիվ լինելուն,
   Ես հավատում եմ ճշմարիտ լինելուն,
   Ազնվությունն ինձանից է սկսվում,
   Այն ամենում, ինչ ես ասում եմ և անում:

   Ես սովորություն ձեռք կբերեմ,
   Որ խոսքս պահեմ ու ճիշտը ասեմ,
   Ճշմարտությունը պաշտպանեմ,
   Անունս միշտ բարձր պահեմ:

Ես հավատում եմ ազնիվ լինելուն,
Ես հավատում եմ ճշմարիտ լինելուն,
Ազնվությունն ինձանից է սկսվում,
Այն ամենում, ինչ ես ասում եմ և անում:

2. Երեխաներից մեկին խնդրեք գալ դասարանի առաջ և բարձրացնել երկու ձեռքերը: Թելը թեթևակի փաթաթեք երեխայի դաստակի շուրջը և թողեք կախված: Բացատրեք, որ թելը նման է փոքր ստի: Երեխային խնդրեք հանել ձեռքերը կապի միջից (թելը բավականին թույլ կապեք, որպեսզի երեխան կարողանա ազատել իր ձեռքերը):

   Ապա երեխայի դաստակին փաթաթեք տասնյակ թելեր, բացատրելով, որ մեկ սուտը կարող է տանել դեպի շատ ստեր, երբ մենք փորձում ենք թաքցնել դրանք: Երբ մենք ստում ենք, ապա ստիպված ենք լինում ավելի շատ ստել, որպեսզի մարդիկ չհասկանան, որ ստել ենք: Երբ մենք շատ ստեր ենք ասում, ավելի դժվար է դառնում ազատվել: Երեխային խնդրեք փորձել ազատվել կապերից: Եթե երեխային դա հաջողվում է, կարող եք ավելացնել թելերի նոր շերտեր: Բացատրեք, որ որքան շատ ենք մենք ստում, այդքան դժվար է դառնում ընտրել ճիշտը և ասել ճշմարտությունը:

   - Ինչպե՞ս կարող եք ազատվել այս ստերից:

   Օգտագործեք մկրատ թելերը կտրելու և երեխայի ձեռքերն ազատելու համար: Բացատրեք, որ ստերից ազատ լինելու համար, մենք պետք է միշտ ճշմարտությունն ասենք: Եթե արդեն սուտ ենք խոսել, ապա մենք պետք է ապաշխարենք, ասելով ճշմարտությունը նրան, ում ստել ենք: Եթե ասենք ճշմարտությունը, ապա երջանիկ կլինենք:

3. Յուրաքանչյուր երեխայի համար պատրաստեք «գաղտնի ուղերձի» մեկ օրինակ, որի նմուշը տրված է դասի վերջում: Բոլոր երեխաներին տվեք ուղերձի մեկ օրինակ և մատիտ: Բացատրեք, որ գաղտնի ուղերձը պարունակում է Հիսուս Քրիստոսի ուղերձներից մեկը: Երեխաներին ասացեք, որ նրանք կարող են կարդալ գաղտնի ուղերձը, գտնելով այն տառը, որը համապատասխանում է յուրաքանչյուր նշանին և գրելով այն նշանի տակ գտնվող վանդակում: Որպես օրինակ գրեք մի տառ և անհրաժեշտության դեպքում օգնեք երեխաներին:

   Երեխաներին խնդրեք ծալել ձեռքերը և ժպտալ, երբ իմանան, թե որն է գաղտնի ուղերձը: Երբ բոլոր երեխաները կարդան ուղերձը, նրանց խնդրեք ձեզ հետ կարդալ գաղտնի ուղերձի խոսքերը. «Ասա ճիշտը»:

4. Երեխաներին օգնեք դերերով խաղալ «Ասա ճիշտը» խաղի մի քանի իրավիճակ, ցույց տալով ճիշտ ընտրությունը յուրաքանչյուր իրավիճակում:

Ս → Ն
Ա → Ռ
Ջ → Ղ
Հ → Ճ
Ղ → Ջ
Ճ → Հ


Ս → Ն
Ա → Ռ
Ջ → Ղ
Հ → Ճ
Ղ → Ջ
Ճ → Հ

Դաս
35

# Ես տաղանդներ ունեմ

**Նպատակ** Օգնել յուրաքանչյուր երեխայի հասկանալ, որ Երկնային Հայրը մեզ բոլորիս տաղանդներ է տվել:

**Նախապատրաստություն**

1. Աղոթքով ուսումնասիրեք Մաթեոս ԻԵ.14–29: Տե՛ս նաև *Ավետարանի Սկզբունքները* (31110), գլուխ 34:
2. Շաբաթվա ընթացքում զանգահարեք երեխաների ծնողներին և նրանց հարցրեք, թե ինչ տաղանդներ են նկատել իրենց երեխաների մոտ: Անհրաժեշտության դեպքում, առաջարկեք ավելի քիչ աչքի ընկնող տաղանդներ, օրինակ բարիությունը, լավատեսությունը, հնազանդությունը, օգնելու, ներելու, ընկերասեր լինելու, աղոթելու պատրաստակամությունը: Յուրաքանչյուր երեխայի համար տաղանդների ցանկ կազմեք: Ցանկին ավելացրեք այն տաղանդները, որոնք դուք նկատել եք յուրաքանչյուր երեխայի մոտ:
3. Օգտվելով ձեր ցանկից յուրաքանչյուր երեխայի համար մի թուղթ պատրաստեք, ինչպես տրվում է ստորև: Թղթի վրա գրեք երեխայի անունը: Թուղթը ծալեք երկու մասի: Մի մասում գրեք երեխայի տաղանդները, որոնք պատրաստվում եք քննարկել դասի ժամանակ: Մյուս մասը դատարկ թողեք:

| | |
|---|---|
| (Երեխայի անունը)<br>Հարցրու ինձ իմ տաղանդների մասին.<br>1.<br>2.<br>3.<br>4.<br>5. | |

Ուշադիր եղեք, որպեսզի յուրաքանչյուր երեխայի թղթի վրա գրված լինեն նույն քանակությամբ տաղանդներ, և որ յուրաքանչյուր երեխայի ցանկը պարունակի առնվազն մեկ տաղանդ, որը կարելի է ցուցադրել, օրինակ երգելու, ցատկելու կամ կարդալու տաղանդները:

4. Պատրաստվեք ցուցադրել ձեր տաղանդներից մեկը, կամ մի իր բերեք, որը ներկայացնում է ձեր տաղանդներից մեկը:
5. Պահանջվող նյութեր.
   ա. Աստվածաշունչ
   բ. Մատիտներ
   գ. Նկար 2-57, Հեբեր Ջ. Գրանտ

6. Անհրաժեշտ պատրաստություններ կատարեք այն լրացուցիչ վարժությունների համար, որոնք ցանկանում եք անցկացնել:

---

**Դասի առաջարկվող ընթացք**

Երեխաներից մեկին խնդրեք ասել բացիչ աղոթքը:

Եթե երեխաներին խնդրել եք շաբաթվա ընթացքում ինչ-որ բան կատարել, ստուգեք:

**Տաղանդները պարգևներ են Երկնային Հորից**

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Ցուցադրեք ձեր տաղանդներից մեկը, կամ ցույց տվեք ձեր բերած իրը և բացատրեք, որ այն ներկայացնում է ձեր տաղանդներից մեկը:

- Ի՞նչ է տաղանդը:

Եթե իր եք բերել, պատմեք դրա մասին և բացատրեք, ինչու է այդ իրը ներկայացնող տաղանդը կարևոր ձեզ համար: Եթե ցուցադրել եք ձեր տաղանդը, բացատրեք, թե ինչու է հաճելի օգտագործել այն:

Բացատրեք, որ Երկնային Հայրը տաղանդներ է տվել Իր բոլոր զավակներին: Նշեք ձեր ծխից կամ ճյուղից մի քանի մարդկանց, ովքեր ծանոթ են երեխաներին և տաղանդներ ունեն, օրինակ երգելու, երաժշտական գործիքներով նվագելու կամ ուրիշներին երջանկացնելու տաղանդներ:

Երեխաներին հիշեցրեք, որ նրանցից յուրաքանչյուրը Երկնային Հոր զավակն է, և տաղանդներ ունի: Բացատրեք, որ յուրաքանչյուրը տարբեր տաղանդներ ունի:

**Մեզանից յուրաքանչյուրն ունի բազմաթիվ տաղանդներ**

Պատմվածք և քննարկում

Ձեր խոսքերով պատմեք հետևյալ պատմությունը երեխայի մասին, որը բացահայտել է իր տաղանդները.

Վենդին նայում էր, թե ինչպես էր նրա քույրը՝ Շելին, նկարում իրենց տան ետևում գտնվող սարերի սքանչելի նկարը: Վենդին հուսահատված էր, որովհետև չէր կարողանում այդքան լավ նկարել: Շելին նաև դաշնամուր էր նվագում և խելացի էր դպրոցում: Վենդին մտածեց այն բոլոր բաների մասին, որ Շելին կարողանում էր լավ անել: Նա զարմանում էր, թե ինչու չէր կարող նույնպես անել այդ բոլոր բաները:

- Ձեր կարծիքով, ինչպե՞ս էր Վենդին զգում, երբ մտածում էր Շելիի տաղանդների մասին:

Մի օր Վենդիի ուսուցիչը նրան խնդրեց ելույթ ունենալ Երեխաների Խմբում: Նա շատ աշխատեց և լավ ելույթ ունեցավ: Եպիսկոպոսը լսեց Վենդիի ելույթը և ասաց նրան, թե որքան այն իրեն դուր եկավ: Նա Վենդիին ասաց, որ նա շատ տաղանդավոր է:

Մի ջերմ զգացում պատեց Վենդիին: Եպիսկոպոսի խոսքերը Վենդիին օգնեցին կարևոր բաներ բացահայտել իր մեջ:

- Ի՞նչ օգնեց եիպսկոպոսը բացահայտել Վենդիին: (Նա լավ ելույթ ունենալու տաղանդ ուներ:)

Վենդին շուտով բացահայտեց, որ այլ լավ տաղանդներ ևս ունի: Նա հեշտությամբ ընկերներ էր ձեռք բերում և մյուս երեխաները նույնպես ցանկանում էին նրա հետ ժամանակ անցկացնել: Նա սիրում էր կարդալ և գրել: Երբ նա գնաց եկեղեցի, նա ակնածալից էր և լսում էր իր ուսուցչուհուն: Վենդին երբեք չէր

մտածել, որ դրանք տաղանդներ էին, որովհետև դրանք նման չէին Շելիի տաղանդներին: Այժմ Վենդին հասկանում է, որ տաղանդներ ունի, սակայն նրա տաղանդները տարբերվում են քրոջ տաղանդներից:

- Ի՞նչ տաղանդներ ուներ Վենդին:

Երեխաներին շեշտեք, որ բոլորը տարբեր տաղանդներ ունեն, սակայն բոլոր տաղանդները կարևոր են:

Վարժություն

Երեխաներին ասացեք, որ նրանք կսովորեն Երեխաների խմբի իրենց դասարանի անդամների տարբեր տաղանդների մասին: Երեխաներին խնդրեք ուշադիր լսել, երբ կարդում եք տաղանդների ամեն մի ցանկը: Նրանց ասացեք, որ երբ իմանում են, թե ում եք նկարագրում, պետք է բարձրացնեն իրենց ձեռքը, սակայն ոչինչ բարձրաձայն չասեն:

Սկսելով «Ես մտածում եմ մեկի մասին, որն ունի այս տաղանդները» բառերով, կարդացեք տաղանդների ցանկը, որը պատրաստել եք յուրաքանչյուր երեխայի համար:

Երբ ավարտեք կարդալ յուրաքանչյուր ցանկը երեխաներին թույլ տվեք կռահել այն երեխային, որին նկարագրեցիք: Եթե երեխաները չեն կարողանում ճիշտ կռահել, տվեք որոշակի հուշումներ, օրինակ նկարագրեք երեխայի հագուստը կամ ասեք աղջիկ է նա, թե տղա:

Տաղանդների ցուցադրում

Երեխաներին հիշեցրեք, որ Երկնային Հայրն է նրանց տվել այդ տաղանդները: Բոլոր երեխաներին հրավիրեք ցուցադրել մի տաղանդ իր ցանկից: (Նախօրոք որոշեք, թե յուրաքանչյուր երեխայի ցանկից որ տաղանդը կարելի է հեշտությամբ ցուցադրել դասարանում, օրինակ, երգելը, կարդալը, ցատկելը:)

**Հիսուս Քրիստոսը մեզ սովորեցրել է օգտագործել մեր տաղանդները**

Պատմվածք սուրբ գրություններից

Երեխաներին ասացեք, որ Հիսուս Քրիստոսը սովորեցրել է, որ մենք պետք է օգտագործենք մեր տաղանդները: Համառոտ պատմեք Մաթեոս ԻԵ.14–29-ի պատմությունը: Բացատրեք, որ Հիսուսը պատմեց այդ պատմությունը իր աշակերտներին, որպեսզի նրանք հասկանային, թե ինչ պետք է անեին Իր և Երկնային Հոր հետ այս կյանքից հետո ապրելու համար:

Պատմությունը պատմելիս շեշտեք հետևյալ կետերը.

1. Հիսուսի օրերին տաղանդը փող էր:
2. Հինգ տաղանդ ստացած ծառան դրանք իմաստուն ձևով օգտագործեց և շուտով հինգ տաղանդ ևս վաստակեց:
3. Երկու տաղանդ ստացած ծառան դրանք իմաստուն ձևով օգտագործեց և շուտով երկու տաղանդ ևս վաստակեց:
4. Մեկ տաղանդ ստացած ծառան այն թաքցրեց և ընդհանրապես չօգտագործեց:
5. Ծառաների տերը վերադարձավ և հարցրեց, թե ինչ են նրանք արել տաղանդների հետ:

Բարձրաձայն կարդացեք Մաթեոս ԻԵ.21-ում այն մասին, թե ինչ տերն ասաց հինգ տաղանդ ստացած և ևս հինգ տաղանդ վաստակած ծառային:

Բացատրեք, որ տերն ասաց նույնը երկու տաղանդ ստացած և երկու լրացուցիչ տաղանդ վաստակած ծառային: Տերը գոհ էր այդ երկու ծառաներից իրենց տաղանդները իմաստուն ձևով օգտագործելու համար:

Բացատրեք, որ տերը երրորդ ծառային ասաց, որ քանի որ նա չի օգտագործել իր տաղանդը, այն կվերցվի նրանից և նա այլևս չի ունենա դա (տե՛ս Մաթեոս ԻԵ.26–29):

Ուսուցչի ելույթ

Երեխաներին օգնեք հասկանալ, որ մենք պետք է նմանվենք առակի առաջին երկու ծառաներին: Թեև *տաղանդներ* բառը մենք օգտագործում ենք ոչ թե փողի իմաստով, այլ ի նկատի ունենալով այն, ինչ կարողանում ենք անել, մենք միևնույն է, պետք է իմաստուն ձևով օգտագործենք մեր տաղանդները:

Բացատրեք, որ որպես մեր Երկնային Հոր հոգևոր զավակներ, մենք բոլորս հատուկ տաղանդներ կամ պարգևներ ենք ստացել, որոնք պետք է երկրի վրա օգտագործենք և զարգացնենք: Երբ մենք օգտագործում ենք մեր տաղանդները, ապա երջանկացնում ենք մեզ և ուրիշներին: Ինչպես պատմության մեջ տերը, Երկնային Հայրը չի ցանկանում, որ մենք թաքցնենք մեր տաղանդները և ի վերջո կորցնենք դրանք: Նա ցանկանում է, որ մենք օգտագործենք մեր տաղանդները, որպեսզի դրանք աճեն: Այդպես մենք կարող ենք պատրաստվել Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հետ միասին ապրելուն:

### Մենք զարգացնում ենք մեր տաղանդները, դրանք գործածելով

Պատմվածք և քննարկում

Ցույց տվեք նկար 2-57, Հեբեր Ջ. Գրանտը: Բացատրեք, որ դուք պատրաստվում եք մի պատմություն պատմել Հեբեր Ջ. Գրանտի մասին, որը հետագայում դարձավ մարգարե և Եկեղեցու նախագահ, ինչպես նաև այն մասին, թե ինչպես նա զարգացրեց իր տաղանդները.

Երբ Հեբեր Ջ. Գրանտը փոքր տղա էր, նա գնդակ էր ուզում խաղալ: Սակայն նա չէր կարողանում հեռու նետել գնդակը: Մյուս տղաները ծաղրում էին նրան, երբ նա փորձում էր նետել:

Հեբերը որոշեց սովորել գնդակով խաղալ այնքան լավ, որպեսզի ընտրվի առաջնության թիմի կազմում: Օրեցօր նա պարապում էր, նետելով գնդակը ավտոտնակի դռանը: Երբեմն նրա ձեռքն այնքան էր ցավում, որ չէր կարողանում գիշերը քնել: Սակայն նա շարունակում էր պարապել: Մի քանի տարի անց Հեբերը խաղաց այն թիմի կազմում, որը հաղթեց առաջնությունը:

- Ի՞նչ տաղանդ էր ցանկանում ունենալ Հեբերը:
- Ի՞նչ Հեբերն արեց իր տաղանդը զարգացնելու համար:
- Ի՞նչ տեղի ունեցավ Հեբերի մարզումների արդյունքում:

Ավելի ուշ Հեբերը ցանկանում էր աշխատել բանկում որպես հաշվապահ: Սակայն հաշվապահի ձեռագիրը պետք է շատ մաքուր և ընթեռնելի լինի: Հեբերի ընկերներից մեկը նրան մի անգամ ասել էր. «Քո ձեռագիրը նման է հավի ճանկերի հետքերի»: Մեկ այլ ընկեր ասել էր. «Թվում է, թե կայծակը հարվածել է թանաքամանի մեջ»:

Հեբերը ժամեր էր անցկացնում իր ձեռագիրը լավացնելու վրա: Տարիներ անց նա պարգևատրում ստացավ նահանգում ամենալավ ձեռագիրն ունենալու համար: Նա նաև ձեռագրի և հաշվապահության դասընթացներ էր անցկացնում համալսարանում:

- Ի՞նչ տաղանդ էր ցանկանում ունենալ Հեբերը:
- Ի՞նչ Հեբերն արեց իր տաղանդը զարգացնելու համար:
- Ի՞նչ պատահեց իր ձեռագիրը լավացնելու պարապմունքների արդյունքում:

Երբ Հեբերը երիտասարդ էր, նրա մայրիկը ցանկանում էր, որ երգել սովորեր: Տաս տարեկանում նա ընդունվեց երգեցողության դասարան: Ուսուցիչը փոր-

ձում էր նրան երգել սովորեցնել, սակայն ի վերջո հանձնվեց և Հեբերին ասաց, որ նա երբեք չի սովորի երգել: Տարիներ անց Հեբերը զրուցում էր մի ընկերոջ հետ, որը երգեցողություն էր դասավանդում: Հեբերն ասաց, որ շատ կուզենար սովորել մի քանի օրհներգ երգել: Ընկերը նրան ասաց, որ ժամանակ ու ջանքեր կպահանջվեն, սակայն նա կարող է անել դա: Հեբերը պատրաստ էր շատ պարապել, և նա սովորեց երգել Եկեղեցու օրհներգերը: (Տե՛ս Bryant S. Hinckley, *Heber J. Grant: Highlights in the Life of a Great Leader* [Salt Lake City: Deseret Book Co., 1951], pp. 37–42, 45–49.)

- Ի՞նչ տաղանդ էր ցանկանում ունենալ Հեբերը:
- Ի՞նչ արեց Հեբերը զնդակ խաղալու, իր ձեռագիրը լավացնելու և երգել սովորելու համար:

Երեխաներին բացատրեք, որ մենք զարգացնում ենք մեր տաղանդները պարապելու միջոցով, ինչպես արեց Հեբերը: Որքան շատ ենք մենք անում որևէ բան, այնքան լավ ենք սկսում դա անել: Հեբերը պարապում էր և կրկին ու կրկին օգտագործում էր իր տաղանդները, այդպիսով ավելի կատարելագործելով դրանք: Երկնային Հայրը գոհ է, երբ մենք պարապում ենք, օգտագործելով իր տված տաղանդները:

**Ամփոփում**

Վարժություն

Կրկնեք յուրաքանչյուր երեխայի հատուկ տաղանդները, ինչպես քննարկվեց դասի մեջ: Երեխաներին բաժանեք իրենց տաղանդներով ցանկերը և մատիտներ: Թղթի մաքուր մասում նրանց խնդրեք նկարել այն տաղանդը, որը նրանք ունեն կամ կցանկանային ունենալ:

Երեխաներին խնդրեք մեկը մյուսին պատմել իրենց նկարածի մասին և քննարկել, թե ինչպես կարող են զարգացնել իրենց նկարած տաղանդները:

Վկայություն

Բերեք ձեր վկայությունն այն մասին, որ Երկնային Հայրը մեզանից յուրաքանչյուրին տարբեր տաղանդներ է տվել: Երեխաներին հիշեցրեք, որ Հիսուս Քրիստոսը և Երկնային Հայրը ուզում են, որ մենք զարգացնենք մեր տաղանդները: Երբ մենք օգտագործում ենք մեր տաղանդները, մեզ և ուրիշ մարդկանց երջանիկ ենք դարձնում, ինչպես նաև դա նպաստում է, որ մեր տաղանդները աճեն:

Բարձրաձայն կարդացեք կամ խնդրեք երեխաներին կարդալ երեխաների ցանկերի վերևում գրված խոսքերը. «Հարցրու ինձ իմ տաղանդների մասին»: Երեխաներին խրախուսեք իրենց ցանկերը ցույց տալ իրենց հարազատներին և պատմել, թե ինչ են սովորել տաղանդների մասին:

Երեխաներից մեկին հրավիրեք ասել փակիչ աղոթքը: Առաջարկեք երեխային շնորհակալություն հայտնել Երկնային Հորը դասարանի յուրաքանչյուր անդամի տաղանդների համար և խնդրել Երկնային Հորը օգնել երեխաներին լավ օգտագործել իրենց տաղանդները:

---

**Լրացուցիչ վարժություններ**

Հետևյալ վարժություններից ընտրեք նրանք, որոնք լավագույնս կհամապատասխանեն ձեր դասարանի երեխաներին: Դուք կարող եք դրանք օգտագործել դասի ընթացքում, որպես դասի վերանայում կամ ամփոփում: Լրացուցիչ ուղղության համար տե՛ս «Օգնություն ուսուցչին» նյութի «Դասաժամ» բաժինը:

1. Երեխաներին խնդրեք շրջանով նստել: Երգեք, նվագեք կամ ձայնագրված որևէ երաժշտություն միացրեք և լոբով լցված պարկը կամ որևէ այլ փափուկ առարկա փոխանցեք շրջանով: Երբ երաժշտությունը դադարի, պարկը

բռնած երեխան կանգնում է շրջանի մեջտեղում և որևէ տաղանդ է ցուցադրում: Տաղանդները կարող են լինել բանաստեղծություն կարդալը, երգելը, սուրբ գրություն կարդալը, մի ոտքի վրա ցատկոտելը, գրատախտակին պարզ նկար նկարելը: Երեխաները կարող են մնջախաղով պատկերել այն տաղանդները, որոնք հնարավոր չէ ցուցադրել դասասենյակում, օրինակ որևէ բարի գործ կատարելը կամ գնդակին հարվածելը: Յուրաքանչյուր երեխայի ելույթից հետո երեխաներին խնդրեք ոչ շատ բարձր ծափահարել:

Շարունակեք, մինչև որ բոլոր երեխաները առնվազն մեկ անգամ ելույթի հնարավորություն ունենան:

2. Երեխաներին մատիտներ և թուղթ բաժանեք, որի վրա դուք աստղ եք նկարել (աստղի նմուշը կարելի է գտնել դասի վերջում): Երեխաներին խնդրեք անսովոր ձևերով գունավորել իրենց աստղերը: Երբ բոլոր երեխաները կավարտեն գունավորելը, նրանց խնդրեք ցուցադրել իրենց աստղերը և արտասանել «Ամեն աստղ տարբեր է» երգի առաջին քառատողը:

   Ամեն աստղ տարբեր է,
   Ինչպես ամեն երեխա:
   Մեկը ուրախ ու պայծառ է,
   Մյուսը հանգիստ և խոնարհ:
   Ամեն մեկը կարևոր է
   Իր ուրույն տաղանդով,
   Միայն դու կարող ես,
   Լինել միայն դու:

   (© 1980 by K. Newell Dayley. Used by permission.)

   Երեխաներին օգնեք հասկանալ, որ ինչպես իրենց աստղերն են տարբեր, այդպես էլ իրենք են տարբեր, որովհետև տարբեր տաղանդներ և ունակություններ ունեն: Երեխաներին հիշեցրեք, որ տաղանդները օրհնություններ են Երկնային Հորից:

3. Երեխաներին որևէ պարզ հմտություն սովորեցրեք, որը կարելի է զարգացնել, դարձնելով տաղանդ, օրինակ չափ տալ երգելու ժամանակ կամ որևէ ձեռագործ պատրաստել:



# Ես իմաստուն եմ, երբ ճիշտն եմ ընտրում

Դաս
36

**Նպատակ**

Օգնել երեխաներին հասկանալ, որ մենք իմաստուն ենք, երբ հնազանդվում ենք Հիսուս Քրիստոսի ուսմունքներին:

**Նախապատրաստություն**

1. Աղոթքով ուսումնասիրեք Մաթևոս է.24–27:
2. Պատրաստեք երկու ցուցանակ ծալված թղթերից, ինչպես ցույց է տրված.




Իմաստուն Հիմար

3. Պատրաստվեք արտասանել «Իմաստուն մարդը և հիմար մարդը» երգի բառերը:
4. Փոքր թղթերի վրա մի քանի իմաստուն և մի քանի հիմար գործեր գրեք: Օգտագործեք ստորև տրված գործերը և ավելացրեք ձեր դասարանին համապատասխան այլ գործեր: Թղթերը դրեք արկղի, կամ պարկի մեջ:

   Ասեք ձեր աղոթքները:
   Հնազանդվեք ձեր ծնողներին:
   Ակնածալից եղեք Երեխաների Խմբում:
   Բարի եղեք ուրիշների հանդեպ:
   Կիսվեք:
   Ասեք ճիշտը:

   Վիճեք:
   Վատ խոսք ասեք:
   Եսասեր եղեք:
   Սուտ ասեք:
   Բարի մի եղեք:
5. Պահանջվող նյութեր.
   ա. Աստվածաշունչ
   բ. Գլխարկ, մի զույգ ձեռնոց և մի զույգ կոշիկ (կամ երեք այլ հագուստի պարագաներ, որ ձեր դասարանի երեխաները կրում են)
   գ. ԸՃ նկար (տե՛ս դաս 1)
6. Անհրաժեշտ պատրաստություններ կատարեք այն լրացուցիչ վարժությունների համար, որոնք ցանկանում եք անցկացնել:

**Դասի առաջարկվող ընթացք**

Երեխաներից մեկին խնդրեք ասել բացիչ աղոթքը:

Եթե երեխաներին խնդրել եք շաբաթվա ընթացքում ինչ-որ բան կատարել, ստուգեք:

## Մենք կարող ենք իմաստուն որոշումներ կայացնել

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Ցույց տվեք ձեռնոցները, գլխարկը և կոշիկները (փոխեք այս վարժությունը, եթե այլ հագուստի պարագաներ եք օգտագործում): Ձեռնոցները դրեք ձեր գլխին:

- Այսպե՞ս ենք մենք կրում ձեռնոցները: Ինչո՞ւ:
- Ինչի՞ համար ենք մենք օգտագործում ձեռնոցները:

Նշեք, որ հիմարություն է ձեռնոցները գլխին դնել, որովհետև այդ դեպքում դրանք չեն պաշտպանի ձեր ձեռքերը:

Երեխաներից մեկին խնդրեք ցուցադրել ձեռնոցները ճիշտ օգտագործելու կարգը:

Գլխարկը դրեք ձեր ոտքի վրա:

- Այսպե՞ս մենք պետք է կրենք գլխարկը: Ինչո՞ւ:
- Ինչո՞ւ համար մենք պետք է օգտագործենք գլխարկը:

Նշեք, որ հիմարություն է գլխարկը ոտքին դնել, որովհետև այդ դեպքում այն չի պաշտպանի ձեր գլուխը:

Մեկ ուրիշ երեխայի խնդրեք ցուցադրել գլխարկը կրելու ճիշտ կարգը:

Կոշիկները հագցրեք ձեր ձեռքերին:

- Այսպե՞ս մենք պետք է կրենք կոշիկները: Ինչո՞ւ:
- Ինչո՞ւ համար մենք պետք է օգտագործենք կոշիկները:

Նշեք, որ հիմարություն է կոշիկները ձեռքերին հագնել, որովհետև այդ դեպքում դրանք չեն պաշտպանի ձեր ոտքերը:

Մեկ ուրիշ երեխայի խնդրեք ցուցադրել կոշիկները կրելու ճիշտ կարգը:

Նշեք, որ շատ քիչ մարդիկ կկրեն ձեռնոցները, գլխարկները կամ կոշիկները մարմնի սխալ մասերին: Սակայն ինչ հագնելու որոշումները նույնպես կարող են իմաստուն կամ հիմար լինել: Համառոտ քննարկեք երեխաների հետ, թե որ դեպքերում է իմաստուն, իսկ որ դեպքերում՝ հիմար, կրել հագուստի որոշ պարագաներ (օրինակ, իմաստուն է կրել ձեռնոցները, երբ դուրս եք գալիս ցուրտ եղանակին, սակայն հիմարություն է կոշիկ հագնել, երբ լոգանք ես ընդունում):

Բացատրեք, որ մենք շատ որոշումներ ենք կատարում օրվա ընթացքում: Հիմար որոշումները կարող են վնասել մեզ և տխուր դարձնել: Իմաստուն որոշումները կարող են մեզ օգնել ապահով լինել և երջանիկ:

## Հիսուս Քրիստոսը ուզում է, որ մենք լինենք իմաստուն և հնազանդվենք նրա ուսմունքներին

Պատմվածք սուրբ գրություններից

Բացատրեք, որ Հիսուս Քրիստոսը մարդկանց սովորեցնելու համար հաճախ էր պատմություններ օգտագործում, որոնք կոչվում են առակներ: Նա մի առակ է պատմել անխելք որոշում կայացրած մարդու և իմաստուն որոշում կայացրած մարդու մասին: Երեխաներին ասացեք, որ դուք հիմա կկարդաք այդ առակը Աստվածաշնչից: Բարձրաձայն կարդացեք Մաթեոս է.24–27:

Քննարկում

- Ձեր կարծիքով, ինչպե՞ս էր իրեն զգում ավազի վրա տուն կառուցած մարդը, երբ փոթորիկը փլուզեց նրա տունը:
- Ձեր կարծիքով, ինչպե՞ս էր իրեն զգում քարի վրա տուն կառուցած մարդը, երբ փոթորիկը չվնասեց նրա տունը:

Բացատրեք, որ Հիսուսը մեզ համեմատում է առակի մարդկանց հետ: Եթե մենք հետևենք Հիսուսի ուսմունքներին, մենք կնմանվենք իմաստուն մարդուն,

որն իր տունը քարի վրա կառուցեց: Մենք երջանիկ կլինենք: Եթե մենք չհետևենք Հիսուսի ուսմունքներին, մենք կնմանվենք հիմար մարդուն, որն իր տունը կառուցեց ավազի վրա: Մենք դժբախտ կլինենք:

Արտասանություն

Դասարանին օգնեք արտասանել «Իմաստուն մարդը և հիմար մարդը», օգտագործելով ստորև տրված շարժումները.

Իմաստուն մարդն իր տունը կառուցեց քարի վրա *(աջ բռունցքը դրեք ձախ ձեռքի ափի վրա),*

Իմաստուն մարդն իր տունը կառուցեց քարի վրա *(աջ բռունցքը դրեք ձախ ձեռքի ափի վրա),*

Իմաստուն մարդն իր տունը կառուցեց քարի վրա *(աջ բռունցքը դրեք ձախ ձեռքի ափի վրա),*

Եվ հորդ անձրև թափվեց երկրի վրա *(ձեռքերը բարձացրեք վերև, ապա իջեցրեք, թափահարելով մատները):*

Անձրևն եկավ, ջրհեղեղը բարձրացավ *(նորից իջեցրեք ձեռքերը, ապա բարձրացրեք, ափերը պահելով դեպի վեր),*

Անձրևն եկավ, ջրհեղեղը բարձրացավ *(նորից իջեցրեք ձեռքերը, ապա բարձրացրեք, ափերը պահելով դեպի վեր),*

Անձրևն եկավ, ջրհեղեղը բարձրացավ *(նորից իջեցրեք ձեռքերը, ապա բարձրացրեք, ափերը պահելով դեպի վեր),*

Իսկ քարի վրայի տունը մնաց կանգնած *(աջ բռունցքը դրեք ձախ ձեռքի ափի վրա):*

Հիմար մարդն իր տունը կառուցեց ավազի վրա *(թափահարեք մատները, շարժելով ձեռքերը հետ ու առաջ),*

Հիմար մարդն իր տունը կառուցեց ավազի վրա *(թափահարեք մատները, շարժելով ձեռքերը հետ ու առաջ),*

Հիմար մարդն իր տունը կառուցեց ավազի վրա *(թափահարեք մատները, շարժելով ձեռքերը հետ ու առաջ),*

Եվ հորդ անձրև թափվեց երկրի վրա *(ձեռքերը բարձացրեք վերև, ապա իջեցրեք, թափահարելով մատները):*

Անձրևն եկավ, ջրհեղեղը բարձրացավ *(նորից իջեցրեք ձեռքերը, ապա բարձրացրեք, ափերը պահելով դեպի վեր),*

Անձրևն եկավ, ջրհեղեղը բարձրացավ *(նորից իջեցրեք ձեռքերը, ապա բարձրացրեք, ափերը պահելով դեպի վեր),*

Անձրևն եկավ, ջրհեղեղը բարձրացավ *(նորից իջեցրեք ձեռքերը, ապա բարձրացրեք, ափերը պահելով դեպի վեր),*

Ավազի վրայի տունը սրբեց-տարավ *(թափահարեք մատները և հեռացրեք մարմնից):*

**Մենք իմաստուն ենք, երբ ճիշտն ենք ընտրում**

Պատմվածք և քննարկում

Բացատրեք, որ բոլորը ընտրություններ են կատարում ամեն օր: Մենք կարող ենք իմաստուն ընտրություններ կատարել, կարող ենք հիմար ընտրություններ կատարել: Ձեր բառերով պատմեք հետևյալ պատմությունը Բ. Հ. (Հարի) Ռոբերտսի մասին, որը, մեծանալով, դարձավ Բարձրագույն Իշխանություն:

Երեխաներին խնդրեք որոշել, թե արդյոք պատմության մեջ Հարիի ընտրությունները իմաստուն էին, թե հիմար:

Հարին ծնվել էր Անգլիայում շատ տարիներ առաջ: Նրա ընտանիքը շատ աղքատ էր և Հարին չէր կարողացել դպրոց գնալ: Սա շատ էր ուզում կարդալ ու գրել սովորել: Նա մտածում էր, որ եթե հնարավորություն ունենար սովորելու, ապա ոչ միայն կկարդար գրքեր, այլ նաև կգրեր:

Երբ Հարին տաս տարեկան էր, նա եկավ Ամերիկա և իր քույր Պոլիի և մյուս պիոներների հետ անցավ դաշտավայրերը:

Հարին շատ արկածներ ունեցավ: Մի օր նա լսեց, որ իրենց խումբը պատրաստվում էր հաջորդ օրը մեծ գետով անցնել: Սա շատ հետաքրքիր էր նրա համար և Հարին վաղ առավոտյան գաղտնի դուրս եկավ ճամբարից և գնաց տեսնելու գետը: Դա ճամբարի կանոնների դեմ էր:

- Ձեր կարծիքով, ճամբարից գաղտնի դուրս գալու Հարիի որոշումը իմաստու՞ն էր, թե հիմար:

Գետն ավելի հեռու էր, և նա հոգնեց մինչև հասավ այնտեղ: Սա պառկեց գետնին և խորը քուն մտավ:

Երբ Հարին արթնացավ, սայլակները անցել էին գետը: Նա վազեց դեպի ափը և սկսեց բղավել, որպեսզի գրավի որևէ մեկի ուշադրությունը: Նրան ասացին, որ լողալով անցնի, և նա հանեց բաջկոնն ու կոշիկները և նետվեց ջուրը: Նա գրեթե անցել էր գետը, սակայն շատ էր հոգնել, և խմբի ղեկավարը մնացած ճանապարհը ստիպված էր նրան իր ձիու վրա տանել: Հարին երջանիկ էր, որ ողջ էր, սակայն բաճկոնն ու կոշիկներն այլևս հնարավոր չէր ետ բերել: Ամեն գիշեր նա երազում էր իր բաճկոնի մասին, և ամենօր նա երազում էր, որ կոշիկներ ունենար:

Հարին ստիպված էր ոտաբոբիկ քայլել ինը հարյուր մղոն: Նրա ոտքերը շատ վնասվածքներ ունեցան: Ճանապարհի եզրին փշոտ կակտուսներ էին աճում և Հարին այնքան սոված էր լինում, որ երբեմն քաղում էր դրանք և ուտում: Սուր փշերը մտան նրա վիրավոր ոտքերի մեջ: Պոլին հանում էր փշերը և նրանք միասին լաց էին լինում: Հարին լաց էր լինում ոտքի ցավից, իսկ Պոլին խղճում էր Հարիին:

- Ճամբարից գաղտնի դուրս գալու Հարիի որոշումը ինչո՞ւ էր հիմար:
- Ի՞նչ էր Հարին զգում իր որոշումն իրականացնելուց հետո:

Երբ Հարին հասավ Սոլթ Լեյք Սիթի, նա վերջապես կարողացավ դպրոց գնալ: Երբ նա տասնմեկ տարեկան էր, մի ուսուցիչ նրան իր հետ դպրոց տարավ և սովորեցրեց այբուբենը: Միակ գիրքը, որ Հարին ուներ, Աստվածաշունչն էր, և նա այն կրկին ու կրկին կարդում էր: Նա դպրոցում շատ էր սովորում և լավ աշակերտ դարձավ:

- Ի՞նչ ընտրություններ կատարեց Հարին: (Նա որոշեց սովորել կարդալ և որոշեց ուսումնասիրել սուրբ գրությունները:)
- Այդ որոշումներն իմաստու՞ն էին, թե հիմար:

Երբ Հարին մեծացավ, նա դարձավ իմաստուն և կարևոր մարդ Եկեղեցում: Նա սիրում էր կարդալ և հաճույքով կարդում էր սուրբ գրությունները: Նա նաև Եկեղեցու մասին շատ գրքեր է գրել: Շատ մարդիկ են կարդացել նրա գրքերը և շատ բան են իմացել Եկեղեցու մասին: (See *Church News,* 19 July 1980, pp. 8–9; and Truman G. Madsen, *Defender of the Faith: The B. H. Roberts Story* [Salt Lake City: Bookcraft, 1980], pp. 19–21, 37–40, 56–57.)

ԸՃ նկար

Ցուցադրեք ԸՃ նկարը և երեխաներին խնդրեք ձեզ հետ միասին կրկնել. «Ես կընտրեմ ճիշտը»: Երեխաներին բացատրեք, որ երբ մենք ճիշտն ենք ընտրում, մենք իմաստուն որոշումներ ենք կատարում:

**Ամփոփում**

Վարժություն

Ցույց տվեք «իմաստուն» և «հիմար» խոսքերով ցուցանակները, որոնք դրեք սեղանին կամ հատակին: Երեխաներին խնդրեք ձեզ հետ մաիսին ասել ցուցանակների բառերը: Նշեք, որ «իմաստուն» ցուցանակը երջանիկ դեմքով է պատկերված, որովհետև իմաստուն լինելը երջանկություն է պարգևում: Նշեք, որ «հիմար» ցուցանակը տխուր դեմք ունի, որովհետև հիմար որոշումները մեզ դժբախտ են դարձնում:

Ցույց տվեք թղթերով արկղը և երեխաներին խնդրեք հերթով մի թուղթ վերցնել: Երեխային խնդրեք կարդալ կամ դուք կարդացեք նրա ընտրած թղթի վրա գրված գործողությունը: Երեխային խնդրեք որոշել, թե ինչպիսի գործողություն է դա, իմաստուն, թե հիմար, և խնդրեք այդ թուղթը դնել համապատասխան ցուցանակի կողքին:

Երեխաներին խրախուսեք կատարել այն գործողությունները, որոնք, ըստ իրենց, իմաստուն որոշումներ են:

Կրկնեք քննարկումը

- Ի՞նչ տեսակի ընտրություններն են մեզ երջանիկ դարձնում:
- Իմաստուն և երջանիկ լինելու համար ո՞ւմ ուսմունքներին մենք պետք է հետևենք:
- Ինչո՞ւ է հիմարություն Հիսուս Քրիստոսին չհնազանդվելը և սխալ անելը:

Վկայություն

Երեխաներին վկայեք, որ մենք երջանիկ ենք լինում, երբ իմաստուն որոշումներ ենք ընդունում: Արտահայտեք ձեր երախտագիտությունը Հիսուս Քրիստոսի և նրա սովորեցրածների համար, որոնք օգնում են մեզ երջանիկ լինել:

Երեխաներին խրախուսեք հատուկ ջանքեր գործադրել այս շաբաթ, մտածելով իրենց որոշումների մասին և աշխատելով իմաստուն ընտրություններ կատարել:

Երեխաներից մեկին հրավիրեք ասել փակիչ աղոթքը: Երեխային խնդրեք աղոթել, որպեսզի դասարանի յուրաքանչյուր անդամ իմաստուն լինի և ճիշտն ընտրի:

---

**Լրացուցիչ վարժություններ**

Հետևյալ վարժություններից ընտրեք նրանք, որոնք լավագույնս կհամապատասխանեն ձեր դասարանի երեխաներին: Դուք կարող եք դրանք օգտագործել դասի ընթացքում, որպես դասի վերանայում կամ ամփոփում: Լրացուցիչ ուղղության համար տե՛ս «Օգնություն ուսուցչին» նյութի «Դասաժամ» բաժինը:

1. Ցույց տվեք նկար 2-7, Իմաստունները, և երեխաներին խնդրեք ձեզ պատմեն նկարը: Երեխաներին հիշեցրեք, որ Իմաստունները եկան տեսնելու Հիսուսին, երբ Նա նոր էր ծնվել (տե՛ս Մաթևոս Բ.1–12): Բացատրեք, որ այդ մարդիկ իմաստուն էին ոչ միայն, որովհետև մեծ գիտելիք ունեին, այլ նաև որովհետև փնտրում և երկրպագում էին Հիսուս Քրիստոսին: Նրանք Հիսուսին հետևելու իմաստուն որոշում կայացրեցին:

   Կարող եք երեխաներին խնդրել դերերով խաղալ Իմաստունները փնտրում են Հիսուսին պատմությունը:

2. Յուրաքանչյուր երեխայի խնդրեք ձեզ պատմել որևէ իմաստուն որոշման մասին, որը նա վերջերս կայացրել է (անհրաժեշտության դեպքում խորհուրդներ տվեք): Յուրաքանչյուր երեխայի պատասխանը գրեք առանձին

թղթի վրա և երեխաներին խնդրեք իրենց թղթերի վրա նկարել իրենց նկարները: Երեխաներին հիշեցրեք չմոռանալ ժպիտներ նկարել իրենց դեմքերին, քանի որ իմաստուն որոշումները մեզ երջանիկ են դարձնում:

3. Անցկացրեք հետևյալ առարկայական դասը (այդ դասը պարապեք տանը դասարանում այն անցկացնելուց առաջ):

Պահանջվող նյութեր.

ա. Ութ կամ տաս մանկական աղյուսներ երկու պարզ միանման շենք կառուցելու համար, ինչպես ցույց է տրվում.



բ. Նույն չափսի երկու խորը թավա:
գ. Մեծ հարթ քար թավաներից մեկի մեջ դնելու համար:
դ. Մի բուռ ավազ մյուս թավայի մեջ դնելու համար:
ե. Ջուր ջրամանի մեջ:

Ավազը լցրեք թավաներից մեկի մեջ: Հարթ քարը դրեք մյուս թավայի մեջ:

Ցույց տվեք աղյուսները և բացատրեք, որ դուք դրանցով երկու տուն եք կառուցելու: Մի տունը կկառուցվի ավազի վրա, իսկ մյուսը՝ քարի:

Կարող եք երեխաներին խնդրել օգնել ձեզ քարի վրա կառուցել տունը: Այդ տունը պետք է նման լինի ավազի վրա ձեր կառուցած տանը:

Տները կառուցելուց հետո երեխաներին խնդրեք պատկերացնել, թե փոթորիկ է տեղի ունենում և խփում տներին: Առատ անձրև է տեղում և քամիներ են փչում:

- Ձեր կարծիքով, ի՞նչ կպատահի այդ երկու տների հետ:

Նրանից հետո, երբ երեխաները կիսվեն իրենց մտքերով, մեկնաբանություններ մի արեք: Զգուշորեն ջուր լցրեք ավազի վրա կառուցված տան վրա, մինչև որ ավազը կհոսի և տունը կքանդվի: Նույն քանակությամբ ջուրը լցրեք քարի վրա կառուցված տան վրա և երեխաներին խնդրեք ուշադրություն դարձնել, որ տունը չի քանվում:

Երեխաներին օգնեք հասկանալ, որ ավազի վրա տուն կառուցելը հիմարություն էր, իսկ քարի վրա՝ իմաստուն:

Բարձրաձայն կարդացեք Հելաման 5.12-ի առաջին մասը (մինչև *վեմ* բառը): Շեշտեք, որ այս սուրբ գրության հատվածը Հիսուս Քրիստոսին համեմատում է քարի հետ: Երեխաներին հիշեցրեք, որ Հիսուսի ուսմունքներին հետևելը նման է քարի վրա տուն կառուցելուն: Դա իմաստուն է:

# Ես կարող եմ Կիրակին սուրբ պահել

Դաս
37

**Նպատակ**

Ամրացնել Կիրակին սուրբ պահելու երեխաների ցանկությունը:

**Նախապատրաստություն**

1. Աղոթքով ուսումնասիրեք Ելից Ի.8–11 և Մաթևոս ԺԲ.10–13: Տե՛ս նաև *Ավետարանի Սկզբունքները* (31110), գլուխ 24:
2. Պատրաստեք դասի վերջում տրված օրացույցի օրինակը: Կիրակի օրերը կարմիր գույնով ներկեք: Կարող եք համարակալել օրերը ընթացիկ ամսվա համար:
3. Պատրաստեք հետևյալ բառաշերտը.

   «Հիշիր կիրակի օրը և այն սուրբ պահիր»:

4. Յուրաքանչյուր երեխայի համար պատճենահանեք Կիրակի օրվա գործերի երկու թերթիկները (տրված է դասի վերջում): Տարիքով ավելի մեծ երեխաների համար մի քանի մկրատ բերեք, որպեսզի նրանք կարողանան կտրել և միմյանցից անջատել էջերը:
5. Պատրաստվեք արտասանել «Շաբաթ օրը»:
6. Պահանջվող նյութեր.
   ա. Աստվածաշունչ
   բ. Մատիտներ
   գ. Կարիչ կամ որևէ այլ գործիք էջերը միմյանց փակցնելու համար
   դ. Նկար 2-58, Հիսուսը բուժում է անդամալույծ մարդուն
7. Անհրաժեշտ պատրաստություններ կատարեք այն լրացուցիչ վարժությունների համար, որոնք ցանկանում եք անցկացնել:

**Դասի առաջարկվող ընթացք**

Երեխաներից մեկին խնդրեք ասել բացիչ աղոթքը:

Եթե երեխաներին խնդրել եք շաբաթվա ընթացքում ինչ-որ բան կատարել, ստուգեք:

**Կիրակին հատուկ օր է**

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Երեխաներին ցույց տվեք օրացույցը և բացատրեք, որ այն ցույց է տալիս ամսվա բոլոր օրերը: Համառոտ քննարկեք, թե ինչի համար են օգտագործվում օրացույցները:

- Ի՞նչ է անսովոր այս օրացույցի մեջ:
- Ո՞ր օրն է ներկված կարմիրով:
- Ինչո՞ւ է այդ օրը հատուկ օր: (Այն Հանգստյան Օրն է:)

Ուսուցչի ելույթ

Երեխաներին ասացեք, որ աշխարհի սկզբից ի վեր ամեն շաբաթվա մի օրը առանձնացվել է Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի մասին սովորելու և մտածելու, ինչպես նաև ուրիշների համար բարի գործեր կատարելու համար: Այդ օրը կոչվում է Հանգստյան Օր:

- Շաբաթվա ո՞ր օրն է Հանգստյան Օրը:

Սուրբ գրություն և բառաշերտ

Բարձրաձայն կարդացեք Ելից Ի.8 և ցուցադրեք բառաշերտը: Երեխաներին օգնեք միասին կրկնել այս սուրբ գրությունը: Նրանց ասացեք, որ սա պատվիրան է:

Բացատրեք, որ Հանգստյան օրը սուրբ է, որովհետև այդ օրը մենք անում ենք բաներ, որոնք մեզ հիշեցնում են Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի մասին, օրինակ՝ եկեղեցի ենք գնում, սուրբ գրություններ ենք կարդում և այլ ակնածալից բաներ ենք անում:

### Մենք կարող ենք կիրակին սուրբ պահել

Քննարկում

Երեխաների հետ քննարկեք այն գործողությունները, որոնք պատշաճ են կիրակի օրվա համար: Նրանց հարցրեք, ինչ են արել այս կիրակին սուրբ պահելու համար: Նրանց օգնեք հասկանալ, որ գալով եկեղեցի, աղոթելով, երգելով, ելույթ ունենալով եկեղեցու ժողովներին, սովորելով Հիսուսի ուսմունքները և մասնակցելով հաղորդությանը, մենք կարող ենք կիրակին սուրբ պահել:

Բացատրեք, որ մենք չպետք է աշխատենք կիրակի օրը, եթե հնարավոր է, և չպետք է անենք այնպիսի բաներ, որոնք մեզ չեն թույլ տալիս մտածել Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի մասին:

Վարժություն

Նկարագրեք մի քանի գործողություններ, որոնց երեխաները կարող են մասնակցել: Երեխաներին խնդրեք ժպտալ, եթե գործողությունն այնպիսին է, որը մենք կարող ենք անել կիրակի օրը, և տխրել, եթե տվյալ գործողությունը չենք կարող անել կիրակի օրը: Օգտագործեք ստորև տրված օրինակները կամ ձեր դասարանի համար համապատասխան օրինակներ:

- Գնալ եկեղեցի:
- Մաքրել տունը:
- Այցելել հարազատներին:
- Գնումներ կատարել:
- Գնալ կինոթատրոն:
- Կարդալ սուրբ գրությունները և այլ լավ գրքեր:
- Աղոթել:
- Դիտել կամ մասնակցել սպորտային խաղերի:
- Նամակներ գրել:
- Զբոսնել:
- Սուրբ գրությունների խաղեր խաղալ:
- Այցելել հիվանդներին:

### Հիսուս Քրիստոսը կիրակին սուրբ էր պահում

Երեխաներին ասացեք, որ միշտ չէ հեշտ իմանալ, թե տվյալ գործը պետք է անել կիրակի օրը, թե ոչ: Այդ իմանալու ամենալավ ճանապարհը Հիսուս Քրիաստոսի օրինակին հետևելն է:

Պատմվածք սուրբ գրություններից

Ցույց տվեք նկար 2-58, Հիսուսը բուժում է անդամալույծ մարդուն, և պատմեք Մաթեոս ԺԲ.10–13-ի պատմությունը:

Բացատրեք, որ Փարիսեցիները մարդիկ էին, որոնք չէին սիրում Հիսուս Քրիստոսին և Նրա արածները: Նրանք փորձում էին ստիպել նրան ասել այնպիսի բաներ, որոնք սխալ էին կամ օրենքին հակառակ: Նրանք նրան հարցրեցին, թե արդյոք սխալ չէ՞ր կիրակի օրը որևէ մեկին բուժելը: Նրանք ուզում էին, որ նա ասեր, որ սխալ էր:

Երեխաներին ասացեք, որ Հիսուսը Փարիսեցիներին ասաց, որ եթե նրանք մի ոչխար ունենային, որը մի կիրակի օր փոսի մեջ ընկներ, ապա նրանք կհանեին նրան այդ փոսից: Քանի որ մարդիկ ավելի կարևոր են, քան ոչխարները, մարդկանց օգնելը լավ բան է կիրակի օրն անելու համար: Բարձրաձայն կարդացեք Մաթեոս ԺԲ.12-ի երկրորդ մասը (սկսած *ուրեմն*):

Երեխաներին հիշեցրեք, որ եթե գործն այնպիսին է, որ Հիսուսը կաներ, օրինակ ուրիշներին օգնել կամ բարի գործեր կատարել, ապա այն կարելի է կատարել կիրակի օրը:

### Կիրակին սուրբ պահելը պատրաստություն է պահանջում

Քննարկում

Նշեք, որ Կիրակին սուրբ պահելու համար մենք պետք է որոշ բաներ անենք Կիրակի օրվանից առաջ, որպեսզի պատրաստ լինենք:

- Ի՞նչ պետք է անեք դուք և ձեր ընտանիքը, որպեսզի պատրաստ լինեք կիրակի օրվա համար: (Հնարավոր պատասխաններ. լվանալ և արդուկել հագուստը եկեղեցի գնալու համար, մաքրել տունը, կերակուր պատրաստել կիրակի օրը ուտելու համար, և պատրաստել սուրբ գրությունները և եկեղեցու համար պահանջվող այլ իրերը:)
- Ե՞րբ դուք պետք է անեք այդ բաները:

Արտասանություն

Արտասանեք «Շաբաթ» երգի բառերը: Երեխաներին օգնեք մնջախաղով պատկերել երգի մեջ նշված շարժումները:

Շաբաթ օրը հատուկ օր է:
Այդ օրը մենք պատրաստվում ենք կիրակի օրվան.
Մաքրում ենք տունը, գնումներ ենք կատարում,
Որ մինչև երկուշաբթի գործ այլևս չունենանք:
Լվանում ենք մեր շորերը, կոշիկներն ենք մեր մաքրում,
Այդ օրը մեր բոլոր գործերն ենք ավարտում,
Եղունգներն ենք մեր կտրում ու մազերն ենք լվանում,
Եվ այդպես պատրաստ Կիրակին ենք դիմավորում:

Երեխաներին խրախուսեք հաջորդ շաբաթ պատրաստվել, որպեսզի Կիրակին կարողանան սուրբ պահել:

### Ամփոփում

Վարժություն

Յուրաքանչյուր երեխայի տվեք Կիրակի օրվա գործերի թերթիկը: Երեխաներին օգնեք կարդալ վերնագիրը. «Կիրակի Օրվա Իմ Գիրքը»: Երեխաներին օգնեք բաժանել էջերը, կտրելով դրանք, եթե նախօրոք չեք կտրել:

Կարդացեք հետևյալ նախադասությունները, որոնք նկարագրում են Կիրակի օրվա համար պատշաճ գործերը և երեխաներին օգնեք ընտրել որևէ նկար, որը պատկերում է յուրաքանչյուր գործողությունը:

- Կիրակի օրը մենք գնում ենք եկեղեցի՝ հարգելու Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին և սովորելու նրանց մասին:
- Կիրակի օրը լավ օր է ավետարանը ընտանիքով ուսումնասիրելու համար: Մենք կարող ենք կարդալ սուրբ գրությունները և այլ լավ գրքեր:
- Կիրակին աղոթքի օր է: Մենք աղոթում ենք եկեղեցում, մեր ընտանիքների հետ և մենակ:
- Կիրակի օրը մենք կարող ենք օրհներգեր երգել և լավ երաժշտություն լսել:
- Կիրակի օրը մենք կարող ենք գրել մեր օրագրում և նամակներ գրել կամ նկարներ նկարել մեր հարազատների, ընկերների և միսիոներների համար:
- Կիրակին լավ օր է հարազատներին կամ հիվանդ կամ միայնակ մարդկանց այցելելու համար:

Երեխաներին մատիտներ բաժանեք և նրանց թույլ տվեք գունավորել նկարները: Ազատ էջի վրա նրանց խնդրեք նկարել այն, ինչ պատրաստվում են անել Կիրակին սուրբ պահելու համար:

Երեխաներին օգնեք իրար փակցնել գրքի էջերը:

Վկայություն

Բերեք ձեր վկայությունը Կիրակին սուրբ պահելու կարևորության մասին: Կարող եք նշել մեկ-երկու բաներ, որոնք սիրում եք անել կիրակի օրը և ասել, թե ինչպես եք ձեզ զգում, երբ անում եք դրանք: Շեշտեք, որ կիրակին պետք է երջանիկ օր լինի, քանի որ մենք մտածում և սովորում ենք Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի մասին:

Երեխաներին խրախուսեք իրենց գրքերը ցույց տալ հարազատներին և կիսվել այսօր սովորածով: Առաջարկեք, որ երեխաները գրքերն այնպիսի տեղում պահեն, որպեսզի դրանք կարողանան նրանց հիշեցնել կիրակին սուրբ պահել:

Երեխաներից մեկին հրավիրեք ասել փակիչ աղոթքը: Նրան առաջարկեք Երկնային Հորը խնդրել օգնել դասարանի անդամներին կիրակին սուրբ պահել:

---

**Լրացուցիչ վարժություններ**

Հետևյալ վարժություններից ընտրեք նրանք, որոնք լավագույնս կհամապատասխանեն ձեր դասարանի երեխաներին: Դուք կարող եք դրանք օգտագործել դասի ընթացքում, որպես դասի վերանայում կամ ամփոփում: Լրացուցիչ ուղղության համար տե՛ս «Օգնություն ուսուցչին» նյութի «Դասաժամ» բաժինը:

1. Արտասանեք «Երբ ես գնում եմ Եկեղեցի» երգի առաջին քառատողը: Երեխաներին խնդրեք կանգնել և արտասանելիս կատարել ստորև տրված շարժումները.

   Ես միշտ երջանիկ զգացում եմ ունենում,
   Երբ եկեղեցի եմ գնում *(ձեռքերը դրեք սրտին և ժպտացեք):*
   Երգեհոնն այնքան մեղմ է նվագում *(ձեռքը դրեք ականջի ետևում),*
   Ես լուռ իմ տեղն եմ զբաղեցնում *(ոտքերի թաթերի վրա քայլեք և մատը դրեք շրթունքներին):*
   Իմ ուսուցիչներին ու ընկերներին եմ ողջունում *(լուռ սեղմեք ձեր կողքին գտնվողի ձեռքը)*
   Երբ եկեղեցի եմ գնում *(նստեք աթոռին):*

2. Գրատախտակին նկարեք երկու աչք, երկու ականջ, բերան և երկու ձեռք: Երեխաներին խնդրեք ասել, թե ինչ կարող են անել մարմնի այս մասերը, որպեսզի մեզ օգնեն կիրակին սուրբ պահել:

Օրինակներ.

Աչքեր՝ կարդալ սուրբ գրությունները, նայել ելույթ ունեցողներին և եկեղեցու ուսուցիչներին:
Ականջներ՝ լսել լավ երաժշտություն կամ պատմություններ, լսել Երեխաների Խմբի դասը:
Բերան՝ երգել օրհներգեր կամ Երեխաների խմբի երգերը, բարի բաներ ասել ընտանիքի անդամներին և ընկերներին:
Ձեռքեր՝ նկար նկարել ընտանիքի այն անդամների համար, որոնք հեռու են գտնվում, գրել օրագրի մեջ:

3. Երեխաներին օգնեք մտապահել Ելից Ի.8. «Հիշիր կիրակին և այն սուրբ պահիր»:

4. Արտասանեք «Հիշիր կիրակի օրը»:

Հիշիր կիրակի օրը,
Միշտ այն սուրբ պահիր:
Տերն օրհնել է այն,
Որ մենք հիշենք Նրան:

# Կիրակին սուրբ օր է

| Կիրակի | Երկուշաբթի | Երեքշաբթի | Չորեքշաբթի | Հինգշաբթի | Ուրբաթ | Շաբաթ |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |

# Կիրակի օրվա իմ գիրքը





# Ես կհիշեմ Հիսուս Քրիստոսին հաղորդության ժամանակ

Դաս
38

**Նպատակ**

Ոգեշնչել երեխաներին հիշել Հիսուս Քրիստոսին հաղորդության ժամանակ:

**Նախապատրաստություն**

1. Աղոթքով ուսումնասիրեք Ղուկաս ԻԲ.7–20 և Վարդապետություն և Ուխտեր 20.75–79: Տե՛ս նաև *Ավետարանի Սկզբունքները* (31110), գլուխ 23:
2. Պատրաստվեք պատմել Հիսուս Քրիստոսի մասին ձեր սիրած պատմություններից մեկը, օգտագործելով որևէ նկար, եթե առկա է:
3. Պահանջվող նյութեր.
   ա. Աստվածաշունչ և Վարդապետություն և Ուխտեր
   բ. Հաղորդության մատուցարաններ հացի և ջրի համար
   գ. Նկար 2-29, Հաղորդության մատուցումը (62021); նկար 2-54, Վերջին Ընթրիքը; նկար 2-59, Քրիստոսը:
4. Անհրաժեշտ պատրաստություններ կատարեք այն լրացուցիչ վարժությունների համար, որոնք ցանկանում եք անցկացնել:

**Դասի առաջարկվող ընթացք**

Երեխաներից մեկին խնդրեք ասել բացիչ աղոթքը:

Եթե երեխաներին խնդրել եք շաբաթվա ընթացքում ինչ-որ բան կատարել, ստուգեք:

**Հիսուս Քրիստոսը տվեց մեզ հաղորդությունը**

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Երեխաներին ցույց տվեք հաղորդության մատուցարանները:

- Ինչի՞ համար են դրանք նախատեսված:

Երեխաներին խնդրեք ասել, թե ինչ նրանք գիտեն հաղորդության մատուցարանների և հաղորդության մասին: Նրանց ասացեք, որ այսօրվա դասը հաղորդության մասին է:

Պատմվածք սուրբ գրություններից և քննարկում

Ցուցադրեք նկար 2-54, Վերջին Ընթրիքը: Եթե երեխաները ճանաչում են այն, նրանց խնդրեք պատմել այն մասին, թե ինչ է տեղի ունենում նկարի վրա: Եթե նրանք չեն ճանաչում նկարը, նրանց ասացեք, որ դա Հիսուս Քրիստոսի և նրա Առաքյալների նկարն է: Երեխաներին խնդրեք ցույց տալ Հիսուսին:

Պատմեք Վերջին Ընթրիքի պատմությունը, ինչպես տրված է Ղուկաս ԻԲ.7–20:

Բացատրեք, որ Հիսուս Քրիստոսը և նրա Առաքյալները հրեական հատուկ սուրբ օր էին տոնում, որը զատկի տոն էր կոչվում: Հիսուսը գիտեր, որ սա իր վերջին ճաշկերույթն է Առաքյալների հետ: Երեխաներին ասացեք, որ մենք հաճախ այս ճաշկերույթը կոչում ենք Վերջին ընթրիք:

Բացատրեք, որ Հիսուսը սիրում էր իր Առաքյալներին: Նա ընտրեց այդ մարդկանց ղեկավարելու իր եկեղեցին իր հեռանալուց հետո: Նա նրանց շատ բաներ սովորեցրեց և ցանկանում էր, որ նրանք հիշեին իրեն և իր ուսմունքները:

- Ինչո՞ւ էր Առաքյալների համար կարևոր հիշել Հիսուսին:
- Ի՞նչ Հիսուսը տվեց Առաքյալներին, որպեսզի նրանք կարողանային հիշել իրեն:

Բարձրաձայն կարդացեք Ղուկաս ԻԲ.19: Շեշտեք, որ այս սուրբ գրությունը մեզ պատմում է, թե ինչպես Փրկիչը հացը փոքր մասերի բաժանեց, օրհնեց այն և տվեց Առաքյալներին, որ ուտեն: Նա նրանց ասաց, որ հացը նրանց պետք է հիշեցնի իր մարմնի մասին և որ նրանք պետք է հիշեն իրեն, երբ ուտեն այն:

Երեխաներին ասացեք, որ երբ բոլոր Առաքյալները կերան իրենց կտոր հացը, Հիսուսը օրհնեց խաղողից պատրաստած ըմպելիքը և տվեց Առաքյալներին: Նա նրանց ասաց, որ ըմպելիքը պետք է նրանց հիշեցնի իր արյան մասին: Երբ խմում են այն, նրանք պետք է հիշեն, որ Հիսուսը մահացավ, որպեսզի նրանք կրկին կարողանային ապրել Երկնային Հոր հետ մահանալուց հետո:

Բացատրեք, որ Հիսուսը գիտեր, որ եթե Առաքյալները հիշեին իրեն և իր ուսմունքները, ապա դա կօգներ նրանց ընտրել ճիշտը:

- Ինչպե՞ս ենք մենք անվանում հացն ու ջուրը, որ Հիսուսը տվեց իր Առաքյալներին Վերջին Ընթրիքի ժամանակ: (Հաղորդություն:)
- Ինչո՞ւ Հիսուսը Առաքյալներին տվեց հաղորդությունը:

### Մենք հաղորդություն ենք ընդունում Հիսուս Քրիստոսին հիշելու համար

Քննարկում

Ցույց տվեք նկար 2-29, Հաղորդության մատուցումը, և երեխաներին հիշեցրեք, որ մենք ընդունում ենք հաղորդությունը հենց այնպես, ինչպես արեցին Հիսուսի Առաքյալները: (Դուք կարող եք բացատրել, որ մենք օգտագործում ենք ջուրը այն ըմպելիքի փոխարեն, որը Հիսուսը տվեց իր Առաքյալներին:)

- Ե՞րբ ենք մենք ընդունում հաղորդությունը:

Շեշտեք, որ այն ժողովը, որի ժամանակ մենք հաղորդություն ենք ընդունում, կոչվում է հաղորդության ժողով, որովհետև հաղորդությունը այդ ժողովի ամենակարևոր մասն է:

- Ինչո՞ւ ենք մենք ընդունում հաղորդությունը:
- Ինչպե՞ս կարող է հաղորդությունը մեզ օգնել հիշել ընտրել ճիշտը:

Սուրբ գրություն

Երեխաներին հիշեցրեք, որ հաղորդությունը բաժանելուց առաջ հատուկ աղոթքներ են ասվում: Աղոթքներում ասվում է այն, ինչ մենք խոստացել ենք Երկնային Հորը: Երեխաներին խնդրեք ուշադիր լսել, մինչ դուք կկարդաք աղոթքը, որն ասվում է հացի համար, որպեսզի նրանք կարողանան գտնել երկու խոստում, որոնք մենք տալիս ենք Երկնային Հորը, երբ ընդունում ենք հաղորդությունը:

Բարձրաձայն կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 20.77, շեշտելով «որ նրանք կարողանան հիշել մարմինը քո Որդու և վկայել քեզ» և «միշտ հիշեն նրան և պահեն պատվիրանները, որ նա տվել է նրանց» արտահայտությունները:

Երեխաներին ասացեք, որ «վկայել քեզ» նշանակում է, որ մենք խոստում ենք տալիս Երկնային Հորը:

- Ի՞նչ երկու բան ենք մենք խոստանում անել:

Բացատրեք, որ ամեն անգամ հաղորդությունն ընդունելուց մենք խոստանում ենք հիշել Հիսուսին և պահել նրա պատվիրանները:

**Հաղորդության ժամանակ մենք կարող ենք մտածել մեր հանդեպ Հիսուս Քրիստոսի սիրո մասին**

Ուսուցչի ելույթ

Ցույց տվեք նկար 2-59, Քրիստոսը: Բացատրեք, որ նկարի վրա պատկերված է Հիսուս Քրիստոսի արձանը: Ետևում մոլորակների և աստղերի նկարներն են: Երեխաներին թույլ տվեք մի քանի րոպե խոսել նկարի մասին:

Բացատրեք, որ հաղորդության ժամանակ մենք պետք է մտածենք Փրկչի և մեր հանդեպ նրա սիրո մասին: Մենք կարող ենք հիշել մեր տեսած Հիսուսի նկարները, օրինակ այս մեկը, և կարող ենք նաև մտածել Հիսուսի պատմությունների մասին:

Պատմվածք

Պատմեք Հիսուսի մասին ձեր սիրած պատմություններից մեկը, օգտագործելով որևէ նկար, եթե առկա է: Բացատրեք, թե ինչպես է այդ պատմությունը ցույց տալիս մարդկանց հանդեպ Հիսուսի սերը:

Երեխայի մասնակցություն

Երեխաներից յուրաքանչյուրին խնդրեք պատմել որևէ պատմություն Հիսուս Քրիստոսի մասին կամ այն, ինչ նա հիշում է Հիսուսի մասին: Երբ երեխաները խոսում են, շեշտեք, թե ինչպես է արտահայտվում մեր հանդեպ Հիսուսի սերը Հիսուսի մասին երեխաների պատմությունների և հիշողությունների մեջ:

Երեխաներին գովեք Հիսուսի մասին պատմությունները հիշելու համար: Նրանց ասացեք, որ կան շատ պատմություններ, որոնց մասին մենք կարող ենք մտածել հաղորդության ժամանակ: Եթե հաղորդության ժամանակ մենք մտածենք Հիսուսի և նրա սիրո մասին, մենք միշտ կհիշենք նրան:

Երգ

Բացատրեք, որ մենք շատ երգեր գիտենք Հիսուս Քրիստոսի մասին: Թեև մենք բարձրաձայն չենք երգում հաղորդության մատուցման ժամանակ, մենք կարող ենք մտածել երգերի բառերի մասին, որոնք օգնում են մեզ հիշել Հիսուսին:

Երեխաների հետ միասին երգեք Հիսուսի մասին մեկ-երկու ծանոթ երգեր:

**Հաղորդության ժամանակ ակնածանքը օգնում է մեզ հիշել Հիսուս Քրիստոսի մասին**

Քննարկում

Բացատրեք, որ երբ հաղորդության ժողովի ժամանակ մենք ակնածալից ենք լինում, ավելի հեշտ է դառնում մտածել Հիսուսի մասին:

- Ինչպե՞ս մենք կարող ենք ակնածալից լինել հաղորդության ժողովի ժամանակ:

Հետևեք, որպեսզի նշվեն հետևյալ մտքերը.

- Լսենք հաղորդության աղոթքները և վերջում ասենք «ամեն»:
- Չխանգարենք մեր ծնողներին և ուրիշներին: Նրանք նույնպես պետք է մտածեն Հիսուսի մասին:
- Հաղորդությունից առաջ կողմ դնենք մատիտները, գրքերը կամ այլ իրերը:
- Լուռ լինենք և մնանք մեր տեղերում:
- Մտածենք Հիսուսի մասին, հիշելով նրա մասին պատմություններն ու երգերը, մեր հանդեպ նրա սերը և նրա սովորեցրած բաները:
- Վերցնենք մեզ ամենամոտ գտնվող հացի կտորը և ջուրը:
- Հաղորդության բաժակները դնենք իրենց տեղը, առանց դրանց հետ խաղալու:

Վարժություն

Երեխաներին խնդրեք պատկերացնել, թե իրենք նստած են հաղորդության ժողովին և արդեն հաղորդության ժամանակն է: Նրանց խնդրեք ցույց տալ հետևյալ հարցերի պատասխանները, առանց խոսելու.

- Ի՞նչ դուք կարող եք անել ձեր բերանով, որպեսզի ցույց տաք, որ մտածում եք Հիսուսի մասին:
- Ի՞նչ դուք կարող եք անել ձեր գլխով, որպեսզի ցույց տաք, որ ակնածալից եք:
- Ի՞նչ դուք կարող եք անել ձեր ձեռքերով, որպեսզի ցույց տաք, որ մտածում եք Հիսուսի մասին:
- Ի՞նչ դուք կարող եք անել ձեր ոտքերով, որպեսզի ցույց տաք, որ ականածալից եք:

Երեխաներին խնդրեք լուռ նստել մոտ մեկ րոպե և մտածել Հիսուս Քրիստոսի մասին, ճիշտ ինչպես պետք է անեն հաղորդության բաժանման ժամանակ: Ապա նրանց խնդրեք ասել, թե ինչ էին մտածում Հիսուսի մասին:

**Ամփոփում**

Վարժություն

Երեխաներին խնդրեք ուշադիր լսել, մինչ դուք կկարդաք այն մասին, թե ինչ նրանք կարող են անել կամ ինչի մասին կարող են մտածել հաղորդության ժողովի ժամանակ: Երեխաներին ասացեք, որ եթե կարդում եք այնպիսի մի բան, որը իրենք կարող են անել կամ որի մասին կարող են մտածել հաղորդության ժամանակ, ապա պետք է կանգնեն: Եթե կարդում եք այնպիսի բան, որը նրանք չպետք է անեն կամ որի մասին չպետք է մտածեն հաղորդության ժամանակ, ապա պետք է նստեն:

Օգտագործեք հետևյալ նախադասությունները կամ մտածեք ինքներդ.

- Հիշել, որ Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը սիրում են մեզ:
- Մտածել դուրս գնալու և խաղ անելու մասին:
- Մտածել այն մասին, թե ինչպես էր Հիսուսը բուժում հիվանդներին:
- Շշնջալ և խոսել ձեր հարևանի հետ:
- Պտտվել տեղում:
- Մտածել հաղորդության երգի կամ Հիսուսի մասին որևէ երգի մասին:
- Աղոթք ասել Երկնային Հորը:
- Նկարել կամ խաղալիքով խաղալ:
- Հիշել Հիսուսի մասին պատմություններ:

Վկայություն

Բերեք Հիսուս Քրիստոսի մասին ձեր վկայությունը: Երեխաներին ասացեք, թե ինչպես եք ձեզ զգում, երբ կարողանում եք ընդունել հաղորդությունը:

Երեխաներին խրախուսեք հիշել Հիսուս Քրիստոսին և ակնածալից լինել հաղորդության ժամանակ:

Երեխաներից մեկին հրավիրեք ասել փակիչ աղոթքը:

---

**Լրացուցիչ վարժություններ**

Հետևյալ վարժություններից ընտրեք նրանք, որոնք լավագույնս կհամապատասխանեն ձեր դասարանի երեխաներին: Դուք կարող եք դրանք օգտագործել դասի ընթացքում, որպես դասի վերանայում կամ ամփոփում: Լրացուցիչ ուղղության համար տե՛ս «Օգնություն ուսուցչին» նյութի «Դասաժամ» բաժինը:

1. Ձեր Երեխաների Խմբի նախագահի համաձայնությամբ խնդրեք եպիսկոպոսին (կամ ճյուղի նախագահին) պայմանավորվել որևէ քահանայի կամ սարկավագի հետ այցելել դասարանը և համառոտ բացատրել հաղորդությանը վերաբերող իր պարտականությունները:
2. Պատրաստեք ակնածանքով նստած երեխաներին պատկերող նկարի մի օրինակ (տրված է դասի վերջում), գունավորեք այն և կտրատեք գլուխկոտրուկի հինգ մասերի: Յուրաքանչյուր մասի հակառակ կողմում տպեք հետևյալ հարցերից մեկը.
   - Ո՞րն է ամենակարևոր բանը, որը մենք անում ենք հաղորդության ժողովի ժամանակ:
   - Ի՞նչ է անում քահանան, երբ գալիս է հաղորդության ժամանակը:
   - Ի՞նչ են անում սարկավագները հաղորդության ժամանակ:
   - Ինչպե՞ս մենք պետք է նստենք հաղորդության ժամանակ:
   - Ինչի՞ մասին մենք պետք է մտածենք հաղորդության ժամանակ:

   Գլուխկոտրուկի մասերը դրեք հատակին կամ սեղանի վրա: Երեխաներից մեկին խնդրեք ընտրել որևէ կտոր: Երեխաների համար կարդացեք այդ կտորի հակառակ կողմում գրված հարցը և օգնեք պատասխանել դրան: Երբ բոլոր հարցերին կպատասխանեն, երեխաներին օգնեք հավաքել նկարը:
3. Երեխաներին օգնեք ասել հետևյալ տողերը.

   Հաղորդություն

   Ես կծալեմ ձեռքերս, կխոնարհեմ գլուխս,
   Շատ լուռ ես կլինեմ
   Երբ հաղորդությունը կօրհնվի,
   Քեզ ես կհիշեմ:

   (DeVota M. Peterson)

   Մի քանի անգամ կրկնեք հատվածը, որպեսզի երեխաները կարողանան հիշել այն:

   Այս հատվածը կրկնելուց առաջ կարող եք տալ հետևյալ հարցերը.
   - Ի՞նչն ենք մենք ծալում:
   - Ի՞նչն ենք մենք խոնարհում:
   - Հաղորդության ժամանակ մենք լո՞ւռ, թե աղմկոտ պետք է լինենք:
   - Ինչի՞ մասին մենք պետք է մտածենք հաղորդության ժամանակ:

# Ես կարող եմ հետևել Հիսուս Քրիստոսին, ծառայելով ուրիշներին

Դաս
39

**Նպատակ**

Ամրացնել ուրիշներին ծառայելով Հիսուս Քրիստոսին հետևելու երեխաների ցանկությունը:

**Նախապատրաստություն**

1. Աղոթքով ուսումնասիրեք Հովհաննես ԺԳ.1–17 և Հավատո Հանգանակ 1.13: Տե՛ս նաև *Ավետարանի Սկզբունքները* (31110), գլուխ 28:
2. Պատրաստվեք պատմելու այն ժամանակի մասին, երբ դուք օրհնվել եք ինչ-որ մեկին ծառայելու արդյունքում:
3. Պահանջվող նյութեր.
   ա. Աստվածաշունչ
   բ. Թուղթ և մատիտներ յուրաքանչյուր երեխայի համար
   գ. Նկար 2-60, Հիսուսը լվանում է Առաքյալների ոտքերը (Gospel Art Picture Kit 226; 62550)
4. Անհրաժեշտ պատրաստություններ կատարեք այն լրացուցիչ վարժությունների համար, որոնք ցանկանում եք անցկացնել:

**Դասի առաջարկվող ընթացք**

Երեխաներից մեկին խնդրեք ասել բացիչ աղոթքը:

Եթե երեխաներին խնդրել եք շաբաթվա ընթացքում ինչ-որ բան կատարել, ստուգեք:

**Հիսուս Քրիստոսը ցանկանում է, որպեսզի մենք ծառայենք ուրիշներին**

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Դասը սկսելիս պատահաբար հատակին թափեք մատիտները, թղթերը կամ այլ նյութերը: Մի պահ սպասեք, հնարավորություն տալով երեխաներին օգնել ձեզ հավաքել դրանք: (Եթե ոչ մի երեխա չի օգնում, խնդրեք երեխաներին օգնել:)

Երեխաներին շնորհակալություն հայտնեք ձեզ օգնելու համար և գովեք նրանց ծառայելու հնարավորությունից օգտվելու համար: Բացատրեք, որ երբ մենք օգնում ենք ուրիշներին առանց որևէ բան դրա դիմաց պահանջելու, դա կոչվում է ծառայություն: Երեխաներին խնդրեք կրկնել *ծառայություն* բառը:

Երեխաներին ասացեք, որ երբ Հիսուսը երկրի վրա էր, նա հաճախ էր ծառայում մարդկանց:

Պատմվածք սուրբ գրություններից

Ցույց տվեք նկար 2-60, Հիսուսը լվանում է Առաքյալների ոտքերը, և պատմեք Հովհաննես ԺԳ.1–17-ի պատմությունը: Երեխաներին հիշեցրեք, որ Հիսուսը կանչեց Առաքյալներին, որոնք պատկերված են նկարի վրա, օգնելու իրեն ղեկավարել եկեղեցին:

Երեխաներին հիշեցրեք այն, ինչ նրանք սովորեցին նախորդ դասին Վերջին Ընթրիքի մասին: Բացատրեք, որ նրանից հետո, երբ Քրիստոսը

Առաքյալներին սովորեցրեց հաղորդության մասին, նա նրանց սովորեցրեց, թե որքան կարևոր է ծառայել ուրիշներին:

Բացատրեք, որ արտասովոր բան չէր, երբ մարդիկ լվանում էին ոտքերը, քանի որ հիմնականում մարդիկ բաց կոշիկներ էին կրում և նրանց ոտքերը փոշոտվում և կեղտոտվում էին: Սակայն, սովորաբար, ծառան էր կատարում այս աշխատանքը: Բացատրեք, որ Պետրոսը չէր ուզում, որ Հիսուսը լվանար նրա ոտքերը, քանի որ կարծում էր, որ ճիշտ չէ, որ Հիսուսը ծառայի աշխատանք կատարեր:

Երեխաներին ասացեք, որ Հիսուսը Առաքյալներին բացատրեց, որ թեև նա Փրկիչն էր, նա միևնույն է ծառայում է նրանց: Սա ցանկանում էր, որ նրանք հասկանային, որ պետք է ծառայել միմյանց: Բարձրաձայն կարդացեք Հովհաննես ԺԳ.15 և բացատրեք, որ Հիսուսը ցանկանում է, որ մենք հետևենք իր օրինակին և ծառայենք ուրիշներին:

Քննարկում

- Ինչո՞ւ Հիսուսը լվաց Առաքյալների ոտքերը:
- Ի՞նչ էր Հիսուսը ցանկանում, որ Առաքյալներն անեին:
- Ի՞նչ է Հիսուսը ցանկանում, որ մենք անենք:

Բացատրեք, որ Հիսուս Քրիստոսը ցանկանում է, որ մենք ծառայենք, երբ-որ կարող ենք, անգամ եթե մեզ չեն խնդրում օգնել կամ չեն վարձատրում մեր օգնության համար: Շեշտեք, որ երբ մենք ծառայում ենք այլ մարդկանց, մենք հետևում ենք Հիսուսին:

**Մենք կարող ենք ծառայել ուրիշներին տարբեր ճանապարհներով**

Պատմվածք

Երեխաներին խնդրեք լսել, մինչ դուք ձեր խոսքերով կպատմեք երիտասարդ տղայի մասին հետևյալ պատմությունը, որը մտածեց, թե ինչպես կարող է ծառայել իր ընտանիքին.

«Այնքան մութ էր, որ քնկոտ յոթամյա տղան դժվարությամբ էր անցնում դեպի ախոռ տանող ճանապարհը: Նա մի քանի օր ծրագրում էր, թե ինչպես պետք է վեր կենա անկողնուց, հագնվի, լուռ իջնի աստիճաններից, վերցնի կաթի դույլը պահարանի վրայից և դուրս գա տնից առանց որևէ մեկին արթնացնելու:

. . . [Ջոզեֆը] շատ անգամներ էր տեսել, թե ինչպես է իր քույրը, Մերին, կթում կովը: Նա պարզեց, որ դա այդքան էլ հեշտ չէ, ինչպես նա մտածում էր: . . . Շուտով նրա մատներն ու դաստակները սկսեցին ցավալ: Նա հաճախ պետք է դադար տար, որպեսզի ձեռքերը հանգստանային: . . .

Տղան այնքան տարված էր կթելով, որ չնկատեց, թե որքան ժամանակ դա տևեց, և զարմացավ, երբ դուրս գալով և շարժվելով դեպի տուն, տեսավ, որ լույսը բացվել էր: Երբ նա մտավ խոհանոց, մայրը նայեց վառարանի ետևից, որտեղ նախաճաշ էր պատրաստում, և հարցրեց. «Ջոզեֆ, ի՞նչ ես անում այսքան վաղ առավոտյան»:

Որպես պատասխան նա բարձացրեց կաթով դույլը և զգաց ուրախության ջերմությունը մոր ժպիտի մեջ: «Դե, - ասաց նա, - եթե դու այդքան մեծ ես, ամեն առավոտ կթելը քո գործը կլինի»: Նա մի պահ կանգ առավ և հարցրեց. «Բայց, ինչո՞ւ էիր դու այդքան ուզում կթել»:

Ջոզեֆը իր լուրջ դեմքը շրջեց դեպի մայրը և պատասխանեց. «Ես պարզապես ուզում եմ օգնել, մինչ Հայրիկը միսիայում է: Հետո, գիտես, Մերին այնքան բան ունի անելու, ես մտածեցի, որ կարող եմ կատարել առավոտվա կթելու գործը, իսկ նա դրա մասին էլ չի մտածի»:

. . . Մայրը գրկեց նրան և ասաց. «Որքան գոհ կլինի քո հայրիկը, երբ ես գրեմ նրան, որ նա ունի մի հիանալի տղա, որը հոգ կտանի կովը կթելու համար, մինչ նա հեռու է» » (Lucile C. Reading, “The Morning Chore,” *Children’s Friend,* Apr. 1970, p. 23):

Երեխաներին ասացեք, որ այդ տղայի անունը Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթ էր և երբ մեծացավ, նա դարձավ Եկեղեցու տասներորդ Նախագահը:

- Ինչպե՞ս ծառայեց Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը:
- Ո՞ւմ նա ծառայեց:

Հավատո հանգանակ

Երեխաներին ասացեք, որ հավատո տասներեքերորդ հանգանակը ասում է, որ մենք հավատում ենք ուրիշներին ծառայելուն: Երեխաներին խնդրեք կանգնել և նրանց օգնեք ասել. «Մենք հավատում ենք . . . բոլոր մարդկանց բարին անելուն»:

Վարժություն

Բոլոր երեխաներին, ովքեր ցանկանում են լինել Հիսուս Քրիստոսի աշակերտները (հետևորդները), խնդրեք կանգնել և մնալ կանգնած: Երեխաներին հիշեցրեք, որ Հիսուսը ցանկանում է, որ նրա բոլոր աշակերտները ծառայեն մարդկանց:

- Ինչպե՞ս մենք կարող ենք ծառայել մարդկանց:

Յուրաքանչյուր երեխայի խնդրեք նստել, երբ նա ասում է մարդկանց ծառայելու որևէ եղանակ:

Եթե երեխան չի կարող մտածել, թե ինչպես կարող է ծառայել, կարող եք առաջարկել հետևյալ մտքերից մեկը կամ ձեր դասարանին համապատասխանող որևէ այլ միտք.

- Պատմել կամ կարդալ պատմություն որևէ մեկին, ով տարիքով ավելի փոքր է:
- Նկար նկարել ծնողների կամ պապիկների-տատիկների համար:
- Հավաքել եղբոր թափած խաղալիքները:
- Պատրաստել ճաշի սեղանը առանց խնդրելու:

### Մենք երջանիկ ենք, երբ ծառայում ենք

Քննարկում

- Ո՞վ է երջանիկ, երբ մենք ծառայում ենք: (Հնարավոր պատասխաններ. մարդիկ, ում մենք ծառայում ենք, մենք ինքներս, և Երկնային Հայրն ու Հիսուս Քրիստոսը:)

Շեշտեք, որ երբ մենք ծառայում ենք ուրիշներին, ոչ միայն երջանկացնում ենք այդ մարդկանց, այլ մենք նույնպես երջանիկ ենք լինում:

- Ինչո՞ւ է ուրիշներին ծառայելը ձեզ երջանիկ դարձնում:

### Ամփոփում

Արվեստի վարժություն

Երեխաներին խնդրեք մտածել ծառայության պարզ ձևերի մասին, որոնք կարող են իրականացնել այսօր, եկեղեցում կամ տանը: Երեխաներին տվեք թուղթ և մատիտներ և խնդրեք նկարել այն ծառայությունը, որը նրանք պատրաստվ ում են կատարել այսօր: Երեխաներին խնդրեք միմյանց ցույց տալ և բացատրել նկարները:

Վկայություն

Երեխաներին պատմեք այն ժամանակների մասին, երբ դուք օրհնվել եք, երբ ծառայել եք ուրիշներին: Վկայեք, որ իրական երջանկությունը գալիս է ուրիշներին ծառայելուց:

Երեխաներին խրախուսեք գտնել այս շաբաթ ուրիշներին ծառայելու եղանակներ: Կարող եք նրանց խնդրել հաջորդ անգամ դասարանում պատմել ծառայության իրենց փորձառությունների մասին:

Երեխաներից մեկին խնդրեք ասել փակիչ աղոթքը:

---

**Լրացուցիչ վարժություններ**

Հետևյալ վարժություններից ընտրեք նրանք, որոնք լավագույնս կհամապատասխանեն ձեր դասարանի երեխաներին: Դուք կարող եք դրանք օգտագործել դասի ընթացքում, որպես դասի վերանայում կամ ամփոփում: Լրացուցիչ ուղղության համար տե՛ս «Օգնություն ուսուցչին» նյութի «Դասաժամ» բաժինը:

1. Նախօրոք պատրաստեք մի ծառայություն, որը երեխաները կարող են միասին կատարել դասի ժամանակ (հետևեք, որպեսզի այդ ծառայությունը պատշաճ լինի կիրակի օրվա համար):

   Օրինակներ.

   - Մանուկների ուսուցչի հետ պայմանավորվեք, որ ձեր դասարանը որևէ երգ երգի մանուկների համար Երեխաների Խմբի երգերից:
   - Նյութեր բերեք երեխաների համար, որպեսզի նրանք շնորհակալական բացիկներ պատրաստեն Երեխաների Խմբի երաժշտավարի և դաշնակահարի համար:
   - Երեխաներին օգնեք անել այն, ինչ անհրաժեշտ է հաջորդ դասին պատրաստվելու համար, օրինակ մաքրել գրատախտակը և դասավորել աթոռները:

   Ծառայությունը կատարելուց հետո երեխաների հետ քննարկեք, թե ինչպես նրանք զգացին ծառայելուց հետո: Սրանց հիշեցրեք, որ ծառայությունը մեզ երջանիկ է դարձնում:

2. Պատրաստեք երեք փոքր թղթե սրտեր յուրաքանչյուր երեխայի համար: Երեխաներին ասացեք, որ դուք ուզում եք սկսել «Ծառայություն Գաղտնի Ակումբում»: Երեխաներին խրախուսեք այս սրտերը տանել տուն և կատարել գաղտնի ծառայություններ ընտանիքի անդամների համար, թողնելով սիրտը այն տեղում, որտեղ կատարել են ծառայությունը: Օրինակ, նրանք կարող են հավաքել եղբոր կամ քրոջ անկողինը և թողնել սիրտը բարձի վրա: Երեխաներին խնդրեք հաջորդ շաբաթ պատմել, թե ինչ զգացմունքներ ունեցան, երբ գաղտնի ձևով ծառայեցին ուրիշներին:

3. Երեխաներին խնդրեք փոքր շրջանով նստել հատակին: Զգույշ նետեք լոբով պարկը կամ որևէ փափուկ իր դեպի երեխաներից մեկը և խնդրեք նրան նշել ուրիշներին ծառայելու որևէ եղանակ: Երբ երեխան պատասխանի, նա կարող է պարկը գցել շրջանում մեկ ուրիշին: Շարունակեք, մինչև որ յուրաքանչյուրը հնարավորություն կունենա նշելու առնվազն մեկ ծառայության ձև:

4. Երեխաներին խնդրեք քննարկել կամ ցույց տալ, թե ինչպես կվարվեին հետևյալ իրավիճակներից յուրաքանչյուրի ժամանակ փորձելով ծառայել ուրիշներին (իրավիճակները հարմարեցրեք ձեր դասարանի երեխաներին).

   - Դուք գնում եք ֆուտբոլի խաղի: Դուք շտապում եք, սակայն փողոցով անցնելիս տեսնում եք մի ծեր կին մթերքներով լի պարկով:
   - Դուք ձեր ընկերոջ տանը խաղ եք անում: Դուք շատ հոգնած եք: Դուրս գալով բակ, տեսնում եք, որ ձեր հայրիկը աշխատում է այգում:

- Երբ գալիս եք խոհանոց ջուր խմելու, տեսնում եք, որ ձեր եղբայրը լվանում է սպասքը:
- Դուք տուն եք վերադառնում ձեր ընկերների հետ: Դուք տեսնում եք, որ մի շուն ցրել է ձեր հարևանի աղբը ամբողջ բակով մեկ: Ձեր հարևանը տանը չէ և բացակայելու է մի քանի օր:
- Դուք դպրոցում նոր աղջկա եք հանդիպում և ներկայանում եք: Նոր աղջիկը ձեզ հարցնում է, թե որտեղ եք նախաճաշելու: Դուք պատրաստվում էիք նախաճաշել ձեր ընկերների հետ:
- Ձեր ընտանիքը պատրաստվում է գնալ եկեղեցի: Ձեր հայրն արդեն դուրս է եկել, որովհետև պետք է հասներ ժողովի: Դուք մի քանի փոքր եղբայրներ և քույրեր ունեք, որոնց պետք է օգնել պատրաստվել:

Դաս
40

# Ես կարող եմ ներել ուրիշներին

**Նպատակ**

Օգնել յուրաքանչյուր երեխայի հասկանալ, որ երջանկությունը գալիս է, երբ մենք ներում ենք ուրիշներին, ինչպես Հիսուս Քրիստոսը:

**Նախապատրաստություն**

1. Աղոթքով ուսումնասիրեք Ղուկաս ԻԳ.13–34 և Հովհաննես ԺԸ.12–14, 19–24; ԺԹ.1–5:
2. Պատրաստեք հետևյալ բառաշերտը.

| |
|---|
| «Հայր, ներիր նրանց, քանի որ նրանք չգիտեն, թե ինչ են անում»: |

3. Պատրաստվեք պատմելու ձեր կյանքից այն պահի մասին, երբ ներել եք և թե ինչ եք զգացել դրա արդյունքում:
4. Պահանջվող նյութեր.
   ա. Աստվածաշունչ
   բ. ԸՃ նկար (տե՛ս դաս 1)
   գ. Կավիճ, գրատախտակ և ջնջիչ
   դ. Նկար 2-56, Հիսուսի Դատը; նկար 2-61, Խաչում (Gospel Art Picture Kit 230; 62505)
5. Անհրաժեշտ պատրաստություններ կատարեք այն լրացուցիչ վարժությունների համար, որոնք ցանկանում եք անցկացնել:

**Դասի առաջարկվող ընթացք**

Երեխաներից մեկին խնդրեք ասել բացիչ աղոթքը:

Եթե երեխաներին խնդրել եք շաբաթվա ընթացքում ինչ-որ բան կատարել, ստուգեք: Կարող եք երեխաներին խնդրել պատմել ծառայության իրենց փորձի մասին:

**Մենք կարող ենք ներել ուրիշներին**

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Երեխաներին խնդրեք ուշադիր լսել, մինչ դուք կնկարագրեք հետևյալ իրավիճակը (անհրաժեշտության դեպքում, հարմարեցրեք իրավիճակը ձեր դասարանի երեխաների համար).

Դուք քայլում եք, տանելով գրքեր և թղթեր (կամ այլ իրեր): Հանկարծ մեկը բախվում է ձեզ: Դուք վայր եք ընկնում և զցում այն իրերը, որ տանում էիք: Ձեր գրքերն ու թղթերը ցրված են ողջ հատակով մեկ:

- Սման բան երբևէ կատարվե՞լ է ձեզ հետ:
- Ինչպե՞ս եք դուք ձեզ զգացել:

Երեխաներին ասացեք, որ դուք կնկարագրեք այս պատմության երկու տարբեր վերջեր: Նրանց խնդրեք որոշել, թե որն է ամենալավ վերջը:

*Վերջ 1*

Դուք զայրացած եք, որ ընկել եք և թափել բոլոր իրերը: Երբ նա, ով պատահմամբ հրել էր, ներողություն է խնդրում և առաջարկում օգնել հավաքել ձեր գրքերը և թղթերը, դուք զայրացած ձայնով ասում եք. «Ոչ» և հրում նրան: Դուք հույս ունեք, որ վաղը կտեսնեք նրան շատ իրերով և կիրեք, որ ընկնի:

*Վերջ 2*

Դուք զայրացած եք, որ ընկել եք և թափել բոլոր իրերը: Երբ նա, ով պատահմամբ հրել էր, ներողություն է խնդրում և առաջարկում օգնել հավաքել ձեր գրքերը, դուք ասում եք. «Շնորհակալություն»: Դուք երկուսով արագ հավաքում եք գրքերն ու թղթերը: Դուք նրան ասում եք, որ գիտեք, որ դիտավորյալ չի արել, և երկուսդ երջանիկ հեռանում եք:

- Ո՞րն է ավելի լավ վերջ պատմության համար:
- Ինչո՞ւ է երկրորդ վերջն ավելի լավը, քան առաջինը:
- Ի՞նչ մենք պետք է անենք, երբ մեկն այնպիսի բան է անում, ինչը մեզ դուր չի գալիս կամ վիրավորում կամ բարկացնում է մեզ: (Մենք պետք է ներենք նրանց:)

Ուսուցչի ելույթ

Բացատրեք, որ մեկին ներել նշանակում է սեր և բարություն զգալ այդ անձնավորության հանդեպ, անգամ եթե նա վիրավորել է ձեզ կամ բարկացրել: Երբեմն դա նշանակում է, որ մենք պետք է փոխենք մեր բարկության զգացումները այդ անձի նկատմամբ և բարությամբ լցվենք: Երբ մենք ներում ենք ուրիշներին, մենք չենք ցանկանում վիրավորել նրանց կամ նույն ձևով պատասխանել: Մենք բարի ենք նրանց նկատմամբ, անգամ, եթե նրանք մեր նկատմամբ բարի չեն:

**Հիսուս Քրիստոսը ներեց ուրիշներին**

Պատմվածք սուրբ գրություններից

Ցույց տվեք Աստվածաշունչը և երեխաներին ասացեք, որ դուք պատրաստվում եք մի պատմություն պատմել Աստվածաշնչից այն մասին, թե ինչպես Հիսուս Քրիստոսը ներեց նրանց, ովքեր վիրավորեցին իրեն: Պատմեք Քրիստոսի դատի և խաչելիության պատմությունը, ինչպես տրված է Ղուկաս ԻԳ.13–34 և Հովհաննես ԺԸ.12–14, 19–24; ԺԹ.1–5:

Բացատրեք, որ նրանից հետո, երբ Հիսուսը և նրա Առաքյալները միասին ուներեցան Վերջին Ընթրիքը, Հիսուսը գնաց Գեթսեմանի Այգի Երկնային Հորը աղոթելու համար: Նրանից հետո, երբ Հիսուսն ավարտեց աղոթելը, եկան զինվորները, կապեցին նրան և տարան քահանայապետի պալատը, որտեղ նա դատի ենթարկվեց:

Ցույց տվեք նկար 2-56, Հիսուսի դատը:

Շեշտեք, որ դատի ժամանակ զինվորները դաժան վերաբերվեցին Հիսուսին: Նրանք ծեծեցին, մտրակեցին, թքեցին նրա վրա, փշե պսակ դրեցին նրա գլխին և վիրավորական խոսքեր ասացին նրան: Սակայն Հիսուսը չզայրացավ:

Ցույց տվեք նկար 2-61, Խաչում:

Երեխաներին ասացեք, որ դատից հետո զինվորները Հիսուսին տարան Գագաթ կոչվող մի վայր և մեխեցին նրան խաչին: Բացատրեք, որ Հիսուսը բարկացած չէր զինվորների վրա նրանց արածի համար: Դրա փոխարեն նա խնդրեց Երկնային Հորը ներել զինվորներին:

Սուրբ գրություն և բառաշերտ

Երեխաներին խնդրեք լսել, թե ինչ Հիսուսն ասաց մահանալուց առաջ: Բարձրաձայն կարդացեք Ղուկաս ԻԳ.34-ի առաջին նախադասությունը:

Ցուցադրեք բառաշերտը և թողեք, որ այն երևա դասի ողջ ընթացքում: Երեխաներին խնդրեք ձեզ հետ միասին կրկնել Հիսուսի խոսքերը:

Շեշտեք, որ թեև զինվորները դաժան վարվեցին Հիսուսի հետ, նա ներեց նրանց և խնդրեց Երկնային Հորը ներել նրանց:

**Երջանկությունը գալիս է, երբ մենք ներում ենք ուրիշներին**

Ուսուցչի ելույթ

Երեխաներին հիշեցրեք, որ երբ մենք Հիսուս Քրիստոսի հետևորդներն ենք, մենք աշխատում ենք անել այն, ինչ նա կաներ: Հիսուսը միշտ ներել է նրանց, ովքեր իր հանդեպ բարի չեն եղել: Մենք պետք է ներենք նրանց, ովքեր բարի չեն մեր հանդեպ:

Պատմվածք և քննարկում

Պատմեք հետևյալ պատմությունը մի երեխայի մասին, որը գիտեր, ինչպես ներել.

Քենտի մայրը նրան խնդրեց մաքրել բակը: Նա կույտերով հավաքում էր տերևները և փոքր ճյուղերը, որոնք ծառերից և բույսերից ընկել էին այգու մեջ: Քենտը քրտնաջան աշխատեց և ի վերջո հավաքեց բոլոր տերևները և ճյուղերը, կազմելով մի մեծ կույտ: Այդ ժամանակ Ջեդն անցավ փողոցով, մտավ ուղիղ կույտի մեջ և տերևներն ու ճյուղերը ցրվեցին տարբեր կողմեր: Քենտի ողջ աշխատանքը մի քանի վայրկյանում վերացավ:

- Ձեր կարծիքով, ինչպե՞ս էր իրեն զգում Քենտը, երբ Ջեդը արեց սա:

Քենտի եղբայրը տեսավ, թե ինչ արեց Ջեդը: Նա մտածում էր, որ Քենտը պետք է վազի Ջեդի ետևից և ծեծի նրան տերևների և ճյուղերի կույտը ցրելու համար:

- Ի՞նչ կարող էր անել Քենտը:

Երեխաներին օգնեք մի քանի առաջարկությունների մասին մտածել: Ապա ավարտեք պատմությունը.

Քենտը իսկապես վազեց Ջեդի ետևից: Սակայն նրան խփելու փոխարեն, հարցրեց, թե արդյոք նա ունի աշխատանք, որը դեռ պետք է անի այսօր: Ջեդը նվնվաց:

Քենտը առաջարկեց օգնել Ջեդին, եթե նա օգնի նորից կույտի մեջ հավաքել տերևները: Ջեդը համաձայնվեց և երկու տղաները լավ ժամանակ անցկացրեցին, միասին աշխատելով:

Քննարկում

Բացատրեք, որ եթե մենք ներենք ուրիշներին և նրանց հանդեպ բարի լինենք, ինչպես Քենտը վերաբերվեց Ջեդին, ապա ներսում մեզ երջանիկ կզգանք: Եթե մենք չներենք, ապա վիրավորված կամ բարկացած կլինենք, և երջանիկ չենք լինի: Մենք պետք է ներենք ուրիշներին, որպեսզի երջանիկ լինենք:

Նկարագրեք մի քանի իրավիճակներ և երեխաների հետ քննարկեք, թե արդյոք այդ իրավիճակում երեխան ներեց, թե ոչ: Եթե երեխան չի ներում, երեխաներին խնդրեք ասել, թե ինչ կարող է այդ երեխան անել ներելու և երջանիկ զգալու համար:

Օգտագործեք ստորև տրված իրավիճակները կամ հնարեք ինքներդ.

1. Ջենը հենց նոր էր ավարտել նկարել մի սքանչելի նկար, երբ փոքր եղբայրը եկավ և նկարի վրա մատիտով գծեց: Ջենն այնքան բարկացած էր, որ գոռաց և խփեց եղբոր ձեռքին:
   - Արդյո՞ք Ջենը ներեց:
   - Ձեր կարծիքով, ինչպե՞ս էր Ջենը իրեն զգում:
   - Ի՞նչ կարող է անել Ջենը իր եղբոր հանդեպ ներող լինելու համար:

2. Խաղահրապարակում Դոննան մոտեցավ Քալիին և նրան հրեց, գցելով ներքև: Դոննան ծիծաղելով վազեց: Հաջորդ օրը Դոննան ընկավ և վնասեց ծունկը: Քալին շտապեց նրա մոտ և օգնեց նրան:
   - Արդյո՞ք Քալին ներեց:
   - Ձեր կարծիքով, ինչպե՞ս էր Քալին զգում իրեն:
3. Երբ Զադը սպասում էր, որ ջուր խմեր ցայտաղբյուրից, նրա դիմացը կանգնած տղան շրջվեց և գրի հոսքը ուղղելով դեպի Զադը, ջրեց նրան: Զադի դեմքը թրջվել էր, սակայն նա շրջվեց և հեռացավ առանց որևէ խոսք ասելու: Հաջորդ օրը, երբ Զադը ջուր էր խմում, այդ նույն տղան անցնում էր նրա կողքով: Զադը կարող էր ջրել տղային, սակայն չարեց դա:
   - Արդյո՞ք Զադը ներեց:
   - Ձեր կարծիքով, ինչպե՞ս իրեն զգաց Զադը:

**Ամփոփում**

Կրկնողություն

Գրատախտակի վրա նշեք 1-ից 8 թվերը: Երեխաներին խնդրեք հերթով ջնջել մի համար և պատասխանել կրկնողության հարցին, որը համապատասխանում է այդ համարին: Եթե դուք մեծ դասարան ունեք, ապա կարիք կունենաք ավելի շատ հարցեր գրել:

1. Ի՞նչ է նշանակում ներել ուրիշներին:
2. Ինչպե՞ս Հիսուս Քրիստոսը վերաբերվեց այն զինվորներին, որոնք մեխեցին իրեն խաչին:
3. Ի՞նչ խնդրեց Հիսուս Քրիստոսը Երկնային Հորից այդ զինվորների համար:
4. Ձեր կարծիքով, ինչպե՞ս իրեն զգաց Քենտը, երբ Ջեդը ցրեց տերևների կույտը:
5. Ինչպե՞ս Քենտը ներողամտություն ցուցաբերեց:
6. Ձեր կարծիքով, ինչպե՞ս իրեն զգաց Քենտը, երբ ներեց Ջեդին:
7. Ձեր կարծիքով, ինչպե՞ս իրեն զգաց Ջեդը, երբ Քենտը այդքան բարի եղավ իր նկատմամբ, վրեժ առնելու փոխարեն:
8. Ինչպե՞ս մենք մեզ կզգանք, երբ ներենք նրանց, ովքեր բարի չեն մեր հանդեպ:

ԸՃ նկար և մատանի

Ցույց տվեք ԸՃ նկարը: Երեխաներին խնդրեք կրկնել նկարի խոսքերը: Երեխաներին օգնեք հասկանալ, որ երբ մենք ներում ենք ուրիշներին, ինչպես անում էր Հիսուսը, մենք ընտրում ենք ճիշտը:

Երեխաներին խնդրեք նայել իրենց ԸՃ մատանիներին, եթե կրում են այն: Նրանց ասացեք, որ մատանիները կարող են հիշեցնել իրենց ընտրել ճիշտը, ներելով ուրիշներին:

Վկայություն

Վկայեք, որ մենք կարող ենք երջանիկ լինել, երբ ներում ենք ուրիշներին և բարի ենք նրանց հանդեպ լինում: Պատմեք այն ժամանակների մասին, երբ դուք ընտրել եք ճիշտը և ներել ինչ-որ մեկին: Բացատրեք, թե ինչ եք զգացել այդ մարդու հանդեպ նրան ներելու արդյունքում:

Եթե ժամանակը թույլ է տալիս, երեխաներին խնդրեք պատմել այն ժամանակների մասին, երբ իրենք ներել են ինչ-որ մեկին:

Երեխաներին խրախուսեք հատուկ ջանք գործադրել այս շաբաթ ուրիշներին ներելու համար: Առաջարկեք, որ երեխաները իրենց ընտանիքներում քննարկեն ներման սկզբունքը:

Երեխաներից մեկին հրավիրեք ասել փակիչ աղոթքը: Առաջարկեք, որ երեխան խնդրի Երկնային Հորը օգնել երեխաներին ներել ուրիշներին:

---

**Լրացուցիչ վարժություններ**

Հետևյալ վարժություններից ընտրեք նրանք, որոնք լավագույնս կհամապատասխանեն ձեր դասարանի երեխաներին: Դուք կարող եք դրանք օգտագործել դասի ընթացքում, որպես դասի վերանայում կամ ամփոփում: Լրացուցիչ ուղղության համար տե՛ս «Օգնություն ուսուցչին» նյութի «Դասաժամ» բաժինը:

1. Մի մեծ պարկ բերեք և մի քանի քար: Երեխաների հետ քննարկեք, թե որքան բարկացած ենք մենք երբեմն լինում կամ ուզում ենք վրեժ լուծել այն մարդկանցից, ովքեր մեր հանդեպ վատ են վերաբերվում: Այդ քննարկման ժամանակ, մեկ առ մեկ քարերը դրեք պարկի մեջ:

   Երբ պարկի մեջ մի քանի քար հավաքվի, երեխաներին խնդրեք հերթով այն կրել: Նրանց խնդրեք, պահելով պարկը, ծափ տալ կամ որևէ մեկին գրկել: Բացատրեք, որ ուրիշների վրա բարկացած լինելը նրանց վատ վերաբերմունքի համար, նման է քարերով պարկ կրելուն: Դա մեզ համար ծանր բեռ է:

   Երեխաներին խնդրեք մի քանի անգամ ասել «Ես կներեմ», մինչ դուք պարկից հանում եք քարերը: Ապա երեխաներին խնդրեք կրկին պահել պարկը: Բացատրեք, որ երբ մենք ներում ենք ուրիշներին, ապա այլևս կարիք չունենք կրելու ծանր բեռը: Մենք ավելի երջանիկ ենք զգում, երբ ներում ենք:

2. Պատմեք Հովսեփի և նրա եղբայրների մասին պատմությունը, ինչպես տրված է Ծննդոց Լէ և ԽԱ-ԽԵ-ում: Կարող եք երեխաներին խնդրել դերերով խաղալ պատմությունը: Երեխաների հետ քննարկեք, թե ինչպես Հովսեփը ներեց իր եղբայրներին (տե՛ս Ծննդոց ԽԵ.1–15):

3. Յուրաքանչյուր երեխայի համար պատրաստեք դասի վերջում տրված նկարի մեկական օրինակ: Երեխաներին մատիտներ բաժանեք և խնդրեք նկարի վրա պատկերված երեխաների համար ուրախ դեմքեր նկարել: Ապա նրանց խնդրեք գունավորել նկարները: Երեխաներին խնդրեք նկարները տուն տանել և դնել այնպիսի տեղ, որտեղ դրանք կհիշեցնեն նրանց, որ պետք է ներել ուրիշներին:

4. Երեխաներին խնդրեք դերերով խաղալ Քենտի մասին պատմությունը և դասի 219–20 էջերի վրա տրված երեք իրավիճակները (առաջին իրավիճակում, երեխաներին խնդրեք ցույց տալ, թե ինչպես Ջենը կարող է ներել իր եղբորը): Կամ հնարեք նմանատիպ իրավիճակներ, որոնք ավելի համապատասխան են ձեր դասարանի երեխաների համար և խնդրեք երեխաներին դերերով խաղալ դրանք:

# Ներելը մեզ երջանկություն է պարգևում



Դաս
41

# Հիսուս Քրիստոսը մեր Փրկիչն է

**Նպատակ**

Օգնել երեխաներին հասկանալ, որ քանի որ Հիսուս Քրիստոսը հարություն է առել, բոլորը կարող են հարություն առնել:

**Նախապատրաստություն**

1. Աղոթքով ուսումնասիրեք Մաթեոս ԻԷ.45–66, ԻԸ.1–8, Ղուկաս ԻԴ.13–46, և Հովհաննես ԺԹ.30, Ի.11–18: Տե՛ս նաև *Ավետարանի Սկզբունքները* (31110), գլուխներ 11 և 12:

2. Ութ մասերի կտրեք թուղթը, որը իր չափսով հավասար լինի նկար 2-65-ին՝ Հարություն առած Հիսուս Քրիստոսը (Gospel Art Picture Kit 239; 62187): Մասերը համարակալեք 1-ից 8-ը: Ծածկեք նկար 2-65-ը ինչպես ցույց է տրված, զգուշությամբ փակցնելով կտորները սեղմիչներով կամ կպչող ժապավենով:

| | |
|---|---|
| 1 | 2 |
| 3 | 4 |
| 5 | 6 |
| 7 | 8 |

3. Պահանջվող նյութեր.
   ա. Աստվածաշունչ.
   բ. Կտրվածք 2-5, Խաչման տեսարանը; կտրվածք 2-6, Հիսուսի մարմինը փաթաթում են; կտրվածք 2-7, գերեզման; կտրվածք 2-8, մեծ քար; կտրվածք 2-9, պահակներ; կտրվածք 2-10, հրեշտակ; կտրվածք 2-11, յուղերով կինը; կտրվածք 2-12, Հիսուսը հարություն է առել: Դասավորեք այդ կտրվածքները այն հերթականությամբ, որով պետք է օգտագործվեն դասի ընթացքում:
   գ. Նկար 2-2, Ընտանիքը երեխայի հետ (62307); նկար 2-35, Քրիստոսը և երեխաները (Gospel Art Picture Kit 216; 62467); նկար 2-62, Մարիամը և հարություն առած Տերը (Gospel Art Picture Kit 233; 62186); նկար 2-63, Էմմաուսի ճանապարհին; նկար 2-64, Հիսուսը ցույց է տալիս Իր վերքերը (Gospel Art Picture Kit 234; 62503).

4. Անհրաժեշտ պատրաստություններ կատարեք այն լրացուցիչ վարժությունների համար, որոնք ցանկանում եք անցկացնել:

**Դասի առաջարկվող ընթացք**

Երեխաներից մեկին խնդրեք ասել բացիչ աղոթքը:

Եթե երեխաներին խնդրել եք շաբաթվա ընթացքում ինչ-որ բան կատարել, ստուգեք:

### Հիսուս Քրիստոսը մեզ համար այնպիսի բան արեց, որը մենք ինքներս չէինք կարող անել

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Ցույց տվեք նկար 2-2, Ընտանիքը երեխայի հետ: Երեխաներին խնդրեք մտածել այն մասին, երբ առաջին անգամ երկիր եկան որպես երեխաներ:

- Ի՞նչ են արել ձեր ծնողները (կամ ընտանիքի մյուս անդամները) ձեզ համար, երբ դուք երեխա էիք, ինչը դուք չէիք կարող անել ձեզ համար:

Երեխաներին օգնեք մտածել այն մասին, ինչ նրանց ծնողները (կամ ընտանիքի այլ անդամները) արել են իրենց համար: Հետևեք, որ յուրաքանչյուր երեխա առնվազն մեկ պատասխան տա:

- Ի՞նչ են անում ձեր ծնողները (կամ ընտանիքի մյուս անդամները) ձեզ համար այժմ, ինչը դուք ինքներդ չեք կարող անել:
- Ինչո՞ւ են նրանք անում այդ ամենը ձեզ համար:

Բացատրեք, որ մեր ծնողները և ընտանիքի մյուս անդամները ուրախությամբ են անում այդ ամենը մեզ համար, ինչը մենք չենք կարող ինքներս անել, որովհետև սիրում են մեզ և ցանկանում են մեզ օգնել:

Քննարկում

Բացատրեք, որ կա մեկ ուրիշը, որը մեզ շատ է սիրում և ցանկանում էր մեզ համար այնպիսի բան անել, որը մենք ինքներս չէինք կարող:

Ցույց տվեք նկար 2-35, Քրիստոսը և երեխաները:

- Ո՞վ է այդ անձնավորությունը, որը սիրում է մեզ:

Բացատրեք, որ այս երկիր գալուց առաջ Հիսուս Քրիստոսը առաջարկեց լինել մեր Փրկիչը: Սա նշանակում է, որ նա պատրաստ էր մահանալու և հարություն առնելու, որպեսզի մենք կարողանայինք նորից ապրել և վերադառնալ մեր Երկնային Հոր մոտ: Հիսուսը միակ մարդն էր, որ զորություն ուներ դա անելու մեզ համար: Մենք չէինք կարող ինքներս դա անել:

- Ի՞նչ է նշանակում հարություն առնել:

Բացատրեք, որ երբ մենք մահանում ենք, մեր հոգիները հեռանում են մեր ֆիզիկական մարմիններից: Հիսուսի մահից հետո նրա հոգին և ֆիզիկական մարմինը նորից միացան որպես հարություն առած մարմին, որը կապրի հավերժ: Քանի որ Հիսուսը մահացավ և հարություն առավ, մենք նույնպես հարություն կառնենք:

### Հիսուս Քրիստոսը հարություն առավ

Ուսուցչի ելույթ

Բացատրեք, որ մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի հարությունը այնքան կարևոր իրադարձություն էր, որ մենք ամեն տարի նշում ենք այդ հատուկ օրը, ինչը օգնում է մեզ հիշել այն, ինչ տեղի է ունեցել:

- Ինչպե՞ս ենք մենք անվանում այդ հատուկ օրը: (Զատիկ:)

Երեխաներին հիշեցրեք, որ Զատիկը տոնելիս նրանք սովորում են Հիսուս Քրիստոսի հարության մասին:

Սուրբ գրություն կտրվածքներով

Պատմեք Հիսուս Քրիստոսի խաչման, թաղման և հարության մասին պատմությունը (տե՛ս Մաթեոս ԻԷ.45, 57–66; ԻԸ.1–6; և Հովհաննես ԺԹ.30): Երեխաներին խնդրեք համապատասխան պահին բարձրացնել և պահել կտրվածքները:

Երեխաներից մեկին խնդրեք պահել կտրվածք 2-5-ը, Խաչման տեսարանը:

Բացատրեք, որ Հիսուսին բարձրացրեցին խաչին կեսօրից առաջ: Կեսօրին արևը թաքնվեց և խավարը պատեց երկիրը երեք ժամվա ընթացքում (տե՛ս Մաթևոս ԻԷ.45). Քրիստոսի ցավը այնքան մեծ էր, որ մենք չէինք դիմանա: Քրիստոսը կարող էր ընտրել չտանջվել և չմահանալ, սակայն նա խոստացել էր Երկնային Հորը, որ կգար երկիր, կտառապեր և կմահանար մեզ համար:

Երեխաներին ասացեք, որ երկիրը ցնցվեց և շարժվեց: Խավարի մեջ մարդիկ լսեցին Հիսուսի ձայնը «Կատարված է» (Հովհաննես ԺԹ.30): Նրա տառապանքները ավարտվեցին: Նա կախեց գլուխը և մահացավ: Նրա հոգին հեռացավ մարմնից:

- Ձեր կարծիքով, ի՞նչ զգացին Հիսուսի ընկերները և աշակերտները, Հիսուսի խաչումից հետո:

Երեխային խնդրեք ներքև դնել Խաչման տեսարանի կտրվածքը:

Երեխաներից մեկին խնդրեք պահել կտրվածք 2-6, Հիսուսի մարմինը փաթաթում են:

Բացատրեք, որ Հիսուսի ընկերները և աշակերտները զգուշորեն իջեցրեցին նրա մարմինը խաչից: Նրանք փաթաթեցին նրա մարմինը նուրբ ու անուշահոտ կտավե կտորով, ինչպես թելադրում էին այդ ժամանակների ավանդույթները:

Երեխաներից մեկին խնդրեք պահել կտրվածք 2-7, գերեզման:

Բացատրեք, որ Փրկչի ընկերները նրա մարմինը դրեցին գերեզմանի մեջ: Գերեզմանը մի փոքր սենյակ էր, որը հաճախ փորվում է ժայռի մեջ, որտեղ մարդկանց թաղում են:

Երեխային խնդրեք ներքև դնել կտրվածքը, որը ցույց էր տալիս, թե ինչպես են փաթաթում Հիսուսի մարմինը:

Երկու երեխայի խնդրեք պահել կտրվածք 2-8, մեծ քարը, և կտրվածք 2-9, պահակներ:

Երեխաներին ասացեք, որ մեծ քար դրվեց գերեզմանի առաջ և պահակներ կանգնեցին քարի կողքին:

- Ինչո՞ւ քար դրվեց և պահակներ կանգնեցին գերեզմանի դռան մոտ: (Տե՛ս Մաթևոս ԻԷ.62–66:)

Բացատրեք, որ երեք օր Հիսուսի մարմինը գերեզմանում էր: Երրորդ օրը առավոտյան, որը կիրակի օր էր, երկիրը կրկին ցնցվեց և դողաց (տե՛ս Մաթևոս ԻԸ.1–2):

Երեխաներից մեկին խնդրեք պահել կտրվածք 2-10, հրեշտակ:

Բացատրեք, որ հրեշտակ իջավ երկնքից և գլորեց գերեզմանի դռան առջևի քարը:

Երեխային խնդրեք ներքև դնել մեծ քարի կտրվածքը:

- Ի՞նչ պատահեց այն մարդկանց հետ, որոնք պահակ էին կանգնած գերեզմանի մոտ: (Տե՛ս Մաթևոս ԻԸ.4:)

Երեխային խնդրեք ներքև դնել պահակների կտրվածքը:

Երեխաներից մեկին խնդրեք պահել կտրվածք 2-11, յուղերով կանայք:

Բացատրեք, որ այն նույն կիրակի առավոտյան Մարիամ Մագդաղենացին, Հիսուսի հետևորդներից մեկը, և մեկ այլ կին այցելեցին գերեզմանը (տե՛ս Մաթևոս ԻԸ.1): Նրանք ցանկանում էին յուղեր և համեմունքներ քսել Հիսուսի մարմնին (այդպիսին էր այդ ժամանակների ավանդույթը): Երբ նրանք եկան

գերեզմանի մոտ, նրանք տեսան, որ քարը գլորված է: Գերեզմանը դատարկ էր: Հիսուսի մարմինը չկար:

Բացատրեք, որ կանայք տեսան հրեշտակին, որը նրանց ասաց չվախենալ: Բարձրաձայն կարդացեք Մաթեոս ԻԸ.5–6 այն մասին, թե ինչ հրեշտակն ասաց կանանց:

Բոլոր երեխաներին խնդրեք ներքև դնել իրենց կտրվածքները: Երեխաներից մեկին խնդրեք պահել կտրվածք 2-12, Հիսուսը հարություն է առել:

Բացատրեք, որ երբ հրեշտակն ասաց. «Սա հարություն առավ», նա կանանց ասում էր, որ Հիսուս Քրիստոսը հարություն է առել: Նրա հոգին վերադարձել էր մարմնի մեջ և նա կրկին կենդանի էր:

Երեխաներին ասացեք, որ Հիսուսի աշակերտները և ընկերները շատ ուրախ էին, որ նա նորից կենդանի էր:

### Հիսուս Քրիստոսը հայտնվեց Մարիամ Մագդաղենացուն և Իր աշակերտներին

Քննարկում

Ցույց տվեք նկար 2-62, Մարիամը և հարություն առած Տերը:

Բացատրեք, որ Հիսուս Քրիստոսը հարությունից հետո հայտնվեց իր հետևորդներին: Առաջինը նա հայտնվեց Մարիամ Մագդաղենացուն (տե՛ս Հովհաննես Ի.11–18): Մարիամը գերեզմանի մոտ լաց էր լինում, երբ Հիսուսը հայտնվեց նրան:

- Ձեր կարծիքով, ի՞նչ զգաց Մարիամը, երբ տեսավ Հիսուսին և իմացավ, որ նա կրկին կենդանի է:

Պատմվածք սուրբ գրություններից

Ցույց տվեք նկար 2-63, Էմմաուսի ճանապարհին, և պատմեք Ղուկաս ԻԴ.13–46-ի պատմությունը:

Բացատրեք, որ երկու աշակերտները չճանաչեցին Հիսուսին, երբ նա խոսեց նրանց հետ: Աշակերտները Հիսուսին պատմեցին այն ամենի մասին, ինչ տեղի ունեցավ այդ օրը գերեզմանի մոտ: Երբ Հիսուսը նրանց հետ ընթրիքի նստեց, նա կտորների բաժանեց հացը, օրհնեց և տվեց աշակերտներին: Այդ ժամանակ նրանք հասկացան, թե ով էր նա: Այդ ժամանակ Հիսուսը անհետացավ:

- Ձեր կարծիքով, ինչպե՞ս զգացին աշակերտները Հիսուսին տեսնելուց հետո:
- Եթե դուք լինեիք աշակերտներից մեկը և տեսնեիք Հիսուսին, ի՞նչ կանեիք:

Բացատրեք, որ երկու աշակերտները շտապեցին Երուսաղեմ մյուս աշակերտներին հայտնելու, որ տեսել են Հիսուսին: Նրանից հետո, երբ նրանք մյուսներին պատմեցին պատահածի մասին, Հիսուսը հայտնվեց:

Բարձրաձայն կարդացեք Ղուկաս ԻԴ.36–37: Բացատրեք, որ աշակերտները վախեցած էին, երբ տեսան Հիսուսին, որովհետև կարծում էին, թե նա հոգի էր:

Ցույց տվեք նկար 2-64, Հիսուսը ցույց է տալիս իր վերքերը:

Բացատրեք, որ Հիսուսը ցանկացավ, որ աշակերտները դիպչեին նրա մարմնին, որպեսզի իմանային, որ նա հարություն էր առել: Բարձրաձայն կարդացեք Ղուկաս ԻԴ.39–40:

Երեխաներին ասացեք, որ Հիսուսը նաև ուտելիք խնդրեց: Նա կերավ, աշակերտներին ցույց տալու համար, որ մսից և ոսկրից իր ֆիզիկական մարմինը նորից միացել է հոգուն կազմելով հարություն առած մարմին (տե՛ս Ղուկաս ԻԴ.41–43):

**Քանի որ Հիսուս Քրիստոսը հարություն առավ, մենք հարություն կառնենք**

Ուսուցչի ելույթ

Երեխաներին ասացեք, որ Հիսուս Քրիստոսը, մեր Փրկիչը, խոստացել է, որ բոլոր մարդիկ նորից կապրեն մահից հետո: Մենք բոլորս հարություն կառնենք, ճիշտ ինչպես Հիսուսը, և կունենանք հիանալի հարություն առած մարմին նրա նման: Քանի որ նա սիրում է մեզ, նա դա հնարավոր դարձրեց մեզ համար:

Վարժություն

Ցույց տվեք նկարը, որը ծածկված է թղթի ութ կտորներով: Բացատրեք, որ թղթերի ետևում թաքնված է մի հատուկ նկար: Երեխաներին խնդրեք հերթով ընտրել 1-ից 8 համարները: Տվեք համապատասխան հարցը և խնդրեք դասարանին պատասխանել (եթե անհրաժեշտ է, օգնեք երեխաներին): Նրանից հետո, երբ դասարանը պատասխանի տվյալ հարցին, երեխաներից մեկին խնդրեք վերցնել համապատասխան թղթի կտորը, բացելով նկարի մի մասը:

Վարժության համար օգտվեք հետևյալ հարցերից (կամ հնարեք ինքներդ).

1. Ո՞վ հարություն կառնի: (Բոլորը:)
2. Ի՞նչ է նշանակում հարություն առնել: (Նորից ապրել, մահից հետո ունենալ հոգին ու մարմինը նորից միասին:)
3. Ի՞նչ ի նկատի ուներ հրեշտակը, երբ ասում էր. «Նա հարություն առավ»: (Հիսուս Քրիստոսը հարություն էր առել:)
4. Ի՞նչ արեց Հիսուս Քրիստոսը հարություն առնելուց հետո: (Նա քայլեց, խոսեց, կերավ, հայտնվեց Մարիամ Մագդաղենացուն և աշակերտներին, թույլ տվեց, որ աշակերտները շոշափեն իր ձեռքերն ու ոտքերը:)
5. Ո՞վ է մեր Փրկիչը: (Հիսուս Քրիստոսը:)
6. Ո՞ւմ հայտնվեց Հիսուս Քրիստոսը հարությունից հետո: (Մարիամ Մագդաղենացուն և իր աշակերտներից շատերին:)
7. Արդյո՞ք Հիսուս Քրիստոսը ապրում է այժմ: (Այո, երկնքում, Երկնային Հոր հետ:)
8. Ինչո՞ւ Հիսուսը ցանկացավ մեռնել և հարություն առնել մեզ համար: (Որովհետև նա սիրում է մեզ և ցանկանում է, որ մենք կարողանանք նորից ապրել իր և Երկնային Հոր հետ:)

Երբ ողջ նկարը կբացվի, բացատրեք, որ սա հարություն առած Հիսուս Քրիստոսի նկարն է: Երբ մենք տեսնում ենք այս նկարը, մենք հիշում ենք, որ քանի որ Հիսուսը հարություն առավ, բոլորը հարություն կառնեն:

**Ամփոփում**

Վկայություն

Կիսվեք Հիսուս Քրիստոսի հանդեպ ձեր սիրո զգացմունքներով և բերեք ձեր վկայությունը նրա և նրա հարության մասին: Երեխաներին հիշեցրեք, որ «Նա հարություն առավ» լուրը բարի լուր է բոլորի համար:

Երեխաներից մեկին հրավիրեք ասել փակիչ աղոթքը: Երեխային առաջարկեք շնորհակալություն հայտնել Երկնային Հորը, որն ուղարկեց իր Որդուն՝ Հիսուս Քրիստոսին, որ հնարավոր դարձնի մեզ համար նորից ապրել մահից հետո:

---

**Լրացուցիչ վարժություններ**

Հետևյալ վարժություններից ընտրեք նրանք, որոնք լավագույնս կհամապատասխանեն ձեր դասարանի երեխաներին: Դուք կարող եք դրանք օգտագործել դասի ընթացքում, որպես դասի վերանայում կամ ամփոփում: Լրացուցիչ ուղղության համար տե՛ս «Օգնություն ուսուցչին» նյութի «Դասաժամ» բաժինը:

1. Կրկնեք ձեռքի և ձեռնոցի առարկայական դասը դաս 3-ից (տե՛ս էջ 13)։ Շարունակեք միաբանությունը, բացատրելով, որ մեռնելը նման է ձեռքը ձեռնոցի միջից հանելուն։ Մարմինը (ինչպես ձեռնոցը) չի կարող շարժվել, սակայն հոգին (ինչպես ձեռքը) կենդանի է։ Հարության ժամանակ հոգին և մարմինը միանում են, և երկուսը նորից կենդանի են դառնում։

2. Երեխաներին խնդրեք կանգնել և կրկնել ձեզ հետ հավատո երրորդ հանգանակը։ Բացատրեք, որ քանի որ Հիսուս Քրիստոսը մահացավ և հարություն առավ, մենք նույնպես հարություն կառնենք, և եթե պահենք պատվիրանները, կկարողանանք մի օր նորից ապրել Հիսուսի և Երկնային Հոր հետ։ Կարող եք երեխաներին օգնել մտապահել այդ հավատո հանգանակը։

3. Երեխաների Խմբի ձեր նախագահի համաձայնությամբ հրավիրեք ծխի կամ ճյուղի որևէ անդամի գալ դասարան և կիսվել Փրկչի հանդեպ իր սիրով և Հարության մասին վկայությամբ։

4. Երեխաներին խնդրեք փակել աչքերը և ձևացնել, թե կույր են։ Բացատրեք, որ երբ մենք հարություն առնենք, այլևս չեն լինի կույրեր կամ այլ հաշմանդամներ։ Մեր մարմինները կատարյալ կլինեն։ Բոլորը կկարողանան տեսնել, լսել և վազել, ոչ ոք չի ունենա ֆիզիկական խնդիրներ։ Ոչ ոք չի հիվանդանա։ Երեխաներին խնդրեք բացել աչքերը և խոսեք այն մասին, թե որքան հիանալի կլինի ունենալ կատարյալ մարմիններ։

Դաս
42

# Հիսուս Քրիստոսի Եկեղեցին երկրի վրա

**Նպատակ**

Օգնել յուրաքանչյուր երեխայի հասկանալ, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին նույն եկեղեցին է, որը Քրիստոսը հիմնեց, երբ երկրի վրա էր:

**Նախապատրաստություն**

1. Աղոթքով ուսումնասիրեք Վարդապետություն և Ուխտեր 115.4: Տե՛ս նաև Ավետարանի Սկզբունքները (31110), գլուխներ 16 և 17:

2. Ուսումնասիրեք աշխարհի քարտեզը, որը տրված է դասի վերջում և գտեք մի քանի վայրեր, որոնք ծանոթ են երեխաներին, ներառյալ ձեր նահանգը կամ երկիրը:




3. Գրատախտակին, պատին փակցված կամ հատակին դրված նկարները դասի ընթացքում պետք է լինեն հետևյալները.

4. Պահանջվող նյութեր.
   ա. Աստվածաշունչ և Վարդապետություն և Ուխտեր
   բ. Կպչող ժապավեն կամ կպչող այլ պիտույք (ըստ հայեցողության)
   գ. Նկար 2-3, Հիսուս Քրիստոսը (Gospel Art Picture Kit 240; 62572); նկար 2-19, Հովհաննես Մկրտիչը մկրտում է Հիսուսին (Gospel Art Picture Kit 208; 62133); նկար 2-20, Մկրտվող տղան (62018); նկար 2-37, Լեռան Քարոզը (Gospel Art Picture Kit 212; 62166); նկար 2-38, Առաջին Տեսիլքը (Gospel Art Picture Kit 403; 62470); նկար 2-66, Քրիստոսը ձեռնադրում է Առաքյալներին (Gospel Art Picture Kit 211; 62557); նկար 2-67, Հիսուսը օրհնում է առաջին հաղորդությունը; նկար 2-68, Մելքիսեդեկյան Քահանայության վերականգնումը (Gospel Art Picture Kit 408; 62371); նկար 2-69, Երեխան ընդունում է հաղորդությունը; նկար 2-70, Երեխաները ողջ աշխարհում:

5. Անհրաժեշտ պատրաստություններ կատարեք այն լրացուցիչ վարժությունների համար, որոնք ցանկանում եք անցկացնել:

---

**Դասի առաջարկվող ընթացք**

Երեխաներից մեկին խնդրեք ասել բացիչ աղոթքը:

Եթե երեխաներին խնդրել եք շաբաթվա ընթացքում ինչ-որ բան կատարել, ստուգեք:

**Հիսուս Քրիստոսը հիմնեց Իր Եկեղեցին Սուրբ Երկրում**

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Երեխաներին ցույց տվեք աշխարհի քարտեզը, որը գտնվում է դասի վերջում:

- Ի՞նչ է սա: (Քարտեզ:)

Համառոտ քննարկեք քարտեզը և այն, թե ինչ նպատակով են դրանք օգտագործվում: Երեխաներին ցույց տվեք քարտեզի վրա, թե որտեղ են իրենք ապրում: Ցույց տվեք այլ վայրեր, որոնց հետ երեխաները ծանոթ են, օրինակ, թե որտեղից է միսիոները, կամ որտեղից է տեղափոխվել ծխի կամ ճյուղի նոր ընտանիքը:

Բացատրեք, որ այս քարտեզի վրա կա մի վայր, որը հաճախ կոչվում է Սուրբ Երկիր: Ցույց տվեք այդ վայրը: Բացատրեք, որ այդտեղ է մեծացել Քրիստոսը, մարդկանց սովորեցրել ավետարանը և կազմակերպել իր եկեղեցին: Երեխաներին հիշեցրեք, որ այս տարի Երեխաների Խմբում նրանք շատ բան սովորեցին Հիսուսի ու նրա ուսմունքների մասին, որոնք նա տվեց մարդկանց Սուրբ Երկրում:

Ուսուցչի ելույթ

Ցույց տվեք Աստվածաշունչը և բացեք Նոր Կտակարանը: Երեխաներին հիշեցրեք, որ այս գիրքը պարունակում է պատմություններ Հիսուս Քրիստոսի և Սուրբ Երկրի մարդկանց մասին: Մենք Նոր Կտակարանում կարող ենք կարդալ այն մասին, թե ինչպես Հիսուսը կազմակերպեց իր եկեղեցին Սուրբ Երկրում:

Վարժություն նկարներով

Երեխաներին ասացեք, որ պատրաստվում եք քննարկել Հիսուս Քրիստոսի եկեղեցու որոշ մասերը, որը նա կազմակերպեց Սուրբ Երկրում, երբ երկրի վրա էր: (Կարող եք նշել, որ Հիսուսը նույն ձևով կազմակերպեց իր եկեղեցին Նեփիացիների մեջ, երբ իր խաչումից հետո այցելեց Ամերիկան:)

Ցույց տվեք նկար 2-37, Լեռան Քարոզը, և երեխաներից մեկին խնդրեք դնել այն գրատախտակի վերևի ձախ անկյունում, պատին կամ հատակին դասարանի առաջ:

- Ի՞նչ է ցույց տալիս այդ նկարը: (Հիսուս Քրիստոսը սովորեցնում է մարդկանց:)
- Հիսուսի ո՞ր ուսմունքներն եք դուք հիշում:

Բացատրեք, որ Հիսուսը սիրում էր մարդկանց, որոնց սովորեցնում էր, և ուզում էր, որ նրանք իմանային ավետարանը, այն բաները, որ Երկնային Հայրը ցանկանում էր, որ նրանք անեին: Պատճառներից մեկը, որով Հիսուսը կազմակերպեց իր եկեղեցին, օգնելն էր մարդկանց սովորել ավետարանը: Բացատրեք, որ *կազմակերպել* նշանակում է հավաքել միասին կարգավորված ձևով:

- Ինչո՞ւ էր Հիսուսն ուզում, որ մարդիկ ունենային ավետարանը: (Սա սիրում էր նրանց և ցանկանում, որ նրանք իմանային, թե ինչպես նորից ապրել Երկնային Հոր հետ:)

Ցույց տվեք նկար 2-19, Հովհաննես Մկրտիչը մկրտում է Հիսուսին, և երեխաներից մեկին խնդրեք դնել այն Լեռան Քարոզը նկարի տակ:

Երեխաներին խնդրեք ձեզ ասել, թե ինչ գիտեն այդ նկարի մասին: Բացատրեք, որ Հիսուսը օրինակ ցույց տվեց, թե ինչպես մենք պետք է մկրտվենք: Ընկղմամբ մկրտությունը մի անձի կողմից, որը կրում է քահանայություն, Հիսուսի եկեղեցու կարևոր մասն է:

Ցույց տվեք նկար 2-66, Քրիստոսը ձեռնադրում է Առաքյալներին, և երեխաներից մեկին խնդրեք դնել այն մկրտության նկարի տակ:

Բացատրեք, որ Հիսուս Քրիստոսը ընտրեց տասներկու տղամարդկանց, որոնք պետք է օգնեին ղեկավարել իր եկեղեցին (ոչ բոլոր տղամարդիկ են նկարված նկարի վրա): Այդ տղամարդիկ կոչվեցին Առաքյալներ: Հիսուսը նրանց քահանայություն տվեց, որպեսզի նրանք օգնեին ղեկավարել իր եկեղեցին և ծառայել մարդկանց:

Ցույց տվեք նկար 2-67, Հիսուսը օրհնում է առաջին հաղորդությունը, և երեխաներից մեկին խնդրեք դնել այն Առաքյալների նկարի տակ:

Երեխաներին խնդրեք ասել, թե ինչ գիտեն այդ նկարի մասին: Երեխաներին հիշեցրեք, որ Հիսուս Քրիստոսը մարդկանց տվեց հաղորդությունը, որպեսզի նրանք հիշեն իրեն:

Ցույց տվեք նկար 2-3, Հիսուս Քրիստոսը, և երեխաներից մեկին խնդրեք դնել այն առաջին հաղորդության նկարի տակ:

Երեխաներին ասացեք, որ Հիսուսը ցանկանում էր, որ բոլորն իմանային, որ ճշմարիտ եկեղեցին Հիսուս Քրիստոսի Եկեղեցին էր:

### Հիսուս Քրիստոսը կազմակերպեց իր Եկեղեցին մեզ համար

Ուսուցչի ելույթ

Բացատրեք, որ Առաքյալները ղեկավարեցին Եկեղեցին Քրիստոսի մահից հետո: Սակայն երբ Առաքյալները մահացան, մարդիկ սկսեցին մոռանալ Հիսուսին և Առաքյալներին: Նրանք այլևս չէին հնազանդվում պատվիրանների կամ հետևում Հիսուսի ուսմունքներին: Շուտով Հիսուս Քրիստոսի Եկեղեցին այլևս երկրի վրա չէր: Անցան հարյուրավոր տարիներ և կային շատ տարբեր եկեղեցիներ, սակայն դրանցից ոչ մեկը չուներ ճշմարիտ քահանայություն:

Երեխաներին ասացեք, որ Երկնային Հայրը և Հիսուսը միևնույն է սիրում էին երկրի մարդկանց: Նրանք ուզում էին, որ Հիսուս Քրիստոսի Եկեղեցին կրկին լիներ երկրի վրա, որպեսզի մարդիկ կարողանային սովորել ավետարանը:

Քարտեզ

Նորից ցույց տվեք աշխարհի քարտեզը և երեխաներին ասացեք, որ 1820 թվին Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը հայտնվեցին Ջոզեֆ Սմիթին, որն ապրում էր Նյու Յորքում, Միացյալ Նահանգներ: Երեխաներին քարտեզի վրա ցույց տվեք Նյու Յորքը:

Վարժություն նկարով

Ցույց տվեք նկար 2-38, Առաջին Տեսիլքը, և երեխաներին խնդրեք այն դնել Լեռան Քարոզի նկարի կողքին:

Երեխաներին խնդրեք ասել, թե ինչ գիտեն նկարի մասին: Բացատրեք, որ Հիսուսը Ջոզեֆ Սմիթին պատվիրեց կազմակերպել Հիսուս Քրիստոսի Եկեղեցին, ճիշտ այնպես, ինչպես Հիսուսն ինքը կազմակերպեց այն, երբ երկրի վրա էր:

Ցույց տվեք Վարդապետություն և Ուխտերը: Շեշտեք, որ ինչպես Նոր Կտակարանն է պարունակում Հիսուսի ուսմունքները, երբ նա երկրի վրա էր, այնպես Վարդապետություն և Ուխտերը պարունակում է Հիսուսի ուսմունքները, տրված Ջոզեֆ Սմիթին և մեր օրերի մյուս մարգարեներին:

Ցույց տվեք նկար 2-20, Մկրտվող տղան, և երեխաներից մեկին խնդրեք դնել այն մկրտվող Հիսուս Քրիստոսի նկարի կողքին:

Երեխաներին խնդրեք պատմել նկարի մասին: Նշեք, որ երեխան մկրտվում է ընկղմամբ (ամբողջովին ծածկվելով ջրով) քահանայություն կրողի կողմից, ինչպես մկրտվեց Հիսուսը:

Ցույց տվեք նկար 2-68, Մելքիսեդեկյան Քահանայության վերականգնումը, և երեխաներից մեկին խնդրեք դնել այն Առաքյալներին ձեռնադրող Հիսուսի նկարի կողքին:

Մելքիսեդեկյան Քահանայության վերականգնման նկարի վրա ցույց տվեք Պետրոսին, Հակոբոսին և Հովհաննեսին: Բացատրեք, որ Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեսը առաջին երեք Առաքյալներն էին, ում տրվեց Հիսուս Քրիստոսի քահանայությունը: Երեխաներին ասացեք, որ Հիսուսը Պետրոսին, Հակոբոսին և Հովհաննեսին նորից ուղարկեց երկիր, որ քահանայություն տային Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուդերիին: Հիսուսը գիտեր, որ մենք քահանայության կարիքն ենք ունենալու, ինչպես դրա կարիքն ունեին իր եկեղեցու առաջին անդամները:

Ցույց տվեք նկար 2-69, Երեխան ընդունում է հաղորդությունը, և երեխաներից մեկին խնդրեք դնել այն առաջին հաղորդությունը օրհնող Հիսուսի նկարի կողքին:

- Ի՞նչ է կատարվում այս նկարի վրա:
- Ինչո՞ւ ենք մենք ընդունում հաղորդությունը:

Նշեք, որ Հիսուս Քրիստոսը մեզ տվել է հաղորդությունը այն նույն պատճառով, որով տվեց Առաքյալներին Սուրբ Երկրում՝ օգնելու համար հիշել իրեն:

Տեղաշարժեք նկար 2-3, Հիսուս Քրիստոսը, որպեսզի այն հայտնվի նկարների երկու շարքերի մեջտեղում:

Բացատրեք, որ մենք Հիսուս Քրիստոսի եկեղեցու անդամներ ենք, ինչպես Սուրբ Երկրի նրա հետևորդները:

Սուրբ գրություն

- Ո՞րն է Հիսուս Քրիստոսի եկեղեցու անվանումն այսօր:

Բարձրաձայն կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 115.4: Բացատրեք, որ *վերջին-օրեր* նշանակում է այն ժամանակը, որում մենք ապրում ենք, իսկ *սրբերը* այն մարդիկ են, ովքեր հնազանդվում են Հիսուսի ուսմունքներին:

Երեխաներին խնդրեք կանգնել և միասին մի քանի անգամ ասել. «Ես պատկանում եմ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցուն»:

Ուսուցչի ելույթ

Արագ համեմատեք նկարների երկու սյունակները, շեշտելով, որ Հիսուսի եկեղեցին նույնն է այսօր, ինչպես Սուրբ Երկրում էր: Հիսուսը տվեց մեզ իր ուսմունքները, ինչպես տվել էր Սուրբ Երկրի մարդկանց:

Քարտեզ

Նորից ցույց տվեք աշխարհի քարտեզը: Նորից ցույց տվեք Սուրբ Երկիրը և բացատրեք, որ երբ Հիսուսը երկրի վրա էր, նրա եկեղեցու անդամների մեծ մասը ապրում էին Սուրբ Երկրում:

- Որտե՞ղ են ապրում Հիսուս Քրիստոսի եկեղեցու անդամներն այսօր:

Ուսուցչի ելույթ

Ցույց տվեք նկար 2-70, Երեխաները ողջ աշխարհում, և բացատրեք, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամները ապրում են ողջ աշխարհում: Շեշտեք, որ նկարի վրայի երեխաները տարբեր երկրներից են: Բացատրեք, որ Հիսուսը ցանկանում էր, որ ոչ թե միայն մեկ կամ երկու երկրների, այլ բոլոր մարդիկ սովորեին իր ուսմունքները և պատկանեին իր եկեղեցուն:

**Ամփոփում**

Համընկումների խաղ

Գրատախտակից, սեղանից կամ հատակից վերցրեք բոլոր նկարները, բացի նկար 2-3-ից, Հիսուս Քրիստոսը: Խառնեք նկարները և երկու շարքով դրեք հատակի վրա, հակառակ կողմով (փոքր երեխաների համար ճիշտ կողմով դրեք, որ նկարը երևա):

Երեխաներին ասացեք, որ այս խաղի նպատակը նկարները համապատասխանեցնելն է: Հերթով երեխաներին խնդրեք շրջել երկու նկար: Եթե նկարները համընկնում են, օրինակ եթե Հիսուսը մկրտվում է նկարը բացվում է մկրտվող տղայի նկարի հետ, ապա երեխային խնդրեք ասել, թե Հիսուս Քրիստոսի եկեղեցու որ մասն են ներկայացնում այդ նկարները: Եթե նկարները չեն համընկնում, երեխային խնդրեք նորից դնել նկարները հակառակ կողմով: (Եթե կարծում եք, որ երեխաների ուշադրությունը նկարների հակառակ կողմի նկարների պատճառով կշեղվի, ապա հակառակ կողմի նկարները թղթերով ծածկեք:)

Շարունակեք, մինչև որ բոլոր չորս համընկումները արվեն: Եթե մեծ դասարան ունեք, կարող եք խառնել նկարները նորից և կրկնել նույն խաղը, որպեսզի բոլորը մասնակցելու հնարավորություն ունենան:

Վկայություն

Վկայեք, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին այն նույն եկեղեցին է, որը Հիսուսը կազմակերպեց, երբ երկրի վրա էր: Երեխաներին պատմեք ձեր զգացմունքների մասին ավետարանի այն գաղափարի շուրջ, որը քննարկվում էր այսօրվա դասում (մկրտություն, քահանայություն կամ հաղորդություն):

Երեխաներին խրախուսեք իրենց ընտանիքներին պատմել այն, ինչ սովորեցին այսօր: Կարող եք մի քանի հարց տալ, օգնելու երեխաներին արագ կրկնել դասում ուսուցանված մտքերը:

Երեխաներից մեկին խնդրեք ասել փակիչ աղոթքը: Նրան առաջարկեք շնորհակալություն հայտնել Երկնային Հորը Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու համար:

---

**Լրացուցիչ վարժություններ**

Հետևյալ վարժություններից ընտրեք նրանք, որոնք լավագույնս կհամապատասխանեն ձեր դասարանի երեխաներին: Դուք կարող եք դրանք օգտագործել դասի ընթացքում, որպես դասի վերանայում կամ ամփոփում: Լրացուցիչ ուղղության համար տե՛ս «Օգնություն ուսուցչին» նյութի «Դասաժամ» բաժինը:

1. Երեխաներին խնդրեք մտապահել հավատո վեցերորդ հանգանակի առաջին մասը. «Մենք հավատում ենք նույն կազմակերպությանը, որ գոյություն է ունեցել սկզբնական Եկեղեցում»: Բացատրեք, որ *սկզբնական Եկեղեցի* նշանակում է Եկեղեցին Սուրբ Երկրում երկրի վրա Հիսուսի ապրած ժամանակ:
2. Երեխաներին թուղթ և մատիտներ բաժանեք և խնդրեք նկարել իրենց եկեղեցում կամ հավաքատանը: Երեխաներին օգնեք հասկանալ, որ Եկեղեցին միայն շենք չէ: Այն կազմակերպություն է, որն օգնում է մեզ սովորել, ապրել այնպես, որպեսզի մի օր կարողանանք վերադառնալ և ապրել Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հետ:

Նյու
Յորք
Սուրբ
Երկիր

Դաս
43

# Հիսուս Քրիստոսը նորից կգա

**Նպատակ**

Օգնել յուրաքանչյուր երեխայի պատրաստվել Հիսուս Քրիստոսի երկրորդ գաստին, հետևելով Հիսուսի ուսմունքներին:

**Նախապատրաստություն**

1. Աղոթքով ուսումնասիրեք Մաթեոս ԻԴ.36, Ղուկաս ԻԴ.50–53, և Գործք Ա.3, 9–11: Տե՛ս նաև *Ավետարանի Սկզբունքները* (31110), գլուխ 43:

2. Պատրաստեք մեկ օրինակ «Պատրաստվել Հիսուսի գալստին» սեղանի խաղի համար, որը գտնվում է ձեռնարկի վերջին էջերում (եթե օրինակ հնարավոր չէ պատրաստել, զգուշորեն հանեք էջերը ձեռնարկի միջից): Խաղը փակցրեք հաստ թղթի վրա: Այս խաղը պահեք հետագայում դասերի ժամանակ օգտագործելու համար:

   Եթե ձեր դասարանը մեծ է, կարող եք պատրաստել խաղի երկրորդ օրինակը, որպեսզի երկու խմբերը խաղան միևնույն ժամանակ: Երեխաների Խմբի ղեկավարին կամ ծնողներից մեկին խնդրեք գալ դասարան և ղեկավարել երկրորդ խաղը:

3. Խաղի համար կտրեք թղթի տասներկու փոքր կտորներ: Համար գրեք յուրաքանչյուր թղթի վրա, օգտագործելով 1-ից 6 համարները երկու անգամ: Ծալեք թղթերը և դրեք արկղի մեջ:

4. Պատրաստվեք պատմել այն ժամանակների մասին, երբ ձեր մտերիմներից մեկը որոշ ժամանակ տնից հեռու է եղել: Պատրաստվեք խոսելու այն մասին, թե ինչպես եք կարոտել այդ մարդուն և ինչպես եք դուք պատրաստվել այդ մարդու վերադարձին:

5. Պահանջվող նյութեր.
   ա. Աստվածաշունչ
   բ. Փոքր իր, օրինակ կոճակ կամ քար, յուրաքանչյուր երեխայի համար: Այդ առարկաները կարող են օգտագործվել խաղի ընթացքում, յուրաքանչյուրը պետք է տարբեր լինի (գույնով, ձևով կամ չափսով), որպեսզի երեխաները ճանաչեն իրենց կոճակները:
   գ. Նկար 2-62, Մարիամը և հարություն առած Տերը (Gospel Art Picture Kit 233; 62186); նկարը 2-64, Հիսուսը ցույց է տալիս Իր վերքերը (Gospel Art Picture Kit 234; 62503); նկար 2-65, Հարություն առած Հիսուս Քրիստոսը (Gospel Art Picture Kit 239; 62187); նկար 2-71, Հիսուսի համբարձումը (Gospel Art Picture Kit 236; 62497):

6. Անհրաժեշտ պատրաստություններ կատարեք այն լրացուցիչ վարժությունների համար, որոնք ցանկանում եք անցկացնել:

**Դասի առաջարկվող ընթացք**

Երեխաներից մեկին խնդրեք ասել բացիչ աղոթքը:

Եթե երեխաներին խնդրել եք շաբաթվա ընթացքում ինչ-որ բան կատարել, ստուգեք:

## Մենք պատրաստվում ենք մեր սիրած մարդկանց վերադարձին

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Պատմեք այն ժամանակի մասին, երբ ձեզ մտերիմ որևէ մարդ որոշ ժամանակով հեռու է եղել: Բացատրեք, ինչ դուք զգացիք, երբ նա գնաց և որքան էիք սպասում, որ նա վերադառնար: Պատմեք այն պատրաստությունների մասին, որ արել եք ձեր սիրած մարդու վերադարձի համար և ինչ եք զգացել, երբ նա վերադարձել է:

Երեխաներին օգնեք մտածել այն ժամանակների մասին, երբ որևէ մեկը, որին նրանք սիրում են, որոշ ժամանակով հեռու է եղել: Դրանք կարող են լինել ծնողները, որոնք գործուղման են գնացել, մայրը, որը հիվանդանոց է գնացել երեխա ունենալու համար, կամ քույրը, եղբայրը, կամ ընտանիքի որևէ այլ անդամը, որը միսիայի է գնացել: Երեխաների հետ քննարկեք նրանց ունեցած զգացումները, այդ մարդկանց հեռանալու և վերադառնալու հետ կապված: Շեշտեք, որ մենք կարոտում ենք մեր հարազատներին, երբ նրանք հեռանում են, և մենք երջանիկ ենք, երբ նրանք վերադառնում են տուն: Երեխաներին խնդրեք խոսել այն պատրաստությունների մասին, որոնք նրանք և նրանց ընտանիքի անդամները կատարում են մարդկանց դիմավորելու համար, օրինակ, տան մաքրությունը կամ ձևավորումը, հատուկ ուտելիքի պատրաստումը կամ հատուկ զգեստներ կրելը:

## Հիսուս Քրիստոսը կվերադառնա

Ուսուցչի ելույթ

Բացատրեք, որ երբ Հիսուս Քրիստոսը ապրում էր երկրի վրա, նա ընկերներ ուներ, որոնք իրեն շատ էին սիրում: Այդ ընկերները հետևում էին նրան և լսում նրա ուսմունքները: Քանի որ նրանք անում էին այն, ինչ նա ասում էր նրանց, նրանք կոչվեցին նրա աշակերտները:

Բացատրեք, որ Հիսուսը սիրում էր իր աշակերտներին: Նա նրանց օգնում էր սովորել այն, ինչ պետք էր անել իր և Երկնային Հոր հետ նորից միասին ապրելու համար: Նա նրանց օգնում էր հասկանալ սխալի և ճշտի միջև տարբերությունը, որպեսզի նրանք կարողանային ճիշտը ընտրել:

Քննարկում նկարի շուրջ

Ցույց տվեք նկար 2-62, Մարիամը և հարությունառած Տերը, և նկար 2-64, Հիսուսը ցույց է տալիս Իր վերքերը: Երեխաներին հիշեցրեք, որ մի քանի շաբաթ առաջ (դաս 41) նրանք սովորեցին այն մասին, թե ինչպես Հիսուսը այցելեց իր աշակերտներին հարությունից հետո: Երեխաներին թույլ տվեք մի քանի վայրկյան խոսել նկարների մասին:

Բացատրեք, որ Հիսուսը այցելեց և սովորեցրեց իր աշակերտներին քառասուն օրերի ընթացքում (տե՛ս Գործք Ա.3): Նա ուզում էր հավաստիանալ, որ նրանք գիտեն, որ նա կենդանի է, և հասկանում են իր ուսմունքները: Հիսուսը ուզում էր, որ աշակերտները հնազանդվեին իր ուսմունքներին անգամ այն ժամանակ, երբ նա այլևս իրենց հետ չէր:

Պատմվածք սուրբ գրություններից

Ցույց տվեք նկար 2-71, Հիսուսի համբարձումը: Ձեր բառերով պատմեք Քրիստոսի երկինք համբարձվելու պատմությունը, ինչպես նկարագրված է Ղուկաս ԻԴ.50–53 և Գործք Ա.9–11: Շեշտեք հետևյալ կետերը.

1. Հիսուսը աշակերտներին օրհնություն տվեց:
2. Հիսուսը թողեց իր աշակերտներին և ամպի վրա բարձրացավ երկինք Երկնային Հոր մոտ:
3. Աշակերտները կանգնած նայում էին, մինչև Հիսուսն անհետացավ:

Երեխաներին ասացեք, որ երբ աշակերտները կանգնած նայում էին երկինք, երկու հրեշտակ, ճերմակ հագուստով, հայտնվեցին նրանց կողքին:

Բարձրաձայն կարդացեք այն, ինչ հրեշտակներն ասացին աշակերտներին Գործք Ա.11-ում (սկսած *Ի՞նչ եք կանգնել)*:

Բացատրեք, որ հրեշտակները աշակերտներին ասացին, որ Հիսուս Քրիստոսը կվերադառնա երկիր այնպես, ինչպես հեռացավ: Երեխաներին ասացեք, որ մենք դա կոչում ենք Երկրորդ Գալուստ:

Շեշտեք, որ մենք ճշգրիտ չգիտենք, թե երբ Հիսուսը նորից կգա: Միայն Երկնային Հայրը գիտի ճշգրիտ ժամանակը (տե՛ս Մաթեոս ԻԴ.36): Սակայն մենք գիտենք, որ մի օր Հիսուսը կվերադառնա և կապրի երկրի վրա:

Քննարկում

Ցույց տվեք նկար 2-65, Հարություն առած Հիսուս Քրիստոսը:

Բացատրեք, որ երբ Հիսուսը նորից գա, նա կապրի երկրի ժողովրդի հետ: Բոլորը կիմանան, որ նա Հիսուս Քրիստոսն է, մեր Փրկիչը, և կերկրպագեն նրան:

- Դուք կուզենայի՞ք լինել այստեղ, երբ Հիսուսը նորից գար: Ինչո՞ւ:

Երեխաների հետ քննարկեք, թե որքան հիանալի կլինի երկրի վրա, երբ Հիսուսը նորից գա: Մարդիկ կկարողանան տեսնել Հիսուսին, քայլել և խոսել նրա հետ, նրա սիրող ձեռքերը կարող են գրկել նրանց: Շեշտեք, որ Հիսուսի գալստից հետո բոլորը ընկերներ կլինեն: Չեն լինի չար մարդիկ: Մենք կարիք չենք ունենա կողպել մեր դռները, որովհետև ամեն ինչ և ամեն մարդ ապահով կլինի: Չի լինի ոչ հիվանդություն, ոչ ցավ, և բոլոր կենդանիները ընկերներ կլինեն մեզ և միմյանց հետ:

Կրկնողություն

Երեխաներին տվեք Երկրորդ Գալստի մասին հետևյալ հարցերը: Նրանց ասացեք կանգնել, երբ գիտեն հարցի պատասխանը: Երբ առնվազն մի քանի երեխա կանգնած կլինի, նրանցից մեկին խնդրեք պատասխանել: Եթե ոչ ոք չի կանգնում, կամ երեխաները շփոթված են կամ կասկածում են իրենց պատասխանի մեջ, նորից կրկնեք տեղեկությունը:

- Քանի օր Հիսուս Քրիստոսը այցելեց իր աշակերտներին հարությունից հետո: (Քառասուն:)
- Ո՞վ գիտի, թե երբ Հիսուսը նորից կգա: (Միայն Երկնային Հայրը: Ոչ ոք երկրի վրա չգիտի:)
- Հիսուսի գալուց հետո կլինե՞ն արդյոք պատերազմներ կամ կռիվներ: (Ոչ: Երկրի վրա բոլորը ընկերներ կլինեն:)
- Երբ Հիսուսը նորից գա, ի՞նչ կպատահի այն մարդկանց, ովքեր հիվանդ են կամ հաշմանդամ: (Նրանք կբուժվեն: Չի լինի այլևս հիվանդություն կամ ցավ, երբ Հիսուսը վերադառնա երկիր:)
- Ինչպիսի՞ն կլինեն կենդանիները, երբ Հիսուսը նորից գա: (Նրանք բոլորը ընկերներ կլինեն մեզ և միմյանց համար:)

**Մենք կարող ենք պատրաստվել Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալստին**

Ուսուցչի ելույթ

Երեխաներին հիշեցրեք այն պատրաստությունների մասին, որոնք նրանք կատարում էին, երբ իրենց հարազատները տուն էին վերադառնում: Բացատրեք, որ մենք պետք է պատրաստվենք նաև Հիսուս Քրիստոսի վերադարձին երկիր: Մենք կարող ենք պատրաստվել, սովորելով Հիսուսի ուսմունքները և հետևելով դրանց:

Շեշտեք, որ եթե մենք պատրաստ լինենք, մենք երջանիկ կլինենք տեսնելու Փրկչին: Նա ցանկանում է, որ բոլորը նորից իր հետ ապրեն, սակայն միայն նրանք, ովքեր հետևում են նրա ուսմունքներին և ընտրում են ճիշտը, կկարո-

ղանան դա անել: Հիսուսը իր աշակերտներին օգնեց սովորել այն, ինչ նրանք պետք է անեին իր հետ նորից ապրելու համար, և նա նաև մեզ ուսմունքներ տվեց օգնելու պատրաստվել նրա վերադարձին:

Խաղ

Նշեք, որ մենք չենք կարող մի օրում հասցնել պատրաստվել Հիսուսի երկրորդ գալստին: Մենք պետք է պատրաստվենք մեր ողջ կյանքի ընթացքում, հետևելով Հիսուսի ուսմունքներին:

Երեխաներին ցույց տվեք «Պատրաստվել Հիսուսի գալստին» սեղանի խաղը: Նրանց ասացեք, որ այս խաղը իրենց կհիշեցնի այն բաների մասին, որոնք կարող են անել Հիսուսի հետ ապրելուն պատրաստվելու համար:

Ցույց տվեք, թե ինչպես է խաղը նկարագրում այն լավ բաները, որոնք մենք կարող ենք անել Հիսուսին հետևելու համար: Այդ գործերը տանում են դեպի «Պատրաստվել Հիսուսի գալստին» վերնագրով մասը: Շեշտեք, որ խաղը նաև ցույց է տալիս այն սխալ բաները, որոնք մենք կարող ենք անել: Այդ գործերը տանում են դեպի «Չպատրաստվել Հիսուսի գալստին» վերնագրով մասը:

Յուրաքանչյուր երեխայի տվեք մի փոքր առարկա խաղին մասնակցելու համար: Ապա բացատրեք հետևյալ կանոնները.

1. Խաղի առարկան պետք է սկսի շարժվել «Սկիզբ» սլաքից դեպի «Պատրաստվել Հիսուսի գալստին» մասը:
2. Հերթով խաղացեք:
3. Երբ կգա ձեր հերթը, արկղից վերցրեք թղթի մի կտոր և ձեր առարկան շարժեք թղթի վրա նշված թվին համապատասխան վանդակներով: Ապա ծալեք թուղթը և նորից գցեք արկղի մեջ:
4. Երբ դուք հասնեք քառակուսուն, դուք կամ ուսուցիչը բարձրաձայն կկարդաք այն, ինչ գրված է քառակուսու վրա: Նշեք մի գործ, որը կարող եք անել այդ ուսմունքին հետևելու համար, կամ բացատրեք, թե ինչու է կարևոր անել այն, ինչ նկարագրվում է այդ քառակուսու մեջ: Եթե հասնում եք քառակուսուն, որը նկարագրում է սխալ բան, բացատրեք, թե ինչ պետք է անեք դրա փոխարեն: Եթե օգնության կարիք ունեք, ձեր ուսուցիչը ձեզ առաջարկություններ կտա:
5. Յուրաքանչյուր վանդակի սլաքը ցույց է տալիս, թե որ ուղղությամբ պետք է շարժվեք ձեր հաջորդ հերթին:

Երբ երեխան հասնում է քառակուսուն, որը հեռացնում է «Պատրաստվել Հիսուսի գալստին» մասից, երեխաներին օգնեք հասկանալ, որ երբ մենք սխալներ ենք կատարում, ապա չենք հետևում Հիսուսի ուսմունքներին, սակայն մենք կարող ենք փոխել մեր ուղղությունը, անելով ճիշտը:

Խաղացեք, մինչև որ բոլորը հասնեն «Պատրաստվել Հիսուսի գալստին» կամ մինչև դասի ավարտը:

**Ամփոփում**

Վկայություն

Վկայեք այն մասին, որ Հիսուս Քրիստոսը նորից երկիր կգա, թեև մենք չգիտենք, թե երբ: Երեխաներին ասացեք, թե որքան շատ եք ուզում հետևել Հիսուսի ուսմունքներին, որպեսզի հնարավորություն ունենաք տեսնել նրան, երբ նա նորից գա: Արտահայտեք ձեր ցանկությունը, որ դասարանի բոլոր երեխաները հետևեն Հիսուսի ուսմունքներին, որպեսզի դուք բոլորդ միասին լինեք նրա հետ:

ԸՃ մատանի

Երեխաներին խնդրեք նայել իրենց ԸՃ մատանիներին, եթե ունեն: Երեխաներին հիշեցրեք, որ այդ մատանիները օգնում են նրանց ընտրել ճիշտը և հետևել Հիսուսի ուսմունքներին:

Յուրաքանչյուր երեխային խնդրեք դասարանին ասել որևէ գործ, որը նա կանի գալիք շաբաթվա ընթացքում Հիսուսի երկրորդ գալստին պատրաստվելու համար:

Երեխաներից մեկին հրավիրեք ասել փակիչ աղոթքը: Սրան առաջարկեք խնդրել Երկնային Հորը օգնել դասարանի անդամներին պատրաստվել Հիսուս Քրիստոսի գալստին:

---

**Լրացուցիչ վարժություններ**

Հետևյալ վարժություններից ընտրեք նրանք, որոնք լավագույնս կհամապատասխանեն ձեր դասարանի երեխաներին: Դուք կարող եք դրանք օգտագործել դասի ընթացքում, որպես դասի վերանայում կամ ամփոփում: Լրացուցիչ ուղղության համար տե՛ս «Օգնություն ուսուցչին» նյութի «Դասաժամ» բաժինը:

1. Բացատրեք, որ հավատո տասերորդ հանգանակը Հիսուս Քրիստոսի երկրորդ գալստի մասին է: Երեխաներին օգնեք մտապահել «Մենք հավատում ենք…որ Քրիստոսն անձամբ կկառավարի երկիրը» արտահայտությունը: Երեխաներին բացատրեք այդ արտահայտության իմաստը:

2. Երեխաներին ցույց տվեք յուղի լապտեր կամ դրա նկարը: Բացատրեք, որ Հիսուսը մեզ սովորեցնում էր իր գալստին պատրաստվելու կարևորությունը տաս կույսերի (կամ աղջիկների) ու նրանց լապտերների մասին պատմության միջոցով: Պատմեք տաս կույսերի առակը, որը գտնվում է Մաթևոս ԻԵ.1–13-ում: Բացատրեք, որ յուղի լապտերները չեն կարող լուսավորել, եթե յուղ չունեն իրենց մեջ: Շեշտեք, որ քանի որ հինգ հիմար աղջիկները չէին պատրաստվել, նրանց թույլ չտրվեց մասնակցել հարսանիքին:

   Բացատրեք, որ Փրկիչը համեմատում էր հարսանիքը իր երկրորդ գալստի հետ: Իրենց լապտերների համար յուղ փնտրող աղջիկները նման են մեզ, որ պատրաստվում ենք լինելու Հիսուսի հետ: Եթե մենք պատրաստ չլինենք այն ժամանակ, երբ նա գա, ապա չենք կարողանա ապրել նրա հետ:

   Երեխաներին խնդրեք պատմել այն եղանակների մասին, որոնցով նրանք կարող են պատրաստվել Հիսուսի գալստին (կարող եք նրանց որոշ առաջարկություններ տալ, ինչպես խաղում է տրված): Սրանց օգնեք հասկանալ, որ ընտրելով ճիշտը, մենք պատրաստվում ենք Հիսուս Քրիստոսի երկրորդ գալստին:

3. Յուրաքանչյուր երեխայի կրծքանշանի վերևի մասում գրեք *Ես պատրաստվում եմ Հիսուս Քրիստոսի գալստին:* Բոլոր երեխաներին խնդրեք կրծքանշանների վրա մատիտներով նկարել իրենց Հիսուսի գասլտին պատրաստվելիս: Կրծքանշանները փակցրեք երեխաների հագուստին կամ օգնեք նրանց թել անցկացնել դրանց վերևի մասով և կախել պարանոցից:

# Ես կարող եմ սեր ցույց տալ կենդանիների հանդեպ

Դաս
44

**Նպատակ**

Խրախուսել երեխաներին հարգել և բարի լինել բոլոր կենդանի էակների հանդեպ:

**Նախապատրաստություն**

1. Աղոթքով ուսումնասիրեք Ծննդոց Զ.11–Է.24, Եսայիա ԺԱ.6–9, և Ղուկաս ԺԲ.6:
2. Պատրաստեք մեկ օրինակ դասի վերջում տրված կենդանիների քառակուսիներից (եթե դա հնարավոր չէ անել, էջը հանեք ձեռնարկից): Կտրեք քառակուսիները: Պահեք դրանք հետագա դասերում օգտագործելու համար:
3. Պատրաստվեք պատմել այն ժամանակի մասին, երբ դուք բարի եք եղել կամ տեսել եք, թե ինչպես ինչ-որ մեկը բարի է վերաբերվել որևէ կենդանու հանդեպ:
4. Պահանջվող նյութեր.
   ա. Աստվածաշունչ
   բ. Թուղթ և մատիտներ յուրաքանչյուր երեխայի համար
   գ. Նկար 2-72, Նոյը և տապանը կենդանիներով (Gospel Art Picture Kit 103; 62305); նկար 2-73, Արարում – կենդանի արարածներ (Gospel Art Picture Kit 100; 62483); նկար 2-74, Սոլթ Լեյք Թաբերնաքլ (Gospel Art Picture Kit 503; 62490)
5. Անհրաժեշտ պատրաստություններ կատարեք այն լրացուցիչ վարժությունների համար, որոնք ցանկանում եք անցկացնել:

**Դասի առաջարկվող ընթացք**

Երեխաներից մեկին խնդրեք ասել բացիչ աղոթքը:

Եթե երեխաներին խնդրել եք շաբաթվա ընթացքում ինչ-որ բան կատարել, ստուգեք:

**Կենդանիները կարևոր են**

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Խառնեք կենդանիների քառակուսիները և դրանք շրջանակի մեջ նկարով դեպի ներքև դրեք սեղանին կամ հատակին: Երեխաներին խնդրեք հերթով բացել երկու քառակուսի, և դնել նկարով դեպի վեր: Եթե երկու կենդանիները համընկնում են, ապա երեխային խնդրեք դրանք միասին դնել շրջանակի մի կողմում «կենդանիների շքերթի» շարքում: Եթե երկու կենդանիները չեն համընկնում, երեխային խնդրեք քառակուսիները դնել նկարով ներքև նույն տեղում: Շարունակեք, մինչև բոլոր կենդանիները համընկնեն և շարվեն կենդանիների շքերթում:

Երեխաներին հարցրեք, թե արդյոք շքերթի կենդանիները իրենց չեն հիշեցնում Աստվածաշնչից մի պատմություն: Եթե երեխաները չեն հիշում Նոյի և տապանի պատմությունը, մի քանի հուշում տվեք նրանց, օրինակ.

- Տերը ինչ-որ մեկին ասաց կառուցել ինչ-որ բան:
- Կենդանիները գալիս էին զույգերով:

• Քառասուն օր ու քառասուն գիշեր անձրև էր գալիս, և ջրհեղեղ եղավ երկրի վրա:

Պատմվածք սուրբ գրություններից

Ցույց տվեք նկար 2-72, Նոյը և տապանը կենդանիներով, և կրկնեք Ծննդոց Զ.11–Է.24-ում տրված պատմությունը: Բացատրեք, որ Հիսուս Քրիստոսը ուզում էր, որ կենդանիները փրկվեին ջրհեղեղի ժամանակ: Սա Նոյին ասաց կենդանիներին բերել տապան և օգնեց նրան իմանալ, թե ինչպես խնամել այդքան շատ տարբեր կենդանիների:

### Հիսուս Քրիստոսը ստեղծեց կենդանիներին

Քննարկում նկարի շուրջ

Ցույց տվեք նկար 2-73, Արարում – կենդանի արարածներ:

• Ի՞նչ կենդանիներ եք դուք տեսնում այս նկարի վրա:

• Ի՞նչն է ձեզ դուր գալիս այդ կենդանիների մեջ:

Երեխաներին հնարավորություն տվեք մի քանի րոպե խոսել կենդանիների մասին:

• Ո՞վ է ստեղծել այս կենդանիներին:

Երեխաներին հիշեցրեք, որ Երկնային Հոր ղեկավարությամբ Հիսուս Քրիստոսը ստեղծեց բոլոր կենդանիներին:

Սուրբ գրություն

Երեխաներին հիշեցրեք, որ նախորդ դասին նրանք սովորեցին Հիսուս Քրիստոսի երկրորդ գալստի մասին: Նրանց հիշեցրեք, որ երբ Հիսուսը նորից գա, կենդանիները ընկերասեր և խաղաղասեր կլինեն: Բարձրաձայն կարդացեք Եսայիա ԺԱ.6–7 նկարագրելու համար, թե ինչպես կենդանիները խաղաղ կապրեն, երբ Փրկիչը կապրի նորից երկրի վրա:

### Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը սիրում են բոլոր էակներին

Սուրբ գրություն

Բացատրեք, որ Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը ուզում են, որ բոլոր էակները, անգամ ամենափոքրները, երջանիկ լինեն: Նրանք բոլոր կենդանի էակներին կարևոր են համարում:

Բարձրաձայն կարդացեք Ղուկաս ԺԲ.6: Բացատրեք, որ այս սուրբ գրությունը մեզ ասում է, որ թեև ճնճղուկները շատ փոքր թռչյուններ են, Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը հոգ էին տանում նրանց համար:

Պատմվածք

Ցույց տվեք նկար 2-74, Սոլթ Լեյք Թաբերնաքլը:

• Դուք երբևէ դիտե՞լ եք գերագույն համաժողովը հեռուստատեսությամբ կամ արբանյակային հեռարձակմամբ եկեղեցու շենքում:

Բացատրեք, որ գերագույն համաժողովը հեռարձակվում է մի շենքից, որը կոչվում է թաբերնաքլ: Այդ թաբերնաքլը Սոլթ Լեյք Սիթիում է, Յուտա, և կառուցվել է Վերջին Օրերի պիոներների կողմից:

Ցույց տվեք Թաբերնաքլի բարձր տանիքը և բազմաթիվ դռները, և պատմեք հետևյալ պատմությունը ձեր բառերով.

Մի գարնանային երեկո Թաբերնաքլի դռները բաց էին թողնվել, որպեսզի շենքը հովանա: Մի փոքր թռչյուն աննկատելի ներս թռավ: Թռչյունը դեռ ներսում էր, երբ դռները փակվեցին և կողպվեցին:

Երբ հաջորդ առավոտ աշխատողները եկան համերգին դահլիճը պատրաստելու համար, նրանք տեսան թռչյունին և մի քանի ժամ փորձում էին հանել նրան: Նրանք կանչեցին հատուկ պատրաստված մարդկանց, որպեսզի վերջիններս երկար ձողերի վրա ամրացված ցանցերով բռնեին թռչյունին:

Երբ տնօրենը, Եղբայր Ջոնը, եկավ, նա տեսավ, ինչպես էին մարդիկ ցանցերով թռչյուն որսում: Ամեն անգամ, երբ մարդիկ ցանցերով վազում էին մի ծայրը,

թռչյունը թռչում էր մյուս ծայրը: Թաբերնաքլի բոլոր դռները բաց էին, որպեսզի թռչյունը դուրս թռչի, սակայն նա շատ վախեցած էր և չէր նկատում դա:

Հատուկ պատրաստված մարդիկ հրացաններ ունեին, և նրանք առաջարկեցին կրակել թռչյունին: Եղբայր Ջոնին դա դուր չեկավ: Հրացանը կարող էր վնասել շինությունը կամ սարքավորումները: Իսկ ավելի կարևոր էր, որ նրանք չսպանեին թռչյունին: Նա հիշեց Եկեղեցու տասներկուերորդ Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալի ելույթը փոքրիկ թռչյուններին չսպանելու մասին:

Հատուկ պատրաստված մարդիկ առաջարկեցին նաև թունավորված ուտելիք դնել թռչյունի համար: Եղբայր Ջոնը չցանկացավ անել նաև դա: Սակայն նա գիտեր, որ թռչյունին պետք էր արագ հեռացնել, որովհետև այդ երեկո կարևոր համերգ կար:

Եղբայր Ջոնը շրջվեց և մի կարճ աղոթք ասաց. «Երկնային Հայր, եթե այս ճնճղուկը կարևոր է քեզ համար, կարո՞ղ ես մեզ ասել, թե ինչպես նրան ապահով դուրս հանենք այստեղից»:

Երբ Եղբայր Ջոնն ավարտեց իր աղոթքը, նա գիտեր, ինչ անել: Նա աշխատողներին ասաց հանգցնել շենքի լույսերը և փակել բոլոր դռները բացի մեկից:

Թռչնակը նստած էր երգեհոնի վերևում, բայց երբ լույսերը հանգեցին և դռները փակվեցին, նա թռավ երգեհոնի վրայից և ուղղվեց բաց դռնով ուղիղ դուրս: (See Ronald D. John, “A Sparrow in the Tabernacle,” *Ensign,* June 1989, pp. 24–25.)

- Ինչպե՞ս Եղբայր Ջոնը ապացուցեց, որ հոգ էր տանում փոքրիկ թռչյունի մասին: (Թռչյունին կրակելու կամ թունավորելու փոխարեն, նա աղոթեց նրա համար:)
- Ինչպե՞ս եք դուք իմանում, որ Երկնային Հայրը հոգ էր տանում թռչյունի մասին: (Սա օգնեց Եղբայր Ջոնին իմանալ, թե ինչպես կարելի է հանել թռչյունին Թաբերնաքլից:)

### Մենք կարող ենք բարի լինել կենդանիների հանդեպ

Քննարկում

Բացատրեք, որ Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը ուզում են, որ մենք բոլորս հոգ տանենք կենդանիների համար, ինչպես իրենք են անում:

Երեխաներին խնդրեք պատմել իրենց տնային կենդանիների մասին: (Եթե երեխաները տանը կենդանիներ չունեն, ապա կարող են ասել, թե ինչ կենդանիներ կուզենային ունենալ:) Երեխաներին խնդրեք ասել, թե ինչպես են իրենք օգնում խնամել այդ կենդանիներին: Երեխաներին խնդրեք մնջախաղով ցույց տալ, թե ինչպես են խնամում կենդանիներին, օրինակ, ինչպես են թարմ ջուր կամ առողջ սնունդ տալիս, սանրում կամ բարությամբ խոսում նրանց հետ:

Պատմվածք

Բացատրեք, որ Եկեղեցու առաջին Նախագահ Մարգարե Ջոզեֆ Սմիթը նույնպես խոսել է կենդանիների հանդեպ բարի լինելու մասին: Ձեր բառերով պատմեք հետևյալ պատմությունը.

Մարգարե Ջոզեֆ Սմիթը և մի քանի այլ տղամարդիկ վրաններ էին կապում մի փոքր գետի ափին: Երբ Մարգարեն խփեց իր վրանը, նա տափաստանի երեք բոժոժավոր օձ գտավ: Մյուսները ուզում էին սպանել օձերին, բայց Մարգարեն թույլ չտվեց և ասաց, որ չվնասեն օձերին: Տղամարդիկ փայտերով վերցրեցին օձերին և զգուշորեն տարան գետի մյուս ափը: Մարգարեն տղամարդկանց ասաց, որ իրենց ճանապարհորդության ընթացքում չպետք է սպանեն ոչ մի օձ, թռչյուն կամ այլ կենդանի, եթե միայն ուտելու կարիք չունեն: (See *History of the Church,* 2:71–72; see also Spencer W. Kimball, *Ensign,* Nov. 1978, p. 45.)

**Ամփոփում**

Երեխաներին հիշեցրեք, որ Հիսուս Քրիստոսը ստեղծել է բոլոր կենդանիներին և որ երկրի վրա բոլոր արարածները Երկնային Հոր ծրագրի մասն են:

Վարժություն

Երեխաներին խնդրեք կանգնել և օգնեք նրանց արտասանել հետևյալ տողերը և կատարել շարժումները.

Հիսուսը սիրում է բոլոր արարածներին *(ձեռքերը պարզեք դեպի դուրս).*
Փղերին, մեծ ու բոյով *(ձեռքերը ձգեք դեպի վեր),*
Օվկիանոսի ձկներին *(իրար միացրեք ձեռքի ափերը և շարժեք, կարծես ձուկ է լողում),*
Փոքրիկ, պստիկ մկնիկին *(իջեք ներքև):*
Նա սիրում է միջատներին *(մի ձեռքի մատներով շարժեք մյուս ձեռքի վրա),*
Երկնքում թռչող թռչուններին *(թափահարեք ձեռքերը թևերի նման):*
Անտառի բարի եղջերուն *(Մատները բացած դրեք գլխի վրա, կարծես կոտոշներ լինեն),*
Բոլորը զգում են Փրկչի սերը *(ձեռքերը դրեք գլխավերևում):*

Վկայություն

Պատմեք այն ժամանակների մասին, երբ դուք կամ որևէ մեկը բարի է եղել որևէ կենդանու հանդեպ: Վկայեք, որ Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը սիրում են երկրի բոլոր արարածներին և ուզում են, որ մենք բարի լինենք նրանց հանդեպ:

Բոլոր երեխաներին խրախուսեք այս շաբաթվա ընթացքում ինչ-որ բարի արարք անեն կենդանիների համար:

Արվեստի վարժություն

Երեխաներին թուղթ և մատիտներ տվեք և խնդրեք նկարել այն, թե ինչ կարող են անել կենդանիների հանդեպ բարի լինելու համար:

Երեխաներից մեկին հրավիրեք ասել փակիչ աղոթքը:

---

**Լրացուցիչ վարժություններ**

Հետևյալ վարժություններից ընտրեք նրանք, որոնք լավագույնս կհամապատասխանեն ձեր դասարանի երեխաներին: Դուք կարող եք դրանք օգտագործել դասի ընթացքում, որպես դասի վերանայում կամ ամփոփում: Լրացուցիչ ուղղության համար տե՛ս «Օգնություն ուսուցչին» նյութի «Դասաժամ» բաժինը:

1. Ձեր բառերով պատմեք այն պատմությունը, որը Եղբայր Ջոնը հիշեց Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալի ելույթից.

   «Ես շատ հաճախ եմ հիշում, ինչպես բարձր ձայնով է երգում.

   «Մի սպանեք փոքր թռչուններին,
   Որ ամռան ջերմ օրերին
   Երգում են թփին ու ծառին,
   Իրենց քաղցր մեղեդին:
   Մի սպանեք փոքր թռչուններին:
   Երկիրն արարումն է Աստծո,
   Նա է տալիս ուտելիք,
   Եվ փոքրերին, և մեծերին»:

   (*Deseret Songs,* 1909, no. 163.)

   «Ես պարսատիկ ունեի և թաղանթ: Ինքս էի դրանք պատրաստել, և շատ լավ էին աշխատում: Իմ պարտականությունն էր կովերին դաշտ տանել, տնից մեկ մղոն հեռու: Ճանապարհի եզրերով մեծ ծառեր էին շարված,

և ես հիշում եմ, որ մեծ գայթակղություն էր սպանել այդ փոքր թռչյուններին, որ «երգում են թփին ու ծառին», քանի որ ես լավ էի կրակում և կարող էի հիսուն յարդ հեռավորությունից խփել փոստարկղին կամ ծառի փեթակին: Բայց, մի գուցե այն պատճառով, որ ամեն կիրակի երգում էի «Մի սպանեք փոքր թռչյուններին» երգը, չէի կարողանում դա անել: . . . Ես շատ չէի ուրախանա, տեսնելով, թե ինչպես է սքանչելի փոքրիկ թռչյունը սպանված ընկնում ոտքերիս առաջ»: (Spencer W. Kimball, in Conference Report, Apr. 1978, p. 71; see also *Ensign,* May 1978, pp. 47–48):

2. Յուրաքանչյուր երեխայի խմորի մի կտոր տվեք, որից նա կարող է ձևավորել իր սիրած կենդանուն (աղի խմորի բաղադրատոմսը կարելի է գտնել էջ 43–ում): Երեխաներին թույլ տվեք իրենց կենդանիներին տանել տուն և ցույց տալ իրենց ընտանիքներին:

3. Երեխաներին թույլ տվեք հերթով մնջախաղով պատկերել իրենց սիրած կենդանու շարժումները: Մյուս երեխաներին խնդրեք կռահել, թե որ կենդանին է պատկերվում: Եթե մյուս երեխաները չեն կարողանում կռահել կենդանուն այդ շարժումներից, ապա երեխան կարող է բանավոր հուշումներ տալ:

4. Երեխաներին հուշումներ տվեք տարբեր կենդանիների վերաբերյալ: Երեխաներին ասացեք, որ երբ նրանք հասկանան, թե որ կենդանուն եք դուք նկարագրում, ապա պետք է բարձրացնեն ձեռքերը, սակայն ոչինչ չասեն: Ձեռքը բարձրացրած երեխային խնդրեք ասել, թե որ կենդանու մասին եք դուք հուշում: Օգտագործեք հետևյալ հուշումները կամ հնարեք ինքներդ ձեր տարածքի կենդանիների համար.

   - Ես ունեմ վեց ոտք, կանաչ է իմ վերարկուն,
     Ես ամենալավ ցատկոտողն եմ աշխարհում: (Մորեխ)
   - Ես փոքր եմ և ոլոր-մոլոր
     Նույնն եմ երկու կողմով: (Որդ)
   - Իմ տունը սքանչելի հով ավազանն է,
     Իսկ սիրելի զբաղմունքս՝ կռկռալն ու թռվռալն է: (Գորտ)
   - Երբ գարուն է գալիս, դուք ինձ եք փնտրում
     Իմ կարմիր փորով ծառի ծայրին եմ բնակվում: (Շիկահավ)
   - Ես ունեմ կլոր երես և երկու մեծ աչք
     Տեսնում եմ մթում և իմաստուն եմ համարվում: (Բու)
   - Ես ունեմ ոտքեր, ձեռքեր, աչքեր, ականջներ և քիթ,
     Կարող եմ կախվել ծառից իմ պոչից կամ ոտքերի թաթերից: (Կապիկ)
   - Եթե մեջքիս նստեք, ձեզ կտանեմ,
     Բռնվեք թամբից, ես ձեզ կլսեմ: (Ձի)
   - Ես ծառ կմագլցեմ այնպես արագ, որ չեք էլ տեսնի
     Փափուկ իմ պոչով հաջողություն կասեմ, ակնթարթում մի: (Սկյուռիկ)
   - Ես ապրում եմ ֆերմայում և կարճ ոլոր պոչ ունեմ,
     Այն պարում է, երբ ճաշի ժամն է մոտենում: (Խոզ)
   - Սիրում եմ խաղալ, ցատկոտել ու վազել,
     «Բեե» միակ բառն է, որ կարող եմ ասել: (Գառ)

   (Clues adapted from “Who Am I?” *Children’s Friend,* May 1956, p. 208.)

5. Կրկնեք Վորենի մասին պատմվածքը դաս 2-ից (տե՛ս էջ 7):
   - Ինչպե՞ս էր Վորենը բարի վերաբերվել կենդանիներին:
6. Կրկնեք դասի սկզբի համընկումների խաղը այնքան անգամ, որքան երեխաները ցանկանում են:
7. Երեխաներին օգնեք պատրաստել փոքրիկ թռչնի մատուցարան և տանել ու կախել իրենց բակում: Գեղեցիկ ձևով կտրատած հացի կտորի վրա ընկույզի կարագ քսեք և թաթախեք թռչնի կերի մեջ: Թռչնի մատուցարանը մետաղալարի օգնությամբ կախեք ծառից, թփից կամ փոստարկղից: (Դուք հավանաբար գիտեք, թե ինչպես պատրաստել թռչյունների պարզ մատուցարաններ ձեր տարածքում առկա նյութերով:)



Դաս
45

# Մենք տոնում ենք Հիսուս Քրիստոսի Հարությունը (Զատիկ)

**Նպատակ**

Օգնել երեխաներին հասկանալ, որ մենք տոնում ենք Զատիկը, որովհետև Հիսուս Քրիստոսը հարություն առավ:

**Նախապատրաստություն**

1. Աղոթքով ուսումնասիրեք Մաթեոս ԻԷ.57–66; ԻԸ.1–8; Մարկոս ժԵ.16–20, 40–47; ժԶ.1–11; Ղուկաս ԻԳ.44–46; և Հովհաննես Ի.1–18:
2. Նկարեք կամ գտեք ձեր տարածքում Զատկի տոնման հետ կապված նկարներ կամ առարկաներ, օրինակ կոնֆետներ, հավկիթներ, ծաղիկներ կամ գեղեցիկ հագուստներ: Դասից առաջ դրանք դրեք սեղանի, հատակի վրա կամ կախեք գրատախտակից: Մյուս նկարների հետ մեկտեղ դրեք նաև կտրվածք 2-12, Հիսուսը հարություն առավ:
3. Պահանջվող նյութեր.
   ա. Աստվածաշունչ
   բ. Փոքր պարկ կամ արկղ
   գ. Կտրվածք 2-5, Խաչման տեսարանը; կտրվածք 2-6, Հիսուսի մարմինը փաթաթում են; կտրվածք 2-7, գերեզման; կտրվածք 2-8, մեծ քար; կտրվածք 2-9, պահակներ; կտրվածք 2-10, հրեշտակ; կտրվածք 2-11, յուղերով կանայք; կտրվածք 2-12, Հիսուսը հարություն առավ: Դասավորեք կտրվածքները այն հերթականությամբ, որով դրանք պետք է օգտագործվեն առաջին Զատկի պատմության մեջ:
   դ. Նկար 2-65, Հարություն առած Հիսուս Քրիստոսը (Gospel Art Picture Kit 239; 62187):
4. Անհրաժեշտ պատրաստություններ կատարեք այն լրացուցիչ վարժությունների համար, որոնք ցանկանում եք անցկացնել:

**Դասի առաջարկվող ընթացք**

Երեխաներից մեկին խնդրեք ասել բացիչ աղոթքը:

Եթե երեխաներին խնդրել եք շաբաթվա ընթացքում ինչ-որ բան կատարել, ստուգեք:

**Զատկի ժամանակ մենք հիշում ենք Հիսուս Քրիստոսին**

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Ցույց տվեք սեղանին, հատակին դրված կամ գրատախտակին փակցված նկարները: Երեխաներին խնդրեք հերթով որևէ նկար ընտրել և բացատրել, թե ինչպես են պատկերված առարկաները կապված Զատիկը տոնելու ձեր տեղական ավանդույթների հետ:

Երբ երեխաները քննարկեն յուրաքանչյուր առարկան, հարցրեք.

- Արդյո՞ք այս առարկայի համար ենք մենք իրականում տոնում Զատիկը: (Ոչ:)

Ապա երեխաներից մեկին խնդրեք հանել նկարը և դնել փոքր պարկի կամ արկղի մեջ:

Շարունակեք քննարկել նկարները, մինչև մնա միայն Հիսուս Քրիստոսի կտրվածքը:

- Արդյո՞ք նրա համար ենք մենք իրականում տոնում Զատիկը: (Այո:)

Երեխաներին հիշեցրեք, որ Հիսուս Քրիստոսն է այն իրական պատճառը, ում համար մենք տոնում ենք Զատիկը: Առաջին Զատիկին Հիսուսը մեզ համար հիանալի բան է արել:

**Հիսուս Քրիստոսը հարություն առավ Առաջին Զատիկին**

Պատմվածք սուրբ գրություններից կտրվածքներով

Ձեր բառերով պատմեք առաջին Զատիկի պատմությունը (տե՛ս Մաթեոս ԻԷ.57–66; ԻԸ.1–8; Մարկոս ԺԵ.16–20, 40–47; ԺԶ.1–11; Ղուկաս ԻԳ.44–46; և Հովհաննես Ի.1–18): Երեխաներին խնդրեք հերթով պահել համապատասխան կտրվածքները, մինչ դուք կպատմեք պատմությունը: Եթե երեխաները գիտեն պատմությունը, նրանց խնդրեք օգնել ձեզ պատմելիս:

Երեխաներից մեկին խնդրեք պահել կտրվածք 2-5, Խաչման տեսարանը:

Բացատրեք, որ չար մարդիկ, որոնք չէին սիրում Հիսուս Քրիստոսին, իրենց ղեկավարներից վերջապես թույլտվություն ստացան սպանել նրան: Այդ մարդիկ ծեծեցին Հիսուսին և ծաղրեցին նրան: Նրանք տարան նրան քաղաքից դուրս մի բլրի վրա և մեխեցին խաչին:

Երեխային խնդրեք ներքև դնել Խաչման կտրվածքը, իսկ մեկ ուրիշին խնդրեք պահել կտրվածք 2-6, Հիսուսի մարմինը փաթաթում են:

Բացատրեք, որ Հիսուսի մահից հետո նրա ընկերները ցույց տվեցին նրա հանդեպ իրենց սերը, խնամելով նրա մարմինը: Նրանք զգուշորեն իջեցրեցին այն խաչից: Նրանք փաթաթեցին մաքուր, նոր շորերով և դրեցին գերեզմանի մեջ, որը փոքր քարանձավ էր կամ սենյակ, որը փորված էր բլրի ժայռի մեջ:

Երեխային խնդրեք ներքև դնել Հիսուսի մարմինը փաթաթում են կտրվածքը, իսկ մեկ ուրիշին խնդրեք պահել կտրվածք 2-7, գերեզման, և կտրվածք 2-8, մեծ քար:

Բացատրեք, որ Հիսուսի մարմինը գերեզմանում դնելուց հետո, նրա ընկերները մեծ քար գլորեցին ու դրեցին մուտքի առաջ:

- Ձեր կարծիքով, ինչպե՞ս էին այդ երեկո իրենց զգում Հիսուսի ընկերները:

Երեխաներից մեկին խնդրեք պահել կտրվածք 2-9, պահակներ:

Երեխաներին ասացեք, որ ավելի ուշ այդ երեկո Փրկչի թշնամիները պահակներ կանգնեցրեցին գերեզմանի մոտ: Նրանք դա արեցին, որովհետև Հիսուսը մարդկանց ասել էր, որ երեք օրից հարություն էր առնելու: Նրա թշնամիները չէին հավատում, որ նա պետք է հարություն առներ: Նրանք կարծում էին, որ Հիսուսի ընկերները կպահեին նրա մարմինը և կասեին, որ նա նորից կենդանի էր:

Երեխաներից մեկին խնդրեք պահել կտրվածք 2-10, հրեշտակ:

Բացատրեք, որ երրորդ օրը առավոտյան հրեշտակ հայտնվեց և գլորեց քարը գերեզմանի մուտքից: Պահակները շատ էին վախեցել, և նրանք գետնին ընկան, կարծես մեռած լինեին:

Երեխաներին խնդրեք ներքև դնել պահակների և մեծ քարի կտրվածքները, իսկ մեկ ուրիշին խնդրեք պահել կտրվածք 2-11, յուղերով կանայք:

Երեխաներին ասացեք, որ նույն օրը, որը կիրակի էր, մի քանի կանայք, որոնք Հիսուսի ընկերներն էին, գնացին գերեզման: Նրանք համեմունքներ էին բերել մարմնի վրա դնելու համար: Դրանով այդ ժամանակների մարդիկ ցույց էին տալիս իրենց սերն ու հարգանքը մահացածի հանդեպ:

Բացատրեք, որ կանայք մտածում էին, թե ինչպես պետք է գլորեին այդ ծանր քարը: Սակայն, երբ նրանք հասան գերեզմանի մոտ, տեսան, որ քարը մի կողմ է գլորված, իսկ Հիսուսի մարմինը չկա: Գերեզմանի մոտ նրանք մի հրեշտակ տեսան:

- Ձեր կարծիքով, ի՞նչ զգացին կանայք, երբ տեսան, որ Փրկչի մարմինն անհետացել է:
- Ձեր կարծիքով, ի՞նչ նրանք զգացին, երբ տեսան հրեշտակին:

Սուրբ գրություն

Բարձրաձայն կարդացեք Մաթեոս ԻԸ.5–6-ում այն, ինչ հրեշտակն ասաց կանանց:

Բացատրեք, որ հրեշտակը կանանց ասաց նաև արագ գնալ և ասել աշակերտներին, որ Հիսուս Քրիստոսը հարություն է առել մեռելներից (տե՛ս Մաթեոս ԻԸ.7):

Երեխաներին խնդրեք ներքև դնել բոլոր կտրվածքները, իսկ մեկ ուրիշին խնդրեք պահել կտրվածք 2-12, Հիսուսը հարություն առավ:

Բացատրեք, որ կանայք գնացին և ասացին մյուս աշակերտներին, իսկ աշակերտները ավելի ուշ տեսան Հիսուսին: Սա նորից կենդանի էր:

- Ձեր կարծիքով, ի՞նչ զգացին աշակերտները, երբ իմացան, որ Հիսուս Քրիստոսը նորից կենդանի էր:

Կրկնողություն

Կտրվածքները հակառակ կողմով դրեք սեղանին կամ հատակին: Երեխաներին խնդրեք հերթով ընտրել որևէ կտրվածք և պատմել դրան վերաբերվող մասը Հիսուսի հարության մասին պատմությունից:

**Զատիկի ժամանակ մենք հիշում ենք, որ հարություն կառնենք**

Ուսուցչի ելույթ

Ցույց տվեք նկար 2-65, Հարություն առած Հիսուս Քրիստոսը:

Բացատրեք, որ երբ Հիսուս Քրիստոսը մահացավ, նրա հոգին հեռացավ ֆիզիկական մարմնից և գնաց երկինք: Երեք օր անց նրա հոգին նորից մտավ ֆիզիկական մարմնի մեջ և նրա ֆիզիկական մարմինը նորից կենդանի էր: Մենք սա կոչում ենք հարություն: Երեխաներին խնդրեք մի քանի անգամ բարձրաձայն արտասանել *հարություն* բառը:

Բացատրեք, որ Հիսուսը Երկնային Հոր առաջին զավակն էր, որը հարություն առավ: Քանի որ նա հարություն առավ, մենք բոլորս նույնպես հարություն կառնենք: Հնարավոր է, մենք հարություն չառնենք մահանալուց երեք օր անց, ինչպես Հիսուսը, սակայն մի օր մենք հարություն կառնենք:

Պատմվածք

Մի պատմություն պատմեք որևէ երեխայի մասին, որը երջանիկ էր զգում, երբ մտածում էր Հիսուս Քրիստոսի ու նրա հարության մասին: Կարող եք օգտագործել հետևյալ պատմությունը.

Կարմենը սիրում էր խաղ անել իրենց բակում՝ իր հարևան Եղբայր Շմիդի այգու մոտ: Հաճախ, երբ Եղբայր Շմիդը այգում գործ էր անում, Կարմենը խոսում էր նրա հետ: Նրանք լավ ընկերներ էին դարձել:

Մի օր Կարմենի մայրը նրան ասաց, որ քանի որ Եղբայր Շմիդը շատ ծեր էր, նա մահացել է: Նրա հոգին հեռացել էր ֆիզիկական մարմնից, և ֆիզիկական մարմինը այլևս կենդանի չէր:

Կարմենը գիտեր, որ կկարոտի Եղբայր Շմիդին, սակայն մայրիկը նրան հիշեցրեց Զատկի պատմությունը: Կարմենը հիշեց Հիսուսի հարության պատմությունը: Նա գիտեր, որ Հիսուսն ասաց, որ մենք բոլորս մահից հետո հարություն կառնենք և կրկին կապրենք: Կարմենը գիտեր, որ Եղբայր Շմիդը նույնպես հարություն կառներ: Նա երջանիկ էր, որ Հիսուսը մեզ հարություն առնելու հնարավորություն տվեց:

Քննարկում

Բացատրեք, որ Հիսուս Քրիստոսի հարության օրը մենք կոչում ենք առաջին Զատիկ: Ամբողջ աշխարհում մարդիկ, որոնք սիրում են Հիսուսին, Զատիկին տոնում են նրա հարությունը:

- Ինչո՞ւ ենք մենք երջանիկ զգում Զատիկի ժամանակ: (Մենք գիտենք, որ մենք և բոլոր մեր սիրած մարդիկ հարություն կառնեն, ինչպես Հիսուսը:)
- Ի՞նչ մենք կարող ենք անել, որպեսզի Զատիկի ժամանակ կարողանանք հիշել Հիսուս Քրիստոսին և արտահայտել մեր երջանկությունը: (Հնարավոր պատասխաններ. խոսել տանը Հիսուսի մասին, ընտանիքներով երգեր երգել Հիսուսի մասին, եկեղեցում անցկացնել հատուկ Զատիկի դասեր, ծրագրեր, և երգերի երեկոներ:)

**Ամփոփում**

Վկայություն

Բերեք ձեր վկայությունը Հիսուս Քրիստոսի հարության մասին: Երեխաներին ասացեք, թե ինչպես եք զգում, իմանալով, որ մի օր դուք և ձեր մտերիմները հարություն կառնեք:

Երեխաներին խրախուսեք իրենց ընտանիքներում խոսել Հիսուս Քրիստոսի հարության մասին:

Երեխաներից մեկին հրավիրեք ասել փակիչ աղոթքը:

---

**Լրացուցիչ վարժություններ**

Հետևյալ վարժություններից ընտրեք նրանք, որոնք լավագույնս կհամապատասխանեն ձեր դասարանի երեխաներին: Դուք կարող եք դրանք օգտագործել դասի ընթացքում, որպես դասի վերանայում կամ ամփոփում: Լրացուցիչ ուղղության համար տե՛ս «Օգնություն ուսուցչին» նյութի «Դասաժամ» բաժինը:

1. Երեխաների հետ միասին կարդացեք դասի վերջում գտնվող «Առաջին Զատիկը» նկարներով պատմությունը: Համապատասխան տեղերում օգնեք երեխաներին լրացնել նկարներով պատկերված բառերը: Հնարավորության դեպքում կարող եք օրինակ պատրաստել յուրաքանչյուր երեխայի համար:
2. Բերեք ձեր մահացած հարազատի կամ ընկերոջ նկարը: Նկարը ցույց տվեք երեխաներին և պատմեք այն մասին, թե ինչ եք արել այդ մարդու հետ միասին, ինչու եք հիանում նրանով և սիրում նրան: Արտահայտեք ձեր զգացմունքները, իմանալով որ մի օր նորից կկարողանաք տեսնել այդ մարդուն:
3. Յուրաքանչյուր երեխայի տվեք մի թուղթ *Մենք նորից կապրենք* վերնագրով: Երեխաներին մատիտներ բաժանեք և խնդրեք նկարել իրենց սիրած մարդկանց նկարները, ովքեր մահացել են: Երեխաներին խնդրեք իրենց նկարների մասին պատմել դասարանի մյուս անդամներին:

Երեխաներին հիշեցրեք, որ Հիսուս Քրիստոսի հարության շնորհիվ, մենք բոլորս մահանալուց հետո հարություն կառնենք: Մեր սիրած բոլոր մարդիկ մի օր նույնպես հարություն կառնեն:

4. Երեխաների հետ քննարկեք նրանց ծանոթ ֆիզիկական կամ մտավոր թերությունները: Երեխաներին օգնեք հասկանալ, որ հարություն առնելուց հետո մեր մարմինները կատարյալ կլինեն (տե՛ս Ալմա 40.23): Ոչ ոք չի ունենա թերություններ: Քննարկեք, թե որքան հիանալի դա կլինի:

# Առաջին Զատիկ



ընկերներ գերեզման քար զինվորներ հրեշտակ

Երբ Հիսուսը մահացավ, նրա տխուր էին: Նրանք նրան դրեցին մեջ: Մի մեծ դրվեց դիմաց:  կանգնեցին հսկելու, որ ոչ ոք մի կողմ չգլորի:

3 օր Հիսուսի մարմինը մնաց : Ապա երրորդ օրը առավոտյան մի հայտնվեց և գլորեց մի կողմ: Երբ  տեսան , նրանք վախեցան:

Այդ օրը Հիսուսի եկան մոտ: Նրանք տեսան, որ մի կողմ է գլորված: մոտ մի կար: ասաց. Նա այստեղ չէ, քանզի հարություն է առել»:

Հիսուսը մահացավ, որպեսզի մենք բոլորս մահանալուց հետո կարողանանք կրկին ապրել: Զատիկը բոլորին հիշեցնում է այն օրվա մասին, երբ Հիսուսը հարություն առավ մեռելներից:

Դաս
46

# Հիսուս Քրիստոսը մեծագույն պարգևն է (Սուրբ Ծնունդ)

**Նպատակ**

Օգնել երեխաներին գնահատել այն մեծ պարգևը, որն Երկնային Հայրը տվեց մեզ, երբ Հիսուս Քրիստոսին ուղարկեց երկիր:

**Նախապատրաստություն**

1. Աղոթքով ուսումնասիրեք Մաթևոս Բ1–12 և Հովհաննես Գ.16:
2. Նկար 2-41, Հիսուսի ծնունդը (Gospel Art Picture Kit 200; 62116) դրեք տուփի մեջ, և, եթե հնարավոր է, նվերի նման փաթաթեք: Բացիկի վրա գրեք *Հովհաննես Գ.16* և փակցրեք նվերի վրա:
3. Թուղթը երկու մասի ծալելով, բացիկներ պատրաստեք յուրաքանչյուր երեխայի համար, և գրեք դիմացում *Ուրախ Սուրբ Ծնունդ:* Հնարավորության դեպքում, ծրարներ բերեք երեխաների համար իրենց բացիկները դրանց մեջ դնելու համար:
4. Նկարեք կամ կտրեք թղթե աստղ, որը կներկայացնի այն աստղը, որին հետևեցին Իմաստունները (աստղի նմուշը կարելի է գտնել դասի վերջում):
5. Բերեք հագուստի հասարակ պարագաներ (օրինակ, կաշնե կամ թիկնոցներ), որոնք կարող են օգտագործվել Մարիամի, Հովսեփի և Իմաստունների դերերը խաղալու համար: Եթե կոստյումներ չկան, կրծքանշաններ բերեք, հերոսների անուններով: Բերեք նաև տիկնիկ Հիսուսին ներկայացնելու համար և առարկաներ (օրինակ, տուփ, անոթ կամ ծաղկաման) Իմաստունների նվերները ներկայացնելու համար:
6. Պահանջվող նյութեր.
   ա. Աստվածաշունչ
   բ. Սուրբ Ծննդյան հոգևոր երաժշտության ձայնագրություններ (ըստ հայեցողության)
   գ. Մատիտներ
   դ. Նկար 2-7, Իմաստունները (Gospel Art Picture Kit 203; 62120)
7. Անհրաժեշտ պատրաստություններ կատարեք այն լրացուցիչ վարժությունների համար, որոնք ցանկանում եք անցկացնել:

**Դասի առաջարկվող ընթացք**

Երեխաներից մեկին խնդրեք ասել բացիչ աղոթքը:

Եթե երեխաներին խնդրել եք շաբաթվա ընթացքում ինչ-որ բան կատարել, ստուգեք:

**Հիսուս Քրիստոսի ծնունդը մեծ պարգև էր**

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Երեխաներին ցույց տվեք փաթաթած նվերը: Նրանց ասացեք, որ ներսում կա մի փաթեթ, որը ներկայացնում է մի հիանալի նվեր մեկից, ով մեզ շատ է սիրում:

Յուրաքանչյուր երեխայի խնդրեք հերթով պահել փաթեթը և կռահել, թե ինչ է ներսում:

Երեխաներին ասացեք, որ բացիկը հուշում է: Բարձրաձայն կարդացեք Հովհաննես 9.16: Երեխաներին հարցրեք, թե արդյոք այժմ նրանք գիտեն, թե ինչ նվեր է սա և ում կողմից է (կարող եք երեխաներին հիշեցնել, որ *Աստված* Երկնային Հոր մյուս անունն է): Երեխաներից մեկին խնդրեք բացել նվերը և պահել նկարը, որպեսզի բոլորը տեսնեն այն:

Քննարկում

- Ի՞նչ է նվերը:
- Ո՞մ կողմից է նվերը:
- Ինչո՞ւ է Հիսուս Քրիստոսի ծնունդը այդքան հիանալի նվեր:

Երեխաներին օգնեք հասկանալ, որ պատճառներից մեկը, որով Քրիստոսի ծնունդը մեծ պարգև է, դա այն է, որ նա եկավ մեզ սովորեցնելու ապրելու ճիշտ ուղին: Նա մեզ սովորեցրեց, որ մյուսներին սիրել և օգնելը մեզ երջանիկ կդարձնի: Ուղարկելով Հիսուսին երկիր, Երկնային Հայրը մեզ պարգև տվեց, որը մեզ կօգնի երջանկություն գտնել ոչ միայն Սուրբ Ծննդյան ժամանակ, այլ միշտ:

**Իմաստունները նվերներ տվեցին մանուկ Հիսուսին**

Պատմվածք սուրբ գրություններից և քննարկում

Շեշտեք, որ Երկնային Հայրը ցանկանում էր, որ բոլորը իմանային մեզ տրված Իր պարգևի մասին, այդ պատճառով նա սքանչելի մի նոր աստղ դրեց երկնքում:

Ցույց տվեք նկար 2-7, Իմաստունները, և երեխաներին խնդրեք պատմել Իմաստունների մասին պատմությունը, որոնք հետևեցին աստղին Հիսուսին գտնելու համար (տե՛ս Մաթևոս Բ.1–12): Երեխաներին օգնեք հիշել մոռացած մանրամասները:

Բարձրաձայն կարդացեք Մաթևոս Բ.11:

- Ի՞նչ պարգևներ Իմաստունները բերեցին Հիսուսին:

Բացատրեք, որ կնդրուկ և զմուռս անուշահոտ օծանելիքներ էին, որոնք օգտագործվում էին կրոնական ծեսերի ժամանակ: Բոլոր երեք նվերները արժեքավոր էին և դժվար ձեռքբերվող: Իմաստունները ցանկանում էին Հիսուսին բերել ամենալավ նվերները, որ կարող էին գտնել:

- Ինչո՞ւ Իմաստունները բերեցին այդ նվերները Հիսուսին: (Ցույց տալու համար, որ սիրում և հարգում էին նրան:)
- Ինչո՞ւ Իմաստունները խոնարհվեցին և երկրպագեցին Հիսուսին, երբ տեսան նրան: (Նրանք գիտեին, որ Նա Փրկիչն էր, Երկնային Հոր Որդին:)

Դերակատարում

Երեխաներին խնդրեք դերերով խաղալ Իմաստունների պատմությունը: Բոլոր երեխաներին, ովքեր ցանկանում են մասնակցել, որևէ դեր տվեք: Երեխաները կարող են կատարել Մարիամի, Հովսեփի և Իմաստունների դերերը (կարող եք մի քանի Իմաստուններ ունենալ, որպեսզի բոլորը կարողանան մասնակցել): Կարող եք նաև երեխաներից մեկին խնդրել պահել թղթե աստղը: Երեխաներին օգնեք հագնել իրենց կոստյումները կամ փակցնել կրծքանշանները:

Ներկայացումը հարստացնելու համար կարող եք մեղմ հնչեցնել Սուրբ Ծննդյան հոգևոր երաժշտությունը:

Բարձրաձայն կարդացեք հատվածներ Մաթևոս Բ.1–12, հատկապես տողեր 2 և 9–11: Կարող եք Իմաստուններին խնդրել ձեզ հետ միասին կրկնել Մաթևոս Բ.2 տողերը: (Եթե անհրաժեշտ է, բացատրեք, որ *Հրեաների Թագավորը* Հիսուս Քրիստոսի անուններից մեկն է:)

## Սիրո պարգևներ տալը մեզ ուրախություն է պատճառում

Պատմվածք

Բացատրեք, որ ինչպես Իմաստունները նվերներ բերեցին Հիսուսին իրենց սերն արտահայտելու համար, այնպես էլ մենք կարող ենք նվերներ տալ ուրիշներին նրանց հանդեպ մեր սերն արտահայտելու համար:

Պատմեք հետևյալ պատմվածքը մի տղայի մասին, որի անունն էր Ս. Դիլվորթ Յանգ, և որը հետագայում դարձավ Գերագույն Իշխանություն.

Երբ Ս. Դիլվորթ Յանգը հինգ տարեկան էր, Սուրբ Ծննդյան ժամանակ խանութի ցուցափեղկում տեսավ մի գլուխկոտրուկ: Դրա վրա պատկերված էր մի սայլակ, որը քաշում էր մի ծեր ձի: Դիլվորթը աշխարհում ամենից շատ ցանկանում էր Սուրբ Ծննդյանը ստանալ այդ գլուխկոտրուկը:

Երեց Յանգը հետագայում բացատրեց, թե ինչ տեղի ունեցավ գլուխկոտրուկի հետ Սուրբ Ծննդյանը:

«Երբ վերջապես եկավ Սուրբ Ծննդյան առավոտը, ես իմ աթոռից գտա կախված մի գուլպա, որը լի էր լավ իրերով: Բայց անմիջապես աչքիս ընկավ իմ գլուխկոտրուկը: Այն փաթեթավորված էր փայլուն թղթով, սակայն ես տեսնում էի, որ ձևը դրանն էր: Ես արագ բացեցի տուփը և շուտով ամեն-ինչի մասին մոռացա, երբ սկսեցի հավաքել գլուխկոտրուկը:

Որոշ ժամանակ անց հայրս մտավ սենյակ և փոքր եղբորս, մեծ քրոջս և ինձ բացատրեց, որ Ջենսենների ընտանիքը, որ ապրում էր մեր փողոցի ծայրում, վերջերս է ժամանել Դանիայից: Նա ասաց, որ նրանց հայրը չունի ոչ աշխատանք, ոչ փող, և առաջարկեց, որ մենք Սուրբ Ծննդյան մեր ճաշը տանենք նրանց: Նա նաև մեզանից յուրաքանչյուրին խնդրեց ընտրել մեր սիրած խաղալիքներից մեկը և նվիրել Ջենսենների ընտանիքի երեխաներին:

Ջենսենների տուն գնալուց առաջ ես երեք երջանիկ ժամեր անցկացրեցի, խաղալով և վայելելով իմ գլուխկոտրուկը: Ես մտածում էի որևէ այլ բան նվիրելու մասին, սակայն հոգու խորքում գիտեի, որ միայն մեկ նվեր կար, որ պետք է տայի:

Տասնմեկանց քառասունհինգ մենք բոլորս շարժվեցինք: Հայրս սկուտեղի վրա տանում էր հնդկահավը: Մայրս և քույրս, Էմիլին, կարտոֆիլներով, սոուսով, համեմունքներով, լորամրգով և քաղցրավենիքներով գնում էին նրա ետևից: Իսկ իմ թևի տակ, խնամքով փաթեթավորված, գտնվում էր իմ հրշեջ մեքենայով գլուխկոտրուկը:

Երբ մենք մտանք Ջենսենների տուն, հայրս հնդկահավը դրեց անկյունի փոքր սեղանին, որին հետևեցին մնացած ուտեստները:

Հետո մենք բոլորս հերթով տվեցինք մեր նվերները: Էմիլին աղջկան նվիրեց իր սքանչելի տիկնիկը: Ես առաջ եկա և նայեցի իմ տարիքի տղային: «Ահա», - ասացի ես և նրան տվեցի իմ գլուխկոտրուկը: Նա վերցրեց այն և ժպտաց: Հետո իմ եղբայրը իր նվերը տվեց ամենափոքր երեխային: Եվ մենք վերադարձանք տուն:

Տարօրինակ էր, սակայն, երբ քայլում էի դեպի մեր տուն, ոտքերս կարծես գետնին չէին դիպչում: Թվում էր, թե ես լողում եմ ամպերի վրա այն լավ զգացմունքից, իմանալով որ ինչ-որ մեկին երջանկացրեցի:

Անգամ մեր Սուրբ Ծննդյան ճաշկերույթը, որը բաղկացած էր պահածո լոբուց, հացից, կարագից և պահածո մրգից մի հատուկ և անմոռանալի իմաստ էր կրում այդ առանձնահատուկ Սուրբ Ծննդյան օրը» (S. Dilworth Young, “Friend to Friend: A Special Christmas,” *Friend,* Dec. 1972, pp. 20–21):

Քննարկում

- Ի՞նչ արեց Դիլվորթը և ինչո՞ւ էր նա երջանիկ:

- Ինչո՞ւ էր նա երջանիկ իր սիրելի խաղալիքը ուրիշին նվիրելուց հետո:
- Դուք երբևէ տվե՞լ եք ուրիշին որևէ բան, որը նրան երջանկացրել է:

Երեխաներին թույլ տվեք խոսել այն ժամանակների մասին, երբ երջանկացրել են ուրիշներին նվերների միջոցով:

Ուսուցչի ելույթ

Բացատրեք, որ երբ մենք նվերներ ենք տալիս ուրիշներին, մենք ցույց ենք տալիս, որ սիրում ենք նրանց: Թեև մենք երջանիկ ենք, երբ նվեր ենք ստանում, մենք երջանիկ ենք նաև, երբ նվերներ ենք տալիս: Շեշտեք, որ պարտադիր չէ, որ նվերները թանկարժեք լինեն, որպեսզի ցույց տան մեր սերը: Լավագույն նվերներից են ծառայության նվերները:

Պատմվածք

Պատմեք մի երեխայի մասին, որը ծառայության նվեր մատուցեց: Կարող եք օգտագործել հետևյալ պատմությունը.

Սուրբ Ծնունդը մոտենում էր և Բեթը Սուրբ Ծննդյան նվերներ էր ուզում տալ իր ընտանիքին՝ ցույց տալու, թե որքան է սիրում նրանց: Բայց Բեթը դրամ չուներ: Նա մտածում էր, թե չի կարողանա որևէ նվեր տալ, և շատ տխուր էր: Հանկարծ Բեթը հիշեց, որ Երեխաների Խմբի իր ուսուցիչը ասել էր, որ լավագույն նվերները այն նվերներն են, որոնք դրամով չի կարելի գնել: Բեթը որոշեց ծառայության նվերներ տալ:

Բեթը բացիկներ պատրաստեց ընտանիքի բոլոր անդամների համար և յուրաքանչյուր բացիկի վրա գրեց մի բան, որը պատրաստվում էր անել ընտանիքի այդ անդամի համար: Իր փոքր քրոջ բացիկի վրա նա գրեց, որ կխաղա այն խաղը, որը քույրը ցանկանում է: Մեծ եղբոր բացիկի վրա գրեց, որ մի երեկո կլվանա սպասքը նրա փոխարեն: Մայրիկին խոստացավ խնամել փոքրիկին, մինչ մայրիկը կննջի, իսկ հայրիկին խոստացավ օգնել այգու աշխատանքներում: Նրա սիրած նվերը պապիկի համար էր՝ նա խոստացավ մի ամբողջ ամիս ամեն առավոտ առաջին բանը, որ կանի, ամուր կգրկի նրան:

Սուրբ Ծննդյան առավոտ Բեթը ընտանիքին տվեց իր նվերները: Բոլորին դուր եկան Բեթի ծառայության նվերները: Նրանք գիտեին, որ Բեթը սիրում էր իրենց, որովհետև այդքան հրաշալի նվերներ էր տվել:

Վարժություն բացիկներով

Բոլոր երեխաներին տվեք մի բացիկ և մատիտներ: Երեխաներին ասացեք, որ այդ բացիկներով նրանցից յուրաքանչյուրը կարող է ծառայության նվեր մատուցել, ինչպես արեց Բեթը:

Քննարկեք մի քանի նվեր, որոնք երեխաները կարող են տալ, օրինակ՝ հավաքել եղբոր կամ քրոջ անկողինը, պատրաստել ճաշի սեղանը, խաղ անել փոքր եղբոր կամ քրոջ հետ, ծնողների հետ տան գործերն անել: Երեխաներից յուրաքանչյուրին օգնեք ընտրել ծառայության որևէ նվեր և այն մարդուն, ում այդ նվերը պետք է տան:

Յուրաքանչյուր երեխայի օգնեք գրել *Ես կ բացիկի* ներսի էջի վերևի մասում և *քեզ համար* էջի ստորին մասում:

Էջի միջին հատվածում երեխաներին խնդրեք նկարել այն, ինչ կանեն որևէ մեկի համար որպես ծառայության նվեր:

Եթե դուք ծրարներ եք բերել, յուրաքանչյուր երեխայի մի ծրար տվեք, որի մեջ նա կարող է դնել բացիկը: Երեխաներին օգնեք ծրարի վրա կամ բացիկի դիմացի մասում գրել ստացողի անունը:

Երեխաներին հիշեցրեք բացիկները տալ ընտանիքի անդամներին նվերներով փոխանակվելու ժամանակ:

Կարող եք առաջարկել նմանատիպ նվերներ պատրաստել տանը ընտանիքի մյուս անդամների կամ ընկերների համար:

**Ամփոփում**

Ուսուցչի ելույթ

Երեխաներին հիշեցրեք, որ Հիսուս Քրիստոսը ամենակարևոր նվերն է, որ Երկնային Հայրը տվել է մեզ: Որովհետև Հիսուսը կօգնի մեզ վերադառնալ և մի օր ապրել իր և Երկնային Հոր հետ: Բացատրեք, որ ինչպես Երկնային Հայրը ցույց տվեց իր սերը մեր հանդեպ, երբ երկիր ուղարկեց Հիսուսին, մենք նույնպես կարող ենք ցույց տալ մեր սերը ուրիշների հանդեպ, նրանց հատուկ նվերներ տալով:

Վկայություն

Բերեք ձեր վկայությունն այն մասին, որ Հիսուս Քրիստոսը մեր Փրկիչն է: Երեխաներին ասացեք, թե ինչ եք զգում, երբ մտածում եք, թե որքան են Երկնային Հայրն ու Հիսուս Քրիստոսը սիրում մեզանից յուրաքանչյուրին: Երեխաներին նաև պատմեք, թե ինչ եք զգում, երբ ուրիշներին նվերներ եք նվիրում:

Երեխաներին խրախուսեք Սուրբ Ծնունդը տոնելիս հիշել Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին:

Երեխաներից մեկին հրավիրեք ասել փակիչ աղոթքը:

---

**Լրացուցիչ վարժություններ**

Հետևյալ վարժություններից ընտրեք նրանք, որոնք լավագույնս կհամապատասխանեն ձեր դասարանի երեխաներին: Դուք կարող եք դրանք օգտագործել դասի ընթացքում, որպես դասի վերանայում կամ ամփոփում: Լրացուցիչ ուղղության համար տե՛ս «Օգնություն ուսուցչին» նյութի «Դասաժամ» բաժինը:

1. Երեխաների հետ միասին երգեք կամ արտասանեք «Սուրբ Գիշեր, լուռ գիշեր» երգի առաջին քառյակը:

   Լուռ գիշեր, սուրբ գիշեր:
   Կույս մոր ու Սուրբ մանկան
   Շուրջ ամեն տեղ պայծառ լույսեր:
   Դու սուրբ մանուկ հեզ ու քնքուշ,
   Քնիր անուշ, անուշ,
   Քնիր անուշ, անուշ:

2. Բարձրաձայն կարդացեք Մաթևոս Բ.1–2, 9–11: Քննարկեք Իմաստունների համար աստղի կարևորությունը: Յուրաքանչյուր երեխայի օգնեք թղթից երկու եռանկյունի կտրել և սոսնձել իրար աստղի տեսքով (տե՛ս ստորև տրված նմուշը): Երեխաներին թույլ տվեք իրենց աստղերը տուն տանել:



# Words to the Songs

### A Happy Family

I love mother; she loves me.
We love daddy, yes sirree;
He loves us, and so you see,

We are a happy family.
I love sister; she loves me.
We love brother, yes sirree;
He loves us, and so you see,
We are a happy family.

(© 1948, 1975 by Pioneer Music Press, Inc. Used by permission of Jackman Music Corp.)

### Away in a Manger

Away in a manger, no crib for his bed,
The little Lord Jesus laid down his sweet head;
The stars in the heavens looked down where he lay,
The little Lord Jesus, asleep on the hay.

The cattle are lowing, the poor baby wakes;
But little Lord Jesus, no crying he makes.
I love thee, Lord Jesus; look down from the sky
And stay by my cradle till morning is nigh.

Be near me, Lord Jesus; I ask thee to stay
Close by me forever, and love me, I pray.
Bless all the dear children in thy tender care,
And fit us for heaven to live with thee there.

### Baptism

Jesus came to John the Baptist,
In Judea long ago,
And was baptized by immersion
In the River Jordan's flow.

"To fulfill the law," said Jesus,
When the Baptist questioned why,
"And to enter with my Father
In the kingdom up on high."

Now we know that we must also
Witness faith in Jesus' word,
Be baptized to show obedience,
As was Jesus Christ, our Lord.

### Choose the Right Way

There's a right way to live and be happy;
It is choosing the right ev'ry day.
I am learning the teachings of Jesus;
They will help me and show me the way.

*Chorus:*

Choose the right way and be happy.
I must always choose the right.
Through the gospel I learn to be prayerful,
To have faith, to repent, to obey,
And I know if I live by his teachings,
I will truly be happy each day.

Chorus

### Dare to Do Right

Dare to do right! Dare to be true!
You have a work that no other can do;
Do it so bravely, so kindly, so well,
Angels will hasten the story to tell.
Dare, dare, dare to do right;
Dare, dare, dare to be true,
Dare to be true, dare to be true.

### Do As I'm Doing

Do as I'm doing;
Follow, follow me!
Do as I'm doing;
Follow, follow me!
If I do it high or low,
If I do it fast or slow,
Do as I'm doing;
Follow, follow me!
Do as I'm doing;
Follow, follow me!

(© 1963 by D. C. Heath and Company. Used by permission.)

### "Give," Said the Little Stream

"Give," said the little stream,
"Give, oh! give, give, oh! give."
"Give," said the little stream,
As it hurried down the hill;
"I'm small, I know, but wherever I go
The fields grow greener still."

*Chorus:*

Singing, singing all the day,
"Give away, oh! give away."
Singing, singing all the day,
"Give, oh! give away."

"Give," said the little rain,
"Give, oh! give, give, oh! give."
"Give," said the little rain,
As it fell upon the flow'rs;
"I'll raise their drooping heads again,"
As it fell upon the flow'rs.

Chorus

Give, then, as Jesus gives,
Give, oh! give, give, oh! give.
Give, then, as Jesus gives;
There is something all can give.
Do as the streams and blossoms do:
For God and others live.

Chorus

### He Sent His Son

How could the Father tell the world of love and tenderness?
He sent his Son, a newborn babe, with peace and holiness.
How could the Father show the world the pathway we should go?
He sent his Son to walk with men on earth, that we may know.
How could the Father tell the world of sacrifice, of death?
He sent his Son to die for us and rise with living breath.
What does the Father ask of us? What do the scriptures say?
Have faith, have hope, live like his Son, help others on their way.
What does he ask? Live like his Son.

(© 1982 by Mabel Jones Gabbott. Used by permission.)

### I Am a Child of God

I am a child of God,
And he has sent me here,
Has given me an earthly home
With parents kind and dear.

*Chorus:*

Lead me, guide me, walk beside me,
Help me find the way.
Teach me all that I must do
To live with him someday.

I am a child of God,
And so my needs are great;
Help me to understand his words
Before it grows too late.

Chorus

I am a child of God.
Rich blessings are in store;
If I but learn to do his will,
I'll live with him once more.

Chorus

### I Feel My Savior's Love

I feel my Savior's love
In all the world around me.
His Spirit warms my soul
Through everything I see.

*Chorus:*

He knows I will follow him,
Give all my life to him.
I feel my Savior's love,
The love he freely gives me.

*Fourth verse:*

I'll share my Savior's love
By serving others freely.
In serving I am blessed.
In giving I receive.

Chorus

(© 1978, 1979 by K. Newell Dayley. All rights reserved. Used by permission.)

### I Know My Father Lives

I know my Father lives and loves me too.
The Spirit whispers this to me and tells me it is true,
And tells me it is true.

He sent me here to earth, by faith to live his plan.
The Spirit whispers this to me and tells me that I can,
And tells me that I can.

### I Like My Birthdays

I like my birthdays, ev'ry one;
Each brings a greater joy to me.
But I can't wait until I'm eight,
For then I'll be baptized, you see.

To be baptized as Jesus was
By one who holds the priesthood true
And thus obey God's holy laws
Is just the thing I want to do.

When hands are laid upon my head,
Then I'll receive the Holy Ghost.
And, if I listen carefully,
I'll have the blessing I need most.

### I Thank Thee, Dear Father

I thank thee, dear Father in heaven above,
For thy goodness and mercy, thy kindness and love.
I thank thee for home, friends, and parents so dear,
And for ev'ry blessing that I enjoy here.

Help me to be good, kind, and gentle today,
And mind what my father and mother shall say.
In the dear name of Jesus, so loving and mild,
I ask thee to bless me and keep me thy child.

### I Think When I Read That Sweet Story

I think when I read that sweet story of old,
When Jesus was here among men,
How he called little children like lambs to his fold;
I should like to have been with him then.

I wish that his hands had been placed on my head,
That his arms had been thrown around me,
That I might have seen his kind look when he said,
"Let the little ones come unto me."

### I'm Trying to Be like Jesus

I'm trying to be like Jesus;
I'm following in his ways.
I'm trying to love as he did, in all that I do and say.
At times I am tempted to make a wrong choice,
But I try to listen as the still small voice whispers,

*Chorus:*

"Love one another as Jesus loves you.
Try to show kindness in all that you do.
Be gentle and loving in deed and in thought,
For these are the things Jesus taught."

I'm trying to love my neighbor;
I'm learning to serve my friends.
I watch for the day of gladness when Jesus will come again.
I try to remember the lessons he taught.
Then the Holy Spirit enters into my thoughts, saying:

Chorus

(© 1980 by Janice Kapp Perry. Used by permission.)

### Jesus Loved the Little Children

Jesus loved the little children,
Little ones like me.
He would bless and help them
And take them on his knee.

Many lovely things he taught them,
Things we all should do:
Love and help each other,
Be honest, kind, and true.

### Jesus Said Love Everyone

Jesus said love ev'ryone;
Treat them kindly, too.
When your heart is filled with love,
Others will love you.

### Jesus Wants Me for a Sunbeam

Jesus wants me for a sunbeam,
To shine for him each day;
In ev'ry way try to please him,
At home, at school, at play.

*Chorus:*

A sunbeam, a sunbeam,
Jesus wants me for a sunbeam.
A sunbeam, a sunbeam,
I'll be a sunbeam for him.

Jesus wants me to be loving
And kind to all I see,
Showing how pleasant and happy
His little one can be.

Chorus

### Love One Another

As I have loved you,
Love one another.
This new commandment:
Love one another.
By this shall men know
Ye are my disciples,
If ye have love
One to another.

(© 1961, renewed 1989 by Luacine C. Fox. Used by permission.)

### Mary's Lullaby

Lullaby, lullaby, my little one.
Lullaby, my child so dear.
Thy precious life has just begun;
Thy mother holds thee near.
While Joseph watches through the night,
A star reflects thy radiant light.
Lullaby, lullaby, my little one.
Lullaby, my child so dear.

Thy gentle head shall wear a crown,
For thy Father is the King.
Thy tender hands, so tiny now,
Have blessings great to bring.
Let all creation join my song,
For peace and love this night are born.
Lullaby, lullaby, my little one.
Lullaby, my child so dear.

### Oh, Hush Thee, My Baby

Oh, hush thee, my baby; a story I'll tell,
How little Lord Jesus on earth came to dwell;
How in a far country, 'way over the sea,
Was born a wee baby, my dear one, like thee.

*Chorus:*

Lullaby baby, lullaby dear.
Sleep, little baby; have nothing to fear.
Lullaby baby, lullaby dear.
Jesus will care for his little one here.

The story was told by the angels so bright,
As round them was shining a heavenly light.
The stars shone out brightly, but one led the way
And stood o'er the place where the dear baby lay.

Chorus

The shepherds here found him, as angels had said,
The poor little stranger, no crib for a bed.
Down low in a manger so quiet he lay,
This little child Jesus, asleep on the hay.

Chorus

### Quickly I'll Obey

When my mother calls me,
Quickly I'll obey.
I want to do just what is best
Each and every day.

When my father calls me,
Quickly I'll obey.
I want to do just what is best
Each and every day.

Heav'nly Father loves me,
Blesses me each day.
I want to do just what is best
Each and every day.

### Smiles

If you chance to meet a frown,
Do not let it stay.
Quickly turn it upside down
And smile that frown away.

No one likes a frowning face.
Change it for a smile.
Make the world a better place
By smiling all the while.

### The Holy Ghost

When Christ was on the earth,
He promised he would send
The Holy Ghost to comfort us,
Our true, eternal friend.
The Holy Spirit whispers
With a still small voice.
He testifies of God and Christ
And makes our hearts rejoice.

And when we are confirmed
By sacred priesthood pow'r,
The Holy Ghost is giv'n to us
To guide us ev'ry hour.
Oh, may I always listen
To that still small voice,
And with his light I'll do what's right
Each time I make a choice.

Սկիզբ
Սասա աղոթքներն
Հակափաթեթ խաղալիքներն
Մամա կամ մամա
Ամանոր տոնի օգնելու սովորություն
Սանդուկ, որ հնչում է, երբ տակը ամրացնում ես
Սուտ խոսիր
Թույլ տուր, որ ուրիշն ընտրեն, թե ինչ խաղ խաղան
Վերադարձրու այն իրերը, որոնք վերցրել ես ուրիշից
Վճարիր քո սասա-ցողը
Օգնիր առաց խնդանքի
Մի վերցրու այն, ինչը քոնը չէ
Ներողություն խնդրիր, երբ սխալ ես անում
Վիճիր եղբայրների և քույրերի հետ
Սրա այն, ինչ ասում ես
Սասա ոտքը
Ընտանեկան-տարեշրջան
Սասա մոտ գնա՝ նրան ասելու՝ ինչպես է
Ամանոր տոնի գալիս
Ամանոր տոնի գալիս
Ամանոր տոնի գալիս

Կիսվիր ինչ-որ բանով
Գնա եկեղեցի
Հաճախանիր ծնողներիդ հետ
Բարի եղիր կեղտոտ հագնվելիս
Ողջ մնիր գոնի
Ցույց տուր քեզ մասին «Ընտիկալում»
Եկեղեցուց հպատակող ողջ մեկին եկեղեցի բեր
Օգնիր հարազատներդ
Սրանի վերջ տուր ժամանակ
Մի վիճիր եղբայրներդ և քույրերդ հետ
Սկսածից եղիր եկեղեցում
Սերիր ուրան, ով բարի չէր
Պատրաստ տվել Հիսուսի գալստին